Старт нового витка борьбы за признание и осуждение Геноцида был дан 23 марта 1995 года, когда члены Палаты представителей Дэвид Бониор и Питер Блут внесли в Комитет по иностранным делам Резолюцию № 47, суть которой заключалась в том, что Конгресс присоединялся к армянской общине в деле сохранения памяти жертв Геноцида армян, а США должны были всячески поощрять действия Турции, направленные на признание и осуждение геноцидальных действий в Османской империи 1915-1923 годов¹¹⁹. К сожалению, указанный документ не был принят на рассмотрение Палаты представителей, а аналогичную резолюцию номер 55, внесенную в Палату представителей Радановичем два года спустя, ждала та же печальная участь. В мае 1996 года, по инициативе Комитета по иностранным делам, в Конгрессе США организуются слушания по Геноциду армян. Уже тогда становится ясна позиция американского руководства: принятие подобных резолюций может отрицательно сказаться как на армяно-турецких, так и на американо-турецких отношениях.

Важным этапом в деле изучения Армянского геноцида и информирования об этих событиях обществ западных стран стал 1997 год, когда в Вашингтоне открылся Армянский национальный институт. Он специализируется на организации форумов и конференций на тему Геноцида, взаимодействует с Музеем Холокоста в США, а также работает над созданием энциклопедических и академических работ по указанной тематике.

Усилиями армянских лоббистских структур 28 апреля 1999 года 60 конгрессменов внесли в Палату представителей резолюцию номер 155, которая призывала президента предоставить Комитету по иностранным делам, Музею Холокоста в США и Музею Геноцида армян в Ереване все документы касательно трагических событий в Османской империи и решений турецких судебных инстанций, которые имелись в распоряжении США.

Следующим шагом в рамках данной кампании было внесение Радановичем и Бониором резолюции 398 в Комиссию по иностранным делам. Документ призывал президента США обеспечить соответствующими материалами о Геноциде всех представителей внешнеполитического ведомства, а также квалифицировать трагические события в Османской империи как «геноцид»¹²⁰. Как в случае Резолюции 398, так и в случае аналогичной Резолюции 596 (отличалась лишь отсутствием требования квалифицировать события как геноцид), американское руководство сделало все возможное, чтобы документы не были внесены на голосование. Оно все также ссылалось на возможные ухудшения отношений Армении и Турции, а также Турции и США.

Несмотря на все неудачи, связанные с блокировками обсуждений резолюций, изменения геополитической обстановки в мире после 9/11, а также разочарования по поводу отказа всех президентов США называть вещи своими именами, армянские лоббистские структуры не прекратили свою борьбу за достижение успеха в деле решения важнейших проблем всего армянского народа.

Война в Ираке стала основной причиной того, что с 2003 года наметился спад двухсторонних отношений между Турцией и США. Это стало отличным поводом для

¹¹⁹ H. Con. Res. 47, Honoring the memory of the victims of the Armenian Genocide. URL: <https://www.congress.gov/104/bills/hconres47/BILLS-104hconres47ih.pdf>.

¹²⁰ ՀՀ ԳԱԱ ՀՅԹԻ գիտական ֆոնդեր, բաժին 25, թղթապանակ 53, փաստաթուղթ 1:

проармянских организаций возобновить борьбу за признание и осуждение Геноцида. 10-го апреля того же года члены Палаты представителей Раданович, Шиф, Фалоне, Норнберг представили Резолюцию номер 193, которая утверждала приверженность пунктам “Конвенции о предупреждении преступления геноцида и наказании за него” от 9 декабря 1948 года¹²¹. Лишь под давлением Белого дома в последний момент резолюция была снята с голосования. Аналогичная судьба постигла резолюции номер 316 и 320.

Ярким свидетельством мощи и правильной организации политики армянских лоббистских структур стала ситуация вокруг резолюции 106. Внесенный в Комитет по международным делам, данный документ призывал президента США учитывать права человека, этнические чистки и факт геноцида армян во время выработки внешней политики страны. Примечательной особенностью данной резолюции было то, что подробно указывались временные рамки осуществления преступных деяний; отмечались более точные цифры погибших и переселенцев; делалось упоминание касательно того, что армяне жили на своей земле более 2500 лет, а преступное правительство уничтожило следы присутствия этого народа на своей исторической прародине.

Помимо действий турецких лоббистских структур и политической верхушки страны к блокированию резолюции подключились такие известные лица, как Кондолиза Райс, Роберт Гейтс, Генри Киссинджер, Мадлен Олбрайт и т.д. Резолюция так и не дошла до Сената, но панические заявления президента Турции частично окупил усилия армян и друзей нации. Благодаря активной деятельности ANCA и AAA 4 марта 2010 года Комитет по международным делам Палаты представителей принял Резолюцию 252, которая в точности повторяла текст Резолюции 106. А уже в 2011 году новоизбранный глава Армянского кокуса Эд Ройс представил резолюцию 306. Документ призывал Турцию остановить религиозную дискриминацию по отношению к христианам, а также вернуть конфискованное имущество армянских, греческих и ассирийских церквей¹²². Резолюция была принята в Палате представителей, а утешительной частью ее реализации стало возвращение в апреле 2012 года во владение Армянской апостольской церкви храма Св.Киракоса в Диярбакыре – в присутствии конгрессменов, которые инициировали принятие Резолюции 306.

В преддверии 100-летия Геноцида армян конгрессмены Шиф, Паллоне, Валадао, Энгель внесли в Палату представителей Резолюцию 154, призывающую президента США сделать конкретные шаги, направленные на установление армяно-турецких отношений, основанных на документе, который осуждал бы совершенное преступление против армянского народа¹²³. Отличительной особенностью резолюции являлось то, что от президента США требовалось лишь учитывать факт геноцида в деле выработки политики по отношению к Турции. В мае 2015 года в главной армянской церкви Вашингтона было отмечено 100-летие Армянского геноцида. Стоит отметить, что на мероприятиях

¹²¹ Res. 193-Reaffirming support of the Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide and anticipating the 15 th anniversary of the enactment of the Genocide Convention Implementation Act of 1987, URL: <https://www.congress.gov/bill/108th-congress/house-resolution/193/text>.

¹²² H. Res. 106, Calling on the President to ensure that the foreign policy of the United States reflects appropriate understanding and sensitivity concerning issues related to human rights, ethnic cleansing and genocide documented in the United States record relating to the Armenian Genocide and for other purposes, URL: <https://www.congress.gov/bill/110th-congress/house-resolution/106/text>.

¹²³ H. Res. 154, Calling on the President to work toward equitable, constructive, stable, and durable Armenian-Turkish relations based upon the Republic of Turkey’s full acknowledgment of the facts and ongoing consequences of the Armenian Genocide, and a fair, just, and comprehensive international resolution of this crime against humanity. URL: <https://www.congress.gov/bill/114th-congress/house-resolution/154/text>.

присутствовали президент Армении, патриархи обеих армянских церквей, вице-президент США Джо Байден, постоянный представитель США в ООН Саманта Пауэр и т.д.

Весь современный этап борьбы за признание и осуждение Геноцида армян можно представить в следующей последовательной цепочке, которую, естественно, нельзя назвать абсолютной, но подобную логику можно проследить во время изучения процесса принятия или же блокирования большинства резолюций:

1. Армянские лоббистские формирования и лояльные к армянской нации политики вырабатывают и вносят соответствующие резолюции.
2. Протурецкие организации и политическая верхушка страны выступают с предупреждениями и угрозами о негативных для США последствиях в случае принятия тех или иных документов.
3. Американское руководство ставит превыше всего военные и экономические интересы собственного государства.
4. В итоге – вековой статус-кво в деле признания и осуждения геноцида армянского народа.

ԱՄՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԼՈՐՔԻՍՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՄԱՐՏՈՒՆ ԱԶԱՏՅԱՆ

*Հայ-ռուսական համալսարանի ասպիրանտ,
բ.Երևան, Հայաստանի Հանրապետություն*

Հայկական լոբբիստական կառույցներն անցել են ստեղծման ու կայացման երկար ճանապարհ, որի ընթացքում սահմանվել են գործունեության հիմնական ուղղությունները: Սույն հոդվածում ներկայացված ու վերլուծված է ԱՄՆ հայկական լոբբիի ակտիվությունը, նշված են նրա ուժեղ ու թույլ կողմերը, ինչպես նաև մատնանշված են այն լուրջ ու զլոբալ գործոնները, որոնք դրական կամ բացասական ազդեցություն են ունենում բանաձևերի ու օրինագծերի ընդունման գործընթացում:

Սույն հետազոտության նպատակն է բացահայտել ԱՄՆ հայկական լոբբիստական կառույցների աշխատանքի առանձնահատկությունները պատմական կոնկրետ փուլերում, դրանց նպատակներն ու խնդիրները, հակահարվածներն այլ էթնիկ տարրերին պատկանող շահերի խմբերին, ինչպես նաև բնակության երկրի առաջատար Էլիտայի գործողություններին ու հակազդեցություններին:

Աշխատանքի վերջում ներկայացված են այս կամ այն օրինագծի առաջխաղացման անհաջողության հիմնական գործոններն ու պատճառները՝ հաշվի առնելով ամերիկյան պետության, ինչպես նաև օվկիանոսի այն կողմում նրա դաշնակիցների ներքին ու զլոբալ շահերը:

***Բանալի բառեր՝** լոբբի, ԱՄՆ հայկական համայնք, հայոց ցեղասպանություն, Արցախ, դաշնակիցներ, 907 բանաձև:*

THE PROCESS OF FORMATION AND THE MAIN ACTIVITIES OF ARMENIAN LOBBYING STRUCTURES OF THE USA

MARTUN AZATYAN

*PhD student of Russian-Armenian University,
Yerevan, Republic of Armenia*

Armenian lobbying framework has gone a long way of establishment and development, during which the main directions of its activity were defined. In this article the efforts of the Armenian lobby in the United States are represented and analyzed, the strengths and weaknesses as well as local and global factors, affecting a positive or negative result of the promotion of individual resolutions and bills are pointed out.

The purpose of this study is to identify the peculiarities of the work of the Armenian lobbying structures of the United States in specific historical stages, their goals and objectives, reaction to certain actions or counteractions of similar groups of interests and pressure of other ethnic elements, as well as the leading elite of the country of residence.

At the end of the work the main factors and reasons for the failure of the progress of certain bills, taking into account the internal and global interests of the American state, as well as its allies on the other side of the ocean are presented.

Keywords: *lobby, Armenian Diaspora in the USA, The Armenian Genocide, Artsakh, Dashnaks, Section 907.*

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆՋԱՏՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԲՆՈՒՅԹԸ*

ՀՏԴ 323.173

ՌԱՖԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀՀ ՊԿԱ քաղաքական կառավարման և
հանրային քաղաքականության ամբիոնի ասպիրանտ,
բ.Երևան, Հայաստանի Հանրապետություն
ravetisyan94@gmail.com

Հողվածում ուսումնասիրված են անջատողականության հայեցակարգային ըմբռնումները: Ժամանակակից աշխարհում կենտրոնամետ ու կենտրոնախույս արդիականացման միտումները հանգեցնում են ինտեգրացման ու տեղայնացման գործընթացների ակտիվացմանը: 21-րդ դարից սկսած քաղաքական անջատողականության, ինքնավարության, ինքնիշխանության ու սեցեսիայի գաղափարները վերաարժևորվեցին:

Աշխատության նպատակն անջատման Էության ըմբռնումն է, որի համար անհրաժեշտ է լուծել որոշակի հետապոտական խնդիրներ, որոնցից են՝ բնութագրել տեսական ու մեթոդական մոտեցումներն անջատողական դրսևորումների ուսումնասիրման համար, հստակեցնել «սեպարատիզմ» և «սեցեսիոնիզմ» հասկացությունների բնույթը:

Ուսումնասիրության օբյեկտը անջատումն է, որը դիտարկվում է որպես քաղաքական գործընթացների բաղկացուցիչ մաս: Իսկ ուսումնասիրության առարկան հանդիսանում է անջատման բովանդակությունն ու դինամիկան, որոնք դիտարկվում են քաղաքական գործընթացներում:

Հետապոտության մեթոդաբանական հիմքը կազմում են վերլուծության, համադրման, համակարգային մոտեցման մեթոդները: Հետապոտության շրջանակներում կիրառվել են տրամաբանական, պատմական, իրավական, մեկնաբանության և այլ մեթոդներ:

Ուսումնասիրելով քաղաքական անջատողականության Էությունն ու բովանդակությունը, կարելի է եզրակացնել, որ ժամանակակից միջազգային հարաբերություններում անջատման միջոցով քաղաքական անկախության հասնելը բավականին տարածված է և «սեպարատիզմ» և «սեցեսիոնիզմ» հասկացությունների նորովի մեկնաբանության անհրաժեշտություն է առաջանում:

Հողվածում դիտարկված են քաղաքական անջատողականության Էության ու բնույթի արդի մոտեցումները: Այդ համատեքստում առաջարկված է անջատողականությունն ուսումնասիրել որպես քաղաքական արդիականացման բաղադրիչ:

Բանալի բառեր՝ Սեպարատիզմ, սեցեսիոնիզմ, պետություն, բաժանում, ավտոնոմիզմ, ինքնիշխանություն, անկախություն, կենտրոնական իշխանություն:

Արդի գլոբալացման պայմաններում քաղաքական գործընթացների մեծ մասը կապված է անջատողականության (лат. *separatus*-անջատ) խնդիրների հետ: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ձևավորված Յալթա-Պոտսդամյան համակարգի քայքայումը և ԽՍՀՄ փլուզմանը հաջորդած Չեխոսլովակիայի և

* Հողվածը ներկայացվել է 19.04.2019թ., գրախոսվել՝ 31.05.2019թ., տպագրության ընդունվել՝ 17.06.2019թ.:

Չարավարկայի կազմալուծման հիմքում որոշակի դեր են խաղացել նաև անջատողական ձգտումները: Ցանկացած անջատողականություն ունի սեփական պատմությունը, փաստարկները, հիմնավորումները, նպատակները, իրագործման մեթոդները:

«Անջատողականություն» եզրույթը, ժամանակաշրջանով պայմանավորված, տարբեր մեկնաբանություններ է ունեցել: Օքսֆորդի բառարանում սահմանվում է որպես «որոշակի մարդկանց խմբի բաժանում ավելի մեծ խմբից՝ պայմանավորված նրանց եթևիկական, կրոնական, գեղերային առանձնահատկությամբ»¹²⁴: Իսկ ըստ Քեմբրիջի բառարանի՝ անջատողականությունը նշանակում է ընդհանուրից անջատվելու ձգտում (սովորաբար որևէ հանրությունից կամ խմբից): Թեև հաճախ կարող է վերածվել նաև քաղաքական անջատման՝ սեցեսիայի¹²⁵:

Անջատողականությունը մի կողմից՝ հիմնված է ինքնորոշման սկզբունքին, մյուս կողմից էլ՝ խախտում է պետության տարածքային ամբողջականության պահպանման սկզբունքը: Ինչպես փորձը ցույց է տալիս, դա կարող է հանգեցնել միջպետական ու միջազգային հակամարտությունների: Անջատողականության պատճառները շատ հաճախ կապված են մարդու իրավունքների, ժողովուրդների, եթևիկական, ռասայական կամ կրոնական խմբերի իրավունքների խախտման հետ: Այդ առումով անջատողականությունը կարող է դրական նշանակություն ունենալ, ինչպես եղավ գաղութատիրության դեմ պայքարում, որի արդյունքում առաջացան նոր, ինքնիշխան պետություններ: Անջատողական շարժումներն այսօր կարող են բազմաթիվ խնդիրներ ստեղծել ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող երկրների համար:

«Սեցեսիա» եզրույթը նույնպես ունի տարբեր մեկնաբանություններ: Ըստ Օքսֆորդի բառարանի՝ այն համարվում է պետության կազմից պաշտոնապես դուրս գալու գործողություն¹²⁶: Իսկ Քեմբրիջի բառարանում այն ներկայացվում է որպես որևէ պետությունից, կազմակերպությունից, տարածքից դուրս գալու և անկախության հասնելու գործընթաց¹²⁷: Այն ներառում է նաև գոյություն ունեցող պետությունից տարածքային անջատում և բնակչության առանձնացում՝ այդ պետության տարածքում նոր պետություն ստեղծելու նպատակով¹²⁸:

«Սեցեսիա» եզրույթը շատ հաճախ կարող է բացասական ընկալում ունենալ, քանի որ այն համարվում է տարածքային ամբողջականության խախտում: Բացասական ընկալումներից խուսափելու համար «անջատողական խմբավորումներ»-ը հաճախ փոխարինում են «անկախություն» եզրույթով¹²⁹: Անկախությունը եթևադրում է նոր պետության ստեղծում, որը պետք է իրագործվի իրավական ճանապարհով, սակայն աշխարհում շատ քիչ երկրներ կան, որոնք թույլ կտան իրավական ճանապարհով իրենց տարածքները մասնատել և նոր պետություններ ստեղծել, հակառակ դեպքում աշխարհը կլիներ ավելի մասնատված, քան այսօր է: Իսկ եթե քննարկենք սեցեսիայի և անկախության ներքին եղությունը, ապա կարելի է փաստել, որ դրանց բուն եղությունը գրեթե չի տարբերվում, քանի որ երկուսի պարագայում էլ նրանց հիմնական նպատակը տարածքային անջատումն ու նոր պետության ստեղծումն է:

¹²⁴ Oxford Living Dictionaries, <https://en.oxforddictionaries.com/definition/separatist> [հասանելի էր՝ 10.12.2018].

¹²⁵ Cambridge Dictionaries Online, <http://dictionary.cambridge.org/ru/separatism> [հասանելի էր՝ 10.12.2018].

¹²⁶ Oxford Living Dictionaries, <https://en.oxforddictionaries.com/definition/secession> [հասանելի էր՝ 15.12.2018].

¹²⁷ Cambridge Dictionaries Online, <https://dictionary.cambridge.org/dictionary/english/secession> [հասանելի էր՝ 15.12.2018].

¹²⁸ Pankovic, A., Radon, P., Secession, Ashgate Research Companion, GB, 2011, p. 1.

¹²⁹ Տե՛ս նույն տեղում:

Ինչպես շատ այլ սոցիալական ու քաղաքական երևույթներ, քաղաքական անջատումը կամ սեցեսիան, որպես հասկացություն, կարիք ունի համակողմանի պարզաբանման: Այդ համատեքստում հատկապես կարևորվում է սեցեսիայի իրավական բացատրությունը, որն, ըստ Ջ.Կրավֆորդի մոտեցման, սահմանափակվում է տարածքային անջատումով, որը հակասում է կենտրոնական իշխանության շահերին¹³⁰: Համատեղ համաձայնեցված տարածքների դուրսբերումը կամ առանձնացումը, համաձայն տվյալ սահմանման, չի համարվում սեցեսիա:

Իրավագիտության տեսանկյունից «սեցեսիա» եզրույթն առավել շատ ներկայացվում է իրավական ակտերի, միջպետական համաձայնագրերի շրջանակներում, և քննարկվում է դրա իրավաչափության աստիճանը, այսինքն՝ ինչքանով է օրինական պետության կազմից դուրս գալը որոշակի պայմաններում: Իսկ եթե դիտարկենք քաղաքական գիտության տեսանկյունից, ապա կարելի է նշել, որ տվյալ ոլորտում առավել շատ քննարկվում են անջատման պատճառները, հետագա քաղաքական զարգացումները և նախադեպային լինելու հանգամանքները կոնկրետ տարածաշրջանային քաղաքական գործընթացներում:

Քաղաքական անջատողականության եուրյունն ավելի պարզ հասկանալու համար պետք է դիտարկենք ոչ թե տվյալ տարածքի նկատմամբ իշխանության կամ ռեժիմի փոփոխության հարցերը, այլ պետք է քննարկենք միջազգայնորեն ճանաչված պետությունների կազմում տարածքների մասնատման խնդիրները: Այսինքն՝ սեցեսիան ներառում է միջազգայնորեն ճանաչված պետության կազմից դրա որոշակի միավորի առանձնացումը, որը ենթադրում է դուրս գալ կենտրոնական իշխանության կառավարման շրջանակներից, ընդ որում՝ և՛ տարածքային, և՛ բնակչության առումով ստեղծելով նոր սուվերեն պետություն:

Ա.Պավլովիչը, ընդհանրացնելով «սեցեսիա» եզրույթի եուրյանը, նշում է, որ այն համարվում է քաղաքական անջատման փորձ, որը կարող է հանգեցնել այլ պետությունների ստեղծմանը տվյալ պետության՝ միջազգայնորեն ճանաչված սահմաններում՝ առանց նախկին իշխանության համաձայնության, որն էլ կարող է ուղեկցվել ուժի սպառնալիքի կիրառմամբ¹³¹:

Ինչպես նշեցինք, իրավագիտության մեջ քաղաքական անջատման վերաբերյալ տարբեր կարծիքներ կան: Որոշները կարծում են, որ ժամանակի ընթացքում հնարավոր է միջազգային իրավունքի նորմերի միջոցով կարգավորել գոյություն ունեցող պետությունների կազմից դուրս գալու և նոր պետություն ստեղծելու իրավաքաղաքական խնդիրները, իսկ մյուս մասը թերահավատ է, քանի որ համոզված են, որ միջազգային իրավունքի նորմերը երբեք չեն կարող դառնալ պարտադրող գործիք:

Այնուամենայնիվ, կարելի է փաստել, որ սեպարատիզմն ավելի շատ քաղաքական գնահատական պարունակող եզրույթ է, իսկ միջազգային իրավունքի տեսանկյունից սեցեսիան ենթադրում է անջատվող սուբյեկտի իրավական գործողությունների ամբողջություն: Սեպարատիզմին քաղաքական գնահատական տալը՝ լինի դրական, թե բացասական, անմիջականորեն կապված է տվյալ երկրի շահերի հետ: Դա կարելի է փաստել ԵՄ օրինակով, որ ընդունում է Կոսովոյի անկախությունը, սակայն անտեսում է Արցախի ինքնորոշումը: Սա ապացուցում է այն հանգամանքը, որ յուրաքանչյուր պետություն կամ միջազգային կազմակերպություն անջատումը դիտում է միայն իր շահերի տեսանկյունից, այլ ոչ թե հարգելով որևէ շրջանում ապրող ժողովրդի ազատ ինքնորոշման իրավունքը:

Անջատողականությամբ զբաղվող շատ հեղինակներ, համեմատելով «բաժանում» ու «անջատում» հասկացությունները, հանգել են եզրակացության, որ

¹³⁰ Տե՛ս նույն տեղում:

¹³¹ Տե՛ս նույն տեղում, էջ 5:

թեն դրանք ունեն անվանական նմանություն, սակայն իմաստային առումով տարբեր են, քանի որ բաժանումը ենթադրում է երկու լեզվաբանական կողմերի համաձայնությամբ տարածքային բաժանում կողմերի միջև, իսկ անջատման պարագայում անջատվող կողմը չի համարվում լեզվաբանական: Չնայած որոշակի տարբերություններին՝ հաճախ օգտագործվում է նաև «բաժանում» հասկացությունը, որն իրավական տեսանկյունից համարվում է օրինական և կարող է ամրագրվել նաև պայմանագրով: Պատմության մեջ հաճախ կարելի է հանդիպել այդպիսի դեպքերի, որոնցից կարելի է նշել Չեխոսլովակիայի բաժանումը, երբ բաժանման սկզբունքով ստեղծվեցին երկու առանձին պետություններ՝ Չեխիան ու Սլովակիան:

«Սեցեսիոնիզմ» և «սեպարատիզմ» հասկացությունները հաճախ կարող են փոխարինել միմյանց, քանի որ նրանց բառարանային թարգմանությունները գրեթե նույնն են: Անջատողականությամբ զբաղվող մի շարք հետազոտողներ սեպարատիզմը բնորոշում են որպես ավելի լայն հասկացություն, քան սեցեսիան, որը ներառում է քաղաքական օտարում կենտրոնական կառավարությունից և այդ տարածքի նկատմամբ իշխանության վերահսկողության կրճատում:

Ս.Սոկոլովսկին կարծում է, որ ի տարբերություն անջատողականության՝ սեցեսիան ավելի նեղ ու կոնկրետ հասկացություն է, ինչը ենթադրում է պետության կազմից պաշտոնապես առանձնացում, կապերի խզում կենտրոնական իշխանության հետ և ինքնիշխանության ձեռքբերում¹³²: Այնուամենայնիվ, այդ երկու հասկացությունները ենթադրում են կապերի խզում, ինչը տեղի է ունենում անջատվող կողմի և կենտրոնական իշխանության միջև, և հաճախ այդ հակասությունները վերածվում են լուրջ հակամարտության:

Անջատումն ու անջատողական շարժումները կարող են փոխակերպել միմյանց քաղաքական զարգացման տարբեր փուլերում, մասնավորապես նրանց ղեկավարները կարող են փոխել նպատակները, գիտակցաբար կամ անգիտակցաբար շահարկել այդ հասկացության նշանակությունը¹³³: Կարելի է փաստել, որ գրեթե բոլոր անջատողական շարժումներում ղեկավարները կարող են առաջնորդվել նաև անձնական փառասիրությամբ և կարող են կատարել այնպիսի որոշումներ, որոնք կարող են բխել նաև իրենց անձնական շահերից: Մասնավորապես՝ քննարկելով եվրոպական անջատողական շարժումները՝ կարելի է արձանագրել, որ հիմնականում դրանց կազմակերպման գլխավոր դերակատարները որոշ կուսակցություններ են, որոնց նպատակը, բացի անջատվելուց և առանձին պետություն ստեղծելուց, այն է որ ցանկանում են ավելի մեծ իշխանություն ձեռք բերել և ավելի մեծ ռեսուրսների տիրապետել: Այդ պարագայում կարելի է համաձայնվել այն մտքի հետ, որ որոշ կուսակցությունների ղեկավարներ հաճախ շահարկում են «անջատողականություն» հասկացությունը, որը վաղ թե ուշ կարող է ըմբռնելի դառնալ հասարակության համար:

Ա. Բյուկենենայի կարծիքով՝ որոշ դեպքերում անջատումը կարծես բարոյապես արդարացված է, քանի որ այն չի խախտում լիբերալիզմի հիմնական արժեքները, որոնք են՝ ազատությունը և մարդու իրավունքների գերակայությունը¹³⁴: Սակայն, եթե առաջնորդվենք միայն լիբերալիզմի հիմնական արժեքներով, ապա աշխարհում կլինեին ավելի շատ սուվերեն երկրներ, քան այսօր: Աշխարհում աստիճանաբար մեծանում է այն տարածքների թիվը, որոնք ցանկանում են դառնալ անկախ ու

¹³² **Соколовский С. В.**, Права меньшинств: антропологические, социологические и международно-правовые аспекты, Московский общественный научный фонд, 1997, http://society.polbu.ru/sokolovsky_prava/ch18_i.html [հասանելի էր՝ 08.12.2018].

¹³³ Տե՛ս նույն տեղում:

¹³⁴ **Бьюкенена А.**, “Сецессия. Право на отделение, права человека и территориальная целостность государства”, Музей и общественный центр имени Андрея Сахарова, Москва, 2001, <http://old.sakharov-center.ru/publications/sec/002.html> [հասանելի էր՝ 02.12.2018].

ինքնուրույն, սակայն նրանք հաճախ հաշվի չեն առնում այն խնդիրները, որոնք կարող են ծագել կենտրոնական իշխանությունից առանձնանալուց հետո:

«Սեպարատիզմ» եզրույթը հաճախ նույնականացվում է «ավտոնոմիզմ» եզրույթի հետ, ինչը կարող է հիմնավորված լինել այն փաստով, որ ինքնավարությունը հաճախ հանգեցնում է անջատման և կա հստակ տարանջատում այդ երկու հասկացությունների միջև: Դրանք հաճախ կարող են օգտագործվել միմյանց փոխարեն, սակայն ավտոնոմիզմի համար մղվող շարժումներն ավելի չափավոր են և, ի տարբերություն անջատողական շարժումների, պատրաստ են որոշակի փոխզիջումների¹³⁵:

Բ.Ռոհները պետությունը կառուցվածքային համախմբման առումով նմանեցնում է արեգակնային համակարգի հետ, այսինքն՝ եթե արեգակնային համակարգում թուլանա արեգակի ձգողականությունը, ապա որոշ մոլորակներ կհեռանան արեգակից, որին կհաջորդի նաև այլ մոլորակների հեռացումը, և դա կշարունակվի ընդհուպ մինչև արեգակնային համակարգի վերջնական վերացումը: Հնարավոր է նաև հակառակ երևույթը, երբ արեգակի ձգողականության մեծացմանը զուգահեռ այլ մոլորակներ, որոնք նախկինում չեն պատկանել արեգակնային համակարգին, ձգտեն միանալ դրան¹³⁶:

Այս նկարագրությունը հնարավորություն է ստեղծում ավելի պատկերավոր հասկանալու համար անջատողականությունը, որտեղ արեգակը համարվում է կենտրոնական կառավարությունը, իսկ մոլորակները՝ պետության տարբեր տարածաշրջանային բաղադրիչները, որոնք միասին կազմում են պետությունը: Հաշվի առնելով այն փաստը, որ աշխարհի պետությունների մեծ մասում բնակվում են մեկից ավելի ազգերի ներկայացուցիչներ, որոնք սովորաբար կենտրոնացած են լինում որոշակի շրջաններում, ապա կենտրոնական կառավարության թուլացումից հետո հավանականությունը մեծանում է, որ պետության տարածքային բաղադրիչները կձգտեն ստանալ ինքնավարություն կամ ծայրահեղ դեպքում կփորձեն դառնալ անկախ պետություն:

Ըստ որոշ տվյալների՝ 1990-ական թվականներից ի վեր աշխարհում ստեղծվել է 34 նոր պետություն¹³⁷: Այդ պետություններից շատերն անկախություն ձեռք բերեցին Խորհրդային միության և Հարավսլավիայի փլուզումից հետո: Անջատողական շարժումների արդյունքում հետագայում աշխարհում ստեղծվեցին մի շարք նորանկախ պետություններ, որոնցից են՝ Հարավային Սուդանը, Կոսովոն, Էրիտրեան, Արևելյան Թիմորը, Չեռնոգորիան և այլն:

Եթե քննարկենք անջատողականության տեսահայեցակարգային հիմքերը Ղարաբաղյան հակամարտության համատեքստում, ապա կարելի է փաստել, որ Արցախի ինքնորոշումը չի կարող համարվել անջատման արդյունք, քանի որ այն երբևէ չի եղել անկախ Ադրբեջանի կազմում: Երբ Ադրբեջանը հռչակում էր իր անկախությունը, տվյալ ժամանակ Արցախն իրավական առումով չէր գտնվում Ադրբեջանի հանրապետության կազմում, ավելին՝ 1991թ.-ին Ադրբեջանը իրեն հայտարարեց 1918-1920թթ. Ադրբեջանի դեմոկրատական հանրապետության իրավահաջորդ, որի կազմում Արցախը չկար:

Արցախի ինքնորոշումը եղել է ԽՍՀՄ գործող սահմանադրության համապատասխան, ուստի այն չի կարելի համարվել անջատողական շարժում, քանի որ ԽՍՀՄ փլուզումից հետո ինչպես մնացած այլ հանրապետությունները, այնպես էլ ԼՂԻՄ-ը հավասար իրավունքներ են ունեցել ինքնորոշվելու:

¹³⁵ **Roehner B., Rahilly L.**, Separatism and disintegration, University of Paris 6 (Pierre and Marie Curie), 2016, p.7.

¹³⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 8:

¹³⁷ **Dayton R.**, Separatism, Globalization, and the European Union, Miami-Florida European Union Center of Excellence, Vol. 15 No. 2015, p.3.

Այժմ աշխարհի տարբեր հատվածներում ծավալվում են անջատողական շարժումներ, որոնց նպատակների վերջնակետը նույնպես անկախ պետական միավորի ստեղծումն է: Այդ համատեքստում կարելի է առանձնացնել քրդական անջատողականությունը Մերձավոր Արևելքում, Տիբեթի անջատողականությունը Չինաստանում, Զվերեկի անջատողականությունը Կանադայում և այլն:

Հաճախ անջատողական շարժումները զուգորդվում են ահաբեկչական գործողությունների հետ: Դրա վառ ապացույցներից են ռուս-չեչենական պատերազմի ժամանակ տեղի ունեցած ահաբեկչական գործողությունները: Կարելի է նաև առանձնացնել «Իսլամական պետություն» խմբավորման ահաբեկչական գործողությունները, որոնք նույնպես անմիջականորեն կապված են անջատողականության հետ: Կրոնական ծայրահեղականությունը որպես զաղափարախոսության հիմք ընդունելով՝ նրանք փորձում են ստեղծել համաշխարհային խալիֆայություն:

Ահաբեկչական ակտ կարելի է համարել նաև արցախյան շարժման ժամանակ Բաքվի, Սումգայիթի, Կիրովաբադի և Ադրբեջանի այլ հայաշատ քաղաքներում տեղի ունեցած դեպքերը: Այդ ժամանակ Բաքվի կողմից իրականացվում էին հայության նկատմամբ զանգվածային կոտորածներ, որոնց արդյունքում ունեցանք բազմաթիվ զոհեր, իսկ հայության մնացյալ հատվածը բռնի տեղահանության ենթարկվեց:

Ներկայումս աշխարհում կան անջատողականության մոտ 50 թեժ կենտրոններ, որոնք ներգրավվում են ավելի քան 200 միլիոն մարդու, դրանցից մոտ 20-ը գտնվում է Եվրոպայում: Տարբեր հաշվարկներով Եվրոպայում ներկայումս գործունեություն են ծավալում մոտ 200 անջատողական կուսակցություններ, շարժումներ, կազմակերպություններ¹³⁸: Նրանցից շատերի գործունեությունը համարվում է հակաօրինական, բայց կան նաև օրինական կազմակերպություններ: Նույնիսկ զարգացվածության աստիճանով աշխարհի առաջատար երկրներից Ֆիլիպինիայում նույնպես կան նման կուսակցություններ, ինչպիսիք են՝ «Ալանդի ապագան» և «Սամիի խորհրդարանը»:

Եվրոպայում անջատողական կազմակերպությունների մեծ մասն իրենց գործունեությունը ծավալում են Իսլանդիայում, Իտալիայում և Ֆրանսիայում: Նրանց թվում են նաև այնպիսի հայտնի կազմակերպություններ, ինչպիսիք են՝ բասկյան «Բատասունա» և «Նիցյան ապստամբություն» կուսակցությունները: Ինչպես ցույց է տալիս պատմությունը, արտաքին կամ ներքին որոշակի ազդեցության պայմաններում անջատողական կազմակերպությունների Եվրոպցիան կարող է փոխվել և չափազանց վտանգավոր դառնալ պետությունների համար: Այդ դեպքում առաջ է գալիս նաև «զուլմավոր հեղափոխությունների» կանխման խնդիրը, որոնց հետևանքները հաճախ կապված են անջատողականության հետ:

Այսպիսով՝ ընդհանրացնելով «սեպարատիզմ» և «սեցեսիոնիզմ» հասկացությունների ուսումնասիրումը, կարելի է փաստել, որ թեև դրանք ունեն հասկացությային որոշակի նմանություններ, սակայն բուն էությունը տարբեր է, մասնավորապես՝ «սեպարատիզմ» հասկացությունը ենթադրում է ընդհանուրից առանձնանալու ձգտում, իսկ «սեցեսիոնիզմ» հասկացությունն ունի ավելի կոնկրետ բնորոշում՝ համարվում է քաղաքական անջատում և պետության կազմից առանձնացում:

Կարելի է փաստել, որ քաղաքական անջատողականությունը հիմնված է միջազգային իրավունքի՝ ազգերի ինքնորոշման սկզբունքի վրա, սակայն մյուս կողմից այն համարվում է միջազգային իրավունքի մեկ այլ նորմի՝ պետության տարածքային ամբողջականության խախտում: Վերջինս անընդմեջ շեշտվում է պաշտոնական

¹³⁸ Носов М.Г., Сепаратизм в политической Жизни современной Европы, Институт Европы Российской академии наук, Москва, 2015, с. 9.

Բաբվի կողմից Արցախի հիմնահարցի առնչությամբ, սակայն փաստ է, որ Արցախը երբեք անկախ Ադրբեջանի կազմում չի եղել, հետևաբար չի կարող առկա լինել այդ պնդումը:

Կարելի է եզրակացնել նաև, որ յուրաքանչյուր պետություն կամ միջազգային կազմակերպություն, հաշվի առնելով սեփական շահերը, կարող է յուրովի մեկնաբանել քաղաքական անջատողականությունն ու ինքնորոշումը:

Թե հետագայում ինչպես կարող է զարգանալ անջատողականությունը, դժվար է ասել, բայց եթե հաշվի առնենք միգրացիայի, կրոնական առճակատման ու սոցիալական անհավասարության աճը, ապա կարելի է պնդել, որ անջատողական ձգտումները գնալով կմեծանան:

THE ESSENCE AND NATURE OF POLITICAL SEPARATISM

RAFIK AVETISYAN

*PhD Student of the Political Governance and Public Policy
At the Public Administration Academy of the RA,
Yerevan, Republic of Armenia*

The conceptualist perceptions of separatism are examined in the article. In the modern world, the centrifugal modernization trends lead to the activation of integration and localization processes. From the 21st century, the ideas of political separatism, sovereignty and secession have been re-evaluated.

The purpose of the work is to grasp the essence of secession, for which it is necessary to solve certain research problems, such as to describe the theoretical and methodological approaches for studying separatist manifestations, to clarify the nature of the concepts of "separatism" and "secessionism."

The object of the study is the separation that is viewed as part of the political process. And the subject of the study is the content and dynamics of separation, which are observed in political processes.

The methodological basis of the research is the methods of analysis, comparison, and system approach. The study included logical, historical, legal, interpretative and other methods. Studying the essence and content of political separatism, one can conclude that the achievement of political independence by secession in modern international relations is quite common, and there is a need for the interpretation of the terms of "separatism" and "secessionism."

The article considers current trends in the nature and nature of political separatism. In that context, it is proposed to study separatism as a component of political modernization.

Keywords: *Separatism, secession, state, division, autonomy, sovereignty, independence, central government.*

СУЩНОСТЬ И ХАРАКТЕР ПОЛИТИЧЕСКОГО СЕПАРАТИЗМА

РАФИК АВETИСЯН

*аспирант кафедры политического управления и публичной
политики Академии государственного управления РА,
г.Ереван, Республика Армения*

В статье рассматриваются концептуалистические представления о сепаратизме. В современном мире тенденции централизованной и центробежной модернизации приводят к активизации процессов интеграции и локализации. С 21-го века идеи политического сепаратизма, суверенитета и отделения были переоценены.

Цель работы – понимание сути отделения, для чего необходимо решить некоторые исследовательские задачи, такие как: охарактеризовать теоретические и методические подходы для изучения сепаратистских проявлений; уточнить характер понятий "сепаратизм" и "сецессионизм". Объектом исследования является отделение, которое рассматривается как составная часть политических процессов. А предметом исследования является содержание и динамика отделения, которые рассматриваются в политических процессах.

Методологическую основу исследования составляют методы анализа, сопоставления и системного подхода.

Изучая суть и содержание политического сепаратизма, можно сделать вывод о том, что в современных международных отношениях достаточно распространено достижение политической независимости посредством отделения, и поэтому возникает необходимость в новом толковании понятий "сепаратизма" и "сецессионизма".

В статье рассматриваются современные подходы к сущности и характеру политического сепаратизма. В данном контексте предлагается изучить сепаратизм как компонент политической модернизации.

Ключевые слова: *сепаратизм, сецессия, государство, разделение, автономия, суверенитет, независимость, центральное правительство.*

ՓՈՐԹՈՂՈՎՐԴԻ ՄԵԾ ԵՐԱԶԱՆՔԸ. ԱՐՑԱԽՅԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ՀԱՅՈՑ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԳՈՅԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ*

ՀՏԴ 323.17:94 (479.25)

ԽԱԶԻԿ ԳԱԼՍՏՅԱՆ

ԵՊՀ քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնի դոցենտ,
քաղաքական գիտությունների դոկտոր, ԱԵԳՄՄ պատվավոր անդամ,
բ.Երևան, Հայաստանի Հանրապետություն
khqalstyan@yahoo.com

Հայ ժողովրդի նորագույն պատմության ամենալուսավոր, հայի հավաքական անպարտելի կերպարի հիշատակության արժանի էջերից է Արցախյան շարժումը, որը, վերաճելով ազգային ապստամբական պայքարի, վերստին ապացուցեց այս արևի տակ հայ ժողովրդի՝ իր հայրենիքում ապատ ու անկախ ապրելու անխախտ իրավունքը: 88-ի ազգային-ապստամբական վարթոնքը, խորհրդային ու ադրբեջանական իշխանությունների դեմ մղվող անհավասար գոյակռիվը, ազգային համերաշխությունն ու համախմբվածությունը հանգեցրեցին Արցախի ապստամբական ու հայրենիքի այդ հատվածում անկախ պետականության հռչակմանը: Այս առումով անժխտելի է շարժման նշանակությունը հայկական երկու հանրապետությունների հռչակման ու կայացման գործում: Միաժամանակ պետք է ընդգծել, որ Արցախյան շարժման ներուժն ու նրա ազդեցությունը հայոց ինքնության գոյաբանության համատեքստում ոչ բավարար չափով է ուսումնասիրված: Իրականում Արցախյան շարժման ընդերքում շատ ավելի խորքային ծալքեր կան, որոնք շոշափում են հայության ինչպես անցյալ-ներկայի, այնպես էլ ապագային միտված արժեքային, գաղափարա-քաղաքական ու հոգևոր-մշակութային հիմքերը:

Հոդվածում Արցախյան շարժումը դիտարկվում է պասիոնարության տեսության լույսի ներքո, ինչպես նաև առաջ է քաշվում արարիվմի գաղափարախոսությունը՝ որպես արդի հասարակական-քաղաքական փոխակերպումների համատեքստում հայոց ինքնության գոյաբանության նոր բանաձև:

Բանալի բառեր՝ Արցախյան շարժում, հայկական ինքնություն, պասիոնարության տեսություն, խորհրդային և հետխորհրդային քրոնոտոպ, էթնոգենեզ, Արցախյան հակամարտություն, էքստրակտիվ ու ինկյուլիվ ինստիտուտներ, գոյապահպանության գաղափարախոսություն, արարիվ:

Մեծ պատմահայրը՝ Մովսես Խորենացին, դեռևս 5-րդ դարում, ձեռնամուխ լինելով հայ ժողովրդի պատմության ու ծագումնաբանության հիմնահարցերի լուսաբանմանը, նշում է, որ հայ ժողովուրդը թեպետ փոքր է քանակով և շատ անզամ օտար թագավորությունների կողմից նվաճված, բայց և այնպես հայկական աշխարհում էլ քաջության շատ գործեր կան գործված՝ գրելու և հիշատակելու արժանի¹³⁹: Խորենացին, հայ ժողովրդի ծագումնաբանությունը հասցնելով մինչև աստվածաշնչյան Նոյի ժամանակներ, հին ազգերի «պանթեոնում» հայ ժողովրդի համար պատվավոր տեղ ապահովեց: Դարերի խորքից նա Հայկի սերունդներին արարչական սկիզբ ունեցող ազգի լույսով ողողեց ու թաքնված պատգամ հղեց. «...թեպետ մենք փոքր ածու

* Հոդվածը ներկայացվել է 06.05.2019թ., գրախոսվել՝ 17.05.2019թ., տպագրության ընդունվել՝ 17.06.2019թ.:

¹³⁹ Խորենացի Մ. Պատմություն հայոց. Ե., 1997թ. «Հայաստան», էջ 70:

ենք և շատ սահմանափակ թվով և շատ անգամ օտար թագավորության տակ նվաճված, բայց և այնպես մեր աշխարհում էլ քաջության շատ գործեր կան գործված, գրելու և հիշատակելու արժանի...»:

Այդ առումով սխալված չենք լինի, եթե պնդենք, որ հայ ժողովրդի նորագույն պատմության ամենալուսավոր, քաջության ու անձնուրացության, հայի հավաքական անպարտելի կերպարի հիշատակության արժանի էջերից է Արցախյան շարժումը, որը, վերաճելով ազգային ազատագրական պայքարի, վերստին ապացուցեց այս արևի տակ հայ ժողովրդի՝ իր հայրենիքում ազատ ու անկախ ապրելու անխախտ իրավունքը: 88-ի ազգային-ազատագրական զարթոնքը, խորհրդային ու ադրբեջանական իշխանությունների դեմ մղվող անհավասար գոյակռիվը, ազգային համերաշխությունն ու համախմբվածությունը հանգեցրին Արցախի ազատագրմանն ու հայրենիքի այդ հատվածում անկախ պետականության հռչակմանը: Այդ առումով անժխտելի է շարժման նշանակությունը հայկական երկու հանրապետությունների հռչակման ու կայացման գործում: Միաժամանակ պետք է ընդգծել, որ Արցախյան շարժման ներուժն ու նրա ազդեցությունը հայոց ինքնության գոյաբանության համատեքստում ոչ բավարար չափով է ուսումնասիրված: Իրականում Արցախյան շարժման ընդերքում շատ ավելի խորքային ծալքեր կան, որոնք շոշափում են հայության ինչպես անցյալին ու ներկային, այնպես էլ ապագային միտված արժեքային, գաղափարա-քաղաքական ու հոգևոր մշակութային հիմքերը:

Արցախյան շարժման էներգետիկան խորհրդային ու հետխորհրդային քրոնոտոպում

Գաղտնիք չէ, որ մարդկային օրգանիզմն օժտված է որոշակի կենսական էներգիայով, որն ակտիվ փոխազդեցության մեջ է գտվում շրջակա միջավայրի հետ, որ մեզից յուրաքանչյուրին պարուրում է որոշակի էներգետիկ դաշտով, այլ կերպ ասած՝ աուրայով: Եթե անհատական մակարդակում մարդը որոշակի էներգիայի կրող ու ճառագող է, ապա հարց կարող է առաջանալ՝ մարդկային ավելի մեծ խմբերի, օրինակ՝ ազգերի կամ էթնիկական հանրությունների մակարդակում կարո՞ղ ենք արդյոք խոսել էներգիայի դրսևորման համապատասխան ձևերի մասին: Կենսոլորտի տեսության ներկայացուցիչների¹⁴⁰ համար պատասխանը միանշանակ է՝ այո՛, քանի որ մարդկային հանրությունները, այդ թվում՝ էթնիկական խմբերը կենսոլորտի անբաժան մաս են կազմում և ենթարկվում են կենսաքիմիական էներգետիկ փոխակերպումների: Ըստ Լ.Գումիլյովի՝ հենց նման բնույթի կենսաքիմիական էներգետիկ փոխակերպումների արդյունք են էթնոսները, որոնց՝ կենսոլորտի կենսաքիմիական էներգիայի կլանման ունակությունն էլ կանխորոշում է էթնոգենեզի գործընթացը¹⁴¹: Այլ կերպ ասած՝ պասիոնարության որոշակի քանակն ու դրսևորման մակարդակն ուղղակիորեն ազդում են էթնոսների ծագման, զարգացման, ինչու չէ՞ նաև անհետացման գործընթացների վրա: Գումիլյովի պասիոնարությունը մի կարևոր հատկանիշ էլ ունի՝ վարակիչ է: Բավական է հայտնվել պասիոնար անհատների կողքին, մարդիկ սկսում են իրենց պահել պասիոնար վարքաբանությամբ: Արդյո՞ք Արցախյան շարժումը նման չէր Գումիլյովյան պասիոնար բռնկումներին, երբ հարյուր հազարավոր մարդիկ, մեկ մարդու պես բռնուցք դարձած, խորհրդային լճացման ու գորշապատ միապաղաղության օդը ճեղքելով, միասնական վանկարկում էին ազգային ինքնանույնականացման ու արժանապատվության բառերը՝ ՄԻԱՑՈՒՄ: Պասիոնարության ինչպիսի՞ բռնկում, ազգային ստեղծարար էներգիայի ինչպիսի՞

¹⁴⁰ Вернадский В. Об условиях появления жизни на Земле. // Владимир Вернадский. Избранные труды./ Сост. Г. Аксенов. М., 1993.

¹⁴¹ Гумильев Л. Этногенез и биосфера Земли. М., Айрис-Пресс. 2016.

հորդառատ պարպում: Արցախյան շարժման առաջին ամիսներին հենց այդպիսի մթնոլորտ էր տիրում ողջ Հայաստանում ու Արցախում: Բազմահազարանոց ցույցեր, խաղաղ երթեր, բուռն քննարկումներ, ազգային ինքնագիտակցության վերելք ու հայ լինելու բերկրանք: Խորհրդային Միության գաղափարախոսական հավատամքին խորթ թվացող մի անբացատրելի երևույթ էր դա: Միլիոնավոր մարդկանց միավորում էր ոչ թե դասակարգային, կուսակցական կամ սոցիալական պատկանելությունը, այլ էթնիկական ԵՍ-ը, հազարամյակների խորքից եկող, սերնդեսերունդ փոխանցվող, գենետիկորեն անջնջելի պատմական հիշողությունը: Օտարի համար անհասկանալի զգացում էր դա: Բնականաբար, բազմահազարանոց հանրահավաքների մասին օպերատիվ տեղեկատվությունը համապատասխան խողովակներով հասնում էր կենտրոն՝ Մոսկվա, որտեղ նստած չինովսիկների առաջին արձագանքը զարմանքն էր: Ըստ նրանց՝ անհավատալի էր, որ կովկասյան փոքրիկ հանրապետությունում տաքայրյունությամբ ու շուտ բռնկվող բնավորությամբ աչքի ընկնող ժողովրդի մեջ ոչ մի բախում, ոչ մի հրմշտոց չարձանագրվեց: Նույնիսկ գողերն էին դադարել գողություն անել: Այդպիսի էներգետիկա ուներ շարժումը:

Գորբաչովյան վերակառուցման քաղաքականությունը, ժողովրդավարացման ու հրապարակայնության՝ առերևույթ հռչակած կարգախոսները միևնույն ժամանակ հնարավորություն էին ընձեռում վերհանելու Լեռնային Ղարաբաղի՝ մայր հայրենիքին վերամիավորվելու՝ տասնամյակներ շարունակ ծխացող հարցը: Այսպես, հիմնվելով խորհրդային ղեկավարության հռչակված ժողովրդավարացման, հրապարակայնության ու վերակառուցման գաղափարախոսական սկզբունքների վրա՝ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի Ժողովրդական պատգամավորների մարզխորհրդի 1988թ.-ի փետրվարի 20-ի արտահերթ նստաշրջանում, ընդառաջ գնալով ԼՂԻՄ աշխատավորների ցանկությանը, որոշում ընդունվեց խնդրել Ադր ԽՍՀ և ՀԽՍՀ Գերագույն Խորհուրդներին՝ քննության առնելու ԼՂԻՄ-ի Ադր ԽՍՀ-ի կազմից դուրս բերելու և ՀԽՍՀ-ին միանալու վերաբերյալ հարցը՝ միաժամանակ միջնորդելով ԽՍՀՄ Գերագույն Խորհրդին՝ հարցի դրական լուծման համար¹⁴²: Այդ որոշումը մեծ ռեզոնանս առաջացրեց ինչպես ադրբեջանական, այնպես էլ խորհրդային կենտրոնական իշխանությունների շրջանում, որոնք միանշանակ բացասական արձագանք տվեցին այդ խնդրանքին: ԼՂԻՄ աշխատավորների խնդրանքին ադրբեջանական իշխանությունները ընդամենը մի քանի օր հետո պատասխանեցին սումգայիթյան ողբերգությամբ՝ մինչ այդ ԽՍՀՄ-ում նմանը չունեցող ազգային պատկանելիության հողի վրա բնակչության մասսայական սպանության դեպքերով: 1988թ.-ի փետրվարի 27-29-ը ադրբեջանական Սումգայիթ քաղաքում երեք օր շարունակ ամբողջ դաժանորեն սպանում, թալանում, բռնաբարում էր քաղաքի հայ ազգաբնակչությանը: Խորհրդային կենտրոնական իշխանությունների թողտվությունն ու անգործությունը աստիճանաբար ավելի էին սրում իրավիճակը և ոգևորում ադրբեջանական իշխանություններին: 1988թ.-ի մարտի 24-ին ԽՍՀՄ Կենտկոմի և ԽՍՀՄ Նախարարների խորհրդի՝ 1988-1995թթ. Լեռնային Ղարաբաղի Ինքնավար մարզի սոցիալ-տնտեսական զարգացման միջոցառումների վերաբերյալ որոշումը, որով նախատեսված միջոցառումները հետագայում հիմնականում ուղղվեցին մարզի ադրբեջանական բնակավայրերի արհեստական խոշորացմանը և միակողմանի, ադրբեջանամետ քաղաքականության իրականացմանը: Ըստ Եուլայան, Լեռնային Ղարաբաղի հայության բարձրացրած քաղաքական հիմնահարցի իրական լուծման փոխարեն հիմնախնդիրը խճճվեց մարզի սոցիալ-տնտեսական զարգացման միջոցառումների անհեռանկար փայթեթով: Աստիճանաբար պարզ էր դառնում, որ

¹⁴² Арутюнян В. События в Нагорном Карабахе. Ер., 1990. с. 38.

հիմնահարցի լուծման սահմանադրական-իրավական եղանակները սպառվում են, որ պետք են հիմնահարցի լուծման ավելի արմատական տարբերակներ: Ու նորից պասիոնար անհատների ժամանակաշրջան, որոնք, իրենց կյանքը վտանգելով, արյան ու մաքառման գնով ազատագրեցին հայրենիքի մի հատվածը՝ պաշտպանելով հայի՝ սեփական հողում խաղաղ գոյության իրավունքը:

Ինչպես նշում է Լ.Գումիլյովը, էթնոգենեզի յուրաքանչյուր գործընթաց սկիզբ է առնում փոքրաքանակ պասիոնարների հերոսական, երբեմն նույնիսկ ինքնազոհաբերական գործողություններից, որոնց հետագայում միանում են ավելի մեծ թվով մարդիկ: Իհարկե, այս կամ այն մարդը կարող է տարբեր շարժառիթներ ունենալ, բայց մտնելով իր աչքի առջև ձևավորված համակարգի մեջ՝ դառնում է պասիոնար ինդուկցիայի կրող¹⁴³: Այդ իսկ պատճառով էլ հերոսականության այիքը վարակում է մեծամասնությանը, հանուն հայրենիքի կյանքը զոհաբերելը դառնում է հասարակական նորմ ու ընդօրինակման առարկա: Ինչպիսի՞ն կլիներ պատերազմի ընթացքը, եթե չլիներ Վազգեն Սարգսյանի կոչն ու 500 մահապարտների գնդի հավաքագրումը: Դժվար է ասել, սակայն փաստ է, որ այն, իրավամբ, բեկեց պատերազմի ընթացքը: Արցախյան կարգավորման համատեքստում մեր ուղեղներում ու կոնկրետ գործողություններում մենք միշտ պետք է նկատի ունենանք «ազգ-մահապարտ» հայեցակարգը: Աստված մի արասցե, սակայն անհրաժեշտության դեպքում մեր հակառակորդները կարող են բախվել բազմամիլիոնանոց մահապարտների բանակի հետ, ինչն արդեն անպարտելի ուժ է:

Ի՞նչ եղավ հետո: Արդեն պետք է ցավալի բաների մասին խոսենք: Ազգին ոգեշնչող ստեղծարար Էներգետիկան մի կողմից՝ բախվեց խորհրդային ու ադրբեջանական ղեկավարության բիրտ ուժին, մյուս կողմից՝ վերածվեց ավերման մոլուցքի ու ինքնառչնչացման տենդի: Բիրտ ուժին փառքով դիմակայեցինք, հազարավոր հայորդիների պասիոնար Էներգիան պարպվեց մարտի դաշտում՝ վերածվելով հայրենիքի ազատագրման բաղձալի նպատակի, սակայն ներքին մարտահրավերները լիարժեք հաղթահարել չհաջողվեց: Հայաստանի անկախության հռչակումից շատ չանցած՝ շարժումը պառակտվեց: Երբեմնի հավատարիմ զինակիցները հայտնվեցին բարիկադների տարբեր կողմերում, իսկ ՀՀ քաղաքական կյանքում Արցախյան հիմնահարցը բազմիցս դարձավ ներքաղաքական շահարկումների ու լուրջ տարաձայնությունների առարկա: Արդյունքում՝ հանուն իշխանության մղվող ներտեսակային կոշտ պայքար, տասնյակ քաղաքական սպանություններ, սոցիալական ապատիա, զանգվածային անոմիայի երևույթներ ու անկախ հայրենիքից հեռանալու, օտար ավերում բախտ որոնելու անդառնալի ու չդադարող հոսք: Ինչո՞ւ այդպես ստացվեց, արդյո՞ք սրանք են մեր բնական վիճակն ու հայկական ինքնության Էկզիստենցիալ բնութագրիչները՝ ցիրուցան լինել աշխարհով մեկ, տրոհել ազգի կենարար ներուժն ու առաջնորդվել այսրոպեական շահերով՝ «որտեղ հաց, այնտեղ կաց» կարգախոսով: Դժվար թե Արարիչը դրա համար ստեղծած լիներ մեզ: Սակայն սրանք հարցեր են, որոնք շուտափույթ պատասխանների են սպասում:

Փոքր ազգին հարկավոր է մեծ երազանք. արարիչի հայեցակարգային ուրվագծերը

Նորից վերադառնանք մեծ պատմահորը՝ Մովսես Խորենացուն: Հայոց ինքնության փնտրտուքներում Խորենացին երկու կարևոր ուղերձ է մեզ փոխանցում: Առաջին՝ մենք արարչական սկիզբ ունեցող ազգ ենք, երկրորդ՝ փոքր լինելով հանդերձ մենք մեծ գործերով ենք աչքի ընկնում: Այլ հարց է, որ հայ ժողովրդի զարգացման ընթացքում ազգային ինքնության այդ երկու կարևոր կողերը կարող էին որոշակիորեն

¹⁴³ Гумилев Л., նշվ. աշխ.:

ձևափոխվել: Օրինակ՝ արարչական սկզբի փոխարեն հազարամյակներ շարունակ սեփական տեսակի պահպանման կամ, ինչպես բնորոշում է Յ.Մանուչարյանը, հայության գոյապահպանության գաղափարախոսությունն է եղել առաջնայինը¹⁴⁴:

Պատմականորեն գտնվելով աշխարհակալ պետությունների շահերի բախման կիզակետում, դարերի ընթացքում բազմիցս վերականգնելով ու կորցնելով անկախ պետականությունը՝ հայ ժողովուրդն օբյեկտիվորեն ստիպված է եղել գոյատևել անորոշությունների մեծ շրջապտույտում, անընդմեջ կռիվ տալ սեփական տեսակի պահպանման հավերժական գոյամարտում, հաղթահարել բարոյահոգեբանական, սոցիալ-քաղաքական տարաբնույթ ինստիտուցիոնալ ճգնաժամերն ու անորոշությունները: Հետևաբար, մի կողմից՝ կարծես հայի տեսակը հանգիստ է վերաբերվում նմանատիպ անորոշություններին, հազարամյակների ընթացքում նույնիսկ մշակել է որոշակի իմունիտետ անորոշություններով լի իրավիճակների նկատմամբ, որը Գ.Պողոսյանի բնութագրմամբ՝ դրսևորվում է «հայկական կենսունակության» տեսքով¹⁴⁵, մյուս կողմից՝ նույն գոյատևման բնագործ ստիպել է դարերով անսասան պահել հայության ինքնության ձևավորման գործում մեծ ավանդ ունեցող այնպիսի կառույցներ, ինչպիսիք են՝ ընտանիքը, համայնքը, եկեղեցին: Պատմականորեն հիմնական արտաքին, ագրեսիվ էքսպանսիաներից պաշտպանվելու նպատակով հայկական մենթալիտետում արմատավորված է նաև անհատապաշտությունը, որը մեծապես օգնել է սեփական տեսակը պահպանելուն, սակայն, ինչպես շատ դիպուկ նկատում է Ա.Ենգոյանը, այն չի կարելի համարվել ազատական անհատապաշտության հիմք¹⁴⁶: Ինչու՞, որովհետև, ինչպես հեղինակն է բնորոշում, մեր դեպքում գործ ունենք հասարակության առաջնային բջիջ համարվող ընտանիքի ու նրա հետ կապված ցեղի «կլոնելոիդ անհատապաշտության» երևույթի հետ: Հայի անհատապաշտության դրսևորումները նախևառաջ ուղղված են եղել թեկուզև փոքր, բայց կոլեկտիվի՝ ընտանիքի ու ցեղի կենսունակության ապահովմանը¹⁴⁷:

Սակայն եթե պետականության բացակայության պայմաններում ընտանիքի՝ որպես բարձրագույն արժեքի ու դրանից ածանցված ազգակցական-արյունակցական կապերի շուրջ «կոլեկտիվ անհատապաշտության» մոդելի ձևավորումն անժխտելիորեն ունեցել է ազգապահպան մեծ առաքելություն, ապա անկախ պետականության գործառնության պարագայում ընտանեկան շահերի գերակայությունն ու դրանց պրիզմայի ներքո քաղաքականության իրագործումն իրական ու պոտենցիալ լուրջ վտանգներ է պարունակում: Նման արժեքային ու աշխարհայացքային կողմնորոշման դեպքում պետության վարած քաղաքականությունն էլ կամա թե ակամա հայտնվում է «ընտանեկան-կլանային» շահերի ազդեցության տիրույթում, երբ հանրային, քաղաքական ու պետական շահերը ստորադասվում են նեղ անձնային-ընտանեկան շահերին, երբ պետական իշխանության ձևավորման, կադրային նշանակումներում ու քաղաքական սերնդափոխության գործում եթե ոչ դե յուրե, ապա դե ֆակտո բախվում ենք ժառանգականության ֆենոմենին, հայրերից որդիներին իշխանության փոխանցման տարաբնույթ դրսևորումներին: Ժողովրդավարության համախմբման տեսանկյունից սրանք լուրջ մարտահրավերներ են, որոնք պետք է հաղթահարվեն հայ հասարակությունում, եթե իրապես ձգտում ենք ունենալ հզոր պետականություն, զարգացող տնտեսություն ու բարեկեցիկ ընտանիք: Հետևաբար, զայիս ենք այն հարցադրմանը, թե ինչպիսի՞ պետություն ենք ցանկանում ունենալ, և ո՞րն է լինելու արդիականության պայմաններում հայության գոյաբանության նոր բանաձևը:

¹⁴⁴ Մանուչարյան Յ. Հայության գոյապահպանության գաղափարախոսությունը, Եր., ԵՊՀ հրատ., 1994:

¹⁴⁵ Погосян Г. Армянское общество в трансформации. Ер., 2003, с. 368.

¹⁴⁶ Енгоян А. նշվ. աշխ., էջ 174:

¹⁴⁷ Տե՛ս նույն տեղում:

Մեր հայրենակից Տարրն Աճեմժողուն և Ջեյմս Ռոբինսոնն իրենց հայտնի աշխատություններից մեկում¹⁴⁸ առաջ են քաշում թեզ, ըստ որի՝ պետությունների հարստության կամ աղքատության, այլ կերպ ասած՝ արդյունավետության կամ անարդյունավետության հիմնական պատճառները տվյալ հասարակական-քաղաքական համակարգում գործառնող արդյունահանող (էքստրակտիվ) և ներառող (ինկլյուզիվ) ինստիտուտներն են: Առաջինների դեպքում քաղաքական ընտրախավերը կառավարում են երկիրը՝ նեղ անձնական շահերից ելնելով, հասարակության ամկա ռեսուրսները բաշխում են իշխանության մեջ գտնվող սակավաթիվ թվով մարդկաց միջև: Այդ հայեցակարգին մոտ է նաև մեկ այլ ամերիկյան գիտնական Մանսուր Օլսենի՝ Նստակյաց բանդիտի տեսությունը, ըստ որի՝ պետությունը կարող է գործառնել այնպես, որ երկարաժամկետ կտրվածքով ապահովի կոնկրետ տարածքի վերահսկումն ու բնակչությունից կայուն եկամուտների ստացումը (թալանը) հարկերի ու հավաքագրման այլ եղանակների տեսքով¹⁴⁹: Ծանոթ նկարագրություն է, չէ՞:

Երկրորդ դեպքում պետության արդյունավետ գործառնության կարևոր գրավական է համարվում ներառող իստիտուտների գործունեությունը, որը թույլ է տալիս հնարավորինս շատ մարդկանց մասնակցելու նյութական բարիքների ստեղծման և դրանց արդյունքների արդարացի բաշխման գործընթացներին ինչպես տնտեսական, այնպես էլ քաղաքական ինստիտուտների միջոցով: Ի դեպ, 2018թ.-ի ներհայաստանյան փոռթկումը և թավշյա իշխանափոխությունը լիովին կարող են տեղավորվել ազգի ներքին ինքնապաշտպանական պասիոնար աիքների բռնկման տեսահայեցակարգային մոդելի առարկայական դրսևորման հետ: Քաղաքական ու տնտեսական մենաշնորհներից ձերբազատման, քաղաքական ու տնտեսական հեղափոխության սկզբունքների հռչակման, սոցիալական արդարության վերականգման գաղափարները ՀՀ հարյուր հազարավոր քաղաքացիների փողոց հանեցին, որի արդյունքում էլ Հայաստանում տեղի ունեցավ ոչ բռնի իշխանափոխություն: Հետևաբար, ժամանակակից հայ հասարակության քաղաքական գիտակցության մեջ ու մշակութային ենթաշերտում պետք է տեղի ունենան հիմնարար տեղաշարժեր դեպի սոցիալական, հանրային կողմնորոշում ունեցող շահերի ձևավորման ու սպասարկման ուղղությամբ: Նման տեղաշարժերն իրենց հերթին թույլ կտան զերծ պահել պետության վարած քաղաքականությունը նմանատիպ ոչ ցանկալի միջամտություններից, թուլացնել հայ հասարակությունում ամկա սոցիալ-տնտեսական խիստ բևեռացվածությունը, բացել քաղաքական համակարգը, քաղաքական ընտրանու հավաքագրման փակ – սելեկտիվ մոդելից անցում կատարել բաց-անթրեպրեներական մոդելին, մարդ-կուսակցությունների կամ բիզնես խմբավորումների փոխարեն ունենալ դասական՝ գաղափարական ու սոցիալ-քաղաքական շահերի սպասարկմանը միտված կուսակցություններ, վայրի կապիտալիզմին բնորոշ տնտեսական հարաբերություններից շուտափույթ անցում կատարել դեպի սոցիալական կողմնորոշում ունեցող շուկայական հարաբերությունների մոդելին՝ սերունդների համերաշխությունն ու սոցիալական գործընկերությունը հռչակելով որպես պետության սոցիալական քաղաքականության առաջնահերթություններ: Իսկ այդ ամենին հասնելու ամենակարճ, արդյունավետ ու քաղաքակիրթ ճանապարհը հայաստանյան հասարակական-քաղաքական կյանքում, արդիականության պայմաններում հայության հավաքական ինքնության ձևավորման Նոր բանաձևի՝ ԱՐԱՐԻՉՄԻ Նորամուծումն է:

Արարիզմը մեր Նախնիներից ժառանգած Արմենիա+Արցախ գոյաբանական կողի մարմնավորումն է, հայի ստեղծագործ ու արարչական բնույթի Նորովի

¹⁴⁸ **Аджемоглу Д., Робинсон Дж.** Почему одни страны богатые, а другие бедные. Происхождение власти, процветания и нищеты. М., АСТ, 2016.

¹⁴⁹ **Олсон М.** Диктатура, демократия и развитие // Экономическая политика. 2010. № 1., с 170.

վերհանումն է, որովհետև հայ ժողովրդի նորոշյա պատմության շավիղներում մենք ազատ ու անկախ Արցախից ավելի լուսավոր կետ չունենք, ժամանակակից հայի համար ոգեշնչման, ինքնանվիրաբերման ու ինքնազոհաբերման ուրիշ աղբյուր չունենք: Մեզ հարկավոր է հայի կենարար, արարչագործական էներգիայի մի նոր պոռթկում, պասիոնարության մի նոր բռնկում: Միայն այդպես կարող ենք մեր արժանի տեղը զբաղեցնել 21-րդ դարի առաջավոր ազգերի շարքում՝ կենսոլորտում տեղի ունեցող էթնոգենեզիսի ու ազգայնականության էներգետիկ փոթորիկների այդ մեծ հորձանուտում:

THE GREAT DREAM OF SMALL NATION: THE ARTSAKH MOVEMENT IN THE CONTEXT OF ARMENIANS IDENTIFICATION ONTOLOGY

KHACHIK GALSTYAN

Yerevan State University, Associate Professor at the Chair of History and Theory of Political Science, Doctor of Sciences (Political Science), honorary member of UYSSA, Yerevan, Republic of Armenia

One of the brightest pages of modern history of Armenian nation is the Artsakh movement, which once again proved our right to live free and independent in our homeland. The 88th National Liberation Movement, the unequal battle for self-preservation against the Soviet and Azeri authorities, national solidarity and unity led to the liberation of Artsakh and the proclamation of an independent state in that part of the motherland. In this sense, the importance of the Artsakh movement in the proclamation and establishment of the two Armenian states is undeniable. But on the other hand it should be emphasized that the potential and influence of the Artsakh movement have not been studied sufficiently in the context of the ontology of Armenians identity. The Artsakh Movement has much deeper stratum that touches on both the past and the future of the Armenian people, as well as the ideological, political and spiritual bases.

In the article, the author considers the Artsakh movement in the light of the theory of passionary and proposes the ideology of ararism as a new formula for the ontology of the identity of the Armenian people in the context of contemporary socio-political transformations.

Keywords: *Artsakh Movement, Armenian Identity, Passionary Theory, Soviet and Post-Soviet Chronotype, Ethnogenesis, Artsakh Conflict, Extractive and Inclusive Institutions, ideology of self - preservation, Ararism.*

БОЛЬШАЯ МЕЧТА МАЛОЙ НАЦИИ: АРЦАХСКОЕ ДВИЖЕНИЕ В КОНТЕКСТЕ ОНТОЛОГИИ ИДЕНТИЧНОСТИ АРМЯНСКОГО НАРОДА

ХАЧИК ГАЛСТЯН

*доцент кафедры теории и истории политической науки ЕГУ,
доктор политических наук, почётный член ОМУСА,
г.Ереван, Республика Армения*

Одной из самых ярких страниц современной истории армянского народа является Арцахское движение, которое в очередной раз доказало право армян жить свободной и независимой жизнью на своей родине. Национально-освободительное движение 88-ых годов XX столетия, неравная борьба против советской и азербайджанской властей, национальная солидарность и единство привели к освобождению Арцаха и провозглашению независимого государства на этой части родины. Важность Арцахского движения в провозглашении и создании двух армянских государств неоспорима. Но, с другой стороны, следует подчеркнуть, что потенциал и влияние Арцахского движения недостаточно изучены в контексте онтологии идентичности армянства. Арцахское движение имеет гораздо более глубокие слои, затрагивающие идеологические, политические и духовные основы армянского народа.

В статье автор рассматривает Арцахское движение в свете теории пассионарности и предлагает идеологию "араризма" как новую формулу онтологии идентичности армянского народа в контексте современных социально-политических трансформаций.

Ключевые слова: *Арцахское движение, армянская идентичность, пассионарная теория, советский и постсоветский хронотип, этногенез, арцахский конфликт, экстрактивные и инклюзивные институты, идеология самосохранения, "араризм".*

ԵՄ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՖՐԱՆՍ-ԱՖՐԻԿՅԱՆ ԶԱՂԱԶԱԿԱՆ ՈՒՏՆԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՐԱ*

ՀՏԴ 32 (44+6)

ԺԱՆՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի ասպիրանտ,
բ.Երևան, Հայաստանի Հանրապետություն
jane.harutyunyan@gmail.com

Հոդվածի հիմնական նպատակն է պարզաբանել ԵՄ ապդեցությամբ Ֆրանսիայի արտաքին քաղականության փոփոխման միտումները հատկապես աֆրիկյան երկրների նկատմամբ և՛ քաղաքական, և՛ տնտեսական հարթություններում: Այդ նպատակով խնդիր է դրվել ուսումնասիրել Ֆրանսիայի արտաքին քաղաքականությունը աֆրիկյան երկրներում ԵՄ ստեղծումից առաջ ու դրանից հետո: Պատմահամեմատական մեթոդի կիրառմամբ ուսումնասիրել ենք Ֆրանսիայի քաղաքականությունը և զուգահեռ վերլուծությունների հիման վրա պարզել վերջինիս ծավալման ընթացքն ու արմատական փոփոխությունների դրդապատճառները: Արդյունքում՝ Ֆրանսիայի քաղաքականությունը աֆրիկյան երկրներում ռեալիստականից դարձավ ավելի լիբերալիստական ու հռետորական, միակողմ քաղաքականությունից անցում կատարվեց բազմակողմ քաղաքականության, մշակվեց նոր անվտանգության քաղաքականություն, տնտեսական հարաբերությունների հիմքում դրվեց տնտեսական համագործակցության սկզբունքը:

Հետապոտությունը հնարավորություն է տալիս վեր հանել Աֆրիկայում Ֆրանսիայի քաղաքականության հեռահար նպատակները, այն է՝ ԵՄ սկզբունքները խաղաքարտ դարձնելով պահպանել միջազգային հեղինակությունն ու ապդեցությունը: Սակայն նոր քաղաքական մոտեցումների մեջ դեռ նկատելի են նախկին «սովորությունները»: Խոսելով Ֆրանս-աֆրիկյան հարաբերությունների վրա ԵՄ ապդեցության մասին՝ երկու տեսակետ կարելի է առանձնացնել: Առաջինն այն է, որ Ֆրանսիան իրեն բավականին հեռացրել է Աֆրիկյան պետությունների քաղաքական, տնտեսական ու դիվանագիտական կյանքից, իսկ երկրորդն՝ այն, որ իրականում պահպանված է ստատուս քվոն և Ֆրանսիան դեռ շարունակում է գերիշխող դիրքում մնալ Աֆրիկայում, և Ֆրանսիայի՝ Աֆրիկայից «հեռանալը» բացատրվում է ԵՄ գործոնով, ինչը ստիպեց Ֆրանսիային ամբողջովին փոխել իր անվտանգության քաղաքականությունն Աֆրիկայում:

Բանալի բառեր՝ ԵՄ, ֆրանս-աֆրիկյան քաղաքական հարաբերություններ, ֆրանս-աֆրիկյան տնտեսական հարաբերություններ, բազմակողմ քաղաքականություն, անվտանգության քաղաքականություն, ռեալիստական քաղաքականություն, միգրացիոն քաղաքականություն, ֆինանսական աջակցության քաղաքականություն:

1990-ական թթ.-ին աշխարհում տեղի ունեցած փոփոխությունները, մասնավորապես Սառը պատերազմի ավարտը, ԽՍՀՄ փլուզումը, ԱՄՆ դերի բարձրացումը և, վերջապես, ԵՄ ստեղծումը մեծապես փոխեցին ուժերի

* Հոդվածը ներկայացվել է 08.05.2019թ., գրախոսվել՝ 17.05.2019թ., տպագրության ընդունվել՝ 17.06.2019թ.:

հավասարակշռությունն աշխարհում: Այդ ամենի հետևանքները նշմարելի են նաև Ֆրանսիայի՝ աֆրիկյան քաղաքականությունում:

Մասատրիիստի պայմանագիրը ստորագրվեց 1992 թ.-ի փետրվարի 7-ին և ուժի մեջ մտավ 1993թվականին, որով Եվրոպական տնտեսական համայնքը վերանվանվեց ԵՄ-ի, և ներկայացրեց Ընդհանուր արտաքին ու անվտանգության քաղաքականությունը: Սակայն այդ փոփոխությունները չէին վկայում ԵՄ-ում արտաքին քաղաքականության ոլորտում կոնսենսուսի առկայության մասին, քանզի ԵՄ անդամ պետությունների քաղաքական կուրսերը կարող էին և տարբեր լինել: Միևնույն ժամանակ ԵՄ անդամների համար գրեթե անհնարին էր ունենալ արտաքին քաղաքական մեկ ընդհանուր կուրս: Սակայն Ֆրանսիան փորձում էր հասնել դրան՝ միևնույն ժամանակ ամրապնդելով իր դիրքերը Եվրոպական համայնքում: Լինելով Եվրոպական միասնության ջատագով՝ Ֆրանսիան պաշտպանելու էր իր տեղն ու ազգային շահերը ԵՄ կառույցների մեջ¹⁵⁰:

Ֆրանսիայի առաջնորդները ԵՄ ստեղծումից հետո սկսեցին իրենց քաղաքական կուրսը հարմարեցնել ԵՄ նպատակներին ու շահերին՝ փորձելով մեծապես ներգրավվել ԵՄ քաղաքականության մեջ, քանզի մտածում էին, որ այն դիվիդենտներ կտա Ֆրանսիային արտաքին քաղաքականության ոլորտում: ԵՄ գործընկերները մեծ ազդեցություն ունեին Ֆրանսիայի քաղաքականության վրա և հակառակը: Եթե մինչ ԵՄ ստեղծումը Ֆրանսիայի քաղաքականությունը ավելի ռեալիստական էր, ապա ԵՄ ստեղծումից հետո այն դարձավ լիբերալիստական ու հռետորական: Այդ ամենը պարզ երևում է Աֆրիկայում Ֆրանսիայի վարած քաղաքականության օրինակում, քանզի նախկինում վարելով ռեալիստական քաղաքականություն՝ Ֆրանսիան այն համապատասխանեցնում էր իր շահերին: Բացի այդ, Աֆրիկայում ժողովրդավարական շարժում էր տարածվել, ինչը սպառնալիք էր Ֆրանսիայի տնտեսական, քաղաքական շահերին, միևնույն ժամանակ ԱՄՆ-ն ուժեղացրել էր իր դիրքերն Աֆրիկայում, ինչն էլ Ֆրանսիան դիտեց որպես սպառնալիք, և նրան մնում էր փոխել իր քաղաքականությունը Աֆրիկայում ԱՄՆ-ին հակակշռելու համար, սակայն այն ԵՄ շահերի հետ համատեղելը հեշտ չէր¹⁵¹: Ֆրանս-աֆրիկյան հարաբերությունները կառուցվածքային առումով չփոխվեցին, բայց բազմաթիվ սոր սկզբունքներ ընկան դրա հիմքում, ինչում էլ մեծապես կարևորվում է ԵՄ դերը: ԵՄ շահերից ելնելով՝ Ֆրանսիան իր քաղաքականության մեջ մտցրեց այնպիսի սկզբունքներ, ինչպիսիք են՝ խաղաղություն, անվտանգություն, կայունություն, ժողովրդավարություն, օրենքի գերակայություն: Այդ սկզբունքները կարևորվեցին նաև ֆրանս-աֆրիկյան զագաթնաժողովի ժամանակ, երբ Ֆրանսիան ընդունեց Լա Բոլ (La Baule) դոկտրինը¹⁵², ինչը պաշտպանեց Աֆրիկայում լիբերալիստական ու դեմոկրատական կարգերի հաստատումը: Դոկտրինի համաձայն՝ Ֆրանսիան կրճատելու էր իր ներկայությունն Աֆրիկայում և՛ տնտեսական և՛ քաղաքական ոլորտներում:

¹⁵⁰ Սարյան Ս., Նախագահական ընտրությունները Ֆրանսիայում, 2007թ. http://noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=801.

¹⁵¹ Olsen, G. R. 'Challenges to the Traditional Policy Options, Opportunities for New Choices: The African Policy of the EU, The Round Table, 375, July 2004, p.425-436.

¹⁵² Ֆրանսիական Բոլ քաղաքում 1990թ. հունիսի 20-ին Ֆրանսուա Միտտերանի ելույթը հայտնի է որպես Լա Բոլ դոկտրին: Ներկա էին աֆրիկյան 37 պետությունների առաջնորդներ: «Չկա զարգացում առանց ժողովրդավարության և չկա ժողովրդավարություն առանց զարգացման...», «...Ֆրանսիան չի պարտադրի Սահմանադրանաև օրենքի մոդել, այլ Աֆրիկայի ժողովուրդն ինքը կընտրի իր կառավարման ուղին՝ հիմնված համընդհանուր արժեքների վրա, այն է՝ ժողովրդավարություն»: Այդուհետ Ֆրանսիան շարունակեց ղեկավարել աֆրիկյան պետություններում ժողովրդավարական գործընթացները (Cf. Politiqueétrangère de la France, Nov-Dec 1991, p.48):

Այնուամենայնիվ, այն ենթատեքստում պաշտպանում էր ավտորիտար վարչակարգը¹⁵³:

ԵՄ ձևավորումից հետո ստեղծված քաղաքական իրադրությունը Ֆրանսիային տարավ դեպի բազմակողմ քաղաքականության, մանավանդ որ միակողմ քաղաքականությունն արդեն հասցրել էր նվազեցնել Ֆրանսիայի հեղինակությունն Աֆրիկայում: Բազմակողմ քաղաքականությունը Ֆրանսիայի համար եական հնարավորություններ էր ստեղծում¹⁵⁴: Ֆրանսիան չդադարեց Աֆրիկայում ներխուժումներ իրականացնել, ինչն իր պատճառներն ուներ. նախ՝ տնտեսական, քաղաքական, մշակութային հետաքրքրությունն էր Աֆրիկայի նկատմամբ, ապա՝ Ֆրանսիան այնտեղ ուներ ստրատեգիական կենտրոններ, և խորն էին Ֆրանսիայի ու Աֆրիկայի առաջնորդների կապերը: Ֆրանսիան այս կերպ իր ռազմական ներխուժումներն Աֆրիկա ներկայացնում էր միջազգային կազմակերպությունների բողի ներքո: ԵՄ-ն իր քաղաքականության հիմքում դրել էր ահաբեկության դեմ պայքարը և Ֆրանսիան՝ այն դարձնելով խաղաքարտ և, որպես անվտանգության երաշխավոր, փորձում էր միջամտել Աֆրիկյան իր նախկին գաղութների գործերին՝ այդպիսով իրականացնելով իր նպատակները. 1. միջազգային ասպարեզում պահել իր երբեմնի բարձր դիրքը, որը խարխվեց, երբ դադարեց լինել մեծ գաղութատեր պետություն, 2. պահպանել իր ստրատեգիական ռեսուրսները, 3. պահպանել իր հսկայական շահույթները, որոնք ստանում էր իր մենաշնորհային կարգավիճակից¹⁵⁵:

ԵՄ ստեղծումից հետո Ֆրանսիան պարտավորվեց մշակել Նոր անվտանգության քաղաքականություն, որն իրենից ներկայացնում էր Աֆրիկայում ռազմական ներկայության կրճատում (1997-2002թթ.-ին Ֆրանսիական զորքի թիվը 8.000-ից դարձավ 5.600՝ տեղակայված լինելով հինգ կենտրոններում՝ Աբուջան, Դաբար, Ջիբութի, Լիբրևիլ և Նջամենա)¹⁵⁶: Ֆրանսիայի ռազմական ներկայության կրճատումը հանգեցրեց տնտեսական և ֆինանսական աջակցության կրճատման (1995թ.-ին՝ 42.1 բիլիոն, 1998թ.-ին՝ 34.7 բիլիոն)¹⁵⁷, հետևաբար կարելի է ենթադրել, որ Ֆրանսիան ցանկանում էր ամրապնդել Աֆրիկայի անվտանգության համակարգը միջազգային կազմակերպությունների, մասնավորապես ԵՄ միջոցով¹⁵⁸:

Ֆրանս-աֆրիկյան քաղաքական հարաբերությունների փոփոխության հարցում չի կարելի անտեսել նաև Ֆրանսիայի նկատմամբ աֆրիկյան առաջնորդների վերաբերմունքի փոփոխության գործոնը, որոնք սկսեցին բողոքել Աֆրիկայում Ֆրանսիայի ներկայությունից (մասնավորապես Ուգանդայի ու Ռուանդայի առաջնորդները. «Մենք չենք ուզում, որ Աֆրիկայի ժողովրդավարությունը պայմանավորված լինի քաղաքական ու տնտեսական շահերով: Մենք ուզում ենք, որ

¹⁵³ **Martin, G.**, 2000. France's African Policy in Transition: Disengagement and Redeployment. Illinois: University of Illinois, p. 13.

¹⁵⁴ **Chasles, J.M.**, 2011. Nicolas Sarkozy's African Policy in the Context of Franco-Chadian Relations. *Dynamiques Internationales*, Vol. 4., pg. 4.

¹⁵⁵ The European Union Foreign Policy towards Africa, Rhetoric and Reality: Mozambique, a Case Study, Name: Paulo MateusAntónioWacheDate: 23 August 2010 pg 22.

¹⁵⁶ **Jean-Dominique Geslin**, "Quels gendarmes pour l'Afrique?" *JeuneAfrique* (15-21 June 1999), pp. 27-8, which notes that the Zambakro training center is financed by France to the tune of 15 million francs.

¹⁵⁷ French National Assembly, Adevah-Poeuf Report, 1998, pp. 9, 23; P. Marchesin, "L'aidepublique au développement en 1997," *Observatoire permanent de la coopérationfrançaise, Rapport 1997* (Paris: Karthala, 1997), p. 17.

¹⁵⁸ France Diplomatie, 2010. Africa-France Summit, Final Declaration, 1 June 2010. Available from: http://www.diplomatie.gouv.fr/en/IMG/pdf/2010_Africa-France_Summit_Final_Declaration-2.pdf (Accessed 30 May 2013).

Աֆրիկայի ժողովրդավարական ձգտումներն ընկած լինեն ֆրանս-աֆրիկյան և եվրո-աֆրիկյան հարաբերությունների հիմքում»¹⁵⁹:

ԵՄ ազդեցությունը չորջանցեց նաև Ֆրանս-աֆրիկյան տնտեսական հարաբերությունները, քանզի ԵՄ ստեղծումից հետո արդեն Ֆրանսիան իր քաղաքականության հիմքում դրեց ԵՄ տնտեսական համագործակցության սկզբունքը՝ անդրադարձ կատարելով միգրացիոն քաղաքականությանը և ֆինանսական աջակցության քաղաքականությանը: Տնտեսական ոլորտում ԵՄ ընդհանուր քաղաքականության գաղափարը կարծես նշմարելի էր, քանզի գործում էր Եվրոպական զարգացման հիմնադրամ, որում կենտրոնանում էր Եվրոպական երկրների նախկին գաղութներում մեկ ընդհանուր տնտեսական քաղաքականության արդյունքը:¹⁶⁰ Այսպիսով՝ տնտեսական ոլորտն այն միակն էր, որի շուրջ ԵՄ պետությունները ընդհանուր համաձայնության էին եկել: Այդ ամենն անդրադարձավ նաև Ֆրանս-աֆրիկյան հարաբերություններին: Աֆրիկայում անկում ապրեց ավտորիտար ռեժիմը, ինչն էլ ստիպեց Ֆրանսիային փոխել իր քաղաքական կուրսը¹⁶¹:

1990-ական թթ.-ից հետո Ֆրանսիայի համար տնտեսական քաղաքականությունը Աֆրիկայում առաջնակարգ դիրքեր մղվեց: 1986-1988թթ.-ին և 1993-1995թթ.-ին Ֆրանսիան գործի դրեց միգրացիոն քաղաքականությունը՝ կիզակետում պահելով Ֆրանկոֆոն Աֆրիկան: Այս դեպքում ևս մեծապես նկատելի էր ԵՄ ազդեցությունը Ֆրանսիայի քաղաքականության վրա: Միգրացիայի ոլորտում ձևավորվել էին մի շարք դրդապատճառներ, որոնք ԵՄ-ին մղեցին քայլեր ձեռնարկելու միգրացիայի ոլորտում երրորդ երկրների հետ համագործակցությունն ավելի խորացնելու ուղղությամբ: Այն գաղափարը, թե միգրացիոն հոսքերը դեպի ԵՄ և դրա սահմաններից դուրս չեն կարող դադարեցվել, ԵՄ-ին ստիպեցին գործել և կոնկրետ, տարաբնույթ գործողություններ առաջարկել, որոնց նպատակն էր ապահովել, որ միգրացիան հնարավորինս ծառայի՝ ի շահ բոլոր շահագրգիռ պետությունների¹⁶²: Միանգամից նկատվեց դեպի Ֆրանսիա մուտքի արտոնագրերի տրամադրման կրճատում, բազմապատկվեցին արտոնագրերի տրամադրման վարչական խոչընդոտները, տեղի ունեցավ չարթեռային չվերթների պարտադրված չեղարկում¹⁶³: ԵՄ միգրացիոն քաղաքականությունը ստիպեց Ֆրանսիային 1990-ական թթ. անօրինական ներգաղթյալների նկատմամբ կիրառել սահմանային վերահսկողություն: Սակայն Ֆրանսիայի այդ քաղաքականությունը մեծապես վնասեց ֆրանս-աֆրիկյան հարաբերությունները: Իրավիճակից դուրս գալու համար Ֆրանսիան որդեգրեց աֆրիկյան պետություններին ֆինանսական աջակցության քաղաքականություն (aid policy), որպեսզի վերականգնի իր տնտեսական ազդեցությունը տարածաշրջանում¹⁶⁴: Եթե մինչ 1989թ. Ֆրանսիայի վարած աջակցության քաղաքականությունը կախվածության մեջ էր դնում Աֆրիկային, ապա 1990-ական թվականների աջակցության քաղաքականությունն իրենից ներկայացնում էր տնտեսական հիմք Աֆրիկայի համար: Աֆրիկյան պետությունների հետ պայմանագրերը, որոնց համաձայն Ֆրանսիան ֆինանսական աջակցություն էր ցուցաբերում վերջիններիս, հնարավորություն էին տալիս մոտ լինել աֆրիկյան ուրանին, նավթին ու բնական

¹⁵⁹ Politique étrangère de la France, May-August 1996, p.89.

¹⁶⁰ Article 98 of the Cotonou Convention.

¹⁶¹ **Martin, G.**, 2000. France's African Policy in Transition: Disengagement and Redeployment. Illinois: University of Illinois, p. 7.

¹⁶² **Վերխեր Է.**, «ԵՄ հետ միգրացիայի ոլորտում համագործակցության ընդլայնման և խորացման հնարավորությունները», 2012թ. հուլիս:

¹⁶³ Mentioned in Philippe Marchesin, "La politique africaine de la France en transition," Politique africaine no. 71 (October 1998), p. 93.

¹⁶⁴ **Conte, B.**, 1997. France's African Aid Policy: The End of an Era? Review of African Political Economy, Vol. 24, No. 71, pg. 141.

գազին¹⁶⁵: Աֆրիկյան երկրներին ֆինանսական աջակցության գլխավոր պայմանն այդ երկրների ժողովրդավար լինելն էր: Այդ ամենը փաստաթղթային հիմքով ամրապնդվեց Տոգոյի մայրաքաղաք Լոմեում 1985, 1990, 1995 թթ.-ին և Բենինի մեծ քաղաքներից մեկում՝ Կոտոնուում¹⁶⁶: Մինչ ԵՄ ստեղծումը Աֆրիկյան, Կարիբյան և Խաղաղօվկիանոսյան պետությունների հետ բանակցությունները վարվում էին համաձայն հենց այդ կոնվենցիաների: Աֆրիկյան պետությունների հետ կնքված այդ կոնվենցիաների ետևում այն էր, որ ոչ ժողովրդավար պետությունները տնտեսական աջակցություն չէին ստանում ԵՄ-ից: Սակայն այդ ֆինանսական աջակցությունն էլ Ֆրանսիան օգտագործում էր որպես քաղաքական ազդեցության գործիք՝ ստիպելով Աֆրիկյան պետություններին այն ծախսել Ֆրանսիական ապրանքների վրա: Ֆրանսիան նաև աջակցություն էր ցուցաբերում աֆրիկյան պետություններին ժողովրդավարության և մարդու իրավունքների բնագավառներում:

Այսպիսով՝ եթե մինչ 1990թ.-ը Ֆրանսիան տնտեսական կապեր էր հաստատում իր նախկին գաղութների հետ, ապա 1990թ.-ից հետո ընդարձակեց այն՝ կապեր հաստատելով շուրջ 114 պետությունների հետ: Այդ քաղաքականության ընդարձակման մեջ մեծ էր ԵՄ դերը, և Ֆրանսիան, հավատարիմ մնալով ԵՄ սկզբունքներին, փորձում էր ամրապնդել իր միջազգային հեղինակությունը¹⁶⁷:

EU IMPACT ON FRANCE-AFRICAN POLITICAL AND ECONOMIC RELATIONS

ZHANNA HARUTYUNYAN

*Yerevan State University, PhD Student
of International Relations and Diplomacy Chair,
Yerevan, Republic of Armenia*

The aim of the article is to elucidate the trends of the French foreign policy changes in relation to African countries both in political and economic spheres under the impact of EU. For this aim we have explored the French foreign policy in African countries before and after the EU creation. The application of historical-comparative method based on parallel analysis gave us an opportunity to examine the process of French policy expansion and the motives of its radical changes. The policy of France shifted from realistic to more liberal and rhetorical, unilateral policy transferred to multilateral policy, a new security policy was developed towards Africa. Economic relations acquired a new quality, economic policy being based on the principle of economic cooperation. The study shows that France wanted to achieve its long-term goals to maintain international reputation and influence in Africa by implementing the principles of EU. But there are former “habits” in the new policy. Speaking about the EU impact on French-African policy we may distinguish two views: first - France has dropped out of the African political, economic and diplomatic life; second - the status quo is still preserved and France still remains dominant in Africa. EU forced France to completely change its security policy in Africa.

Key words: *EU, France-African political relations, France-African economic relations, multilateral policy, security policy, realistic policy, migration policy, financial aid policy.*

¹⁶⁵ The European Union Foreign Policy towards Africa, Rhetoric and Reality: Mozambique, a Case Study, Name: Paulo Mateus António Wache Date: 23 August 2010 pg. 22.

¹⁶⁶ Articles 1, 8, and 9.2 of the Cotonou Convention.

¹⁶⁷ Agirici-Survie, Jacques Chirac et la Françafrique. Retour à la case Foccart? [Dossiers noirs de la politique africaine de la France no. 6] (Paris: L’Harmattan, 1995), pp. 108, 111.

ВЛИЯНИЕ ЕС НА ФРАНКО-АФРИКАНСКИЕ ПОЛИТИЧЕСКИЕ И ЭКОНОМИЧЕСКИЕ ОТНОШЕНИЯ

ЖАННА АРУТЮНЯН

*аспирант кафедры международных отношений и дипломатии
Ереванского государственного университета,
г. Ереван, Республика Армения*

Целью статьи является выяснение тенденций изменения французской внешней политики в отношении африканских стран как в политической, так и в экономической сферах под воздействием ЕС. Для этой цели мы изучили французскую внешнюю политику в африканских странах до и после создания ЕС. Применение историко-сравнительного метода, основанного на параллельном анализе, дало нам возможность изучить процесс расширения французской политики и мотивы ее радикальных изменений. Политика Франции перешла от реалистичной к более либеральной и риторической, односторонняя политика перешла к многосторонней политике, была разработана новая политика безопасности в отношении Африки. Экономические отношения приобрели новое качество, экономическая политика основана на принципе экономического сотрудничества. Исследование показывает, что Франция хотела достичь своих долгосрочных целей по поддержанию международной репутации и влияния в Африке путем реализации принципов ЕС. Но в новой политике есть прежние «привычки». Говоря о влиянии ЕС на франко-африканскую политику, мы можем выделить две точки зрения: первая – Франция выбыла из африканской политической, экономической и дипломатической жизни; вторая – статус-кво все еще сохраняется, а Франция по-прежнему остается доминирующей в Африке. ЕС заставил Францию полностью изменить свою политику безопасности в Африке.

Ключевые слова: *ЕС, франко-африканские политические отношения, франко-африканские экономические отношения, многосторонняя политика, политика безопасности, реалистичная политика, миграционная политика, финансовая политика.*

ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ-ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՂԵԼԻՆ ԱՆՑՆԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ*

ՀՏԴ 321:355/359(479.25)

ՍԵՎԱԿ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Փոլիտոպիայության, սոցիոլոգիայի և
իրավունքի ինստիտուտի հայցորդ,
ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն
sevakvachiki@mail.ru

Հողվածի նպատակն է հետապնդել ՀՀ պաշտպանության ոլորտի կառավարման բարեփոխումների Էուլթյունը, հիմնական դերն ու նշանակությունը անվտանգային ու ռազմաքաղաքական հիմնախնդիրների կարգավորման գործընթացում: Որպես խնդիրներ՝ կարելի է նշել հանրապետությունում խորհրդարանական կառավարման մոդելի կայացման համատեքստում պաշտպանական-անվտանգային համակարգի կառավարման բարեփոխումների հիմքերի ու ընթացքի ուսումնասիրումը, ինչպես նաև այդ բարեփոխումների արդյունավետության և ոլորտի կատարելագործման հնարավորությունների վրա ազդեցության գնահատումը: Հողվածում հետապնդվում են պետության պաշտպանության գործառույթի Էուլթյունը և դրա իրագործման հիմնական մեթոդաբանությունը:

Հետապնդության ընթացքում օգտագործվել են ինչպես ընդհանուր բնույթի՝ դիալեկտիկական ու համակարգային գիտահետապոտական մեթոդները, այնպես էլ մասնավոր՝ իրավաքաղաքական վերլուծության, համեմատական ու մի շարք այլ մեթոդներ:

Ներկայացվում են Հայաստանի Հանրապետությունում պաշտպանության բնագավառի կառավարման ներկայիս կարգավորումները, այդ համատեքստում անդրադարձ է կատարվում սահմանադրական բարեփոխումների արդյունքում նախատեսված նոր մոտեցումներին:

Որպես ելրահանգում՝ ընդգծվում է, որ Հայաստանի Հանրապետության պաշտպանական բարեփոխումների գերխնդիրը հակառակորդի պինված ուժերի նկատմամբ ՀՀ պինված ուժերի մարտունակության գերազանցության ապահովումն է, պինված ուժերում այնպիսի չափանիշների ստեղծումն ու ներմուծումը, որոնք լիարժեքորեն կհամապատասխանեն Հայաստանի ազգային անվտանգության առանձնահատկություններին:

Բանալի բառեր՝ պետություն, անվտանգություն, պաշտպանություն, քաղաքականություն, կառավարում, ռազմական կապավորում, պինված ուժեր:

Յուրաքանչյուր պետության պաշտպանություն գործառույթային ու նպատակային տեսակետից պետք է ձևավորի մեխանիզմ, որը կոչված է ազգային ու ռազմական անվտանգության ապահովման բնագավառում երկրի ընդունված հայեցակարգային մոտեցումներն ու քաղաքական որոշումները իրականացնելու իշխանության օրենսդրական, գործադիր մարմինների ու պետության ռազմական կազմավորման բոլոր կառույցների համակարգված գործունեությամբ:

* Հողվածը ներկայացվել է 06.02.2019թ., գրախոսվել՝ 01.04.2019թ., տպագրության ընդունվել՝ 17.06.2019թ.:

Պաշտպանության գործառույթի իրականացման հիմքում ընկած է երկրի պաշտպանական ռազմավարությունը, որը ներկայացվում է որպես ռազմական անվտանգության ապահովման անհրաժեշտ գործունեության համակարգ՝ պետության պաշտպանական քաղաքականությամբ¹⁶⁸: Խաղաղության ժամանակ այն ներկայացվում է որպես պետության բազմակողմանի պատրաստություն՝ արտաքին հնարավոր հարձակումներին դիմակայելու համար, իսկ ռազմական գործողությունների ու պատերազմի պայմաններում նշված գործառույթն ընդունում է հակառակորդի դեմ զինված պայքարի ձև, որի ժամանակ տեղի է ունենում պետության բոլոր ուժերի միավորում՝ կառավարման համընդգրկուն համակարգով:

Պաշտպանական համակարգի ղեկավարման ու կառավարման հիմնահարցերին անդրադառնալով՝ համառոտ վերլուծենք Հայաստանի Հանրապետության կառավարման ձևի փոփոխությունները և այդ համատեքստում անվտանգային համակարգի գործառույթի առանձնահատկությունները: ՀՀ-ում 1995թ.-ին ընդունվեց առաջին Սահմանադրությունը, որը նորանկախ պետության իրավական երաշխիքն էր: Այդ Սահմանադրության ընդունման ժամանակ առավելապես շեշտադրված էր իրավաքաղաքական երաշխավորված հիմքերի ձևավորումը, և առաջնային նշանակություն ունեին ոչ այնքան բուն ժողովրդավարական ինստիտուտները, մարդու իրավունքներն ու ազատությունները, որքան պետական իշխանության հուսալի համակարգ ունենալը: Չնայած այն փաստին, որ 1995թ.-ի Սահմանադրությունը սահմանում էր իշխանության ճյուղերի տարանջատման սկզբունքը, այնուամենայնիվ քաղաքական դաշտում նախագահին ընդգծված գերակայություն էր տրվում: Այդ Սահմանադրությամբ ՀՀ-ն դեռևս ֆորմալ առումով կարելի էր համարել կիսանախագահական հանրապետություն¹⁶⁹:

Պետական իշխանության համակարգի հետագա կատարելագործման անհրաժեշտությունը, Եվրախորհրդին անդամակցելու առնչությամբ ստանձնած իրավական պարտավորությունները հետագա տարիներին իրատապ դարձրին սահմանադրական բարեփոխումների իրականացումը ՀՀ-ում և, որպես արդյունք, 2005թ.-ի նոյեմբերի 27-ին ՀՀ-ում անցկացված սահմանադրական հանրաքվեին ժողովուրդը կողմ քվեարկեց Սահմանադրության փոփոխված տարբերակին, որը հիմնովին նոր աստիճանի վրա դրեց Նախագահ-Ազգային ժողով փոխհարաբերությունների բովանդակությունը: Մասնավորապես, դադարեցվեց ՀՀ Նախագահի իրավունքը՝ վերացական լիազորությամբ արձակելու Ազգային ժողովը, օրենքով չկարգավորված ցանկացած հարցի վերաբերյալ ընդունելու նորմատիվ բնույթի հրամանագրեր, կրճատվեցին նախագահի գործառնական լիազորությունները և շեշտը դրվեց համակարգող, հակակշռող ու զսպող լիազորությունների հստակեցման ու ամբողջականացման վրա¹⁷⁰: Նույնիսկ 2005թ.-ի փոփոխություններով Սահմանադրությունը, մինևույն է, շարունակում էր մնալ իշխանակենտրոն իրավական ակտ, և անհրաժեշտություն էր առաջանում ամրապնդելու առավել մարդակենտրոն սահմանադրական լուծումներ:

Նշվածը ենթադրում էր իրավունքի գերակայության սկզբունքի իրացման սահմանադրաիրավական անհրաժեշտ ու բավարար նախադրյալների ստեղծում, ինչպես նաև պահանջվում էր համակարգային ամբողջականության մեջ առավել հետևողականորեն իրացնել իշխանությունների բաժանման և հավասարակշռման սահմանադրական սկզբունքը, ամրապնդել իշխանության տարբեր ճյուղերի պատշաճ

¹⁶⁸ ՀՀ Նախագահի հրամանագիրը «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինը հաստատելու մասին», ՀՀ ՊՏ 2008/1, 25.12.2007, 3-րդ բաժինը:

¹⁶⁹ Լրացուցիչ տես ՀՀ Սահմանադրություն, 05.07.1995, <http://www.arlis.am>:

¹⁷⁰ Լրացուցիչ տես ՀՀ Սահմանադրություն (փոփոխություններով), ՀՀ ՊՏ 2005 (հատ. թող.), 05.12.2005, <http://www.arlis.am>:

գործունակությունը և գործառնությունը անկախությունը: Սահմանադրական բարեփոխումների կարևոր ուղղություն դիտվեց մարդու հիմնական իրավունքների երաշխավորման, ապահովման ու պաշտպանության սահմանադրական երաշխիքների ամրապնդումը, այդ իրավունքների հնարավոր սահմանափակման շրջանակների հստակեցումը՝ ելնելով միջազգային իրավունքի՝ մասնավորապես՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի դրույթներից:

2013թ. սեպտեմբերի 4-ին ՀՀ Նախագահը ստորագրեց «Հայաստանի Հանրապետության Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողով ստեղծելու մասին» թիվ ՆՅ-207-Ն հրամանագիրը, որի համաձայն, ելնելով իրավունքի գերակայության սկզբունքի իրացման, մարդու հիմնական իրավունքների ու ազատությունների երաշխավորման սահմանադրական կառուցակարգերը կատարելագործելու, իշխանությունների լիարժեք հավասարակշռումն ապահովելու և հանրային կառավարման արդյունավետությունը բարձրացնելու անհրաժեշտությունից, ստեղծվեց ՀՀ Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողով: Ելված հանձնաժողովը վեր հանեց այնպիսի սկզբունքային հիմնահարցեր, որոնք հրատապ կարգավորման կարիք ունեին: Տվյալ հանձնաժողովը պահանջում էր համակարգային ամբողջականության մեջ առավել հետևողականորեն իրացնել իշխանությունների բաժանման ու հավասարակշռման սահմանադրական սկզբունքը, երաշխավորել գործառնություն-ինստիտուտ-լիազորություն շղթայի ներդաշնակությունը, իշխանության մարմինների գործառնություն, հակակշռող ու զսպող լիազորությունների հավասարակշռվածությունը, իշխանության ճյուղերի պատշաճ գործունակությունը և գործառնության անկախությունը¹⁷¹:

2015թ.-ի դեկտեմբերի 6-ի հանրաքվեով ընդունված սահմանադրական բարեփոխումներն էականորեն տարբերվեցին 2005թ.-ին կատարված փոփոխություններից, քանի որ կիսանախագահական կառավարման համակարգից անցում կատարվեց խորհրդարանական կառավարման համակարգի, ինչն անխուսափելիորեն հանգեցրեց նաև պաշտպանական ոլորտի ղեկավարման համակարգի փոփոխության¹⁷²: Այդ փոփոխությունը մի շարք նպատակներ էր հետապնդում: Դրանց շարքին էին դասվում երկրում կայուն ժողովրդավարական համակարգի հաստատումը և իրավական պետության անկյունաքար համարվող իրավունքի գերակայության երաշխավորումը: Իրավական պետությունում իշխանությունը սահմանափակված է մարդու՝ անմիջականորեն գործող հիմնական իրավունքներով, իսկ պետական իշխանական համակարգի գործունեության հիմքում ընկած է իշխանությունների բաժանման ու հավասարակշռման սկզբունքը: Կենսունակ և ուժեղ հասարակությունում գերակայում են քաղաքական ազատություններն ու բազմակարծությունը, իսկ ժողովրդավարական քաղաքական համակարգն ապահովում է այնպիսի մեխանիզմներ, որոնք հանրության ձայնը վճռորոշ են դարձնում հանրային իշխանությունների գործունեության համար:

Նոր Սահմանադրությամբ ընդլայնվել են այն հիմնական իրավունքներն ու ազատությունները, որոնք ընդհանրապես ենթակա չեն սահմանափակման արտակարգ ու ռազմական դրության ժամանակ (օրինակ՝ մարդու արժանապատվությունը, ֆիզիկական ու հոգեկան անձեռնամխելիությունը, օրենքի

¹⁷¹ ՀՀ Նախագահին առընթեր Սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի կողմից մշակված ՀՀ Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ, Եր., Մարտ 2014թ., <http://moj.am/storage/uploads/A1.pdf>:

¹⁷² ՀՀ Սահմանադրության փոփոխություններ, 2015թ., ՀՀ ՊՏ հատուկ թողարկում/2015, 21.12.2015թ., <http://www.arlis.am>:

առաջ ընդհանուր հավասարությունը, ամուսնանալու ազատությունը և այլ հիմնարար իրավունքներ): Հարկ է նշել, որ փոփոխված Սահմանադրության ոչ բոլոր դրույթներն ուժի մեջ մտան փոփոխության պահից, դրանց մի մասը գործարկվեց 2017թ.-ի պառլամենտական ընտրություններից հետո, մյուս մասը՝ ՀՀ Նախագահի պաշտոնավարման ժամկետի ավարտից հետո (2018թ. ապրիլ):

Հայաստանի Հանրապետության անվտանգությունն ապահովվում է նրա տրամադրության տակ եղած բոլոր ուժերի, միջոցների ու ռեսուրսների համընդհանուր ու ամբողջական կիրառմամբ¹⁷³: Կառավարման մոդելի փոփոխության արդյունքում երկրի պաշտպանական-անվտանգային համակարգում էականորեն նվազեց Նախագահի դերը, փոխարենը բավականին մեծ լիազորություններ տրվեցին Վարչապետին, ինչը տրամաբանական է և բխում է խորհրդարանական կառավարման մոդելի եռությունից: Այսպես՝ նոր Սահմանադրությամբ Նախագահը շարունակում է մնալ պետության գլուխը և հետևել սահմանադրական նորմերի պահպանմանը, սակայն ի տարբերություն նախորդ Սահմանադրության՝ այդ լիազորությունների իրականացման համար Նախագահին բավարար լծակներ չեն տրամադրվում: Տվյալ պարագայում Նախագահի լիազորությունների իրականացումը կապվում է Վարչապետի կամ Կառավարության առաջարկությունների կամ համաձայնության հետ:

Փոփոխված Սահմանադրությամբ զինված ուժերի բնագավառում Նախագահի լիազորությունները սահմանվում են 133-րդ հոդվածում, որը Նախագահին իրավասություն է տալիս օրենքով սահմանված դեպքերում ու կարգով նշանակել ու ազատել զինված ուժերի և այլ զորքերի բարձրագույն հրամանատարական կազմին, շնորհել բարձրագույն զինվորական կոչումներ, սակայն Նախագահն իր այդ իրավունքը կարողանում է իրացնել միայն Վարչապետի առաջարկների հիման վրա: Այսինքն՝ Նախագահը կաշկանդված է Վարչապետի ներկայացրած առաջարկով, իսկ դրա բացակայության պարագայում սեփական Նախաձեռնությամբ չի կարող նշանակումներ կամ ազատումներ կատարել, շնորհել կոչումներ¹⁷⁴:

ՀՀ պաշտպանական-անվտանգային գործող համակարգի կառավարման գլխավոր մարմինները և դրանց միջև ստորադասության հարաբերությունները սահմանվում են ՀՀ Սահմանադրությամբ ու օրենքներով: ՀՀ Ազգային ժողովը օրենսդրորեն սահմանում է ռազմական կազմակերպվածքի նպատակներն ու խնդիրները, պաշտպանության ոլորտի նկատմամբ իրականացնում է խորհրդարանական վերահսկողություն¹⁷⁵: Ըստ ելույթան, սրանք կառավարման գործառնություններ են, սակայն Ազգային ժողովը ռազմական կառավարման մարմին չէ, քանի որ նախանշանակված չէ դրա համար, պետության ռազմական կազմակերպվածքի ոչ մի տարր անմիջականորեն չի ենթարկվում նրան (չունի ռազմական կառավարման օբյեկտ), այլ ժողովրդի ներկայացուցչական ու օրենսդիր իշխանություն իրականացնող մարմին է:

ՀՀ Կառավարությունը ռազմական կառավարման մարմին է, քանի որ սահմանված է, որ «զինված ուժերը Կառավարության ենթակայության ներքո են»: Կառավարությունն իրականացնում է պաշտպանության քաղաքականությունը, որի հիմնական ուղղությունները սահմանում է ՀՀ Անվտանգության խորհուրդը: Փոփոխված Սահմանադրության 155-րդ հոդվածի համաձայն՝ Չինված ուժերը

¹⁷³ **Քոչարյան Տ.**, ՀՀ ռազմական անվտանգության ապահովումը ազգային անվտանգության համատեքստում, Եր., ԵՊՀ հրատ., 2012, էջ 167:

¹⁷⁴ ՀՀ Սահմանադրության փոփոխություններ, 2015թ., ՀՀ ՊՏ հատուկ թողարկում/2015, 21.12.2015թ., 133-րդ հոդվածը, <http://www.arlis.am>:

¹⁷⁵ «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքը, ՀՀ ՊՏ 2017.12.06/73 (1348), 6-րդ հոդվածը, <http://www.arlis.am>:

գտնվում են Կառավարության ենթակայության ներքո¹⁷⁶: Կառավարությունն է որոշում դրանց կիրառման անհրաժեշտությունը, սակայն նույն հոդվածը նաև հնարավորություն է նախատեսում պաշտպանության նախարարի առաջարկության հիման վրա անհետաձգելի անհրաժեշտությամբ պայմանավորված՝ զինված ուժերի կիրառումը Վարչապետի որոշմամբ: Նման կարգավորման առկայությունը անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության համար, քանի որ վերջինս գտնվում է բարդ աշխարհաքաղաքական գործընթացների խաչմերուկ համարվող տարածաշրջանում և խնդրահարույց է նաև Արցախի Հանրապետության անվտանգությունը երաշխավորելու հանգամանքը: Այնուամենայնիվ, Վարչապետն իր այդ իրավունքն իրացնելու պարագայում պարտավոր է անհապաղ տեղեկացնել Կառավարության անդամներին:

Ռազմավարական որոշումների ընդունման համակարգի վերլուծության տեսանկյունից կարելի է նաև առանձնացնել, որ սահմանադրական բարեփոխումների արդյունքում պաշտպանական ոլորտի կառավարման գործում իրավասություններ են նախատեսվել նաև Անվտանգության խորհրդի համար: Անվտանգության խորհուրդը պետական մարմին է, որը «պաշտպանության ոլորտի քաղաքականության հիմնական ուղղություններին վերաբերող հարցերով ընդունում է որոշումներ», որոնք ստորագրում է վարչապետը և ՀՀ պաշտպանության նախարարը (պաշտպանության քաղաքականությանը չառնչվող որոշումները ստորագրում է վարչապետը և անվտանգության խորհրդի քարտուղարը): Անվտանգության խորհրդի անդամներն են վարչապետը, առաջին փոխվարչապետը, փոխվարչապետերը, Անվտանգության խորհրդի քարտուղարը, պաշտպանության նախարարը, արտաքին գործերի նախարարը, ազգային անվտանգության ծառայության տնօրենը, ոստիկանության պետը, զինված ուժերի գլխավոր շտաբի պետը¹⁷⁷:

Անվտանգության խորհուրդն իրականացնում է պաշտպանության ռազմավարական պլանավորում ու վերանայում, հաստատում է զինված ուժերի զարգացման, այլ զորքերի զարգացման, զինված ուժերի ծավալման, զորահավաքման ու կիրառման, ՀՀ տարածքի պաշտպանության օպերատիվ սարքավորման, քաղաքացիական պաշտպանության հանրապետական պլանները¹⁷⁸:

ՀՀ Վարչապետը ղեկավարում է Կառավարության գործունեությունը և գլխավորում է Անվտանգության խորհուրդը: Նա համակարգում է պետական կառավարման մարմինների գործունեությունը պաշտպանության ոլորտում: Փաստորեն, ներակայումս Հայաստանում սահմանադրական մակարդակով ամրագրվել է, որ պաշտպանական ոլորտի քաղաքականության հիմնական ուղղությունները սահմանվում են Անվտանգության խորհրդի կողմից, իսկ պաշտպանության նախարարը, որպես ոլորտի անմիջական ղեկավար ու անվտանգության խորհրդի անդամ, իրականացնում է անվտանգության խորհրդի կողմից հաստատված քաղաքականության հիմնական ուղղություններին համապատասխան զինված ուժերի ղեկավարումը:

Չինված ուժերի անմիջական հրամանատարը զինված ուժերի գլխավոր շտաբի պետն է, որը զինված ուժերի ամենաբարձր զինվորական պաշտոնատար անձն է: Ոչ պատերազմական պայմաններում զինված ուժերի գլխավոր շտաբի պետը ենթակա է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին: Չինված ուժերի գլխավոր շտաբը Հայաստանի Հանրապետության պաշտպանության

¹⁷⁶ ՀՀ Սահմանադրության փոփոխություններ, 2015թ., ՀՀ ՊՏ հատուկ թողարկում/2015, 21.12.2015թ., 155-րդ հոդվածը, <http://www.arlis.am>:

¹⁷⁷ Լրացուցիչ տես «Անվտանգության խորհրդի կազմավորման և գործունեության մասին» ՀՀ օրենք, ՀՀ ՊՏ 2018.03.21/20 (1378), 07.03.2018, <http://www.arlis.am>:

¹⁷⁸ «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքը, ՀՀ ՊՏ 2017.12.06/73 (1348), 8-րդ հոդվածը, <http://www.arlis.am>:

Նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմին է, որի գործունեությունը ղեկավարում է գլխավոր շտաբի պետը¹⁷⁹: Բացի այդ, նշվեց, որ Սահմանադրության համաձայն՝ ՉՈՒ գլխավոր շտաբի պետը նույնպես նշանակվում է Վարչապետի առաջարկության հիման վրա՝ Նախագահի կողմից: Այստեղ հատկանշական է, որ ի տարբերություն նախորդ խմբագրության՝ ՉՈՒ գլխավոր շտաբի պետը խաղաղ ժամանակ ենթարկվում է պաշտպանության նախարարին: Կարծում ենք, որ փոփոխված Սահմանադրության մոտեցումն այդ հարցում նույնպես արդարացված է, քանի որ պաշտպանական բնագավառում ենթակայության բացակայության պայմաններում պետական այդ երկու կարևոր պաշտոնյաների միջև գործնականում կարող են առաջանալ հակասություններ, որոնք կարող են հանգեցնել համակարգի ոչ արդյունավետ կառավարման:

Այսպիսով՝ ոչ պատերազմական ժամանակաշրջանում ՀՀ ռազմական կառավարման մարմինների միջև ձևավորվում է հետևյալ շղթան՝ Վարչապետ-Կառավարություն, Անվտանգության խորհուրդ-Պաշտպանության նախարար-Պաշտպանության նախարարություն-ՉՈՒ ԳՇ պետ-ՉՈՒ Գլխավոր շտաբ:

Պատերազմի ժամանակ զինված ուժերի գերագույն հրամանատարը վարչապետն է: Պատերազմի ժամանակ զինված ուժերի գլխավոր շտաբի պետը ենթակա է զինված ուժերի գերագույն հրամանատարին: Մինևույն ժամանակ օրենքում շեշտվում է, որ «այդպիսի ուղիղ ենթակայությունը չի ձևափոխում զինված ուժերի գերագույն հրամանատարի կողմից չկարգավորված հարցերում զինված ուժերի ղեկավարումն իրականացնող և դրանց նկատմամբ քաղաքացիական վերահսկողությունն ապահովող Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին զինված ուժերի գլխավոր շտաբի պետի ենթակայությունը»: Այսպիսով՝ պատերազմի ժամանակ ՉՈՒ-ի ԳՇ պետը մի կողմից՝ ենթակա է վարչապետին, մյուս կողմից՝ պաշտպանության նախարարին: Պատերազմի ժամանակ ՀՀ ռազմական կառավարման մարմինների միջև շղթան կարելի է արտահայտել հետևյալ կերպ՝ Վարչապետ (գերագույն հրամանատար) – ՉՈՒ-ի ԳՇ պետ, պաշտպանության նախարար - ՉՈՒ-ի Գլխավոր շտաբ, պաշտպանության նախարարություն:

Կարելի է փաստել, որ 2015թ.-ին իրականացված սահմանադրական բարեփոխումների արդյունքում պաշտպանական-անվտանգային համակարգի կառավարումը կենտրոնացվեց Կառավարության, Վարչապետի ու Անվտանգության խորհրդի ձեռքում: Սահմանադրության փոփոխությունների արդյունքում զինված ուժերի գերագույն հրամանատարի իրավունքը վերապահվեց վարչապետին: Կարծում ենք, որ նման մոտեցումն արդարացված է, քանի որ խորհրդարանական կառավարման համակարգում Նախագահի դերը պաշտպանական համակարգի կառավարման գործում բավականին սահմանափակված է, իսկ ունեցած բոլոր լիազորությունները պայմանավորված են վարչապետի ներկայացրած առաջարկներով: Նման մոտեցումը արդեն իսկ ունի գործնական կիրառում և բավականին արդյունավետ է գործում խորհրդարանական կառավարման ձև ունեցող Իսրայելում, որը նույնպես գտնվում է աշխարհաքաղաքական զարգացումների բարդ տարածաշրջանում և պատերազմական գործողությունների մշտական վերսկսման վտանգի տակ:

Այդ համատեքստում կարելի է առանձնացնել հետևյալ խումբ հարցերը, որոնք պարտադիր կերպով պետք է դրվեն պաշտպանական-անվտանգային համակարգի ապահովման նոր իրավաքաղաքական կառուցակարգերի մշակման ու իրագործման հիմքում:

¹⁷⁹ «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքը, ՀՀ ՊՏ 2017.12.06/73 (1348), 15-17-րդ հոդվածները, <http://www.arlis.am>:

1. Ինչպիսի՞ն է պաշտպանական-անվտանգային համակարգի ապահովման իրավաբաղադրական հիմքը, և ի՞նչ կառուցակարգեր են ամրագրված սահմանադրական, օրենսդրական ու ենթաօրենսդրական նորմերով:

2. Ինչպե՞ս է ապահովվում անհատի, հասարակության ու պետության անվտանգությունը «սահմանադրություն-օրենք- ենթաօրենսդրական ակտ» շղթայի համատեքստում,

3. Որքա՞ն արդյունավետ են գործում ու համագործակցում պաշտպանական-անվտանգային համակարգի ապահովման սուբյեկտները (անվտանգության ապահովման իրավունքի ու պարտականության կրողները) երկրի անվտանգության դեմ ուղղված սպառնալիքների կանխման ու հետևանքների վերացման գործում,

4. Ի՞նչ օրենք կամ օրենքներ են անհրաժեշտ պաշտպանական-անվտանգային համակարգի ապահովման միասնական իրավական հենքի ձևավորման ու «սահմանադրություն - օրենք - ենթաօրենսդրական ակտ» շղթայի մեջ սահմանադրականի և ենթաօրենսդրականի միջև եղած օրենսդրական կապի ամրապնդման համար:

Առանձնակի ուշադրության է արժանի նաև պետության կառավարման ձևի հարաբերական բնույթը, ինչին ի հակակշիռ կարելի է ընդգծել, որ պետության պաշտպանության ու անվտանգության ապահովման, ինչպես նաև պետական իշխանության լեգիտիմության (իրավաբաղադրական հեղինակության) հիմնախնդիրները բացարձակ են: Պետության կառավարման ձևերը կարող են լինել տարբեր, բայց գիսավորը ձևը չէ, այլ պետության համար կենսական կարևորության խնդիրների, հատկապես՝ պաշտպանական-անվտանգային համակարգի արդյունավետ գործառնության ապահովումն է, դրանով իսկ՝ իշխանության գոյության իմաստի երաշխավորումը:

Հայաստանի Հանրապետությունում անցումը խորհրդարանական հանրապետության կառավարման մոդելին պաշտպանական-անվտանգային համակարգի համար պետք է իրականացվի առանց ավելորդ ցնցումների և երկրի անվտանգության համար սպառնալիքների ստեղծման, քանի որ այդ առումով ևս Սահմանադրության փոփոխությունները կատարվել են միջազգային լավագույն փորձի հաշվառմամբ: Սահմանադրական փոփոխությունների նոր կարգավորումները կոչված են նպաստելու պաշտպանական-անվտանգային համակարգի կառավարման արդյունավետության բարձրացմանը:

THE DEFENSE-SECURITY SYSTEM MANAGEMENT UNDER THE MODEL OF THE PARLIAMENTARY REPUBLIC OF ARMENIA

SEVAK NIKOGHOSYAN

*National Academy of Sciences of the Republic of Armenia,
Applicant at the Philosophy, Sociology and Law Institute,
Yerevan, Republic of Armenia*

The goal of the article is to examine the essence and significance of the reforms of the management of the defense sector of the Republic of Armenia in the process of ensuring security and regulating military-political problems. As a problem, we can note the study of the foundations and the process of reforming the defense security system in the context of modeling parliamentary administration in the republic, as well as evaluating the effectiveness of these reforms and their impact on improving the defense sphere.

In this article the essence of the protection function of the state and the methodology of its implementation are discussed. In the process of research, they were used as general dialectic and systematic methods, as well as specific methods of political, legal and comparative analysis and a number of other methods. The author presented management rules and regulations of the defense sphere of the Republic of Armenia, in this context, attention is drawn to the proposed new approaches in the pattern during the constitutional reform.

It can be concluded that the top priority of defence reform of the Republic of Armenia is the ensuring excellence combat readiness of RA armed forces with the enemy's armed forces, to have development and implementation of standards in armed forces fully comply with Armenia's national security features, completely solve the problems of military security.

Key words: *state, security, defense, policy, management, military unit, armed forces.*

УПРАВЛЕНИЕ СИСТЕМОЙ ОБОРОНЫ И БЕЗОПАСНОСТИ В УСЛОВИЯХ ПЕРЕХОДА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ НА ПАРЛАМЕНТСКУЮ МОДЕЛЬ ПРАВЛЕНИЯ

СЕВАК НИКОГОСЯН

*Соискатель Института философии, социологии и права
Национальной академии наук РА,
г.Ереван, Республика Армения*

Целью статьи является рассмотрение сущности и значения реформ управления оборонным сектором РА в процессе обеспечения безопасности и регулирования военно-политических проблем. В качестве проблемы можно отметить исследование основ и процесса реформирования системы оборонной безопасности в контексте моделирования парламентского управления в республике, а также оценивание эффективности этих реформ и их влияния на улучшение сферы обороны. В статье исследуются суть оборонной функции государства и основная методология ее осуществления.

В процессе исследования были использованы как общие диалектические и систематические методы, так и специфические методы политико-правового и сравнительного анализа и ряд других методов. Автором представляется нынешнее регулирование управления оборонительной сферой Республики Армения, в данном контексте обращается внимание на новые подходы в процессе конституционных реформ.

В заключение делается вывод о том, что приоритетом оборонных реформ Республики Армения является обеспечение превосходства боеспособности вооруженных сил РА над вооруженными силами противника, создание и внедрение в вооруженных силах таких критериев, которые полноценно соответствуют особенностям национальной безопасности Армении.

Ключевые слова: *государство, безопасность, оборона, политика, управление, военная организация, вооруженные сил.*

**Դ.ԹՐԱՄՓԻ ՎԱՐՉԱԿԱՐԳԻ ՀԱՐԱՎԿՈՎԿԱՍՅԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ***

ՀՏԴ 327.8 (73:479)

ՄԱՐՈՒԹ ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ

*ԵՊՀ միջապագային հարաբերությունների և դիվանագիտության
ամբիոնի դասախոս, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ,
բ.Երևան, Հայաստանի Հանրապետություն
marutvardazaryan@rambler.ru*

ԵՐԵՄ ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ

*ԵՊՀ միջապագային հարաբերությունների և դիվանագիտության
ամբիոնի դասախոս, քաղաքական գիտությունների թեկնածու, ասիստենտ,
բ.Երևան, Հայաստանի Հանրապետություն
e.vardazaryan@ysu.am*

Հոդվածում լուսաբանվում է վերջին շրջանում Հարավային Կովկասում ԱՄՆ-ի իրականացրած քաղաքականությունը, որը Վաշինգտոնը դիտարկում է որպես «Մեծ Մերձավոր Արևելքի» բաղկացուցիչ մաս: Մեծ Մերձավոր Արևելք հայեցակարգի էությունը տարածաշրջանում ժողովրդավարական բարենորոգումների ու տնտեսական ապատականացման իրագործման տեսլականն էր: Այդպիսով տեսականորեն հիմնավորվում էր նաև այդ տարածաշրջանում ԱՄՆ-ի միջամտության անհրաժեշտությունն ու նպատակահարմարությունը: Հարավային Կովկասը ԱՄՆ-ի համար ունի կարևոր, սակայն ոչ կենսական շահեր, և այդ տեսանկյունից այն հիմնականում կարևորվում է Ռուսաստանի, Իրանի ու Թուրքիայի հետ հարաբերությունների համատեքստում: Իրանի դեմ պատժամիջոցների խստացման պայմաններում Դ.Թրամփի վարչակարգը կրկին կարևորեց իր դերակատարման մեծացումն այդ տարածաշրջանում: ԱՄՆ-ը հարավկովկասյան տարածաշրջանը չի դիտարկում որպես մեկ ամբողջություն և կարևորում է երկկողմանի հարաբերությունների վարգացումը:

ՀՀ-ի համար հիմնական վտանգը իրանական խնդրի լուծման համատեքստում հայկական կողմից պիջոններ կորսելու Վաշինգտոնի փորձերն են: Նման մոտեցումը ոչ միայն չի կարող արդյունավետ լինել, այլև կխախտի Հարավային Կովկասում հավասարակշռությունն ու կայունությունը:

Բանալի բառեր՝ ԱՄՆ, Մեծ Մերձավոր Արևելք, Սպիտակ տուն, Հարավային գապային միջանցք, Հայաստան, Ադրբեջան, Վրաստան, Ռուսաստան, Իրան, Թուրքիա:

Վերջին շրջանում ԱՄՆ-ը կրկին փորձում է մեծացնել իր ներկայությունը Հարավային Կովկասում, որը Վաշինգտոնը դիտարկում է որպես «Մեծ Մերձավոր Արևելքի» (այսուհետև՝ ՄՄԱ) բաղկացուցիչ մաս: Իրաքում Ս.Հուսեյնի գահընկեց անելուց հետո Սպիտակ Տան հանրապետական վարչակարգը որոշեց մշակել մի հայեցակարգ, որի էությունը մերձավորարևելյան տարածաշրջանում ժողովրդավարական բարենորոգումների ու տնտեսական ազատականացման

* Հոդվածը ներկայացվել է 05.03.2019թ., գրախոսվել՝ 11.04.2019թ., տպագրության ընդունվել՝ 17.06.2019թ.:

իրագործման տեսլականն էր: Վաշինգտոնը մի կողմից՝ ցանկանում էր վերացնել ահաբեկչություն ծնող պատճառները, մյուս կողմից՝ տարածաշրջանի «անհնազանդ» երկրներում հաստատել ամերիկամետ վարչակարգեր: Այդպիսով տեսականորեն հիմնավորվում էր նաև այդ տարածաշրջանում ԱՄՆ-ի միջամտության անհրաժեշտությունն ու նպատակահարմարությունը:

«Մեծ Մերձավոր Արևելքի» ժողովրդավարացման խնդիրը միջազգային հանրության առջև բարձրաձայնվեց 2003 թ. նոյեմբերին ժողովրդավարության Ազգային հիմնադրամում նախագահ Ջ. Բուշ կրտսերի ելույթում: Այդ հայեցակարգի մշակման հիմնական ոգեշնչողը ԱՄՆ-ի նախագահի Անվտանգության գծով խորհրդական Զ.Ռայսն էր, սակայն այդ փաստաթղթի մշակմանը ակտիվ մասնակցեցին նաև Ջ.Զիսինջերը, Յ.Դոպրետոն, Դ. Ռամսֆելդը, Դ.Չեյնին, Պ.Վուլֆովիցը, Մ.Գրոսմանը և ուրիշներ¹⁸⁰: Չ. Բժեգինսկին նշում է, որ «Մեծ Մերձավոր Արևելքի» առկայությունը հնարավորություն է տալիս ներագդելու նաև Եվրասիական Բալկանների վրա, որի մեջ ներառում են Հարավային Կովկասը, Կենտրոնական Ասիան, Աֆղանստանը, Թուրքիան և Պակիստանը»¹⁸¹:

Ամերիկյան այդ քաղաքականությունը միանշանակ չընկալվեց ինչպես Մերձավոր Արևելքում, այնպես էլ Եվրոպայի առաջատար երկրներում ու Ռուսաստանում: Ընդհանուր առմամբ, ՄՄԱ հայեցակարգի իրականացման փորձերն ավելի ապակայունացրին իրավիճակը տարածաշրջանում՝ այն դարձնելով առավել անկանխատեսելի ու պայթյունավտանգ: Բազմաթիվ երկրներում Վաշինգտոնի նմանատիպ գործողությունները գնահատվեցին նաև որպես «գունավոր» հեղափոխությունների քաղաքականության օրգանական շարունակություն: Բ.Զիստոնի նախագահության սկզբնական շրջանում Վաշինգտոնը կարևորում էր ՌԴ-ի հետ համագործակցությունը և տարածաշրջանում վարում էր Իրանի Իսլամական Հանրապետության (այսուհետ ԻԻՀ) զսպման քաղաքականություն: Այդ մարտավարության ճարտարապետը Սթրոուսը Թուրոտն էր: Այդուհետև ԱՄՆ-ը որդեգրեց ադրբեջանական Էներգետիկ ծրագրերի իրականացման օգնությամբ Ռուսաստանի Դաշնությանը (այսուհետև՝ ՌԴ) Հարավային Կովկասից դուրս մղելու քաղաքականությունը: Տարածաշրջանում սերտ դաշինքի գնալով Թուրքիայի հետ՝ Ադրբեջանը դուրս եկավ առաջավոր դիրքեր, իսկ ԻԻՀ-ն կաշկանդված էր պատժամիջոցներով: Իրավիճակը հավասարակշռելու նպատակով Իրանն իր հերթին աջակցեց Հայաստանի Հանրապետությանը (այսուհետև՝ ՀՀ) և փորձեց զարգացնել հարաբերությունները Վրաստանի հետ: Դրությունը փոքր ինչ փոխվեց Բ.Օբամայի նախագահության շրջանում, երբ Թեհրանի հետ կնքվեց միջուկային համաձայնագիրը և մեղմացվեցին պատժամիջոցները: ԱՄՆ նախագահ Դ.Թրամփի կառավարումը համընկավ լիբերալ աշխարհակարգի ճգնաժամի հետագա խորացման հետ: Եթե սկզբնական շրջանում լիբերալ աշխարհակարգի ձևավորումը փոխկապակցված է եղել գլոբալ առաջընթացի հետ, ապա վերջին 20 տարվա ընթացքում ԱՄՆ-ում և ԵՄ երկրներում բնակչության կենսամակարդակի բարձրացում չի գրանցվել, ինչն էլ իր հերթին նվազեցրել է գլոբալացման կողմնակից լիբերալ քաղաքական ուժերի ազդեցությունը և գաղափարների գրավչությունը:

Իշխանությունը ստանձնելուց հետո Դ.Թրամփը Մերձավոր Արևելքում Օբամայի վարած քաղաքականությունը համարեց «աղետալի» և որոշեց ավելի կոշտ քաղաքականություն որդեգրել Իրանի նկատմամբ: Միաժամանակ քրդական հարցի

¹⁸⁰ Политика США по демократизации Ближнего Востока: от суецкого кризиса Арабской весны // <https://article.com/article/16786>.

¹⁸¹ Zbignew Bzezinski, The Grand Chessboard: American Primacy and its Geo-strategic Imperatives-N:2006.

հետ կապված՝ սրվեցին նաև հարաբերությունները Թուրքիայի հետ: Այդպիսով ԱՄՆ-ը որոշեց կրկին շունչ հաղորդել ՄՄԱ նախագծին: Ամերիկյան Նոր վարչակարգը կարծում է, որ ԱՄՆ-ին ուղղված հիմնական սպառնալիքներն ու մարտահրավերները բխում են հենց այդ տարածաշրջանից: Այդ է պատճառը, որ, ի տարբերություն ԱՄՆ-ի նախորդ նախագահների, Դ.Թրամփին առաջին օտարերկրյա այցելությունը սկսեց ոչ թե սահմանակից Կանադայից կամ Մեքսիկայից, այլ Սաուդյան Արաբիայից: 2018թ. մայիսի 20-21-ը հյուրնկալվելով այդ երկրում՝ նա այնուհետև այցելեց Իսրայել: Եր-Ռիյադում Դ.Թրամփը ելույթ ունեցավ 40 երկրների ղեկավարների առջև (մասնակցում էր նաև Ի.Ալիևը) և կարևորեց հակաիրանական խմբավորման ստեղծումը: Միաժամանակ Սաուդյան Արաբիայի հետ կնքվեց 110մլրդ դոլարի գեթի մատակարարման, ինչպես նաև մոտակա 10 տարիների ընթացքում 350մլրդ դոլարի սպառազինություն տրամադրելու պայմանագրեր¹⁸²:

Այդ իրադարձությունները սկիզբ դրեցին ՄՄԱ-ի Նոր խանդավառությանը: Ամերիկյան Սենատում որոշում ընդունվեց Իսրայելում ԱՄՆ-ի դեսպանատունը տեղափոխել Երուսաղեմ, միաժամանակ Սիրիայի հարավում ամերիկյան ռազմական խորհրդակցականների մասնակցությամբ ակտիվացան ռազմական գործողությունները, արաբական մի շարք երկրներ Քաթարի հետ խզեցին դիվանագիտական հարաբերությունները: Այսպիսով՝ Սիրիայի, Յեմենի և Իրաքի կողքին ավելացավ նաև Քաթարը, որը «պատժվեց» Իրանի հետ համագործակցության պատճառով: ԱՄՆ-ը որոշեց մեծացնել ճշումը Իրանի վրա, քանի որ վերջինս խոչընդոտում էր ԱՄՆ-ի ազդեցության ամրապնդմանը Սիրիայում, Յեմենում, Իրաքում ու Լիբանանում, ինչպես նաև աջակցություն ցուցաբերում հակաիսրայելական ուժերին: Այդպիսով հերթական անգամ մեծացնելով իր ներգրավվածությունը Մերձավոր Արևելքում և, հատկապես, ակտիվացնելով տարածաշրջանային քաղաքականության իրանական վեկտորը՝ Վաշինգտոնում կրկին կարևորեցին Յարավային Կովկասը: Վաշինգտոնում արդեն պարզ ըմբռնում են, որ Յարավային Կովկասում ԱՄՆ-ը ունի կարևոր, սակայն ոչ կենսական շահեր և այդ տեսանկյունից այն ավելի շատ կարևորվում է ՌԴ-ի, Իրանի ու Թուրքիայի հետ հարաբերությունների համատեքստում: Ստեղծված իրավիճակում, երբ Թբիլիսիի, Բաքվի ու Երևանի արտաքին քաղաքականության վեկտորները տրամագծորեն հակառակ են, ԱՄՆ-ը այն չի կարող դիտարկել որպես մեկ ամբողջություն և մշակել միասնական հարավկովկասյան քաղաքականություն: Այդ պարագայում Վաշինգտոնը կարևորում է երկկողմանի հարաբերությունների զարգացումը:

Յարավկովկասյան հանրապետություններից ամենասերտ հարաբերություններ հաստատվել են Վրաստանի հետ, որը հայտարարել է ՆԱՏՕ-ին և ԵՄ-ին անդամագրվելու իր հաստատակամության մասին: 2018թ. մայիսից Վազիանիում գործում է ՆԱՏՕ-ի մարտական պատրաստվածության կենտրոնը: Պայմանավորվածություն է ձեռք բերվել նաև այդ կենտրոնի ընդլայնման, ինչպես նաև Նույն վայրում խոշոր ռազմական օդանավակայանի կառուցման մասին, որն ունակ է ընդունելու ամենախոշոր ամերիկյան ռազմա-տրանսպորտային օդանավեր: Այն գտվում է ՌԴ սահմանից 80, իսկ ԻԻՅ սահմանից ընդամենը 300 կմ հեռավորության վրա: Այդ նպատակով Վրաստանին տրամադրվելու է մեկ միլիարդ դոլար¹⁸³: Այսպիսով՝ Վրաստանը հայտնվեց բաժանարար գծերի երկու կողմում: Յարավային Օսիայում տեղակայված է ռուսական ռազմակայանը (որն, ի դեպ, Թբիլիսին համարում է Վրաստանի անբաժանելի հատվածը), իսկ Վազիանիում՝ հյուսիսատլանտյան դաշինքի ռազմաբազան: Ամրապնդվելով Վրաստանում ԱՄՆ-ը կարող է ՌԴ-ին կտրել

¹⁸² Трамп на выезде: почему президент США начал с Саудовской Аравии // <https://amp.rbc.ru.cdn.ampproject.org/v/slamp.rbc.ru/rbcnews/politics/21/05.2017/5921892d9a79476dcf9d117>.

¹⁸³ Зачем США база в грузинском Вазияни? // <https://regnum.ru/news/polit/2523143html>.

հարավկովկասյան իր միակ դաշնակից Հայաստանից, իսկ մյուս կողմից՝ ճնշումներ գործադրել ինչպես Բաքվի (որի կոմունիկացիաները անցնում են Վրաստանով), այնպես էլ Անկարայի վրա:

ԱՄՆ-ի համար հարավկովկասյան երկրներից կարևորվում է նաև Ադրբեջանը: 2018թ. մայիսի 29-ին Բաքվում մեծ շուքով հայտարարվեց «Հարավային գազային միջանցքի» գործարկման մասին: Այդ նախագիծը վայելում էր ԱՄՆ-ի աջակցությունը, իսկ Դ. Թրամփը հեռագրով ողջունեց այդ միջոցառման մասնակիցներին¹⁸⁴: Պատահական չէ, որ այդ միջոցառումից մեկ օր առաջ ամերիկյան հեղինակավոր Foreign Policy ամսագրում լույս տեսավ ժառանգության հիմնադրամի (Heritage Foundation) արտաքին քաղաքականության կենտրոնի տնօրեն Լյուկ Քոֆֆիի և Վաշինգտոնի Կասպիական հետազոտությունների կենտրոնի տնօրեն Էֆգան Նիֆտիևի համատեղ «Ինչու Արևմուտքը Ադրբեջանի կարիքն ունի» խորագրով հոդվածը: Հեղինակները ամերիկյան աշխարհաքաղաքականության տեսանկյունից կարևորվում են, այսպես կոչված, «Գյանջայի միջանցքը», որով անցնում են եվրասիական մայրցամաքային հաղորդակցության ուղիները: Դրանք են՝ Բաքու-Թբիլիսի-Ջեյհան, Բաքու-Սուլայա նավթային, Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազային, Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղին, Արևմտյան Եվրոպան Կասպյան տարածաշրջանի հետ կապող օպտիկական մալուխը, ինչպես նաև E 60 եվրոպական մայրուղին, որը ֆրանսիական Բրեստ քաղաքը կապում է Արևելյան Ասիայի հետ: Աֆղանական պատերազմի ժամանակ ամերիկյան ռազմական բեռների մեկ երրորդը նույնպես տեղափոխվել է այդ ճանապարհով¹⁸⁵: Արևմուտքի և, մասնավորապես, ԱՄՆ-ի համար Ադրբեջանը դեռևս 1990-ական թվականներին կարևորել էր Չ.Բեթգինսկին՝ Նշելով, որ այն հանդիսանում է Կասպյան ավազանի ու Միջին Ասիայի հարստություններով լի «շշի խցանը»¹⁸⁶, և որ Միջին Ասիայի երկրների անկախությունը փաստացի արժեզրկվում է, եթե Ադրբեջանը լիովին վերահսկվի ՌԴ կողմից¹⁸⁷: Ներկայումս, երբ Մոսկվան ցանկանում է իրականացնել «Հյուսիսային հոսք-2» գազատարի կառուցումը, և Եվրոպան 40 տոկոսով կախված է ռուսական գազից, Վաշինգտոնի համար կարևորվում է այդ ճանապարհը, որն, ի դեպ, գտնվում է Արցախի հանրապետությունից ոչ հեռու, և իրավիճակի ապակայունացման դեպքում այդ կոմունիկացիաների անվտանգությունը ևս կարող է հարցականի տակ դրվել:

Դ.Թրամփի ընտրվելուց հետո Ադրբեջանում հույսեր առաջացան, որ ԱՄՆ-ի նոր նախագահը Լեռնային Ղարաբաղի հակամարտության հարցում կօժանդակի Բաքվին: Այդ կապակցությամբ Լոս-Անջելեսի Ամերիկյան հրեական կոմիտեի ներկայացուցիչ Ջեյսոն Կացը Նշեց, որ Դ.Թրամփը հաղթանակ տարավ՝ հակառակ հայամետ լոբբիի ցանկության, և ԱՄՆ-ի շահերից է բխում Բաքվին աջակցելը, որն անկախանալուց ի վեր հանդիսանում է Վաշինգտոնի ռազմավարական գործընկերը և շարունակում է դեպի արևմուտք նավթային ու գազային խողովակաշարերի կառուցումը՝ շրջանցելով Ռուսաստանը: Նա կարևորում է այն հանգամանքը, որ Ադրբեջանը ԱՄՆ-ին աջակցում է նաև միջազգային թատերաբեմում և, միաժամանակ, հանդիսանում է Իսրայելի անփոխարինելի ու մերձավոր դաշնակիցը¹⁸⁸: Նշենք նաև, որ մինչև ԱՄՆ նախագահ ընտրվելը Դ.Թրամփը ադրբեջանական գործարար ներկայացուցիչների հետ բազմիցս

¹⁸⁴ Газ для Европы: Азербайджан построит новый трубопровод //https://www.pravda.ru/news/world/Europe/17-02-2018/1371091-europa-01.

¹⁸⁵ LUKE COFFEY EFGAN NIFTI. WHY the West Needs Azarbaijan//https://foreignpolicy.com/2018/05/28/why-the-west-needs-azerbaijan.

¹⁸⁶ Бжезинский З. Великая шахматная доска. Господство Америки и его геостратегические императивы. М.Международные отношения., 1999, с.155.

¹⁸⁷ Տես նույն տեղում էջ 172:

¹⁸⁸ Станислав Тарасов. На чьей стороне симпатии Трампа в деле Нагорного Карабаха?//https://regnum.ru/news/2487230.

քիզնես ծրագրեր է իրականացրել: 2018թ. մայիսին Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության 100-ամյակի առիթով Ի.Ալիևին ուղղած շնորհավորական ուղերձում Դ. Թրամփը նշում էր, որ «Մենք բարեհաջող կերպով համագործակցում ենք էներգետիկ ոլորտում, որի արդյունքը «Հարավային գազային միջանցքի» նախագծի իրականացումն է Եվրոպայի էներգետիկ անվտանգության ապահովման համար»¹⁸⁹:

Եթե նախորդ տարիներին ԱՄՆ-ը հայտարարում էր, որ Ադրբեջանի հետ համագործակցությունը հավասարապես հիմնված է երեք ռազմավարական ուղղությունների՝ անվտանգության, էներգետիկայի ու ժողովրդավարության վրա, ապա այդ ուղերձում իսպառ բացակայում են մարդու իրավունքների ու ժողովրդավարության ոլորտներում համագործակցության հիշատակումները:

2018թ. հունիսի սկզբներին Հարավային գազային միջանցքը գործարկելու և «Կասպյան նավթն ու գազը» միջազգային ցուցահանդեսի բացման կապակցությամբ Ի.Ալիևին ուղղված Դ. Թրամփի նամակում նշված էր, որ Ադրբեջանի նավթի խոշոր հանքավայրերի շահագործումը նպաստում է միջազգային էներգետիկ շուկայի կայունացմանը, իսկ գազի արդյունահանումը՝ Թուրքիայի և Եվրոպայի էներգետիկ անվտանգությունը¹⁹⁰:

Թվարկված գործոնների արդյունքում ԱՄՆ-ի նոր վարչակարգը անտեսում է Ադրբեջանում ալիևյան ռեժիմի հակառակորդների, քաղաքական ընդդիմության հավաքները, մարդու իրավունքների ռոնահարումը, ՉԼՄ-ի ազատության սահմանափակումները: Փոխարենը՝ ՀՀ անկախության տարեդարձի կապակցությամբ Ն.Փաշինյանին հղած ուղերձում Դ.Թրամփը նշում է. «Այս տարի Հայաստանը տոնելու շատ բան ունի: Խաղաղ, ժողովրդական շարժումը մի նոր դարաշրջան բացեց Հայաստանում, և մենք պատրաստ ենք աշխատել Ձեզ հետ՝ օգնելու իրագործել կոռուպցիան արմատախիլ անելու, անկախ դատական համակարգի, քաղաքական ու տնտեսական մրցակցության վրա հիմնված ներկայացուցչական ու հաշվետու կառավարում և իրավունքի գերակայություն հաստատելու ձեր ժողովրդի կամքը»¹⁹¹:

Ի.Ալիևին ու Ն.Փաշինյանին ուղղված շնորհավորանքներում Դ.Թրամփը ակնարկում է, որ առաջիկա ամիսներին հնարավորություն է ստեղծվում լուծելու Արցախի հիմնախնդիրը: Սակայն ուշագրավն այն է, որ ՀՀ-ի և Ադրբեջանի ղեկավարներին հասցեագրած նամակներում արտացոլվել են այդ երկրների նկատմամբ Սալիտակ Տան քաղաքականության նրբերանգները: Եթե Երևանի ուղերձում արտացոլվել է Վաշինգտոնի համակրանքը գաղափարական առումով իրեն առավել մերձ ու ժողովրդավարական Հայաստանի նկատմամբ, ապա Բաքվին հասցեագրված նամակում գերակշռում են պրագմատիկ ու «քիզնես» շեշտադրումները:

Հարավկովկասյան հանրապետություններից թերևս բոլորից ավելի մերձավորարևելյան խնդրում միտքվել է Ադրբեջանը՝ խորացնելով հարաբերությունները Սաուդյան Արաբիայի հետ: Ի.Ալիևը 2015 և 2017 թվականներին այցելեց Եր-Ռիադ: Ադրբեջանական Slik Way Airlines-ը դիվանագիտական չվերթների թողի տակ 1 մլոդ դոլարի զենք է Բալկաններից տեղափոխել Սիրիայում գործող զրոհայինների համար՝ իրականացնելով 350 թռիչք¹⁹²: Սիրիայում ու Իրաքում կռվող ադրբեջանցի իսլամականների թիվը հասնում է մոտ հազարի¹⁹³: Ինչ խոսք, Իրանին անհանգստացնում է Իսրայելի ու Սաուդյան Արաբիայի մրցակցությունը Ադրբեջանում,

¹⁸⁹ Թրամփը ուղերձ է հղել Ալիևին // <https://www.newsinfo.am/arm/article/view/EyG4bh3V>:

¹⁹⁰ Թրամփի հզոր աջակցությունը Ալիևին // <http://hayeli.am/article/1091695>:

¹⁹¹ Դոնալդ Թրամփը շնորհավորական ուղերձ է հղել Նիկոլ Փաշինյանին // <https://www.Iragir.am/2018/09/20/3803311>:

¹⁹² Саудовская Аравия нацеливается на Иран с Кавказа // www.kavkazoved.info/news/2018/03/22/saudovskaja-aravija-nacelivaetsja-na-iran-s-kavkaza.html.

¹⁹³ Գրիգորյան Ս. Իսլամական արմատականությունը Կովկասում.Եր. ԵՊՀ իրատ, 2017.

սունի հավատացյալների թվի ավելացումը, որը կարող է հանգեցնել Ադրբեջանի լիբանանացման: Հասկանալի է նաև, որ նման գործողություններ կարող էին իրականացվել միայն ԱՄՆ-ի համաձայնությամբ:

Իրանի մեկուսացման նպատակով Վաշինգտոնը փորձում է «մտրակի և թխվածքաբլիթի» քաղաքականությամբ ճնշում գործադրելով ՀՀ և Ադրբեջանի վրա՝ փակել այդ երկրների սահմանները Իրանի հետ: Արտաքին քաղաքականության ամերիկյան խորհրդի վերլուծաբան, ռազմական փորձագետ Ստեֆան Բլանկը The Hill կայքում դեռևս 2018թ. ապրիլին հրապարակած «Ինչպես նախագահ Թրամփը կարող է Իրանին հարված հասցնել իր հարևանների միջոցով» հոդվածում նշում է, որ Ադրբեջանից ու Հայաստանից Իրանի մեկուսացումը զգալի հարված կլինի այդ երկրին: Նա նշում է նաև, որ Հայաստանը Լեռնային Ղարաբաղի հակամարտության և Թուրքիայի կողմից իրականացվող շրջափակման արդյունքում բավական սերտ քաղաքական ու տնտեսական հարաբերություններ է հաստատել Իրանի հետ: Ս.Բլանկը նշում է, որ Հարավային Կովկասում ՀՀ-ը հանդիսանում է ոչ միայն Իրանի, այլև Ռուսաստանի հիմնական գործընկերը: Նկատի ունենալով իրանա-ադրբեջանական տարածայնությունները և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Երևանը ամբողջությամբ չի կարող իր կապերը կտրել Արևմուտքի հետ՝ Վաշինգտոնը պետք է «մտրակի և թխվածքաբլիթի» քաղաքականությամբ այդ տարածաշրջանում հասնի իր նպատակին և նվազագույնի հասցնի ՌԴ և ԻԻՀ ազդեցությունը: Բլանկը Հարավային Կովկասում ԱՄՆ-ի ներկայությունը մեծացնելու միջոց է համարում Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրում նրա դերակատարման մեծացումը և հնարավոր բոլոր լծակները օգտագործելով՝ այդ խնդրի հաղթահարումը¹⁹⁴:

Ադրբեջանը 1994թ. կնքված «Դարի համաձայնագրից» ի վեր փորձել է օգտագործել Էներգակիրների իր խաղաքարտը Լեռնային Ղարաբաղի հակամարտությունն իր օգտին լուծելու գործընթացներում: Տարբեր փուլերում նա ընտրել է ուրույն մարտավարություն՝ համագործակցելով կամ հակադրվելով Մոսկվային, դառնալով Թուրքիայի ռազմավարական դաշնակիցը, խաղալով կոլեկտիվ Արևմուտքի հետ, սակայն Եսկան հաջողությունների չի հասել: Ադրբեջանը այդպես էլ Հարավային Կովկասում չդարձավ ԱՄՆ-ի գլխավոր աշխարհաքաղաքական գործընկերը, քանի որ Վաշինգտոնն այդ տարածաշրջանը դիտարկում է որպես ՄԱԿ-ի բաղկացուցիչ մաս և ավելի շատ կարևորում Թուրքիայի ու Իրանի հետ հարաբերությունների համատեքստում: Սակայն ներկայումս իրավիճակը փոխվել է: Ղրիմի միավորմամբ Սիրիայում ՌԴ-ի ռազմական ներկայությունը, Կասպից ծովի կարգավիճակի վերաբերյալ կոնվենցիայի կնքումը և Կերչի իրադարձությունները վկայում են, որ Մոսկվան փաստացի իր վերահսկողությունն է հաստատել սևծովյան-կասպիական տարածաշրջանում: Ձևավորված նոր աշխարհաքաղաքական պայմաններում Վաշինգտոնի համար Հարավային Կովկասը Իրանի ու ՌԴ-ի դեմ մրցակցելու համար արդեն նոր կարևորություն է ստանում: Կրաստանի հետ ԱՄՆ-ը առանձնակի խնդիրներ չի տեսնում, և Վաշինգտոնի ազդակները հիմնականում ուղղված են Ադրբեջանին ու Հայաստանին: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Եվրոպան ներկայումս զբաղված է իր ներքին խնդիրների հաղթահարմամբ, ԱՄՆ-ը ՀՀ-ում իր դիրքերը ամրապնդելու համար պետք է հանդես գա Ռուսաստան-Իրան-Թուրքիա առանցքի դեմ, որոնց շահերը հիմնականում համընկնում են ոչ միայն Հարավային Կովկասում, այլև Սիրիայում: Վաշինգտոնին անհանգստացնում է հատկապես ռուս-թուրքական հարաբերությունների զարգացման դինամիկան: Սառը և հետսառը պատերազմյան շրջանի ԱՄՆ-ի մերձավորագույն դաշնակիցներից մեկը՝ Թուրքիան, շրջվելով դեպի Ռուսաստան, թուլացրեց ՆԱՏՕ-ի հարավային թևը և կարող

¹⁹⁴ Stephen Blank. How President Trump can strike at Iran through its neighbours // <https://thehill.com/opinion/international/38/208-how-trump-can-strike-at-iran-through-its-neighbours>.

Ե Մոսկվա-Անկարա-Թեհրան առանցքին միավորել նաև Բաքվին: Այդ պարագայում ԱՄՆ-ի ՄՄԱ քաղաքականության շրջանակներում բարձրանում է Յարավային Կովկասի բուժերային, սակայն դեռևս անորոշ դերակատարումը Մոսկվա-Անկարա-Թեհրան այսանի և Մերձավոր Արևելքի միջև: ԱՄՆ-ը փորձում է Բաքվին ու Երևանին կանգնեցնել ծանր ընտրության առջև: Եթե Ադրբեջանից պահանջվում է կշռաբաշխ մի կտրուկ դնել Անկարայի, Մոսկվայի ու Թեհրանի հետ հարաբերությունները, ապա Յայաստանը ստիպված է լինելու սառեցնել շփումները իր համար երկու առանցքային երկրների հետ:

Այդ տեսանկյունից ուշագրավ է 2018թ. հոկտեմբերի վերջերին ԱՄՆ նախագահի անվտանգության հարցերով խորհրդական Ջոն Բոյթոնի այցը Մոսկվա ու Յարավային Կովկաս: ԱՄՆ նախագահի ազգային անվտանգության հարցերով խորհրդականը վերջին անգամ տարածաշրջան այցելել էր 1997թ.-ին (Սամուել Բերգեր): Պատահական չէ, որ Բոյթոնը սկզբից ժամանում է Մոսկվա, հետո՝ Յարավային Կովկաս: Պետք է նկատի ունենալ, որ նման պաշտոնյաները քիչ են ճանապարհորդում, և Բոյթոնը ավելի շատ մասնագիտացած է ազգային անվտանգության հարցերում, քան արտաքին քաղաքականության մեջ: Նա բավական մասնագիտացել է նախկին խորհրդային Միության հանրապետությունների զարգացումների և, հատկապես, ՌԴ-ի հետ հարաբերություններում: Ջ.Բոյթոնի այցը տարածաշրջան փաստացի նշանակում էր հարավկովկասյան տարածաշրջանի նկատմամբ ԱՄՆ-ի քաղաքականության փոփոխություն: Եթե մինչ այդ Վաշինգտոնում կարծել են, թե այն ՌԴ ազդեցության գոտի է և առանձնապես հետաքրքրություն չեն ցուցաբերել, ապա վերոնշյալ աշխարհաքաղաքական գործընթացների համատեքստում ԱՄՆ-ի համար կրկին կարևորվեց այդ տարածաշրջանը: Անշուշտ, ամերիկյան քաղաքական մոտեցման այդ փոփոխության հեղինակը Ջ.Բոյթոնն է, որն էլ անմիջապես փորձեց իրականացնել իր մտահաղացումները: Մինչև Բոյթոնի այցը ադրբեջանցի բազմաթիվ փորձագետներ հայտարարում էին, որ Ադրբեջանը, լինելով Իրանի անմիջական հարևանը և նրա կարևոր գործընկերը, կշարունակի իր անկախ քաղաքականությունը, սակայն վերջինիս այցից հետո ստիպված էր որոշ զիջումների գնալ: Մասնավորապես Բաքուն անորոշ ժամանակով սառեցրեց Իրանի տարածքում «Յյուսիս-Յարավ» տրանսպորտային միջանցքի շրջանակներում երկաթուղու կառուցման շինարարությանը 500 մլն դոլարի ֆինանսավորումը¹⁹⁵:

Այնուամենայնիվ, Բոյթոնի այցի ընթացքում Բաքվի հույսերը չարդարացան, քանի որ Ղարաբաղյան հակամարտության վերաբերյալ վերջինս հայտարարեց, որ ԱՄՆ-ի դիրքորոշումները չեն փոխվել և չանդրադարձավ ՄԱԿ-ի Աև չորս բանաձևերին, փախստականների հարցերին և այլն:

Բոյթոնի այցն ավելի շատ թելադրված էր Իրանի դեմ ԱՄՆ ուժեղացող պատժամիջոցների հարցում Յարավային Կովկասի ընդգրկմամբ, ինչպես նաև տեղերում իրավիճակին ծանոթանալու և իրատեսական պատկերացում կազմելու խնդրով: Թրամփի վարչակազմը փորձում է նաև հստակեցումներ մտցնել Ռուսաստանի ու Յարավային Կովկասի երկրների նկատմամբ քաղաքականության մեջ: Այդ նպատակով Ջոն Բոյթոնն իր պատվիրակության մեջ ընդգրկել էր նաև Ֆինոս Յիլին, որը Յարավային Կովկասի գծով լավագույն ամերիկյան մասնագետներից է և խորությամբ տիրապետում է ինչպես հայ-թուրքական, այնպես էլ Ղարաբաղյան հակամարտության խնդիրներին: Նշենք, որ մինչ այդ Յայաստան էր այցելել նաև Թրամփի մեկ այլ խորհրդական՝ Ռուդի Ջուլիանին, որը մասնակցում էր Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կազմակերպած ֆորումին: Փաստորեն, ինչ որ տեղ ՅԿ-ն դարձել էր հարթակ՝ ռուսական կողմի հետ Ջուլիանիի շփումների համար: Պատահական չէ, որ ամերիկյան որոշ վերլուծաբաններ կարծում էին, թե հիմնական

¹⁹⁵ Иранская воронка может затянуть Азербайджан // <https://regnum.ru/news/2533867.html>.

մարտահրավերներին Բոյթօնը կհանդիպի Երևանում, որտեղ թափյալ հեղափոխությունից հետո ՀՀ-ն շարունակեց ռազմավարական դաշինք պահպանել Մոսկվայի հետ: Հայաստանը Արևմուտքի համար կարևորվում է որպես Թուրքիայի ու Իրանի սահմանակից երկիր և, օգտվելով այն հանգամանքից, որ ՀՀ գտնվում է քաղաքական ձևակերպման պայմաններում, որոշեցին մեծացնել միջազգային ճնշումը Ն.Փաշինյանի վրա՝ քաղաքական ընդդիմությանը «ոչնչացնելու» պատճառաբանությամբ¹⁹⁶: Բոյթօնի մի շարք հայտարարություններ վտանգ էին պարունակում Երևանի համար: Փոխանակ կողմերին հիշեցնելու դեռևս 2016թ. մայիսից ԱՄՆ-ի նախաձեռնությամբ ու հովանու ներքո ձևավորված Վիեննայի օրակարգը, որը վերաբերվում էր հրադադարի պահպանման մեխանիզմներին ու հետաքննությանը, և որը մերժվեց Ադրբեջանի կողմից՝ որակվելով որպես ստեղծված ստատուս-քվոն պահպանելու օրակարգ, Բոյթօնը Բաքվին ու Երևանին առաջարկեց ավելի որակյալ սպառազինություն: Իրականում ԱՄՆ-ը պետք է ճնշում գործադրեր հակամարտող կողմերին զենք վաճառող երկրների վրա, սակայն ձեռնարկեց իրավիճակը ապակայունացնող քայլեր, քանի որ պարզ էր, որ ամերիկյան զենքի գնորդ հիմնականում կհանդիսանա Ադրբեջանը: Երևանին առավել անհագստացնողը Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը խաղաթուղթ դարձնելու՝ Վաշինգտոնի ձգտումն է: Մասնավորապես Բոյթօնը նշել էր, որ հակամարտության կարգավորմամբ Հայաստանը կազատվի արտաքին ազդեցությունից (Ռուսաստանի), և կարգավորման ճանապարհը լեգիտիմ ընտրություններից հետո զիջումների ու «վճռորոշ քայլերի» գնալն էր¹⁹⁷: Ընդ որում, Բոյթօնը Բաքվում Նոյնիսկ զիջումների կապակցությամբ ակնարկ չէր արել: Հիշեցնենք, որ հայկական կողմի տարածքային զիջումների մասին խոսել էր նաև ՀՀ-ից հեռացող ԱՄՆ դեսպան Ռիչարդ Միլսը¹⁹⁸: Stratfor-ը՝ «ստվերային ԿՀԿ»-ն, կանխատեսում է, որ 2019թ. ԱՄՆ-ը պետք է իր ուշադրությունը կենտրոնացնի Ռուսաստանի հարակից շրջաններին: Ուշագրավ է, որ առանձին ենթադրյալում նշվում է Հայաստանի նկատմամբ «հոգածության» կարևորությունը: Այդ հատվածում ուղղակի խոսվում է ՀՀ-ում Ռուսաստանի ու նրա մերձավորագույն դաշնակից Հայաստանի միջև լարվածություն ստեղծելու մասին, և այդ տեսանկյունից կարևորվում է Չ. Բոյթօնի այցը Երևան¹⁹⁹:

Փաստացի ստացվում է, որ Բոյթօնի այցի բուն նպատակը 2018թ. նոյեմբերի 5-ից Թեհրանի նկատմամբ իրականացվող խիստ պատժամիջոցների համատեքստում Իրանի շուրջ կովկասյան օղակը սեղմելու հնարավորությունների ստուգումն էր: Իրանի հետ ՀՀ սահմանը կազմում է 35, իսկ Արցախի հետ՝ 132 կմ: Արցախ-իրանյան սահմանը ներկայումս ավելի շատ ունի ռազմա-քաղաքական նշանակություն: Աշխարհաքաղաքական առումով այն կարևորվում է նաև Իրանի համար: Այդ պատճառով է, որ Վաշինգտոնը ձգտում է օգտագործելով Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը՝ վերահսկել նաև այդ սահմանը և հնարավորության դեպքում այնտեղ ամերիկյան զորամասեր տեղակայել: Եվ այդ ուղղությամբ Բաքուն ու Վաշինգտոնը համահունչ են գործում: Ինչպես Վաշինգտոնն է Թեհրանին մեղադրում Մերձավոր Արևելքում ահաբեկիչներին ու ծայրահեղական խմբավորումներին ֆինասավորելու հարցերում, այնպես էլ Ադրբեջանը նշում է, որ արցախ-իրանյան սահմանին հարակից

¹⁹⁶ Уэс Маегин. Почему Запад не должен игнорировать беспорядки в Армении. The National Interest//inosmi-ru.cdn.ampproject.org/v/s/inosm.ru/amp/social/20181021/243508118.html? amp_j.

¹⁹⁷ Դեսպան Չոն Բոյթօնի մամուլի ասուլիսը Հայաստանում // <https://am.usembassy.gov/hy/Bolton-conference>:

¹⁹⁸ Ռիչարդ Միլս. ԼՂ հարցի ցակցացած կարգավորում պահանջում է«գրավալ տարածքների» մի մասի վերադարձ //https://www.panorama.am/am/news/2018/10/16/Ռիչարդ-Միլս-ԼՂ-հարց/2019289:

¹⁹⁹ Stratfor (США): США сосредоточат усилия на граничающих с Россией районах11//inosmi.ru/politic/20/81119/244040802.html.

տարածքներում իբր զբաղվում են ահաբեկիչներ պատրաստվելով ու թմրանյութերի վաճառքով²⁰⁰:

Երևանը նույնպես ենթարկվեց արտաքին որոշակի ճշումների: ՀՀ վարչապետի պաշտոնակատար Ն.Փաշինյանը նշեց, որ արսուրդ է, երբ մի երկիր մյուս երկրի հետ հարաբերությունները պայմանավորում է երրորդ երկրի հետ ունեցած հարաբերություններով և հավելեց, որ վերջերս մի շատ փորձված դիվանագետի (ամենայն հավանականությամբ, նկատի ունենալով Բոլթոնին) հետ հանդիպման ժամանակ նկարագրել է ՀՀ «կղզային» դիրքը, և այդ դիվանագետը ընդունել է հայկական փաստարկներն ու դիրքորոշումը²⁰¹:

Ամփոփելով Սպիտակ Տան նոր մարտավարությունը Հարավային Կովկասում կարող ենք հետևություններ անել:

Նախ և առաջ պետք է նկատի ունենալ, որ Կոնգրեսն ու Դ.Թրամփի հակառակորդները ստիպում են նրան արտաքին բնագավառում առավել վճռական քայլերի գնալ, և երբեմն այդ ճշումների ազդեցության տակ նոր վարչակարգը դիմում է նման քայլերի: Մասնավորապես Foreign Policy Research Institute-ը, Carnegie Center-ը քննադատում են ամերիկյան նոր վարչակարգին, որ նա Հարավային Կովկասում ակտիվ չէ, որ այդ տարածաշրջանում ԱՄՆ-ի դաշնակիցները իրենց խաբված են զգում, նվազում է այդ տարածաշրջանի կարևորությունը ՆԱՏՕ-ի համար, որ Թրամփի վարչակարգը կորցնում է իր հետաքրքրությունը տարածաշրջանի նկատմամբ և այլն²⁰²: Հետևաբար, Մերձավոր Արևելքում ընդհանուր առմամբ անհաջողություն կրելով՝ անհրաժեշտ է «տանուկ տվածը» վերադարձնել Հարավային Կովկասում:

Ստեղծված պայմաններում ինչքան էլ սրվեն ռուս-ամերիկյան հարաբերությունները, Մոսկվայում լավ են ըմբռնում, որ ավելի «պուտինասեր» Նախագահ մոտ ժամանակներում Վաշինգտոնում չեն տեսնի: Միաժամանակ Թրամփի նկատմամբ երկրի ներսում ճշումը չուժեղացնելու համար ՌԴ-ի և ԱՄՆ-ի ղեկավարները արտաքինապես սառնություն են ցուցաբերում, և նույն խաղը նկատվում է նաև Հարավային Կովկասում: Չ.Բոլթոնի այցը Կրասսան Թբիլիսիի համար ՆԱՏՕ-ին անդամագրվելու հարցում այդպես էլ որևէ հստակություն չմտցրեց: Իր հերթին Բաթուն ևս մտածում է, որ ԱՄՆ-ը ադրբեջանամետ դիրքորոշում չունի: Հարավային Կովկասում ԱՄՆ-ի գլխավոր խնդիրը հարավկովկասյան հանրապետություններից Իրանին մեկուսացնելն է և Իրանի ու Սիրիայի հարցերում Մոսկվայի հետ փոխհամաձայնության գալը:

ԱՄՆ-ը մտահոգված է, որ հայկական թավշյա հեղափոխությունից հետո Ղարաբաղյան կարգավորման գործընթացը կարող է առժամանակ սառեցվել: Մինսկի խմբի անդամներին անհանգստացնում էր այն հանգամանքը, որ ՀՀ-ում կարող են ուժեղանալ արմատական տրամադրություններն ու ուժերը, և բանակցությունները կարող են սկսվել «սպիտակ էջից»: Հարավային Կովկասում փխրուն հավասարակշռությունը պահպանելու, ինչպես նաև ամերիկյան գործարար շրջանների շահերը պաշտպանելու համար ԱՄՆ-ին հարկավոր է ՌԴ-ի աջակցությունը: Վաշինգտոնում հասկանում են, որ ՀԿ երկրների համար ստեղծված իրավիճակում ՌԴ-ն դիտարկվում է որպես ստեղծված հավասարակշռության գլխավոր երաշխավոր: Եթե Թբիլիսիում հիմնականում լռում են, ապա Երևանում ու Բաթում այդ մասին բարձրաձայնում են:

²⁰⁰ Բաթուն նշանառության տակ է վերցնում Իրանի և Լեռնային Ղարաբաղի միջև սահմանը // www.artsakhtert.com/arm/politics/item/25651.2018-11-22-1-57-35:

²⁰¹ Հայ-իրանական սահմանը ամեն պահի կարող է փակվել ԱՄՆ-իրան հարաբերությունների պատճառով. Փաշինյան // <https://news.am/arm/news/478858.html>:

²⁰² СИА. Азербайджан, Внешэкономсвязи, политика // regnum.ru. 19 января 2018, N: 2463317.

Իր հերթին Ադրբեջանը շահագրգռված չէ, որպեսզի Վրաստանը հարաբերությունները բարելավվի ՌԴ-ի և ՀՀ-ի հետ, քանի որ դրա արդյունքում կթուլանա Բաքվի ազդեցությունը այդ երկրում: Իսկ Վրաստանի համար ԼՂ խնդրի առկայությունը հնարավորություն է տալիս առանց այլընտրանքի տրանսպորտային միջանցքի իր դերակատարումը պահպանել:

Այսպիսով՝ շնորհիվ ամերիկյան ՄՄԱ հայեցակարգի՝ Հարավային Կովկասը, որ նախկինում գտնվում էր եվրոպական երկրների շահերի ոլորտում և կարևորվում էր միայն տարածաշրջանային երկրների համար, հայտնվեց գլոբալ քաղաքականության կենտրոնում: Այն կարող էր ՌԴ-ի համար հանդիսանալ ինչպես անվտանգության գոտի, որը նրան բաժանում է աշխարհաքաղաքական մրցակիցներից, այնպես էլ հենակետ՝ Մոսկվայի հակառակորդների համար: Տրանսպորտային ու ռազմական նոր տեխնոլոգիաների զարգացումը ՀՀ-ն վերածեցին յուրատեսակ կամրջի դեպի Մերձավոր Արևելք: Միաժամանակ ՀՀ-ն դարձավ ՌԴ-ի տարածքը շրջանցող ամենահեռանկարային տրանսպորտային միջանցքը, որով հնարավոր է կասայան ավազանի էներգակիրները հասցնել Եվրոպա և նվազեցնել նրա կախվածությունը Մոսկվայից:

2008թ. ռուս-վրացական պատերազմը, Ուկրաինայի արևելքում ծավալվող իրադարձությունները վկայում են, որ ՌԴ-ն չի հանդուրժի, որ մերձբալթյան հանրապետություններից բացի որևէ այլ հետխորհրդային երկիր ընդգրկվի ՆԱՏՕ-ում:

Տարածաշրջանի երկրների համար ԱՄՆ-ի քաղաքականության ռազմավարությունը ՀՀ-ում դեռևս վերջնականապես չի ձևավորվել, և Վաշինգտոնը պատրաստ չէ տարածաշրջանում ռազմական գործողություններ վարել: Դրա փոխարեն տարածաշրջանում ՌԴ-ն ունի մի շարք առավելություններ: Հյուսիսային Կովկասում ՌԴ-ն կենտրոնացրել է խոշոր ռազմական ուժեր, Հարավային Կովկասում առկա են ռուսական ռազմակայաններ, և ՌԴ-ն պարբերաբար դրսևորում է իր ազգային շահերը պաշտպանելու համար ուժ կիրառելու պատրաստակամությունը:

Իսկ ի՞նչ վտանգներ ու մարտահրավերներ են Երևանի առջև ծառայել ամերիկյան նոր մարտավարության համատեքստում: Զանի որ Վաշինգտոնում իրատեսորեն կարծում են, որ հնարավոր չէ արմատականորեն փոխել հայ-ռուսական համագործակցության ֆորմատը, ապա հիմնականում աշխատում են հայ-իրանական հարաբերությունների սառեցման ուղղությամբ: Երևանը պետք է փորձի ԱՄՆ-ին բացատրել, որ իր ազգային անվտանգության տեսանկյունից չի կարող փակել հայ-իրանական սահմանը, և ինքը երբեք չի խաղում տարբեր երկրների հակասությունների վրա, այլ, ընդհակառակը, պատրաստ է օժանդակել դրանք վերացնելու ջանքերին:

Ամերիկյան հետաքրքրությունը Հայաստանի նկատմամբ նվազեց 2013թ. սեպտեմբերի-3-ին, երբ ՀՀ-ն կողմնորոշվեց դեպի Եվրասիական միությունը և աճեց, երբ 2017թ. նոյեմբերին կնքվեց ԵՄ-ՀՀ պայմանագիրը: Թավշյա հեղափոխությունը կրկին մեծացրեց Վաշինգտոնի ուշադրությունը Երևանի նկատմամբ: ԱՄՆ-ի համար լիովին պարզ չէ, թե ինչ քաղաքականություն են պատրաստվում վարել ՀՀ նոր իշխանությունները: Սպիտակ Տունը դրական է գնահատում հայկական թավշյա հեղափոխության հաղթանակը և հասկանում, որ լարված իրավիճակում մեծանում է փոքր երկրների նշանակությունն ու դերակատարումը: Մինչև այժմ ՀՀ-ԱՄՆ հարաբերությունները համակարգային բնույթ չեն կրել և ավելի շատ ունեցել են տարբեր շրջանակներում համագործակցային բնույթ: Այստեղ կարևոր է Վաշինգտոնին համոզել, որ Երևանը կարող է միայն դրական դերակատարում ունենալ ռուս-ամերիկյան և ռուս-իրանական հարաբերություններում:

Մյուս կարևոր հանգամանքը ամերիկյան նոր վարչակարգին ներկայացնելն է, որ ՀՀ քաղաքականության առանցքային կողմերից է Արցախի անվտանգության երաշխավոր լինելը: Երևանի համար նոր իրավիճակն այն է, որ Վաշինգտոնը, ակտիվորեն «ներխուժելով» ՌԴ ավանդական գոտի, վիճարկում է Մոսկվայի

կարգավիճակը Հարավային Կովկասում, իսկ արցախյան հիմնախնդրի լուծման տրամաբանությունը կարող է դիտարկվել ամերիկյան շահերի տեսանկյունից: Եթե Նույնիսկ համարենք, որ ԱՄՆ-ը ԼՂ հակամարտության գոտում չի պատրաստվում մրցակցել Ռուսաստանի հետ, ապա միանշանակ է, որ Վաշինգտոնը ամրապնդում է իր ներկայությունը:

Երևանը անվտանգության ոլորտներում չի պատրաստվում շրջադարձային փոփոխություններ իրականացնել, և մի՞թե արտաքին քաղաքականության այդ շարունակականությունն ու կայունությունը ԱՄՆ-ի համար ավելի գերադասելի չէ, քան այն ճանապարհը, որով անցել է Կրաստանը, կամ այն խնդիրները, որոնք նրա համար պարբերաբար ստեղծում է ՌԻկրահնան:

Միաժամանակ հարկ ենք համարում ընդգծել, որ ԱՄՆ-Ադրբեջան հարաբերությունների զարգացման վեկտորը անընդմեջ չի կարող դրական լինել, քանի որ անկախ այդ երկրի ռեսուրսներից՝ այնտեղ առկա կոռուպցիան, մարդու իրավունքների համատարած խախտումները, իշխանության ու կառավարման ոչ ժողովրդավարական բնույթը Վաշինգտոնում պարբերաբար առաջացնելու են դժգոհություններ եթե ոչ Թրամփի վարչակարգում, ապա՝ Կոնգրեսում: Այդ դեպքում հայկական կողմի համար կարևորվում է Մոսկվայի հետ ռազմավարական դաշինքի առկայության հետ մեկտեղ պահպանել նաև հավասարակշռությունն հայ-ամերիկյան հարաբերություններում:

Բոլթոնի այցից հետո ԼՂ կարգավորման ուղղությամբ իր քաղաքականությունը ակտիվացրեց նաև Մոսկվան: Ս.Լավրովը մոտ տասը ժամ տևողությամբ հանդիպում ունեցավ Ի.Վլիևի հետ և հայտարարեց, որ Ադրբեջանը «կառուցողական է տրամադրված»²⁰³: Ադրբեջանը, իրական սպառնալիք զգալով (Իրան+ԱՄՆ), պետք է ապավինի նաև ՌԴ-ի աջակցությանը: Իր հերթին Մոսկվան, ՀՀ-ի հետ պահպանելով հարաբերությունների ներկա մակարդակը, փորձելու է ՀՀ-ում գլխավոր գործընկեր դարձնել Ադրբեջանին և դրանով մեծացնել ճնշումները Կրաստանի նկատմամբ: Օգտագործելով այդ վիճակը՝ ՌԴ-ն նաև կաշխատի մեծացնել իր ռազմական ներկայությունը ընդհուպ Արցախ-Ադրբեջան շփման գծում: Այդ իսկ պատճառով հայկական նոր իշխանությունները, որոնք վայելում են բնակչության զգալի մասի աջակցությունը, ունեն անհրաժեշտ ռեսուրսներ՝ ճկուն ու իրատեսական քաղաքականություն վարելու համար, որի իրական գրավականը հայ-ռուսական դաշինքի հետագա ամրապնդումն է:

Ժամանակին Դ.Թամփը մեծ սխալ համարեց Մերձավոր Արևելք ամերիկյան գործ մտցնելը: Միաժամանակ նա սխալ համարեց Բ.Օբամայի կողմից այդ գործի դուրս բերումը: Նույն սխալը կգործի Դ.Թրամփի վարչակարգը ներկայումս, եթե իրանական խնդրի լուծման համատեքստում փորձի կարգավորել Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը: Առավել ևս հիմա, երբ 2016թ. ապրիլյան հնգօրյա պատերազմից հետո բանակցությունները փակուղի են մտել: Նման մոտեցումը չի կարող արդյունավետ լինել, քանի որ նախ՝ չի կարող տարածաշրջանի երկրների շրջանում անվտանգային տեսանկյունից վստահություն ներշնչել, ապա՝ կխաթարի ՀՀ-ի երկրների կայունությունն ու անվտանգությունը:

²⁰³ Փակ համաձայնություններ, գործարքներ. Ղարաբաղյան հակամարտության կարգավորման ինչ ծրագրեր են դիտարկվում Ռուսաստանում // <https://168.am/2018/12/16/1057>:

DONALD TRUMP ADMINISTRATION'S NEW TRENDS IN SOUTH CAUCASUS POLICY

MARUT VARDAZARYAN

*Yerevan State University, PhD in History, Associate Professor
of the Chair of International Relations and Diplomacy,
Yerevan, Republic of Armenia*

EREM VARDAZARYAN

*Yerevan State University, PhD in Political Sciences, Assistant Professor
of the Chair of International Relations and Diplomacy,
Yerevan, Republic of Armenia*

In recent times, the US has been again attempting to expand its presence in South Caucasus region as part of the «Greater Middle East». The essence of the concept of the Greater Middle East is the introduction of the implementation of democratic reforms and the liberalization of the economy. This theoretically substantiates the need and feasibility of US intervention in the region. South Caucasus has important but not vital benefit for the US as it is mostly valued in the context of relations with Russia, Iran and Turkey. D. Trump's administration especially highlighted the importance of the US presence in the region while tightening sanctions on Iran. The US sees the importance of bilateral relations development in the area, as it does not consider the region of South Caucasus as a single entity.

The main threat for the Republic of Armenia (RA) is Washington's attempts of imposing compromises on RA in the context of solving the Iranian issue. This approach cannot be beneficial and will jeopardise the balance and stability in South Caucasus.

Key words: *USA, Greater Middle East, White House, Southern Gas Corridor, Armenia, Azerbaijan, Georgia, Russia, Iran, Turkey.*

НОВЫЕ ТЕНДЕНЦИИ В ЮЖНОКАВКАЗСКОЙ ПОЛИТИКЕ АДМИНИСТРАЦИИ Д. ТРАМПА

МАРУТ ВАРДАЗАРЯН

*Кандидат исторических наук, доцент кафедры международных отношений и дипломатии ЕГУ,
г.Ереван, Республика Армения*

ЕРЕМ ВАРДАЗАРЯН

*Кандидат политических наук, ассистент кафедры международных отношений и дипломатии ЕГУ,
г.Ереван, Республика Армения*

В статье освещается проводимая в последнее время Соединенными Штатами Америки политика на Южном Кавказе, который Вашингтон рассматривает как составную часть Большого Ближнего Востока. Концепция Большого Ближнего Востока предполагает реализацию в регионе демократических реформ и либерализацию экономики. Этим теоретически обосновывается необходимость и целесообразность вмешательства США в данный регион. Для США Южный Кавказ имеет важное, но не жизненное значение, и его важность рассматривается в контексте отношений с Россией, Ираном, Турцией. В условиях ужесточения санкций по отношению к Ирану администрация Д. Трампа снова придает значимость усилению своей роли в этом регионе. США не рассматривают южнокавказский регион как одно целое и считают важным развитие двухсторонних отношений.

Главная угроза для Республики Армения в том, что в контексте решений иранской проблемы Вашингтон пытается добиться от армянской стороны уступок. Подобный подход не только не может быть эффективным, но и нарушает стабильность и равновесие на Южном Кавказе.

Ключевые слова: США, Большой Ближний Восток, Белый дом, Южный газовый коридор, Армения, Азербайджан, Грузия, Россия, Иран, Турция.

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ECONOMICS, ЭКОНОМИКА



**ԲԼՈԿԶԵՅՆԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ԲՆԱԿՖՈՆԴԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎԱՄԱՆ ՀԱՄԱՏԵԶՍՈՒՄ***

ՀՏԴ 004.65:332.87(479.25)

ԱՐՄԱՆ ԱՍՐՅԱՆ

*Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության և
կառավարման ֆակուլտետի ասպիրանտ,
ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն
arman.asryan@yahoo.com*

Հոդվածում ներկայացվում է բլոկչեյնը՝ որպես կրիպտոգրաֆիկ վավերացմամբ ինֆորմացիայի մուտքագրման մեխանիզմ ունեցող տվյալների ապակենտրոնացված բազա: Բացահայտվում են բնակարանային ֆոնդի կառավարման համակարգի բարելավման համատեքստում այդ տեխնոլոգիայի կիրառման հնարավորությունները, որոնք բաժանվում են չորս հիմնական ուղղությունների՝ ա) բնակարանների թվային անձնագրերի ձևավորում, բ) բնակֆոնդի կառավարման գործընթացների վերափոխում, գ) բնակֆոնդի կառավարման համակարգի ինֆորմացիոն թափանցիկության բարձրացում, դ) խելացի պայմանագրերի ներդրում: Զննարկվում են բլոկչեյնի՝ ՀՀ բնակֆոնդի կառավարման ոլորտում ներդրման հնարավոր մարտահրավերները, որոնցից ամենաառանցքայիններն են՝ ա) բնակարանների թվայնացման ճշգրիտ ու ընդհանրական մեխանիզմների ու կանոնակարգերի ձևավորումը, բ) ոլորտի մասնակիցների միջև ինֆորմացիոն տարանջատվածության և դրանից բխող տեղեկատվական անհամապատասխանությունների վերացումը, գ) ոլորտի շահառուների գործունեության և նրանց համապատասխան բիզնես գործընթացների միջև առկա տարբերություններով պայմանավորված շահերի հնարավոր բախումների կանոնակարգումը, դ) տեխնոլոգիայի վերաբերյալ հայ հասարակության իրավեկվածության մակարդակի բարձրացումը: Առաջարկվում են բլոկչեյնի ներդրման գործընթացի խոչընդոտների հաղթահարմանն ուղղված համապատասխան մոտեցումներ ու լուծումներ:

Բանալի բառեր՝ բլոկչեյն, բնակարանային ֆոնդի կառավարում, տվյալների ապակենտրոնացված բազա, բնակարանի թվային անձնագիր, խելացի պայմանագրեր, թվայնացման կանոնակարգեր, տեղեկատվական ինտեգրում:


Բլոկչեյնը 21-րդ դարի տեխնոլոգիական առաջընթացի ամենաբեկումնային նմուշներից մեկն է: Այն հաջորդ սերնդի համացանցի, որը հայտնի է նաև ապակենտրոնացված ցանց և Web3 անուններով, շարժիչ ուժն է: Բլոկչեյնն իր նորարարական կառուցվածքի շնորհիվ երկու կարևոր խնդիր է լուծում. ա) վերացնում է գործառնությունների իրականացման պրոցեսի միջնորդներին, բ) օգտատերերի շրջանում վստահություն է ձևավորում ողջ համակարգի նկատմամբ: Ներկայումս այն

* Հոդվածը ներկայացվել է 02.05.2019թ., գրախոսվել՝ 20.05.2019թ., տպագրության ընդունվել՝ 17.06.2019թ.:

ունի կիրառության բազմաթիվ ասպարեզներ, որոնցից են ապահովագրությունը, անշարժ գույքի կառավարումը, ֆինանսական ծառայությունները և այլն:

Բլոկչեյնի սահմանումն ու աշխատանքի նկարագիրը: Բլոկչեյնը երկու և ավելի շահառու կողմերի միջև տեղի գործառնությունների տվյալների բազա-ցանց է, որտեղ գործառնություններից յուրաքանչյուրին վերագրվող բլոկի պատճենները պարունակվում են ցանցի բոլոր հանգույցներում: Բազայի ներսում յուրաքանչյուր գործառնություն ներկայացվում է համապատասխան տվյալներ (վաճառողի, գնորդի վերաբերյալ ինֆորմացիա, պայմանագրի պայմաններ և այլն) պարունակող բլոկի տեսքով, որը վավերացվում է ողջ ցանցի կողմից՝ շնորհիվ համապատասխան կողավորման, որը կազմվում է գործառնության տվյալների և շահառու կողմերի թվային ստորագրությունների հիման վրա: Գործառնությունը համարվում է վավերացված, եթե ապակողավորման արդյունքը բոլոր հանգույցներում նույնն է: Վավերացման արդյունքում տվյալ բլոկն ավելացվում է Նախորդ գործառնությունների շղթային: Եթե բլոկի վավերացումը ձախողվում է, հանգույցների կոնսենսուսը հետադարձ վերլուծության միջոցով կարգավորումներ է իրականացնում ապակողավորման անհամապատասխան արդյունք գրանցած հանգույցներում²⁰⁴:

Տեխնիկական տեսանկյունից բլոկչեյնը տարատեսակ կեղծարարություններից ու ինֆորմացիայի անհամապատասխանությունից պաշտպանված տվյալների հանրային բազա է, որը պահպանում է իրականացված գործառնություններին վերաբերող տվյալները բլոկներ կոչվող արկղերում²⁰⁵: Բլոկները անփոփոխելի թղթապանակներ են, որոնք պատկանում են ցանցին: Յուրաքանչյուր նոր բլոկ ուղղվում է ամենաթարմ գործառնության գրանցմանը, որը դեռևս չի ձևակերպվել Նախորդ ոչ մի բլոկում: Այսպիսով՝ բլոկչեյնը կարելի է նմանեցնել ինքնատիպ գրանցամատյանի, որում ա)



Գծապատկեր 1. Պարզագույն բլոկչեյնի նմուշ (աղբյուրը՝ www.medium.com, 09.04.2019)

յուրաքանչյուր գրանցում անփոփոխելի է վավերացվելուց հետո, ք) յուրաքանչյուր եջի լրացման դեպքում անցում է կատարվում հաջորդ եջին²⁰⁶: Յուրաքանչյուր ստեղծված ու վավերացված բլոկ կապվում է իրեն Նախորդող բլոկին՝ շնորհիվ հաշերի (անգլ.՝ hash)՝ թվային մատնահետքերի: Հաշը եզակի նույնացուցիչ է, որը ստեղծվում է դիտարկվող գործառնությանը վերաբերող տվյալները համապատասխան կրիպտոգրաֆիկ գործիքի միջով անցկացնելիս²⁰⁷: Հաշի ստեղծման նպատակը գործառնությանը վերաբերող տվյալները գաղտնի պահելն է: Հաշերի ձևավորման պահը պահպանվում և

204 Schneider, J., Blostein, A., Lee, B., Kent, S., Groer, I., Beardsley, E., Blockchain: Putting Theory into Practice, The Goldman Sachs Group Inc., 2016, p. 2-4.

205 Antonopoulos, A., Mastering Bitcoin: Unlocking Digital Cryptocurrencies, O'Reilly Media Inc., 2014, p. 20.

206 Deloitte UK, Blockchain: Enigma. Paradox. Opportunity, London: Deloitte LLP, 2016, p. 6-9.

207 Morrison, A., Blockchain and smart contract automation: Blockchains defined, 2015, Աղբյուրը՝ <http://usblogs.pwc.com/emerging-technology/a-primer-on-blockchain-infographic/>, 05.04.2019.

ավելացվում է բլոկի սկզբնական հատվածում: Այստեղից հետևում է, որ գործառնությունների՝ բլոկների վրա պահպանվող տվյալները կարելի է կապել նախորդող (ծնող) և սկզբնական (գենեզիս) բլոկների հետ: Ծնող բլոկ ասելով՝ նկատի ունենք դիտարկվող բլոկին նախորդող բլոկը տվյալ շղթայում, մինչդեռ գենեզիս բլոկը վերաբերում է շղթայի ամենաառաջին բլոկին: Հարկ է նշել, որ բլոկներում պահվող ինֆորմացիան պաշտպանված է նույնիսկ դրանք պահպանող ու օգտագործող շահառուների կողմից հնարավոր խարդախություններից: Դա հնարավոր է՝ շնորհիվ անկախ հանգույցների, որոնք ապակենտրոնացված կոնսենսուսի եղանակով ստուգում և համաձայնեցնում են դիտարկվող բլոկի բոլոր պատճենների նույնությունը:

Բլոկչեյնի կառուցվածքային բաղադրիչները: Բլոկչեյնի՝ տվյալների ավանդական բազաների համեմատությամբ առավել արդյունավետ լինելու հիմքում ընկած են դրա բաղադրիչները, որոնք ներկայացվում են հաջորդիվ:

1. Բլոկչեյնի ցանցում մայներները գործառնությունների՝ բլոկչեյնին ավելացնելուն նախորդող վավերացումներն իրականացնողներն են: Նրանք բլոկչեյնի մասնակիցներ են, որոնք հաստատում են նոր գործառնությունները՝ այդպիսով ցանցն ավելի անվտանգ դարձնելով: Մայներների մասնակցությունը բլոկչեյնին պայմանավորված է կամ համապատասխան պարզևատրումների առկայությամբ (կրիպտոարժույթների տեսքով), կամ դիտարկվող գործառնություններին նրանց ցուցաբերած հետաքրքրությամբ: Օրինակ՝ բիզնեսները կարող են որպես մայներներ մասնակցել ոլորտին համապատասխանող բլոկչեյնին՝ մրցակիցների նկատմամբ ինֆորմացիոն, մրցակցային առավելություն ձեռք բերելու նպատակով²⁰⁸:

2. Տվյալների ավանդական բազաների ու բլոկչեյնի միջև առանցքային տարբերությունը տեղեկատվության ավելացման ու համակարգի ընդլայնման մեխանիզմների մեջ է: Բլոկչեյնում բոլոր մասնակիցներն իրավունք ունեն նոր բլոկներ ավելացնելու, որոնք, սակայն, պետք է վավերացվեն (իսկ անվավեր ճանաչվելու դեպքում՝ կոնսենսուսի եղանակով ուղղվեն) և ավելացվեն ցանցին: Սա հակասում է տվյալների ավանդական բազաների գործունեության սկզբունքին, ըստ որի՝ կամ տվյալների մուտքագրումը վերապահված է սահմանափակ քանակությամբ մասնակիցների, կամ տարբեր մասնակիցների կողմից տվյալների ազատ մուտքագրման հնարավորությունը զուգակցվում է միայն մեկ (կամ մի քանի) մասնակցի կողմից դրանց վավերացմամբ: Կոնսենսուսային արձանագրությունը (անգլ.՝ Consensus Protocol) այն մեխանիզմների ամբողջությունն է, որոնցով բոլոր մասնակիցները համաձայնության են գալիս տվյալ բլոկի հաստատման հարցում:

Բլոկչեյնի առանցքային կետերից մեկն այն է, որ դրա ներսում առկա ամեն տվյալ վավեր ու անվիճարկելի է բոլոր մասնակիցների համար: Եթե բլոկչեյնի մասնակիցներից որևէ մեկը կամենա առանց ընդունված ձևաչափերին հետևելու տվյալներ ձևափոխել, ապա բլոկչեյնը կտրոհվի երկու մասի, որոնք կպարունակեն տվյալ պոտենցիալ բլոկի հավաստի ու ոչ հավաստի պատճեններ: Սա կառաջացնի խզում (անգլ.՝ fork), որը հետագայում կլուծի կոնսենսուսը հետահայաց ուսումնասիրության ու ճշգրտման միջոցով:


3. Բլոկի վավերացումն իրականացվում է կրիպտոգրաֆիայի կիրառությամբ: Ինչպես արդեն նշել ենք, հաշերն օգտագործվում են բլոկները միմյանց կապելու նպատակով: Յուրաքանչյուր բլոկ, համապատասխան տվյալներ պարունակելուն զուգահեռ, ունի նաև իրեն նախորդող բլոկի հաշ-կոդը: Այսպիսով՝ յուրաքանչյուր բլոկ ոչ միայն պարունակում է նախորդ բլոկի տվյալների հիման վրա ստացված հաշ-կոդը,

²⁰⁸ ENISA, Distributed Ledger Technology & Cybersecurity. European Union Agency for Network and Information Security, 2016, p. 10.

այլև որոշակի կրիպտոգրաֆիկ մեխանիզմի կիրառությամբ հաստատում է իր ծնող բլոկի տվյալների անփոփոխ լինելը:

Բլոկչեյն տեխնոլոգիան օգտագործում է ասիմետրիկ կրիպտոգրաֆիան համապատասխան հաղորդագրությունները թվային ստորագրությամբ նշելու նպատակով²⁰⁹: Կենտրոնական գաղափարը անձնական ու հանրային բանալիների զույգի կիրառման միջոցով տվյալների կողավորումն է: Հանրային բանալին, որն իրենից ներկայացնում է թվերի ու տառերի յուրահատուկ համադրություն, տվյալ մասնակցի համար ստեղծում է հանրայնորեն տեսանելի թվային հասցե: Անձնական բանալին մասնակցի վերաբերյալ այն ինֆորմացիան է, որն ընկած է շահառուի թվային ստորագրության հիմքում: Վերջինս էլ իր հերթին օգտագործվում է հանրային բանալին ստեղծելու նպատակով: Հենց այդ ստորագրության առկայության դեպքում է միայն հնարավոր բլոկչեյնում նոր գործառնություն ավելացնել:

4. Բլոկչեյնի ծավալի նվազեցման և այն տարատեսակ, փոքրամասշտաբ սարքավորումների վրա տեսանելի դարձնելու նպատակով օգտագործվում է մերքլ ծառը (անգլ.՝ merkle tree, binary hash tree): Վերջինս, որը հայտնի է նաև «բինարային կողավորմամբ ծառ» անունով, տվյալների ներկայացման տարբերակ է, որը կիրառվում է մեծածավալ տվյալների ընդհանրացման և դրանց հավաստիության ստուգման նպատակով: Մերքլ ծառերը բինարային մեխանիզմներ են, որոնք պարունակում են կրիպտոգրաֆիկ կողավորումներ: Դրանց հիման վրա ձևավորվում է տվյալ



Գծապատկեր 2. Բինարային կողավորմամբ ծառի (մերքլ ծառ) սևուշ (աղբյուրը՝ www.wikipedia.org, 08.04.2019)

գործառնության թվային ամփոփագիրը, որի զննման արդյունքում էլ հետազայում որոշվում է այն բլոկչեյնում ընդգրկել կամ (անհամատասխանություն ի հայտ գալու պարագայում) վերանայել:

ՀՀ բնակֆոնդի կառավարման ասպարեզում բլոկչեյնի ներդրման ակնկալվող արդյունքները: Հիմք ընդունելով բլոկչեյնի տեխնոլոգիական հնարավորությունները²¹⁰

209 Spielman, A., Blockchain: Digitally Rebuilding the Real Estate Industry, Massachusetts Institute of Technology (MIT), 2016, p. 30-38.

210 Dijkstra, M., Blockchain: Towards disruption in the real estate sector. An Exploration on the Impact of Blockchain Technology in the Real Estate Management Process, University of Delft, Delft, 2017, p. 39-43.

և ՀՀ-ում բնակֆոնդի կառավարման համակարգի ներկայիս թերությունները՝ կարելի է առանձնացնել բնակֆոնդի կառավարման ասպարեզում բլոկչեյնի կիրառության չորս խոստումնալից հնարավորություն՝

1. բնակարանների թվային գրանցումների (անձնագրերի) ձևավորում,
2. բնակֆոնդի կառավարման գործընթացների վերափոխում,
3. բնակֆոնդի կառավարման համակարգի ինֆորմացիոն թափանցիկության բարձրացում,
4. խելացի պայմանագրերի ներդրում:

1. *Բնակարանների թվային գրանցումների (անձնագրերի) ձևավորում:* Բլոկչեյնը կարող է կիրառվել ցանկացած տիպի ակտիվի թվայնացման համար: Բնակֆոնդի կառավարման համատեքստում բնակարանի ողջ կենսապարբերաշրջանը կարող է թվայնացվել և փոխանցվել բլոկչեյնին: Այդ համակարգում յուրաքայր բնակարան կունենա թվային անձնագիր, որը կպարունակի այդ ակտիվի վերաբերյալ ողջ ինֆորմացիան՝ ներառյալ նախորդ սեփականատերերի տվյալները, նախորդ վաճառքների/վարձակալությունների օրերը/տևողություններն ու գները, գրավի առարկա լինելու հետ կապված տեղեկությունը, բնակարանի տեխնիկական վիճակի մասին ինֆորմացիան և այլն:

Հարկ է նշել, որ բլոկչեյնի կիրառությամբ բնակարանների թվայնացման կիրառական փորձերը և թեմային վերաբերող գիտական աշխատությունները, չնայած տեխնոլոգիայի խոստումնալից լինելուն, սակավաթիվ են: Սպիլմանի աշխատանքն²¹¹, օրինակ, ուղղված է ԱՄՆ-ի Դեյվիդսոն շրջանի բնակարանների՝ բլոկչեյնի ստեղծման հիմքի վրա թվայնացման խնդրին: Նիդեռլանդներում արդեն իսկ ներդրվել է բավականին զարգացած (բլոկչեյնի հետ առնչություն չունեցող) ավանդական թվային համակարգ՝ *Կադաստեր* անունով, որը, ի համեմատություն նման այլ նախագծերի, հաջողությամբ լուծել է իր առջև դրված խնդիրները: Սակայն հետագայում միայն պարզվել է, որ հիշյալ համակարգը պարունակում է տեղեկատվական անվտանգության ու ինֆորմացիոն արտահոսքի լուրջ ռիսկեր: Անշարժ գույքի շուկայի գործառնությունների թվայնացման՝ բլոկչեյնի վրա հիմնված մեկ այլ փորձարարական ծրագիր է իրականացվել ԱՄՆ Իլինոյս նահանգի Քուկ շրջանում: Նախագիծը կյանքի է կոչվել *velox.RE* կազմակերպության կողմից, որի հիմնադիրը Միջազգային Բլոկչեյն Անշարժ Գույքի Անցիցիայի ղեկավարն է: Ծրագրի իրագործման արդյունքում շահառու խմբերը հանգել են հետևյալ եզրակացություններին՝

1. բլոկչեյնի ներդրումը անշարժ գույքի հետ կապված գործառնությունների իրականացումը դարձնում է ավելի անվտանգ, ավելի ճշգրիտ ու պարզ,
2. բլոկչեյնի՝ անշարժ գույքի շուկայում ներդրմանը խոչընդոտում են մի շարք հանգամանքներ, որոնցից ամենանշանակալին շուկայի մասնակիցների դիմադրությունն է կառավարման համակարգի հնարավոր վերափոխումներին, որոնք անհրաժեշտ են համակարգը բլոկչեյնի ներդրմանը նախապատրաստելու համար²¹²:

Բլոկչեյն համակարգում բնակարանի կամ ցանկացած այլ անշարժ գույք հանդիսացող ակտիվի թվայնացման հիմքը դիտարկվող օբյեկտի վերաբերյալ ողջ ինֆորմացիան կրող կտրոնի (անգլ.՝ token) մշակումն է: Օրինակ՝ հոլանդական ABN AMRO բանկը իրականացրել է Torch անունը կրող փորձարարական այդպիսի մի

211 **Spielman, A.**, Blockchain: Digitally Rebuilding the Real Estate Industry, Massachusetts Institute of Technology (MIT), 2016, p. 30-38.

212 **Yarbrough, K.**, Blockchain pilot program - Final Report, Illinois: Cook County Recorder of Deeds, 2017.

Նախագիծ²¹³: Վերջինս, հիմնված լինելով թույլատրվական տիպի բլոկչեյնի վրա, հնարավորություն էր ընձեռում բանկի՝ անշարժ գույքի շուկայում կոմերցիոն գործունեություն ծավալող հաճախորդներին մուտքագրելու բանկի կողմից ֆինանսավորվելիք վարձակալությունների պայմանագրերը համապատասխան հավելվածում: Հաջորդիվ բանկի համապատասխան աշխատակիցը վավերացնում էր պայմանագիրը: Եթե անշարժ գույքը գնահատելու անհրաժեշտություն էր առաջանում, բանկի աշխատակիցը կարող էր հավելվածի օգնությամբ անհրաժեշտ տեղեկություններն ուղղակիորեն փոխանցել անշարժ գույքի գնահատմամբ զբաղվող կազմակերպությանը: Գնահատման գեկույցը հետագայում հասանելի էր դառնում թե՛ բանկին, թե՛ հաճախորդին: Հարկ է նշել, որ Torch հավելվածը թույլ էր տալիս դիտարկվող օբյեկտի մասին ինֆորմացիա ստանալ նաև Հոդային ռեգիստրից և Առևտրի պալատից: Ի հավելումս՝ բանկերի կողմից անշարժ գույքի գնահատումն ու ֆինանսավորումը վերահսկող պետական մարմինը (Նիդեռլանդների դեպքում՝ Կենտրոնական Բանկը) վերահսկողական գործառույթներ կատարելիս ևս օգտվում էր հավելվածից:

Այսպիսով՝ ակներև է, որ բլոկչեյնի վրա հիմնված բնակարանների թվայնացման համակարգը ներդրման պարագայում ներկայիս այլընտրանքների համեմատ ավելի մեծ հնարավորություններ կընձեռի՝ հաշվի առնելով դրա ճկունությունն ու արդյունավետությունը: Չնայած փորձարարական նախագծերի իրականացման ժամանակ ի հայտ եկած տարաբնույթ մարտահրավերներին՝ բնակարանի ստանդարտ թվային անձնագրի մշակումը (որը կպարունակի տվյալ օբյեկտի հասցեն, ֆիզիկական պարամետրերը, իրականացված շինարարական աշխատանքների պատմությունը, Նախորդ/ներկա սեփականատերերի տվյալները և այլն) թույլ կտա շահառուներից յուրաքանչյուրին տեղաբաշխել ողջ ինֆորմացիան: Ի հավելումս տեղեկատվական ամբողջականության՝ բլոկչեյնն այդպիսով կապահովի նաև տվյալների համադրելիություն բնակֆոնդի կառավարման ոլորտի տարբեր շահառուների միջև:

Платформа IBM представляют собой Java Enterprise приложения, запускаемые на сервере WebSphere application server. Корпорация IBM предлагает два решения для управления и оптимизации бизнес-процессов предприятия, это – **IBM Business Process Manager** и **IBM Blueworks Live**. Оба решения объединены с помощью общего инструмента моделирования и единого репозитория процессов. Оба эти решения представлены на рынке Армении²³⁴.

²³⁴ Официальный представитель корпорации IBM, представительство ISTC (Innovative Solutions and Technologies Center), <https://istc.am>.

Этап 5: Организация процессов изменений.

Это один из трудоемких и длительных этапов проекта. В качестве примера в проекте были выбраны два процесса ИТ-компании:

- процесс разработки программного продукта,
- процесс организации обучения с его помощью.

С этой целью были проведены следующие работы:

- проанализирована корпоративная модель управления бизнес-процессами обоих подразделений (управления персоналом и управления программированием);
- выявлены, а во многих случаях созданы основные документы, циркулирующие в системе документационного обеспечения ИТ- компании;
- проведен анализ документов и их структуризация;
- определены области пересечения информации в различных документах, используемых в процессах, а также способы их оптимизации в системе документооборота ИТ-компании;
- принято решение выбрать кардинальный подход для обеспечения оптимизации основных бизнес-процессов компании;
- описаны с помощью программного обеспечения **IBM® Blueworkslive** существующие в компании бизнес-процессы разработки программного продукта и организации обучения **AS-IS (Как-есть)**;
- предложена оптимизация этих процессов **TO-BE (Как-должно-быть)**, с применением программного обеспечения **IBM® WebSphere Business Modeler 8.5**;
- создана интегрированная системная модель бизнес-процессов компании, позволяющая минимизировать время обработки и стоимость на обработку бизнес-процессов;
- проанализированы проблемы организации реинжиниринга компании;
- разработаны методики проектирования интегрированной системы управления компанией, а также определены механизмы их мониторинга.

При выполнении исследования были применены следующие инструменты и методы: методы структурного и системного анализа; методы моделирования бизнес-процессов; методы гибких (Agile) технологий управления проектами; программное обеспечение IBM®Blueworkslive и IBM®WebSphere Business Modeler 8.5.5.

Этап 6: Оценка эффективности проведенных изменений.

Для анализа экономической эффективности необходимо сравнить существующую и внедряемую информационную систему, обновленные технологические процессы, проанализировать необходимые для внедрения новой системы затраты. Сравнение эффективности необходимо осуществлять как по количественным, так и по качественным показателям. Новая стратегия развития компании должна отражать те изменения, которые в данный момент осуществляет компания.

Результаты исследования. Внедрение BPMS (BPM-систем) позволило организации повысить прозрачность и улучшить видение процессов, их слабых и сильных сторон, дублирования процессов, несоответствия существующих процессов и сегодняшней стратегии предприятия. На примере внедрения проекта по оптимизации бизнес- процессов, вызвавшего структурные изменения и реорганизацию ИТ- компании, были подтверждены основная гипотеза и выдвинутое в данной диссертации предположение о том, что эффективность деятельности предприятия повышается благодаря внедрению процессного подхода. На примере оптимизации бизнес-модели одного из проектов подразделения программирования, а именно проекта по созданию Web-сайта Интернет- магазина, было продемонстрировано, что в результате пересмотра и оптимизации бизнес-процессов компания добилась следующих результатов:

- скорость выполнения операций увеличилась в 3 раза;

- повысилась прибыль (cost-benefit анализ) с 16% до 23%;
- уменьшилась себестоимость продукта на 5 %;
- улучшилось качество работ;
- повысилась удовлетворенность клиента;
- повысилась мотивация и лояльность сотрудников.

Результаты оценки эффективности данного пилотного проекта и разработанную методику внедрения процессного подхода можно экстраполировать и распространить на всю деятельность компании и ощутимо усилить конкурентоспособность предприятия. Ведь эффект от внедрения систем управления бизнес-процессами (BPM) и систем электронного документооборота появляется сразу после перевода системы в эксплуатацию. Речь идет как о чисто экономических эффектах, таких как: сокращение общей длительности и трудоемкости бизнес-процессов, сокращение затрат на обработку одного документа, так и об инфраструктурных эффектах, т.е. повышение контролируемости и отслеживаемости выдаваемых поручений, глубинного понимания и четкого соблюдения внутренних регламентов, снижение вероятности наступления управленческих и финансовых рисков. Естественно, чем дольше на предприятии используется система управления бизнес-процессами, тем более значительными становятся экономические и управленческие эффекты. Но стоит понимать, что для поддержания уровня этих эффектов система должна полноценно сопровождаться, а для их увеличения – развиваться, охватывать все новые и новые аспекты бизнес-процессов предприятия. При длительном использовании системы полностью меняется стиль управления и создается новая корпоративная культура предприятия, при которой даже новые сотрудники легче обучаются и внедряются в трудовой процесс и совершают меньше ошибок на начальном этапе работы. Более того, благодаря появлению новых инструментов контроля, оптимизация и автоматизация процессов позволяют повысить не только эффективность предприятия, но также повысить личную эффективность каждого сотрудника. Новые встроенные в BPMS инструменты контроля и отчетности позволяют отследить как ключевые показатели деятельности структурных подразделений, так и ключевые показатели личной эффективности.²³⁵ При грамотно выстроенной системе мотивации сотрудников можно получить ощутимые результаты.

*«Длительное использование систем управления бизнес-процессами способствует приходу новой корпоративной культуры и появлению нового стиля управления. Система становится одним из основных инструментов как вертикальных, так и горизонтальных коммуникаций. Это позволяет делать эти коммуникации устойчивыми и гибкими, исключать из процессов «точки потерь», и в конечном итоге делает организацию более устойчивой к внешним влияниям и позволяет гораздо легче приспосабливаться к изменяющимся экономическим условиям».*²³⁶

Тем не менее анализ рынка BPM показал, что у многих руководителей армянских предприятий существует мнение, что внедрение процессного подхода означает всего лишь детальное описание всех процессов и их реорганизацию. Большинство из них ограничиваются разовыми улучшениями процессов, которые чаще всего проходят в рамках внедрения обязательной сертификации ИСО. После внедрения этих улучшений, руководители компаний обнаруживают, что с течением времени эффективность тех же бизнес-процессов снова начинает снижаться. И это нормальный и естественный процесс, ведь организации, также как и происходящие в них процессы, для постоянного развития, обеспечения и удержания уровня конкурентоспособности нуждаются в постоянной адаптации к изменчивому внешнему окружению. Для достижения этих целей необходимо

²³⁵ Клочков А., КРІ и мотивация персонала. Полный сборник практических инструментов, 2009, Эскимо., стр. 5-8.

²³⁶ Артем Пермяков Журнал "Современные технологии делопроизводства и документооборота", май 2015 г., <http://e.deloprost.ru/>.

постоянно совершенствовать бизнес-процессы компании²³⁷. Анализ ИТ-рынка Армении показал, что одной из основных проблем внедрения процессного подхода в управлении армянскими предприятиями является недостаточная квалификация руководства предприятия. Ведь для достижения успешных результатов менеджер должен не только постоянно совершенствоваться и обладать определенными знаниями и навыками в области управления бизнес-процессами, но и должен уметь мотивировать свой персонал и суметь донести до сотрудников значимость, смысл и последствия конкретных преобразований при предстоящем реинжиниринге компании. Необходимо также отметить, что многие менеджеры не представляют себе, что внедрение процессного подхода требует больших затрат, как материальных, так и временных. Помимо этих причин, существуют и другие проблемы, из-за которых реальное, а не формальное внедрение процессного подхода к управлению не получило серьезного распространения в Армении. Эти причины можно сгруппировать по следующим признакам:

- Руководство не уделяет достаточное внимание проекту, а поручает работы по организации и внедрению BPM-методик персоналу, который, в свою очередь, формально относится к своей роли. Лучшим решением этой проблемы является осознание руководителями того факта, что в первую очередь они должны быть идеологами всех происходящих изменений, и именно они должны внедрять новое мышление на предприятии, решать, какие новые методики и программные продукты необходимо выбрать для внедрения.
- Как уже выше отмечалось – низкая квалификация руководителей. Более того, сами руководители стараются избегать ответственности за подобные проекты и чаще всего перепоручают ответственность за подготовку проекта отделу ИТ, который может отвечать только за техническую, а не за бизнес-составляющую проекта.
- Руководство компании не готово к серьезным переменам и не до конца представляет себе, какие стратегические изменения ожидают предприятие и насколько серьезные материальные и временные затраты потребуются для получения ощутимых результатов. В итоге получается ситуация, когда проект кое-как доводится до завершения, процессы описаны и зарегистрированы, назначены владельцы процессов, однако все это несет формальный характер и не развивается в дальнейшем.
- Система процессов, выделенных для описания, оптимизации и дальнейшей автоматизации, должна соответствовать стратегии, развитию и целям бизнеса. Внедрение процессного подхода не даст никакого ощутимого результата, если бизнес-процессы в организации выделяются субъективно, а система процессов носит формальный характер и не соответствует реальному бизнесу.
- Непонимание связи между неформальной регламентацией проанализированных и оптимизированных процессов и ростом эффективности деятельности предприятия. Сотрудники предприятия, а чаще всего и руководство, не понимают, что реальная регламентация процессов позволяет: анализировать проблемы, потери и узкие места процессов, разрабатывать и реализовывать мероприятия по их улучшению, стандартизировать деятельность компании для обеспечения повторяемости процессов и возможности управления ими. Полученные результаты, позволяют распространить опыт в другие филиалы и передавать его новым сотрудникам, облегчая процесс их интеграции в предприятие и т.д.
- Одна из наиболее распространенных проблем – это проблема недостаточно проработанной системы показателей эффективности. Чаще всего в системе показателей, разработанных компанией, отсутствует ряд серьезных показателей, необходимых для управления бизнес-процессами, или часть показателей

²³⁷ Деминг, «continuous development».

противоречива, что означает, что достижение одного из них исключает достижение другого. К другим проблемам в этой сфере можно отнести тот факт, что многие показатели не соответствуют стратегическим целям компании и не ориентированы на конечный результат. Для поддержки уровней эффективности процессов необходимо создать систему показателей эффективности, которая соответствует действующему бизнесу.

- И самая стандартная проблема, существующая практически во всех предприятиях и во всех сферах деятельности – это неспособность руководства предприятия создать систему постоянного улучшения процессов. Даже если компании удастся внедрить систему, оптимизирующую и совершенствующую процессы компании, часто дальше формальных описаний и дополнений в документах ничего не происходит. Система непрерывных улучшений (continuous Improvement, Деминг) сама по себе не создается, руководство должно создать специальные подходы и механизмы, стимулирующие сотрудников быть заинтересованными в постоянном контроле и улучшении бизнес-процессов. В реальности же руководство компании слишком загружено рутинными проблемами и не хочет заниматься проектами, которые не приносят сиюминутный осязаемый прирост прибыли или сокращение затрат, особенно если раньше в этих компаниях уже был один неудачный опыт неформального внедрения системы менеджмента качества (СМК) ИСО 9001:2000.

Перечислим некоторые выявленные в рамках исследования дополнительные характеристики, которые также усложняют внедрение процессного подхода в армянских предприятиях рынка ИТ. Отметим, что эти проблемы тоже специфичны для многих компаний постсоветского пространства. К ним относятся следующие проблемы:

- Отсутствие прозрачности компаний. Компании, как правило, с трудом предоставляют любую документацию, необходимую для описания бизнес-процессов. Некоторые сотрудники компании и вовсе саботируют процесс предоставления необходимой информации. Несмотря на статистические данные о увеличении роста проектов по внедрению сертификации ИСО, в Армении культура менеджмента качества еще находится в стадии развития.
- Ожидание быстрых результатов. Проект по внедрению оптимизированной и автоматизированной системы по управлению бизнес-процессов занимает довольно продолжительное время, в некоторых случаях до нескольких лет. На результаты проекта часто влияют не только внутренние, но и внешние факторы, которые усложняют процесс измерения эффективности таких проектов. Это в свою очередь негативно влияет на принятие решения о запуске подобных проектов на предприятии.
- Существующая система монополизма. Для армянской экономики характерны различные формы монополизма, поэтому многие предприятия просто не нуждаются в улучшении качества продукции и снижении цен и, как следствие, во внедрении процессного подхода.
- Отсутствие стандартов, методик моделирования в сфере ИТ. Многие предприятия пытаются описать и оптимизировать все бизнес-процессы одновременно, не имея для этого ни соответствующих ресурсов, ни достаточного опыта. Привлечение же специализированных компаний достаточно дорого.
- Сопrotивление и противостояние сотрудников предприятия. Психологически люди не любят и сопротивляются изменениям и нововведениям. Это связано прежде всего со страхом потерять работу после внедрения автоматизированных систем управления бизнес-процессами. Другой распространённой проблемой является нежелание работников после внедрения проектов учиться новым навыкам и выполнять дополнительные функции. Руководители предприятия должны

превентивно реагировать на подобные потенциальные проблемы и грамотно осуществлять такие структурные реорганизации.

В Армении ВРМ-системы потенциально и реально могут быть востребованы в крупных телекоммуникационных, энергетических, транспортных компаниях и в финансовых организациях. Причина в том, что крупный бизнес обладает ресурсами для внедрения подобных проектов, и внедрение процессного подхода в сложный бизнес будет иметь наибольший эффект. У среднего и малого бизнеса ограничены финансовые и кадровые возможности. Хотя надо отметить, что, исходя из международного опыта, именно среди средних предприятий отмечен наибольший процент успешно внедренных ВРМ-проектов. Это объясняется тем, что по сравнению с крупными компаниями, менеджеры среднего звена в среднем бизнесе наиболее интенсивно вовлечены в трудовые процессы и активнее сотрудничают с работниками.

Кроме этого, внедрение процессного подхода наиболее целесообразно в так называемых В2С²³⁸-отраслях, там, где существует большая клиентская база и где необходимо обеспечить отслеживаемость и прозрачность рабочей, сквозной цепочки:

Клиент → Фронт-офис → Бэк-офис → Клиент.

Другой потенциальной областью могут выступать и государственные структуры, так называемое G2C²³⁹-взаимодействие.

Заключение. На развитие рынка ВРМ-решений влияют и многие другие факторы. Это и продолжающийся экономический кризис, осложненный целым рядом политических решений, и нестабильная ситуация на границах Армении. Другими факторами являются распространенная практика сокращения затрат на ИТ во времена кризиса, высокая стоимость лицензий на иностранные программные продукты, сложности обоснования расчетов возврата инвестиций. Тем не менее надо отметить, что, как известно, любое ограничение ресурсов приводит к увеличению конкуренции, и в этих условиях средства повышения эффективности бизнеса, такие как ВРМ, становятся особенно востребованными. Дополнительно, можно предположить, что создание в вузах Армении новой магистерской программы по подготовке ВРМ-менеджеров в свою очередь поможет стимулировать интерес к таким проектам, благодаря интеграции выпускников этих факультетов на рынок труда. Желательно дифференцировать преподавание ВРМ-дисциплин. В заключение, к сожалению, стоит отметить, что на сегодняшний день в Армении, в отличие от российских и зарубежных компаний, практически не существует предприятий, успешно внедривших процессный подход и тем самым повысивших свою эффективность. Остается надеяться, что в будущем процессный подход к управлению предприятием получит широкое распространение и в нашей стране. И как обычно показывает мировая практика, внедрение процессного подхода начнется именно с ИТ-компаний.

²³⁸ **В2С** (бизнес-для-потребителя) — термин, обозначающий коммерческие взаимоотношения между организацией (Business) и частным, так называемым "конечным" потребителем (Consumer). Потребитель покупает товар с целью удовлетворения индивидуальных потребностей. http://www.marketch.ru/marketing_dictionary/marketing_terms_b/business-to-consumer/.

²³⁹ **G2C** (сокр. от Government-to-Citizen — правительство для гражданина) — это категория отношений между правительством и гражданами посредством использования электронных сервисов. <https://www.financialguide.ru/encyclopedia/g2c>.

ԲԻԶՆԵՍ ԳՈՐԾՆԹԱՑՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱԳԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԱՇՈՏ ՄԱՐԿՈՍՅԱՆ

*ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի
կառավարման և գործարարության ամբիոնի պրոֆեսոր,
տնտեսագիտության դոկտոր,
բ.Երևան, Հայաստանի Հանրապետություն*

ՄԱՐԻՆԵ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

*Եվրասիա միջազգային համալսարանի հայցորդ,
բ.Երևան, Հայաստանի Հանրապետություն*

Սույն հոդվածի հիմնական նպատակն է Հայաստանում տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ընկերություններում գործընթացային կառավարման հետ կապված իրավիճակի վերլուծությունը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բիզնես գործընթացների կառավարումը կամ «գործընթացային մոտեցումը» այսօր հանդիսանում է կազմակերպությունների առավել արդյունավետ կառավարման մեթոդներից մեկը, օգտագործելով տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ընկերությունում գործընթացային կառավարման ներդրման նախագծի օրինակը, նկարագրվում և վերլուծվում են այդ նախագծի իրականացման և ներդրման առանձնահատկությունները և հիմնական փուլերը:

Հոդվածում մանրամասնորեն վերլուծվում և նկարագրվում են գործընթացային կառավարման ներդրման նախագծում կիրառվող այն տարբեր գործիքներ և ավտոմատացման ծրագրային փաթեթները, ինչպիսիք են ՚տեքստային, աղյուսակային և գրաֆիկական խմբագրիչները, վերլուծական համակարգերը և բիզնես գործընթացների ավտոմատացման համակարգերը: Մանրամասնորեն վերլուծվում է նաև նախագծի իրականացման համար օգտագործվող BPM մեթոդի կիրառման ամենատարածված լուծումներից մեկը՝ IBM WebSphere Business Modeler 8.5.5 համակարգը:

Բացի այդ, մանրամասնորեն վերլուծվել, դասակարգվել և համակարգվել են այդ նախագծի ներդրման արդյունքները, և ներդրման հետ կապված խնդիրները: Առաջարկվել են այդ խնդիրների լուծման ուղիները: Սույն հետազոտության հիմնական եզրակացությունն այն է, որ գործընթացային մոտեցման ներդրումը խրախուսում է ձեռնարկության արդյունավետությունը:

Բանալի բառեր՝ բիզնես-գործընթաց, գործընթացային մոտեցում, կատարողականների հիմնական ցուցանիշները, BPMS – բիզնես գործընթացների կառավարման համակարգ, BPM – բիզնես գործընթացների կառավարում, կառուցվածքային եւ համակարգային վերլուծություն, մոդելավորում, ճկուն (Agile) տեխնոլոգիաներ, նախագիծ, նախագծերի կառավարում:

THE SPECIFICS AND PECULIARITIES OF BUSINESS PROCESS MANAGEMENT IN ARMENIA

ASHOT MARKOSYAN

*Yerevan State University, Professor of Chair of Business and Management,
Faculty of Economics and Management, Doctor of Economics,
Professor, Yerevan, Republic of Armenia*

MARINE GHARAMANYAN

*PhD Student of Eurasia International University,
Yerevan, Republic of Armenia*

The main purpose of this article is to analyze the situation, related to the implementation of process management in IT companies in Armenia. Nowadays the business process management or the “process approach” is one of the most popular company management methodologies. Using the example of a project to introduce a process approach to managing an IT company the specifics and stages of implementing such a project are analyzed.

The article discusses in detail various tools and means for describing and automating business processes, such as text, spreadsheet and image editors, analytical systems and enterprise business processes automating systems.

The article also reviews IBM WebSphere Business Modeler 8.5.5 software, which is one of the most well-known solutions for implementing BPM methodologies. In addition, the results of the project implementation were analyzed in detail, the problems associated with the implementation of the process approach to the enterprises management were classified and systematized, and ways to solve these problems were proposed. The main conclusion of this study is that the introduction of the process approach increases the efficiency of the enterprise.

Keywords: *business-process, process approach, key performance indicators, BPMS – business process management system, BPM – business process management, structured and system analysis, modeling, Agile technology, project, project management.*

**ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԵԻ «ՃԳՆԱԺԱՄԸ» ԵՎ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ
ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԵԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ***

ՀՏԴ 336.1(479.25)

ԱՇՈՏ ՄԱՐԿՈՍՅԱՆ

*ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի
կառավարման և գործարարության ամբիոնի պրոֆեսոր,
տնտեսագիտության դոկտոր,
բ.Երևան, Հայաստանի Հանրապետություն
ashotmarkos@rambler.ru*

ԷԼԵՈՆՈՐԱ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

*ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի ֆինանսահաշվային
ամբիոնի ասիստենտ, տնտեսագիտության թեկնածու,
բ.Երևան, Հայաստանի Հանրապետություն
meleonora06@rambler.ru*

Ցանկացած երկրի սոցիալ-տնտեսական պարզացման և արտաքին տնտեսական հարաբերությունների կառուցման գործում Էական նշանակություն ունի արտաքին պետական պարտքի կառավարումը: Հատկապես վերջին 20-30 տարիների ընթացքում համաշխարհային տնտեսության պարզացման հիմնական միտումներից մեկը դարձել է համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ-ի) նկատմամբ արտաքին պետական պարտքի առաջանցիկ աճը: Ըստ որում, վերջին տարիներին բավմաթիվ երկրների արտաքին պետական պարտքի աճի տեմպերը գերազանցել են ՀՆԱ-ի աճի տեմպերին: Իր հերթին, արտաքին պետական պարտքի ձևավորումն ունի սահմաններ (սահմանափակումներ), ինչը պահանջում է փոխառու միջոցների արդյունավետ օգտագործում: Այդ տեսանկյունից բացառություն չէ նաև Հայաստանի Հանրապետությունը, որի արտաքին պետական պարտքը մոտ է ՀՆԱ-ի նկատմամբ օրենսդրությամբ սահմանված առավելագույն շեմին և նոր պարտքի ներգրավման համար անհրաժեշտ է առաջին հերթին լուծել արտաքին պարտքի կառավարման արդյունավետության հիմնախնդիրը: Վերջինս ենթադրում է, որ արտաքին պետական պարտքի աճի տեմպերը պետք է ավելի դանդաղ լինեն, քան երկրի հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներինը, ինչպիսիք են՝ ՀՆԱ-ի, պաղպղակության, զուտ արտահանման և մի շարք այլ մակրո-ցուցանիշների աճի տեմպերը:

Հեղինակները փորձել են 2000-2018թթ. ժամանակահատվածի համար որոշակի մեթոդաբանության կիրառմամբ գնահատել ՀՀ արտաքին պետական պարտքի արդյունավետությունը:

Բանալի բառեր՝ արտաքին պետական պարտք, արտաքին պետական պարտքի արդյունավետության, համեմատական արդյունավետության գործակից, վճարային հաշվեկշիռ, ՀՆԱ-ի հավելած, պաղպղակության հավելած, զուտ արտահանման հավելած:

* Հոդվածը ներկայացվել է 28.04.2019թ., գրախոսվել՝ 24.05.2019թ., տպագրության ընդունվել՝ 17.06.2019թ.:

Պետական պարտքի «ճգնաժամը»: Ժամանակակից շուկայական տնտեսության պայմաններում դժվար է պատկերացնել որևէ երկրի սոցիալ-տնտեսական զարգացումն առանց արտաքին պետական պարտքի ներգրավման: Ավելին, հատկապես վերջին 20-30 տարիների ընթացքում ինչպես համաշխարհային, այնպես էլ ազգային տնտեսությունների առաջընթացի անհրաժեշտ գործիքներից մեկը (հաճախ նաև՝ ամենակարևորը) դարձել է փոխատվական կապիտալը: Զանի որ ֆինանսական միջոցները չեն կարող միաժամանակ մատչելի լինել տնտեսավարող բոլոր սուբյեկտների համար, դրանցից շատերը, ցանկանալով ապահովել անխափան ֆինանսատնտեսական գործունեություն, այդ միջոցները ձեռք են բերում այլ աղբյուրներից ներգրավման ճանապարհով՝ առաջացնելով փոխատվական հարաբերություններ: Փողի՝ կուտակման և որպես վճարման միջոց գործառույթների զարգացումը հանգեցրեց ֆինանսական միջոցների համակենտրոնացմանն ու վերաբաշխմանն այդ միջոցների կարիքն ունեցող ինչպես գործարարությամբ զբաղվող սուբյեկտների, այնպես էլ առանձին տնտեսական միությունների ու տարածաշրջանների միջև: Ասվածի ապացույցն է այն իրողությունը, որ զարգացած երկրները կամ նրանց տնտեսական միավորումները (օրինակ՝ ՏՀԶԿ-ն, Եվրամիությունը) ֆինանսավորում են զարգացող երկրների տնտեսությունները:

Փոխատվական կապիտալի միջազգային շուկայի շրջանակներում որևէ երկրի կառավարությունը, բանկերը կամ մասնավոր ընկերությունները, ինչպես նաև միջազգային ֆինանսական կազմակերպությունները միջոցներ են տրամադրում այլ երկրի կառավարությանը, բանկերին ու մասնավոր ընկերություններին: Հաճախ երկիրը հանդես է գալիս երկու դերում միաժամանակ (և՛ որպես վարկառու, և՛ որպես վարկատու), քանի որ միջազգային փոխառությունների շարժը չի կարող միակողմանի բնույթ ունենալ:

Միջազգային վարկերի ու փոխառությունների ներգրավումը որոշակի պարտավորություններ է առաջացնում ոչ միայն վարկատուների, այլև տվյալ երկրի համար՝ դրանք առավել արդյունավետ օգտագործելու առումով: Հայտնի է, որ նշված փոխատվական միջոցները, որպես կանոն, նպատակային են և նախատեսված են որոշակի ոլորտի (ոլորտների) և առանձին ծրագրերի իրականացման համար: Որպեսզի տվյալ երկիրը կարողանա օգուտ քաղել օտարերկրյա փոխառություններից, բացի նպատակայնության ապահովումից, անհրաժեշտ է դրանք հնարավորին չափ արդյունավետ օգտագործել թե՛ ֆինանսական միջոցների տնտեսման և թե՛ արտասահմանյան փորձի ու տեխնոլոգիաների ներդրման իմաստով: Անհրաժեշտ է հիշել, որ ապագայում առաջընթաց ապահովելու համար պետության գերխնդիրն է հետագա սերունդներին թողնել ոչ թե անցած ժամանակաշրջանի կուտակած պարտավորությունները, այլ կայուն տնտեսական հիմք (ներուժ), որի վրա հնարավոր կլինի ստեղծել առողջ ու արագ զարգացող արդյունավետ տնտեսություն:

Երկրների կառավարությունները առողջապահության, կրթության, գիտության, բնակչության սոցիալական ապահովության ու պաշտպանության, սոցիալական ու արտադրական ենթակառուցվածքների, ազգային անվտանգության ու պաշտպանության ոլորտներում ծախսեր կատարելու և այլ ծառայություններ մատուցելու առաքելություն ունեն: Այդպիսի ծրագրերի իրականացման համար երկրների (այդ թվում՝ ամենահարուստ) կառավարությունները ստիպված են փոխառու միջոցներ ներգրավել, քանի որ սեփական գանձապետական համակարգում հավաքագրված գումարները միշտ չէ, որ բավարարում են: Դրա պատճառներից մեկը կարող է լինել հարկային եկամուտների հավաքագրումը կանխատեսվածից քիչ չափով, կամ փոխառու միջոցներով կառավարությունը կարող է ծածկել բյուջեի ժամանակավոր դեֆիցիտը (պակասուրդը)՝ առանց սպառման ծախսերի կրճատման: Երբեմն կառավարությունները բախվում են ինչպես տնտեսության օպտիմալ ճյուղային, այնպես էլ ժողովրդագրական կառուցվածքների ձևավորման դժվարությունների հետ,

որոնք հաճախ ծագում են, երբ տվյալ երկրի տնտեսության կառուցվածքը չի համապատասխանում ներքին ու արտաքին շուկաների պահանջներին, կամ երբ երկրի բնակչությունը ծերանում է, ուստի և՛ կենսաբոցակների վճարման, առողջապահական ու սոցիալական բնույթի մյուս ծախսերն աճում են ավելի արագ տեմպերով, քան պետության դրամական եկամուտներն ու ՀՆԱ-ն:

Պետք է նկատել, որ փոխառու ֆինանսական միջոցների ձեռքբերումը հատկապես արդարացվում է տնտեսական աճի անկման կամ դանդաղեցման պայմաններում, երբ ավելի ձեռնադուր է փոխառու ֆինանսական միջոցներ ներգրավել, քան բարձրացնել տնտեսավարող սուբյեկտների ու քաղաքացիների հարկային բեռը: Կառավարության կողմից պետական պարտքի ներգրավման համար էականն այն է, որ կառավարությունը պետք է ի վիճակի լինի ձևավորելու առաջնային հավելյալ եկամուտներ (մասնավորապես՝ հարկային եկամուտները պետք է գերազանցեն կառավարության ծրագրերի իրականացման համար պարտքով վերցված գումարները), որոնք կբավարարեն սահմանված ժամկետներում (համապատասխան ժամանակացույցով) գումարները հետ վերադարձնելու համար:

Երկրի պետական պարտքը կարող է նպաստել ապագա տնտեսական աճին, սակայն միայն այն դեպքում, երբ խստորեն ապահովվում է ֆինանսական կարգապահությունը և նպատակ է դրվում արդյունավետ կառավարել այն: Անընդմեջ ավելացող պետական բյուջեի պակասուրդը ենթադրում է, որ վատագույն դեպքում այդպիսի բյուջետային քաղաքականությունը կարող է հանգեցնել ֆինանսական դեֆոլտի, իսկ լավագույն դեպքում արտաքին պետական պարտքի ֆինանսավորման ձևազևիղն ապագա սերունդների համար կարող է բեռ դառնալու:

Նույնիսկ Եվրագոտու շատ երկրներում (որոնք ունեն բնակչության բարձր կենսամակարդակ և առողջ տնտեսություն) պետական պարտքի ծավալներն ավելացան 2008 թվականի համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո, երբ հարկաբյուջետային անհավասարակշռությունը կայունացնելու համար անհրաժեշտ էին բյուջետային խնայողությունների կտրուկ միջոցառումներ, որոնք միևնույն ժամանակ ուղեկցվեցին կառուցվածքային բարեփոխումներով:

Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամից մեկ տասնամյակ անց պետք է ենթադրել, որ բազմաթիվ երկրների կառավարություններ դասեր են քաղել Նախկին սխալներից, սակայն միջազգային կազմակերպությունների (ՎՇԵԲ, ԱՄՅ, ՀԲ) տվյալներն այլ բանի մասին են վկայում: Այդ ժամանակից ի վեր շատ զարգացած երկրներում զգալիորեն ավելացել է պետական պարտքը, սակայն ավելի անհանգստացնողն այն է, որ, օրինակ, ԱՄՅ-ի մասնագետների կանխատեսմամբ զարգացող, ցածր եկամուտներով 59 երկրներից 24-ում ներկայումս առկա է պարտքային ճգնաժամ կամ այդպիսի ճգնաժամի հավանականությունը շատ բարձր է²⁴⁰: Եվ եթե այդպիսի կանխատեսումներն իրականանան, ապա, ինչպես միշտ, ամենաշատը տուժելու են այդ երկրների քաղաքացիների խոցելի ու անպաշտպան խմբերն ու շերտերը:

Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո՝ 2008-2012 թվականներին, նկատելիորեն ավելացավ նաև ամենազարգացած երկրների տնտեսական միության՝ ՏՀԿ երկրների արտաքին պետական պարտքը, որի աճի տեմպերը դանդաղել են վերջին տարիների ընթացքում: Առանձին գնահատականների համաձայն՝ ՏՀԿ անդամ երկրների կառավարությունները ինչպես 2017թ.-ին, այնպես էլ 2018թ.-ին տարբեր ֆինանսական շուկաներից ներգրավել են շուրջ 10.5 տրիլիոն ԱՄՆ դոլարի չափով փոխառություններ: Ընդհանուր առմամբ, այդ երկրների ընդհանուր պարտքը 2018թ.-ին կազմել է շուրջ 45 տրիլիոն ԱՄՆ դոլար, 2017թ.-ին՝

²⁴⁰ "Percentage of public debt to GDP around the world 2018", ինտերնետային հղումը՝ <https://www.gfmag.com/global-data/economic-data/public-debt-percentage-gdp>.

շուրջ 43.6 տրիլիոն ԱՄՆ դոլար, մինչդեռ 2008թ.-ին այն կազմում էր 25 տրիլիոն ԱՄՆ դոլար²⁴¹:

Նշված օրինակները վկայում են, որ անգամ արդյունաբերական զարգացած երկրներում հարկաբյուջետային քաղաքականության ընդլայնման կարևորագույն գործիքներից շարունակում է մնալ փոխառու ֆինանսական միջոցների ներգրավումը, ինչը հանգեցնում է պետական (կամ կենտրոնական կառավարությունների) պարտքի ավելացմանը: Ցածր տոկոսադրույթները և շուկայական կայուն պայմանները նույնիսկ ՏՀՀԿ երկրներում ստեղծել են «անկախ թողարկողների համար խթանող ֆինանսավորման միջավայր»²⁴², ինչն իր հերթին, կառավարություններին հնարավորություն է տալիս ցածր գնով ֆինանսավորել փոխառությունների պահանջները:

ԱՄՅ-ի վերլուծությունները վկայում են, որ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո ընկած ժամանակահատվածում ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող երկրներում պետական պարտք/ՀՆԱ հարաբերությունը մեծացել է՝ հասնելով անսխառեպ բարձր ցուցանիշների: Եվ քանի որ գրեթե բոլոր երկրներում դրամավարկային պայմանները խստացվում են, ուստի և պարտքի բեռի կարգավորման գործիքակազմի տրոստում էլ ավելի է կարևորվում:

Դիտարկելով զարգացած երկրներում պետական պարտքի չափերի շարժը (դինամիկան)՝ կարող ենք նկատել այնպիսի օրինաչափություն, որ զարգացած երկրների մեծ մասում պետական պարտք/ՀՆԱ հարաբերությունը նշանակալի է, իսկ մի շարք երկրներում այն գերազանցում է 100%-ը: Այսպես, ԱՄՆ-ում պետական պարտք/ՀՆԱ հարաբերությունը 2012թ.-ի 103.4%-ից 2018թ.-ին հասել է 106.1%-ի, Բելգիայում՝ համապատասխանաբար՝ 104.3%-ից 101.2%-ի, Իտալիայում՝ 123.4%-ից 130.3%-ի, Սինգապուրում՝ 105.1%-ից 112.8%-ի, Ֆրանսիայում՝ 90.6%-ից 96.7%-ի, Միացյալ Թագավորությունում՝ 84.1%-ից 87.4%-ի, Ֆինլանդիայում՝ 53.9%-ից 60.5%-ի (իսկ Գերմանիայում այն նվազել է՝ 79.9%-ից հասնելով 59.8%-ի): Պետական պարտք/ՀՆԱ ամենաբարձր ցուցանիշը, ինչպես 2012թ.-ին, այնպես էլ 2018թ.-ին, եղել է ճապոնիայում՝ 2012թ.-ին կազմելով 229.1%, իսկ 2018թ.-ին՝ 238.2%:

Պետական պարտք/ՀՆԱ հարաբերության ամենացածր ցուցանիշը գրանցվել է Յունկոնգում, որտեղ այն 2012թ.-ին կազմում էր 0.545%, իսկ 2018թ.-ին՝ 0.052%, իսկ մյուս ամենացածր ցուցանիշը Բրունեյ-Դուրասսավամինն է, համապատասխանաբար՝ 2.1% և 2.4%:

Արաբական Միացյալ Էմիրություններում պետական պարտք/ՀՆԱ հարաբերության մեծությունը 2012թ.-ին կազմել է 16.9% և 2018թ.-ին՝ 17.8%: Այդ երկրի հետ համադրելի ցուցանիշներ են արձանագրվել Ռուսաստանի Դաշնությունում՝ համապատասխանաբար 11.9% և 15.3%²⁴³:

Ինչ վերաբերում է ԵԱՏՄ մյուս երկրներում դիտարկվող ցուցանիշի մեծությանը, ապա միևնույն աղբյուրը նշում է, որ պետական պարտք/ ՀՆԱ հարաբերությունը Բելառուսում 2012թ.-ին կազմում էր 36.9%, իսկ 2018թ.-ին՝ 55.9%, Ղազախստանում՝ համապատասխանաբար՝ 12.1% և 17.8%, Ղրղզստանում՝ 48.9% և 54.9%: Իսկ Հայաստանի հարևան երկրներում առկա է հետևյալ պատկերը. Թուրքիայում պետական պարտք/ՀՆԱ հարաբերության մեծությունը 2012թ.-ին կազմել է 32.7%, իսկ 2018թ.-ին՝ 32.3%, Իրանի Իսլամական Հանրապետությունում՝ 12.1% և 44.2%, Վրաստանում՝ 34.8% և 43.9%, իսկ Ադրբեյջանում՝ 13.7% և 48.3%²⁴⁴:

²⁴¹ Նույն տեղում:

²⁴² OECD Sovereign Borrowing Outlook 2018, <http://www.oecd.org/governance/oecd-sovereign-borrowing-outlook-23060476.htm>.

²⁴³ Տե՛ս Percentage of public debt to GDP աղյուսակը. <https://www.gfmag.com/global-data/economic-data/public-debt-percentage-gdp>.

²⁴⁴ Նույն տեղում:

Վերը շարադրվածի տեսանկյունից կարևորագույն հարցն այն է, թե ինչպես է, օրինակ, ճապոնիայի նման երկիրը կառավարում իր պետական պարտքը, որը գերազանցում է ՀՆԱ-ի մեծությունն ավելի քան երկու անգամ, մինչդեռ Ուկրաինան, որտեղ 2015թ.-ին պետական պարտքի մեծության հարաբերությունը ՀՆԱ-ին կազմում էր շուրջ 30%, հայտնվել էր ֆինանսական դեֆոլտի եզրին: Թեև պետական պարտքի մեծությունը նշանակություն ունի, սակայն շատ ավելի կարևոր է պարտքը սպասարկելու (պարտքի դիմաց վճարումներ կատարելու) երկրի ունակությունը: ճապոնիայի պարտքի զգալի մասը ներքին է, և եթե երկրների մեծ մասը պարտք են վերցնում հիմնականում օտարերկրյա պարտատերերից, ապա ճապոնիայի դեպքում պետական պարտքը ձևավորվում է «ծագող արևի երկրի» քաղաքացիների փոխատվություններից, ինչն էլ զգալիորեն նվազեցնում է չվճարման (կամ դեֆոլտի) ռիսկը: Երբ պարտքը վերահսկվում է օտարերկրյա պետությունների, պարտատերերի կողմից (օրինակ, Ուկրաինայի դեպքում. այդ երկիրը չէր կարողանում կատարել 3 միլիարդ ԱՄՆ դոլարի պարտատոմսերի վերաբերյալ պարտավորությունները), կարող է զգալի լարվածություն առաջանալ պարտավորությունների կատարման իմաստով և դրանով իսկ նկատելիորեն վնասել երկրի ֆինանսական ու միջազգային վարկանիշներին:

Հայաստանի Հանրապետության արտաքին պետական պարտքը և դրա արդյունավետության գնահատումը: Աղյուսակ 1-ում բերված են ՀՀ արտաքին պետական պարտքի մեծությունները և դրանց կառուցվածքը 2000-2018թթ. ժամանակահատվածում: Աղյուսակ 1-ի տվյալներից հետևում է, որ 2018թ.-ին 2000թ.-ի համեմատությամբ ՀՀ արտաքին պետական պարտքն ավելացել է ավելի քան 6.5 անգամ:

ՀՀ արտաքին պետական պարտքի կազմում ավելի արագ տեմպերով ավելացել է ՀՀ կառավարության պարտքը, ինչի հետևանքով նրա բաժինը արտաքին պետական պարտքի կառուցվածքում 2000թ.-ի 75.7%-ից 2018թ.-ին հասել է 90%-ի, և, համապատասխանաբար, նվազել է ՀՀ կենտրոնական բանկի պարտքը (թեև այն բացարձակ արժեքով 2000-2018թթ. ավելացել է ավելի քան 3 անգամ, սակայն արտաքին պետական պարտքի կազմում նրա բաժինը 2000թ.-ի 20.4%-ից 2018թ.-ին հասել է 9.9%-ի: ՀՀ արտաքին պետական պարտքի կտրուկ աճ է արձանագրվել 2009թ.-ին, երբ նախորդ տարվա համեմատությամբ արտաքին պետական պարտքի մեծությունը գրեթե կրկնապատկվեց: Այդ հանգամանքը կապված էր ՀՀ տնտեսության վրա համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքների (երբ ՀՆԱ-ն դրամական արտահայտությամբ նվազեց 14.1%-ով իսկ դոլարային արտահայտությամբ՝ 25.84%-ով, ինչը աշխարհի ամենաբարձր ցուցանիշներից մեկն է) հաղթահարմամբ: Աղյուսակում բերված ժամանակագրական շարքի 19 տարիների ընթացքում միայն երկու տարիներին (2005 և 2014 թվականներին) չի ավելացել ՀՀ արտաքին պետական պարտքը, մնացած տարիներին այն տարբեր չափերով ավելացել է:

ՀՀ արտաքին պետական պարտքը և կառուցվածքը 2000-2018 թվականներին

Տարիները	Արտաքին պետական պարտք		այդ թվում՝							
			ՀՀ կառավարության պարտք		ՀՀ կենտրոնական բանկի պարտք		Վարկեր, տրամադրված ՀՀ կառավարության և ԿԲ երաշխիքներով		Հատուկ ծրագրեր	
	մլն ԱՄՆ դոլար	%	մլն ԱՄՆ դոլար	%	մլն ԱՄՆ դոլար	%	մլն ԱՄՆ դոլար	%	մլն ԱՄՆ դոլար	%
2000	859.510	100.0	651.036	75.7	175.453	20.4	19.120	2.2	11.895	1.4
2001	905.467	100.0	684.272	75.6	172.459	19.0	27.854	3.1	20.882	2.3
2002	1025.507	100.0	793.134	77.3	194.802	19.0	19.438	1.9	18.133	1.8
2003	1097.676	100.0	872.186	79.5	214.639	19.6	7.341	0.7	3.510	0.3
2004	1182.934	100.0	917.030	77.5	217.629	18.4	5.243	0.4	3.032	0.3
2005	1099.232	100.0	916.418	83.4	176.397	16.0	3.146	0.3	3.272	0.3
2006	1205.635	100.0	1036.863	86.0	163.671	13.6	1.049	0.1	4.052	0.3
2007	1448.905	100.0	1257.162	86.8	191.749	13.2	0.000	0.0	0.000	0.0
2008	1577.106	100.0	1401.077	88.8	176.029	11.2	0.000	0.0	0.000	0.0
2009	2966.677	100.0	2565.921	86.5	500.756	16.9	0.000	0.0	0.000	0.0
2010	3299.021	100.0	2736.394	82.9	562.627	17.1	0.000	0.0	0.000	0.0
2011	3568.197	100.0	2950.865	82.7	617.331	17.3	0.000	0.0	0.000	0.0
2012	3739.090	100.0	3144.476	84.1	594.614	15.9	0.000	0.0	0.000	0.0
2013	3899.063	100.0	3390.794	87.0	508.269	13.0	0.000	0.0	0.000	0.0
2014	3785.208	100.0	3345.255	88.4	439.953	11.6	0.000	0.0	0.000	0.0
2015	4316.219	100.0	3839.882	89.0	476.337	11.0	0.000	0.0	0.000	0.0
2016	4805.588	100.0	4300.923	89.5	504.665	10.5	0.000	0.0	0.000	0.0
2017	5494.902	100.0	4893.364	89.1	601.538	10.9	7.396	0.1	0.000	0.0
2018	5532.900	100.0	4982.800	90.1	550.000	9.9	0.142	0.0	0.000	0.0

Աղբյուրը կազմվել ու հաշվարկվել է 2000-2018 թվականների Հայաստանի վիճակագրական տարեգրքերի (www.armstat.am) և «ՀՀ կառավարության պարտքը» ամսական ամփոփ տեղեկագրի (2018 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, www.minfin.am) տվյալներով:

Նկատի ունենալով նշված հանգամանքը, ինչպես նաև այն, որ առաջիկա տարիներին ամենևին էլ չի բացառվում արտաքին պետական պարտքի

ավելացումը²⁴⁵, օրակարգային հրատապություն են ստանում արտաքին պետական պարտքի արդյունավետության գնահատման հիմնահարցերը:

ՀՀ արտաքին պետական պարտքի արդյունավետության գնահատման (համապատասխան գործակիցների հաշվարկման միջոցով)²⁴⁶ և մակրոտնտեսական ցուցանիշների միջև համեմատական վերլուծությունն իրականացնելու նպատակով ընտրվել ենք մի քանի հիմնական ցուցանիշ, որոնցից են՝ երկրի ՀՆԱ-ն՝ որպես տնտեսությունը լավագույնս բնութագրող ցուցանիշ, այնուհետև՝ զբաղվածության մակարդակը ՀՀ-ում՝ առաջնորդվելով այն կանխադրույթով, որ տարբեր վարկային ծրագրերի շնորհիվ երկրում տնտեսական աճի համար նպաստավոր պայմանների ապահովումը ենթադրում է նաև նոր աշխատատեղերի ստեղծում տնտեսության տարբեր հատվածներում, արտահանման ցուցանիշը, որն արտացոլում է համաշխարհային շուկայի համար երկրի մրցունակ արտադրանք թողարկելու հնարավորությունները: Վերլուծվել են նաև զուտ արտահանման, արտաքին առևտրի համեմատական առավելությունների գործակիցները, ինչպես նաև հանրապետության վճարային հաշվեկշռի հաշվեմնացորդի և արտաքին պետական պարտքի միջև կապի ցուցանիշները:

ՀՆԱ-ի և արտաքին պետական պարտքի համեմատական արդյունավետության գործակիցները: ՀՆԱ-ի հավելածի և արտաքին պետական պարտքի հավելածի ցուցանիշների համեմատական արդյունավետության գործակիցները (k_1) հաշվարկվել են համաձայն ներկայացված (1) բանաձևի.

$$k_1 = \frac{\left(\frac{GDP_n}{GDP_{n-1}} \times 100\%\right) - 100\%}{\left(\frac{ED_n}{ED_{n-1}} \times 100\%\right) - 100\%} \quad (1)$$

որտեղ՝ GDP_n -ն ընթացիկ տարվա ՀՆԱ-ի ցուցանիշն է բացարձակ արժեքով,

GDP_{n-1} -ը՝ նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը,

ED_n -ն ընթացիկ տարվա արտաքին պետական պարտքի ցուցանիշն է բացարձակ արժեքով, ED_{n-1} -ը՝ նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը:

Հաշվարկների արդյունքներն ամփոփված են աղյուսակ 2-ում, որի տվյալները վկայում են, որ 2000-2008թթ. ընթացքում ՀՆԱ-ի և արտաքին պետական պարտքի

²⁴⁵ Նկատենք, որ դեռևս 2017թ.-ին ՀՀ կառավարության և ֆինանսների նախարարության պատվերով Արժույթի Միջազգային Հիմնադրամն իրականացրել է «Հայաստանի Հանրապետություն հարկաբյուջետային կանոնների արդիականացում» հետազոտությունը (նախագիծը՝ ՀՀ ֆինանսների նախարարության www.minfin.am կայքում), որի եզրակացություններից մեկն այն էր, որ ՀՀ-ում պետական պարտքի վերին շեմը պետք է պահպանվի ՀՆԱ-ի 60 տոկոսի չափով: Չեկոյցում բերված են փորձագետների վերլուծություններն ու հիմնավորումները: Մյուս կողմից էլ, հատկապես վերջին ժամանակահատվածում, կարծիքներ են հնչում, որ ՀՀ տնտեսության զարգացման հիմնական մայրուղին արտաքին պետական պարտք վերցնելն է: Տե՛ս, մասնավորապես. «Հորդորում եմ կատարել տնտեսության զարգացման այդ համարձակ քայլը. Արայիկ Հարությունյանի բաց նամակը՝ Փաշինյանին» (հոդվածի հղումը՝ <https://news.am/arm/news/498140.html>), որում հեղինակը եզրակացնում է. «Ընդամենը 10-12 տարում 22 մլրդ ԱՄՆ դոլար պետական պարտքի ավելացման արդյունքում ՀՀ ՀՆԱ-ն կկազմի ավելի քան 45 մլրդ ԱՄՆ դոլար, իսկ բնակչության մեկ շնչի հաշվով՝ 15,000 ԱՄՆ դոլար:»:

²⁴⁶ Տե՛ս, մասնավորապես, IMF (International Monetary Fund) and World Bank. 2003. Guidelines for Public Debt Management - Amended. Washington, DC: IMF and World Bank. Internet source: <http://www.imf.org/external/np/mfd/pdebt/2003/eng/am/index.htm>.

ցուցանիշներն ունեցել են փոփոխման համանման ուղղություն՝ որոշակի տատանումներով: Բացառություն է կազմել 2005թ.-ը, երբ նկատվել է ցուցանիշների փոփոխման հակադարձ միտում. այն է՝ ՀՆԱ-ի կայուն բարձր աճի պայմաններում դիտվել է արտաքին պետական պարտքի կրճատում: Նշված ժամանակահատվածը, թերևս, առավել բարենպաստն էր ՀՀ տնտեսության համար (այդ հանգամանքը հիմնականում պայմանավորված էր համաշխարհային տնտեսության վերելքի փուլով), որին անմիջապես հաջորդել է 2009թ. կրիտիկական ժամանակահատվածը, երբ տնտեսության անկումն ուղեկցվեց արտաքին պետական պարտքի բեռի նկատելի ավելացմամբ: Սակայն 2010թ.-ից հանրապետության մակրոտնտեսական ցուցանիշները վերադարձել են նախաճգնաժամային վիճակին: 2010-2013թթ. և 2017-2018թթ. ընթացքում ՀՆԱ-ի և արտաքին պետական պարտքի ցուցանիշներն ունեցել են փոփոխման համանման ուղղություններ, իսկ դիտարկվող ժամանակահատվածի՝ 2009թ.-ին և 2014-2016թթ.-ին ՀՆԱ-ի ու արտաքին պետական պարտքի ցուցանիշներն ունեցել են փոփոխման հակառակ ուղղություններ:

Վերը նշված հանգամանքը հիմքեր է ստեղծում ենթադրելու, որ ՀՀ նախաճգնաժամային (2009թ.-ին նախորդող) հատվածում հանրապետությունում նշմարվել են կայուն տնտեսական աճի նախադրյալներ, որոնց կախվածությունն արտասահմանյան վարկային ֆինանսավորումից հետզհետե թուլանում էր: Այնուհանդերձ, իրադրությունը կտրուկ փոխվեց 2009թ.-ի ճգնաժամի աննախադեպ անկման հետևանքով (երրորդ ամենավատ ցուցանիշն աշխարհում), երբ դիտարկվող ժամանակահատվածում ՀՆԱ-ի բացարձակ արժեքն առաջին անգամ անկում ունեցավ, իսկ պետական բյուջեի էական բացասական մնացորդը հնարավոր եղավ ծածկել միայն հսկայական արտաքին պետական պարտքի կուտակման պայմաններում:

Աղյուսակ 2

ՀՀ ՀՆԱ-ի և արտաքին պետական պարտքի հավելածերի համեմատական արդյունավետության գործակիցները 2000-2018 թթ.-ին

Տարիները, ժամանակահատվածները	ՀՆԱ (մլն ԱՄՆ դոլար)	ՀՆԱ-ի հավելածի տեմպը, %	Արտաքին պետական պարտք, մլն ԱՄՆ դոլար	Արտաքին պետական պարտքի հավելածի տեմպը, %	Համեմատական արդյունավետության գործակիցները
2000	1912	3.60	859.510	-1.24	-2.90
2001	2118	10.77	905.467	5.35	2.02
2002	2376	12.18	1025.507	13.26	0.92
2003	2807	18.14	1097.676	7.04	2.58
2004	3577	27.43	1182.934	7.77	3.53
2005	4900	36.99	1099.232	-7.08	-5.23
2006	6384	30.29	1205.635	9.68	3.13
2007	9206	44.20	1448.905	20.18	2.19
2008	11662	26.68	1577.106	8.85	3.02

2000-2008թթ. միջին տարեկան ցուցանիշները	4993.6	23.36	1155.8	7.09	3.30
2009	8648.0	-25.84	2966.677	88.11	-0.29
2010	9260.0	7.08	3299.021	11.20	0.63
2011	10142.0	9.52	3568.197	8.16	1.17
2012	10619.4	4.71	3739.090	4.79	0.98
2013	11121.3	4.73	3899.063	4.28	1.10
2014	11609.5	4.39	3785.208	-2.92	-1.50
2015	10553.3	-9.10	4316.219	14.03	-0.65
2016	10546.1	-0.07	4805.588	11.34	-0.01
2017	11536.5	9.39	5494.902	14.34	0.65
2018	12428.0	7.73	5532.900	0.69	11.17
2009-2018թթ. միջին տարեկան ցուցանիշները	10646.4	1.25	4140.7	15.40	1.33
2000-2018 միջին տարեկան ցուցանիշները	7968.7	11.73	2726.8	11.46	1.18

Աղյուսակը կազմվել ու հաշվարկվել է ՀՀ ԱՎԾ-ի (ՀՀ վիճակագրական կոմիտեի) 2000-2018 թվականների Հայաստանի վիճակագրական տարեգրքերի և մյուս պաշտոնական տվյալների հիման վրա:

Այդ է վկայում նաև ՀՆԱ-ի և արտաքին պետական պարտքի միջև կապի խզումը 2009թ.-ին²⁴⁷: Սակայն 2010թ. ՀՆԱ-ի և արտաքին պետական պարտքի միջև դարձյալ նկատվել է ուժեղ դրական համեմատական կախվածություն, երբ արտաքին պետական պարտքի 1%-ով աճը պայմանավորել է ՀՆԱ-ի 0,63% աճ: 2011թ., 2013թ. և 2018թ.-ի փոփոխականների միջև դարձյալ նկատվել է ուժեղ դրական համեմատական կախվածություն, երբ արտաքին պետական պարտքի 1%-ով աճը պայմանավորել է, համապատասխանաբար, ՀՆԱ-ի 1,17%, 1,10% և 11,17% հավելում: 2014-2016թթ. փոփոխականների միջև նկատվել է հակադարձ կապ, իսկ 2018թ.-ին դարձյալ նկատվել է ուժեղ դրական համեմատական կախվածություն, երբ արտաքին պետական

²⁴⁷ Կարևոր է նկատել, որ ԱՄՆ դոլարի միջին տարեկան փոխարժեքը հայկական դրամի նկատմամբ 2008թ.-ի 306.0-ի փոխարեն 2009թ.-ին կազմել է 363.3 (աճը՝ 118.7%, որը 2000-2018թթ. ժամանակահատվածի ամենաբարձր ցուցանիշն էր, իսկ երկրորդ ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է 2015թ.-ին, երբ ԱՄՆ դոլարի փոխարժեքը կազմում էր 477.9 ՀՀ դրամ, որը նախորդ տարվա (2014թ.-ի) ցուցանիշը գերազանցում էր 114.9%-ով): Թեև ՀՀ ՀՆԱ-ն հետճգնաժամային հատվածում ունեցել է աճի ցուցանիշներ, սակայն դոլարային արտահայտությամբ 2010-2018թթ. ՀՆԱ-ի մեծությունները չգերազանցեցին նախաճգնաժամային 2008թ.-ի ՀՆԱ-ի մեծությունը: Այդ պատճառով էլ, կարծում ենք, որ մեր ուսումնասիրությունում դոլարային արտահայտությամբ մակրոտնտեսական ցուցանիշների օգտագործումն արդարացված և ավելի քան հիմնավորված է:

պարտքի 1%-ով հավելածը պայմանավորել է ՀՆԱ-ի 11,17% հավելում:

Ընդհանուր առմամբ, 2000-2008թթ. միջին տարեկան ցուցանիշների վերլուծությունից հետևում է, որ ՀՀ ՀՆԱ-ի և արտաքին պետական պարտքի համեմատական արդյունավետության գործակիցը կազմել է 3,30%, 2009-2018թթ. միջին տարեկան ցուցանիշը՝ 1,33%, ինչն ավելի քան 2,5 անգամ ցածր է նախորդ ժամանակահատվածի ցուցանիշից (այդ հանգամանքը պայմանավորված է 2009թ.-ի համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքներով): Իսկ 2000-2018թթ. ժամանակահատվածի համար վերը նշված համեմատական արդյունավետության գործակիցը կազմել է 1,18%, ինչը նշանակում է, որ այդ ժամանակահատվածում արտաքին պետական պարտքն ունեցել է ցածր արդյունավետություն (քանի որ համեմատական արդյունավետության գործակիցը փոքր չափով (0,18%) է մեծ 1-ից):

Այսպիսով, ՀՆԱ-ի և արտաքին պետական պարտքի արդյունավետության գործակիցների համեմատական վերլուծությունը և դրանց միջև կապերի խիստ տատանողական բնույթն առանձին տարիների և ժամանակահատվածներում թույլ են տալիս եզրակացնելու, որ արտաքին պետական պարտքի օգտագործումն ունեցել է ցածր արդյունավետություն (համեմատական արդյունավետության գործակիցը 2000-2018թթ. ժամանակահատվածում փոքր չափով է մեծ եղել 1-ից): ՀՀ-ում տնտեսական աճի և մյուս մակրոտնտեսական ցուցանիշների միջև կապերի ուսումնասիրությունն ու վերլուծությունը բերված է առանձին հետազոտողների աշխատություններում²⁴⁸:

Չբաղվածության և արտաքին պետական պարտքի համեմատական արդյունավետության գործակիցները: ՀՀ արտաքին պետական պարտքի և զբաղվածության հավելածի տեմպերի համեմատական արդյունավետության գործակիցները (k_2) հաշվարկվել են համաձայն հետևյալ (2) բանաձևի.

$$k_2 = \frac{\left(\frac{EN_n}{EN_{n-1}} \times 100\%\right) - 100\%}{\left(\frac{ED_n}{ED_{n-1}} \times 100\%\right) - 100\%} \quad (2)$$

որտեղ՝ EN_n -ն ընթացիկ տարվա զբաղվածության ցուցանիշն է բացարձակ արժեքով, EN_{n-1} -ը՝ նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը:

ED_n -ն ընթացիկ տարվա արտաքին պետական պարտքի ցուցանիշն է բացարձակ արժեքով, ED_{n-1} -ը՝ նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը:

Արտաքին պետական պարտքի հավելածի տեմպի ու զբաղվածության մակարդակի փոփոխության համեմատությունը (արյունակ 3) ցույց է տալիս, որ ի տարբերություն արտաքին պետական պարտքի՝ դիտարկվող ժամանակահատվածում ՀՀ տնտեսությունում զբաղվածության մակարդակի կտրուկ տատանում չի նկատվել, թեև սկսած 1990-ական թվականներից զբաղվածության մակարդակը հիմնականում ունեցել է նվազման միտում՝ անկախ տնտեսական աճի տեմպերից, ինչը, թերևս, պայմանավորված է նաև բնակչության արտագաղթով: Չբաղվածության մակարդակի աճ արձանագրվել է միայն 2003թ., 2005թ., 2007թ., 2008թ., 2010թ. և 2017թ.-ին:

²⁴⁸ Տե՛ս, օրինակ, Մարկոսյան Ա. «Քոչարյանական «աճի» առասպելը».- Երևան., «Անտարես» հրատ., 2018թ., 120 էջ:

Աղյուսակ 3

ՀՀ-ում զբաղվածության և արտաքին պետական պարտքի հավելանքի համեմատական արդյունավետության գործակիցները 2000-2017 թթ.-ին

Տարիները, ժամանակահատվածները	Զբաղվածություն, 1000 մարդ	Զբաղվածության հավելանքի տեմպը, %	Արտաքին պետական պարտքը, մլն ԱՄՆ դոլար	Արտաքին պետական պարտքի հավելանքի տեմպը, %	Համեմատական արդյունավետության գործակիցները
2000	1277.7	-1.58	859.510	-1.24	1.27
2001	1264.9	-1.00	905.467	5.35	-0.19
2002	1106.4	-12.53	1025.507	13.26	-0.95
2003	1107.6	0.11	1097.676	7.04	0.02
2004	1081.7	-2.34	1182.934	7.77	-0.30
2005	1097.8	1.49	1099.232	-7.08	-0.21
2006	1092.4	-0.49	1205.635	9.68	-0.05
2007	1101.5	0.83	1448.905	20.18	0.04
2008	1117.6	1.46	1577.106	8.85	0.17
2000-2008թթ. միջին տարեկան ցուցանիշները	1138.6	-1.56	1155.8	7.09	-0.22
2009	1089.4	-2.52	2966.677	88.11	-0.03
2010	1185.2	8.79	3299.021	11.20	0.78
2011	1175.1	-0.85	3568.197	8.16	-0.10
2012	1172.8	-0.20	3739.09	4.79	-0.04
2013	1163.8	-0.77	3899.063	4.28	-0.18
2014	1133.5	-2.60	3785.208	-2.92	0.89
2015	1072.6	-5.37	4316.219	14.03	-0.38
2016	1006.2	-6.19	4805.588	11.34	-0.55
2017	1011.7	0.55	5494.902	14.34	0.04
2009-2017թթ. միջին տարեկան ցուցանիշները	1112.3	-1.02	3986.0	17.04	-0.05
2000-2017 միջին տարեկան ցուցանիշները	1125.4	-1.29	2570.9	12.06	-0.01

Աղյուսակը կազմվել ու հաշվարկվել է ՀՀ ԱՎԾ-ի (ՀՀ վիճակագրական կոմիտեի) 2000-2018 թվականների Հայաստանի վիճակագրական տարեգրքերի տվյալների հիման վրա:

Արտաքին պետական պարտքի հավելածի ու զբաղվածության մակարդակի փոփոխությունն ցուցանիչների համեմատական արդյունավետության գործակիցների համաձայն՝ ՀՀ արտաքին պետական պարտքի ցուցանիչը զբաղվածության մակարդակի վրա հիմնականում ունեցել է բացասական ազդեցություն. արտաքին պետական պարտքն աճել է զբաղվածության մակարդակի նվազման պայմաններում: Նույնիսկ այն տարիներին, երբ երկրում արձանագրվել է զբաղվածության մակարդակի որոշակի աճ (2003թ., 2005թ., 2007թ., 2008թ., 2010թ., 2017թ.), այն ուղեկցվել է արտաքին պետական պարտքի առաջանցիկ աճի տեմպերով: Մասնավորապես, ներկայացված գործակիցների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ 2003թ.-ին զբաղվածության մակարդակի 0.11% հավելածն ապահովվել է արտաքին պետական պարտքի 7.04%-ով հավելածի պայմաններում, իսկ 2010թ.-ին արտաքին պետական պարտքի 11.20% հավելածի պայմաններում նկատվել է զբաղվածության մակարդակի հավելած 8.79%-ով:

Հնդկացորենի բերքահավաք իրականացրած տարածքները	438	1623,9	476,7
Հնդկացորենի ցանքատարածությունները ընդհանուրի նկատմամբ (%)	0,69	3,1	0,79

²⁶² ԱՀ ԱԿԾ հրապարակումներ, ԱՀ Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները և համախառն բերքը 2018-ին, էջ 3, ԼՂՀ վիճակագրական տարեգիրք 2013-2017թթ, էջ 188, 191, www.stat-nkr.am:

²⁶³ Արցախի Հանրապետության Գյուղատնտեսության նախարարությունից տեղեկություններ ստանալու հարցման պատասխան, 21.12. 2018թ.:

Հնդկացորենի ցանքատարածությունները հացահատիկային ու հատիկաընդեղեն մշակաբույսերի նկատմամբ (%)	0,76	3,5	0,92
Ընդհանուր հացահատիկային ու հատիկաընդեղեն մշակաբույսեր	Համախառն բերքը (տ)		
	2016թ.	2017թ.	2018թ.
	148158,8	156241,4	138813,0
Հնդկացորեն	691,7	1278,6	375,3
Հնդկացորենի համախառն բերքը ընդհանուրի նկատմամբ (%)	0,5	0,8	0,3
Ընդհանուր հացահատիկային ու հատիկաընդեղեն մշակաբույսեր	Բերքատվությունը (գ/հա)		
	2016թ.	2017թ.	2018թ.
	25,2	25,5	20,0
Հնդկացորեն	15,8	7,9	7,9

Կան նաև տարբեր մասնագիտական կարծիքներ, ըստ որոնց՝ ներմուծման իրական թվերը ավելի մեծ են, այսինքն՝ այդ շուկայում կա նաև ստվերային հատված: Երկու հայկական հանրապետությունների բնակչության թվաքանակը 2018թ.-ի հունվարի 1-ի դրությամբ կազմում է 3 մլն 119,7 հազ. մարդ²⁶⁴: Ըստ ՀՀ ՎԿ կատարած տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտությունների արդյունքների՝ 2015-2017թթ-ին տնային տնտեսություններում հնդկաձավարի տարեկան սպառումը կազմել է միջինացված 2,56կգ 1 շնչին²⁶⁵: Այսպիսով՝ երկու հանրապետություններում տարեկան սպառումը ընդհանուր կազմում է 7986,432 տ, այսինքն՝ մոտ 8000տ սպառում: Սպառման այդպիսի ծավալի եզրահանգման են եկել նաև ENPARD ծրագրի կողմից իրականացված վերլուծության արդյունքում: Վերլուծությունն իրականացվել էր 2015թ.-ին և վերաբերում էր ՀՀ-ի հնդկաձավարի ու հատիկաընդեղենի շուկային²⁶⁶: Եթե հաշվի առնենք այդ դրույթները, կստացվի, որ բուն հայկական հնդկաձավարի տեսակարար կշիռն ավելի քիչ է: Վերոհիշյալ հանգամանքները բացասական ազդեցություն են ունենում ինքնաբավության ու պարենային անվտանգության համակարգի վրա:

ՀՀ-ում հնդկացորենի արտադրության ու վերամշակման աջակցմանը որոշ օժանդակություն վերջին տարիներին տրամադրվել է պետության կողմից, բայց հիմնական խթանող ծրագիրը սկսվել էր Եվրոպական հարևանության գյուղատնտեսության և գյուղի զարգացման (ENPARD) եռամյա ծրագրի միջոցով: Ծրագիրը ֆինանսավորվել է Եվրոմիության կողմից և իրականացվել է Միավորված ազգերի կազմակերպության Արդյունաբերական զարգացման կազմակերպության (UNIDO) և Միավորված ազգերի զարգացման ծրագրի (UNDP) կողմից: 2015թ.-ից

²⁶⁴ ՀՀ ՎԿ, ՀՀ մշտական բնակչության թվաքանակը տեղեկագիր, Երևան-2018, էջ 3, <https://www.armstat.am/file/article/nase1.01.01.2018.pdf>: ԱՀ ԱՎԾ, Արցախի Հանրապետությունը ժողովրդագրական ժողովածու, Ստեփանակերտ-2018, էջ 10, http://stat-nkr.am/files/publications/2018/Social_joxovurt_2017.pdf:

²⁶⁵ Հայաստանի Հանրապետության Վիճակագրական կոմիտեից տեղեկություններ ստանալու հարցման պատասխան, 11.12.2018թ.:

²⁶⁶ ENPARD ծրագրի մասին ամբողջական տվյալները տրամադրվել են Միավորված ազգերի կազմակերպության Արդյունաբերական զարգացման կազմակերպության (UNIDO) Հայաստանյան գրասենյակի կողմից, պաշտոնական հարցման պատասխան առ 14.03.2019թ.:

մեկնարկեց ծրագիրը: Դեռևս սկզբնական փուլում իրականացվել է հնդկացորենի ու որոշ հատիկաընդեղեն մշակաբույսերի արժեչոթայի ծավալուն վերլուծություն՝ ՀՀ մասշտաբով: Այնուհետև սկսվել է ծրագրի իրագործումը՝ հիմք ընդունելով կատարված վերլուծությունը: Առաջին քայլը առաջնային արտադրական խմբերի ստեղծումն էր: Դրա շուրջ կազմակերպվել են խորհրդատվություններ ու հանդիպումներ տարբեր ֆերմերների հետ: Արդյունքում, հնդկացորեն արտադրող 67 համայնքներում 551 ֆերմերներ ընդգրկվեցին Շիրակի, Լոռու, Արագածոտնի, Կոտայքի ու Գեղարքունիքի մարզերի 34 կոոպերատիվներում, որոնք ֆերմերների քվեարկությամբ միավորվել են Բավրայի ու Ծովագյուղի 2 կաստերային կոոպերատիվների շուրջ: Յուրաքանչյուր ֆերմեր տրամադրել է 1 հա հողատարածք և 50 000 ՀՀ դրամ՝ կոոպերատիվին անդամակցելու համար:

Աղյուսակ 2

ՀՀ հնդկացորենի ցանքատարածությունները, համախառն բերքը, միջին բերքատվությունը, ներմուծման քանակը ՀՀ-ում և ԱՀ-ում^{267 268 269}

	2014թ.*	2015թ.*	2016թ.	2017թ.	2018թ.**
Տարածությունները (հա)	-	-	519,5	449,5	157,5
Համախառն բերքը (տ)	-	-	639,5	436	212,6
Բերքատվությունը (g/հա)	-	-	12,3	9,7	13,5
Ներմուծած հնդկացորենի և հնդկաձավարի քանակը (տ)***	4562,0	3934,6	4068,7	5321,3	3750,3
ԱՀ ներմուծված հնդկացորենի և հնդկաձավարի քանակը (տ)****	194,1	186,3	131,7	327,8	152,9

*2014-2015թթ. ՀՀ-ում հնդկացորենի արտադրություն չի իրականացվել:

**2018թ. տվյալը ընդգրկում է 01.01.2018-30.11.2018թթ.:

***ՀՀ պետեկամուտների տեղեկատվական բազայում հնդկացորենի և հնդկաձավարի մասով առանձնացված հաշվառում չի վարվում, ուստի տվյալները ներկայացվում են միասնական ձևով.

****հնդկացորենի (այդ թվում սերմացուի) և հնդկաձավարի մասով ԱՀ ՖՆ տեղեկատվական բազայում առանձնացված հաշվառում չի վարվում, ուստի տվյալները ներկայացվում են միասնական ձևով:

²⁶⁷ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունից տեղեկություններ ստանալու հարցման պատասխան, 10.12.2018թ.:

²⁶⁸ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեից տեղեկություններ ստանալու հարցման պատասխան, 12.12.2018թ.:

²⁶⁹ Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարությունից տեղեկություններ ստանալու հարցման պատասխան, 29.01.2019թ.:

Ծրագրի տեխնիկական աջակցության բաղադրիչների շնորհիվ միջազգային փորձագետների կողմից ֆերմերների հետ անցկացվել են ուսուցողական դասընթացներ հնդկացորենի ցանքսի, պարարտացման, բերքահավաքի, բերքի պահպանման, վերամշակման, ինչպես նաև հնդկացորենից մեղրի արտադրության կազմակերպման վերաբերյալ: Այնուհետև յուրաքանչյուր հեկտարի համար ֆերմերներին տրամադրվել են 80կգ հնդկացորենի սերմ և 300կգ հանքային պարարտանյութ: Ավելի ակտիվ ու նախաձեռնող 2 խմբերին, որոնք կարողացան ապահովել համապատասխան շենքային պայմանները, ծրագրի կողմից տրամադրվեցին վերամշակող գործարանների համար անհրաժեշտ բոլոր սարքավորումները: Բացի դրանից, վերամշակման տեխնոլոգիայի ներդրման և ուսուցման աշխատանքներ ևս կազմակերպվեցին: Շիրակի մարզի Բավրա գյուղում հիմնվել է «Նոր հատիկ» կոոպերատիվը, որը զբաղվում է հնդկացորենի արտադրությամբ՝ ներառելով Շիրակի, Լոռու, Արագածոտնի մարզերի արտադրական խմբերը: Բացի դրանից, հիմնվել է «Նշանի» հնդկաձավարի արտադրության կոոպերատիվ, որը զբաղվում է հնդկացորենի վերամշակմամբ ու հնդկաձավարի արտադրությամբ: Դրա նմանությամբ Գեղարքունիքի մարզի Ծովագյուղ գյուղում հիմնվել է «Ծովհատիկ» կոոպերատիվը, որը զբաղվում է հնդկացորենի ու հնդկաձավարի արտադրությամբ՝ ներառելով Գեղարքունիքի ու Կոտայքի մարզերի արտադրական խմբերը: Այդ գործարանները արտադրում են 3 տեսակի փաթեթավորված արտադրանք՝ բոված ու կանաչ տեսակի հնդկաձավար՝ 500գ քաշով, հնդկացորենի այլուր, իսկ թափոններից ստացվում է հիմնականում անասնակեր ու հումք տեքստիլ արդյունաբերության համար: Շուկայում այդ արտադրանքները հանդես են գալիս «Նոր Յատիկ» ու «Ծովհատիկ» ապրանքանիշներով: Գործարանները ներկայումս աշխատում են գազով, անթափոն համակարգով: Նրանցից յուրաքանչյուրի արտադրական հզորությունը թույլ է տալիս վերամշակելու մոտ 5000 տ հնդկացորեն: Տեխնիկապես գործարանները լիարժեք դիվերսիֆիկացված են:

Այդ ծրագրի իրականացման համար ներդրվել է 613 417 475 ՀՀ դրամ, որից ENPARD-ի կողմից՝ 434 730 242 ՀՀ դրամ կամ ընդհանուր գումարի 71%-ը, առաջնային ու վերամշակող կոոպերատիվների կողմից՝ 109 959 960 ՀՀ դրամ կամ 18%-ը, այլ գործընկեր կազմակերպությունների կողմից՝ 68 727 273 ՀՀ դրամ կամ ընդհանուրի 11%-ը: Ստացվում է, որ 1 կգ համախառն բերք ստանալու համար ծրագրի կողմից ծախսվել է 476 դրամ: Դա բավականին մեծ գումար է, բայց հաշվի առնելով, որ այդ գումարի մեջ մտնում են հիմնական միջոցները, կարողությունների զարգացման գումարները, կարելի է պնդել, որ գումարն արդարացված է, քանի որ այդ ակտիվները դեռ լրիվությամբ ներգրավված չեն արտադրության մեջ: Իսկ 1կգ-ի հաշվով ծախսերը առաջնային արտադրության համար կազմում են 162 դրամ: Այդ թիվն, ըստ էության, նույնպես մեծ է, բայց հաշվի առնելով, որ այն կատարվել է մասնավորի ու մեծամասամբ արտերկրի դոնորի կողմից, ինչպես նաև նկատի առնելով, որ ծրագիրը փորձնական է և դեռ իր վերջնական արդյունքները չի տվել, կարելի պնդել, որ ծրագիրը ինքնին արդյունավետ է: Ներդրումների մանրամասն բաշխվածությունը ներկայացված է ստորև (տե՛ս Աղյուսակ 3, տե՛ս Աղյուսակ 4):

Աղյուսակ 3

Հնդկացորենի արտադրության ներդրումների բաշխվածություն, առաջնային խմբեր և բարձրարժեք արտադրության խմբեր/վերամշակում

ՀՀ դրամ

ENPARD-ի կողմից ներդրումներ	Առաջնային կոոպերատիվների կողմից ներդրումներ	Կոոպերատիվների ներդրումը, %
112,785,382	95,359,960	46%

ENPARD-ի կողմից ներդրումներ	Գործընկեր կազմակերպություններ	Բարձրաժեք արտադրության կոոպերատիվների կողմից ներդրումներ	Կոոպերատիվների ներդրումը, %
187,070,936	68,727,273	14,600,000	5%

Աղյուսակ 4

ENPARD-ի կողմից կարողությունների զարգացման և ուսումնասիրություններիև ուղղված ներդրումներ

ՀՀ դրամ

Ուսումնասիրություններ և գործարար ծրագրեր	Այրանբանիչ և շուկայի խթանում	Դասընթացներ	Ընդամենը
57,436,364	18,360,000	59,077,560	134,873,924

ՀՀ-ում իրականացվող հնդկացորենի արտադրության աջակցման ծրագիրը ներառում է ամբողջ արժեչղթան՝ դրանով ավելի արդյունավետ դարձնելով այն: Ծրագրի սկզբից մինչև վերջ առկա էր պլանավորումն ու հստակ նախագծած գործողությունների քայլերը, որոնք դրական անդրադարձան արդյունքի վրա: Բայց առկա էին բացթողումներ՝ կապված վերամշակող տեխնոլոգիաների թերի ուսումնասիրման և պետական մարմինների աջակցման գրեթե բացակայության հետ: Ծրագրի արդյունքը երևաց հենց հնդկացորենի արտադրության շղթայի սկզբնական շրջանում: Հնդկացորենի աճեցման ժամանակ հիմնականում պահպանվում են ագրոտեխնիկական միջոցառումների կանոնները: Միևնույն ժամանակ ֆերմերային տնտեսությունները համապատասխան գիտելիքներով զինված են, մեղվափեթակները օգտագործվում են բույսի փոշոտման համար: Ծրագրի իրականացման ընթացքը հաջող կլիներ, եթե հնդկացորենի արտադրության ընթացքում առաջացած տեխնիկական խնդիրները չլինեին: Հնամաշ գյուղատնտեսական տեխնիկայի առկայությունը, մասնավոր՝ բերքահավաք կոմբայնը լուրջ խոչընդոտ է առաջացում: Կազմակերպչական լուրջ խոչընդոտ է նաև կոոպերացման գաղափարի թերի ընկալումը, որն առկա է գյուղատնտեսական կոոպերատիվներում: Եթե նույնիսկ առկա խնդիրներով հնարավոր է կազմակերպել հնդկացորենի արտադրություն, ապա հնդկաձավարի արտադրությունում առկա խնդիրները այն գրեթե անհնար են դարձնում: Արտադրության ընթացքում առաջին խնդիրն առաջացավ տեխնոլոգիայի ներդրման ժամանակ, քանի որ ընտրված տեխնոլոգիան ու տեխնիկական միջոցները, շահագործման տեսակետից ելնելով, պարզ էին ու հարմարեցված տեղի մարդկային ներուժին: Բայց որոշ մասնագետների կարծիքով՝ տվյալ տեխնիկական միջոցներն արդյունավետ չեն Հայաստանի պայմաններում աշխատելու համար: Այդքանից ելնելով՝ վերջնական եզրահանգման կարելի է գալ միայն այդ երկու գործարանների՝ զազով աշխատելու և ստացված արտադրանքի որակական հատկանիշների դեպքում:

Վերոնշյալ տեխնոլոգիան ընդօրինակվել է ՌԴ-ից և Ուկրաինայից, որոնք, որպես այրման հումք, օգտագործում են փայտը կամ հնդկացորենից ստացված թեփը: Բայց քանի որ Հայաստանը բարձրադիր ռեյիեֆ ունի և այրման ջերմաստիճանը տարբեր է ՌԴ-ի և Ուկրաինայի համեմատ, անհրաժեշտություն առաջացավ գործարանները զազաֆիկացնել: Դա մեծ դժվարությամբ իրագործվեց ու տևեց մոտ 1,5-2 տարի:

Հաջորդ խնդիրը կապված էր իրացման հետ: 2016թ.-ի սեպտեմբեր ամսից (տե՛ս Դիագրամ 1) ՌԴ-ում հնդկաձավարի իրացման գների անկումը նպաստեց ՀՀ հնդկաձավարի իրացման գների նվազմանը: Այդպիսի կտրուկ անկումները (2017թ.-ի

սեպտեմբերին 2016թ.-ի սեպտեմբերի համեմատությամբ շուրջ 30,5%-ով)²⁷⁰ բացասական հետևանքներ թողեցին ծրագրի վրա: Այդ գործարանները փոխեցին իրենց իրացման ռազմավարությունը: Սկսեցին կիրառումով վաճառվող հնդկաձավարից հրաժարվել, ու դրանք վաճառել արդեն փաթեթավորված տեսքով: Նման ձևով նրանք կարողանում էին մրցակցել ռուսական ու ուկրաինական փաթեթավորված հնդկաձավարի ապրանքի հետ: Դրանից զատ, սկսեցին արտադրել կանաչ հնդկաձավար ու փաթեթավորված տեսքով հանդես գալ շուկայում: Կանաչ հնդկաձավար ներմուծող կազմակերպությունների համեմատ ունեին մրցակցային առավելություններ և՛ գնային առումով, և՛ որակական: Մենք կատարել ենք գնային դիտարկում Երևան քաղաքի մանրածախ վաճառքի կետերում: Մոնիթորինգում ներառվել են 8 տարբեր կազմակերպությունների կողմից շուրջ 15 անուն փաթեթավորված հնդկաձավարի տեսակներ 9 տարբեր ապրանքանիշներով, որոնք և՛ ՌԴ, և՛ ՀՀ փաթեթավորված արտասահմանյան հումքով արտադրանքներ են: Բոված ու շոգեխաշած 1կգ փաթեթավորված հնդկաձավարի միջին գինը կազմել է՝ հայկականը՝ 1064 դրամ, ռուսականը՝ 1137 դրամ, ռուսական կանաչ հնդկաձավարը՝ 3609 դրամ: Իսկ Բավրայի ու Ծովագյուղի գործարանների կողմից վաճառվող 1կգ բոված հնդկաձավարի մեծածախ գինը կազմում է 500 դրամ, կանաչինը՝ 700 դրամ:

Չնայած այսպիսի գնային առավելություններին՝ այն ոգևորությունը, որ կար ֆերմերների շրջանում՝ կապված նոր ու շահութաբեր մշակաբույսի հետ, անկում ապրեց: Իրացման խնդրին գումարվեցին վերամշակման տեխնոլոգիայի դժվարությունները, ինչը հանգեցրեց որոշ ֆերմերների՝ այդ մշակաբույսի աճեցումից հրաժարվելուն: Բացի դրանից, հնդկաձավարի խոշոր ներկրողների ու վաճառողների կողմից կիրառվում էր ոչ առողջ մրցակցային վարվելակերպ: Վերամշակող այդ գործարանները շատ դժվարությամբ են կարողանում մտնել իրացման շուկա: Հնդկաձավարի հիմնական ներկրողները սերտ կապված են մանրածախ վաճառքի խոշոր ցանցերի հետ, որտեղ վաճառվում են ոչ միայն իրենց կողմից ներկրված հնդկաձավարը, այլ նաև՝ ձավարեղենի մի շարք տեսակներ: Սա լուրջ խոչընդոտ է, որի հաղթահարումը առանց պետական միջամտության անհնար է պատկերացնել: 2014-2018թթ.-ին արտադրվել է ընդամենը 1288,1 տ հնդկացորեն (տե՛ս Աղյուսակ 2): Թեև այդ փոքր մասշտաբը չէր կարող լուրջ մրցակցություն ստեղծել, այնուամենայնիվ, պայմանավորված մեր տեղային բիզնես մտածողությամբ, ինչպես նաև խոշոր կազմակերպությունների շրջանում կորպորատիվ սոցիալական պատասխանատվության բացակայությամբ կամ ոչ լիարժեք գիտակցմամբ, խոշոր ներկրողների ու վաճառողների կողմից ստեղծվեց արհեստական խոչընդոտների մի շրջա հնդկացորեն վերամշակող գործարանների համար:

Արցախի Հանրապետությունում հնդկացորենի արտադրությամբ սկսեցին զբաղվել 2016թ.-ից: Հիմնականում պետական բյուջեի հաշվին էր իրականացվում հնդկացորենի արտադրությունը խթանող ծրագիրը: 2016թ.-ին հողօգտագործողներին անհատույց տրամադրվեցին 50կգ ազոտական, 100կգ ֆոսֆորական պարարտանյութեր և 80կգ սերմ²⁷¹: 2017թ.-ին անհատույց տրվեց 65կգ սերմ²⁷², 2018թ.-ին՝ անհատույց 80կգ սերմ²⁷³: Ծրագիրը շարունակվում է նաև 2019թ.-ին²⁷⁴:

²⁷⁰ Средние потребительские цены (тарифы) на товары и услуги РФ, Крупа гречневая-ядрица, <https://fedstat.ru/indicator/31448>.

²⁷¹ ԼՂՀ գարնանացան մշակաբույսերի ցանքաշրջանառության խթանման 2016 թվականի ծրագիր, էջ 8, <https://qoo-ql.ru/579R>:

²⁷² ԼՂՀ գարնանացան մշակաբույսերի ցանքաշրջանառության խթանման 2017 թվականի ծրագիր, էջ 9, <https://qoo-ql.ru/579X>:

²⁷³ Արցախի Հանրապետությունում բուսաբուծության համալիր զարգացման ծրագիր, էջ 12, <https://qoo-ql.ru/57a4>:

2018 և 2019թթ.-ի հնդկացորենի մշակաբույսի աճեցմանը խթանող պետական քայլերը ներառված են ԱՀ գյուղատնտեսության զարգացման հայեցակարգից բխող՝ գյուղատնտեսության նախարարության բուսաբուծության զարգացման ծրագրում: Վերոհիշյալ ծրագրերը իրականացվել են Գյուղի և գյուղատնտեսության աջակցման հիմնադրամի միջոցով: 2016-2018թթ.-ին հիմնադրամի միջոցով տրամադրվել է շուրջ 252,101 տ սերմ՝ ընդհանուր 136 136 129 դրամ արժողությամբ (տե՛ս Աղյուսակ 5): Աջակցման այդպիսի քայլերը խթանեցին հնդկացորենի մշակման ցանաբատարածությունների ընդլայնմանը: Բայց 2018թ.-ին կրճատվեցին ցանաբատարածությունները՝ կապված 2017թ.-ի ցածր բերքատվության, մթերվող բերքի գների անկման, սպասվող բարձր եկամուտների չիրականացման հետ (տե՛ս Աղյուսակ 1): Բերքատվության ցածր ցուցանիշներն այժմ էլ պահպանվում են: Միջին բերքատվությունը վերջին երեք տարիներին կազմում է 10,5 գ/հա, իսկ վերջին երկու տարիներին չի հասնում նույնիսկ 8 գ/հա-ին (եթե համախառն բերքը ճշգրտենք ԳԳԱՀ-ի կողմից մթերված քանակի հետ, ապա կստացվի ավելի քիչ՝ 6,8 գ/հա): Ընթացիկ տարում նախատեսվում է 2000 հա-ից ավել ցանքս²⁷⁵: Բերքատվության ցածր մակարդակը նաև պայմանավորված է սերմերի ոչ որակյալ լինելով: Մեր կողմից դիտարկված սերմերի խմբաքանակը ու նաև կատարված ցանքսի մեթոդիկան ապացուցում են, որ ներկրված սերմերը չեն համապատասխանում սերմերի ստանդարտներին: Բացի այդ, սերմերի տրամադրման քանակը չի համապատասխանում ինտենսիվ գյուղատնտեսության ստանդարտներին: Հավելենք նաև, որ եթե նույնիսկ տրամադրվեն ինտենսիվ գյուղատնտեսությանը համապատասխան քանակությամբ ու որակով սերմեր, այնուհանդերձ չենք ստանա ընդհանուր մասշտաբով բարձր բերքատվություն, քանի որ ֆերմերների մեծ մասը չունի անհրաժեշտ գիտելիքներ ու հմտություններ, չի տիրապետում տեխնոլոգիային:

Հողի մշակման, պարարտացման ու քիմիացման աշխատանքները թերի են կամ ընդհանրապես չեն կատարվում: Մշակաբույսի փոշոտման համար չեն օգտագործվում մեղվափեթակներ, ինչի հետևանքով պակասում է բերքը, և մեղր չի հավաքվում: Արդյունքում և՛ հնդկացորենի բերքն ենք կորցնում, և՛ օժանդակ բերքը՝ մեղրը: Սա բացասաբար է անդրադառնում ամբողջ արժեշտային առաջնային արտադրության արդյունավետության վրա: Մեղվափեթակներ ունեցող ֆերմերները խուսափում են հնդկացորենի մշակվող դաշտերի տարածքում տեղակայել իրենց փեթակները, նույնիսկ՝ խրախուսման դիմաց՝ պատճառաբանելով հնդկացորենից ստացված մեղրի իրացման շուկայի բացակայությունը: Իրականում շուկան առկա է, բայց բացակայում են այդ արտադրանքի իրացման կազմակերպումը, մարքեթինգն ու մենեջմենթը: Բերքահավաքը հաճախ ուշ է կատարվում, որը նույնպես բացասաբար է անդրադառնում բերքատվության վրա: Բերքահավաքի ուշ կազմակերպան պատճառը հիմնականում բերքահավաք տեխնիկայի պակասն է կամ դրա ոչ ռացիոնալ կառավարումը: Արդյունքում ցածր բերքատվությունը բարձրացնում է արտադրանքի ինքնարժեքը, որին գումարվում է նաև իրացման ցածր գինը: Բերքատվության նման ցուցանիշի՝ 6,8 գ/հա (ըստ ԳԳԱՀ-ից ստացված տվյալների) և առկա տարածված էքստենսիվ արտադրության ծախսերի դեպքում 1 կգ հաշվով ունենում ենք բարձր ինքնարժեք՝ 132 դրամ և ավել: 2018թ.-ին կանխիկ վճարման դեպքում 1 կգ-ը մթերվել է 125 դրամով և 133 դրամով՝ պետության հանդեպ ունեցած պարտավորությունների հաշվանցման դեպքում: Տվյալ պարագայում եկամուտները հերիքում են միայն ծախսածածկման մակարդակը հաղթահարելուն, վատագույն դեպքում՝ բացասական արդյունք է գրանցվում: Արդյունքում ունենում ենք ցածր արդյունավետությամբ աշխատող ֆերմերներ: Հնդկացորենի մշակության դաշտում մեր կողմից 2017թ.-ին և

²⁷⁴ Արցախի Հանրապետությունում բուսաբուծության համալիր զարգացման ծրագրի փոփոխություններ, էջ 22, <https://goo-gl.ru/57a8> :

²⁷⁵ Տե՛ս հոդու 274-ը:

2018թ.-ին կատարված փորձնական ուսումնասիրությունների արդյունքներով կարող ենք պնդել, որ Արցախում հեշտությամբ հնարավոր է ապահովել միջինը 15-20 g/հա բերք, և իրացման առկա գներով ապահովել ցածր, բայց կայուն՝ 40-60% շահութաբերություն, եթե հաղթահարվեն վերոհիշյալ խնդիրները:

Հնդկացորենի մթերման գործընթացը նույնպես կազմակերպում է Կառավարությունը՝ Գյուղի և գյուղատնտեսության աջակցման հիմնադրամի (ԳԳԱՀ) միջոցով: Արցախում 2016-2018թթ.-ին արտադրվել է 2345,6 տ համախառն բերք (տե՛ս Աղյուսակ 1)՝ ըստ ԱՀ գյուղատնտեսության նախարարության տվյալների, բայց ԳԳԱՀ-ի կողմից մթերված բերքը ապրանքային տեսքով կազմում է 1720,9 տ ընդհանուր 624,7 տ շեղումով: Այդ տարբերությունն առաջացել է Գյուղնախարարության կողմից բազիսային տվյալների հավաքագրման հուսալի մեխանիզմների բացակայության հետևանքով: Տվյալների հավաքագրման մեջ հիմնականում հիմք է ընդունվում համախառն բերքի մասին ֆերմերի բանավոր խոսքը, իսկ ԳԳԱՀ-ի կողմից տարվում է համապատասխան հաշվապահական հաշվառում, ուստի անճշտության հավանականությունը գրեթե բացառված է: Տեսականորեն հնարավոր է, որ տարբերությունն առաջանա ֆերմերների կողմից համախառն բերքը ԳԳԱՀ-ին չհանձնելու հետևանքով, սակայն հաշվի առնելով միակ մթերողի առկայությունն ու նաև հնդկացորենի տեխնոլոգիական առանձնահատկությամբ պայմանավորված պահեստում երկարատև պահելու անհնարինությունը՝ այդ տեսակետը քիչ հավանական է կամ էլ ընդհանուր ծավալի մեջ չնչին մաս է կազմում: Հիմնադրամի կողմից հնդկացորենը մթերվում, չորացվում, զտվում ու պահեստավորվում է: Հիմնադրամը 2016թ.-ին մթերվող հնդկացորենի 1կգ արժեքը սահմանել է 250 դրամ, 2017թ.-ին՝ 125 դրամ՝ կանխիկ վճարման դեպքում և 150 դրամ պետության հանդեպ ունեցած պարտավորությունների հաշվանցման դեպքում, իսկ 2018թ.-ին՝ 125 դրամ կանխիկ վճարման դեպքում և 133 դրամ՝ պետության հանդեպ ունեցած պարտավորությունների հաշվանցման դեպքում²⁷⁶: Վերջնական արդյունքում 2016թ.-ին 1կգ հաշվով մթերվել է միջինացված 244 դրամով, 2017թ.-ին՝ 146 դրամով, 2018թ.-ին՝ 129 դրամով: Երկրորդ ու երրորդ տարիների միջին մթերման գներից կարելի է եզրակացնել, որ երկրորդ տարում մթերման հիմնական մասի վճարումները կատարվել են պետության հանդեպ ունեցած պարտքերի հաշվանցման միջոցով, իսկ երրորդ տարում հավասարվել է կանխիկ վճարումների ու պարտավորությունների հաշվանցման քանակը: Վերջինս դրական միտում է, քանի որ ֆերմերները հնդկացորենի արտադրությունը դիտում են որպես եկամտի աղբյուր, այլ ոչ թե պարտավորությունների մարման մեխանիզմ: 2016-2018թթ.-ին չորացման և այլ ուղղությամբ ծախսված միջոցները կազմում են մոտ 8 մլն դրամ: Բացի դրանից, մթերման ու չորացման հետևանքով, ինչպես նաև մթերման փորձի պակասությունից ծագած որոշ այլ ծախսեր (կորուստներ) նույնպես ստանձնել է ԳԳԱՀ-ը:

2016թ.-ին Ստեփանակերտում հիմնվեց հնդկացորենի վերամշակման արտադրամաս: 2016թ.-ին մթերված բերքի մեծ մասը հիմնադրամի կողմից իրացվել է վերամշակող կազմակերպությանը՝ 1 կգ-ը միջինացված 170 դրամով: Նույն տարվա մթերված բերքից արտադրամասում կարողացան վերամշակել և ստանալ ցածր որակի հնդկաձավար, ինչը շուկայում չի վաճառվել, այլ օգտագործվել է պետության կարիքների համար: Արտադրության գործունեությունը դադարեցվել է 2017թ.-ի սկզբներին: 2018թ.-ին Մարտունու շրջանի Բերդաշեն համայնքում «Էրիզ գրուպ» ՍՊԸ-ի կողմից հիմնվել է հնդկացորեն վերամշակող արտադրամաս: Արտադրությունը կազմակերպվում է անթափոն եղանակով, որպես այրման էներգիայի աղբյուր՝ օգտագործվում է հնդկացորենից ստացված թեփը: Հնդկացորենի կեղևի անջատումը

²⁷⁶ Արցախի Հանրապետության Գյուղի և գյուղատնտեսության աջակցման հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի որոշում, <https://goo-gl.ru/57s9>:

կատարվում է շոգեխաշման եղանակով, ստացվում է մեկ տեսակի արտադրանք՝ շոգեխաշած հնդկաձավար: 2017-2018թթ.-ին ԳԳԱՀ-ի կողմից մթերված բերքից նոր ստեղծվող վերամշակող կազմակերպությանը 1 կգ-ը իրացվել է միջինը 100 դրամ արժողությամբ, ընդհանուր՝ 445,21 տ: ԳԳԱՀ-ի կողմից մթերված հնդկացորենի մնացորդն էլ, ըստ նախնական պայմանավորվածության, մթերվելու է այդ կազմակերպության կողմից: Հնդկացորենից ստացված հնդկաձավարը օգտագործվում է պետության կարիքների համար: Չնայած վերամշակման ամկա բազում խնդիրներին՝ վերամշակման գործարանի ղեկավարությունն ունի տրամադրվածություն՝ գործունեությունն ավելի ծավալելու ու իր դերակատարումն ավելի մեծացնելու հնդացորենի արտադրության արժեշղթայում, որին, հուսով ենք, ականատես կլինենք ապագայում:

2016-2018թթ.-ին Արցախի Հանրապետության կողմից կատարված ներդրումները հնդկաձավարի արժեշղթայի առաջնային արտադրության մեջ կազմել են շուրջ 234,557 մլն դրամ (տե՛ս Աղյուսակ 5): Սրանից բացի, բարձրարժեք արտադրության՝ վերամշակման համար տարբեր գործիքակազմով տրամադրվել են պետական աջակցություններ:

2015թ.-ին Արցախում հնդկացորենի արտադրության համեմատությամբ (երբ ընդհանրապես հնդկացորեն չէր մշակվում, այսինքն՝ արդյունքը 0 էր), 2016-2018թթ.-ին (երբ սկսվեց արտադրությունը) արդեն ունենք ընդհանուր 2345,6 տ արտադրության բացարձակ ան (ըստ ԱՀ գյուղնախարարության), այսինքն՝ տարեկան միջինացված 781,9 տ: Առաջին հայացքից 0-ից մինչև 2345,6 տ-ն գերազանց արդյունք է, բայց ցանկացած տնտեսական ան ուսումնասիրելիս պետք է հաշվի առնել, թե ինչի հաշվին է գրանցվել աճը և արդյո՞ք արդարացված է այն: Այսպես, պետության կողմից հնդկացորենի ծրագիրը իրագործելիս ծախսվել է 234,557 մլն դրամ: Դրան գումարելով ներկա պայմաններին համապատասխան մթերված բերքի մնացորդի հնարավոր իրացման ու մթերման գնի բացասական տարբերությունը, որը կազմելու է 27,870 մլն դրամ, կստանանք 262,427 մլն դրամ: Այդ գումարը բաժանելով 2345,6 տ արտադրության ծավալին (ըստ ԱՀ գյուղնախարարության) կամ 1720,9 տ-ին (ըստ ԳԳԱՀ-ի)՝ 1 կգ հաշվով կստանանք համապատասխանաբար 111,9 դրամ կամ 152,5 դրամ: Համեմատության համար, օրինակ, բերենք ՌԴ-ում գյուղատնտեսական մթերքներ արտադրողների կողմից հնդկացորենի իրացման միջին գները: 2018թ.-ին 1 տ հնդկացորենի արժեքը կազմել է 7520 ՌԴ ռուբլի, իսկ վերջին երեք տարվա միջին գինը՝ 16352 ՌԴ ռուբլի²⁷⁷: Այսպիսով, 2018թ.-ին 1 կգ հնդկացորենն արժեք 58 դրամ (2018թ.-ին ՀՀ ԿԲ-ի կողմից տարվա արտաբյուջեի միջինացված փոխարժեքը 1 ՌԴ ռուբլու համար կազմել է 7,71 դրամ²⁷⁸), իսկ վերջին երեք տարիների համար՝ 127 դրամ (ՀՀ ԿԲ-ի կողմից 2016-2018թ-ի տարիների 1 ՌԴ ռուբլու համար արտաբյուջեի միջինացված փոխարժեքը կազմել է 7,74 դրամ²⁷⁹): Ստացվում է՝ ՌԴ-ում հնդկացորեն արտադրողների կողմից իրացման գնի արժեքը 1 կգ հաշվով ավելի քիչ է, քան Արցախում պետությունների հաշվին կատարված ընդհանուր ծախսերի միջինացված արժեքը: Եթե ՌԴ-ում հնդկացորեն արտադրողներն իրացման այդպիսի գներով կարողանում են վերարտադրություն կազմակերպել, ապա մեր ֆերմերները պետական բյուջեի հատկացումների հաշվին ընդամենը կարողանում են մի կերպ կազմակերպել

²⁷⁷ Средние цены производителей сельскохозяйственной продукции РФ, http://www.gks.ru/wps/wcm/connect/rosstat_main/rosstat/ru/statistics/tariffs/#.

²⁷⁸ ՀՀ Կենտրոնական բանկի պաշտոնական կայքի փոխարժեքային արխիվ, <https://www.cba.am/am/sitepages/ExchangeArchive.aspx?DateFrom=2018-01-01&DateTo=2018-12-31&ISOCodes=USD,GBP,RUB,EUR>:

²⁷⁹ ՀՀ Կենտրոնական բանկի պաշտոնական կայքի փոխարժեքային արխիվ, <https://www.cba.am/AM/SitePages/ExchangeArchive.aspx?DateFrom=2016-01-01&DateTo=2018-12-31&ISOCodes=USD,GBP,RUB,EUR> :

արտադրությունը: Ստացվում է, որ արտադրության ծավալի աճը պարզապես թվի բացարձակ աճ է, այլ ոչ թե արտադրության իրական աճ:

Աղյուսակ 5

Արցախի Հանրապետության հնդկացորենի խթանման ծրագրի համար պետական բյուջեի հաշվին կատարվող աջակցություններն ու սուբսիդավորման գումարները^{280 281},

Հազ. դրամ

	2016թ.	2017թ.	2018թ.	Ընդամենը
Սերմացու հնդկացորենի գծով	19200	83588	33348,1	136136,1
Պարարտանյութերի գծով	14000	-	-	14000
Մթերման ժամանակ կատարվող չորացման և այլ ծախսեր, ներառյալ կորուստներ	3427,5	16614,8	350	20398,3
Մթերման և իրացման ժամանակ առաջացած բացասական տարբերություն*	36111	-	27911,3	64022,3**
Ընդամենը	72738,5	100208,8	61609,4	234556,7

* Մթերման և իրացման ժամանակ առաջացած բացասական տարբերության տվյալները հաշվել ենք՝ հիմք ընդունելով ԳԳԱՀ-ից ստացված տվյալները և ընդհանուր հաշվապահական հաշվառման սկզբունքները (FIFO մեթոդ):

** Եթե մթերված հնդկացորենի մնացորդը իրացվի ներկայիս իրացման գներով, ապա կգումարվի ևս 27,870 մլն դրամ:

2017թ.-ի դրությամբ աշխարհի խոշոր արտադրողը ՌԴ-ն է (շուրջ 1,5 մլն տոննա արտադրանք)²⁸²: Հաշվի առնելով, որ ՀՀ-ն Եվրասիական տնտեսական միության անդամ է և որ մեզ ամենամոտ միջազգային շուկան ՌԴ-ի շուկան է, ուստի մեր վերլուծության մեջ դիտարկվում է նաև ՌԴ-ի շուկան:

ՌԴ-ում հնդկաձավարը ազգային ուտեստ է: Այն աշխարհում ամենաշատ քանակությամբ օգտագործում են այդտեղ, ինչը պայմանավորված է նաև նրանով, որ այդ երկրում այն առաջին անհրաժեշտության ապրանք է: Սակայն պետք է հաշվի առնել, որ ՌԴ-ում հնդկացորենը զգալի զիջում է այլ հատիկների: Օրինակ, 2018թ.-ին ՌԴ-ի ցորենի ցանքատարածությունները մոտ 26 անգամ ավելի էին, քան հնդկացորենինը, համախառն բերքը՝ 77 անգամ ավելի: Ի տարբերություն մնացած հատիկների՝ հնդկացորենի արտահանման շուկան փոքր է և հիմնականում օգտագործվում է ներքին սպառման համար, արտահանվում է հիմնականում Նախկին

²⁸⁰ ԼՂՀ զարնանացան մշակաբույսերի ցանքաշրջանառության խթանման 2016 թվականի ծրագիր, էջ 9, <https://goo-gl.ru/57v1>:

²⁸¹ Արցախի Հանրապետության Գյուղի և գյուղատնտեսության աջակցման հիմնադրամից տեղեկություններ ստանալու հարցման պատասխան, 18.01.2019թ.:

²⁸² Food and Agriculture Organization of the United Nations, FAOSTAT, <http://www.fao.org/faostat/en/#data/QC>:

Խորհրդային Միության երկրներ: Դա է պատճառը, որ մեկ տարվա երաշտը բերում է հնդկաձավարի գների կտրուկ աճի: Դա տեղի ունեցավ 2010 և 2014թթ.-ին, երբ երաշտային տարիներ էին, ինչից հետո հաջորդեց գների կտրուկ աճ: 2014թ.-ի երաշտից հետո գների կտրուկ աճ տեղի ունեցավ (տե՛ս Դիագրամ 1), և այդ միտումը շարունակվեց մինչև արտադրության կտրուկ ավելացումների և շուկայում առաջարկի գերազանցումը պահանջարկին: 2016 և 2017թթ.-ին հնդկացորենի ցանքատարածությունների ու համախառն բերքի (տե՛ս Աղյուսակ 6) կտրուկ ավելացումները հանգեցրին գների կտրուկ նվազման (տե՛ս Դիագրամ 1): Հնդկաձավարի տարեկան սպառումը ՌԴ-ում տատանվում է 400-450 հազ. տ կամ հնդկացորենի տեսքով՝ 570-650 հազ.տ.: Հնդկացորենի արտահանումը 2016-2017թթ.-ի գյուղատնտեսական տարում կազմել է 27 հազ. տ, հնդկաձավարինը՝ 52 հազ. տ, 2017-2018թթ.-ին՝ 90 հազ. տ հնդկացորեն և 69 հազ. տ հնդկաձավար²⁸³: Արտահանման տեմպերի ավելացումը միայն թեթևակի մեղմացրեց գերարտադրության տեմպերը: Գերարտադրության այդպիսի տեմպերը հանգեցրին գների կտրուկ նվազման ոչ միայն ՌԴ-ում, այլ նաև Նախկին Խորհրդային Հանրապետություններում: 2018թ.-ին ՌԴ-ի հնդկացորենի ցանքատարածությունները կրճատվեցին գերարտադրության, ինչպես նաև ոլորտը կարգավորող մարմնի միջամտության պատճառով:

Ամփոփելով կարող ենք հստակ պնդել, որ հայկական երկու հանրապետություններում գյուղատնտեսության հնդկացորենի խթանման քաղաքականություն մշակելիս անհրաժեշտ է առաջին հերթին մանրամասն վերլուծել ՌԴ-ի համապատասխան ոլորտը, որից հետո արդեն կայացնել անհրաժեշտ որոշումներ:


Աղյուսակ 6

ՌԴ հնդկացորենի ցանքատարածությունները, համախառն բերքը, միջին բերքատվությունը²⁸⁴

	2014թ.	2015թ.	2016թ.	2017թ.	2018թ.
Տարածությունները (հազ. հա)	1008	957	1205	1692	1044
Համախառն բերքը (հազ. տ)	662	861	1187	1525	930
Բերքատվությունը (գ/հա)	9,3	9,5	10,6	10,2	9,5

²⁸³ По оценке Института конъюнктуры аграрного рынка (ИКАР), <http://ikar.ru/press/4692.html>.

²⁸⁴ Посевные площади, валовой сбор, урожайность сельскохозяйственных культур в хозяйствах всех категорий РФ, http://www.gks.ru/wps/wcm/connect/rosstat_main/rosstat/ru/statistics/enterprise/economy/#.



Թեման վերլուծելով՝ կարելի է գալ այն եզրահանգման, որ հնդկացորենի արտադրության խթանմանը նպաստող քայլերը առաջացնում են արհեստական տնտեսական ակտիվություն: Սույն տնտեսական ակտիվությունը նպաստում է հնդկացորենի արտադրության մեջ շրջանառու միջոցներ մատակարարողների տնտեսական գործունեության ակտիվացմանը: Դրանց թվում են՝ սերմերը, պարարտանյութերը, թունաքիմիկատներ մատարարողներն ու նաև գյուղատնտեսական մեքենայացված աշխատանքների ծառայություններ մատուցող ընկերություններն ու անհատները, բեռնափոխադրման ծառայություններ մատուցող ընկերություններն ու անհատները: Տնտեսական ակտիվությունն անդրադառնում է նաև ֆերմերների վրա, բայց այն հիմնովին տարբերվում է արժեշդային մնացած մասնակիցների տնտեսական ակտիվությունից: Բերքատվության այդպիսի ցուցանիշներով, ինչպես նաև վերջնական քիչ շահույթ ստանալով կամ հաճախ ծախսածածկում ապահովող ցուցանիշներով դժվար է գրանցել, որ ունենք հնդկացորենի ինքնուրույն կազմակերպվող վերարտադրություն: Ներկա դրությամբ կարող ենք արձանագրել, որ վերջին տարիներին հնդկացորենի արտադրության խթանման ընթացքում ձևավորվել են էքստենսիվ ճանապարհով զարգացող, հնդկացորեն արտադրող ֆերմերային տնտեսություններ՝ իրենց բոլոր բացասական տնտեսական հետևանքներով: Դրանից զատ, միաժամանակ, հնդկացորենի արտադրության արժեշդային ունենք շահեկան դիրք ունեցող այլ մասնակիցներ, որոնց տնտեսական գործունեության արդյունքները, ի հաշիվ պետական այդպիսի մեծածավալ ուղղակի և անուղղակի աջակցությունների, գտնվում են բավարար ու նույնիսկ գերազանց վիճակում:

ՀՀ-ում և ԱՀ-ում արտադրված հնդկացորենն ունի առավելություն ՌԴ-ում, Ուկրաինայում արտադրված հնդկացորենի նկատմամբ: Այստեղ հնդկացորենի աճեցման ընթացքում չեն օգտագործում այնքան քիմիկատներ, ինչքան վերոնշյալ երկրներում. մենք գրեթե չենք օգտագործվում հերբեցիտներ: Կարևորն այն է, որ բերքահավաքից առաջ մոլախոտերի ու մշակաբույսի չորացման համար հերբեցիտներ չեն օգտագործվում: Մեր բնակլիմայական պայմանները թույլ են տալիս արտադրանք ստանալ առանց թունաքիմիկատների: Այդ առավելությունը պետք է օգտագործել, իսկ

²⁸⁵ Федеральная служба государственной статистики РФ, Цены и тарифы, Средние потребительские цены (тарифы) на товары и услуги, Крупа гречневая-ядрица, кг, <https://fedstat.ru/>.

պարենային անվտանգության տեսանկյունից անհրաժեշտ է հիմնվել տեղական արտադրության վրա:

Հնդկացորենի արտադրության որակական զարգացման համար անհրաժեշտ է ԱՀ-ում բուսաբուծության զարգացմանը խթանող առկա ծրագրերից բացի նաև՝

1. Վերլուծել շուկան: Ուսումնասիրելով ՀՀ և ԱՀ շուկաները՝ կարող ենք ասել, որ հնդկաձավարի պոտենցիալ սպառումը կազմում է մոտ 8000 տ կամ մոտ 10000-13000 տ հնդկացորեն: Եթե կարողանանք միջին բերքատվությունը հասցնել ու պահպանել 10-15 ց/հա շրջակայքում, ապա վարելահողերի հաշվեկշռում հնդկացորենի ցանքսի համար կստացվեն մոտ 6000-13000 հա ցանքատարածություններ: Սա մեր շուկայի ներուժն է և այս ներուժի ծավալի շուրջ արժեշտայի բոլոր մասնակիցների հետ խորհրդակցելով՝ կարելի է պլանավորել արտադրության տեմպերը, որպեսզի խուսափենք թերարտադրությունից կամ գերարտադրությունից: Արտադրության պլանավորման ժամանակ պետք է հաշվի առնել ՌԴ հնդկացորենի շուկայի միտումները:

2. Գիտելիք արտադրական բոլոր փուլերում ընդգրկված անձանց համար, որն իր մեջ ներառում է ագրոմշակույթի տիրապետում, ագրոքիզնետով զբաղվելու հմտություն, նորագույն տեխնոլոգիաների տիրապետում ու ներդրում, շարունակական վերապատրաստումներ: Դասընթացների կազմակերպման գործընթացն իր վրա կարող է վերցնել ԱՀ գյուղատնտեսության նախարարությունը Շուշիի տեխնոլոգիական համալսարանի հետ՝ անպայման ներգրավելով արտերկրի՝ մասնավորապես ՌԴ-ի մասնագետներին:

3. Պետություն - վերամշակող կազմակերպություններ - ֆերմերներ ամուր կապի ստեղծում՝ հիմնված փոխադարձ վստահության, հարգանքի, փոխհամաձայնեցված պայմանների վրա: ԱՀ-ում գործում է մեկ վերամշակող կազմակերպություն, որի շուրջ պետք է հավաքվեն հնդկացորեն արտադրող ֆերմերները: Մի շարք գործընթացներ իր վրա պետք է վերցնի վերամշակող կազմակերպությունը: Այս փոփոխությունը առաջնահերթ շահեկան է այդ կազմակերպության համար: Այդ գործընթացներն են՝ պետության ֆինանսական աջակցությամբ հնդկաձավարի տնտեսապես արդյունավետ արտադրության համար անհրաժեշտ սերմերի ձեռքբերումն ու տրամադրումը ֆերմերներին՝ ինքնաթոծքով: Երկրորդ՝ հնդկացորենից ստացված մեղրի մթերման ու իրացման կազմակերպումը: Սա մեծ ազդակ կլինի մեղվաբույծներին՝ սկսելու հնդկացորենի ցանքատարածությունների մոտ տեղադրել իրենց փեթակները, ինչն էականորեն կազդի բերքատվության ցուցանիշի վրա: Երրորդ՝ վերամշակող կազմակերպությունը պետք է աշխատի ֆերմերների հետ՝ պայմանագրային հիմունքներով: Այդ գործընթացին նպաստելու համար ցանկալի է պետության խրախուսանքը՝ սուբսիդավորման մեխանիզմներով մթերող կազմակերպությանը տրամադրելով մատչելի բանկային վարկային գումարներ, որպեսզի կարողանան մթերված հնդկացորենի դիմաց վճարումներ կատարել ֆերմերներին:

4. ՀՀ-ում և ԱՀ-ում արտադրված հնդկացորենից ստացված հնդկաձավարի արտադրության համար առկա հարկային արտոնություններից բացի սահմանել նաև հավելյալ արտոնություններ, ինչը պետության կարիքների համար հնդկաձավարի ձեռքբերման տեղերներին արտոնյալ պայմաններով հանդես գալու առավելություն է:

2018թ.-ի փետրվարի 7-ին ԱՀ Կառավարությունը ընդունեց Արցախի Հանրապետությունում գյուղատնտեսության զարգացման վերաբերյալ հայեցակարգ, որը ներառում է նաև բուսաբուծության զարգացման ուղղությունը: Կարծում ենք, նշված հայեցակարգային առաջարկների ներառումը Արցախի Հանրապետությունում բուսաբուծության համալիր զարգացման ծրագրում էական ազդեցություն կունենա դրա արդյունավետության բարձրացմանը:

THE PROBLEM OF PRODUCTION AND PROCESSING OF BUCKWHEAT IN THE CONTEXT OF ARTSAKH REPUBLIC'S FOOD SECURITY PROVIDING

ARAM VERDYAN

*Applicant of Shushi Technological University,
Stepanakert, The Republic of Artsakh (NKR)*

In this article the ways of expansion of buckwheat production in Artsakh basing on both Armenian and international experiences are researched. The buckwheat cultivation in the Republic of Artsakh has increased since 2016. The purpose of the research is to find out the role of buckwheat in food security ensuring, the effectiveness of state support programs and its impact on buckwheat producers and processors. In the analysis a number of issues related to the topic under discussion, namely the lack of professional knowledge among farmers, incomplete mastery of technology, the supply of inefficient turnaround tools in production, the absence of contact between producer and processor have been raised. The empiric method and professional logic were used in order to gain a general and objective analysis with the available baseline data. The results of the investigation undertaken allow suggesting possible ways of overcoming the difficulties under discussion. The suggestions are connected with the farmer-processor-state cooperation structuring model, the flexible planning of the production rates volumes, proficient economic entities and protection of national producer's interests through economic mechanisms provision.

Keywords: *buckwheat, buckwheat groats, honey, profitability, value chain, market, crop rotation.*

ПРОБЛЕМЫ ПРОИЗВОДСТВА И ПЕРЕРАБОТКИ ГРЕЧИХИ В КОНТЕКСТЕ ОБЕСПЕЧЕНИЯ ПИЩЕВОЙ БЕЗОПАСНОСТИ РЕСПУБЛИКИ АРЦАХ

АРАМ ВЕРДЯН

*соискатель Шушинского технологического университета,
г. Степанакерт, Республика Арцах (НКР)*

В данной статье рассматриваются пути расширения производства гречихи в Арцахе, опираясь как на армянский, так и на международный опыт. В Республике Арцах гречневую культуру в больших масштабах начали выращивать с 2016 года. Цель исследования – выяснить роль гречихи в обеспечении продовольственной безопасности республики, определить эффективность программ государственной поддержки и их влияние на производителей и переработчиков гречихи. В ходе анализа был поднят ряд проблем, связанных с недостатком профессиональных знаний у фермеров, неполным владением технологией, поставками неэффективных оборотных средств в производстве, отсутствием связи между производителем и переработчиком. В исследовании были использованы эмпирический метод и профессиональная логика для того, чтобы с помощью существующих базисных данных можно было получить общий и объективный анализ. Исходя из результатов исследования, мы выступаем с реальными предложениями для решения этой проблемы. Представленные в статье предложения связаны с построением модели партнерства между фермером, переработчиком и государством, гибким планированием объемов производства, наличием основанных на знаниях хозяйствующих субъектов, защитой интересов национальных производителей с помощью экономических механизмов.

Ключевые слова: *гречиха, гречневая крупа, мед, прибыльность, цепочка создания стоимости, рынок, севооборот.*

ՀՀ-ԻՆ ԲՆՈՐՈՇ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ. ԱՂԱՅՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՅՂ ՌԻՍԿԵՐԻ ՉՄՊՄԱՆ ՄԵԽԱՆԻՉՄ*

ՀՏԴ 368.5(479.25)

ԼԵՎՈՆ ԲՈՉԱՐՅԱՆ

*Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի
բանկային գործի և ապահովագրության ամբիոնի ասպիրանտ,
բ.Երևան, Հայաստանի Հանրապետություն
levonkocharyan@outlook.com*

Գյուղատնտեսությունը համարվում է ՀՀ տնտեսության կարևորագույն ոլորտներից մեկը: 2018թ.-ի ՀՀ ՀՆԱ-ն կազմել է 6,002,747,800,000 ՀՀ դրամ, որից 926,360,500,000 ՀՀ դրամը, կամ ՀՆԱ 15.4%-ը կազմել է գյուղատնտեսությունը²⁸⁶: Այդ ոլորտը ՀՀ ամենախոցելի, ամենափխրուն և ֆորս մաժորային իրավիճակներից ամենաշատ ենթարկվող ոլորտն է: Գրեթե բոլոր տեսանկյուններից՝ ներառյալ պարենային անվտանգության, պաշտպանության, սոցիալական, սպառողական և այլն, գյուղատնտեսությունը կարելի է համարել Հայաստանի համար ամենակարևոր ոլորտը: Հետևաբար, անհրաժեշտ է ապահովել այդ ոլորտի կայուն պարզացումը և պաշտպանել ռիսկերից: Գրեթե ամեն տարի ՀՀ գյուղատնտեսությունը ենթարկվում է այնպիսի տարերային աղետների, ինչպիսիք են՝ կարկուտը, երաշտն ու ցրտահարությունը, տարբեր տեսակի վարակներն ու հիվանդությունները, իսկ վերջին տարիներին ավելացել են նաև հրդեհի ռեպերը: Սույն հոդվածում կփորձենք բացահայտել Հայաստանին բնորոշ գյուղատնտեսական ռիսկերը, դրանց զսպման ու կանխարգելման մեխանիզմները միջազգային պրակտիկայում, կեննարկենք, թե բացահայտված ռիսկերից որո՞նք են հնարավոր ապահովագրել:

Բանալի բառեր՝ *ապահովագրություն, գյուղատնտեսություն, ռիսկեր, մշակաբույս, աղետ, կարկուտ, երաշտ, ցրտահարություն:*

Համաձայն արտադրողների, փորձագետների ու գյուղատնտեսների ներկայացրած նախնական տվյալների՝ Հայաստանում հիմնական ընկալվող ռիսկերն են կարկուտը, ցրտահարությունը, սառը հոսանքներն ու երաշտը²⁸⁷:

Համաձայն ՄԱԿ Չարգացման Ծրագրի կողմից կատարված հետազոտության ու ուսումնասիրության՝ ցրտահարության ժամանակ վեգետացիոն շրջանի ընթացքում օդի ջերմաստիճանը երկրի մակերևույթին մոտ կամ երկրի մակերևույթին իջնում է մինչև սառեցման վիճակի (0°C) կամ ավելի ցածր: Եղամային ցրտահարության ժամանակ սառցաբյուրեղներ են հայտնվում օբյեկտների վրա՝ օդից ջրային գոլորշու

* Հոդվածը ներկայացվել է 16.04.2019թ., գրախոսվել՝ 26.04.2019թ., տպագրության ընդունվել՝ 17.06.2019թ.:

²⁸⁶ https://www.armstat.am/file/article/sv_12_18a_122.pdf:

²⁸⁷ Կարիքների գնահատում կլիմայական ռիսկերը մեղմելու համատեքստում Հայաստանում գյուղատնտեսական ապահովագրության ներդրման համար, Պատվիրատու՝ ՄԱՉԾ հայաստանյան գրասենյակ, «Տեղական զարգացման բարելավված պլանավորման միջոցով կլիմայի փոփոխության ռիսկերի մեղմումը գյուղական համայնքներում» ՄԱՉԾ-ԵԿԿԲ Ծրագիր, հեղինակ՝ Կլեմանս Տատեն-ժալերան:

ուղղակի սուբյեկտի միջոցով: «Սև ցրտահարությունը», որը տեղի է ունենում ցածր խոնավության ու ցածր ջերմաստիճանի պայմաններում, սակայն առանց սառույցի ակնհայտ առաջացման, հանգեցնում է որոշ օրգանիզմների ու հյուսվածքների տեսանելի մեռուկացման (սեկրոզի): Գարնանը ցրտահարությունը վնասում է նուրբ հյուսվածքները: Բազմամյա բույսերի համար ձմեռային ցրտահարությունը վնասում է բոլոր օրգանները, այդ թվում՝ արմատները – դա «սպանող ցրտահարությունն» է:

Ցրտահարությունը կամ սառչելը հանգեցնում են մշակաբույսի վնասման, որովհետև ջերմաստիճանը նվազում է բույսի դիմացկունության աստիճանից ցածր: Կյո երևույթը հիմնականում տեղի է ունենում, երբ ջերմաստիճանը իջնում է մինչև 0 °C-ին մոտ կամ գիշերային սառցակալման դեպքում (ռադիացիոն ցրտահարություն) կամ ավելի սառն օդային զանգվածների տեղաշարժման ու ազդեցության դեպքում: Կլիմայական այդպիսի «աղետների» ի հայտ գալը այնպիսի ժամանակահատվածում, երբ բույսերը դիմացկուն չեն (վաղ կամ ուշ ձմռանը և վաղ գարնանը, վաղ աշնանը), և բույսերի հյուսվածքները կարող են վնասվել ցրտահարությունից, պատճառում են առանցիկ վնասներ, որոնք կարող են ազդեցություն ունենալ ոչ միայն տվյալ տարվա բերքի, այլև հետագա 2-3 տարիներին սպասվելիք բերքի վրա: Բույսերի բջիջները սառչում են և անդամալիորեն վնասվում:

Ցրտահարության դեմ հնարավոր է պայքարել ակտիվ ու պասիվ եղանակով²⁸⁸: Ըստ ՄԱԾՏ հետազոտության՝ մինչդեռ ակտիվ միջոցները (տաքացուցիչների կամ ցնցուղների կիրառում) պահանջում են էներգիայի սպառում և կարող են ծախսատար լինել, պասիվ մեթոդները կարող են կիրառության ու հարմարեցման առումով լինել ավելի ծախսարդյունավետ և դիտարկվել որպես ապահովագրության հետ համադրաբար կիրառելի միջոցներ: Պասիվ միջոցները ներառում են տեսակների ընտրությունը ֆենոլոգիական դիտարկումների ժամանակի համաձայնեցման համար, բերքի տարածքի ընտրությունը, լանդշաֆտի և միկրոկլիմայի փոփոխությունը, մուգման կարգավիճակի վերահսկումը և հողերի կառավարման զարգացման խթանումը ռիսկի մեղմման նպատակով: Կյոպիսով ցրտահարության որոշ երևույթներ կարող են կանխատեսվել և ակնկալելի լինել:

Յաշվի առնելով ցրտահարության հնարավոր երևույթի և ազդեցության բազմազանությունը՝ ապահովագրության նպատակով ցրտահարության սահմանումը կարող է խնդրահարույց լինել: Կարիքները գնահատելու նպատակով ապահովագրության ծածկույթի, հնարավոր ծախսերի ու պրոդուկտի տեսակի առումով անհրաժեշտ են ցրտահարման ռիսկերի վերաբերյալ հավելյալ տվյալներ ու քարտեզագրում՝ ըստ մարզերի ու բերքի տեսակի:

Որպես կանոն՝ ցրտահարության ապահովագրությունը ամենադժվարն ու ամենաթանկն է՝ ի տարբերություն կարկուտի ու վնասների այլ տեսակների²⁸⁹: Ցրտահարությունը հիմնականում ընդգրկում է ավելի մեծ տարածքներ, պատճառում է ավելի մասշտաբային վնասներ, իսկ գյուղացին ու ապահովագրական ընկերությունները հայտնվում են ավելի խոցելի վիճակում: Ցրտահարության ռիսկերի ապահովագրության ամենապրակտիկ ռիսկը «Գարնանային ցրտահարություն» ռիսկն է, քանի որ ձմռան ցրտահարությունը դուրս է ապահովագրության սկզբունքներից՝ կանխատեսելի լինելու պատճառով: Ցրտահարությունը ավելի անկանխատեսելի է և ավելի շատ վնասներ է հասցնում գարնանը, հետևաբար ակտուալ է հենց գարնանային ցրտահարության ռիսկը:

Կարկուտը ի հայտ է գալիս ամպրոպաբեր ամպերի առկայության պայմաններում՝ ամպրոպների ու մթնոլորտային անկայունության ժամանակ: Երբ

²⁸⁸ Risks in Agriculture, Farmer's perspective, Authors: **Parikh**, Alka, 2017.

²⁸⁹ Agricultural Risk Transfer: From Insurance to Reinsurance to Capital Markets, Roman Marco Hohl, ISBN: 978-1-119-34563-3.

օրը խոնավ է ու անկայուն, օդի՝ դեպի վեր շարժման առկայությամբ ջրի կաթիլները, բախվելով տաք շերտերին, սառչում են և կազմավորում կարկտահատիկներ: Կարկտի հատիկները չափով կարող են լինել մի քանի մմ կամ մի քանի սմ 5-ից մինչև 50 մմ: Որքան մրրիկի ժամանակ ավելի ուժեղ է օդի շարժը դեպի վեր այնքան ավելի խոշոր են կարկտահատիկները: Երբ դրանք թափվում են ամպերից, կարող են հասնել վայրկյանում ինը մետր արագությունից (մ/վ) (մեկ սմ կարկտահատիկ) մինչև 48 մ/վ արագության (ուժ սմ կարկտահատիկներ):

Կարկտի ազդեցությունը բերքի վրա կարող է ավերիչ լինել: Բերքը կարող է ամբողջովին (100%-ով) վնասվել: Վնասի աստիճանը կախված է ուժգնությունից և այն քանից, թե արտադրության ցիկի որ փուլում է կարկտը տեղում:

- վաղ սեզոնին որոշ մրգեր կարող են թափվել կամ վնասվել: այդուհանդերձ, եթե որոշ մրգեր վնասվում են, որոշ բողբոջներ հնարավոր է դեռևս կարողանան տալ պտուղներ (փոխհատուցող աճ): Այդ դեպքում բերքը կարող է լինել սպասվածից քիչ:

- վաղ ամռանը, երբ միզն ու բանջարեղենը դեռևս հավաքված չեն, ամբողջ բերքը կարող է կորսվել:

- ուշ ամառային փոթորիկների ժամանակ շատ խոցելի են նաև խաղողի այգիները:

Եթե մրգերն ու բանջարեղենը վնասվում են կարկտից, դրանց որակը և, հետևաբար, գինը հնարավոր է ավելի ցածր լինի՝ նվազեցնելով արտադրողի եկամուտը: Ավելին, կարկտի հարվածած ծառերը կարող են ենթակա լինել վնասատուների ու հիվանդությունների, քանի որ կարկտի ծեծած կետերը կարող են հիվանդությունների ներթափանցման ուղիներ դառնալ: Կարկտի ազդեցությունը կարող է գնահատվել տեսողական ճանապարհով, եթե ազդեցության գործոնները փաստաթղթերով արձանագրված են մասնագետ գյուղատնտեսների կողմից:

Հայաստանում կարկտահողմեր լինում են շոգ սեզոնին՝ մայիսից օգոստոս ժամանակահատվածում: Կարկտ առավել հաճախ սպասվում է մայիս-հունիսին, իսկ խոշոր հատիկներով՝ հուլիս-օգոստոսին: Կարկտներն առավել հաճախակի են Շիրակում, Լոռիում, Տավուշում, Արագածոտնի բարձրադիր գոտիներում, Գեղարքունիքում ու Կոտայքի լեռնային գոտիներում, միջինը՝ տարեկան 4-5 դեպք: Հովտային գոտիներում կարկտի հաճախականությունն ավելի ցածր է՝ տարեկան 1-2 անգամ:

Կարկտի կանխարգելման հարցում ամենակիրառելի ձևերը ամպերի ցրման ու հակակարկտային կայանների կիրառումն է, սակայն դրանց արդյունավետության վերաբերյալ ապացուցված տվյալներ չկան²⁹⁰: Արտադրողները կարող են կիրառել հակակարկտային ցանցեր, եթե պաշտպանության միջոցառումներում ներդրում կատարելը հանգեցնում է ավելի մեծ ծախսարդյունավետության, քան ժամանակակից պտղատու և խաղողի այգիների դեպքում ռիսկը փոխանցելը: Որակյալ ցանցերը շատ հաճախ կարկտի ռիսկը նվազեցնում են մինչև 100%²⁹¹:

Կարկտի ռիսկը ապահովագրության տեսանկյունից ամենապրակտիկն է ու կիրառելի²⁹²: Կարկտի հետևանքները ավելի հեշտ են երևում, կարկտի վնասները ավելի հեշտ են գնահատվում: Կարկտը դիսկրետ է, տեսանելի ու շոշափելի՝ ի տարբերություն ցրտահարության ու երաշտի: Հետևաբար, այն ապահովագրողների կողմից ապահովագրության ենթակա «ամենացանկալի» ռիսկն է՝ չնայած պատճառած ահռելի վնասների: Կարկտի ապահովագրության սակագները ավելի ցածր են, իսկ վնասների կարգավորման ծախսերը՝ մատչելի:

²⁹⁰ MANAGING RISK in farming by David Kahan, FOOD AND AGRICULTURE ORGANIZATION OF THE UNITED NATIONS, Rome 2008

²⁹¹ Hail cover for pilot in Armenia, October 29th 2018, Michael J. McCord

Գյուղատնտեսության դեպքում երաշտը հետևանք է օդերևութաբանական (կամ հիդրոլոգիական) տարբեր իրավիճակների՝ տեղումների սակավություն, փաստացի և հնարավոր գոլորշիացման ու տրանսպիրացիայի միջև տարբերություններ, հողի խոնավության դեֆիցիտ, ստորերկրյա ջրերի կամ ջրամբարների մակարդակի նվազում, և դրանց ազդեցություններն անմիջապես չեն տեղի ունենում: ՅՕԿ զեկույցում փորձագետն ընդգծում է, որ «*Երաշտը պետք է դիտարկվի կոնկրետ տարածքում տեղումների և գոլորշիացման ու տրանսպիրացիայի հավասարակշռության միջին երկարաժամկետ պայմանների հետ համեմատությամբ: Դա կապված է նաև ժամանակի հետ (ի հայտ գալու գլխավոր սեզոնը, անձրևների սեզոնի մեկնարկի ուշանալը, անձրևների հայտնվելը՝ կապված բերքի աճի հիմնական փուլերի հետ) և անձրևների արդյունավետությունը (այն է՝ անձրևների ինտենսիվությունը, անձրևելու երևույթների քանակը)*»:

ՀՀ-ում սովորաբար երաշտ է կանխատեսվում հուլիս-սեպտեմբեր ամիսներին, բայց լինում է գարնանն ու աշնանը: Մեծամասամբ երևույթը նկատվում է Արարատյան դաշտավայրում և, երբեմն, Արարատի նախալեռնային հատվածում, Տավուշի մարզում ու Սյունիքի հովիտներում:

ՀՀ-ն վերջին շրջանում ականատես է եղել երաշտի երկու մասշտաբային դեպքի՝ 2000 և 2006 թվականներին՝ երաշտ է գրանցվել Հայաստանի ողջ տարածքում՝ Նույնիսկ ծովի մակերևույթից 3,000 մ բարձրությամբ տարածքներում: Երաշտի հաճախականությունը մոտավոր հաշվարկներով կարող է լինել 2-4 տարին մեկ անգամ. կոնկրետ տվյալների համար անհրաժեշտ են ավելի շատ մանրամասներ:

Երաշտի սահմանումը ապահովագրության նպատակով կարող է խնդրահարույց լինել, և Հայաստանում այդ ռիսկի վերաբերյալ տեղեկություններն ու հետազոտություններն ավելի սակավ են հանդիպում, քան այլ ռիսկերի դեպքում:

Երաշտի ապահովագրությունը ավելի բարդ ու համապարփակ միջոցառում է, քանի որ դժվար է հաստատել պատճառահետևանքային կապը վնասի ու երաշտի միջև:

Որպես ամփոփում՝ նշենք, որ գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրության հարցում կարևոր են հետևյալ կետերը.

1. Հստակ բացահայտել վնասի առաջացման պատճառը՝ կարկուտ է, երաշտ, թե՛ հիվանդություն, վարակ: Շատ հաճախ ցրտահարության ու վարակի ֆիզիկական ախտանիշերը նման են, և միայն պրոֆեսիոնալ գյուղատնտեսները կարող են դրանք տարանջատել:

2. Կախված հատուցման մեխանիզմից՝ որոշել վնասի հստակ չափը: Այստեղ կարևոր է իմանալ, թե որն ենք համարում վնաս՝ միևնույն բերքի վնասվելը ծախսած գումարները, թե՛ ապագայում վաճառվելիք բերքի շուկայական արժեքը կամ հետագայում նմանատիպ բերք ստանալու համար անհրաժեշտ ծախսերը:

Ուսումնասիրելով ՀՀ կլիմային հատուկ գյուղատնտեսական ռիսկերը՝ կարելի է եզրակացնել, որ գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրությունը մեր երկրում ներդնելը բարդ ու երկարաժամկետ պրոցես է՝ հաշվի առնելով ռիսկերի հաճախականությունը, կլիմայական բազմազանությունը, վնասների մեծ չափերը, ապահովագրական ընկերությունների նկատմամբ մարդկանց անվստահությունը, վիճակագրական տվյալների պակասը, անճշտությունը և այլն: Սակայն դիտարկելով հարևան երկրների հաջող փորձը՝ միանշանակ հարկ է նշել, որ ՀՀ-ում նույնպես հնարավոր է ներդնել համապարփակ ապահովագրություն գյուղացիների պաշտպանության ու ռիսկերի զգալի համար:

SPECIFIC AGRICULTURAL RISKS IN ARMENIA. INSURANCE, AS A RISK MITIGATION MECHANISM

LEVON KOCHARYAN

*Armenian State University of Economics,
PhD Student of the Chair of Banking and Insurance,
Yerevan, Republic of Armenia*

Agriculture is one of the most important spheres of Armenian economy. The GDP of Armenia in 2018 was AMD 6,002,747,800,000, out of which AMD 926,360,500,000, or the 15.4% of the GDP is from agricultural activities. This sphere is the most vulnerable and fragile, also the most affected by force major. Almost from all points of view, including the food security, labor, sociological, customer, etc, agriculture surely is the most important line of Armenian economical and sociological life. Hence, necessity emerges to take care of stable development and keep it safe from different hazards. Almost every year the agriculture of the Republic of Armenia is being affected by different natural catastrophes, such as hail, frost, drought, different types of illnesses and infections, also fires, which have significantly increased during the past few years. This article discovers the specific risks in agriculture of Armenia, finds mitigation mechanisms and discusses the possibility of insurance to control the risks.

Key words: *Insurance, agriculture, risks, crop, catastrophes, hail, drought, frost.*

ХАРАКТЕРНЫЕ ДЛЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ СЕЛЬСКОХОЗЯЙСТВЕННЫЕ РИСКИ: СТРАХОВАНИЕ КАК МЕХАНИЗМ СНИЖЕНИЯ ЭТИХ РИСКОВ

ЛЕВОН КОЧАРЯН

*аспирант кафедры банковского дела и страхования,
Армянского государственного экономического университета,
г.Ереван, Республика Армения*

բարձր պաշտոններում նշանակումներ կատարելը, ՀՀ Սահմանադրական դատարանի չորս անդամ նշանակելը, ապա այժմ ՀՀ Նախագահի իրավագոր է Ազգային ժողովին ներկայացնելու Սահմանադրական դատարանի երեք դատավորի թեկնածություն և կատարելու պաշտոնատար անձանց ժամանակավոր նշանակում: Այսպես, եթե Ազգային ժողովը եռամսյա ժամկետում չի ընտրում հետևյալ պաշտոնատար անձանց՝ Բարձրագույն դատական խորհրդի անդամներին, գլխավոր դատախազին, Մարդու իրավունքների պաշտպանին, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահին և մյուս անդամներին, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամներին, Հաշվիչ պալատի նախագահին և մյուս անդամներին, Կենտրոնական բանկի նախագահին և խորհրդի մյուս անդամներին, ապա մինչև Ազգային ժողովի կողմից նրանց ընտրությունը Հանրապետության նախագահը նշանակում է ժամանակավոր պաշտոնակատարներ: Իր լիազորություններն իրականացնելիս Հանրապետության նախագահն ընդունում է հրամանագրեր ու կարգադրություններ: Նախագահի հրամանագրերն ուղղված են պետության գլխի սահմանադրական լիազորությունների իրականացմանը, օրենքների պահանջների կատարմանը: Նախագահի հրամանագրերն ու կարգադրությունները չեն կարող հակասել Սահմանադրությանը, սահմանադրական օրենքներին, հակառակ դեպքում Սահմանադրական դատարանի կողմից սահմանված կարգով կճանաչվեն հակասահմանադրական, ուստի և՛ անվավեր: Պետության գլխի համար նախատեսված սահմանադրաիրավական ամենախիստ սանկցիան պաշտոնանկությունն է: ՀՀ Սահմանադրության 140-րդ հոդվածը սահմանում է, որ Հանրապետության նախագահն անձեռնմխելի է: Հանրապետության նախագահն իր լիազորությունների ժամկետում և դրանից հետո չի կարող հետապնդվել և պատասխանատվության ենթարկվել իր կարգավիճակից բխող գործողությունների համար: Իր կարգավիճակին չառնչվող գործողությունների համար Հանրապետության նախագահը կարող է պատասխանատվության ենթարկվել միայն իր լիազորությունների ավարտից հետո: Հատկանշական է, որ անձեռնմխելիությունը տարածվում է միայն նախագահի կարգավիճակից բխող գործողությունների վրա, իսկ իր կարգավիճակի հետ չկապված գործողությունների համար նա կարող է պատասխանատվության ենթարկվել լիազորությունների ավարտից հետո: Պետության գլխի անձեռնմխելիությունն ապահովում է նախագահի կողմից իր սահմանադրական լիազորությունների ազատ, անկաշկանդ ու միաժամանակ պատասխանատու իրականացումը և երաշխիք դառնում պետության գլխի անխափան ու արդյունավետ գործունեության համար: Միաժամանակ հարկ է նշել, որ Հանրապետության նախագահի անձեռնմխելիությունը բացարձակ չէ: Այսպես՝ ՀՀ Սահմանադրության 141-րդ հոդվածի համաձայն՝ «Հանրապետության նախագահը կարող է պաշտոնանկ արվել պետական դավաճանության, այլ ծանր հանցագործության կամ Սահմանադրության կոպիտ խախտման համար»: Կարծում ենք, որ հիմք ընդունելով ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածում սահմանված հանցագործությունների դասակարգման չափանիշները, որոնց համաձայն պետական դավաճանությունը ոչ թե ծանր, այլ առանձնապես ծանր հանցագործություն է, պետք է ՀՀ Սահմանադրությամբ պետական դավաճանությունից հետո նախատեսել «այլ առանձնապես ծանր, ծանր հանցագործություն կատարելը»: Ինչ վերաբերում է «Սահմանադրության կոպիտ խախտման» հիմքին, ապա այն առաջին անգամ նախատեսվել է ՀՀ Սահմանադրության 2015թ.-ի փոփոխությունների արդյունքում: Կարծում ենք, որ նշված ձևակերպումը հայեցողության լայն հնարավորություն է ընձեռում, ուստի ՀՀ Սահմանադրական դատարանը համապատասխան հիմքի (հիմքերի) առկայության դեպքում ՀՀ Ազգային ժողովի դիմումի հիման վրա պետք է հիմնավոր որոշում ընդունի կատարված արարքը (արարքները) որպես «Սահմանադրության կոպիտ խախտում» որակելու մասին:

Տարբեր պետությունների նախագահների սահմանադրական կարգավիճակի տարրերի համեմատադրական վերլուծությունը ցույց է տալիս, որ պաշտոնանկությունը նախագահի նեգատիվ սահմանադրական պատասխանատվության ամենախիստ միջոցն է, որի կիրառմանը կարող են հետևել իրավաբանական պատասխանատվության այլ տեսակներ: Այսպես՝ պետական դավաճանությունը կամ այլ առանձնապես ծանր կամ ծանր հանցագործությունը իրավաբանական փաստ է պաշտոնանկ արված նախկին նախագահին օրենքով նախատեսված կարգով քրեական պատասխանատվության ու պատժի ենթարկելու համար: Բոլոր պետություններում նախագահի նկատմամբ պաշտոնանկությունը կարող է կիրառվել միայն Սահմանադրությամբ նախատեսված հիմքերի առկայության դեպքում: Պաշտոնանկությունը նախատեսված է կառավարման հանրապետական ձև ունեցող երկրների մեծամասնությունում, մասնավորապես այն ամրագրված է Հայաստանի, Ռուսաստանի, Գերմանիայի, Իռլանդիայի, Բուլղարիայի, Խորվաթիայի, Լեհաստանի սահմանադրություններում: Եվ գրեթե ամենուր, որպես պաշտոնանկության հիմքեր, նշվում են պետական դավաճանությունը կամ այլ հանցագործության կատարումը, Սահմանադրության «ցանկացած խախտումը» (Լեհաստան, Խորվաթիա, Մակեդոնիա, Բուլղարիա), «կոպիտ կամ լուրջ խախտումը» (Ռումինիա, Չեխիա, Սլովենիա, Հայաստան), «իր պաշտոնավարության ընթացքում Սահմանադրության կամ այլ օրենքների խախտումը» (Հունգարիա): Լիտվայի Սահմանադրության 74-րդ հոդվածի համաձայն՝ Սահմանադրության կոպիտ խախտման, երդումը չկատարելու համար կամ հանցագործության կատարման դեպքում պառլամենտը կարող է պատգամավորների ընդհանուր թվի ձայների 3/5-ով պաշտոնից ազատել երկրի նախագահին: Իսկ Ավստրիայի Հանրապետության Նախագահը կարող է պաշտոնանկ արվել համաժողովրդական քվեարկության արդյունքների հիման վրա (Ավստրիայի Հանրապետության դաշնային սահմանադրական օրենքի 60-րդ հոդվածի 6-րդ մաս)³⁴⁰: ՀՀ Սահմանադրությունը նախատեսում է որոշակի պայմաններ, որոնց առկայության դեպքում հնարավոր է նեգատիվ սահմանադրական պատասխանատվության նշված միջոցի կիրառումը: Այսպես, ՀՀ Նախագահը կարող է պաշտոնանկ արվել, եթե.

1. կատարել է պետական դավաճանություն, այլ (առանձնապես ծանր-Ռ. Հ.) ծանր հանցագործություն կամ Սահմանադրության կոպիտ խախտում,
2. Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունել է որոշում՝ սահմանադրական դատարանին դիմելու մասին,
3. սահմանադրական դատարանը տվել է եզրակացություն ՀՀ Նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի առկայության մասին,
4. այդ եզրակացության հիման վրա Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով կայացրել է որոշում՝ ՀՀ Նախագահին պաշտոնանկ անելու մասին:

Որպես կանոն, Նախագահի պաշտոնանկությունը բարդ ընթացակարգ է, ինչը պահանջում է օրենսդիր մարմնի անդամների ձայների տարբեր համամասնություններ, այսպես՝ կեսից ավելին (Շվեդիա), առնվազն 2/3-ը կամ 2/3-ից ավելին (Հայաստան, Ռուսաստան, Լեհաստան, Ռումինիա, Մակեդոնիա, Բուլղարիա, Խորվաթիա), 3/5-ը (Լիտվա): Պատգամավորները, նախաձեռնելով նախագահի պաշտոնանկության գործընթացը, որպես կանոն, դիմում են սահմանադրական դատարան (սահմանադրական տրիբունալ, գերագույն դատարան, այլ բարձր ատյան)՝ եզրակացություն (որոշում, վճիռ) ստանալու համար (Հայաստան, Ռուսաստան, Չեխիա,

³⁴⁰ Տե՛ս Конституции государств Европы, М., 2001; Конституции государств Восточной Европы, М., 1996; Новые Конституции стран СНГ и Балтии // Сборник документов, М., 1998.

Ռումինիա, Մակեդոնիա, Սլովակիա, Սլովենիա, Ֆինլանդիա և այլն)³⁴¹: Ընդ որում, պետությունների մեծամասնությունում Նախագահի պաշտոնանկության գործընթացը նախաձեռնում է օրենսդիր մարմինը, իսկ որոշում է ընդունում սահմանադրական դատարանը: Օրինակ, Լիտվայի Հանրապետության սահմանադրական դատարանը Սահմանադրության կոպիտ խախտում որակեց Նախագահ Ռուլանդաս Պասկասի գործողությունները՝ կապված ֆինանսական աջակցության դիմաց Լիտվայի քաղաքացիության շնորհման, պետական գաղտնիքները չպահպանելու և մասնավոր անձանց ու տնտեսավարող սուբյեկտների գույքային հարաբերությունների վերաբերյալ որոշումներ ընդունելու գործընթացին ապօրինի միջամտելու հետ³⁴²: Եվ արդյունքում նախագահի նկատմամբ կիրառվեց իմպիչմենտի ընթացակարգ, ու նա ելքարկվեց նեգատիվ սահմանադրական պատասխանատվության խիստ միջոցի՝ պաշտոնանկության: Ինչպես վերը նշվեց, նախագահի սահմանադրական պատասխանատվության հիմք է պետական դավաճանության կամ այլ (առանձնապես ծանր-Ռ.Հ.) ծանր հանցագործության կատարումը: Ամերիկայի Միացյալ Նահանգների Սահմանադրության 3-րդ բաժնի 3-րդ հոդվածում դավաճանությունը սահմանվում է որպես «Պատերազմի վարում ԱՄՆ-ի դեմ, ԱՄՆ-ի թշնամիների կողմն անցնելը և նրանց աջակցելը»³⁴³: Ֆրանսիայում պետական դավաճանությունը Ֆրանսիայի Նախագահի կողմից իր սահմանադրական պարտականությունների դիտավորյալ ու կոպիտ խախտումն է³⁴⁴: ՀՀ Սահմանադրությունը չի բովանդակում «պետական դավաճանության» և «այլ ծանր հանցագործության» հանցակազմերը: Իսկ ըստ ՀՀ քրեական օրենսգրքի 299-րդ հոդվածի՝ պետական դավաճանության հանցակազմի օբյեկտիվ կողմը կազմում են թշնամու կողմն անցնելը, լրտեսությունը, օտարերկրյա պետությանը, օտարերկրյա կազմակերպությանը կամ դրանց ներկայացուցիչներին պետական գաղտնիք հանձնելը, թշնամական գործունեություն իրականացնելու համար այլ օգնություն ցույց տալը, որը կատարել է ՀՀ քաղաքացին՝ ի վնաս Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության, տարածքային անձեռնմխելիության կամ արտաքին անվտանգության³⁴⁵: Աշխարհում գոյություն ունի Նախագահի պաշտոնանկության երեք ձև.

1) Պառլամենտական ձև, որը նախատեսված է, Ավստրիայում, Մոլդովայում, Վիետնամում, այլ հանրապետություններում: ԱՄՆ-ի Սահմանադրության համաձայն՝ Նախագահի իմպիչմենտի ընթացակարգը տեղի է ունենում Կոնգրեսում, որին կարող են հաջորդել դատավարություններ դատարաններում: Որպես կանոն, եթե խորհրդարանը երկպալատանի է, ապա պալատների գործառույթները տարանջատված են: Մի պալատը ներկայացնում է մեղադրանքը (օրինակ, Ներկայացուցիչների պալատը՝ ԱՄՆ-ում, Պետական դոման՝ ՌԴ-ում), մյուսը քննարկում է այն և որոշում կայացնում երկրի Նախագահի պաշտոնանկության կամ մեղադրանքը մերժելու մասին (Սենատը՝ ԱՄՆ-ում, Դաշնության խորհուրդը՝ ՌԴ-ում):

2) Պառլամենտա-դատական, որի դեպքում Նախագահի պաշտոնանկությունը նախաձեռնում է պառլամենտը, սակայն որոշումն ընդունում է դատական ատյանի՝ օրինակ սահմանադրական դատարանի (Հայաստանում, Գերմանիայում, Իտալիայում),

³⁴¹ Տե՛ս Конституции государств Европы, М., 2001; Конституции государств Восточной Европы, М., 1996; Новые Конституции стран СНГ и Балтии // Сборник документов, М., 1998.

³⁴² Տե՛ս Решение Конституционного Суда Литовской Республики от 31 марта 2004 года; նաև՝ Amendment to allow Paksas to run for Lithuanian parliament, president to be submitted // Lithuania Tribune. 27 March 2018. Retrieved 25 March 2019.

³⁴³ Տե՛ս Мишин А. А., Влашкин В. А. Конституция США: Политико-правовой комментарий, М., 1985, էջ 111-112:

³⁴⁴ Տե՛ս Конституции государств Европы, М., 2001.

³⁴⁵ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք //www.arlis.am:

գերագույն դատարանի (Անգոլայում, Պորտուգալիայում, Ռումինիայում), արդարադատության վերին դատարանի (Ֆրանսիայում, Սենեգալում) դրական եզրակացության դեպքում:

3) Պաշտոնատա-պլեբիսցիտար, որի դեպքում պաշտոնատա համաժողովրդական քվեարկության և ներկայացնում Նախագահի պաշտոնանկության հարցը: Այդ ձևը նախատեսված է Ավստրիայում, Իսլանդիայում, սակայն գործնականում երբեք չի կիրառվել³⁴⁶:

Որոշ պետություններում Նախագահին պաշտոնանկ անելու հիմք է նրա կողմից խորհրդարանի արձակման հանրաքվեի նախաձեռնումը, եթե հանրաքվեի արդյունքում ընտրողները որոշում չեն կայացնում խորհրդարանի արձակման մասին, ինչն ընտրողների շրջանում Նախագահի նկատմամբ վստահության կորուստ է նշանակում: Այդ հիմքը նախատեսված է Լատվիայի Հանրապետության Սահմանադրությամբ (48-50-րդ հոդվածներ)³⁴⁷: Կան պետություններ, որտեղ Նախագահին սահմանադրորեն արգելվում է զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել այլ, Նախագահի պաշտոնի հետ անհամատեղելի գործառնություններ, և եթե նա խախտում է անհամատեղելիության մասին նորմի պահանջը, ապա ենթարկվում է նեգատիվ սահմանադրական պատասխանատվության՝ պաշտոնանկության ձևով: Որոշ երկրներում Նախագահը կարող է լքել պետական տարածքը խորհրդարանի կամ կառավարության համաձայնության դեպքում միայն: Առանց նման համաձայնություն ստանալու երկրից հեռանալու դեպքում նա զրկվում է պաշտոնից³⁴⁸: Օրինակ, Պորտուգալիայի Հանրապետության Սահմանադրության 132-րդ հոդվածի համաձայն՝ Նախագահը չի կարող լքել ազգային տարածքն՝ առանց Հանրապետության Ասամբլեայի համաձայնության³⁴⁹: Այդ պահանջի չպահպանումը հանգեցնում է երկրի Նախագահի պաշտոնանկության: Համանման կարգ է սահմանված նաև Իռլանդիայում³⁵⁰, Կոլումբիայում³⁵¹:

Սահմանադրորեն կարգավորվում են նաև ՀՀ Նախագահի հրաժարականի կամ ՀՀ Նախագահի կողմից իր լիազորությունների կատարման անհնարինության դեպքերը: Հանրապետության Նախագահին իր հրաժարականը ներկայացնում է Ազգային ժողով: Հրաժարականը համարվում է ընդունված օրենքով սահմանված կարգով այն հրապարակելու պահից: Ինչ վերաբերում է ՀՀ Նախագահի լիազորությունների կատարման անհնարինությանը, ապա Նախագահի ծանր հիվանդության կամ նրա լիազորությունների կատարման համար այլ անհաղթահարելի խոչընդոտների առկայության դեպքերում, որոնք տևականորեն անհնարին են դարձնում նրա լիազորությունների կատարումը, Սահմանադրական դատարանը Կառավարության դիմումի հիման վրա որոշում է կայացնում Հանրապետության Նախագահի լիազորությունների կատարման անհնարինության մասին:

Պետության գլխի սահմանադրական լիազորությունների պատշաճ կատարման համար պատասխանատվություն է կրում նաև նրան փոխարինող պաշտոնատար անձը: ՀՀ Սահմանադրության 144-րդ հոդվածի համաձայն՝ Հանրապետության Նախագահի պաշտոնանկության, լիազորությունների կատարման անհնարինության,

³⁴⁶ Տե՛ս Конституционное право зарубежных стран, М., 1999, էջ 312-313:

³⁴⁷ Տե՛ս Конституции государств Европы, Т.1; Конституции государств-участников СНГ, М., 1999.

³⁴⁸ Տե՛ս Մեքսիկայի Սահմանադրության 88-րդ հոդված, Արգենտինայի Սահմանադրության 86-րդ հոդվածի 21-րդ կետ:

³⁴⁹ Տե՛ս Конституция Португальской Республики // Конституции государств Европы, М., 2001.

³⁵⁰ Տե՛ս Իռլանդիայի Սահմանադրության 12-րդ հոդված, Պորտուգալիայի Սահմանադրության 129-րդ հոդված:

³⁵¹ Տե՛ս Կոլումբիայի Զաղաքական Սահմանադրության 128-րդ հոդված:

իրաժարականի կամ մահվան դեպքերում մինչև նորընտիր Հանրապետության Նախագահի կողմից պաշտոնի ստանձնումը Հանրապետության Նախագահի լիազորությունները կատարում է Ազգային ժողովի Նախագահը: Սակայն Հանրապետության Նախագահին փոխարինող անձն ունի սահմանադրաիրավական կարգավիճակի որոշակի առանձնահատկություններ, հետևաբար, Նախագահի և նրան փոխարինող անձի սահմանադրական լիազորությունների ծավալները չեն համընկնում: Այսպես, Նախագահին փոխարինող անձը, որպես կանոն, չի իրականացնում հետևյալ լիազորությունները՝ հանրաքվեի նշանակում, վարչապետի նշանակում, Հայաստանի Հանրապետության շքանշաններով ու մեդալներով պարգևատրում, բարձրագույն զինվորական ու պատվավոր կոչումների, բարձրագույն դիվանագիտական ու այլ դասային աստիճանների շնորհում, դատապարտյալներին ներման շնորհում: Առաջարկում ենք ապագայում սահմանադրորեն չնախատեսել ՀՀ Նախագահին փոխարինողի ինստիտուտը՝ հաշվի առնելով պետության գլխի լիազորությունների արարողակարգային ու ներկայացուցչական բնույթը: Որպես լուծում կարելի է ամրագրել, որ Հանրապետության Նախագահի պաշտոնը թափուր մնալուց հետո տասն (և ոչ թե քսանհինգ) երեսունհինգ օրվա ընթացքում կազմակերպվում է Նախագահի արտահերթ ընտրություն:

Հանրապետության Նախագահի գործունեության ապահովմանն է նվիրված ՀՀ Սահմանադրության 145-րդ հոդվածը, ըստ որի՝ Հանրապետության Նախագահի աշխատակազմի ձևավորման կարգը, Նախագահի վարձատրության չափը, սպասարկման ու անվտանգության ապահովման կարգը սահմանվում են օրենքով:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետության Նախագահը պետության գլուխն է, որ օժտված է պառլամենտական կառավարման ձև ունեցող պետությունների Նախագահներին բնորոշ սահմանադրական լիազորություններով և պոզիտիվ սահմանադրական պատասխանատվությունն է կրում երկրի Հիմնական օրենքի պահպանման համար, միաժամանակ ՀՀ Սահմանադրությամբ Նախատեսված հիմքերի առկայության դեպքում և սահմանված կարգով ենթակա է նեգատիվ սահմանադրական պատասխանատվության՝ պաշտոնանկության ձևով:

POWERS OF THE PRESIDENT OF THE REPUBLIC OF ARMENIA AND CONSTITUTIONAL RESPONSIBILITY ACCORDING TO THE CONSTITUTIONAL CHANGES IN 2015 (COMPARATIVE LEGAL ANALYSIS)

RUZANNA HAKOBYAN

*Rector of Gavar State University, Doctor of Law, Associate Professor,
Gavar, Republic of Armenia*

The article is dedicated to the issues of constitutional responsibilities and powers of the President of the Republic of Armenia, in the context of the constitutional amendments in 2015. Applying historical, comparative and legal analysis methods, the evolution of the President's Constitutional Institute in the Republic of Armenia is presented, the requirements for the presidential candidate, the powers of the head of state and their implementation mechanisms are examined according to the Constitution adopted in 1995, and then constitutional amendments in 2005 and 2015. The issues of positive and negative constitutional responsibility of Presidents of the Republic of Armenia and other states, as well as the grounds and order of president's resignation also serve as a subject matter for the study.

It is noted that as a priority for the President of the Republic of Armenia is the observance of the Constitution, as this obligation derives from the constitutional status of the head of the state.

And if the President violates the requirements of the Constitution and the laws himself/herself, then it should turn into a negative constitutional and other legally liable subject. It is important to foresee a linguistic dimension for the presidential candidate, and it is also proposed to establish an educational qualification.

It is proposed not to foresee the institute of substitution of president of the RA taking into account the ceremonial and representative nature of the power of the head of state. And, as a solution, it is suggested to fix that an extraordinary election is organized during ten (and not twenty-five) days after the office of the president of the Republic of Armenia is vacant.

Keywords: *President, head of state, National Assembly, management form, constitutional status, powers, function, constitutional responsibility, to take office, resignation.*

ПОЛНОМОЧИЯ И КОНСТИТУЦИОННАЯ ОТВЕТСТВЕННОСТЬ ПРЕЗИДЕНТА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ В СООТВЕТСТВИИ С КОНСТИТУЦИОННЫМИ ИЗМЕНЕНИЯМИ 2015 ГОДА (СРАВНИТЕЛЬНО-ПРАВОВОЙ АНАЛИЗ)

РУЗАННА АКОПЯН

*Ректор Гаварского государственного университета,
доктор юридических наук, доцент,
г.Гавар, Республика Армения*

Статья посвящена проблемам конституционной ответственности и полномочий Президента Республики Армения в контексте конституционных изменений 2015 года. Методами исторического и сравнительного анализа представлена эволюция конституционного института президентства Республики Армения, рассматриваются требования, предъявляемые кандидату в президенты, полномочия главы государства и механизмы их реализации, в соответствии с Конституцией, принятой в 1995 году, а затем согласно конституционным изменениям 2005 и 2015 годов. Предметом исследования являются также проблемы позитивной и негативной конституционной ответственности президентов Республики Армения и других государств, основания и порядок отставки президента.

Отмечается, что для Президента Республики Армения слежение за соблюдением Конституции определено как основной приоритет, поскольку данная обязанность вытекает из конституционного статуса главы государства. И если сам президент нарушит требования Конституции и законов, то он превратится в субъект, несущий негативную конституционно-правовую или иную юридическую ответственность. Придается важное значение введению языкового ценза для кандидата в президенты, а также предлагается установить и образовательный ценз. Учитывая церемониальный и представительный характер полномочий главы государства, предлагается в будущем не предусматривать Конституцией институт замещения Президента РА. И, в качестве решения, предлагается, чтобы внеочередные выборы главы государства проводились в течение десяти (а не двадцати пяти) дней после того, как должность Президента РА становится вакантной.

Ключевые слова: *Президент, глава государства, Национальное собрание, форма правления, конституционный статус, полномочия, функция, конституционная ответственность, вступление в должность, освобождение от должности.*

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՐԺԵԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՄԲ
ԶԲԱՂԿՈՂ ԳԻՏԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ***

ՀՏԴ 342.4

ԱՎԵՏԻԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

*Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի
Անվտանգության խորհրդի աշխատանքների ապահովման բաժնի վարիչ,
Արցախի երիտասարդ գիտնականների և
մասնագետների միավորման (ԱԵԳՄՄ) հիմնադիր նախագահ,
«Գիտական Արցախ» պարբերականի գլխավոր խմբագիր,
«Արցախի էլեկտրոնային գրադարան» կայքի նախաձեռնող ու ղեկավար,
Արցախի պետական և Մեսրոպ Մաշտոց համալսարանների դոցենտ,
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,
բ.Ստեփանակերտ, Արցախի Հանրապետություն (ԼՂՀ)
avetiq.hh@aegmm.org*

Հոդվածի նպատակն է առաջ քաշել և հիմնավորել այն մոտեցումը, ըստ որի՝ սահմանադրական արժեքանությունը կոչված է հետապոտելու սահմանադրականության հիմնախնդիրը և նպաստելու երկրում սահմանադրականության հաստատմանը: Մեր խնդիրն է բացահայտել սահմանադրական արժեքանության էությունը, տալ վերջինիս բնորոշումը, հստակեցնել առարկան, օբյեկտն ու սուբյեկտը, ինչպես նաև դրա դերը սահմանադրականության հաստատման գործում:

Հետապոտության իրականացման ընթացքում կիրառվել են ինչպես համագիտական (անալիզ, սինթեզ, պատմականության սկզբունք), այնպես էլ հատուկ (ձևական-տրամաբանական, համեմատական-իրավական) մեթոդներ:

Հետապոտության արդյունքում հանգել ենք այն եզրակացության, որ սահմանադրականությունը, լինելով բարդ ու բազմակողմ երևույթ, ուսումնասիրվում է ինչպես իրավաբանական, այնպես էլ ոչ իրավաբանական գիտությունների (քաղաքագիտություն, սոցիոլոգիա և այլն) կողմից: Նկատի ունենալով, որ իրավագիտության բնագավառում սահմանադրականության ձևավորումն ու հաստատումն անխզելիորեն կապված են իրավական արժեքների ընկալման ու իրացման հետ, իսկ դրա ուսումնասիրությամբ պահվում է սահմանադրական արժեքանությունը, հեղինակը հիմնավորում է, որ հենց վերջինս է կոչված բազմակողմանի հետապոտելու սահմանադրականության հիմնախնդիրը և նպաստելու դրա հաստատմանը:

Բանալի բառեր՝ Սահմանադրություն, արժեք, սահմանադրական արժեք, սահմանադրական արժեքանություն, բարիք, երիտասարդ գիտական ուղղություն, սահմանադրականություն:

Վերջին ժամանակներս աշխարհում տեղի ունեցող բացասական երևույթների վերլուծությունը միարժեքորեն վկայում է, որ դրանց հիմնական պատճառներից մեկն

* Հոդվածը ներկայացվել է 01.05.2019թ., գրախոսվել՝ 04.06.2019թ., տպագրության ընդունվել՝ 17.06.2019թ.:

իրավական ու բարոյական արժեքների արհամարհումը, աղճատումն ու նենգափոխված կիրառումն է:

Արժեքների հիմնախնդիրը մարդկությանը հուզել է դեռևս անտիկ ժամանակաշրջանից: Այսպես, արեւնական ժողովրդավարության ճգնաժամը Սոկրատեսին ստիպել է առաջին անգամ հարց տալ. «Ի՞նչ է բարիքը»: Սա արժեքների ընդհանուր տեսության հիմնական հարցն է: Աքսիոլոգիան, որպես փիլիսոփայական հետազոտությունների ինքնուրույն ոլորտ, առաջացավ այն ժամանակ, երբ «կեցողություն» հասկացությունը տրոհվեց երկու տարրերի. իրականությունը և արժեքը որպես ցանազան մարդկային ցանկությունների և ձգտումների (սկրտումների) օբյեկտ»³⁵²:

Հիշյալ թեմային առնչվող գրականության ուսումնասիրությունը վկայում է, որ արժեքանությունն ի սկզբանե ձևավորվել է որպես փիլիսոփայական ուսմունք, իսկ ժամանակի ընթացքում հատկապես 20-րդ դարի վերջին և 21-րդ դարի սկզբներին, բացառիկ կարևորություն է ձեռք բերել նաև իրավագիտության ոլորտում, ինչը մի կողմից՝ պայմանավորված է արդի իրավամտաճողության վրա խարսխված սահմանադրությունների ընդունմամբ և դրանցում ամրագրված հիմնարար սկզբունքներին փիլիսոփայական ու արժեքային նշանակություն տալու անհրաժեշտությամբ, մյուս կողմից՝ բնական ու պոզիտիվ իրավունքների միջև առկա հակասությունների հաղթահարման արդյունքում մարդու, նրա իրավունքների ու ազատությունների՝ որպես բարձրագույն արժեքի ձևակերպմամբ ու պաշտպանությամբ:

Իրավագիտության համակարգում արժեքանությունը ձևավորվել ու զարգացել է որպես իրավական արժեքանություն, որի առարկայական բնագավառն ու հիմնական թեմատիկան իրավունքի՝ որպես արժեքի ընկալման ու մեկնաբանման հիմնախնդիրներն են: Սահմանադրությունը և նրանում բովանդակվող հիմնարար սկզբունքները որպես արժեք որակելը, թերևս, հիմք հանդիսացավ, որպեսզի սահմանադրական իրավունքի գիտության շրջանակներում, իբրև ինքնուրույն գիտական ուղղություն, ձևավորվի սահմանադրական արժեքանությունը:

Չնայած այն հանգամանքին, որ սահմանադրական արժեքանությունը երիտասարդ, ինքնուրույն գիտական ուղղություն է և ենթադրելի է, որ, բազմաթիվ հիմնարար ուսումնասիրություններ պետք է կատարված լինեն դրա՝ իբրև նոր և հետազոտություն կատարելու մեծ մասշտաբներ ունեցող ոլորտի վերաբերյալ, պարզվում է, որ հիմնականում թեկնածուական ատենախոսությունների ու հոդվածների շրջանակներում են անդրադառնում իրավական ու սահմանադրական տարբեր արժեքներին, որոնցում չեն կոնկրետացվում սահմանադրական արժեքանության բովանդակությունն ու վերջինիս առանձին տարրերը: Այդ առումով պետք է փաստել, որ սահմանադրական արժեքների նկատմամբ առկա հետաքրքրությունը չի սպառվում և տարեցտարի ավելանում է: Ինչպես արդարացիորեն նկատում է պրոֆեսոր Գ.Հարությունյանը, «ցավոք, սահմանադրական արժեքանությունը մեր իրականության մեջ որպես ինքնուրույն գիտական ուղղություն դեռևս չի ձևավորվել, և այս ոլորտում հետազոտություններ գրեթե չկան: Սակայն հասարակական հարաբերությունների սահմանադրականացման հիմնախնդիրների լուծումն առանց Սահմանադրության արժեքանական խոր վերլուծությունների՝ գրեթե անհնարին է»³⁵³: Այդ համատեքստում տեղին է մեջբերել Վ.Կրուսսի այն միտքը, թե

³⁵² Киссель М., Ценностей теория // Философский энциклопедический словарь / Под ред. А.Л.Геркулова, М., Сов. Энциклопедия, 1989, էջ 731:

³⁵³ Հարությունյան Գ., Սահմանադրական հիմնարար արժեքների իրացման երաշխիքները պետական քաղաքականության մակարդակում և հասարակական պրակտիկայում // Օրենք և իրականություն, թիվ 10, հոկտեմբեր, 2008թ., էջ 1:

«ռուսական սահմանադրական արժեքանությունը գործնականորեն չի հայտարարել իր՝ որպես ինքնուրույն ուղղության մասին»³⁵⁴: Առաջադրելով արժեքների վերաբերյալ մի շարք հարցեր և չունենալով դրանց միանշանակ պատասխանները՝ Յ.Յաջիևը հանգում է հետևության, որ «սահմանադրական արժեքանությունը նոր է ծնունդ առնում»³⁵⁵: Մ.Սալեյը նշում է, որ «սահմանադրական արժեքանությունն Ուկրաինայում գտնվում է մշակման սկզբնական փուլում և պահանջում է համալիր հետազոտություն»³⁵⁶:

Վերոհիշյալ կարծիքներն ամփոփելով՝ գալիս ենք հետևության, որ գիտական այս նոր ուղղությունն իր ծանրակշիռ տեղը չի զբաղեցրել ինչպես Ռուսաստանում, Ուկրաինայում, որտեղ քննարկվող հիմնահարցի վերաբերյալ վերջին ժամանակներս զգալի հետազոտություններ են իրականացվել, այնպես էլ Հայաստանի ու Արցախի Հանրապետություններում:

Կարծում ենք՝ այս իրողությունն ունի որոշակի պատճառներ: Դրանցից, թերևս, կարելի է նշել այն, որ սահմանադրական արժեքանությունն ունի ոչ հարուստ պատմություն, իրավունքի այդ ճյուղի հիմնախնդրով զբաղվող մասնագետներն այնքան էլ շատ չեն, իսկ արժեքանությունը, որպես փիլիսոփայության բաժին, ավելի հիմնարար ուսումնասիրության է ենթարկվել, քան իրավագիտության բնագավառում և այլն: Համանման կարծիք է հայտնել նաև Վ.Կրուսսը՝ նշելով, որ «սահմանադրական արժեքանությանը՝ որպես իրական սահմանադրականության մոդելի և պրակտիկայի հանդեպ անմիջական հարաբերության ձևի, զանազանում է, ամենից առաջ, նրա աղբյուրի՝ Սահմանադրության բացառիկ կարգավիճակը, որի իմաստավորումն ու իրացումը ենթադրում է արժեքանական մեկնաբանության պահիր»³⁵⁷:

Սահմանադրական արժեքանության գոյությունը նախ և առաջ պայմանավորված է Սահմանադրության առկայությամբ, որոնք գտնվում են անբակտելի կապի մեջ, ուստի սահմանադրական արժեքանությունը չի կարող գոյություն ունենալ վերացական ձևով, այլ պետք է լինի հստակ ու առարկայական: Չուզահեռաբար կարիք կա հստակեցնելու վերջինիս գիտաճյուղային պատկանելության հարցը: Այդ առումով կարծում ենք, որ վերջինս համալիր իրավաբանական գիտաճյուղ է, քանի որ արժեքների ուսումնասիրությամբ զբաղվող գիտությունը՝ արժեքանությունը, որը փիլիսոփայության բաժիններից է, սահմանադրական իրավունքի բնագավառում զբաղվում է զուտ սահմանադրական արժեքների բովանդակության բացահայտմամբ, իրացման հնարավորությունների հստակեցմամբ ու հասարակական հարաբերությունների վրա ունեցած ազդեցության զննահատմամբ:

Այդ դեպքում կարող է տրամաբանական հարց առաջանալ, թե ո՞րն է սահմանադրական արժեքանության էությունը: Որոշ հեղինակներ³⁵⁸ անդրադարձել են

³⁵⁴ **Крусс В.**, Российская конституционная аксиология: актуальность и перспективы // Конституционное и муниципальное право, 2007, №2, էջ 8.

³⁵⁵ **Гаджиев Г.**, Онтология права (критическое исследование юридического концепта действительности), М., Норма: ИНФРА-М, 2013, էջ 272-273.

³⁵⁶ **Салей М.**, Предмет конституционной аксиологии как направления конституционно-правовых исследований // Молодой ученый, 2016, №5 (32), էջ 432-435.

³⁵⁷ **Крусс В.**, Теория конституционного правоупотребления, М., 2007, էջ 184:

³⁵⁸ **Крусс В.**, Российская конституционная аксиология: актуальность и перспективы // Конституционное и муниципальное право, 2007, №2, էջ 7-14. **Малько М.**, Предмет конституционной аксиологии // Вестник Челябинского государственного университета, 2010, №19(200), Право, Вып. 24, էջ 34-37. **Пресняков М.**, Конституционная аксиология: к вопросу о сущности конституционных ценностей // Современное право, 2009, № 10, էջ 13-17: **Пермиловский М.**, Основы конституционной аксиологии: структура ценности // Государственная власть и местное самоуправление, 2014, №2, էջ 3 - 7.

սահմանադրական արժեքանության տարբեր ասպեկտներին, բայց նրանց դիտարկումներում նախ՝ բացակայում է սահմանադրական արժեքանության նկատմամբ համալիր մոտեցումը, երկրորդ՝ սահմանափակ ու հպանցիկ է անդադարձ կատարվում իրավական կամ սահմանադրական արժեքներին՝ առանց կոնկրետացնելու հողվածի վերնագրում տեղ գտած սահմանադրական արժեքանության բովանդակության բացահայտման հարցը: Կան մի շարք ատենախոսական հետազոտություններ³⁵⁹, որոնցում սահմանադրական արժեքանության պրիզմայի լույսի ներքո բացահայտվում է այս կամ այն սահմանադրական արժեքը:

Այդ առումով հատկանշական է, որ ուսումնասիրությունների ընթացքում որևէ տեղ չենք հանդիպել «սահմանադրական արժեքանություն» հասկացության համապարփակ բնորոշմանը: Պրոֆեսոր Գագիկ Հարությունյանի ձևակերպմամբ՝ «սահմանադրական արժեքանությունն արժեքների այն համակարգն է, որն ընկած է սահմանադրական իրավակարգավորումների հիմքում»³⁶⁰: Ա.Օվչինսկովը նշում է, որ «վերջին տարիներին Ռուսաստանի սահմանադրական իրավունքում կազմավորվել է մի ամբողջ ինքնուրույն ուղղություն՝ սահմանադրական արժեքանություն»³⁶¹, որն, ըստ Օ.Աբրամովայի, «իրենից ներկայացնում է սահմանադրա-իրավական արժեքների գիտատեսական ճանաչման ոլորտ, դրանց աստիճանակարգային փոխադարձ կապ, օբյեկտիվացում և արտացոլում սահմանադրական նորմերում ու սկզբունքներում, սահմանադրա-իրավական քաղաքականության առաջնահերթություններում»³⁶²: Իսկ Ի.Կովալյովը հիմնավորում է, որ «սահմանադրական արժեքանությունը կոչված է համակարգային վերլուծության ենթարկելու սահմանադրականությունը»³⁶³:

Հաշվի առնելով քննարկվող հարցի արդիականությունը՝ փորձենք տալ սահմանադրական արժեքանության հեղինակային բնորոշումը:

Սահմանադրական արժեքանությունը գիտական ուղղություն է, որը կոչված է բացահայտելու Սահմանադրության (և /կամ/ սահմանադրական օրենքների) մեջ բովանդակվող արժեքները և սահմանելու օրենսդրության մեջ ամրագրման ճանապարհով իրավակիրառ պրակտիկայում դրանք իրացնելու, մարդկանց կենսագործունեության անբակտեյի մասը դարձնելու կառուցակարգերը, ինչպես նաև այդ արժեքների իրացման միջոցով երկրում սահմանադրականություն հաստատելու ուղիները: Առավել ընդհանրացված ձևով կարելի է ասել, որ սահմանադրական արժեքանության գլխավոր առաքելությունը երկրում սահմանադրականության հաստատումն ու դրա հետագա զարգացումն է:

³⁵⁹ **Джантуханов В.**, Равенство и справедливость как конституционные ценности гражданского общества: Автореф. Дис канд-та юрид. наук. - Махачкала, 2006, 30 էջ; **Ереклинцева Е.**, Суверенитет и демократия как конституционные ценности современной России: Автореф. дис. канд-та юрид. наук. - Челябинск, 2010, 26 էջ; **Колоцей И.**, Право на охрану здоровья и медицинскую помощь как конституционная ценность: Автореф. дис. канд-та юрид. наук. М., 2010, 22 էջ; **Магадов Ш.**, Нравственность как конституционная ценность в Российской Федерации: Автореф. дис. ... канд-та юрид. наук. -М., 2012, 26 էջ; **Ройзман Г.**, Ценности в конституционном праве Российской Федерации: Автореф. дис. канд-та юрид. наук. - Челябинск, 2012, 25 էջ.

³⁶⁰ **Հարությունյան Գ.**, Սահմանադրականության արդի մարտահրավերները // Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն, Երևան, 2018, № 3 (27), էջ 7:

³⁶¹ **Овчинников А.**, Конституционно-правовая аксиология в современной России // Философия права, №5 (72), 2015, էջ 63-67.

³⁶² **Абрамова О.**, Конституционные ценности как особая форма выражения права // Конституционное и муниципальное право, 2013, 12, էջ 24 - 25.

³⁶³ **Ковалев И.**, Конституционная аксиология как форма системного анализа конституционализма, Право Донецкой Народной Республики, №3, 2016, էջ 30-37.

Սահմանադրական արժեքանության բովանդակության բացահայտումից հետո տեղին է անդրադառնալ ինչպես օբյեկտի ու սուբյեկտի, այնպես էլ առարկայի բացահայտման հարցերին:

Գիտության օբյեկտի վերաբերյալ կան տարբեր կարծիքներ: Այսպես, Վ.Ներսեսյանցի բնորոշմամբ՝ «օբյեկտն այն է, որ դեռևս ենթակա է ուսումնասիրման համապատասխան գիտության ճանաչողական միջոցների ու հնարքների օգնությամբ: Գիտության օբյեկտն այն է, ինչ մենք դրա մասին գիտենք մինչև գիտական ուսումնասիրումը, իսկ առարկան ուսումնասիրված օբյեկտն է, այսինքն՝ այն, ինչ մենք դրա մասին գիտենք գիտական ճանաչումից հետո»³⁶⁴: Մեկ այլ բնորոշման համաձայն՝ «օբյեկտն առարկա կամ երևույթ է, որ մարդը ձգտում է ճանաչել և դեպի որևէ ուղղված է նրա գործունեությունը»³⁶⁵: Ըստ փիլիսոփայական մեկնաբանման՝ «օբյեկտ ասելով հասկացվում է այն, ինչին ուղղված է սուբյեկտի ճանաչողական և այլ գործունեությունը»³⁶⁶: Այստեղից էլ կարելի է գալ հետևության, որ սահմանադրական արժեքանության օբյեկտը Սահմանադրության մեջ ամրագրված արժեքներն ու սկզբունքներն են: Ի դեպ, տվյալ գիտական ուղղությունն ուսումնասիրում է նաև այն, թե սահմանադրական արժեքն ի՞նչ ճանապարհ է անցել և ինչպե՞ս ամրագրվել իրավական ակտերում:

Ինչ վերաբերում է սահմանադրական արժեքանության սուբյեկտին, ապա որպես այդպիսիք հանդես են գալիս պետությունը՝ ի դեմս պետական իշխանության տարբեր մարմինների, ինչպես նաև քաղաքացիները:

Սահմանադրական արժեքանությունը սերտորեն կապված է այնպիսի հասկացությունների հետ, ինչպիսիք են՝ Սահմանադրության բովանդակությունը, եությունը և մեկնաբանությունը: Ինչպես ինքը՝ սահմանադրական արժեքանությունը, համարվում է սահմանադրական իրավունքի և ինքնին Սահմանադրության բովանդակության բնութագրերից մեկը, այնպես էլ դրա առարկան կարելի է համարել սահմանադրական իրավունքի առարկայի հետ³⁶⁷: Շարունակելով միտքը՝ Մ.Սավրոն նշում է, որ «սահմանադրական արժեքանության առարկան կարելի է համարել հասարակության առավել լայն շրջանակի արժեքների սահմանումն ու ամրագրումը Սահմանադրության մեջ, որոնք իրենց հերթին պետական, տնտեսական ու սոցիալական քաղաքականության կառուցման և վարման հիմք են»³⁶⁸: Ընդհանրացնելով նշենք, որ սահմանադրական արժեքանության առարկայի վերաբերյալ նման ձևակերպումը համապատասխանում է մեր մոտեցմանը, իսկ ինչ վերաբերում է դրա կայացվածությանը, ապա կարելի է պնդել, որ սահմանադրական արժեքանությունը դեռևս ձևավորման փուլում է:

Ամեն մի գիտություն արժևորվում է այն դեպքում, երբ հաջողությամբ լուծում է իր առջև դրված խնդիրները կամ դրանց զգալի մասը: Հենց այդ համատեքստում պետք է կարևորել սահմանադրական արժեքանության դերը երկրի սահմանադրականության հաստատման գործում: Այդ առումով տեղին է հիշատակել Մ.Պրեսնյակովի այն համոզմունքը, որ արժեքն ամենից առաջ իդեալ է, որը ցույց է տալիս ոչ թե «ինչպես

³⁶⁴ **Ներսեսյանց Վ.**, Իրավունքի և պետության տեսություն, Երևան, Նաիրի, 2001, էջ 17-18:

³⁶⁵ Զաղաքական համառոտ բառարան, կազմող-հեղինակ Ի.Լեխին, թարգմանությամբ՝ Ս.Խաչատրյանի, Երևան, «Հայաստան», 1968, էջ 320-321:

³⁶⁶ Փիլիսոփայական բառարան, Մ.Ռոզենտայի խմբագրությամբ, Երևան, «Հայաստան» իրատ., 1975, էջ 395:

³⁶⁷ **Малько М.**, Предмет конституционной аксиологии // Вестник Челябинского государственного университета, 2010, №19(200), Право, Вып. 24, էջ 34.

³⁶⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 34:

անել», այլ «ինչին ձգտել»³⁶⁹: Սահմանադրության մեջ ամրագրված նորմ-սկզբունքներն ու նորմ-նպատակները կազմում են այն հենասյուներն ու կողմնորոշիչները, որոնք արժեք են ներկայացնում և, որոնց վրա հիմնվելով, պետությունը պետք է որոշակիորեն ուրվագծի հետագա զարգացման հայեցակարգը: Հենց այդ համատեքստում է կարևորվում սահմանադրական արժեքանության դերակատարությունը: Իսկ վերջինս իր հիմնական նպատակին կարող է հասնել միայն այն ժամանակ, երբ սահմանադրական արժեքները գիտակցաբար ընկալվեն և հետևողականորեն իրացվեն և՛ պետական իշխանության մարմինների ներկայացուցիչների, և՛ քաղաքացիների կողմից:

Սահմանադրական արժեքանության և դրա միջոցով երկրում սահմանադրականություն հաստատելու փիլիսոփայությունը ենթադրում է, որ ամեն մի երկրի Սահմանադրության ընդունման հիմք պետք է լինի սահմանադրական մշակույթը, ինչը ենթադրում է հասարակական պրակտիկայում և պետական քաղաքականության մակարդակում սահմանադրական արժեքների առկայության որոշակի աստիճան: Այդ արժեքները պետք է ամրագրվեն երկրի Հիմնական օրենքում, որոնք իշխանությունների ու հասարակության կողմից ներդաշնակ ընկալվելուց հետո պետք է իրացվեն առօրյա կյանքում: Իսկ իրացման արդյունքը կլինի երկրում սահմանադրականության հաստատումը:

Սահմանադրականության ձևավորումն ու հաստատումը կապված է ինչպես առաջին հերթին Սահմանադրության սահմանադրական կարգի հիմունքներում նախատեսված դրույթներով, օրենսդիր մարմնի կողմից ընդունվող իրավական ակտերի որակով ու դրանցում տեղ գտած արժեհամակարգով, այնպես էլ հասարակությունում «սահմանադրականություն» երևույթի վերաբերյալ պատկերացումներով, մարդկանց վարքագծով, նաև դատական իշխանության կողմից ընդունվող ակտերում սահմանադրական արժեքների արտացոլվածությամբ, դրանցով ղեկավարվելու պատրաստակամությամբ:

Եթե հասարակության կողմից Սահմանադրությունն ընկալվում է որպես արժեհամակարգ, առանց որի կենսագործման հնարավոր չէ ապահովել երկրի կայուն զարգացումը, քաղաքացիների բարեկեցիկ ու երջանիկ կյանքը, ապա երկրում սահմանադրականության հաստատումը դառնում է ավելի գիտակցված, պահանջված ու հեշտ իրացվող: Իսկ եթե Սահմանադրությունը կամ դրա առանձին դրույթները հասարակության կողմից ընկալվում են իբրև հռչակագրային բնույթ ունեցող դրույթներ (իրականում այդպես է կամ գրեթե այդպես է), ապա սահմանադրականության հաստատման հետ կապված կարող ենք ունենալ լրջագույն խնդիրներ: Նման խնդիրներ կարող են ի հայտ գալ նաև այն դեպքում, երբ սահմանադրական արժեքները կտրված են իրականությունից, դրանց իրացման համար պատասխանատու անձանց շրջանում բացակայում է Սահմանադրությամբ ապրելու կամքն ու գիտելիքները, ինչպես նաև մեծ է Սահմանադրությամբ հռչակված արժեքների և իրականության միջև խզումը:

Երկրում սահմանադրականության հաստատման գործում սահմանադրական արժեքանության դերը գնահատելու համար կարևոր է գտնել այն հարցի պատասխանը, թե սահմանադրական արժեքները գոյություն ունեն միայն դոկտրինա՞լ մակարդակում, թե՞ դրանք ամրագրվել են նաև օրենսդրության մեջ և կիրառվում են պրակտիկայում: Այդ առումով կարևոր է ներկայացնել սահմանադրական արժեքների ճակատագիրը, որոնք նախ հայտնվում են մարդկանց գիտակցության մեջ, ապա նրանց գործողություններում արտացոլվում է դրանց անհրաժեշտությունը (կարևորությունը), հետո մարդիկ այդ արժեքներով ապրում են, առաջնորդվում:

³⁶⁹ **Пресняков М.**, Конституционная аксиология: к вопросу о сущности конституционных ценностей // Современное право, 2009, №10, է 9-17.

Միատեսակ կարծիք ու մոտեցում ձևավորելու նպատակով այդ արժեքները պետք է մեկնաբանվեն, ինչպիսի լիազորությամբ սովորաբար օժտված է սահմանադրական դատարանը: Ընդհանրացնելով կարելի է նշել, որ սահմանադրականության հաստատումը ոչ միայն պետք է իշխանության որևէ թևի, առանձին մարմինների կամ մի խումբ մարդկանց գործունեության առանցքային ուղղությունը լինի, այլև պետք է կրի համապետական ու համազգային բնույթ, դառնա ապրելակերպ:

CONSTITUTIONAL AXIOLOGY AS A SCIENTIFIC DISCIPLINE EXPLORING THE ISSUE OF CONSTITUTIONALISM

AVETIK HARUTYUNYAN

*Head of the Department of ensuring the work of the Security
Council of the Office of the President of the Republic of Artsakh,
Founder-Chairman of the Union of Young Scientists and
Specialists of Artsakh (UYSSA),
Editor-in-chief of «Scientific Artsakh» journal,
Initiator and head of the «Artsakh E-library» website,
Associate Professor of Artsakh State University and Mesrop Mashtots University,
PhD in law, Associate Professor,
Stepanakert, The Republic of Artsakh (NKR)*

The purpose of the article is to put forward and justify the approach according to which the constitutional axiology is designed to study the topical issues of constitutionalism and contribute to its formation in the country. Our task is to reveal the essence of constitutional axiology, give it a definition, clarify the subject, object and subject, as well as its role in the establishment of constitutionalism.

In the course of the study, both scientific (analysis, synthesis, the principle of historicity) and special (formal-logical, comparative-legal) methods were applied.

As a result of the study, the following conclusion was formed: constitutionalism, which is a complex and multifaceted phenomenon, is studied by both legal and non-legal sciences (political science, sociology, etc.). Taking into account the fact that the formation and the development of constitutionalism in the field of jurisprudence is inextricably linked with the perception and implementation of legal values, and it is the constitutional axiology that deals with their study, the author argues that the latter is designed to investigate the problem of constitutionalism and promote its formation.

Key words: Constitution, value, constitutional value, constitutional axiology, good, young scientific direction, constitutionalism.

КОНСТИТУЦИОННАЯ АКСИОЛОГИЯ КАК НАУЧНОЕ НАПРАВЛЕНИЕ, ИССЛЕДУЮЩЕЕ ПРОБЛЕМУ КОНСТИТУЦИОНАЛИЗМА

АВЕТИК АРУТЮНЯН

*Заведующий отделом обеспечения работы Совета безопасности
аппарата Президента Республики Арцах,
учредитель и председатель Объединения молодых ученых и
специалистов Арцаха (ОМУСА),
главный редактор журнала «Научный Арцах»,
инициатор и руководитель сайта «Электронная библиотека Арцаха»,
доцент Арцахского государственного университета и Университета Месроп
Маишоц, кандидат юридических наук, доцент,
г. Степанакерт, Республика Арцах (НКР)*

Цель статьи - выдвинуть и обосновать подход, согласно которому конституционная аксиология призвана исследовать актуальные вопросы конституционализма и способствовать его становлению в стране. Наша задача - раскрыть сущность конституционной аксиологии, дать ей определение, уточнить предмет, объект и субъект, а также ее роль в деле установления конституционализма.

В ходе исследования были применены как научные (анализ, синтез, принцип историчности), так и специальные (формально-логические, сравнительно-правовые) методы.

В результате исследования было сформулировано следующее заключение: конституционализм, представляя собой сложное и многосторонне явление, изучается как юридическими, так и не юридическими науками (политология, социология и т.д.). Принимая во внимание тот факт, что формирование и становление конституционализма в сфере юриспруденции неразрывно связаны с восприятием и реализацией правовых ценностей, а их изучением занимается конституциональная аксиология, автор обосновывает, что именно последняя призвана многосторонне исследовать проблему конституционализма и способствовать его становлению.

Ключевые слова: Конституция, ценность, конституциональная ценность, конституциональная аксиология, благо, молодое научное направление, конституционализм.

МИРНЫЙ ДОГОВОР КАК ИНСТРУМЕНТ ЛЕГАЛИЗОВАННОГО ПРИНУЖДЕНИЯ: НЕКОТОРЫЕ СПОСОБЫ ПРИМЕНЕНИЯ*

УДК 341.01

СОНА МАНТАШЯН

*соискатель кафедры международного и европейского права
Российско-Армянского университета,
г.Ереван, Республика Армения
sona.mantashian@gmail.com*

В данной статье с помощью ретроспективного историко-правового анализа международного права представляются и анализируются различные методы принуждения, осуществляемые в рамках заключения мирных договоров посредством ратификации, вовлечения в миротворческий процесс третьих лиц, правосубъектности договаривающейся стороны и пр. Применение подобных методов, в отличие от классических методов принуждения, выраженных в явных формах применения силы, вопрос законности которых на протяжении развития международного права не был однозначным и претерпел различные изменения, давало возможность скрыть наличие дефекта в согласии договаривающихся сторон и создать гарантии исполнения закрепленных обязательств, устраняя опасность возможных попыток оспаривания действительности достигнутых соглашений в будущем. Таким образом, методы принуждения требуют отдельного детального исследования, исключительно на основе которого возможно сделать выводы о том, был ли нарушен принцип свободы согласия договаривающихся сторон, и только затем толковать нормы заключенных ими договоров в контексте права, действующего на том или ином историческом отрезке времени. Вышесказанное особо актуализируется с учетом многочисленности заключенных в период отсутствия запрета на угрозу силой или ее применения и сохраняющих силу по сей день мирных договоров, которые представляют интерес для международного сообщества как с юридической, так и политической точек зрения.

Ключевые слова: свобода согласия, мирный договор, принуждение, волеизъявление, договор, применение силы, государство, недействительность.

Воля сторон на вступление в договорные отношения не всегда имела одинаковое значение и применение в международном праве. Так, первые упоминания о воле договаривающихся сторон можно обнаружить в Римском праве древнейшего периода (VI – середина III вв. до н. э.). На данном историческом этапе право, всецело проникнутое принципами формализма в ущерб содержанию, придерживалось подхода, согласно которому лицо, принявшее на себя обязанность по договору, должно было его выполнить вне зависимости от обстоятельств его заключения. Сделка, совершенная под влиянием принуждения или силы, сама по себе считалась действительной.³⁷⁰ Римские юристы придерживались концепции: «Coactus tamen volui», что означало: хоть и под давлением,

* Հողվածը ներկայացվել է 11.05.2019թ., գրախոսվել՝ 20.05.2019թ., տպագրության ընդունվել՝ 17.06.2019թ.:

³⁷⁰ И.Б. Новицкий, Римское право, Воля и выражение воли, Теис, Москва, РФ, 2012, с. 167.

под принуждением, но все-таки волю свою он выразил.³⁷¹ Это было делом лица, вступавшего в сделку – подчиниться угрозе или противостоять насильственной силе. По мере развития права возрастающее значение начало придаваться содержанию выраженного согласия. Одна из первых идей относительно содержательной стороны волеизъявления государств была выражена в начале XVI века Франсиском де Витория (1483-1546 гг.), утверждающим, что договаривающееся государство на момент заключения договора должно быть свободным.³⁷² Еще через век Гуго Гроций (1583-1645 гг.), придерживаясь терминологической и концептуальной связи с римским правом, скажет о недопустимости подписания договора под влиянием страха, вызванного у договаривающегося лица его контрагентом.³⁷³ Еще позже, во второй половине XVIII века, аналогичный подход будет поддержан Эмер де Ваттелем (1714-1767 гг.), согласно которому, договор действителен в том случае, если процесс его подписания не содержит дефектов.³⁷⁴ В XIX веке Каспар Блюнчли (1808-1881 гг.) в поддержку данной концепции давал следующее объяснение « [...] государство не связано подписью государя, если действие его руки обусловлено применением насилия против него [...] ». ³⁷⁵ Описанный подход находил свое подтверждение и на практике: договоры со ссылкой на заключение под принуждением признавались международным сообществом недействительными. Примерами таких договоров были Мадридский договор от 14 января 1526 года, Договор о разделе Польши от 5 августа 1772 года, Байонский договор от 15 июня 1808 года, Договор между Францией и Голландией от 16 марта 1810 года, Бардоский договор от 12 мая 1881 года, Договор о финансовом, экономическом развитии и мире в Гаити от 16 сентября 1915 года, Японо-корейский договор о протекторате от 17 ноября 1905 года, Договор о протекторате Богемии и Моравии от 15 марта 1939 года, Договору между Великобританией и Ирландией от 6 декабря 1921 года и пр. Большинство из вышеперечисленных договоров так и не были исполнены по указанным основаниям. Пройдя долгий путь развития и преобразований, окончательное оформление и закрепление принципа свободы договора было воплощено в Венской конвенции о праве международных договоров от 23 мая 1969 года. В своей преамбуле конвенция подчеркивает всеобщее признание принципа свободы согласия и в качестве инструмента защиты данного принципа в статье 51 отрицает юридическую значимость согласия государства, выраженное в результате принуждения его представителя, а статьей 52

³⁷¹ **P. Bonfante**, *Istituzioni di diritto romano*, 8th ed., 1925 by Milan Vallardi; § 6; (см.по Olivier Corten, Pierre Klein, *The Vienna Conventions on the Law of Treaties: A Commentary*, Book 1, 2011, p.1179.)

³⁷² **F. Vitoria**, *De pote state civili*, 1528, § 21; (см.по Olivier Corten, Pierre Klein, *The Vienna Conventions on the Law of Treaties: A Commentary*, Book 1, Oxford Scholarly Authorities on International Law [OSAIL], 2011, p. 1179.)

³⁷³ **H. Grotius**, *The Law of War and Peace*, 1625, Book II, chapter XII, Sect. 10; translated by T. Nugent, revised by J. V. Prichard, 1914; (см.по Olivier Corten, Pierre Klein, *The Vienna Conventions on the Law of Treaties: A Commentary*, Book 1, Oxford Scholarly Authorities on International Law [OSAIL], 2011, p. 1179.)

³⁷⁴ **E. Vattel**, *The Law of Nations or Principles of the Law of Nature Applied to the Conduct and Affairs of Nations and Sovereigns*, Amsterdam, 1758, Book II, Chapter XII, § 157; (см.по Olivier Corten, Pierre Klein, *The Vienna Conventions on the Law of Treaties: A Commentary*, Book 1, Oxford Scholarly Authorities on International Law [OSAIL], 2011, p. 1180.)

³⁷⁵ **O. Corten, P. Klein**, *The Vienna Conventions on the Law of Treaties: A Commentary*, Book 1, см.по Olivier Corten, Pierre Klein, *The Vienna Conventions on the Law of Treaties: A Commentary*, Book 1, Oxford Scholarly Authorities on International Law [OSAIL], 2011, p.1182.)

закрепляет ничтожность договора, заключенного в результате угрозы силой ее применения.³⁷⁶

Таким образом, с момента вступления конвенции в силу недействительность договоров, заключенных под принуждением, не нуждается в доказывании. Однако, как было отмечено выше, на предшествующем этому событию длительном историческом отрезке времени значимость принципа свободы согласия, как и практика его применения были неоднородными. Классическими нарушениями этого принципа были угроза силой или ее непосредственное применение. Однако особый интерес представляют наименее явные способы нарушения рассматриваемого принципа, которым к тому же сторона его нарушающая придает легализованное оформление. Подобное можно более всего наблюдать на различных фазах изменений курса международного права в пользу постепенного отказа от угрозы силой и ее применения в качестве инструмента разрешения международных споров. Как ни парадоксально, в качестве одного из таких инструментом служил мирный договор. Ведь сам термин «мирный договор», казалось бы, по своей сути противопоставляется каким бы то ни было формам проявления насилия: этимология слова «мир» (“peace”) происходит от классического латинского “pacem” или “pax”, что переводится как «мирный договор, спокойствие, отсутствие войны».³⁷⁷ Тем не менее способы применения одноименного документа в целях сокрытия принуждения были достаточно разнообразными. В данной связи, с точки зрения исследования, проводимого в рамках этой статьи, в условиях отсутствия запрета на угрозу силой или ее применения, классический способ принуждения, применяемый победившей стороной над побежденной в целях заключения насильственного мира на наиболее выгодных для победившей стороны условиях, являясь, скажем так, классикой жанра данного периода, не нуждается в дополнительном рассмотрении. Наибольший интерес представляют методы, которые *per se* являясь правовыми, использовались в рамках заключения мирных договоров в целях сокрытия и легализации применяемого над другой стороной принуждения. Рассмотрим некоторые из них.

Многие диссертации содержат выводы, которые сложно признать новыми и научными. Речь идет о констатации очевидных фактов, новых определениях старых понятий, введении сомнительной терминологии и др. Новизна некоторых диссертаций состоит исключительно в переносе зарубежных теорий на отечественную почву. Вопрос о научной ценности таких диссертаций нуждается в дополнительном обсуждении: с одной стороны, их научный уровень часто превосходит научный уровень работ, основанных на отечественном материале; с другой – они являются *адаптациями*, а не самостоятельными исследованиями.

Таким образом, по результатам данного обзора можно выделить две группы вопросов. Первые вызывают интерес со стороны российских ученых, освещаются в статьях и монографиях, обсуждаются на конференциях и т.д. К ним относятся вопросы, имеющие отношение к правам человека, европейскому праву, уголовному праву, экономическому праву, международным судам и соотношению порядков. Вторые находятся на периферии научных исследований. К ним относятся вопросы, имеющие отношение к истории права, государственности, источникам права, ответственности, режиму применения силы и др. Тематические дисбалансы не только отрицательно сказываются на общем уровне доктрины, но и негативно влияют на эффективность защиты национальных интересов. Данная проблема касается не только международного права, но и остальных направлений отечественного правопедения. Ее решение

(Дипломатическая академия); **Данельян А.А.** Международно-правовой режим иностранных инвестиций (Дипломатическая академия); **Боклан Д.С.** Взаимодействие международного экологического и международного экономического права (МГИМО университет); **Каюмова А.Р.** Уголовная юрисдикция в международном праве: вопросы теории и практики (Казанский ГУ); **Хаванова И.А.** Избежание двойного налогообложения и предотвращение уклонения от налогообложения в условиях взаимодействия национального и международного права (ИЗИСП).

⁴²⁹ Некоторые диссертации в данном перечне относятся сразу к двум отраслям, например, диссертация **И.К. Никишкина** «Правовое регулирование полицейского сотрудничества в Европейском Союзе» – и к уголовному праву, и к праву ЕС.

⁴³⁰ В 2018 г. представлена на защиту диссертация **С.Р. Алексанян** «Принцип равноправия и самоопределения народов в современном международном праве».

⁴³¹ Праву ЕС посвящена почти половина диссертаций, защищенных в МГИМО и МГЮА.

⁴³² Диссертации **П.П. Мысливского** «Международно-правовое регулирование создания Евразийского экономического союза и способа разрешения споров» и **Е.К. Нечаевой** «Правовое регулирование научных исследований и технологического развития в рамках региональных интеграционных организаций (на примере Европейского союза и Евразийского экономического союза)».

⁴³³ Диссертации **В.П. Талимончик** «Международно-правовое регулирование отношений в сфере информации» и **Д.И. Видинцева** «Прогрессивное развитие института международно-правовой защиты культурных ценностей».

соответственно может быть только общим и состоять в качественном реформатировании образовательной и научной среды.

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԴՈԿՏՐԻՆԻ ԹԵՄԱՏԻԿ ԿԱՌՈՒՑՎԱԾԸ

ՎԱԴԻՍԼԱՎ ՏՈԼՍՏԻԽ

*Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի փիլիսոփայության և իրավունքի
ինստիտուտի Սիբիրի բաժանմունքի ավագ գիտաշխատող,
Նովոսիբիրսկի պետական համալսարանի միջազգային իրավունքի ամբիոնի
վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
բ.Նովոսիբիրսկ, Ռուսաստանի Դաշնություն*

Միջազգային իրավունքի ռուսական դոկտրինը գտնվում է լուրջ ճգնաժամում: Վերջինիս ցուցիչներից են հետազոտությունների թեմատիկ կառուցվածքի անհամաչափությունները: Հայրենական գիտնականները հետաքրքրություն են ցուցաբերում միայն հարցերի որոշակի շրջանակի նկատմամբ, այն է՝ մարդու իրավունքներ, միջազգային արդարադատության կարգերի հարաբերակցություն, եվրոպական իրավունք, քրեական իրավունք, Եկոլոգիական իրավունք և տնտեսական իրավունք: Մինչդեռ այնպիսի հիմնարար տեսական խնդիրներ, որոնք առնչվում են միջազգային իրավունքի պատմությանը, պետականությանը, իրավունքի աղբյուրներին, միջազգային պատասխանատվությանը, ուժի կիրառման ռեժիմին և այլ ոլորտների, գտնվում են գիտական ուսումնասիրությունների հետևաբեմում: Նույնը վերաբերում է նաև Ռուսաստանի կիրառական արտաքին քաղաքականության հիմնահարցերին:

Նշված անհամաչափությունները ոչ միայն բացասաբար են ազդում դոկտրինի ընդհանուր մակարդակի վրա, այլև խաթարող ներազդեցություն են ունենում ազգային շահերի պաշտպանության արդյունավետության վրա: Սույն խնդիրը վերաբերում է ոչ միայն միջազգային իրավունքին, այլև հայրենական իրավագիտության մնացյալ ուղղություններին: Հետևաբար դրա լուծումը կարող է լինել միայն ընդհանուր և իրենից ներկայացնել կրթական ու գիտական ոլորտների որակական վերափոխում:

Բանալի բառեր՝ *մարդու իրավունքներ, միջազգային իրավունք, դոկտրինա, իրավաբանական գիտություն, պոպիտիվ իրավունք, պետականություն, միջազգային պատասխանատվություն:*

THEMATIC STRUCTURE OF THE RUSSIAN DOCTRINE OF INTERNATIONAL LAW

VLADISLAV TOLSTYKH

Senior Researcher at the Institute of Philosophy and Law of the Siberian Branch of the Russian Academy of Sciences, Head of the International Law Department of the Novosibirsk State University, Doctor of law, Professor, Novosibirsk, Russian Federation

The Russian doctrine of international law is experiencing a serious crisis. One of its symptoms is the imbalance in the thematic structure of the research. Russian scientists are interested only in a certain range of issues, which includes issues of human rights, interaction of orders, international courts, European, criminal, environmental and economic law. Fundamental theoretical issues related to the history of international law, statehood, sources of law, international responsibility, use of force, etc. are on the periphery of scientific research. The same can be said about issues relating to the current foreign policy of Russia.

These imbalances not only negatively affect the overall level of doctrine, but also negatively affect the effectiveness of the protection of national interests. This problem concerns not only international law, but also other areas of Russian legal science. Thereby its solution must be general and consist in radical reformatting of the educational and scientific environment.

Keywords: *human rights, international law, doctrine, legal science, positive law, statehood, international responsibility.*

ՄԱՆԿԱԿԱՐԺՈՒԹՅՈՒՆ, PEDAGOGY, ПЕДАГОГИКА

**ԲՈՒՅԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՂ ԱՃԵԱՐՅՈՒՄ***

ՀՏԴ 338.2:378.4

ԱՆՆԱ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

*Երևանի պետական համալսարանի մանկավարժության և կրթության
վարձագման կենտրոնի մանկավարժության ամբիոնի դոցենտ,
մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ
Ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն
annaaleksanyan@gmail.com*

ՀՐԱՆՏ ՀԱԿՈԲՅԱՆ

*Երևանի պետական համալսարանի
«կրթության կազմակերպում» բաժնի մագիստրոս,
Ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն
hakobianhrant@gmail.com*

Հոդվածի նպատակն է ներկայացնել ու վերլուծել բուհի կառավարման ժամանակակից հիմնախնդիրները օրեցօր արդիականացող աշխարհի պայմաններում: Նպատակից բխում են հետևյալ խնդիրները՝ կրթական ոլորտը դիտարկել որպես երկրի առաջնային վարձագումն ապահովող հիմնական գործոն, վեր հանել ու դիտարկել կրթության կառավարման ոլորտում ձևավորված հիմնախնդիրները, վերլուծել այդ հիմնախնդիրների առանձնահատկությունը ՀՀ-ում, քննարկել դրանց լուծման հնարավոր ուղիները:

Հետազոտության ընթացքում կիրառվել է համադրում, վերլուծում և ստուգում՝ հետևելով գործընթացների դինամիկային ու միտումներին, ինչպես նաև կիրառելով դրա համար մտաբանական-տրամաբանական (վերլուծություն, համադրում, վերացարկում, իդեալականացում, ընդհանրացում, մակածում (ինդուկցիա), արտածում (դեդուկցիա), համանմանություն (անալոգիա) և մոդելավորում) մեթոդներ:

Չարգացած երկրներն իրենց համախառն ներքին արդյունքի աճի զգալի մասն ապահովում են բարձրագույն կրթության վարձագման շնորհիվ: Համապատասխան կրթություն ու կրթական համակարգ ապահովելու և վարձացնելու համար կարևոր է հստակ առանձնացնել, վերհանել ու հասկանալ կրթության կառավարման հիմնական խնդիրները, քանի որ դրանք թիրախավորելով և լուծելով միայն կարելի է հասնել կրթության առջև դրած նպատակներին: Այս հոդվածը ներկայացնում է կրթության կառավարման հիմնախնդիրները, որոնք առաջ են քաշվել տարբեր հետազոտությունների արդյունքների հիման վրա: Այնուհետև կրթության կառավարման հիմնախնդիրները մասնավորեցվում են Հայաստանի բուհական կրթության ոլորտում:

* Հոդվածը ներկայացվել է 29.04.2019թ., գրախոսվել՝ 15.05.2019թ., տպագրության ընդունվել՝ 17.06.2019թ.:

Բանալի բառեր՝ կրթության կառավարում, բուհական կրթություն, կրթության հիմնախնդիրներ, ՀՀ բուհական կրթություն, կրթության համապատասխանությունը հասարակությանը, բարձրագույն կրթության ռազմավարություն, կրթության որակ:

Ժամանակակից զարգացած հասարակություններում առանձնահատուկ ուշադրություն են դարձնում հատկապես կրթության ոլորտի հիմնախնդիրներին և հրատապորեն մշակում են դրանց լուծմանն ուղղված մոտեցումներ ու գործողություններ: Մարդկության պատմությունը ցույց է տվել, որ հասարակության առաջընթացը կարող է պայմանավորված լինել մի քանի գերակա ոլորտներով, որոնցից առանցքայինը կրթությունն է: Կրթության՝ որպես հասարակության զարգացումն ապահովող գերակա ոլորտի կարևորությունն ընդգծվեց 21-րդ դարում, և 21-րդ դարի հասարակությունն էլ անվանվեց գիտելիքի ու տեղեկատվության հասարակություն: Նման մոտեցումը գիտության մեջ սահմանվեց հենց 21-րդ դարի սկզբին Ֆրանկ Վեբստերի կողմից⁴³⁴:

Եթե մենք ասում ենք, որ ապրում ենք գիտելիքի ու տեղեկատվության հասարակությունում, ապա պետք է հստակեցնենք նաև կրթության համապատասխանության ուղիները նման հասարակությանը և ապահովենք կրթության հարաշարժ զարգացումը նույնպես: Ինչպես նշում է գերմանացի հայտնի գիտնական Կառլ Մայերը՝ «Կրթությունը 21-րդ դարի քաղաքական և սոցիալական հրատապ լուծում պահանջող առաջնային հիմնահարցն է»⁴³⁵:

Պատահական չէ նաև այն, որ կրթության կառավարման հիմնախնդիրները սկսեցին առանձնացնել և դուրս բերել ինչպես ազգային, այնպես էլ միջազգային կազմակերպությունների կողմից բազմակողմանի իրականացված հետազոտությունների արդյունքում: Այդ հետազոտությունների հիմնական նպատակն այն է, որպեսզի հետազոտողների, կրթության կառավարման ոլորտում ներգրավված շահագրգիռ կողմերի, քաղաքական գործիչների, պրակտիկ մասնագետների և այլոց ուշադրությունը սևեռվի առավել հրատապ լուծում պահանջող հարցերի վրա:

Կրթության ոլորտը բավականին ընդգրկուն է ու բազմաբովանդակ, այդ իսկ պատճառով կարելի է առանձնացնել հիմնախնդիրների մի քանի խմբեր: Երկու հիմնական խմբերից **առաջին խումբն** այն հիմնախնդիրներն են, որոնք կրթության կառավարմանն են առաջադրվում հասարակության կողմից: Որպես այդ խմբի օրինակ՝ կարելի է առանձնացնել ՅՈՒՆԵՍԿՕ⁴³⁶-ի կողմից առաջ քաշված կրթության կառավարման հիմնախնդիրները, որոնք մշակվում են ամեն տարի հասարակության լայն շերտերում իրականացրած սոցիոլոգիական մեծ ընտրանքով հարցումների արդյունքում: Այսպես, ըստ 2017թ.-ի ուսումնասիրությունների՝ կրթության կառավարման ոլորտում առանձնացվել են հետևյալ հիմնախնդիրները.

1. Կրթության հասանելիության և հավասար «մուտք»-ի ապահովում: Սա բնորոշ է բոլոր երկրներին և, հատկապես, հետխորհրդային երկրներին, քանի որ նշվում է, որ բարձրագույն կրթություն ստացողները կազմում են հասարակության փոքր մասը: Ավելի քիչ թիվ են կազմում բարձրագույն կրթությունը գերազանցությամբ ավարտողները: Սրանից էլ բխում է հաջորդ հիմնախնդիրը:

2. Կրթության որակի ապահովում և վերահսկողություն: Սա ևս շատ առանձնահատուկ հիմնախնդիր է մեր տարածաշրջանի համար, քանի որ տարբեր հետազոտությունների արդյունքում պարզվում է, որ հետխորհրդային երկրներում

⁴³⁴ Webster, F., Theories of Information Society, Routledge., London, 2002

⁴³⁵ Mayer, K. U., Arbeit und Wissen., Die Zukunft von Bildung und Beruf, Frankfurt am Main: Campus, 2000, 383.

⁴³⁶ <https://en.unesco.org/themes/education:>

ուսանողի առաջադիմության ցուցանիշերն ավելի ցածր են, քան Եվրոպայում սովորող ուսանողինը:

3. Անկանխատեսելի իրավիճակներին պատրաստ լինելու և ճիշտ կառավարելու հիմնախնդիրը: Սրա հետ են կապվում բոլոր տեսակի իրավիճակները՝ ներառյալ բարեփոխումները, դրանց հետևանքները, արդյունքում ձևավորված իրադրությունները և դրանց ճիշտ կառավարման հնարավորություններն ու պայմանները:

4. Ֆինանսավորման ու կառավարման մեխանիզմների հիմնախնդիրը: Անցումային հասարակության պայմաններում մեր երկրում դեռևս վերջնականապես հաստատված չեն կառավարման արդյունավետ մեխանիզմներ և դրանից բխող ֆինանսավորման մեխանիզմներ: Մի կողմից՝ դա պայմանավորված է անցումային ու փոփոխական իրավիճակով, մյուս կողմից՝ զարգացած փորձի տեղայնացման առանձնահատկություններով⁴³⁷:

Հիմնախնդիրների **երկրորդ խմբի** մեջ են մտնում կրթական հետազոտությունների միջոցով կրթության ոլորտում վեր հանած կառավարման ամենահրատապ ու գործնական լուծումներ պահանջող հիմնախնդիրները: Կրթության կառավարման արդի ուսումնասիրությունների ոլորտում ընդհանրական ձևով այսօր առանձնացվում է կրթության կառավարման ամենաառանցքային հիմնախնդիրը, որը կապված է կառավարման կենտրոնացման և ապակենտրոնացման հետ:⁴³⁸ Ղեկավարման ապակենտրոնացման գործընթացն անմիջական ու մեծ նշանակություն ունեցավ կրթության համակարգի վրա: Պաշտոնական ձևով հրահանգվեց կառավարող կենտրոնական մարմնի հիմնական կառավարող գործառույթը սահմանափակել և այն կապել կառավարող կենտրոնական մարմինների հետ: Դրա նպատակն էր ընդլայնել կրթության զարգացման ուղղությունները, կրթության կազմակերպման կոնկրետ հիմնահարցերը արագ ու տեղում լուծելու հնարավորություններ ստեղծել: Կրթության կառավարման ապակենտրոնացման գործընթացին միացել է նաև Հայաստանի կրթության համակարգը:

Անդրադառնալով ֆինանսավորման ու կառավարման հիմնախնդիրներին՝ «ՀՀ բարձրագույն կրթության ֆինանսավորման ռազմավարության» մեջ նշվում է, որ Հայաստանի Հանրապետության երկարաժամկետ զարգացման ռազմավարության՝ Կայուն զարգացման ծրագրի կարևոր գերակայություններից է բարձրագույն կրթության ոլորտի բարեփոխումը և զարգացումը:⁴³⁹ Այդ նպատակներն այսօր ավելի այժմեական են, քանի որ Հայաստանն աստիճանաբար արագացնում է իր քայլերը Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին միանալու ուղղությամբ՝ համաձայն Բոլոնիայի գործընթացի: Այդ ուղղությամբ արձանագրվել են մի շարք կարևոր ձեռքբերումներ, որոնցից են՝ բակալավրական ու մագիստրոսական ծրագրերի գործարկումը, Եվրոպական կրեդիտների փոխանցման համակարգի ներդրումը և այլն:

Վերջին տասնամյակում Հայաստանում մի շարք միջոցառումներ են ձեռնարկվել բարձրագույն կրթության ոլորտը վերափոխելու ուղղությամբ, սակայն դեռևս գոյություն ունեն չլուծված խնդիրներ ու բարդություններ, որոնք շեղում են ուշադրությունը ոլորտի կողմից իրականացվող դասավանդման ու գիտահետազոտական աշխատանքների

⁴³⁷ **Michaela M. & Shreya P.**, Quality management in higher education: Developments and drivers, Results from an international survey, Paris, France, 2017, 42-65

⁴³⁸ **Vulfson B.L.**, Actual problems of education management: centralization and decentralization, 2012, 88

⁴³⁹ **ՀՀ Կառավարություն**, Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության ֆինանսավորման ռազմավարություն, հունիսի 30-ի նիստի N 25 արձանագրային որոշման Հավելված N 1, Երևան, 2011:

որակից և դանդաղեցնում ոլորտի հետագա վերափոխումների արդյունավետ իրականացման ընթացքը: Այդ հիմնախնդիրներից են.

1. Ֆինանսավորումը հիմնված է մուտքերի վրա

Թեև ՀՀ կառավարությունը անցում է կատարել պետպատվերի համակարգից ուսանողական նպաստների համակարգի, այնուհանդերձ ֆինանսավորման մեխանիզմը մնում է հիմնականում մուտքերի վրա հիմնված, այլ ոչ թե արդյունքների: Այլ կերպ ասած՝ ֆինանսավորման հիմքում ընկած է ուսանողների քանակը տարբեր կուրսերում, այլ ոչ թե հաջողությամբ ու անհրաժեշտ գիտելիքների պաշար ունեցող բուն ավարտածների թվաքանակը: Վերջինս հանդիսանում է նաև ՀՀ-ում ակտիվորեն ներդրվող ծրագրային բյուջետավորման սկզբունքներով ու ձևաչափով բյուջեի ներկայացման կարևոր արդյունքային ցուցանիշներից մեկը:

2. Խթանների ու հաշվետվողականության պակասը

Ըստ բուհերի՝ «պետպատվերային» տեղերի բաշխումը հիմնված է գերազանցապես փաստացի տվյալների վրա և, չի կապվում համալսարանների կողմից ապահովվող որակի կամ արդյունավետության հետ: Բացի այդ, շատ աննշան կամ ընդհանրապես ոչ մի տեղեկատվություն չի հրապարակվում բուհերի գործունեության, ինչպես, օրինակ, ուսանողների դուրս մնալու, դասընթացների տևողության, արդյունավետության և այլնի վերաբերյալ: Արդյունքում՝ բուհերը ներկայումս չունեն միանշանակ խթաններ՝ իրենց կատարողականները բարելավելու համար:

3. Գերմանագիտացում.

Գործող համակարգի շրջանակներում ՀՀ կառավարությունը դեռևս սահմանում է ուսանողական նպաստներ ավելի քան 200 առանձին մասնագիտացման բնագավառներում, իսկ մեկ բուհին հատկացվող ուսանողական նպաստները մեկ մասնագիտության գծով կարող են տատանվել 2-ից մինչև 60-ը: Մասնագիտացման նման բարձր մակարդակը սահմանափակում է ուսանողների շարժունակությունն ու բուհերի ճկունությունը:

4. Շուկայի պահանջարկին անհամապատասխանությունը

Ուսանողների ընտրությունն ու պահանջարկը աննշան դեր են խաղում բարձրագույն կրթության ֆինանսավորման գործող համակարգում: Առկա է նշանակալից չբավարարված պահանջարկ: Մասնագիտացման քվոտաները խնդրահարույց են՝ հաշվի առնելով կառավարության կողմից կանոնակարգման բարձր աստիճանը: Հաճախ բուհերը չեն տալիս աշխատաշուկայի պահանջներին համապատասխան գիտելիք ու հմտություններ, ինչը կարող է պայմանավորված լինել բուհի կառավարման գործընթացում և հատկապես ուսումնական պլանների մշակման գործընթացում շուկայի պահանջները հաշվի չառնելով:

5. Ուսանող/աշխատակազմ ցածր գործակիցը

Հայաստանի բուհերում ուսանող/դասախոս միջին գործակիցը կազմում է ընդամենը 9.4, մինչդեռ դասախոս/վարչական անձնակազմ գործակիցը 1 է: Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) երկրներում ուսանող/դասախոս միջին ցուցանիշը 15 է: Այսպիսի անարդյունավետությունը գլխավորապես հորիզոնային Միության ժառանգությունն է, երբ աշխատանքի էր նշանակվում վարչական աշխատողների ավելի մեծ քանակ, քան անհրաժեշտ էր:

6. Չափազանց մեծ ուշադրություն սոցիալական հարցերին

Բարձրագույն կրթության բյուջեի զգալի մի բաժին հատկացվում է սոցիալական, այլ ոչ թե կրթական նպատակների համար: Ուսանողների կրթաթոշակը էական ազդեցություն չի գործում ոչ մատչելիության և ոչ էլ կյանքի որակի վրա, մինչդեռ

Եապես ավելացնում է կառավարության ծախսերը՝ ուսանողներին ֆինանսական աջակցությունն ցուցաբերելու մասով⁴⁴⁰:

ՀՀ կրթության համակարգի համար առանձնահատուկ նշանակություն ունի զարգացող համաշխարհային փորձին արագ արձագանքելը և համապատասխան քայլեր ձեռնարկելը: Հայաստանի Հանրապետությունում հատկապես կարևոր է կրթության համակարգի զարգացումը և, որպես արդյունք, դրանում որոշակի ավանդույթների, մշակույթի ձևավորումը, քանի որ կրթությունը հենարանային է մյուս համակարգերի զարգացման համար: Կրթական համակարգի ձեռքբերումները հաճախ հանդես են գալիս որպես կոնկրետ ռեսուրսներ պետության զարգացման համար: Եվ քանի որ կրթությունը ռեսուրսային սնող օղակ է մյուս ոլորտների համար, ապա դեռևս զարգացող Հայաստանի Հանրապետության պարագայում ակնհայտ է կրթական համակարգի զարգացման, կատարելագործման ու արդյունավետության բարձրացման ռազմավարական նշանակությունը:

ՀՀ-ում բարձրագույն կրթության ոլորտում ծառայած կարևորագույն հիմնախնդիրը, որ առանձնացնում են փորձագետները, շրջանավարտների ու աշխատաշուկայի դիմամիկ համապատասխանության հիմնախնդիրն է: Ժամանակակից պայմաններում շուկայական մեխանիզմներն ու հարաբերությունները չեն կարող շրջանցել կրթական ոլորտը: Ինքնին հասկանալի է, որ կրթական ծառայությունների շուկան պետք է ձևավորվի համապատասխան առաջարկի ու պահանջարկի հիման վրա: Սակայն այդ պարագայում պարտադիր է հաշվի առնել կրթական ոլորտի առանձնահատկությունները և սոցիալական կարևոր նշանակությունը, հատկապես բարձրագույն կրթությունն ստանալու իրավունքը և դրա պաշտպանվածությունը:

Կրթության կառավարման բնագավառում իրականացվել են մի շարք բարեփոխումներ, որոնց շնորհիվ մեծացել են ուսումնական հաստատությունների ինքնավարությունն ու պատասխանատվությունը, ընդլայնվել է քաղաքացիական հասարակության մասնակցությունը, նպաստավոր պայմաններ են ստեղծվել կրթության համակարգի և գործարար հանրության արդյունավետ երկխոսության համար, կառավարման մարմինների գործունեությունը դարձել է ավելի թափանցիկ, սակայն արդյունավետ կառավարման համակարգ ունենալու համար դեռևս բազմաթիվ հիմնախնդիրներ կան, որոնք պետք է լուծվեն:

Հայաստանի մրցունակության ապահովման տեսանկյունից կրթության համակարգը երկու հիմնական մարտահրավերների առաջ է կանգնած: Կրթության համակարգը դեռևս Էական դերակատարում չունի հանրապետության տնտեսական խնդիրներում, մինչդեռ առանց կրթության համակարգի արմատական բարեփոխման անհնար կլինի ապահովել զարգացման շարունակականությունը, գիտելիքահեն տնտեսության և հասարակության ձևավորումը: Կրթության համակարգը պետք է լինի բարձր մտավոր ու ստեղծագործական ունակություններով օժտված, միջազգային մակարդակում մրցունակ գիտության և բարձր տեխնոլոգիաների բնագավառի կադրերի պատրաստման պատասխանատուն ու երաշխավորը: Կայուն տնտեսական աճը երկարաժամկետ հեռանկարում, ինչպես նաև երկրի արդիականացման աստիճանն ու ինստիտուցիոնալ կարողությունների աճը մեծապես պայմանավորված են կրթության ոլորտի բարեփոխումների հաջող իրականացմամբ:

Միջազգային ու տարածաշրջանային համագործակցությունը չափազանց կարևոր հանգամանք է և, գտնվելով մի տարածաշրջանում, որտեղ խաչվում են տարբեր աշխարհաբաղաբանական ուժերի շահեր, Հայաստանը որդեգրել է միջազգային

⁴⁴⁰ ՀՀ կառավարություն, Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության ֆինանսավորման ռազմավարություն, հունիսի 30-ի նիստի N 25 արձանագրային որոշման Հավելված N 1, Երևան, 2011:

ակտիվ ներգրավվածության ռազմավարություն: Դա մի կողմից՝ ենթադրում է կրթության բնագավառի ակտիվ մասնակցություն գլոբալ ու տարածաշրջանային գիտակրթական գործընթացներին, մյուս կողմից՝ խնդիր է առաջադրում կրթությանը՝ մեծացնելու նման մասնակցության ներուժը, ապահովելու լեզվական ու միջմշակութային շփումների դժվարությունների հաղթահարումը:

Հարկ է նշել, որ գլոբալացումը մարտահրավեր է նետել արդի հասարակությանը և կրթության ոլորտին նույնպես, որին համապատասխանելու հիմնական պայմանը՝

1. **մրցունակ կադրերի պատրաստումն** է, որոնք կկարողանան Նորարարական մոտեցումներ ցուցաբերել առկա հիմնախնդիրների լուծման գործընթացին և կանխատեսել ապագայի կառավարման մարտահրավերները՝ հիմնվելով համընդհանուր ունիվերսալ գիտելիքների վրա:

2. Որպես արդի հասարակության գործառնական գերակայություն՝ **գիտելիքի կառավարումն** իր յուրահատկությամբ ու համընդհանրությամբ պայմանավորում է տեղեկատվական հասարակության բնույթը⁴⁴¹:

Նորովի մոտեցումն էլ հիմք ընդունելով՝ տեղեկատվական հասարակության տեսաբաններ Դ. Բեյլը, Է. Թոֆլերը, Մ. Կաստելյը գիտելիքի կառավարման տիրույթ ընդգրկեցին կրթության որակի ապահովման գործունեության զարգացման գործընթացը⁴⁴²: Որպես հեղափոխություն՝ այդ գործընթացը Նորագույն տեխնոլոգիաների ազդեցությամբ արմատապես փոխեց իշխանության երեք հիմնական ռեսուրսի՝ մարդկային ու տնտեսական կապիտալի, ինչպես նաև գիտելիքի կառավարման արժեքաբաժնույթան փոխհարաբերությունները: Ուսումնասիրելով արևմտյան և արևելյան քաղաքակրթությունների կրթական համակարգերը՝ Է. Թոֆլերը կարծում է, որ գիտելիքն այսօր տեղեկատվություն է՝ օժտված գործնական արժեքավորությամբ և ծառայում է որոշակի արդյունքների ստացմանը: Ուստի գիտելիքների կառավարումը, որոշակի մասնագիտական, գործնական փորձով պայմանավորված, շարունակական գործընթաց է, որ սկսվում է նախակրթարանից և ավարտվում մարդու մահով: Սակայն դա այն դեպքում, երբ մարդն ինքը գիտակցորեն կառավարում է իր գործունեությունը: Մարդկության պատմությունն ապացուցում է, որ այդպիսի մարդկանց թիվը քիչ է, ուստի հասարակության զարգացման ապահովման համար արդյունաբերական դարաշրջանից սկսած մինչև այսօր գիտելիքի կառավարման հիմնական պատասխանատուն այն բոլոր ինստիտուտներն են, որոնց միջոցով հասարակությունը կենսագործունեություն է իրականացնում⁴⁴³: Ելակետ ընդունելով թոֆլերյան մոտեցումը՝ փաստենք, որ արդի դարաշրջանում փոխվել է կրթության կառավարման փիլիսոփայությունը, քանի որ առաջին պլան է մղվել ստեղծագործ-արարող մարդը՝ մրցունակ գիտելիքներով, նորարարական մտածողությամբ, ինչպես նաև նոր տեխնոլոգիաները տնօրինելու ունակությամբ:

Այսօր ՀՀ-ում առկա է գերխնդիր՝ ուսումնասիրել կրթական ծառայության որակը և բնականոն արդիականացնել կրթական համակարգի կառավարումը՝ իրականացնելով ռազմավարական պլանավորում: Վերջինս, որպես հասարակության գերակա արժեք, հնարավորություն է ընձեռում ուսումնասիրելու հասարակական առաջընթացի վրա մրցունակ կրթության ազդեցությունը, ինչը Նորացում է քաղաքական, հանրային ու պետական կառավարման գործառույթները, կառավարող ընտրանու կողմից նոր հանրային կառավարման կիրառումը կրթական համակարգում: Նշված հանգամանքների տիրույթներում ՀՀ-ում նոր սերնդի գիտելիքի կառավարման և տեղեկատվական տեխնոլոգիաների տիրապետման միջոցով հիմնավորվում է այն գաղափարը, որ անհ-

⁴⁴¹ Кастельс М., Информационная эпоха, экономика, общество и культура. OSIAF, Москва, 2000, ст. 493.

⁴⁴² Тоффлер Э., Третья волна, Пер, с агл., Москва, 2004, ст. 87.

⁴⁴³ Тоффлер Э., Третья волна, Пер, с агл., Москва, 2004, ст. 87.

րաժեշտ է որակի կառավարում իրականացնել «լավ կառավարման» սկզբունքների ներդրման միջոցով: Այդ համատեքստում կրթական ծառայություն է համարվում՝

1. հասարակության սուբյեկտների անհատական ու միասնական ներուժի ընդլայնված վերարտադրության ու զարգացման գործընթացը, որն իրականացվում է սպառողին մասնագիտական գիտելիքներ, ունակություններ, հմտություններ հաղորդելու և կարողություններ ձևավորելու նպատակով:

2. նպատակաուղղված գործունեություն, որը ծավալվում է հասարակության կրթական պահանջները բավարարելու նպատակով՝ նպաստելով ինչպես համապատասխան գիտելիքների, հմտությունների և կարողությունների ձեռքբերմանը, այնպես էլ ժամանակի, բախումների, սթրեսի, կարիքի գնահատմանը, արդյունքի ու որակի կառավարմանը: Այդ բազմաչափ գործընթացը կառավարելիս անհրաժեշտ է հաշվի առնել ինչպես ուսումնական հաստատության կողմից մատուցվող ծառայությունների, այնպես էլ կրթական ծառայության սպառողի (սովորողի) ներուժի որակները: Այդ առումով ուսումնական հաստատությունը պետք է.

- Ապահովի կրթական համակարգում որակի բարելավումը, մասնավորապես կատարող անձնակազմի անհրաժեշտ արհեստավարժությունը,
- հյթան հանդիսանա՝ բարձրացնելու մասնագետների պատրաստվածությունը և միջոցներ տրամադրի այն նորարարացնելու համար,
- Քնահատի ձեռնարկված միջոցների արդյունավետությունը:

Բարձրագույն կրթությունը մարդկության առջև ծառայած բազմաթիվ նոր, գլոբալ խնդիրների լուծման կարևորագույն միջոց է: Մեր երկիրը, ունենալով սահմանափակ բնական ռեսուրսներ և ներդրումային հնարավորություններ, կրթական ոլորտը դիտարկում է որպես առաջնային ու զարգացում ապահովող հիմնական գործոն: Դրա լուծման անհրաժեշտ պայմանը բարձրագույն կրթությունն է, որի զարգացումը ամենակարևոր ազգային առաջնահերթություններից է, ինչի շնորհիվ զարգացած երկրներն ապահովում են համախառն ներքին արդյունքի աճի զգալի մասը: Հայաստանի Հանրապետությունում ավանդաբար գոյություն է ունեցել բարձրագույն կրթություն ստանալու հասարակական բարձր պահանջարկ: Ներկայումս, առավել քան երբևիցե, բնակչությունը դիտարկում է բարձրագույն կրթությունը որպես նյութական բարեկեցություն, սոցիալական կարգավիճակ, շարժունություն ապահովող հիմնական միջոց: Հասարակության մեջ ձևավորվել է կայուն մոտեցում կրթությանը՝ որպես կապիտալի ներդրման առավել հեռանկարային ու շահութաբեր մի ոլորտի: Կրթական ծախսերը բնակչությունն արդեն ընդունում է որպես այլընտրանք չունեցող անհրաժեշտություն և անխուսափելիություն: Մասնագետների պատրաստում հիմնականում իրականացնում են պետական բուհերը, որոնցում սովորում է ուսանողների հիմնական մասը՝ շուրջ 86%-ը:

Բարձրագույն մասնագիտական կրթության մակարդակը և վիճակը բնութագրող մի շարք ցուցանիշներ կան: Կարող ենք առանձնացնել բնակչության մեջ բարձրագույն կրթություն ունեցողների բաժինը, բուհերում ուսանողների ընդհանուր քանակը, ուսանողների քանակը բնակչության մեջ, կրթական ծառայությունների արտահանման մակարդակը, տասը հազար բնակչի հաշվով ուսանողների քանակը, պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման աստիճանը, մեկ դասախոսի հաշվով ուսանողների քանակը⁴⁴⁴:

Բարձրագույն կրթության կառավարման համակարգում առաջնային խնդիր է ուսանողների ներգրավումը պետական ուսումնական հաստատություններում: Կառավարման գործընթացի հնարավորինս արդյունավետ կազմակերպված լինելու

⁴⁴⁴ Карпенко О.М., Бершадская М.Д., Вознесенская Ю.А., Социология образования», Показатели уровня образования в странах мира: анализ данных международной статистики, 2008, ст. 4-20.

պարագայում ենթահամակարգերի համագործակցային աշխատանքները բերում են բնակչության շրջանում բուհի վարկանիշի բարձրացման: Արդի պայմաններում յուրաքանչյուր բուհի կառավարման գործունեությունը միտված է բարձրացնելու բուհի գործունեության արդյունավետության աստիճանը, ինչպես նաև աշակերտներին ուղղորդելու դեպի բարձրագույն ուսումնական հաստատություն:

Պետք է նշել, որ արդի պայմաններում առավել պահանջարկ վայելող մասնագիտությունների ընդլայնման միտումը բացասաբար է անդրադառնում աշխատաշուկայի հավասարակշռության վրա, առաջացնում բարձրագույն կրթությամբ կադրերի ավելցուկ որոշ մասնագիտությունների գծով և պակաս՝ մյուսների գծով: Այսինքն՝ բարձրագույն կրթության կառավարման հիմնախնդիրներից է նաև կրթական ծառայությունների և աշխատանքի շուկայի միջև փոխկապվածությունների ապահովումը: Բարձրագույն կրթության համակարգում մասնագիտությունների ընտրության հարցում նույնպես առաջանում են խնդիրներ, քանի որ բուհերում մի շարք մասնագիտություններ ուղղակի պահանջարկ չունեն: Այս դեպքում հատկանշականն այն է, որ կրթական ծառայությունների շուկայի գործունեությունն ուղղված է ինչպես աշխատանքի, այնպես էլ կրթական շուկայի պահանջների բավարարմանը: Սովորողները և գործատուները հաճախ ներկայացնում են տարբեր պահանջներ առանձին մասնագիտությունների նկատմամբ:

Ամբողջացնելով բարձրագույն կրթության կառավարման արդի հիմնախնդիրները՝ ավելացնենք նաև հետևյալները՝

- Հայաստանում դեռևս բարվոք չէ իրավիճակը ուսանողական շարժունության ասպարեզում: Ուսումնական պլաններով կոշտ ռեգլամենտավորված ուսուցման կազմակերպման առկա ձևը խիստ սահմանափակում է ուսանողների տեղափոխությունները մասնագիտությունից մասնագիտություն և բուհից բուհ անգամ Հայաստանում:
- Հիմնականում արտաքին օբյեկտիվ պատճառներով գրեթե բացակայում է ուսանողների միջազգային ակադեմիական շարժունությունը՝ կրեդիտների հետագա փոխանցումով: Չեն գործում ուսանողների միջազգային շարժունությանը նպաստող եվրոպական մեխանիզմները, սահմանափակ բնույթ են կրում արտասահմանյան բուհեր երկկողմանի պայմանագրերով փոխադրումները:
- Կրթական ծրագրերում գերակշռում է սովորողների տեսական պատրաստվածությունը, շրջանավարտները չունեն կյանքի և մասնագիտական գործունեության համար բավարար կարողություններ ու հմտություններ, արդյունավետ մասնագիտական կողմնորոշում:
- Դեռևս ապահովված չէ կրթական ծրագրերի ամբողջական համադրելիությունը միջազգային չափանիշներին: Բուհերի մեծամասնությունը դեռևս չունի ուսանողների ակադեմիական տվյալների գրանցման ու կառավարման ավտոմատացված էլեկտրոնային (ցանցային) համակարգեր:
- Խիստ ցածր է կրեդիտային համակարգի վերաբերյալ բուհական հանրության իրազեկվածության մակարդակը:
- Դասավանդող անձնակազմը բավարար չի տիրապետում կրթության ժամանակակից մեթոդներին ու տեխնոլոգիաներին, ցածր է մանկավարժական կադրերի պատրաստման, վերապատրաստման արդյունավետությունը, չկա մանկավարժների մասնագիտական առաջխաղացման արդյունավետ համակարգ:
- Անբավարար է ժամանակակից տեղեկատվական ու հեռահաղորդակցման տեխնոլոգիաների հասանելիությունը և կիրառումը ուսումնական գործընթացում, կա էլեկտրոնային ուսումնական նյութերի պակաս, շատ

ուսումնական հաստատությունների ուսումնասիրության բազան չի համապատասխանում ժամանակակից պահանջներին:

- Կրթության կառավարման բոլոր մակարդակներում կա կառավարչական կարողությունների, կառավարման արդյունավետ մեխանիզմների զարգացման անհրաժեշտություն: Բարելավման կարիք ունեն կրթության ֆինանսավորման և դրանց անդյունավետ օգտագործման մեխանիզմները:

HIGHER EDUCATION MANAGEMENT ISSUES IN THE MODERN WORLD

ANNA ALEKSANYAN

*Yerevan State University, Department of Pedagogy,
Center of Pedagogy and Education Development,
Ph.D. in Pedagogical Sciences, Associate Professor,
Yerevan, Republic of Armenia*

HRANT HAKOBYAN

*Yerevan State University, Department of Education Management,
MA in Education,
Yerevan, Republic of Armenia*

The main aim of article is to present the dominated issues of higher education management in the modern world. The following objectives are set: to consider education sphere as a main factors for the development of the country; to identify and address the key issues in the field of education management; to analyze the peculiarities of these problems in Armenia; to discuss the possible ways of solving them.

Logical (analysis, synthesis, refinement, idealization, generalization, induction, deduction, analogy) methods were used in the research to check and monitor the dynamics and trends of processes.

Developed countries ensure the increase of their GDPs through increasing their higher education quality. For the development and adjustment of quality higher education, it is crucial to identify, know and understand the main issues of the higher education management, as in order to achieve the goals of higher education management and provide quality education, these issues need to be targeted and solved. Current article presents the issues of higher education management, which were identified through different researches. The article emphasizes the case of Armenia and their issues of higher education management.

Keywords: *education management, higher education, education issues, RA higher education, adjusting education to the needs of the society, higher education strategy, quality education.*

СОВРЕМЕННЫЕ ПРОБЛЕМЫ УПРАВЛЕНИЯ ВУЗОМ В МОДЕРНИЗИРУЮЩЕМСЯ МИРЕ

АННА АЛЕКСАНЯН

*доцент кафедры педагогики Центра развития педагогики и образования
Ереванского государственного университета, кандидат педагогических наук,
г.Ереван, Республика Армения*

ГРАНТ АКОПЯН

*Магистр отдела организации образования
Ереванского государственного университета
г.Ереван, Республика Армения*

Цель статьи – представить актуальные проблемы управления вузом в условиях современного мира. Из цели следуют следующие задачи: рассматривать сферу образования как один из основных факторов развития страны; выявить и представить ключевые проблемы в сфере управления образованием; проанализировать особенности этих проблем в Армении; обсудить возможные пути их решения.

В ходе исследования использовались логические (анализ, синтез, уточнение, идеализация, обобщение, индукция, дедукция, аналогия) методы проверки и отслеживания динамики и тенденций процессов.

Развитые страны обеспечивают значительную часть своего валового внутреннего продукта за счет развития высшего образования. Для обеспечения и развития соответствующей системы образования и обучения важно четко определить и понять основные проблемы управления образованием, поскольку, только определив и решив их, можно достичь изначально поставленных целей. В данной статье представлены ключевые проблемы управления образованием, в основе которых лежат результаты различных исследований. Затем проблемы управления образованием детализируются в контексте высшей образовательной системы Армении.

Ключевые слова: *управление образованием, университетское образование, проблемы образования, высшее образование в Армении, соответствие образования обществу, стратегия высшего образования, качество образования.*

**ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԵԴԻԱԿՈՄՊԵՏԵՆՏՆՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԽՆԴԻՐԸ ԱՆԳԼԵՐԵՆԻ ԻՐԱՎԱԳԻՏԱԿԱՆ
ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ***

ՀՏԴ 378.147:811.111

ՍԱՐԻԱՄ ԱՈՍԹԵԼՅԱՆ

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ, Հայաստանի Հանրապետության ոստիկանության կրթահամալիրի լեզուների ամբիոնի դասախոս, ոստիկանության կապիտան, ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն mariamarakelyan89@mail.ru

Արդի տեղեկատվական դարաշրջանում տեղեկատվության անսահման ու անկառավարելի հոսքերի պայմաններում, ի թիվս գրագիտության մեզ հայտնի տեսակների, չափազանց կարևոր է դարձել մեդիա ու տեղեկատվական գրագիտությունը՝ որպես տեղեկատվական անվտանգության, անձի վարգազման, շարունակական կրթության և ինքնակրթության երաշխիք: Հոդվածում ներկայացվում են անգլերենի իրավագիտական կողմնորոշման դասընթացում ուսանողների մեդիակոմպոտենտության ձևավորման մակարդակի ուսումնասիրության արդյունքները, որն անհարժեշտ է համացանցում անգլերենով իրավագիտական մեդիատեքստերի արդյունավետ որոնման, գնահատման ու օգտագործման համար: Մեդիակոմպոտենցիայի ձևավորումը իրավագիտական կողմնորոշման անգլերենի դասընթացում բավականին կարևոր է, քանի որ ապագա իրավաբանների համար մասնագիտական ոլորտի նորություններին ու փոփոխություններին իրապեկ լինելու միջոցներից մեկը օտար լեզվով ուսումնասիրությունն կատարելն է ժամանակակից մեդիատեխնոլոգիաների միջոցով: Բացի այդ, մեդիակոմպոտենցիայի բարձր մակարդակ ունեցող անհատը կարող է նաև արդյունավետ կերպով օգտագործել մեդիատեխնոլոգիաները շարունակական լեզվակրթության ու ինքնակրթության նպատակով:

Հոդվածում ներկայացված ուսումնասիրությունը հիմնված է ՀՀ մի շարք բուհերի իրավագիտական ֆակուլտետներում անցկացված հայտորոշիչ թեստավորման արդյունքների վրա: Թեստավորման արդյունքում հաջողվել է հստակորեն սահմանել ուսանողների՝ մեդիակոմպոտենցիայի տիրապետման դժվարությունները, որոնց հաղթահարումը հնարավորություն կընձեռի՝ արդյունավետ ձևավորելու այդ հմտությունները:

Բանալի բառեր՝ մեդիակոմպոտենցիա, հայտորոշիչ թեստավորում, մեդիա և տեղեկատվական գրագիտություն, տեղկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաներ, մուլտիմեդիա, գործունեական մոտեցում, փաստական գիտելիքներ:

Այսօր տեղեկատվությունը դարձել է համաշխարհային տնտեսության շարժիչ ուժը և, իհարկե, կրթության ու գիտատեխնիկական առաջընթացի կարևորագույն բաղադրիչը: 21-րդ դարում անհատն իր թե՛ անձնական կյանքում, թե՛ աշխատանքային և ուսումնական գործունեության մեջ բազմաբնույթ տեղեկատվության անսահման ու

* Հոդվածը ներկայացվել է 08.03.2019թ., գրախոսվել՝ 13.03.2019թ., տպագրության ընդունվել՝ 17.06.2019թ.:

անկառավարելի հոսքերի պայմաններում կանգնում է այդ հոսքերի մեջ կողմնորոշվելու և ճիշտ ընտրություն կատարելու խնդրի առջև: Տեղեկատվությունը, որպես կանոն, մարդկանց հասանելի է դառնում գրքերի, դասագրքերի, գրադարանների, լրատվամիջոցների, համայնքային ռեսուրսների, մասնավոր կազմակերպությունների, իսկ էլեկտրոնային տեղեկատվությունը՝ նաև մեդիայի ու համացանցի միջոցով: Եվ եթե տեղեկատվության ավանդական աղբյուրները (գրքեր, պաշտոնական ՉԼՄ-ներ), որպես կանոն, անցնում են ստուգման ու վերահսկման ինչ-որ գտիչների միջով, էլեկտրոնային ու համացանցային ռեսուրսները հիմնականում չեն վերահսկվում: Չվերահսկվող տեղեկատվական հոսքերը, բնականաբար, խնդիր են հարուցում դրանց հավաստիության, իսկության ու հուսալիության վերաբերյալ:

Տեղեկատվությունը հանդես է գալիս նաև մուլտիմեդիայի տեսքով՝ ներառելով գրաֆիկական, ձայնային ու տեքստային ձևաչափեր, ինչն էլ նոր խնդիրներ է առաջ բերում գնահատման ու ընկալման տեսանկյունից: Այսինքն՝ տեղեկատվության անորոշ որակը և մեծացող քանակը հասարակության համար լուրջ մարտահրավերներ են դառնում: Տեղեկատվության մեծ ծավալն ինքնին չի կարող տեղեկացված հասարակությունն ստեղծել՝ առանց տեղեկատվությունն արդյունավետ օգտագործելու համար անհրաժեշտ, լրացուցիչ հմտությունների⁴⁴⁵: Նման հմտությունների ձեռքբերումն այսօր պայմանավորված է համակարգչային, համացանցային, մեդիա և տեղեկատվական գրագիտությամբ: Գրագիտության այդ նոր ձևերն իրենց հերթին ենթադրում են կոմպետենցիաների մի համակարգ, որը թույլ կտա փնտրելու, գտնելու, գնահատելու և ճիշտ ընկալելու ցանկացած մեդիատեքստ:

Ժամանակակից մասնագիտական կրթության համակարգը հիմնվում է կոմպետենտային և գործունեական մոտեցման վրա: Այս մոտեցումը շեշտը դնում է կրթության վերջնարդյունքի վրա՝ ընդ որում, վերջնարդյունք համարելով ոչ թե յուրացված գիտելիքների քանակը, այլ անձի ունակությունը արդյունավետ գործելու տարբեր խնդրահարույց իրավիճակներում ձեռք բերված գիտելիքների, հմտությունների ու անձնային որակների կիրառմամբ:

Ըստ Կուզմինովի և Շադրիկովի՝ «կոմպետենտությունը գործունեության սուբյեկտի ձեռքբերումն է, որը տեղի է ունենում մասնագիտական պատրաստականության գործընթացում և իրենից ներկայացնում է սովորողի գիտելիքների, կարողությունների, ունակությունների և անձնային որակների մի համակարգ, որը թույլ է տալիս մասնագիտական գործունեության ընթացքում ծագած խնդիրներին հաջող լուծում գտնել»⁴⁴⁶: Կոմպետենտությունը կոնկրետ անձի կողմից կոմպետենցիաների համակարգի յուրացումն է: Իսկ կոմպետենցիան սովորողի՝ գործունեության ընթացքում առարկայացված կոմպետենտությունն է, գիտելիքների, կարողությունների, անձնային որակների, գործնական փորձառության համակարգը, որն էլ որոշում է անձի՝ գործունեությանը պատրաստ լինելը⁴⁴⁷: Գործունեությունն այդ դեպքում ենթադրում է նորն ընկալելու և փոփոխվող պայմաններում արագ ադապտացվելու ունակություն, ինքնուրույն որոշումներ կայացնելու և դրանք իրականացնելու հմտություն, ճկուն մտածողության և հաղորդակցական հմտությունների տիրապետում, մասնագիտական ոլորտում գործունեության մեթոդների ու միջոցների ընտրություն, ինքնակրթությամբ և շարունակական կրթությամբ զբաղվելու ցանկություն և այլն:

⁴⁴⁵ (ALA) American Library Association. Association of College and Research Libraries, Information Literacy Competency Standards for Higher Education, Chicago, Illinois, 2000, p. 2.

⁴⁴⁶ Кузьминов Я. И., Матросов, В. Л., Шадриков В. Д., Профессиональный стандарт педагогической деятельности // Весник образования N 7, 2007. С. 21

⁴⁴⁷ Սանկվարժական կրթության զարգացման հայեցակարգ, ՀԳՄՀ Գիտահետազոտական կենտրոն, Երևան 2015, էջ 20:

Այսպիսով, կոմպետենցիաները շրջանավարտի ինտեգրված, դինամիկ բնութագրիչներին են, որոնք արտացոլում են ուսուցման ակնկալվող և չափելի վերջնարդունքները (գիտելիքներ, կարողություններ, հմտություններ, անձնային որակներ, գործնական փորձառնություն), այսինքն՝ շրջանավարտի ձեռքբերումները ամբողջ դասընթացի կամ նրա մի հատվածի յուրացումից հետո, որոշակի գործունեություն ծավալելու նրա պատրաստակամությունն ու կարողությունը⁴⁴⁸: Այս դեպքում կոմպետենցիա ասելով հասկանում ենք կարողություն՝ համացանցային ռեսուրսների միջոցով փնտրելու, գտնելու, գնահատելու և ընկալելու իրավաբանական ուղղվածության անզլերեն տեքստեր՝ գործադրելով տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների անսահմանափակ հնարավորությունները: Ըստ այդմ՝ խնդիր է առաջանում գնահատել ուսանողների մեդիակոմպետենտության մակարդակը իրավագիտական կողմնորոշման անզլերենի դասընթացում մատնանշելով առկա խնդիրները և դրանց հիման վրա մշակել մեթոդական համակարգ՝ բուհերի ուսանողների մեդիակոմպետենցիայի ձևավորման համար: Իսկ անզլերենի իրավագիտական կողմնորոշման դասընթացում սովորողի մեդիակոմպետենտության ձևավորումը կարևոր է հետևյալ տեսանկյուններից.

1. Միջազգային իրավունքի ընդունված նորմերին տիրապետելու և դրանցում ցանակացած փոփոխության հաղորդակից դառնալու համար սովորողը պետք է վարժ լինի անզլերենով, համապատասխան մեդիատեխնոլոգիաների միջոցով իրականացնելու ուսումնաճանաչողական գործունեություն : Իսկ մեդիադաշտն այսօր լի է ապատեղեկատվությամբ: Ուստի սովորողին խիստ անհրաժեշտ է մեդիակոմպետենտության բաղկացուցիչ մաս կազմող քննադատական մտածողություն՝ զանազանելու, համեմատելու ու համադրելու տարբեր աղբյուրներից բաղած իրավագիտական տեքստեր: Պակաս կարևոր չէ նաև համակարգչային ու տեղեկատվական գրագիտությունը՝ համապատասխան որոնողական աշխատանք կատարելու, ինչպես նաև գտնված մեդիատեքստի իսկությունն ու արժանահավատությունը գնահատելու համար:
2. Անզլերենի իրավագիտական բլոկն ունի համապատասխան տերմինաբանություն ու ոճական առանձնահատկություններ: Շատ հաճախ անզլերենի ընդհանուր բառաֆոնդից սովորողին հայտնի բառերը կարող են իրավագիտության ոլորտում միանգամայն այլ իմաստ ստանալ: Հետևաբար մեդիատեքստերի փնտրման ու գնահատման կարողությունից բացի, խնդիր է առաջանում նաև դրանց ընկալման կարողությունների առումով: Իսկ ինտերնետ գրագիտության շնորհիվ այն միանգամայն հնարավոր է:
3. Իրավագիտական կողմնորոշման անզլերենի տիրապետումը կարևոր է նաև գործնական գրագրության ասպարեզում: Այս դեպքում բախվում ենք նոր մեդիապրոդուկտի ստեղծման խնդրի հետ: Սովորողներին խիստ անհրաժեշտ են համապատասխան կոմպետենցիաներ՝ հասկանալու մուլտիմեդիական տեխնոլոգիաների ներուժը և դրանց ճիշտ օգտագործումը նոր իրավագիտական մեդիատեքստեր ստեղծելու նպատակով:
4. Քանի որ իրավագիտական կողմնորոշման անզլերենի դասընթացներն իրականացվում են բուհերի բակալավրիական կրթության հիմնականում առաջին և երկրորդ կուրսերում, ապա դասընթացի ավարտից հետո անխուսափելի կարիք է առաջանում պահպանելու ու զարգացնելու լեզվի տիրապետման մակարդակը: Ուստի իրավագիտական կողմնորոշման անզլերենի դասընթացում սովորողների մեդիակոմպետենտության

⁴⁴⁸ Մանկավարժական կրթության զարգացման հայեցակարգ, ՀՊՄՀ Գիտահետազոտական կենտրոն, Երևան, 2015, էջ 21:

ձևավորումը հնարավորություն է տալիս նրանց զբաղվելու շարունակական լեզվակրթությամբ:

Գիտական գրականության մեջ կրթական տարբեր մակարդակներում սովորողների մեդիա և տեղեկատվական գրագիտության գնահատման հիմնախնդրին նվիրված մի շարք ուսումնասիրություններ են կատարել Մ. Աստվածատրյանը, Մ. Բուխարկինայը, Ա. Ֆյոդորովը, Ս. Սիմակովայը, Ս. Ուիլսոնը, Ջ. Բուբարթև և ուրիշներ: Սակայն մասնագետների առջև դեռևս ծառայած է մեդիագրագիտությունը սահմանող կոմպետենցիաների որոշակիացման և դրանց հիման վրա սովորողների մեդիակոմպետենցիայի գնահատման խնդիրը⁴⁴⁹:

Անգլերենի իրավագիտական կողմնորոշման դասընթացում մեդիակոմպետենցիայի տիրապետման դժվարությունները սահմանելու և դրանց ձևավորման համապատասխան ռազմավարություն մշակելու նպատակով ՀՀ ոստիկանության ակադեմիայում և Եվրոպական տարածաշրջանային ակադեմիայում մեր կողմից անցկացվել է ուսանողների մեդիակոմպետենցիայի հայտորոշիչ թեստավորում: Թեստավորմանը մասնակցել են իրավագիտության ֆակուլտետի հարյուր ուսանող, որոնք անգլերենն ուսումնասիրում են ոչ որպես մասնագիտական դասընթաց: Թեստավորումն անցկացվել է երկու փուլով, որից առաջինը վերաբերում էր ուսանողների մեդիակոմպետենցիայի մակարդակի որոշմանը, իսկ երկրորդը՝ անգլերենով իրավագիտական մեդիատեքստերի ընթերցանության կարողությունների ստուգմանը: Ստորև ներկայացված են հայտորոշիչ թեստավորման առաջին փուլի արդյունքները:

Հայտորոշիչ թեստավորման առաջին փուլի առաջադրանքների հիմքում ընկած են մեդիա և տեղեկատվական գրագիտության բաղկացուցիչ այն կոմպետենցիաները, որոնք միտված են ստուգելու տեղեկատվության պահանջմունքի որոշման, տեղեկատվության ձեռքբերման, գնահատման, պահպանման և օգտագործման կարողությունները: Թեստի հիմքում ընկած են հայրենական և արտասահմանյան մի շարք հեղինակների աշխատությունները, ինչպես նաև ՅՈՒՆԵՍԿՕ-ի և Ամերիկյան գրադարանների ընկերակցության կողմից մշակված մեդիա և տեղեկատվական գրագիտության չափորոշիչները⁴⁵⁰:

Թեստային առաջադրանքները համակարգվել են երեք խմբով.

Առաջադրանքների առաջին խումբը (Առաջադրանք 1-2) վերաբերում է համացանցում իրավագիտական տեքստեր որոնելու հմտությանը, որը ենթադրում է գիտելիքներ և կարողություններ որոնողական համակարգերի, դաշտերի, օպերատորների, բանալի բառերի մասին:

Երկրորդ խմբի առաջադրանքները (Առաջադրանք 3-6) նպատակ ունեն ստուգելու համացանցից ձեռքբերված տեղեկատվության գնահատման կարողությունները, որն իր հերթին ենթադրում է գիտելիքներ կայքէջերի ստեղծման ու

⁴⁴⁹ **Жижина М. В.** Медиаграмотность как стратегическая цель медиаобразования: о критериях оценки медиакомпетентности // Эл. журнал Медиаобразование N 4/ 2016. с. 47.

⁴⁵⁰ **Աստվածատրյան Մ., Թերզյան Գ. և այլք,** Տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը հանրակրթական դպրոցում: Ուսումնական ձեռնարկ ուսուցիչների համար, «Ասոդիկ», Երևան, 2004թ., 231 էջ: **Бухаркина М. Ю.** Использование телекоммуникций в обучении иностранным языкам в общеобразовательной школе: Дис. канд. пед. наук, Москва, 1994. 198 с.: **Федоров А. В.** Медиаобразование и медиакомпетентность: анкеты, тесты, контрольные задания, Изд-во Таганрог, Таганрог, 2009. 136 с.: **Симакова С. И.** Формирование медиакомпетентности в системе вузовского образования // Вестник Челябинского государственного университета. 2013. N 22 (313). С. 160-165. **Wilson C.,** Media and Information Literacy Curriculum for Teachers, UNESCO, France, 2011. 192 p.: **Burkhardt, J. M.** Teaching Information Literacy Reframed: 50+ framework based exercises for creating information literate learners, Neal-Shuman, Chicago, 2016, 182 p.

թարմացման, դրանց իսկության, հեղինակի, աղբյուրների ու հղումների տեղեկատվության հավաստիության ու օբյեկտիվության մասին:

Առաջադրանքների երրորդ խումբը (Առաջադրանք 7-8) առնչվում է համացանցի ընձեռած անսահմանափակ հնարավորությունների պայմաններում իրավագիտական տեքստերի ընկալման և օգտագործման կարողությունների ստուգմանը:

Հայտորոշիչ թեստավորման արդյունքներն ամփոփվել են Նշված տարբերակների հանրագումարից ստացված տոկոսային հարաբերության հաշվարկով: Առաջադրանքների ստուգումը կատարվել է գնահատման հետևյալ սանդղակով:

1. «Ճիշտ» պատասխան, եթե առաջադրանքը կատարված է լիարժեք՝ առանց սխալների:
2. «Սխալ» պատասխան, եթե առաջադրանքը կատարված է ամբողջությամբ սխալ:
3. «Թերի» պատասխան, եթե առաջադրանքը կատարված է որոշակի սխալներով կամ բացթողումներով:
4. «Չկատարված», եթե առաջադրանքի պատասխանը բացակայում է:

Ստորև ներկայացված են հայտորոշիչ թեստը և արդյունքները:

Հայտորոշիչ թեստ

1. Համացանցում գտնել տեղեկույթ՝ «Դատարան» թեմայով՝ պայմանով՝ որ այն լինի միայն կրթական կայքէջերից: Նշել հղումը (URL):

.....

2. Կատարել նույն թեմայով որոնում՝ որոնողական 5 տարբեր համակարգերով: Նշել հղումները (URL):

.....

3. Համացանցում գտնել տեղեկույթ՝ «Դատարան» թեմայով և նշել կայքէջի ստեղծման ամսաթիվը:

.....

4. Նշել կայքէջի թարմացման ամսաթիվը:

.....

5. Ստուգել կայքէջի իսկությունը: Նշել ստուգման ձևը:

.....

6. Նշել կայքէջի հեղինակի անունը:

.....

7. Ներբեռնել առաջադրանք 3-ի կատարման արդյունքում գտնված մեդիատեքստն առցանց ընթերցարան և լսել ընթերցանությունը:

.....

8. Առաջադրանք 3-ի կատարման արդյունքում գտնված մեդիատեքստում նշել երեք իրավագիտական տերմին և թարգմանել առցանց բառարանի միջոցով:

.....

Ինչպես նշվեց, հայտորոշիչ թեստի առաջին փուլի նպատակն էր ճշտել ուսանողների մեդիակոմպետենցիայի տիրապետման մակարդակը և վեր հանել մեդիակոմպետենցիայի տիրապետման դժվարությունները: Թեստում ներառված առաջադրանքների վերաբերյալ գիտելիքներն ու կարողությունները վերաբերում են մեդիագրագիտությանը (տեղեկատվական, համակարգչային, համացանցային): Ցավոք, դրանք չեն ուսուցանվում որևէ կոնկրետ առարկայի շրջանակներում, սովորողները դրանք ձեռք են բերում որպես փաստական գիտելիքների մի մաս թե՛ կենսափորձի, թե՛ կրթության արդյունքում, թե՛ պարզապես տեղեկատվական որևէ աղբյուրից⁴⁵¹:

Առաջադրանք 1-ի նպատակն էր պարզել, թե ուսանողները որքանով են կարողանում համացանցում որոշակի պայմաններին համապատասխան իրավագիտական տեքստեր որոնել: Տվյալ դեպքում խոսքը «Դատարան» թեմայով իրավագիտական տեքստի որոնման մասին է՝ պայմանով, որ այն լինի միայն կրթական կայքէջերից: Ուսանողների մեծ մասը բաց է թողել այս առաջադրանքը, իսկ ոմանք նշել են իրենց ծանոթ կայքէջերը՝ *Datalex*, *Court.am*, *iravaban.net*, որոնք, իհարկե, կրթական կայքէջեր չեն: Արդյունքում գրանցվել են 2 ճիշտ, 27 սխալ, 16 թերի և 55 չկատարված պատասխաններ:

Առաջադրանք 2-ի պատասխանների վերլուծությամբ պարզ դարձավ, որ իրավագիտական տեքստերի որոնման համար հաճախ օգտագործվող որոնողական համակարգը, ինչպես և սպասվում էր, Google-ն է, որին հաջորդում են Yahoo և Yandex համակարգերը: Հարցման արդյունքում նաև պարզվեց, որ ուսանողները չեն օգտվում (կամ չեն տիրապետում) ակադեմիական տեքստերի մեծ շտեմարան հանդիսացող Google Scholar, Refseek, Answers, AOL, Bing որոնողական համակարգերին: Այդ առաջադրանքի արդյունքը հետևյալն է՝ 38 ճիշտ, 15 սխալ, 47 թերի, 0 չկատարված:

Առաջադրանք 3-6-ի նպատակն էր ստուգել, թե ուսանողները որքանով են կարողանում գնահատել համացանցային պաշարները (ինտերնետ ռեսուրսները): Առաջադրանք 3-4-ի ստուգման արդյունքում պարզ դարձավ, որ ուսանողների ճշող մեծամասնությունը որևէ կայքէջի տեղեկատվությունն օգտագործելիս հաշվի չի առնում այնպիսի կարևոր չափանիշներ, ինչպիսիք են՝ կայքէջի ստեղծման կամ վերջին թարմացման ամսաթիվը: Մինչդեռ այդ կարողությունը բավականին կարևոր է, մանավանդ իրավագիտության ոլորտում, քանի որ տեղեկատվության հավաստիությունը սերտորեն կապված է դրա արդիականության հետ: Օրինակ, երբ գործ ունենք օրենքներում կատարված փոփոխությունների, օրենքների ու դատավճիռների՝ ուժի մեջ մտնելու ժամկետների հետ, հնացած տեղեկատվությունը միանշանակ սխալ կլինի: Առաջադրանք 3-ի մասով պատկերը հետևյալն է՝ 5 ճիշտ, 11 սխալ, 0 թերի և 84 չկատարված, իսկ առաջադրանք 4-ի արդյունքն է՝ 0 ճիշտ, 19 սխալ, 0 թերի, 81 չկատարված:

Առաջադրանք 5-ի կատարման արդյունքներից կարելի է եզրակացնել, որ համացանցային աղբյուրների իսկությունը ստուգելու մեդիակոմպետենցիան բավականին ցածր մակարդակի վրա է: Ուսանողների մեծամասնությունը չի տիրապետում կայքէջի օրինականության ստուգման տեխնիկային, ինչը նույնպես հավաստի իրավագիտական տեքստեր գտնելու և օգտագործելու կարևոր պայմաններից մեկն է: Ստուգման արդյունքում գրանցվել է 3 ճիշտ, 24 սխալ, 4 թերի և 69 չկատարված պատասխան:

⁴⁵¹ CEFR. Common European Framework of Reference for Languages: Learning, teaching, assessment, Cambridge University Press: 2001, 265 p.

Առաջադրանք 6-ի կատարման արդյունքները վկայում են, որ ուսանողների մեծ մասը չի կարողանում գտնել իրավագիտական տեքստի հեղինակի անունը: Առաջադրանքի արդյունքը հետևյալն է՝ 24 ճիշտ, 18 սխալ, 2 թերի և 56 չկատարված:

Առաջադրանք 7-8-ի նպատակն էր պարզել, թե արդյոք ուսանողները կարողանում են օգտագործել ժամանակակից տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների և համացանցի ընձեռած հնարավորությունները՝ անգլերեն լեզվով իրավագիտական մեդիատեքստերի լեզվական նյութը ընկալելու և ընդհանուր բովանդակությունը հասկանալու համար: Մասնավորապես, առաջադրանք 7-ը վերաբերում էր առցանց ընթերցարաններին, որոնք հնարավորություն են տալիս ներբեռնելու ցանկացած իրավագիտական տեքստ և լսել դրա ընթերցանությունը լեզվակիրների կողմից: Սա անփոխարինելի միջոց է արագ ու հեշտ սովորելու իրավագիտական տերմինների և անձանոթ բառերի արտասանությունը: Առցանց ընթերցարաններում հնարավոր է նաև դանդաղեցնել ընթերցանության տեմպը՝ դյուրին դարձնելով անձանոթ բառերի ու իրավագիտական տերմինների արտասանության մտապահումը: Այդ առաջադրանքի արդյունքում գրանցվել է 13 ճիշտ, 0 սխալ, 10 թերի, 77 չկատարված պատասխան:

Առաջադրանք 8-ի պատասխանները նույնպես ցույց տվեցին, որ ուսանողների մեծամասնությունը չի օգտվում էլեկտրոնային ընթերցարաններից, որոնցից կարելի է ներբեռնել իրավագիտական մեդիատեքստեր և ընթերցանության ընթացքում գտնել անձանոթ տերմինի կամ բառի բացատրությունը ներբեռնված բառարանի միջոցով՝ առանց ընդհատելու ընթերցանությունը և անձանոթ բառը փնտրելու բառարանում: Առաջադրանքի ստուգման արդյունքը հետևյալն է՝ 11 ճիշտ, 0 սխալ, 35 թերի, 54 չկատարված:

Այսպիսով, հայտորոշիչ թեստավորման արդյունքների վերլուծության արդյունքում կարելի է փաստել, որ համացանցում իրավագիտական տեքստերի արդյունավետ որոնման, գնահատման ու ընկալման համար սովորողները չեն տիրապետում մեդիակոմպետենցիայի բավարար մակարդակին: Մեդիակոմպետենցիայի տիրապետման դժվարությունները կապված են հետևյալ խնդիրների հետ.

- համակարգչային հմտությունների տիրապետման պակաս՝ համացանցի արդյունավետ օգտագործման առումով,
- տեղեկատվական գրագիտության խնդիր՝ կապված մեդիադաշտում ճիշտ կողմնորոշման հետ,
- մեդիակոմպետենտության կարևորությունը չգիտակցելու խնդիր,
- մեդիանշակույթի ձևավորվածության խնդիր:

Այս խնդիրների սահմանումը հնարավորություն կտա մշակելու ռազմավարություններ՝ միտված իրավագիտական կողմնորոշման անգլերենի դասընթացում ձևավորելու մեդիակոմպետենտության բարձր մակարդակ՝ զուգահեռաբար խթանելով ընթերցողական կարողությունների զարգացումը և լեզվի տիրապետման մակարդակի աճը:

THE PROBLEM OF STUDENTS' MEDIA COMPETENCE ASSESSMENT IN THE LEGAL ENGLISH COURSES

MARIAM ARAKELYAN

*PhD Student of Armenian State Pedagogical University after Kh. Abovyan
Chair of Foreign Language Teaching Methods*

*Lecturer at the Police Educational Complex of RA, Police Captain,
Yerevan, Republic of Armenia*

In the modern era of information media and information literacy have become extremely important as a guarantee of personal development, self education and lifelong learning. The article covers some aspects of media competences assessment in a Legal English class necessary to effectively search, evaluate and use legal media texts. Specifically, these competences are of great value as the only possibility to remain current to the latest changes in the legal sphere is possible via media resources. Thus, the development of media and information literacy skills should be taken into consideration as a part of CPD (continual professional development). Meanwhile, the research includes diagnostic testing conducted in higher educational institutions of RA. As a result of the testing the main difficulties of media competence have been revealed which could be taken into consideration to develop appropriate learning strategy.

Key words: *media competence, diagnostic testing, media and information literacy, information and communication technologies, multimedia, action approach, factual knowledge.*

ПРОБЛЕМА ОЦЕНКИ МЕДИА-КОМПЕТЕНТНОСТИ СТУДЕНТОВ НА КУРСАХ ЮРИДИЧЕСКОГО АНГЛИЙСКОГО ЯЗЫКА

MARIAM ARAKELYAN

*Соискатель кафедры методики преподавания иностранных языков Армянского
государственного педагогического университета имени Х. Абовяна,
преподаватель Полицейского образовательного комплекса РА, капитан полиции,
г.Ереван, Республика Армения*

В современную эпоху информации, в условиях бесконечных и неуправляемых информационных потоков, медиа-грамотность приобретает чрезвычайно важное значение как гарант личностного развития индивида, самообразования и обучения на протяжении всей жизни. В статье рассматривается проблема оценки медиа-компетенций, необходимых для эффективного поиска, оценки и использования юридических медиатекстов в процессе освоения профессионально-ориентированного юридического английского языка. Эти компетенции имеют большое значение, поскольку быть в курсе последних изменений в правовой сфере возможно лишь с помощью средств массовой информации. Таким образом, развитие навыков медиа- и информационной грамотности должно приниматься во внимание как часть CPD (непрерывного профессионального развития). Статья представлена на основе анализа результатов диагностического тестирования, проведенного среди студентов юридических факультетов ряда высших учебных заведений Республики Армения. В результате тестирования стали очевидными основные трудности развития медиакомпетентности, которые должны быть учтены при выработке соответствующей стратегии для развития уровня медиа- и информационной компетентности.

Ключевые слова: *медиакомпетенция, диагностическое тестирование, медиа- и информационная грамотность, информационные и коммуникационные технологии, мультимедиа, деятельностный подход, фактические знания.*

ՄԻՋԱՆԶՆԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆՆԻ ԸՍՏ ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ*

ՀՏԴ 378.4

ՄԱՆՍՈՒՐ ԼԱՐՈՒԻ

*Երևանի պետական համալսարանի մանկավարժության ամբիոնի ասպիրանտ,
Իրանի հեռահաղորդակցության կազմակերպության աշխատակից,
բ.Բուշեիր, Իրան
larouei@yahoo.com*

Հոդվածի նպատակն է արտացոլել կառավարման տարբեր ոճերի (ուղղորդիչ/ հովանավորող/ հաջողությանը միտված կամ հաջողությունը շեշտադրող/համագործակցային) մասին Իրանի բուհերում կատարված ուսումնասիրության արդյունքները և բացահայտել ամենից արդյունավետ ոճը մարդկային փոխհարաբերությունների կառավարման տեսանկյունից:

Սույն հետազոտության մեթոդը գնահատողական, բնութագրական-վերլուծական է, իսկ տվյալների հավաքագրման գործիքը հարցաթերթն է: Սոցիալական բազան կազմել են Իրանի Բուշեիր նահանգի բուհերի ուսանողները, որոնցից պատահականության սկզբունքով և Զուբրանի բանաձևի հիման վրա ընտրվել է նմուշ խումբ՝ 377 հոգի: Հետազոտության գործիքի վալիդության և կայունության ստուգման համար օգտվել ենք Զրոնբախի ալֆայի բանաձևից, և բոլոր հարցադրումների հավաստիության համար գրանցվել է 0.78: Վարկածների ստուգման համար կիրառել ենք T և F թեստերը և կորելացիայի գործակիցը: Ստացված տվյալները ցույց են տալիս, որ կրթական կառույցներում միջանձնային փոխհարաբերությունների կառավարման համար ամենարդյունավետ մեթոդը մասնակցային կամ համագործակցային մոտեցումն է, քանի որ այն մեծ դեր ունի ուսանողներին մոտիվացնելու, հետևաբար ուսումնասիրության արդյունավետությունը բարձրացնելու հարցում, իսկ ուսման հանդեպ ուսանողների հետաքրքրասիրության ու մոտիվացիայի խթանումը խորթային խնդիր է Իրանի բարձրագույն կրթության համակարգում:

Բանալի Բառեր՝ կրթության կառավարում, կառավարման ոճեր, արդյունավետություն, միջանձնային փոխհարաբերություններ, համագործակցային մոտեցում, Իրանի համալսարաններ, Իրանի կրթության համակարգ:

Մարդ արարածը նպատակամղված և իդեալներ հետապնդող էակ է: Ծնվելուց ի վեր նա միտված է ապագային, մշտապես ձգտում է հասնել իր տեսլականին ու նպատակներին և այդ ճանապարհին կարիք ունի հետադարձ կապի, այդ իսկ պատճառով տվյալներ ու տեղեկություններ է հավաքում իր առաջխաղացման և սեփական տեղի ու դիրքի մասին:⁴⁵² Մյուս կողմից՝ կրթությունը մարդկային բնածին ունակությունների դրսևորման ու ծաղկման բանալին է: Կրթությունը սոսկ գիտելիքի

* Հոդվածը ներկայացվել է 01.05.2019թ., գրախոսվել՝ 18.05.2019թ., տպագրության ընդունվել՝ 17.06.2019թ.:
⁴⁵² Միրբամալի Սեյդ Մոհամմադ, Կրթական ղեկավարում և կառավարում, «Յասթարուն» հրատարակչություն, Թեհրան, 2011թ., էջ 308:

արտահայտումն ու փոխանցումը չէ, այլ մի գործընթաց է, որով ճանաչվում է ուսումնառության մակարդակը, և այն խթանելու ուղղությամբ կայացվում են անհրաժեշտ որոշումներ ու ձեռնարկվում նպատակահարմար միջոցներ:⁴⁵³

Կրթության կառավարումը կրթադաստիարակության կառույցների կառավարման համար կիրառվող մեթոդների ու միջոցների ամբողջությունն է՝ ելնելով կրթադաստիարակության ընդհանուր նպատակներից ու քաղաքականությունից:

Մարդկային փոխհարաբերությունները լայն իմաստով ներառում են մարդկանց միջև ընթացող բոլոր փոխգործակցությունները, կոնֆլիկտները, միջխմբային փոխօգնություններն ու կապերը: Մարդկային փոխհարաբերությունները վերաբերում են միջանձնային խնդիրներին ու հակադրություններին, անձնական կյանքն ու աշխատանքային կարգավիճակը կարգավորող համոզմունքներին, մոտեցումներին ու վարքին:⁴⁵⁴

Մեր հետազոտության մեջ հիմնականում կենտրոնացել ենք կառավարչի ու տնօրենի վարքի վրա, իսկ վարքը հիմնված է կառավարչի կամ ղեկավարի հատկանիշների, հայացքների և, ընդհանուր առմամբ, անձնային գծերի վրա: Դա է պատճառը, որ կառավարման տեսություններն ու դպրոցները մեծ տեղ են տալիս այդ հատկանիշների ճանաչմանը, բնութագրմանն ու դասակարգմանը, հատկապես դրանց հիման վրա ղեկավարման առանձին ոճերի որոշարկմանը:⁴⁵⁵

Կառավարման ոճերի հիմքում ընկած տեսությունները պատմականորեն կարելի է բաժանել փուլերի՝

Ա. Ղեկավարման հատկանիշներով օժտվածության տեսություն. Ղեկավարման վերաբերյալ առաջին համակարգված մոտեցումը ձևավորվեց 1900-ականներին: Նախնական հետազոտություններն ու ուսումնասիրությունները ելնում էին այն կանխարդյոցից, որ ղեկավար անձինք ծնվում են ղեկավարման հատկանիշներով կամ, այլ կերպ ասած, այդ հատկանիշները գոյություն ունեն նրանց էության մեջ և ձեռքբերովի կամ ուսանվող չեն: Այդ տարիներին հետազոտողները փորձ էին անում սահմանել ու հստակեցնել այն հատկանիշներն ու առանձնահատկությունները, որոնք բնորոշում ու զատորոշում են ղեկավարին իր ենթականերից կամ արդյունարար ղեկավարին անարդյունավետ ղեկավարից: Այդ մոտեցումը հայտնի է «Ղեկավարման հատկանիշի տեսություն» անվամբ⁴⁵⁶:

Բ. Ղեկավարման վարքային տեսություն. 1940-ականների ավարտին ղեկավարման ոլորտի հետազոտությունների մեծ մասը կենտրոնացավ ղեկավարման վարքագծային կողմի ճանաչման և տարբեր իրավիճակներում ղեկավարման լավագույն ոճի բացահայտման վրա: Հետազոտողներն այդ շրջանում փորձում էին վեր հանել արդյունավետ/անարդյունավետ ղեկավարների վարքագծային տարբերությունները, այսինքն՝ այդ մոտեցմամբ ավելի շատ շեշտը դրվում էր ոչ թե տեխնիկական հմտությունների, այլ մարդկային հմտությունների վրա:

Գ. Իրավիճակային ղեկավարման տեսություններ. Նախորդ երկու տեսությունները փորձում էին գտնել ու մատնանշել բոլոր իրավիճակներին համապատասխանող արդյունավետ կառավարման ոճը, սակայն 1960-ականների ավարտին պարզվեց, որ ոչ մի ոճ չի կարող լավագույնը լինել բոլոր իրավիճակների

⁴⁵³ **Boyd D, Goldhaber D, Lankford H, Wyckoff J**, The effect of certification and preparation on teacher quality. Journal of future child.2007, p. 45.

⁴⁵⁴ **Barry L Reece and Rhonda Brandt**, Effective Human Relations. brd . ed Boston: Houghton Mifflin.co.1987.p 4.

⁴⁵⁵ **Իսլամական Ազատ համալսարանի Սավեհի մասնաճյուղի և Պետական կառավարման համալսարանի համատեղ հետազոտություն**, Կառավարման ոճի գնահատման չափանիշը, «Նաշր-ե դանեշգահի», Թեհրան, 2000թ., էջ 1:

⁴⁵⁶ Նույն տեղը, էջ 2:

համար: Կառավարիչները պետք է տարբեր իրավիճակներում կիրառեն տարբեր ոճեր:⁴⁵⁷

Ի հետևում այս ուսումնասիրությունների՝ հետազոտողներն իրենց ուշադրությունը կենտրոնացրին կառավարման տարբեր ոճերի ազդեցությունների ու հետևանքների վրա՝ փորձելով բացահայտել առավել էֆեկտիվ ու արդյունարար ոճը:

Արդյունավետություն կամ արդյունարարություն ասելով նկատի են առնում նպատակների իրականացման չափն ու մակարդակը, այսինքն՝ այն, թե ներդրված ջանքերն ի՞նչ չափով են հանգել նախատեսված արդյունքներին:

1900-ականներից սկսած Իրանում և միջազգային մակարդակում իրականացված հետազոտությունները սկսեցին քննել պարտականության ու փոխհարաբերությունների վրա հիմնված կառավարման զուգադիր ոճերը, որպեսզի բացահայտեն ու համեմատեն դրանց արդյունարարության մակարդակը հատկապես ուսուցման գործընթացի բարելավման ու խթանման գործում:

Շատ հաճախ կառավարման ոճերը կրթական կառույցներում ներդրվում ու գործադրվում են վերևից և կենտրոնացված ձևով՝ մոռանալով ու անտեսելով կրթական գործընթացի գլխավոր շահակիցներին՝ ուսանողներին: Սույն հետազոտության մեջ կիրառելով նորովի մոտեցում՝ կենտրոնացել ենք ուսանողների տեսակետների ու կարծիքների վրա: Հետազոտության մեջ նպատակադրվել ենք Իրանի Բուշեհր նահանգի օրինակով քննել ու գնահատել մարդկային փոխհարաբերությունների ղեկավարման ամենից արդյունավետ ոճն ու մոտեցումը բարձրագույն կրթության ոլորտում՝ ըստ ուսանողների կարծիքների ու տեսակետների:

Սույն հետազոտությունը բնութագրական-գնահատողական բնույթի է, սոցիալական վիճակագրական բազան կազմում են Իրանի Բուշեհր նահանգի «Խալիջ Ֆարս», Իսլամական Ազատ համալսարան, «Փայամ Նուր», Բժշկական և Գիտակիրառական համալսարաններում սովորող ուսանողները: Հետազոտության նմուշ խմբի ընտրությունը կատարվել է պատահականության սկզբունքով, իսկ նրա ծավալն ու թվաքանակը որոշվել են՝ ըստ վիճակագրական բազայի ծավալի ու Քուբրանի բանաձևի: Այսպիսով, Բուշեհրի բուհերի 20419 ուսանողների միջից ձևավորվել է նմուշ խումբ՝ թվով 377 հոգի:

Աղյուսակ 1.Սոցիալական վիճակագրական բազան

Համալսարաններ		Ուսանողների թվաքանակը
«Խալիջ Ֆարս» համալսարան		4349
Իսլամական Ազատ համալսարան		11063
«Փայամ Նուր» համալսարան		2000
Բժշկական համալսարան		1107
Գիտակիրառական համալսարան	Մշակույթի և արվեստի կենտրոն	1200
	Նահանգապետարանի կենտրոն	700

Տեղեկությունների հավաքման գործիքը հարցաթերթն է, որի գլխավոր բաղադրիչները ներկայացված են աղյուսակ 2-ում:

⁴⁵⁷ **Gordon R**, Substitutes for leadership theory a critical review, Academy of management review, 1994, p 285.

Աղյուսակ 2. Հարցաթերթում քննվող փոփոխականները և դրանց վերաբերյալ հարցերը

Շարք	Անկախ փոփոխական	Կախյալ փոփոխական	Տվյալ հարցի թիվը հարցաշարում
1	Ղեկավարման ուղղորդիչ ոճի ազդեցությունը	Ուսումնական առաջադիմություն	1
		Գիտության և գիտելիքի արտադրում	5
		Սովորելու մոտիվացիա	9
2	Ղեկավարման հովանավորող ոճի ազդեցությունը	Ուսումնական առաջադիմություն	2
		Գիտության և գիտելիքի արտադրում	6
		Սովորելու մոտիվացիա	10
3	Ղեկավարման համագործակցային ոճի ազդեցությունը	Ուսումնական առաջադիմություն	3
		Գիտության և գիտելիքի արտադրում	7
		Սովորելու մոտիվացիա	11
4	Ղեկավարման հաջողամետ (առաջադիմությունը շեշտադրող ու պահանջող) ոճի ազդեցությունը	Ուսումնական առաջադիմություն	4
		Գիտության և գիտելիքի արտադրում	8
		Սովորելու մոտիվացիա	12

Հարցաթերթի կայունություն ու վստահելիությունը քննելու նպատակով կիրառվել է «Քրոնբախի ալֆայի գործակիցը» և ստացվել 0.78 մեծությունը, ինչը նպատակահարմար է հետազոտության անցկացման համար: Հավաքագրված հարցաթերթերից ստացված տվյալները կողավորվելուց և դասակարգվելուց հետո ենթարկվել են վերլուծության և երկրորդական մշակման: Բնութագրական մակարդակում տվյալները ներկայացվել են համապատասխան աղյուսակներով, տոկոսներով, միջիններով, և խմբավորվել են տեղեկությունները: Երկրորդ փուլում կիրառվել են T փորձարկման, Պիրսոնի համահարաբերակցության գործակցի և վարիացիայի վերլուծության (F փորձարկման) մեթոդները: Հաշվարկների ճգրտությունն ապահովելու համար կիրառվել է համակարգչային Spss 16 ծրագիրը:

Հետազոտության տվյալները ցույց են տալիս, որ Կառավարման ոճերի (ուղղորդիչ/ հովանավորող/ համագործակցային/ հաջողամետ կամ առաջադիմությունը

շեշտադրող ոճեր) վերաբերյալ ուսանողներն ունեն տարբեր կարծիքներ, և դրանց արդյունավետության գնահատականների միջև առկա է տարբերություն:

Աղյուսակ 3. Բուհերի ղեկավարների գործունեության արդյունավետության վրա կառավարման չորս ոճերի ազդեցության մասին ուսանողների կարծիքների միջինները

Կառավարման ոճեր	Քանակ	Միջին	Շեղում ստանդարտի	T մեծություն	Նշանակալիության մակարդակ
Ուղղորդիչ կառավարում	248	11.33	2.742	9.549	0.001
	170	14.17	3.316		
Հովանավորող կառավարում	248	11.72	2.578	13.585	0.001
	170	15.24	2.646		
Համագործակցային կառավարում	248	12.37	2.290	18.460	0.001
	170	16.44	2.098		
Հաջողությանը միտված կառավարում	248	12.29	2.205	14.277	0.001
	170	15.62	2.520		

Ինչպես ցույց են տալիս աղյուսակ 3-ի տվյալները, կառավարման չորս ոճերի ազդեցության չափն ու մակարդակը միանման չեն գնահատվել ուսանողների կողմից, և գրանցվել են տարբերություններ: Այսպիսով, ուղղորդիչ կառավարման համար արձանագրվել է $t = 9.549$ արդյունքը, հովանավորող կառավարման համար՝ $t = 13.585$, համագործակցային կառավարման համար՝ $t = 18.460$ և հաջողությանը միտված կառավարման համար՝ $t = 14.277$, որոնք վստահության $\alpha < 0.05$ մակարդակի վրա համարվում են վիճակագրական առումով նշանակալի տարբերություն:

Կառավարման չորս ոճերի արդյունավետությունը գնահատելիս տարբերություններ են գրանցվել կրթության տարբեր մակարդակ ունեցող, ինչպես նաև տարբեր ճյուղերում սովորող ուսանողների միջև: F փորձարկման տվյալները ցույց են տալիս, որ բժշկական ու տեխնիկական ճյուղերում սովորող ուսանողների տեսակետից ամենարդյունավետ ոճը համագործակցայինն է, մինչդեռ ոչ տեխնիկական ճյուղերի ուսանողներն առավել արդյունավետ են համարել հաջողամետ, այսինքն՝ առաջադիմությունը շեշտադրող ու առաջնահերթ համարող ոճը, սակայն այդ տարբերությունները վիճակագրական առումով նշանակալի չեն:

Կառավարման չորս ոճերի արդյունավետության վերաբերյալ ուսումնական տարբեր աստիճաններում սովորող ուսանողները տարբեր կերպ են գնահատել, այսինքն՝ ուսման տարբեր տարիներին ուսանողների կարծիքների միջև գրանցվել են որոշակի տարբերություններ:

Չեղարկության արդյունքները

Ստացված տվյալների հիման վրա կարող ենք հստակեցնել, թե կառավարման ո՞ր ոճն է առավել արդյունավետ ուսանողների գիտահետազոտական նպատակների իրագործման և բուհերում մարդկային փոխհարաբերությունների կառավարման գործում:

Չեղարկության մեջ քննվել և գնահատվել են 4 անկախ փոփոխականների (ուղղորդիչ/ հովանավորող/ համագործակցային/ հաջողությանը միտված ոճերի) ազդեցությունը ուսանողների ուսումնական առաջադիմության, գիտելիքի և գիտության արտադրության, ինչպես նաև ուսումնական մոտիվացիաների վրա:

Այսպիսով, սոցիարցման մասնակից ուսանողների գնահատմամբ՝

1. Կառավարման համագործակցային ոճը կարող է առավել մեծ ազդեցություն թողնել ուսանողների ուսումնառության մոտիվացիայի ակտիվացման վրա:

2. Ղեկավարման առաջադիմության վրա հիմնված ոճը մյուս ոճերի համեմատությամբ կարող է ավելի մեծ ազդեցություն ունենալ գիտելիքի և գիտության արտադրության խթանման վրա:

3. Ղեկավարման ուղղորդիչ ոճը մյուս ոճերի համեմատությամբ առավել մեծ ազդեցություն է գործում ուսանողների ուսումնական առաջադիմության վրա:

Ընդհանուր առմամբ, կարող ենք եզրակացնել, որ կառավարման համագործակցային ոճը մյուս ոճերի համեմատությամբ ամենամեծ դերն ունի ուսանողներին մոտիվացնելու, հետևաբար նաև՝ ուսումնառության արդյունավետության հարցում: Նկատի առնելով, որ Իրանի կրթության համակարգի խնդիրներից ու մարտահրավերներից մեկը ուսանողների շրջանում ինքնուրույն սովորելու և ուսման հանդեպ հետաքրքրասիրության խթանումն է, համագործակցային ոճի կիրառումն ու ընդլայնումը կարող են մեծապես նպաստել այդ գործին:

THE EFFECTIVE MANAGEMENT OF INTERPERSONAL RELATIONSHIPS BASED ON THE RESULTS OF SOCIOLOGICAL RESEARCH

MANSOUR LAROUEI

*PhD Student of Yerevan State University,
employer of Telecommunication Company of Iran,
Bushehr, Iran*

The purpose of the article is to display the results of research made in universities of Iran on different styles of management and to identify the most effective style in terms of managing human relationships.

The current paper examined an effective approach towards the management of interpersonal relationships from the perspective of the students of Iranian Universities (Bushehr). In terms of method, this was a survey, descriptive, analytical study, and the tool for gathering data was a questionnaire. The population consisted of all students at universities in Bushehr Province, and the sample size was determined to include 377 students through random sampling and Kukran Formula. Cronbach's alpha was employed to determine the validity and

reliability, and the reliability of the questionnaire was calculated at 0.78 for all items. F-test, T-test, and correlation coefficient was used to test the hypotheses. The results showed that the partnership-based approach towards management was the most effective approach regarding the interpersonal relationships in educational organizations, since this plays a large role in the issue of student motivation, therefore, in the issue of improving the effectiveness of education, and the stimulation of students' motivation and interests in relation to study is a global issue in Iran's higher education system.

Keywords: *Educational management, Management styles, Effectiveness, Interpersonal relationships, Partnership-based approach, Iranian universities, Education system of Iran.*

ЭФФЕКТИВНОСТЬ УПРАВЛЕНИЯ МЕЖЛИЧНОСТНЫМИ ОТНОШЕНИЯМИ СОГЛАСНО РЕЗУЛЬТАТАМ СОЦИОЛОГИЧЕСКИХ ИССЛЕДОВАНИЙ

МАНСУР ЛАРУИ

*аспирант кафедры педагогики Ереванского государственного университета,
сотрудник телекоммуникационной компании Ирана,
г.Бушейр, Иран,*

Целью статьи является отображение результатов проведенного в вузах Ирана исследования о разных стилях правления и выявление самого эффективного стиля с точки зрения управления человеческими взаимоотношениями.

Метод данного исследования оценочный, характерно-аналитический, а инструментом для сбора является опросный лист. Базу социологического опроса составили студенты вузов штата Бушейр, из которых по принципу случайности и на основе формулы Кукрана была выбрана образцовая группа в 377 человек.

Для проверки валидности и стабильности инструмента исследования мы воспользовались формулой альфы Кронбаха, а достоверность была оценена как 0.78. Для проверки гипотез мы применили тесты T и F, а также коэффициент корреляции. Полученные данные показывают, что самым эффективным методом для управления личностными взаимоотношениями в образовательных структурах является метод участия или сотрудничества, так как он играет большую роль в вопросе мотивации студентов, следовательно, в вопросе повышения эффективности обучения. А стимуляция мотивации и интереса студентов к учебе является глубинным вопросом в системе высшего образования Ирана.

Ключевые слова: *управление образованием, управленческие стили, эффективность, межличностные отношения, метод сотрудничества, университеты Ирана, образовательная система Ирана.*

ՄԵԾԱԿԱՍԱԿՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԱՉՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*

ՅՏԴ 378(55)

ՀԱՄԻԴՈՒՅԱ ԿԱՄԻԱՐ

Երևանի պետական համալսարանի մանկավարժության ամբիոնի ասպիրանտ,
«Էլեկտրիկ խողոռ շարդ կապմակերպության»
մարդկային ռեսուրսների վարգացման կառավարիչ,
ք.Մաշհադ, Իրան
kamyarhr@gmail.com

Մեծահասակների կրթության ոլորտում նախատեսված նպատակներին հասնելու համար պետությունները, հաշվի առնելով ռեսուրսների սղությունը, ստիպված են լինում ընտրություն կատարել, այդ իսկ պատճառով սահմանում են ռազմավարություններ և կապմակերպում քայլեր, որոնք կարևորվում են կրթական քաղաքականություն մշակողների կողմից: Բոլոր երկրներն իրենց համար մշակում են ռազմավարություններ՝ անգրագիտությունը կամ ցածր մակարդակի գրագիտությունը կրճատելու, ինչպես նաև մեծահասակների կյանքի որակը բարձրացնելու ուղղությամբ: Իրանում մեծահասակների կրթության ծրագրերի առանցքը անգրագիտության դեմ պայքարն է, ուստի Իրանի սոցիալ-տնտեսական վարգացման հնգամյա ծրագրերում կրթական քաղաքականությունը և ռազմավարությունները կենտրոնացված են այդ առանցքի շուրջ: Հողվածի նպատակն է քննել երեք տարբեր մայրցամաքներում սոցիալ-տնտեսական վարգացման տարբեր աստիճանների վրա գտնվող երկրների՝ Ռուսաստանի (Աֆրիկա), Մոնղոլիայի ու Հնդկաստանի (Ասիա), Եվրամիության անդամ երկրների, ինչպես նաև Իրանի կողմից մեծահասակների կրթության ոլորտում առաջադրված սեփական ռազմավարությունները: Մեր կողմից կիրառվել են աղբյուրների ու փաստաթղթերի ուսումնասիրության, տվյալների համեմատության ու վերլուծության մեթոդները: Արդյունքում եզրակացրել ենք, որ վարգացող երկրներն ավելի շատ հակված են անգրագիտության և ցածր գրագիտության վերացման ռազմավարություններին, մինչդեռ վարգացած երկրները, չունենալով նման խնդիրներ, առաջադրում են առավել բազմակողմ ռազմավարություններ՝ խթանելով մեծահասակների անձնային ու հասարակական համակողմանի վարգացումը:

Բանալի բառեր՝ մեծահասակ, մեծահասակների կրթություն, կրթության ռազմավարություններ, անգրագիտություն, վարգացող և վարգացած երկրներ, Եվրամիություն, Իրանի կրթության համակարգ:

Մեծահասակների կրթությունը մեծահասակների գիտակցության, ճանաչողության ու հմտությունների զարգացմանն ուղղված համակարգված գործընթաց է, որով նրանք կարողանում են կատարելագործվել և ակտիվորեն մասնակցել իրենց հասարակության սոցիալական, մշակութային, քաղաքական ու տնտեսական կյանքին⁴⁵⁸:

* Հողվածը ներկայացվել է 01.05.2019թ., գրախոսվել՝ 18.05.2019թ., տպագրության ընդունվել՝ 17.06.2019թ.:

⁴⁵⁸ www.regardhost.com/articles/human.rights.php:

ՄԱԿ-ի կողմից 1948 թվականի դեկտեմբերի 10-ին ընդունված Մարդու իրավունքների մասին հռչակագրի 26-րդ հոդվածն ամրագրել է յուրաքանչյուր մարդու կրթության իրավունքը: Այս հոդվածը բաղկացած է երեք կետից, որոնցից առաջինը հստակեցնում է. «Մեծահասակները ևս ունեն կրթություն ստանալու իրավունք: Ամեն ոք ունի կրթություն ստանալու իրավունք: Կրթությունն առնվազն տարրական մակարդակում պետք է լինի անվճար: Արհեստագիտական ու տեխնիկական կրթությունը պետք է հասանելի լինի բոլորին: Բարձրագույն կրթությունը ևս բոլորի համար պետք է արդարացիորեն բաշխվի՝ ըստ ունեցած արժանիքների առաջնահերթությամբ»:

Ամբողջ աշխարհում 1970թ.-ից մինչև 2016 թվականը մեծահասակների, ինչպես նաև հանրակրթությունից դուրս մնացած 15-ից բարձր տարիք ունեցող պատանիների անգրագիտության մակարդակն ակնառու չափով նվազել է՝ 37 տոկոսից իջնելով 14 տոկոսի, այդուհանդերձ անգրագիտությունը շարունակում է գոյություն ունենալ զարգացող շատ երկրներում⁴⁵⁹:

2016 թվականի տվյալներով՝ աշխարհում անգրագետների թվաքանակի 49 տոկոսը Հարավային Ասիային է բաժին հասնում, 27 տոկոսը՝ Աֆրիկյան ենթասահարային, 10 տոկոսը՝ Արևելյան և Հարավարևմտյան Ասիային, 9 տոկոսը՝ Հյուսիսային Աֆրիկային և Արևմտյան Ասիային, 4 տոկոսը՝ Լատինական Ամերիկային ու Կարաիբյան շրջանին: Անգրագետների մնացած մասն ապրում են Կենտրոնական Ասիայում, Հյուսիսային Ամերիկայում և Ավստրալիայում⁴⁶⁰:

Մեծահասակների կրթության ռազմավարությունները զարգացող երկրներում

Ռազմավարությունը ներառում է որոշում այն մասին, թե ո՞րն է նպատակակետը և ինչպե՞ս պետք է հասնել դրան: Ռազմավարությունը մտադրության և նպատակի արտահայտումն է, այսինքն՝ ի՞նչ ենք նախընտրում անել և ինչպե՞ս: Ռազմավարությունը հեռահար նպատակներ է սահմանում, բայց հիմնականում մատնանշում է այդ նպատակների իրագործման որպիսությունը: Ռազմավարությունն արժեքի ստեղծման միջոցն ու գործիքն է⁴⁶¹: «Ռազմավարություն» եզրույթը, թեև տարբեր ձևերով է սահմանվում, վերլուծվում և պլանավորման մեջ կիրառվում, սակայն ընդհանուր առմամբ ռազմավարությունը ձևակերպում է կազմակերպության առաքելությունը, գլխավոր ու հեռահար նպատակներն ու մտադրությունները, ձեռնարկվելիք միջոցների գործընթացը և անհրաժեշտ ռեսուրսների հատկացումը⁴⁶²:

Չարգացած ու զարգացող տարբեր երկրներն աշխարհում, հաշվի առնելով իրենց հնարավորությունները, ինչպես նաև սեփական առանձնահատկություններն ու պայմանները, սահմանում են առաջնահերթություններ՝ գերակայությունը տալով այս կամ այն ծրագրին ու մոտեցմանը՝ ըստ այդմ մշակելով իրենց ռազմավարությունը և նախագծելով կատարվելիք քայլերը:

Ստորև ներկայացնում ենք երեք տարբեր մայրցամաքներում (Աֆրիկա, Ասիա, Եվրոպա) գտնվող և սոցիալ-տնտեսական զարգացման տարբեր աստիճաններ ունեցող երկրների ռազմավարությունները՝ վերջում անդրադառնալով նաև Իրանին:

-Ռուանդա

⁴⁵⁹ World Illiteracy Rate1970-2000 (prognosis for 2005-2015)age 15 years and over. From: <http://en.wikipedia.org/wiki/Literacy>

⁴⁶⁰ UNESCO institute for statistic (2017), Literacy Rates Continue to Rise from One Generation to the Next, Fact Sheet, No 45

⁴⁶¹ Armstrong Michael, (2008) Strategic Human Recourse Management: A Guide to the Action, 4TH Edition, Publisher: Kogan Page, p.22

⁴⁶² Բադաշխանի և Ֆորուզանֆար, Մարդկային ռեսուրսների ռազմավարության դերը առաջընթացիկ կազմակերպություններում և դրա կապը կազմակերպության ռազմավարության հետ, Ռազմավարական կառավարման 7-րդ միջազգային համագումար, Թեհրան, 2010թ., էջ 2:

Ռուանդայի մեծահասակների ազգային կրթության ռազմավարական ծրագրի նպատակն է առաջադրել մեծահասակների կրթության քաղաքականության իրականացման ճանապարհային բարտեզը և ճշգրիտ շրջանակները:

1. Առաջին կյանքում գրագիտության ու հաշվապահության կարևորության մասին հանրային գիտակցության ընդլայնում՝ ի շահ անձնական, ընտանեկան ու հասարակական կյանքի բարելավման:

2. Գրագիտության ծրագրերի որակի և չափորոշիչների երաշխավորման գործիքակազմի զարգացում, ազգային մասշտաբով դրանց հասանելիության ապահովում:

3. Մեծահասակների կրթության շահակից բոլոր կողմերի համար տարբեր մակարդակներում համագործակցության և ներգրավվածության շրջանակի սահմանում աշխատանքների ներդաշնակության և քայլերի արդյունավետության նպատակով:

4. Ինֆորմացիայի արդյունավետ օգտագործման և փաստերի վրա հիմնված պլանավորման միջոցով մեծահասակների ուսումնական ծրագրերի մշտադիտարկման արդյունավետ համակարգի ստեղծում:

5. Ուսումնական ճկուն ու բազմաշերտ ծրագրերի մշակում և ուսումնասօժանդակ միջոցների ապահովում, որոնք կբավարարեն սովորողների ամենատարբեր կարիքներն ու պահանջները:

6. Աղջիկների ու կանանց ներգրավում գրագիտության դասընթացներին:

7. Շարունակական ուսուցման ապահովում և արտադրական, աշխատանքային ու եկամտաբեր հմտությունների փոխանցում նորավարտ գրաճանաչներին, ուսումնական նոր ծրագրերի մատուցում, որպեսզի նրանք կարողանան բարելավել իրենց կյանքի պայմանները և ձեռք բերել աշխատանքային հնարավորություններ⁴⁶³:

-Մոնիթինգ

Մոնիթինգայում ոչ ֆորմալ կրթության համար դրվել են հետևյալ ստրատեգիաները.

1. Գրագիտության ինդեքսի բարձրացում,

2. Հանրակրթության մակարդակի բարելավում,

3. Համապատասխան ու ներդաշնակ ծրագրերի գործադրում,

4. Տեխնիկական-արհեստագիտական հմտությունների ընդլայնում,

5. Ստեղծարարության խթանում ու տարածում ,

6. Ինքնուսուցման խթանում ու զարգացում⁴⁶⁴:

-Հնդկաստան

Հնդկաստանում «Գրագիտությունը՝ որպես ազգային պարտականություն» նախագիծը քաղաքական ռազմավարություն է, որն առաջադրվել է 1988թ.-ին և ներառում է հետևյալ դրույթները.

• ՉԼՄ-ների ու մեդիայի միջոցով մարդկանց ներգրավմանն ուղղված կանոնավոր աշխատանքների կազմակերպում:

• Տեղական համագործակցային կառույցների ներդրում:

• Գործառնական ու կիրառական գրագիտության համալիր ծրագրի մշակում ու զարգացում:

• Գրագիտության համաժողովրդական ու զանգվածային շարժման ստեղծում ներգրավելով ուսումնական հաստատություններին, ուսուցիչներին, ուսանողներին, երիտասարդներին, տնային տնտեսուհիներին, բանակի ու զինված ուժերի կադրերին,

⁴⁶³ Republic of Rwanda, Ministry of Education. (2014)Adult ducation Strategic Plan, 2014/2015-2018/2019. Retrieved April 12, 2017.from: http://www.mineduc.gov.rw/fileadmin/user_upload/pdf_files/Adult_EducationStrategic_Plan_final_BASIC_IVUYEMO_FOR_WEB_29_JUNE_2015_In_Design_2.pdf

⁴⁶⁴ Singh, Madhu (2002). Adult Education in selected countries in the Asian Region, U Singh, UNESCO Institute for Education,Hamburg.page 22-23.

հանգստի կոչված արհմիություններին⁴⁶⁵:

զինվորականներին,

գործատուներին,

բանվորական

Մեծահասակների կրթության ռազմավարությունները Եվրոպայում

Ինչպես արտացոլված է աղյուսակ 1-ում, Եվրամիությունն ունի քաղաքականության առաջադրման կենտրոնական ինստիտուտներ, սահմանված կարգեր ու գործիքակազմ, այդ իսկ պատճառով կարողանում է առաջադրել բազմաշերտ ռազմավարություններ⁴⁶⁶:

Մեծահասակների կրթության ռազմավարություններն Իրանում

Իհ-3-ում 1989 թվականից մշակվել են զարգացման հնգամյա պլաններ կամ ծրագրեր, որոնցում ձևակերպվել են երկրի տնտեսական, հասարակական ու մշակութային քաղաքականության և ռազմավարության հիմնադրույթները: Մեծահասակների կրթության հիմնահարցը մշտապես ներառվել է այդ ծրագրերում, և մշակվել է որոշակի քաղաքականություն այդ ոլորտում: Իհարկե, քանի որ Իրանում մեծահասակների կրթության հիմնական շեշտը դրվում է գրագիտության տարածման վրա, ուստի հնգամյա ծրագրերում այդ ոլորտի գլխավոր ուղղվածությունը գրագիտությունն է: Օրինակ, 1989-1993թթ.-ին գերակայությունը տրվել էր հասարակության արտադրող խավերի գրագիտությանը, իսկ 1995-1999թթ.-ին շեշտը դրվել էր դպրոցական տարիքի երեխաների պարտադիր կրթության, ինչպես նաև 40-ից ցածր տարիք ունեցող անգրագետների ուսուցման վրա:

Մինչև հիմա մշակվել են զարգացման հինգ ծրագրեր, որոնցում մեծահասակների կրթության նոր կողմերին և ուղղություններին է ուշադրություն դարձվել: Օրինակ, կարող ենք հիշատակել աշխատանքին զուգընթաց ուսումնական ծրագրերը, աշխատողների համար մոդուլային կարճաժամկետ դասընթացները և կառավարիչների ու տնօրենների համար ուսումնական հատուկ դասընթացները: Մյուս ծրագրերից կարող ենք նշել առողջապահական և առողջ ապրելակերպի ուսուցողական ծրագրերը կամ տեխնիկական-արհեստագիտական ֆորմալ և ոչ ֆորմալ կրթական ծրագրերը:

Բացի զարգացման հնգամյա ծրագրերից, որոնցում նշվում են կրթադաստիարակության ընդհանուր ուղեգծերը, 2008-ին պատրաստվեց նաև անգրագիտության վերացման մասին փաստաթուղթ⁴⁶⁷ Այնուհետև 2014-ին մշակվեց անգրագիտության վերացման մասին նոր փաստաթուղթ, որում խնդիր է դրվել գրոյի հասցնել անգրագիտությունը 50-ից ցածր տարիք ունեցողների շրջանում: Այդ փաստաթղթում նշված գլխավոր ռազմավարություններն են.

-Կրթության նախարարության ներսում ու դրսում առկա բոլոր հնարավորությունների ու ռեսուրսների համախմբում և ազգային կամքի ու հանրային միասնականության խթանում:

-Ֆորմալ կրթության համակարգի միջոցով անգրագիտությունը սնող ուղիների փակում, այսինքն՝ դպրոցահասակ երեխաների շրջանում գրագիտության կրճատում:

⁴⁶⁵ Singh, Madhu (2002). Adult Education in selected countries in the Asian Region, UNESCO Institute for Education, Hamburg, page 17.

⁴⁶⁶ European Union (2012), Strategies for improving participation in and awareness of adult learning. https://www.ab.gov.tr/files/ardb/evt/1_avrupa_birligi/1_9_politikalar/1_9_4_egitim_politikas_i/ec_guide_adult_learning.pdf.

⁴⁶⁷ Իրանի «Գրագիտության շարժման կազմակերպություն», Գրագիտության ռազմավարական ծրագիր՝ 2009-2014 թվականների համար (10-ից 49 տարիքային խմբերում), Թեհրան, 2008թ., էջ 27:

-Կրթական ու վարչական կառուցվածքի բարեփոխում, գրագիտության օրենքների ու գործադիր կանոնների համապատասխանեցում:

-Գրագիտության ուսումնական ծրագրերի բարեփոխում՝ շրջաններում կրթության տեղական ռեսուրսներ ստեղծելու մոտեցմամբ:

-Սովորողների ներգրավման և ուսուցման ձևերի բազմազանության ապահովում:

-Գրագիտության և ստացած կրթության ամրապնդում ու խորացում:

-Ծրագրերի գործադրման սահունացման ու արագացման համար օրինական դաշտի ստեղծում:

-Սովորողների և ուսուցիչների (սրանց օգնականների) խրախուսում և մոտիվացիաների խթանում:

-Ուսումնական ընթացիկ ծրագրերում գիտագործնական ու տեխնիկական-արհեստագիտական կրթության շեշտադրում:

-Ոլորտին առնչվող մարմինների ու կազմակերպությունների վստահության ու համագործակցության ձեռքբերում և սոցիալական հնարավորությունների օգտագործում:

-Անգրագիտության կրճատման գործում ուսումնական մեթոդների բարելավում ու համակարգում: Նորարարությունների օգտագործում, սովորողների համար աշխատանքին զուգընթաց ուսուցման արդյունավետ մեթոդների կիրառում:

-Գրագիտության գործընթացների ու ձևերի բարեփոխում, ուսուցում-ուսումնառություն գործընթացի սկզբունքների կարևորում:

-Պետական և ոչ պետական գործադիր մարմինների և հասարակական ինստիտուտների ամբողջ հնարավորությունների և ներուժի օգտագործում, որպեսզի գրագիտության գործի կարգավորումից անցում կատարվի այդ գործընթացի կառավարմանը:⁴⁶⁸

Ի մի բերելով դիտարկումները՝ եզրակացնում ենք, որ աշխարհի տարբեր երկրներ, ելնելով հասարակության վիճակից ու պահանջներից, առաջադրում են իրենց մոտեցումներն ու գերակայությունները մեծահասակների կրթության ոլորտում: Չարգացող երկրները ձգտում են հասարակության լայն խավերի ու մեծահասակների ընդհանուր գրագիտության ու գիտելիքների բարձրացմանը, մինչդեռ զարգացած երկրներն առավել բազմակողմ ռազմավարություններ են առաջադրում մեծահասակների կրթության բնագավառում:

Իրանում անգրագիտության դեմ պայքարի գործը դրված է «Գրագիտության շարժման կազմակերպության» ուսերին, որը սահմանում է ռազմավարությունները և համակարգում անհրաժեշտ աշխատանքները՝ շեշտը դնելով մեծահասակների շրջանում անգրագիտության կրճատման վրա: Անգրագիտության վերացման փաստաթղթում սահմանված ռազմավարություններն ունեն տարբեր կողմեր՝ կառուցվածքային, գործընթացային և գործառնական: Դրանք համալիր են, կարճաժամկետ ու երկարաժամկետ և արտացոլում են ոլորտի դժվարությունները, ինդիկներն ու խոչընդոտներն իրանում:

⁴⁶⁸ Իրանի «Գրագիտության շարժման կազմակերպություն», Անգրագիտության վերացումը ԻԻՀ-ում, Երկրորդ հրատարակություն, 2014թ. From: http://www.lmoiran.ir/uploads/barname_rishekani93.pdf:

Աղյուսակ 1. Մեծահասակների կրթության ոլորտի շահակից կողմերը Եվրոպայում և Նրանցից ամեն մեկի դերը առաջադրված ռազմավարությունների համար

	Եվրոպական հանձնաժողով	Ազգային պետություններ	Տեղական և ռեգիոնալ պետություններ	Եվրոպական և ազգային մակարդակներում ԶԿ-ներ, միություններ	Կրթական կառույցներ	Սոցիալական այլ շահակիցներ
Ս	<ul style="list-style-type: none"> Զետագրոտական աշխատանքների համարում 	<ul style="list-style-type: none"> Ազգային տվյալների ու վիճակագրությ. հիման վրա փաստարկված նախագծերի մշակում 	<ul style="list-style-type: none"> Տեղական կարիքների և սոց. ու. դեմոգրաֆ. կարիքների ճանաչում Ազգային նպատակամուկված և կանոնակարգված քայլերի կատարում Իրագրված ծրագրերի կատարում 	<ul style="list-style-type: none"> Մեծահասակ. կրթ. կարիքների և խոչընդոտների ուղղմանսիրում Լոգիստական աշխատանք քաղաքական ղեկավարների շրջանում Սոկրոդների համար համակարգված շարժումների ստեղծում Ոչ պետական կազմակերպութ. ուսուցում և խորհրդատվութ. Մեծահասակ. կրթության շարկապուղ Նրանց շահերին 	<ul style="list-style-type: none"> Կրթության առաջարկի մեծացում պահանջարկի բավարարման համար Մեծահաս. կրթ. անձնակալ և սոցիալ. շահերի շարկապուղ Նախորդ գիտելիքների և գործնական փորձի արժեքում Մեծահասակ-ների կարիքներին և առանձնահատկություններին համապատասխան ուսուցման մատուցում 	<ul style="list-style-type: none"> Այլ շահակիցների կողմից արտադրված միջոցների և գործիքների տարածում
Տ	<ul style="list-style-type: none"> Մեծահասակ. կրթ. լավագույն փորձերի փոխանակում և ներդրում 	<ul style="list-style-type: none"> Ազգային կանոնակարգված, նպատակամուկված քայլերի շրջանակի գծում 	<ul style="list-style-type: none"> Գործառնական և քանակական ու որակական նպատակների որոշարկում Աշխատանքների որակի վերահսկում և զննում 	<ul style="list-style-type: none"> Մեծահասակ. կրթության շահերին 	<ul style="list-style-type: none"> Մեծահասակ-ների կարիքներին և առանձնահատկություններին համապատասխան ուսուցման մատուցում 	
Գ	<ul style="list-style-type: none"> Մեծահասակ. կրթութ. սոցիալ-տնտեսական առավելությունների հարդրում և տարածում 	<ul style="list-style-type: none"> Մեծահասակական ու որակական նպատակների որոշարկում Աշխատանքների որակի վերահսկում և զննում 	<ul style="list-style-type: none"> Մեծահասակ. կրթության շահերին 	<ul style="list-style-type: none"> Մեծահասակ-ների կարիքներին և առանձնահատկություններին համապատասխան ուսուցման մատուցում 		

ADULT EDUCATION STRATEGIES

HAMIDREZA KAMIAR

*Yerevan State University, PhD Student of Department of Pedagogy,
"Electric Khodro Shargh company", Human resource development manager,
Mashad, Iran*

Due to resources constraints, countries are inevitably chosen to meet the goals of adult education. And strategy setting is the selection and coordination of actions that from the point of view of Educational Policy makers can help them to succeed in achieving their goals. Given the adult literacy situation in the world, all countries have defined strategies for themselves to coordinate their efforts to eradicate and eliminate illiteracy or low literacy, and also to improve the life quality of adults.

The focus of adult education programs in Iran is on combating illiteracy, So that in the Iran five-year plans of development, we also see more focus on policies and educational strategies in this area. The purpose of the article is to analyze our own strategy proposed in the field of adult education by the countries on three different continents and at different stages of socio-economic development /Rwanda (Africa), Mongolia and India (Asia), EU member countries, and also Iran/. We used the methods of comparison and analysis of data, research sources and documents. As a result, we concluded that developing countries are more inclined towards a strategy to eliminate illiteracy or low literacy, while developed countries, having no such problems, offer more diversified strategies, stimulating the personal and social development of adults.

Key word: *Adult, Adult education, Education strategies, Illiteracy, Developing and developed countries, European Union, Education system of Iran.*

СТРАТЕГИИ ОБРАЗОВАНИЯ ВЗРОСЛЫХ

ГАМИДРЕЗА КАМИАР

*Аспирант кафедры педагогики ЕГУ,
менеджер по развитию персонала электрической компании «Ходро Шарг»,
г.Машад, Иран*

Для достижения целей, предусмотренных в сфере образования взрослых, многие государства, учитывая дефицит ресурсов, вынужденно оказываются перед выбором и потому устанавливают стратегии и предпринимают шаги, которым придается важность со стороны разработчиков образовательной политики. Все страны разрабатывают для себя стратегии по сокращению безграмотности, а также повышению качества жизни взрослых людей.

В Иране важнейшей задачей образовательных программ взрослых является борьба против безграмотности, и образовательная политика и стратегии в пятилетних программах социально-экономического развития Ирана сконцентрированы вокруг этой задачи. Целью статьи является анализ стратегий в сфере образования взрослых, взятых на вооружение странами, находящимися на трех разных материках и на разных стадиях социально-экономического развития: Руандой (Африка), Монголией и Индией (Азия), странами-членами Евросоюза, а также Ираном. Нами были применены методы сравнения и анализа данных, исследования источников и документов. В результате мы пришли к выводу, что развивающиеся страны наиболее расположены к стратегии устранения безграмотности, в то время как развитые страны, не имея подобных проблем, предлагают более разносторонние стратегии, стимулируя личное и общественное развитие взрослых людей.

Ключевые слова: *взрослый, образование взрослых, стратегии образования, безграмотность, развивающиеся и развитые страны, Евросоюз, образовательная система Ирана.*

ԼԵՉԿԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
LINGUISTICS, LITERATURE STUDY
ЛИНГВИСТИКА, ЛИТЕРАТУРОВЕДЕНИЕ



ՔԱՂԱՔԻ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՄՈՏԻՎԸ ԴԵՆՐԻԿ ԷՂՈՅԱՆԻ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ*

ՀՏԴ 82-1:821.19

ՀՌԻՓՍԻՄԵ ՉԱՔԱՐՅԱՆ

*ԵՊՀ հայ նորագույն գրականության ամբիոնի հայցորդ,
 ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն
zaqaryan_hripsime@mail.ru*

Հոդվածում դիտարկվում է քաղաքի տարածական մոտիվը Դենրիկ Էղոյանի բանաստեղծական աշխարհում⁴⁶⁹, որը մետաբանաստեղծական մակարդակում հանդես է գալիս ինքնատիպ պարադոքսալությամբ ու երկարժեքությամբ: Էղոյանի քնարերգության մոտիվային կոնտեքստում քաղաքի տարածական մոտիվը ներկայացված է բացառապես միմյանցից տարբերվող ձևերով: Քաղաքն այն տարածքն է, որտեղ խմորվում են բանաստեղծի յուրօրինակ գաղափարները, խոհերն ու ընկալումները մարդու և աշխարհի մասին: Այն բանաստեղծի քնարական աշխարհի սեմանտիկական կենտրոնն է:

Հոդվածի նպատակը գրականագիտական մտքի ժամանակակից տիրույթում Էղոյանի բանաստեղծական տեքստում հաճախ գործածված քաղաքային պատկերների գեղարվեստական արժեքի կարևորումն է:

Հոդվածը կառուցված է գրական-գեղարվեստական երկի հետապոստման վերլուծական ու տիպաբանական, ժամանակագրական-կենսագրական մեթոդների գործածմամբ, որի համար որպես սկզբնաղբյուր են ծառայել Նշանավոր հեղինակներ Յ. Վ. Գյոթեի, Ա. Ն. Վեսելովսկու և այլ հեղինակների գիտական մտքերի՝ տրամաբանորեն հիմնավորված մեջբերումները:

Հոդվածի նորույթը պայմանավորված է մերօրյա ականավոր բանաստեղծ Դենրիկ Էղոյանի բանաստեղծական աշխարհում յուրովի գործածված քաղաքային պատկերների դիտարկման ու արժևորման երկկողմ հարցերի գիտական հետապոստությամբ:

Բանալի բառեր՝ տարածական մոտիվ, քաղաք, բանաստեղծություն, բանաստեղծական «ես», լիրիկական «ես»⁴⁷⁰, պոեզիա, իմաստ:

Մոտիվը «ստեղծագործության որոշակի բովանդակությունից գեղարվեստորեն շեղվելու վերջին աստիճանն է, որն ամրագրվում է պարզագույն խոսքային բանաձևում»⁴⁷¹: Որպես տերմին՝ այն առաջին անգամ առաջ է քաշել Գյոթեն «Էպիկական և դրամատիկական պոեզիայի մասին» հոդվածում: Մոտիվն, ըստ նրա,

* Հոդվածը ներկայացվել է 25.04.2019թ., գրախոսվել՝ 20.05.2019թ., տպագրության ընդունվել՝ 17.06.2019թ.:

⁴⁶⁹ Քառի որ Դենրիկ Էղոյանի բանաստեղծական աշխարհում բավականաչափ տեղ զբաղեցնող քաղաքային պատկերների վերաբերյալ չկա գիտական ուսումնասիրություն, ուստի մեր կողմից կատարված ուսումնասիրությունում այլ հեղինակներից հղումները կլինեն սահմանափակ:

⁴⁷⁰ Гинзбург Л. Я. О лирике, Л., изд. «Советский писатель», 1974, с. 155-167.

⁴⁷¹ Литературная энциклопедия терминов и понятий, Москва, «Интелвак», 2001, с. 594.

այուժետային տարր է, դինամիկ ու իրավիճակային միավոր⁴⁷², իսկ գրականության պատմաբան Ա.Ն.Վենետկովսկին «Պատմական պոետիկա» աշխատությունում գրում է. «Մոտիվ ասելով ես հասկանում եմ այն բանաձևը, որն առաջին հերթին պատասխանում է հասարակությանը հուզող այն հարցերին, որոնք բնությունն ամենուր դնում էր մարդկանց առջև, կամ ամրապնդում իրականության առանձնահատուկ վառ, կարևոր թվացող կամ կրկնվող տպավորությունները: Մոտիվի հայտանիշը նրա մեկ անդամից բաղկացած պատկերավոր սխեմատիզմն է. այդպիսին են ստորին միջաբանության և հեթաթի այլևս չմասնատվող տարրերը...»⁴⁷³:

Երևակայությունը մարդու բացառիկ ընդունակություններից բարձրագույնն է: Այն անմիջական կապ ունի մարդու մտքի ու կենսափորձի հետ և հեշտությամբ համադրվում է գեղարվեստական ստեղծագործությանը: Երբեք չսահմանափակվելով արտաքին աշխարհի ընկալման բնատուր հնարավորություններով՝ մարդը ստեղծում է սեփական ներքին աշխարհի կերպարը, որը կարող է լինել ինչպես տեսանելի, այնպես էլ վերացական: Այն մեր երևակայության խաղի ստեղծած ներքին տարածքն է և մշտապես բանաստեղծական է: Օբյեկտիվ իրականությունը բանաստեղծականացնելով՝ բանաստեղծը բանաստեղծական կերպարի միջոցով կարող է երևակայությամբ ընդլայնել առարկայորեն փոքրիկ տարածքը կամ ստեղծել հակառակը: Բանաստեղծը մշտապես կապվում է ինչ-որ հարազատ տարածքի հետ, որը դառնում է միջաբանացման ու գեղարվեստական մարմնավորման առարկա:

Քաղաքը դեռևս Յոմերոսի ժամանակներից մշտապես գտնվել է մեծ մտածողների, գրողների ու պոետների ուշադրության կենտրոնում: Քաղաքային միջավայրի առաջին հետազոտողները Արիստոտելն ու Պլատոնն էին, իսկ ավելի ուշ՝ նրա ուսումնասիրությամբ զբաղվել են Թոմաս Մյունցերը, Թոմաս Մորը, Թոմագո Կամպանելան:

Հենրիկ Էդոյանի բանաստեղծական աշխարհի ուսումնասիրությունը թույլ տվեց առանձնացնել ինքնատիպորեն մատուցված քաղաքի տարածական մոտիվը, որի բարձր արժեհամակարգը հարաբերվում է հեղինակի աշխարհայացքին ու աշխարհընկալմանը: Տարածական մոտիվ ասելով՝ նկատի ունենք տարբեր հեղինակների ստեղծագործություններում կրկնվող տարածական պատկերները, որոնք ամենատարբեր ստեղծագործություններում արտահայտվում են ամենատարբեր իմաստներով:

Քաղաքի մոտիվը, ինչպես մյուս տարածական մոտիվները, Էդոյանի ստեղծագործական աշխարհում երբեմն դրսևորվում են մի շարք պարադոքսներով: Նրա բանաստեղծական տարածության հակադրությունները, կարելի է ասել, բազմաշերտ են: Բազմաստիճան պարադոքսալությունը, իմաստային բազմաբովանդակությունը, ռիթմը, մեղեդին հատվում են մի կետում, ապա՝ ճյուղավորվում՝ նախաիմաստի ներսում ստեղծելով նորերը, և վերածվում Էդոյանական բանաստեղծական աշխարհին ներհատուկ հոգեբանական պատկերների, որոնք նրա ստեղծագործությանը հաղորդում են կոնտրաստային, ռիթմիկ, այդ իմաստով նույնպես իր տեսակի մեջ եզակի հնչեղություն: Հաշվի առնելով Էդոյանի բանաստեղծական աշխարհի այդ յուրահատկությունը՝ փորձենք դիտարկել քաղաքի մոտիվային պարադոքսալությունը:

Քաղաքին վերաբերող բանաստեղծությունների մի ամբողջ շարք ինքնատիպ Էդոյանական մոտեցումներով քաղաքին հաղորդում են հեթաթայնություն, կախարդանք: «Քաղաքներ» սոնետների շարքում քաղաքները «բոցեր են վառվող մթության մեջ գիշերների», որոնք աշխարհը դարձնում են «աստղով լեցուն մի երկինք»

⁴⁷² Геге И.В. Об эпической и драматической поэзии// Собрание сочинений: В 10 т., том 10, М., изд. «Художественная литература», 1980, с. 274-277.

⁴⁷³ Веселовский А. Н. Историческая поэтика, Москва, изд. “Высшая школа”, 1989, с. 301.

այլ աշխարհից նայելիս, սակայն հեքիաթին փոխարինելու է գալիս իրականությունը. այստեղ՝ քաղաքում, «մեղքի առջև անհավասար», սակայն միևնույն քողի տակ թաքնված, իրար կողքի ապրում են «բանաստեղծներ, մարդասպաններ, գողեր, սրբեր», այստեղ «ամեն անցորդ անհաղորդ է քարի նման», քանզի պահապան հրեշտակը լքել է քաղաքը, այստեղ՝

Անպատասխան մարմինների երազներից
թույնն է հոսում և նավերն են ճոճվում դանդաղ
ջրերի մեջ, լքված իրենց նավազներից:

Ցավն ու մեղքը միասին են գալիս աշխարհ,
մտնում սենյակ անհատակ ու անառաստաղ
և դառնում են մի նոր կյանքի անկյունաքար:
«Քաղաքներ»⁴⁷⁴

Վերոբերյալ օրինակում թեև բացահայտվում են բանաստեղծական «ես»-ի՝ անտարբեր ու սառն իրականության հանդեպ տածած բացասական զգացմունքները, այնուամենայնիվ, քաղաքի ներդաշնակ տարածություն է պատկերվում, իսկ երգը՝ «վերջին ակնթարթը անդարձ կյանքի», որը, փողոցի մեջ ծնվելով, իմաստ է ստանում թղթերի վրա, դառնում է փրկության շնորհ: Էդոյանի լիրիկայում աստիճանաբար մարմնավորվում է գիշերային քաղաքը և դառնում նրա հոգու աշխարհի ներքին տարածությունը.

Քաղաքում չեն լսվում զանգերի դողանջներ,
այլ միայն ազդանշաններ
և հրավառություններ: Գիշերն իր մեծությամբ
դժվար է տեղավորվում փողոցի
մարմնի մեջ, ուր մի օտարական
դեմքն է կնճռոտում իր գլխացավից: Մտնում եմ
սրճարան: Տեղ չկա նստելու:

«Տեղ չկա նստելու»⁴⁷⁵

Էդոյանն աշխարհն ընկալում ու արտացոլում է ոչ թե «սահյանական պեյզաժներով»⁴⁷⁶, «հոգսերով ու ցավերով, մարդ-բնություն կապերով, տեսանելի ու անտեսանելի, արդար ու անարդար, չար ու բարի հարաբերություններով, անձնավորված քար ու քարափներով...»⁴⁷⁷, այլ իր բանաստեղծական գծահամակարգում տեղ գտած այլաաշխարհային օրենքներով, որոնք ամրագրված են սեփական հոգու նուրբ աշխարհում: Նրա սեփական բանաստեղծական աշխարհն արարված է շարժուն, վերերկրային, ապակյութականացած ու սեփական սահմաններին ձգտող աշխարհի օրենքներով: Էդոյանը խոսում է ոչ թե պարզապես աշխարհի, այլ սեփական ներաշխարհի տիեզերքի ներքին օրենքների մասին, ինչը նրան դուրս է բերում հասարակության ու աշխարհի փակագծերից այն կողմ.

Աղքատ քաղաքի մեջ պտտվում է մահը, աղքատ բառերի մեջ
ապրում է հարությունը: Ոչ թե խենթանոց, այլ
հիվանդանոց: Քաղաքի սառն ու օտար մի թաղամասում
ոտքդ ընկնում է ջրափոսի մեջ,
բայց միևնույն է՝ դու պիտի գնաս:

⁴⁷⁴ Էդոյան Զ., Ընտրանի, Ե, «Հայագիտակ», հրատ., 2016, էջ 370:

⁴⁷⁵ Նույն տեղում, էջ 702:

⁴⁷⁶ Գրիգորյան Ս. Համո Սահյան (դասախոսություն) // http://ysu.am/files/Hamo_Sahyan_dasakhosutyun.pdf, 31. 05. 2019:

⁴⁷⁷ Աղաբեկյան Կ., Համո Սահյանի և նրա պոեզիայի նվիրյալը/Աղաբեկյան Կ., Հոդվածներ, Ե., «ԵՊՀ հրատարակչություն», 2016, էջ 212:

«Քաղաքում կան վայրեր»⁴⁷⁸

Այսպիսով՝ մենք տեսնում ենք, որ Էդոյանի բանաստեղծական աշխարհում քաղաքը դառնում է հոգեբանական խաչուղի, որը ձեռք է բերում տարբեր իմաստներ: Մի կողմից քաղաքը արտացոլում է բանաստեղծական «ես»-ի ներաշխարհը, մյուս կողմից՝ ազդում բանաստեղծական «ես»-ի վրա, բայց առավել հաճախ Էդոյանի բանաստեղծական աշխարհում քաղաքը նույնանում է հոգու հետ:

Էդոյանը միշտ չէ, որ բանաստեղծության մեջ քաղաքային պատկերներին անդրադառնալիս հիշատակում է քաղաքի անվանումը. նա չի պատկերում որևէ կոնկրետ տարածք, քանի որ նրա համար քաղաքը կարևորվում է եական հատկանիշներով՝ առանց մանրամասնությունների: Բանաստեղծության մեջ կարող է նկարագրվել ինչ-որ պատկեր, որը բացառապես ընկալվում է որպես քաղաքային, ավելին՝ բանաստեղծը կարող է նշել քաղաքի այս կամ այն վայրը՝ չհիշատակելով քաղաքն ընդհանրապես.

Մետրո, կայարան «Երիտասարդական»:
Երիտասարդներ՝ կիսով չափ անեացած,
աղջիկներ՝ երազկոտ և
հաշվենկատ: Ես տեսնում եմ նրանց,
նրանք ինձ չեն տեսնում: Բարձրացող
և իջնող
շարժասանդուղքներ....:

«Մետրո, կայարան «Երիտասարդական»»⁴⁷⁹

Վերոբերյալ բանաստեղծության մեջ ևս քաղաքը անուղղակիորեն է ընկալվում. ուրբանիզմի գործառույթն այստեղ երկրորդական է: Բանաստեղծության իմաստով պայմանավորված՝ քաղաքը պոետական նոր ասելիքով ու բովանդակությամբ ստանում է նոր իմաստներ:

Էդոյանը պատկերավոր նկարագրությամբ միահյուսում է քաղաքային տարածությունը երկնային տարածությանը, ջնջում սահմանը երկնքի ու երկրի միջև: Նա նկատում է, որ

երկնքի ճամփաները
պսպղում են քաղաքի կամարների վրա-

և շարունակում.

կյանքը ինձ համար
հավերժի արձագանք է,
աստղերի գրաֆիկա, շենքերի արթնություն:
«Գիշերվա պողոտան»⁴⁸⁰

Բանաստեղծը, օրվա դինամիկան ընկալելով, դրոշմում է անհետացող պատկերները և արտապատկերում բանաստեղծական տեքստում.

Լապտերը լույս է տալիս
մի ծառի ճյուղերի մեջ ներթաշված
ինչպես երազ:

«Գիշերվա պողոտան»⁴⁸¹

Քաղաքային տարածությունը իմաստավորվում է նաև ճարտարապետական անսամբլների՝ շենքերի ու փողոցների շնորհիվ: Փողոցը ձգվելով ընդլայնում է սահմանները և դառնում քնարական «ես»-ի համար ճակատագիր՝ «...ճակատագիրն եմ ես քո», -դեմքիս ուղիղ նայելով՝

⁴⁷⁸ Նույն տեղում, էջ 703:

⁴⁷⁹ Էդոյան Ջ., Լույսը ծախս կողմից, Ե., «Չանգակ» հրատ., 2018, էջ 94:

⁴⁸⁰ Էդոյան Ջ., Ընտրանի, Ե., «Չայագիտակ» հրատ., 2016, էջ 364:

⁴⁸¹ Նույն տեղում:

ասում է նա և ժպտում միրածի մեջ քաղաքի:

...խոսում է նա և քայլում-հագին քարեր ու բետոն,
գալիս է իմ ետևից, ինձ հեռանալ չի թողնում,
և կեսօրն է մեր միջև զնգում ինչպես կամերտոն:
«Փողոցը»⁴⁸²

Ինչպես տեսնում ենք, քաղաքը օժտված է և՛ արտաքին, և՛ ներքին դինամիկայով:

Անդրադառնալով քաղաքի քաղաքակրթությանն ու պատկերելով նրա կենսընթացը՝ Էդոյանը բացահայտում է մարդկային կամքի ու մատերիայի պայթարի անվերջանալի հարցը: Նա ցույց է տալիս, թե որքան են մարդիկ կախված իրենց իսկ ստեղծած կյուբական աշխարհից.

Համացանցից իմացավ, որ գարուն է,
նայեց ապակե թվատախտակին՝ ժամը
տասնմեկն էր, կարդաց՝ որ քաղցած է...
«Համացանցի առջև»⁴⁸³

«Ցերեկային խոսքեր» բանաստեղծության մեջ, օգտագործելով հարուստ ու գանազան փոխաբերություններ, քաղաքի մի փոքրիկ տարածական միավորի՝ ռեստորանի առօրեական ֆոնի վրա Էդոյանը նկարագրում է կյուբական աշխարհում ապրող, կյուբական աշխարհից կախված մարդուն, որ դեռևս խոնարհվում է իր սրտի ու հոգու առջև.

Ռեստորանների փայլուն ու գույնզգույն ապակիներից այն կողմ
մատուցողները նման են դաշտային ծաղիկների
քամուց շարժվող դեղին թերթիկներով,
ո՞վ է ապրում այս ողորկ ապակիների մեջ,
ո՞վ է աստվածներից ներքև ուղարկում
այսքան խենթություն-բոցավառելով
մեր կյանքի խարույկը մեր մատների մեջ
իբրև մատանի, որ տանում է մեզ
դեպի հարսանիք բախտի օղակներով...

«Ցերեկային խոսքեր»⁴⁸⁴

«Ցերեկային խոսքեր» բանաստեղծությունն հատկանշվում է իր արդիականությամբ: Կենցաղի ու գոյության կապը այս մետաբանաստեղծական ստեղծագործության ստատիկայի ու դինամիկայի հետ ստեղծում է մի կոմպոզիցիա, որը խոսում է բանաստեղծի տարերային ու շարժուն էության մասին:

Էդոյանի բանաստեղծական շարքերում լեյտմոտիվային բնույթ ունեցող քաղաքը պատկերվում է երկիմաստորեն, բայց ընթերցելիս նկատելի են դառնում վերացականն ու կոնկրետը. վերացական շղարշի տակ թողարկված է իրական պատկերը:

«Վերադարձ դեպի առաջ» բանաստեղծության մեջ քաղաքային պատկերի մոտիվային առանձնահատկությամբ բացահայտվում են բանաստեղծական սուբյեկտի ներաշխարհի խորքային, արթնտիպական մակարդակները: Զաղաքի պոետիկական կապված է անձի ներքին լինելիության ինտրի հետ: Բանաստեղծի երևակայության խաղը ստեղծում է նոր իրողություն, որը երկակի է. մի կողմից՝ քաղաքն ապրում է նրա մեջ, և նրա հոգին պահպանում է հիշողություններ, մյուս կողմից՝ նա ապրում է քաղաքում և երևակայությամբ իր հոգում կառուցում հարազատ քաղաքի պատկերը: Հոգում կառուցած քաղաքն այն վայրն է, որտեղ բանաստեղծն ապրում է

⁴⁸² Նույն տեղում, էջ 149:

⁴⁸³ Նույն տեղում, էջ 746:

⁴⁸⁴ Նույն տեղում, էջ 88:

երազանքներով: Այն մի վայր է, որտեղ նա երագում է ապրել, իսկ անցյալը գտնվում է մի այլ աշխարհում, այսինքն՝ տարածությունն ու ժամանակը համակված են անիրականությամբ:

Ես վերադառնում եմ դեպի օրն իմ նախկին,
 Ես վերադառնում եմ բակն իմ ստվերախիտ,
 Ես վերադառնում եմ փողոցն այն, ուր մի օր
 տաք հողը վառում էր իմ ոտքերը բոբիկ...

«Վերադարձ դեպի առաջ»⁴⁸⁵:

Բանաստեղծության մեջ պատկերվող քաղաքը դառնում է մանկությունը խորհրդանշող երանելի տարածություն: Եվ քանի որ մանկության հիշողությունը ավելին է, քան իրականությունը, այն միշտ կենդանի է ու անմահ. այդ երանելի տարածությունը դառնում է յուրաքանչյուրիս հոգևոր կացարանը՝ մի յուրատեսակ հոգևոր թանգարան, որտեղ մենք պահում ենք ամբողջությամբ մեզ պատկանող պատկերները՝ թանկագին ու սրբազան կյանքի պատկերները: Հետևաբար այդ տարածությունը մեր հոգու մեկուսացման ու ներանձնացման վայրն է: Երևակայությունների, երազանքների, տեսիլքների ու հիշողությունների այս կոմպոզիցիան ստեղծում է պատկերներ, որոնք քացահայտում են մարդու ներաշխարհը նրա ամենաբարձր արժեքներում:

...կյանք առանց լռության,
 լռություն առանց ուժի,
 կինոֆիլմ կադրից դուրս,
 պտտվող մի սյուժե-
 դեպի ետ, դեպի սկիզբ,
 ուր մի երեխա
 փնտրում է ճանապարհը
 դեպի Սուրբ Քաղաք:

«Օր առանց հանդերձանքի»⁴⁸⁶

Էդոյանի քնարական աշխարհում քաղաքի պատկերը ներկայացվում է որպես անցյալը, ներկան ու ապագան կապող հանգույց ու երբեմն ներկայանում է սուրբ իմաստով: Նրա տարածաժամանակային պոեզիայում ժամանակը ձևավորում է միֆաբանաստեղծական քրոնոտոպ՝ այդ մոդելին բնորոշ հայտանիշներով ու կառուցվածքով:

Բանաստեղծն իր բնույթով արարիչ է. այն ամենը, ինչ նա արարում է, սեփական մտքի, ներաշխարհի և հոգու արձագանքն է: Էդոյանի լիրիկան, որն իր մեջ ամփոփում է բանաստեղծի բազմաբնույթ ու խորաթափանց բանաստեղծական «ես»-ը, հնարավորություն է ընձեռում զգալու ու տեսնելու քաղաքի բազմաբնույթ կերպարները, որոնք առանցքային դերակատարում ունեն նրա պոեզիայում: Քաղաքի մոտիվն առանձնանում է ինչպես արթետիպական հարուստ սեմանտիկայով, այնպես էլ տարածական մոտիվի առանձնահատուկ բնութագրերով, որոնք դրված են պատկերի կառուցվածքի հիմքում: Քաղաքը Էդոյանի քնարական աշխարհի գեղարվեստական այն տարածքն է, որը դառնում է նրա լիրիկայի իմաստաբանական կենտրոնը: Այն բանաստեղծի փոքր աշխարհն է, հոգու միկրոտիեզերքը, որը ձևով նման է մակրոտիեզերքին: Այդ երկու աշխարհների ներդաշնակվածությամբ է պայմանավորված Էդոյանական քաղաքի մոտիվը:

Այսպիսով՝ Էդոյանի բանաստեղծական աշխարհում քաղաքի տարածական մոտիվը դառնում է գերշխող, իմաստաբանական գործառույթները՝ բազմաբովանդակ: Մեր կողմից դիտարկվող մոտիվը բանաստեղծական մակարդակում գործածվում է յուրահատուկ պարադոքսալությամբ ու երկարժեքությամբ:

⁴⁸⁵ Նույն տեղում, էջ 268:

⁴⁸⁶ Նույն տեղում, էջ 674:

THE CITY'S SPATIAL MOTIF IN HENRIK EDOYAN'S POETRY**HRIPSIME ZAKARYAN**

*Yerevan State University, Ph.D. student of the Department of
Armenian Literature at the Faculty of Armenian Philology,
Yerevan, Republic of Armenia*

The article considers the city's spatial motif in the poetical world of Henrik Edoyan, which figures with paradoxicality and dual-values at metapoetical level. In the motivational context of Henrik Edoyan's lyrics, the spatial motif of the city is presented exclusively in the ways differing from each other. The city is the area where the poet's original ideas, thoughts and perceptions about the humans and the world are fermented. It is the semantic center of the poet's lyrical world.

The purpose of the article is to highlight the artistic essence of urban images commonly used in the poetic text of Henrik Edoyan in the context of modern literary thought.

The article is built using the analytical and typographic, chronological-biographical research methods of literary-artistic work for which the logically well-grounded citations of scientific ideas by prominent authors Y. V. Goethe, A. N. Veselovski and others have served as an original source.

The novelty of the article is conditioned by the scientific research on two-sided issues of observation and evaluation of urban images uniquely used in the poetical world of today's prominent poet Henrik Edoyan.

Key words: *spatial motif, city, poet, poetic "I", lyric "I", poetry, meaning.*

**ПРОСТРАНСТВЕННЫЙ МОТИВ ГОРОДА
В ПОЭЗИИ ГЕНРИХА ЭДОЯНА****РИПСИМЕ ЗАКАРЯН**

*Соискатель кафедры новейшей армянской литературы ЕГУ,
г.Ереван, Республика Армения*

В статье рассматривается пространственный мотив в поэтическом мире Генриха Эдояна, который выступает на мета-поэтическом уровне со своеобразной парадоксальностью и дуализмом. В мотивном контексте лирики Генриха Эдояна пространственный мотив города представлен формами, исключительно отличающимися друг от друга. Город – это та территория, где создаются оригинальные идеи и мысли автора о человеке и о мире. Он является семантическим центром лирического мира автора.

Цель статьи – подчеркнуть художественную ценность городских картин, которые были часто использованы в поэтических текстах Генриха Эдояна в рамках современных требований литературоведения.

Статья построена на основе аналитического и типологического, хронологическо-биографического методов исследования литературно-художественного произведения, источником для которых послужили научно обоснованные цитаты из произведений таких великих авторов, как И. В. Гете, А. Н. Веселовский и другие.

Новизна статьи заключается в научном исследовании и оценке своеобразно использованных городских картин в поэтическом мире современного видного поэта Генриха Эдояна.

Ключевые слова: *пространственный мотив, город, стихотворение, поэтическое "Я", лирическое «Я», поэзия, смысл.*

ՀՈՄԱՆԻՇՆԵՐԻ ՈՃԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱԶԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՅԱՆ ՏԵՐՅԱՆԻ ԶԱՓԱՃՈՅՈՒՄ*

ՀՏԴ 82-1:821.19

ՄԵՐԻ ՀՈՎՀԱՆՆԻՍԱԼ

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի գիտաշխատող,
մանկավարժության և կրթության վարժապետական կենտրոնի դասախոս,
ասիստենտ, բանասիրական գիտությունների թեկնածու,
թ.Երևան, Հայաստանի Հանրապետություն
mary.hovhannisyan@gmail.com

Հոդվածում ուսումնասիրվում ու վերլուծվում են բառապաշարի տարբեր շերտերին պատկանող բառերի հոմանշային կիրառությունները: Համագործածական, ինչպես նաև ոչ գործուն բառապաշարին պատկանող հոմանիշների քննությունը հնարավորություն է տալիս բացահայտելու տերյանական լեզվի հարստությունն ու բազմապատկությունը: Որպես հոմանշային բառի բաղադրիչներ Տերյանը հասկացական, տաղաչափական, հուլպարտահայտչական տարբեր նպատակներով գործածության մեջ է դնում նաև ժողովրդախոսակցական, բարբառային բառեր, նույնիսկ փոխառություններ ու օտարաբանություններ:

Բանաստեղծը հոմանիշները գործածում է հնարավոր բոլոր միջոցներով ու եղանակներով: Նույնարմատ, տարարմատ, բառապաշարի տարբեր շերտերի պատկանող, լեզվական ու խոսքային հոմանիշները հնարավորություն են տալիս խուսափելու կրկնություններից և բազմակողմանիորեն արտացոլելու նկարագրվող առարկաներն ու երևույթները, դրսևորվող հույսերն ու ապրումները:

Տերյանը որպես հոմանիշ գործածել է բոլոր այն խոսքի մասերը, որոնք կարող են ունենալ փոխաբերական գործածություններ: Բանաստեղծի չափածո խոսքին բնորոշ են անժխտական ածանցով հոմանիշների կիրառությունները: Տերյանի չափածոյում կիրառական հոմանիշների քննությունը բացահայտում է բանաստեղծի ստեղծագործությունների լեզվի առանձնահատկությունները, քանի որ առաջին հերթին առնչվում է Տերյանի բառընտրության արվեստին: Վերջինս տերյանական լեզվի ինքնատիպությունն ապահովող գործոններից է, որը լայնորեն դրսևորվում է բառերի իմաստաոճական տարբեր կիրառություններում: Հոմանիշների գործածությունը պայմանավորում է տերյանական խոսքի բազմապատկությունն ու բովանդակային հարստությունը:

Բանալի բառեր` բանաստեղծական լեզու, խոսքարվեստ, հոմանիշ, բառապաշար, խոսքի ներդաշնակություն, բարեհնչություն, երաժշտականություն:

Հայտնի է, որ գեղարվեստական խոսքի արտահայտչականությունը հաճախ կախված է բառի ճիշտ ընտրությունից, իսկ ընտրության հնարավորություն ամենից առաջ տալիս է հոմանիշների առկայությունը լեզվում: Ընդունված է ասել, որ հոմանշությունը ոճագիտության հիմքն է: «Ոճն սկսվում է այնտեղ, որտեղ կա ընտրություն: Լեզվի պարագայում ընտրությունը հոմանշությունն է»⁴⁸⁷, - գրում է Կ. Դոլինինը: Ասել է թե՛ ոճաբանական ելակետերն ու մոտեցումները հիմնականում գործում են այն դեպքում, ե-

* Հոդվածը ներկայացվել է 06.05.2019թ., գրախոսվել՝ 03.06.2019թ., տպագրության ընդունվել՝ 17.06.2019թ.:

⁴⁸⁷ Долинин К. А., Стилистика французского языка, М., 1987, с.150.

թե կա ընտրության հնարավորություն, եթե կան հոմանիշներ ու զուգաձևություններ:

Մ. Աբեղյանը առաջիններից մեկն էր, որ անդրադարձավ հոմանշության խնդրին և տարբերակելով մերձիմաստ ու նույնիմաստ բառերը՝ առանձնացրեց հոմանիշների երկու տարատեսակ՝ համանիշներ ու նույնանիշներ⁴⁸⁸: Հետագայում, սակայն, ինչպես նկատում է Ն.Պառնասյանը, «դպրոցական քերականությունների մեջ հոմանիշ ու նույնանիշ տերմինները նույնացվեցին, իսկ իմաստային ու կիրառական նրբերանգներ ունեցող բառերի համար սկսեց գործածվել հոմանիշ տերմինը»⁴⁸⁹: Այսպիսով՝ հոմանիշների բնութագրման համար անհրաժեշտ է նկատի ունենալ, որ հոմանիշները մերձիմաստ կամ նույնիմաստ լեզվական իրակություններ են, որոնք տարբերվում են արտահայտության ձևերով ու ոճական կիրառությամբ:

Գեղեցիկ, ինքնատիպ ու անկրկնելի հոմանիշներով հարուստ է Տերյանի չափածոն: Բանաստեղծի խոսքարվեստում հոմանիշները հանդես են գալիս ինչպես առանձին, այնպես էլ համատեղ գործածությամբ: Ըստ որում՝ առանձին գործածության դեպքում բանաստեղծը բառընտրության մեծ վարպետությամբ հոմանիշների շարքից ընտրում է այն բաղադրիչը, որը տվյալ դեպքում իր իմաստային նրբերանգներով ավելի ճշգրիտ ու տեղին է արտահայտում հեղինակի նպատակադրումն ու ասելիքը: Այսպես՝ *հով* գոյականն առաջնային իմաստով նշանակում է *հողմ*, *քամի*, իսկ *փոթորիկ*, *մրրիկ*, *ցիլլոն*, *սամուհ* և այլ բառերը դրսևորում են նշված հասկացության աստիճանական տարբերությունները: Նշված բառերից միայն *հով*, երբեմն էլ *քամի* բառերն են գործածված ոչ փոխաբերական նշանակությամբ, ինչպես՝ «Սարի լանջից *հովն* է փչում...» (ԱԷ, II, 95)⁴⁹⁰, «Ոսկե թերթերը *քամին* է թաղում...» (Ս, II, 177), իսկ նշված բառի հոմանշային տարբերակները գեղարվեստական պատկերներում հիմնականում հեղափոխության, փոթորկավետ կյանքի կամ կործանարար ուժի խորհրդանշային արժեք են ստանում, ինչպես օրինակ՝ «Ե՛լ, դեմոկրատիա, *խոր* ու *խնդուն աղվկիր ամեն կողմ... Եվ որոտա՛ որպես *հողմ*...» (ԱԷ, II, 126), «Տա՛ր, մի թողկիր, *քամի* անասնձ – ոչինչ, ոչինչ...» (ԱԷ, II, 74), «Որպես *փոթորիկ*, իջե՛ք ավերիչ Եվ խորտակեցե՛ք աշխարհն այս վապիր...» (ԱԷ, II, 127), «Դուրսը *ցուրտ* է հիմա Եվ խավար և մրրիկ..., Դուրսը *չար փոթորիկ*, Դուրսը մուգ է այսօր...» (ՈՅ, I, 195) և այլն: Ոճական ինքնատիպ արժեքով են հատկանշվում նաև *ցիլլոն* ու *սամուհ* բառերի կիրառությունները, որոնցից առաջինը հեղինակի բացասական, իսկ երկրորդը՝ դրական վերաբերմունքի դրսևորման արտահայտչաձևեր են դառնում՝ միաժամանակ նպաստելով նաև բանաստեղծի հանգավորմանը, ինչպես օրինակ՝ «Քո պաղ շենքերի մուգ նկուղներում Դու, կո՛ւյր, պահում ես մի ահեղ *ցիլլոն*...» (ԱԲ, I, 262), «Թող ինձ այրե *սամուհը*, Սերըդ որ սիրտ է փշրում...» (ՈՇ, I, 227): *Հով* բառի հոմանշային տարբերակների գործածությունները պայմանավորված են դրանց փոխաբերական իմաստների նրբերանգային տարբերություններով: Իմաստային այդ զանազանությունը բովանդակային հարստության, լեզվի ճկունության, խոսքի բազմազանության կարևոր գործառույթ է կատարում:*

Հայոց լեզվի բառապաշարի հարստությունն ու իմաստային բազմազանությունը բանաստեղծին հնարավորություն են տալիս օգտվելու հայերենի հոմանշային հարուստ բառազանձից: Որպես հոմանշային բառի բաղադրիչներ Տերյանը հասկացական, տաղաչափական, հուզաարտահայտչական տարբեր նպատակներով գործածության մեջ է դնում նաև ժողովրդախոսակցական, բարբառային բառեր, նույնիսկ փոխառություններ ու օտարաբանություններ: Այսպես՝ «Կատվի դրախտ» շարքի բանաստեղծություններում քաղթենիական աշխարհի կնոջ տիպականացման ոճական հնարանք է դառնում *տիկին* բառի գործածությունը: Բերենք օրինակ.

⁴⁸⁸ Աբեղյան Մ. Խ., Հայոց լեզվի տեսություն, Ե., 1965, էջ 159:

⁴⁸⁹ Պառնասյան Ն. Ա., Շարահյուսական համանիշները ժամանակակից հայերենում, Ե., 1970, էջ 21:

⁴⁹⁰ Տերյան Վ., Երկերի ժողովածու 4 հատորով, հ. 1, հ. 2, Երևան, 1972, 1973: Շարադրանքում ժողովածուների անվանումների փոխարեն նշվում են բանաստեղծական շարքի համառոտագրումը, հատորն ու էջը:

*Դուք այնպիսի խոսքեր գիտեք
Եվ այնպիսի նուրբ նապեր –
Դահճին անգամ Դուք կըրոյութեք,
Կըստրկացնեք և կայսեր...
Ո՞վ կարող է Ձեզ չըզոպել,
Ու չերգել Ձեզ, օ, տիկին... (ԿԴ, I, 255)*

Նշված բառի գործածությունների կողքին բանաստեղծի տրիոլետներից մեկում հանդիպում է նաև **մադամ** օտարաբանությունը՝ «Որպես **մադամ** Բովարին, Դու էլ կիզված տազնապով...» (ԱԷ, II, 28): Գրական համարժեքի փոխարեն օտար բառի ընտրությունը համատեքստում նպատակային է ու պատճառաբանված, քանի որ Ֆլորեթի հերոսուհու ազգանվան կողքին հայերեն **տիկին** բառը համահունչ չէր լինի: Կամ Զ. Թումանյանին նվիրված բանաստեղծություններից մեկում Տերյանը **խնջույթ** բառի փոխարեն գործածում է բանաստեղծական մթնոլորտին համահունչ ժողովրդախոսակցական **քեֆ** բառը՝ «Այստեղ միշտ **քեֆ** ու հանդես. Կեցցե՛ «մեր Օհանեսը...» (ԱԷ, II, 96), իսկ «Քաղաքը» ստեղծագործության մեջ ոճական նմանօրինակ գործառույթով կիրառում է գրական **խնջույթ** և դիցապատմական **օրգիա** բառերը (ԱԲ, I, 262):

«Մեղուգա» բանաստեղծության մեջ Տերյանի կողմից **դրախտ** բառի փոխարեն **եղեմի** գործածությունը բնավ պատահական չէ, ընդհակառակը՝ ունի գեղագիտական որոշակի արժեք և իրականացնում է հեղինակային նպատակադրում: Սիրո վայելքից հուսախաբ քնարական հերոսն իր սիրտը գերած գեղեցկուհուն համեմատում է հունական դիցաբանության մեջ հայտնի Գորգոնյան երեք քույրերից մեկի՝ Մեղուգայի հետ: Ինչպես Մեղուգան պատժվեց՝ կամենալով գեղեցկությամբ մրցել Աթենասի հետ, այնպես էլ նույն պատժին է արժանի մեղսական փայփայանքներով օժտված գեղեցկուհին: Ավսիայտ է, որ բանաստեղծական նման մթնոլորտին ներդաշնակ է **եղեմ** և ոչ թե համագործածական **դրախտ** բառը՝ «Եվ գիրկը նրա թվաց ինձ **եղեմ**, մեղքը – սրբապան..., Փայփայում էր ինձ և հևհևում էր երկրեմ Մեղուգան...» (ԳԶ, I, 134):

Երեկո բառի՝ Տերյանի չափածոյում ունեցած հուզաարտահայտչական տարբեր նրբերանգների մասին կարելի է անվերջ խոսել: Բանաստեղծի պատկերավորման համակարգում **երեկոն** խորհրդանշում է քնարական հերոսի երագած հանգրվանը, որն իր հետ բերում է երագների ու տեսիլների մի ոլորտական աշխարհ: **Երեկոն** նաև ամեն ինչի ու ամենքի նկատմամբ ներումով ու անչարությամբ լի հոգեվիճակի խորհրդանշիչ է: Ուշագրավ են **երեկո** բառի հոմանշային տարբերակները՝ *իրիկուն, իրիկնապահ, իրիկնաժամ, իրիկնամուտ, կիսախավար, կիսամութ, վերջալույս, մթնշաղ, աղջամուղջ*: Ահա օրինակներ՝ «Կապույտ ծածկոցն իջավ ցած, – Մեղմ ու անուշ **իրիկո՛ւն**...» (ՈՂ, I, 185), «**Իրիկնաժամին, թփերն օրորող հովի պես թեթև Մի ուրու անցավ, մի գունատ աղջիկ ճերմակ շորերով...**» (ՄԱ, I, 25), «Քո շարժումները ուրվականային Ստվերապաճույճ **իրիկնապահին** Շղթայեցին ինձ օղակով անտես...» (ՄԱ, I, 73), «Ես սիրում եմ զգվող – անգույթ աչքերըդ մութ, Որպես գարնան **իրիկնամուտ**...» (ԱԲ, I, 266), «**Կիսախավարը** այնպես նայիկ է...» (ԱԷ, II, 105), «Մարգերում իջավ թովիչ **կիսամութ**...» (ՈՂ, I, 155), «Եվ **վերջալույսին** մի օր, օ, մի օր..., Բացվեինք իրար խոսքերով չնչին...» (ԱԷ, II, 42), «Ես սիրում եմ **մթնշաղը** նրբակերտ...» (ՄԱ, I, 67), «Ո՞վ է քո ոսկի ժրպիտը վառել Այս **աղջամուղջում**...» (ՈՂ, I, 199) և այլն: **Երեկո** բառի հոմանիշների ընտրության հարցում բանաստեղծը, ինչպես տեսնում ենք, նախապատվությունը տալիս է ժողովրդախոսակցական **իրիկուն** և այդ բառից բաղադրված **իրիկնաժամ, իրիկնամուտ, իրիկնապահ** բառերին:

Հոմանիշներից որևէ մեկի գերադասության խնդիրը կապված է նաև բառի՝ համատեքստում ունեցած կապակցելիության հատկանիշի, նրա՝ կոնկրետ բառային միջավայրում եզակիորեն անհրաժեշտ լինելու հանգամանքի հետ: Պետք է նկատել, որ լեզվում չկան այնպիսի բառեր, որոնք և՛ իմաստով, և՛ կիրառությամբ, և՛ արտահայտչական հնարավորություններով նույնը լինեն: Ճիշտ է ասված՝ «... աշխարհիս երեսին ոչ մի լեզվում երկու բառ չկա՝ մաթեմատիկաբար ճիշտ միևնույն նշանակությունը տվող, ա-

մենքն էլ տարբերվում են իրարից թե շատ և թե քիչ»⁴⁹¹: Ասել է թե՛ որոշ լեզվաբանների կողմից հոմանշային կարևոր սկզբունք համարվող փոխադարձ փոխարինելիության մասին խոսք լինել չի կարող: Իսկական բանաստեղծի համար լեզվում փոխարինող հոմանիշներ չպետք է լինեն: Նա պետք է փնտրի և գտնի տվյալ կապակցության մեջ անփոխարինելի բառը: Նման նրբանկատ մոտեցում է Տերյանը ցուցաբերում յուրաքանչյուր բառի ընտրության հարցում: Դիտարկենք *կապույտ և կարմիր* գունանունների հոմանշային տարբերակների դրսևորած ոճական-արտահայտչական հնարավորությունները բանաստեղծի խոսքարվեստում: Փաստ է, որ գույները հաճախ հոգեվիճակ ու տրամադրություն են արտահայտում պայմանավորելով խոսքի հուզականությունն ու արտահայտչականությունը: Տերյանի գեղարվեստական պատկերներում հաճախակի գործածական կապույտն իր տարբեր նրբերանգներով խորհրդանշում է մաքրություն, բնաշնչություն, լուսավոր ու երազային իրականություն: Բանաստեղծի չափածոյում *կապույտի* ոճական արժեքը լիովին ըմբռնելու համար կարևոր է անդրադառնալ նաև այս բառի հոմանիշներին, որոնց Տերյանը դիմել է թե՛ կրկնությունից խուսափելու, թե՛ ոճական այլ նպատակներով: Այսպես՝ *կապույտով* են հատկանշվում բանաստեղծի՝ հանգրվան դարձած երեկոն, դաշտերը, իրիկնաժամի լույսերը, բաղձալի անապատը, պաշտելի էակի աչքերը և այլն: Կապույտի գունային տարբեր նրբերանգներով բանաստեղծը կերտում է գեղեցիկ բառակապակցություններ, օրինակ՝ *երկնի մով* (ԱԲ, I, 284), *լուրթ սեր* (ԱԲ, I, 282), *լապուր ու լուրթ գարուն* (ԱԷ, II, 76), *երկնագույն, ծափի աչքեր* (ՄԱ, I, 45, Ս, II, 189): Իր բանաստեղծություններից մեկում *մուրթ* բառի փոխարեն Տերյանը գործածում է *կապույտ ծածկոց* (ՈՅ, I, 185) կապակցությունը: Ոճական յուրօրինակ արժեքով են օժտված նաև *նրբակապույտ* ու *կապուտաչյա* բառերը, ինչպես՝ «*Երկնասլաց ու թեթև, Նրբակապույտ ծածկած մեզ...*» (ԱԲ, I, 277), «*Տխուր մեռան կապուտաչյա Երասները երկնաշող...*» (ՄԱ, I, 54):

Բանաստեղծի ստեղծագործություններում նրբիմաստային ուշագրավ դրսևորումներ ունի նաև *կարմիրը*: Այն հեղափոխության գույնն է, ջերմացնելու, կիզելու հատկանիշով է օժտում իրերն ու երևույթները, ինչպես օրինակ՝ *արևածագ ալ-բոսոր* (ԱԷ, II, 122), *ալ շողեր* (ԱԷ, II, 137), *բոսոր արեգակ, ալ բոց* (ԱԲ, I, 290), *ալ արև* (ԵՆ, I, 252), *կարմիր կրակ* (ՈՇ, I, 221), *կարմիր վերջալույս* (ՄԱ, I, 37), *պուրպուր շուրթեր* (ՈՇ, I, 216) և այլն: *Կարմիրը* խորհրդանշում է նաև արյան գույնը և հոմանշային զույգեր կազմում *արյուն* բառով բաղադրված բառերի հետ («*Որբան, որբան, որբան արյուն- Վերբերվարդեր արնոտ ու բորբ...*» (ԵՆ, I, 248), «*Քեզ եմ երզում, կարմիր, արյունաբորբ Ազատության դրոշ - քեզ փա՛ռք...*» (ԱԷ, II, 124) և այլն):

Սպիտակը Տերյանի բանաստեղծական խոսքում հանդես է գալիս հոմանշային *ճերմակ* տարբերակով, ինչպես՝ «*Անկերը ճերմակ երամով անցան...*» (ՈՅ, I, 204), «*Ո՛ւմ լացն է այն, ո՛ւմ ցավոտ Երզն է ճերմակ մրրկում...*» (ԳՅ, I, 138) և այլն: Երբեմն որպես *սպիտակ* բառի հոմանիշ հանդես են գալիս նաև այլ բառեր, որոնք թեև գունանուններ չեն, բայց խոսքի ոճավորման գործում կարևոր դեր են կատարում, ինչպես օրինակ՝ «*Որբան ձյունե թիթեռ, Ձեռներ, ձեռներ բարակ...*» (ՈՇ, I, 216), «*Արծաթ ամպիկ լինեի, Յովի գար տարտղներ...*» (ԱԷ, II, 94):

Տերյանը ոչ միայն առատորեն գործածում է լեզվական հոմանիշների տարբեր, բազմապիսի միավորներ, այլև իր չափածոյում ստեղծում ու ձևավորում է հոմանշային բազմանդամ շարքեր: «*Յոմանիշների շարքը,- գրում է Ա. Սուքիասյանը,- իրենից ներկայացնում է բառերի և դարձվածաբանական միավորների պատմականորեն կազմավորված համաժամանակյա խմբավորում: Յոմանիշների շարքի մեջ մտնող բառերն ու դարձվածքներն արտահայտում են միևնույն հասկացությունը, բայց իրարից տարբերվում են կամ իմաստային նրբերանգներով, կամ ոճական կիրառությամբ, կամ էլ՝ մե-*

⁴⁹¹ **Նալբանդյան Մ.**, Յերկերի լիակատար ժողովածու 5 հատորով, հ. 3, Յերևան, 1940, էջ 213:

կով, և՛ մյուսով»¹⁰⁶: Ուշագրավ են հատկապես բանաստեղծի խոսքարվեստում հաճախակի գործածական բառերի կազմած հոմանշային շարքերը, ինչպես՝ *արև* (ՄԱ, I, 46) – *արեգակ* (ՄԱ, I, 37) – *արեգ* (ԱԷ, II, 36) – *արփի* (ԱԲ, I, 291), *առափոս* (ՌՇ, I, 229) – *արշալույս* (ՄԱ, I, 36) – *արևածագ* – *լուսարաց* (Վ, I, 209) – *լուսածագ* (ԱԷ, II, 117) – *ծեգ* (ԱԷ, II, 141) – *այգ* (ԵՆ, I, 241), *մշուշ* (ՄԱ, I, 34) – *մեգ* (ԱԷ, II, 29) – *մուժ* (ԵՆ, I, 250) – *մառախուղ* (ԱԷ, II, 30) – *շամանդաղ* (ՌՇ, I, 164), *ցանկություն* (ՄԱ, I, 85) – *երայ* (ԱԷ, II, 83) – *տենչ* (ՌՇ, II, 157) – *տենչանք* (ՄԱ, I, 68) – *հղծ* (ԱԷ, II, 140) – *անուրջ* – *ընծանք* (ԳՅ, I, 121) – *անըջանք* (ՄԱ, I, 77) – *փափագ* (ՄԱ, I, 55) – *տեսիլ* (ՄԱ, I, 36) – *ցնորք* (ԳՅ, I, 123), *թագուհի* (ՄԱ, I, 49) – *իշխանուհի* (Ս, II, 192) – *ըշխ* (ԱԷ, II, 108) – *դիցուհի* (ՄԱ, I, 49) – *պրիցուհի* (ԱԲ, I, 279), *թովիչ* (ՄԱ, I, 34) – *թովչական* (ՌՇ, I, 169) – *հնայուն* (ՌՇ, I, 185) – *հնայական* (ՌՇ, I, 187) – *դյուրիչ* (ԱԷ, II, 30) – *դյուրական* (ՄԱ, I, 71) – *մոգիչ* (ԱԷ, II, 107) – *մոգական* (ՄԱ, I, 57) – *կախարդական* (ՄԱ, I, 66), *վառել* (ԱԷ, II, 132) – *այրել* (ՄԱ, I, 66) – *կիպել* (ԱԷ, II, 49) – *բորբոքել* (ԱԷ, II, 132) – *լուսավառել* (ԳՅ, I, 119) – *հրդեհել* (ՄԱ, I, 55), *նիրհել* (ՄԱ, I, 100) – *ննջել* (ԳՅ, I, 146) – *մրափել* (ԱԷ, II, 68) և այլն: Տերյանական հոմանիշների համակարգում հաճախված են գոյականներով, որակական ածականներով, ձևի մակբայներով, ինչպես նաև բայերով կազմված հոմանշային շարքերը:

Տերյանի չափածոյի խոսքարվեստում զգալի տեղ ունեն նույնարմատ հոմանիշների գործածությունները, օրինակ՝ *մեղմ* (ՄԱ, I, 25) – *մեղմիկ* (ՄԱ, I, 43) – *մեղմորեն* (ՄԱ, I, 79) – *մեղմիվ* (ՄԱ, I, 25) – *մեղմաբար* (ՄԱ, I, 68), *լուռ* – *լռին* (ՄԱ, I, 32) – *լռիկ* (ԱԷ, II, 23), *մութ* – *մթին* (ԳՅ, I, 105) – *մթամած* (ՌՇ, I, 150), *դողդոջ* (ԳՅ, I, 142) – *դողդոջուն* (ԳՅ, I, 139), *անօգ* (ԿԴ, I, 256) – *անօգնական* (ԱԷ, II, 123), *հնայուն* (ՌՇ, I, 185) – *հնայական* (ՌՇ, I, 187), *անամոք* (ԳՅ, I, 123) – *անամոքական* (ԳՅ, I, 133) և այլն: Նույնարմատ հոմանիշների շարքում մեծ թիվ են կազմում նաև *-ույթուն/-անք*, *-ում/-ույթուն*, *-ում/-ուկք*, *-ում/-անք*, *-ել/-եղեն* հոմանիշ ածանցներով կազմված բառերը, ինչպես՝ *տխրություն* (ՄԱ, I, 77) – *տխրանք* (ՄԱ, I, 50), *բերկրություն* (ՄԱ, I, 57) – *բերկրանք* (ՄԱ, I, 75), *հիացում* (ՄԱ, I, 49) – *հիացմունք* (ՄԱ, I, 82), *արբեցում* (ՄԱ, I, 58) – *արբանք* (ՄԱ, I, 34) – *արբունք* (Ս, II, 172), *բոցե* (ՌՇ, I, 231) – *բոցեղեն* (ԱԲ, I, 290), *լուսե* (ՌՇ, I, 220) – *լուսեղեն* (ՌՇ, I, 191) և այլն: Ոճական յուրօրինակ արժեքով են օժտված նաև մեկ ընդհանուր բաղադրիչներով կազմված հոմանիշ բարդ բառերը, ինչպես՝ *տաղտկայի* (ԳՅ, I, 123) – *տաղտկահնչյուն* (ԳՅ, I, 115), *վշտակիր* (ՌՇ, I, 191) – *վշտածրար* (ԱԲ, I, 259), *հրկեպ* (ՌՇ, I, 218) – *հրակեպ* (ԱԲ, I, 277) – *բոցակեպ* (Ս, II, 165), *արյունաբորբ* (ԱԷ, II, 123) – *արնաներկ* (ԵՆ, I, 242) – *արնառուն* (Ս, II, 193) – *արյունավառ* (ԱԷ, II, 141), *վշտունայն* (ԱԷ, II, 129) – *ուռնայնաշունչ* (ՄԱ, I, 75), *հեռածավալ* (ՄԱ, I, 30) – *հեռանիստ* (ՄԱ, I, 97) և այլն: Յուրաքանչյուր դեպքում էլ գործում է ոճաբանական գործառույթը, և խոսքը հարստանում է նորանոր նրբերանգներով:

Տերյանի խոսքարվեստում միմյանցից հեռու բառերը հոմանշային արժեք են ստանում ոչ թե բառային, այլ խոսքային մակարդակում և դրանից դուրս հոմանշային հարաբերություն չեն դրսևորում: Այլ կերպ ասած՝ դրանց հոմանշությունը տվյալ դեպքում հեղինակային-անհատական է: Խոսքային (անհատական) հոմանիշներն ունեն «խիստ անհատական դրոշմ և սերտորեն կապված են հեղինակի բանաստեղծական մտածողության ու ճաշակի հետ»⁴⁹²: Այսպես օրինակ՝

Եվ այնպես *անգո՛ւյն, անմի՛տ, ապարդյո՛ւն,*

Տաղտկայի՛ և սի՛ն

Թվաց ամեն ինչ աշխարհում անհուն...

Եվ աշխարհն էր քար՝ սառն ու անխորհուրդ... (ՌՇ, I, 150)

Մեր տունը համր ու դատարկ է,

Մեր տունը որբ ու ավեր է... (ԵՆ, I, 246)

⁴⁹² Էլյան Ս. Ա., Ժամանակակից հայերենի բառային ոճաբանություն, Ե., 1989, էջ 141:

Ակնհայտ է, որ *անմիտ* ու *ապարդյուն* բառերը, անկախ կիրառությունից, խոսքից դուրս էլ ունեն իրենց հոմանշային կայուն կապերը, իսկ *անզույն* բառը, առանձին վերցրած, դրանց լեզվական հոմանիշը չէ: Այն բառաշղթայում է հոմանշային արժեք ձեռք բերել՝ բացասական իմաստային հատկանիշով համադրվելով *անմիտ* ու *ապարդյուն* հոմանիշներին: Իսկ *տաղտկալի* ու *սին, քար, սառն* ու *անխորհուրդ, համր* ու *դատարկ, որբ* ու *ավեր* բառերն իմաստով բավականին հեռու են, բայց հեղինակային նպատակադրմամբ համատեքստում հանդես են գալիս որպես հոմանիշներ:

Անհատական հոմանշությունը գեղարվեստական խոսքի պատկերավորության անփոխարինելի միջոց է, որն ընդլայնվում է հատկապես բառերի փոխաբերական գործածությունների շնորհիվ: Դիտարկենք օրինակներ.

*Ու հեռվից դյուրթում ես ու կանչում,
Լուսերե՛ս, անմարմի՛ն, անան՛ու... (ՌՅ, I, 176)*

*Չե՛կ ընդունեցիր երդում ու երկունք,
Դու արքայաբար վե՛հ ու անհպարտ... (ԵՆ, I, 251)*

Տերյանը խոսքային հոմանիշների ընտրության հարցում ելնում է այն հատկանիշից, թե որքանով է ոճական հոմանիշն իր իմաստային նրբերանգներով առավել ներդաշնակ ասելիքի ոգուն: *Լուսերես* բառի համար, երբ խոսքի առարկան պաշտելի էակն է, երազների դիցուհին, բանաստեղծը որպես հոմանիշներ ընտրում է *անմարմին* ու *անանուն* բառերը, իսկ *հե՛կ* բառին հոմանիշ՝ *անհպարտ* նորակազմությունը, որն ինքնատիպությամբ թարմություն է հաղորդում բանաստեղծական խոսքին:

Տերյանի ոճի կարևորագույն առանձնահատկություններից մեկը հոմանիշների կուտակումն է: Այդ առումով բանաստեղծը նմանվում է Գ. Նարեկացուն: Բազմակի հոմանիշները միևնույն խոսքաշարում գործածելով՝ Տերյանը համակողմանիորեն է քննաթափում բառային միավորները: Տվյալ դեպքում, քնականաբար, հոմանիշների հուզաարտահայտչական երանգավորումն ավելի ակնհայտ է, ինչպես օրինակ՝

*Ահաբեկում է և կանչում է քե՛կ,
Չե՛ծկտում է խե՛ղճ, անպո՛ր ու տկա՛ր...
Երգում է քամին, լալիս է նորից,
Անհույս ու անվերջ մղկտում է նա... (ԳՅ, I, 132)*

*... Ես ընկած էի անպոր ու մոլոր
Եվ հավետ մենակ և անդարձ մենակ,
Անանուն, անհայտ, անծանոթ* հեռվում... (ՌՅ, I, 150)

Միևնույն խոսքաշարում համատեղ գործածված *լալ-հեծկտալ-մղկտալ, խեղճ-անպոր-տկար, անանուն-անհայտ-անծանոթ* հոմանշային շարքերը ոճական նպատակադրում ունեն: Դրանց միջոցով բանաստեղծը ոճական հագեցվածություն, բազմազանություն է հաղորդում խոսքին, գեղարվեստական պատկերը ստանում է աստիճանական զարգացում, իսկ բանաստեղծության բովանդակությունը ամբողջանում է հոմանիշների իմաստային նրբերանգներով:

Անհիմն է այն կարծիքը, թե հոմանիշների համատեղ գործածությունը վնասում է խոսքի սեղմությանը: Ինչպես նշում է Ս. Մելքոնյանը, «...դա չի կարող վերաբերել գեղարվեստական լեզվին, ուր հոմանիշների այդպիսի օգտագործումով ընդգծվում է նախադասության առանձնապես կարևոր նշանակություն ունեցող հասկացությունը, դա ներկայացվում է իմաստային անհրաժեշտ նրբերանգներով, ավելի է զորեղանում խոսքի արտահայտչականությունը»⁴⁹³: Բացի դրանից՝ հոմանիշները միշտ ունենում են ինչ-որ չհամընկնող տարրեր՝ նրբիմաստային, արտահայտչական, ոճական առումներով: Այդ իսկ պատճառով «հոմանշային կրկնությունը հնարավորություն է ընձեռում առավել ամ-

⁴⁹³ Մելքոնյան Ս., Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Ե., 1984, էջ 77:

բողջական և բազմակողմանիորեն բացահայտելու և նկարագրելու առարկան»⁴⁹⁴:

Տերյանն իր ինքնատիպ խոսքարվեստով հարստացրել ու ընդլայնել է հայ գրական լեզվի բառապաշարի և՛ իմաստային, և՛ ոճական ընդգրկումը: Յուրաքանչյուր բառ տերյանական լեզվում հանդես է գալիս ներգործման մեծ ուժով, ոճական ինքնատիպ արժեքով: Ասում են՝ մեկ բառով անհնար է մտնել բանաստեղծության մթնոլորտը, ինչպես մեկ հնչյունը դեռ երաժշտություն չէ, բայց Տերյանի չափածոն ժխտում է նշված դրույթը: Համագործածական, նորաստեղծ, նույնիսկ ժողովրդախոսակցական, բարբառային ու օտար բառերը բանաստեղծի խոսքարվեստում հոգեվիճակի, տրամադրության, հույզի և ապրումի արտացոլման յուրօրինակ միջոցներն են:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԲ – Այլ բանաստեղծություններ

ՄԱ – Մթնշաղի անուրջներ

ԱԷ – Անտիպ էջեր

ՈՅ – Ոսկի հեքիաթ

ԳՅ – Գիշեր և հուշեր

ՈՇ – Ոսկե շղթա

ԵՆ – Երկիր Նաիրի

Ս – Սևագրություններ

ԿԴ – Կատվի դրախտ

Վ – Վերադարձ

THE STYLISTIC PECULIARITIES OF SYNONYMS IN VAHAN TERYAN'S SPEECH ART

MERI HOVHANNISYAN

*Yerevan State University, Institute for Armenian Studies, Researcher,
The Centre of Pedagogy and Education Development, Lecturer, Assistant, PhD,
Yerevan, Republic of Armenia*

The article examines and analyzes the synonymous use of words belonging to different layers of the vocabulary. The study of synonyms belonging to common and passive vocabulary, allows revealing the richness and diversity of the language of V. Teryan. As components of the synonymous word, Teryan for conceptual purposes, in order to achieve the emotional expressiveness and certain metric characteristics, also uses colloquial, dialect words and even borrowings and barbarisms.

The poet uses synonyms in all the possible ways. Single root, mixed root synonyms, linguistic and speech synonyms belonging to different layers of vocabulary, allow avoiding repetitions and diversifying the described subjects and phenomena, the shown emotions and experiences.

Teryan uses as synonyms all the parts of speech that may have figurative meanings. The poet's poetic speech is characterized by the use of synonyms with non-negative affixes. The analysis of synonyms used in Teryan's poetic speech reveals the peculiarities of the language of the poet's poetic works, since the synonyms are associated primarily with the art of choosing words. This art belongs to the number of factors that ensure the originality of Teryan's language, and is expressed in different semantic and stylistic uses of words. The use of synonyms determines the informative richness and diversity of the Teryan's word.

Keywords: *Poetry Language, Speech Art, Synonyms, Socabulary, Harmony, Speech Harmony, Melodiousness.*

⁴⁹⁴ Арнольд И. В., *Стилистика современного английского языка*, Л., 1973, с. 129.

СТИЛИСТИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ СИНОНИМОВ В ПОЭЗИИ ВААНА ТЕРЯНА

МЕРИ ОВАННИСЯН

*научный сотрудник Института арменоведческих исследований, преподаватель,
ассистент Центра педагогики и развития образования Ереванского
государственного университета, кандидат филологических наук,
г.Ереван, Республика Армения*

В статье изучается и анализируется синонимичное использование слов, принадлежащих к разным слоям лексики. Исследование синонимов, принадлежащих к общеупотребительной и пассивной лексике, позволяет выявить богатство и многообразие языка В. Теряна. В качестве компонентов синонимичного слова Терьян в понятийных целях, в целях достижения эмоциональной выразительности и определенных метрических характеристик использует также разговорные, диалектные слова и даже заимствования и варваризмы.

Поэт использует синонимы всеми возможными способами. Однокоренные, разнокоренные синонимы, языковые и речевые синонимы, принадлежащие к разным слоям лексики, позволяют избежать повторов и разносторонне отразить описываемые предметы и явления, проявляемые эмоции и переживания.

Терьян использует в качестве синонимов все части речи, которые могут иметь переносные значения. Его поэтической речи поэта свойственно применение синонимов с неотрицательными аффиксами. Анализ синонимов, применяемых в поэтической речи Теряна, выявляет особенности языка поэтических произведений поэта, поскольку синонимы связаны, в первую очередь, с искусством выбора слов. Это искусство принадлежит к числу факторов, обеспечивающих самобытность языка Теряна, и выражается в разных смысловых и стилистических применениях слов. Использование синонимов обуславливает содержательное богатство и многообразие терьяновского слова.

Ключевые слова: поэтический язык, искусство речи, синоним, лексика, гармония слова, гармония, музыкальность.

ԿԱՊԱՆ-ԳՈՐԻՍ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԽՈՍՎԱԾՔՆԵՐԻ ԲԱՅԱԿԱՆ ՀԱՍՏԱԿԱՐԳԵՐԻ ՀԱՍԵՄԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ*

ՀՏԴ.81.282:811.19

ՍՎԵՏԼԱՆԱ ՄԱՆՈՒԶԱՐՅԱՆ

*ԱԵԳՄՍ անդամ, Գորիսի պետական համալսարանի հումանիտար և հասարակագիտական մասնագիտությունների ֆակուլտետի դեկանի ժամանակավոր պաշտոնակատար, հայոց լեզվի և գրականության ամբիոնի դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու, ասիստենտ, ք.Գորիս, Հայաստանի Հանրապետություն
smanucharyan81@mail.ru*

Կապան-Գորիս տարածաշրջանը՝ իբրև բարբառային գոտի, հատկանշվում է (ԼԻ)Ս և Ում ճյուղերին պատկանող խոսվածքներով: Այդ տարածաշրջանի բարբառային միավորների բայական համակարգերը քննել ենք համաժամանակյա կտրվածքում՝ համեմատական մեթոդի կիրառմամբ ներկայացնելով դրանց յուրահատկությունները: Ուսումնասիրության ենթակա խոսվածքներն ունեն մի շարք առանձնահատկություններ՝ ըստ խոնարհման հարացույցների ներկա ու անցյալ ժամանակաձևերի դրսևորումների: Կապան-Գորիս տարածաշրջանի բարբառային միավորները, ըստ անցյալ կատարյալի ժամանակափմաստի արտահայտման, կարելի է բաժանել երկու խմբի՝ համադրական կազմությամբ ու վերլուծական. վերջին խմբին դասվող խոսվածքներում բացակայում են ըղձական ու ենթադրական եղանակների անցյալի առանձին ժամանակաձևերը: Խնդրո առարկա խոսվածքները տարբերակվում են նաև ըստ հարկադրական եղանակի կազմության, արգելական հրամայականի արտահայտման, երկրորդական բաղադրյալ ժամանակաձևերի գործածության, ինչպես և անկանոն բայերի եղանակաժամանակային բարբառային տարբերակներով: Կապանի ԼԻՍ ճյուղի և Գորիսի խոսվածքների բայական համակարգերում գործուն են բոլոր եղանակային ժամանակաձևերը, իսկ Կապանի Ում ճյուղի մի շարք խոսվածքներում դրանք կիրառվում են իմաստային տարածքությամբ: Բարբառային նյութի քննությամբ նկատելի է, որ արդի ժամանակավիուում Կապան-Գորիս տարածաշրջանի խոսվածքները կարելի է դասակարգել ըստ բայական համակարգերի այն յուրահատկությունների, որոնք դիտարկել ենք իբրև խոսվածքային հատկանիշ:

Բանալի բառեր՝ Կապան-Գորիս տարածաշրջանի բարբառային միավորներ, համեմատական քննություն, խոսվածքների բայական համակարգեր, զուգադրական մեթոդ, խոսվածքային հատկանիշ, Ում և (ԼԻ)Ս ճյուղեր, բարբառային գոտի:

Կապան-Գորիս տարածաշրջանը՝ իբրև բարբառային գոտի, ըստ ձևաբանական միահատկանիշ դասակարգման, հատկանշվում է Ում և (ԼԻ)Ս ճյուղերին պատկանող խոսվածքներով: Այդ տարածաշրջանի բարբառային միավորների բայական համակարգերը քննել ենք համաժամանակյա հայեցակետով՝ համեմատական ու ներքին զուգադրական մեթոդների կիրառմամբ ներկայացնելով դրանց յուրահատկությունները: Հիշյալ տարածքային տարբերակների բայի անդեմ ու եղանակաժամանակային կազմությունները իմաստակառուցվածքային տեսանկյունից ունեն որոշակի ընդհանրություններ ու առանձնահատկություններ:

Դերբայներից, ըստ ձևափմաստային դրսևորման, ուսումնասիրվող տարածքային տարբերակներում ընդհանրական են անորոշն ու ենթակայականը: Անորոշը կազմվում

* Հոդվածը ներկայացվել է 30.04.2019թ., գրախոսվել՝ 15.05.2019թ., տպագրության ընդունվել՝ 17.06.2019թ.:

Ե **-ել/-ի/ի և -ա/ւ** վերջավորություններով, օր.՝ *պըտահել(Կապ.)/պըղահիլ(Գոր.),*
կյնրթ ի և (Կապ.)/կարթելիլ(Գոր.), *քյն շ ի և (Կապ.)/քաշելիլ(Գոր.),*

խօսալ(Կապ.Գոր.)// խոսալ (Շնհ.), ըրվալ(Կապ.)/ըրելալ// յըրօվալ
(Գոր.)//իրելվալ(Վշ.,Տեղ)// յուրօվալ (Շնհ.,խոտ)// իւրօվալ (Յլծ.) և այլն: Ենթակայական
դերբայի **-օ/օ** դ-ով կազմությունները գործածվում են այդ տարածաշրջանի բոլոր
խոսվածքներում, օր.՝ *կըխօղ, հ ի մ ւ ն ճ օ ղ (Կապ.)/հըմանչօղ (Գոր.),* *քյն ճ օ ղ*
(Կապ.)/քանջօղ (Գոր.), *ըսօղ (Կապ.,Գոր.)// լ ի ս օ ղ (Յլծ.),* իսկ **-ու/ու** դ-ով

տարբերակները (օր.՝ *վահուղ, լ ի ս ու ղ, խումուղ*⁴⁹⁵), արդի ժամանակավիճակում

կիրարկում են միայն Շինուհայրի խոսվածքի տարեց բարբառախոսները: Ինչպես
Սյունիք-Արցախի բարբառներում, այնպես և քննվող խոսվածքներում վաղակատար ու
հարակատար դերբայներն ունեն համապատասխանաբար **-ա/ւ** և **-ա/-ւ** վերջավորություններ,
օր.՝ *կարթալ/կըղթացալ(Գոր.)// կյնրթալ (Կապ.),*

չուրացալ(Գոր.)//չըրացալ (Կապ.), *կ ի ր ւ ն օ* և այլն: Խնդրո առարկա խոսվածքները,

ըստ վերոնշյալ դերբայների կազմության, չեն տարբերակվում, սակայն դերբայներից
յուրաքանչյուրը, տվյալ տարածքային միավորներում ունենալով գործառնության
առանձնահատկություններ, խոսվածքային հատկանիշ է ձևավորում, որը
կներկայացնենք ստորև:

Եթե **-ու/ու** -ով անկատարն ընդհանրական է Կապան-Գորիս բարբառային
գոտու համար (օր.՝ *կյնրթում (Կապ., Արծ., Ագ.,Գ., Գղ., Դ.Բ., Աղ., Տ.,*
Սյ.)//կարթում(Գոր., Տղ, Բհ., Վշ., Տթ.),սիրում(Կապ.,Արծ.,Լշ.,Գ.,Դ.Բ., Աղ., Տ.,Խ.)//
ս ի ր ւ ն (Յլծ.,Կրծ.,Շնհ.)// ս ու ղ ւ ն (Գոր.,Վշ.,Տեղ,Խնծ.,խոտ), պերում (Շ.,Ծ.) //

պ ի ր ւ ն (Գոր.,Վշ.,Շնհ.,Բհ.)// պ ու ղ ւ ն (Կապ.,Արծ.,Ագ., Գ., Շշ.,Տթ.,Յլծ., խոտ), *ըսում*
(Կապ.,Արծ.,Ագ.,Դ.Բ.,Գոր.,Վշ.)//իսում(Տթ.,Շնհ., խոտ), լ ի ս ու ն (Յլծ.), ապա **-իս**-ով կամ

-ս-ով վերջավորվող բայածներն առկա են միայն Կապանի տարածաշրջանի **(ԼԻ)Ս**
ճյուղի խոսվածքներում (Եղվարդ, Ներքին Յանդ, Սրաշեն, Կաղնուտ), օր.՝ *ըսիս, քիս,*
կյնս, կեսս և այլն: **Ում** ճյուղի հիշյալ խոսվածքներում **գալ, տալ** բայերի **կյնմ, տամ**
տարբերակներում անկատարի **-ում**-ից հնչյունափոխության հետևանքով, կարծում
ենք, մտնում է **-մ**-ն⁴⁹⁶: Բարբառային այդ միավորներում ևս **-իս** վերջավորությամբ
դերբայը կիրառում են որպես անկատար երկրորդ կամ համակատար, օր.՝ *կյնլ -*
կյնլիս, հընդրել-հընդրելիս և այլն:

Խնդրո առարկա տարածքային տարբերակներում արտահայտության պլանում
կառուցվածքային տեսակետից տարբերվում է նաև ապակատար (ապառնի) դերբայը:
Միայն Եղվարդ, Կաղնուտ, Ներքին Յանդ և Սրաշեն գյուղերի խոսվածքներում այն

⁴⁹⁵ Տե՛ս **Սարգսյան Ա.**, Գորիսի բարբառը, Ե., 1975, էջ 185:
⁴⁹⁶ Տե՛ս նաև **Գևորգյան Գ.Գ.**, Յայերենի բարբառների եղանակաժամանակային
համակարգերի տարածագործառնական բնութագիրը, Ե., 2013, էջ 66-68:

բաղադրված է **-ական// -անքն** վերջնամասնիկից, ինչպես Ղարաբաղում և Հաղորւթում (օր.՝ *մուտընական, մըն ական*), իսկ մյուսներում **-ու-ն**-ից, օր.՝ *պիրելու (Գոր., Տղ., Վշ.)// պ ի թիլ իլ (Շնհ., խոտ), պիրուլ (Շ., Շշ., Ծ.)// պիրոլ (Գոր., Վշ., Արծ.), օւելու (Գոր., Աղ., Դ.Բ., Տ.) // օզոլ (Կապ., Ագ., Արծ., Գ.), թ ի ն անլ իլ (Գոր., Վշ., Զ., Հ., խոտ, Շնհ.), քիւելու (Աղ., Դ.Բ., Տ., Սվ., Տթ.), թոնլ (Կապ., Ագ., Արծ., Գղ., Նշ., Ծ.)* և այլն: Նկատելի է, որ Կապան-Գորիս տարածաշրջանի **Ում** ճյուղի խոսվածքների բայական համակարգերի յուրահատկություններից է ապակատարի հնչատարբերակների ամկայությունը, որով բարբառախոսները հեշտությամբ զանազանում են միմյանց, քանի որ որոշ խոսվածքների բայաձևերում վերջավորության ձայնավորը ազդել է արմատականի վրա, և դրանք ենթարկվել են շրթնային ու քմային ներդաշնակության: Ըստ Ա.Ղարիբյանի՝ **-ական** վերջավորությունը, ավելանալով անորոշ դերբային, պետք է արտահայտի այդ դերբայի սեռական հոլովի գաղափար⁴⁹⁷:

Տարածքային տարբերակների համար *խոսվածքային հատկանիշ*⁴⁹⁸ կարելի է համարել նաև **-ա/ան վ-**ով վերջավորվող ընթացակցական դերբայի և դրանով հարադրված ժամանակաձևերի գործածումը, օր.՝ *տըսնելավ, ք ի ն ի անլ ըս* և

այլն: Այն, իբրև անորոշ դերբայի գործիական հոլովաձև, կիրառական է քննվող բոլոր խոսվածքներում, սակայն իբրև ձևաբայ՝ առկա է ինչպես Ղարաբաղի ու Հաղորւթի բարբառներում, այնպես էլ Կապանի **ԼԻՍ** ճյուղի բարբառային միավորներում: Այդ կազմություններն ընդունել են որպես անորոշի գործիական ձևեր՝ համարելով, որ դրանք «...զուտ որոշ բայերի բայական-բառային իմաստով պայմանավորվող մասնավոր դեպքեր են»⁴⁹⁹: Կարծում ենք, որ այն ճիշտ է միայն Գորիսի խոսվածքների տարբերակման համար, քանի որ դրանցում ընթացակցական դերբայից հարադրված ժամանակաձևերի կազմումը, իսկապես, սահմանափակ է: Նշենք նաև, որ ընթացակցական ներկա ու անցյալ ժամանակաձևերը, արտահայտելով գործողության տևականության և ընթացքի մեջ լինելու գաղափար, ինչպես Ղարաբաղի բարբառում, այնպես և Եղվարդի, Կաղնուտի, Ներքին Հանդի ու Սրաշենի խոսվածքներում կարելի է ընդունել որպես շարունակական ներկա (օր.՝ *մըտնելավ ըն*) և շարունակական անցյալ (*մըտնելավ ին*)⁵⁰⁰:

Ներկա ժամանակաձևերը խոսվածքներում ձևավորվում են միանման քերականական կաղապարով՝ **ձևաբայ+օժանդակ բայի ներկայի դիմաթվային խոնարհիչներ: Եմ** օժանդակ բայի ներկա ժամանակի **ա** դիմաթվանիշ ցուցիչը բնորոշ է քննվող տարածաշրջանի բարբառային միավորներին ընդհանրապես, իսկ մյուս դիմաթվային խոնարհիչները տեղայնացված բնույթ ունեն. **ե>է** հնչյունափոխությամբ տարբերակները (**եմ, էս, ա//ան, է(ն)ք, էք, էն**) գործածվում են Գորիսի խոսվածքներում, Կապանի Դավիթ Բեկում, Տանձավերում, Աղվանիում, **ե>ի** անցմամբ փոփոխակները (**իմ, իս, ա//ան, իք, իք, ին**⁵⁰¹)՝ Շիկահողում, Շիչկերտում, Ծավում, Ուժանիսում,

⁴⁹⁷ Տե՛ս **Ղարիբյան Ա.**, Հայ բարբառագիտություն, Հնչյունաբանություն և ձևաբանություն, Ե., 1953, էջ 192:
⁴⁹⁸ Հասկացության մասին տե՛ս **Կատվայան Վ.**, Հայ բարբառագիտության հարցեր, Ե., 2014, էջ 120:
⁴⁹⁹ **Մարգարյան Ա.**, նշվ. աշխ., էջ 180:
⁵⁰⁰ Այդ մասին տե՛ս **Դավթյան Վ.**, Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, Ե., 1966, էջ 149, **Ղարիբյան Ա.**, նշվ. աշխ., էջ 182:
⁵⁰¹ **ե>ի**-ի հնչյունափոխության մասին տե՛ս նաև **Ղարիբյան Ա.**, նշվ. աշխ., էջ 169:

ճակատենում, Վաչագանում, Օխտարում, Ագարակում, իսկ **ե>ը**-ով տարբերակները (**ըմ, ըս, ա//ւն, ըք, ըք, ըն**)՝ Կապանի մյուս խոսվածքներում: Նկատելի է, որ օժանդակ բայի հոգնակի առաջին ու երկրորդ դեմքերի խոնարհիչները՝ **իք//ըք** «ենք» և **իք// ըք** «էք», ստեղծելով քերականական համանունություն⁵⁰², տարբերակվում են միայն խոսքաշղթայում: Հետազոտության առարկա բարբառային բոլոր միավորներում վերոնշյալ լեզվական կաղապարով ձևավորվում են ներկայի ժամանակաձևերը, այսպես՝ **անկատար՝ քիս ըս(եղ., Կղ., Ն.Հ., Ս.), տեսնում էմ (Գոր.,Վշ., Տթ., Բշ., Բջ, Հրթ., Կնծ., Դ.Բ., Տ., Աղ.), լ ի ս ո՞ւն մ** *էն(Հլծ.), մընում իմ // ըմ (Կասպ.,Սյ.,Ուժ.,Ծ.,Վ.,Գ.,Գղ...),*

ապակատար՝ կիլական ըմ (եղ.,Կղ.,Ն.Հ., Ս.), ճ ի ր ի լ ի՞ն (Գոր.,Տղ.,Վշ.,Հլծ.,Շնհ.,Բշ.)//ճ

ի ր ի լ ի՞ն (Աղ.,Դ.Բ.,Տ.) // *վ ւ ն, վաղակատար՝ կերալ էք, ծընդրացալ ա, հարակատար՝*

քեցած ին//ըն (Կասպ., Ագ., Արծ., Գղ.,եղ., Կղ., Ն.Հ., Ս.), ընթացակցական՝պրծնելալ *էն(Գոր., Տթ, Կղ., Հլ, Շնհ., Բշ.), լրսելալ ըք (եղ., Կղ., Ն.Հ., Ս.)* և այլն: Նկատելի է, որ քննվող խոսվածքների մեծ մասում օժանդակ բայից առաջ ապառնի ձևաբայի **ու** վերջավորությունը «...շրթնայնանում և վերածվում է «վ»-ի...»⁵⁰³, իսկ Գորիսի խոսվածքներում հանդիպում ենք նաև հավելական յ-ի՝ ձայնավորային հորանջը փակելու համար: Ինչպես որոշ բարբառներում, այնպես հետազոտության առարկա մի խումբ խոսվածքներում բացակայում են էական բայի անցյալի խոնարհիչները, ուստի դրանցում անցյալ ժամանակաձևերն արտահայտում են վերլուծական եղանակով կամ օժանդակ բայի բաղադրյալ ձևերով⁵⁰⁴, **լւն(լ)** ժամանականիշ մասնիկի

զուգորդությամբ: Ըստ անցյալ ժամանակի իմաստային տիրույթի՝ Կապան-Գորիս տարածաշրջանի բարբառային միավորները կարելի է պայմանականորեն բաժանել երկու խմբի: Առաջինին դասվում են այն խոսվածքները, որոնցում անցյալի ժամանակաձևերը ձևավորում են դերբայով և օժանդակ բայի անցյալի դիմաթվային ցուցիչներով: Այդ խմբին են պատկանում Գորիսի խոսվածքները, Կապանի Դավիթ Բեկ, Աղվանի ու Տանձավեր գյուղերի խոսվածքները, որոնցում էական բայն ունի **ի, իր, էր, ի(ն)ք, իք, ին** հնչյունափոխված ձևերը, նաև **(ԼԻ)Ս** ճյուղի խոսվածքները, որոնցում առկա են նույն ձևերը, բացառությամբ եզակի երրորդ դեմքի՝ **ա/ւն ր** և հոգնակի առաջին ու երկրորդ դիմաձևերի, որոնցում **ք**-ն նաև քմայնանում է՝ **իք/ թ**, օր.՝ *խօսում ի// իր// էր// ի(ն)ք// իք//ին (Գոր., Տղ.,Բշ.,Վշ., Դ.Բ.,Աղ.,Տ.), նըստիս ի//իր//ար//իք// իք / թ //ին (եղ.,Կղ.,Ն.Հ.,Ս.):* Այդ խոսվածքներում անցյալի վերլուծական մյուս ժամանակաձևերը կազմության նույն սկզբունքն ունեն, այսպես՝ **վաղակատար՝ տուվալ ի (Գոր.,Վշ., Բեջ...), լ ի ս ու՞ն լ իր (Հլծ.), ասալ ար, փիղ ու՞ն ց ու՞ն լ իք/ թ** (եղ., Կղ., Ն.Հ., Ս.),

ապակատար՝ նըստըլական իր (եղ., Կղ., Ն.Հ., Ս.), նըստելու յ/վին (Գոր., Տղ, Բշ., Վշ., Սվ., Հլծ., Դ.Բ., Աղ., Տ.), ընթացակցական՝ քինելալ ին (եղ.,Կղ.,Ն.Հ.,Ս.): Երկրորդ խմբի խոսվածքներում անցյալի ժամանակաձևերը կազմվում են ներկա ժամանակաձևերի և **լւն(լ)** բառ-մասնիկի հարադրությամբ լեզվական կառուցատիպերով⁵⁰⁵, ընդ որում դիմաթվային գաղափարը փոխանցվում է օժանդակ բայի ներկայի խոնարհաձևերի միջոցով, ինչպես՝ *յէ ի՞ն մ ըմ լւն(լ), կօնում (Շ.,Ծ.)/վէնում (Ագ.,Արծ.,Գ.,Կպ.) ըս լւն(լ),*

⁵⁰² Օժանդակ բայի քերականական համանունության մասին տե՛ս **Գևորգյան Գ.**, նշվ. աշխ., էջ 78:

⁵⁰³ **Ղարիբյան Ա.**, նշվ. աշխ., էջ 190:

⁵⁰⁴ Այդ մասին տե՛ս **Ղարիբյան Ա.**, նշվ. աշխ., էջ 178, **Գևորգյան Գ. Գ.**, նշվ. աշխ., էջ 77:

⁵⁰⁵ Տե՛ս նաև **Գևորգյան Գ. Գ.**, նշվ. աշխ., էջ 79:

ըսած ըն ի ն (լ), ըշխդելու վըռք ի ն (լ) և այլն: Սահմանական եղանակի անցյալի ժամանակաձևերի նման դրսևորումները բնորոշ են Կապանի տարածաշրջանի բարբառային միավորների մեծ մասին, որոնցում երբեմն օժանդակ բայի եզակի երրորդ դեմքի ա խոնարհիչն ընկնում է⁵⁰⁶, օր.՝ *օտոււմ ի ն (լ), պերած ի ն (լ), ըրվալու ի ն (լ)* և այլն: Հավելենք, որ Շիկահողի, Ծավի ու Շիշկերտի ենթախոսվածքներում միայն տարեց բարբառակիրներն անցյալ անկատար ժամանակաձևն արտահայտում են հետևյալ քերականական կաղապարով՝ **-ու վերջավորությամբ ձևաբայ+օժանդակ բայի ներկայի խոնարհիչներ+ ի ն (լ)**, օր.՝ *ըրստիս ի ն (լ)* և այլն: Կարծում ենք՝ լեզվական այդ իրողությունը հիշյալ խոսվածքներում պայմանավորված է Մեղրու բարբառի ազդեցությամբ, որում ևս այդ ժամանակաձևը նույն կերպն ունի⁵⁰⁷: Ինչպես Գորիսի խոսվածքներում, Եղվարդում, Կաղնուտում, Ներքին Հանդում ու Սրաշենում ևս նմանատիպ կաղապարային կառույցները՝ **ձևաբայ+օժանդակ բայի ներկայի դիմաթվային խոնարհիչներ+ ի ն (լ)**, ընկալվում են նախ՝ որպես բաղադրյալ ժամանակաձևեր, հետո՝ միայն պարզ, քանի որ և՛ **(ԼԻ)Ս** ճյուղի այս խոսվածքներում, և՛ Գորիսի բարբառային միավորներում գործուն են օժանդակ բայի անցյալի խոնարհաձևերը, ինչպես և **ի ն ել** բայի **ի ն ել/ի ն ել** տարբերակը և պատմականորեն փոփոխություն կրած **ի ն (լ)** (<լեալ) բայաձևը, որոնք հարադրվում են նաև որոշ դերբայների՝ ձևավորելով երկրորդական բաղադրյալ ժամանակներ, օր.՝ *տըսիս ի ն (լ), մընասս ըմ ի ն (լ), քիս ըս ի ն (լ), տ ի ն ի ս ի ն (լ), կյնս ըք ի ն (լ), կյնս ի ն (լ)*

(Եղ., Կղ., Ն.Հ.,Ս.), *ի ս ել ի ս եմ ի ն (լ), քիս ն ի ս ն ի ն ըմ* և այլն: Հավելենք նաև, որ «մնայիս ըս ի ն (լ)» տիպի կազմությունները Ա.Ղարիբյանը Սրաշեն գյուղի խոսվածքի համար ընդունել է որպես անցյալ անկատար⁵⁰⁸, սակայն ներկայումս տվյալ բարբառային միավորում նմանօրինակ քերականական կառույցը համապատասխանում է ոչ թե սահմանականի հիմնական, այլ երկրորդական բաղադրյալ ժամանակաձևին: Համաժամանակյա հայեցակետով **(ԼԻ)Ս** ճյուղի տարածքային այդ տարբերակներում էական բայի անցյալի խոնարհիչներով հարադրված ժամանակաձևերը գործառվում են միայն բարբառախոս տարեցների շրջանում, իսկ երիտասարդ բարբառակիրները **Ում** ճյուղի խոսվածքների ներգործությամբ կիրառում են **-ում**-ով ներկա ու անցյալ անկատար՝ «մոռացության մատնելով ներկայի ու անցյալ անկատարի սեփական կազմությունները»⁵⁰⁹:

Կապան-Գորիս տարածաշրջանի բարբառային միավորների համար խոսվածքային հատկանիշ կարելի է դիտարկել վաղակատար ու հարակատար դերբայներով ժամանակաձևերի, նաև անցյալ կատարյալի ձևախմաստային դրսևորումները: Եթե բացառենք բայերի հնչատարբերակների առկայությունը, ապա կառուցվածքային տեսակետից ներկա վաղակատարը նույնական է քննության առարկա տարածքային բոլոր միավորներում: Սակայն վերոնշյալ երկրորդ խմբի խոսվածքներում այն ունի անցյալ կատարյալի իմաստ: Կապանի տարածաշրջանի **Ում** ճյուղի այդ խոսվածքներում բացակայում է անցյալ կատարյալի համադրական ձևը, այսինքն՝ անցյալ կատարյալի իմաստը արտահայտվում է վերլուծական եղանակով՝ վաղակատարով և օժանդակ բայի դիմաթվային խոնարհիչներով, օր.՝ **յեկալ ըմ** «եկա»,

⁵⁰⁶ Տե՛ս Սիբայեյան Ժ., նշվ. աշխ., էջ 50:
⁵⁰⁷ Տե՛ս Աղայան Է., Մեղրու բարբառը, Ե., 1954, էջ 200:
⁵⁰⁸ Ղարիբյան Ա., նշվ. աշխ., էջ 172:
⁵⁰⁹ Գևորգյան Գ., նշվ. աշխ., էջ 203:

ըրվացալ ա «երևաց» և այլն: Կարծում ենք, որ լեզվական այս իրողության դրսևորումը պայմանավորված է Մեղրու, Կարճևանի, Ագուլիսի կամ Ղարադաղի բարբառների ազդեցությամբ, որոնցում ևս անցյալ կատարյալի ձևեր չկան, բայց իմաստն առկա է, ինչն էլ արտահայտվում է ներկա վաղակատարով, այնինչ վաղակատարի իմաստը բացակայում է⁵¹⁰: Մեր կողմից պայմանականորեն առաջին խմբին դասվող բարբառային միավորներում՝ *Դավիթ Բեկի, Աղվանու, Տանձավերի, Կապանի ԼԻՍ* ճյուղի, նաև *Գորիսի խոսվածքներում, կիրառվում են և՛ ներկա վաղակատար, և՛ անցյալ կատարյալի համադրական ձև, այսպես՝ յեկը//յեկու «եկավ», յեկալ ա «եկել է», իրեվացիք «երևացիք», իրովացալ (Շնհ.)// նըրօվացյալ (Յլծ.)// իրեվացալ եք «երևացել եք» (Գոր., Տղ, Վշ., Բշ.), ըրեվացիր, ըրեվացալ էս (Դ.Բ.,Աղ., Տ.), ըրվաց, ըրվացալ ըս (Եղ.,Կղ.,Ն. Յ., Ս.)* և այլն: Նշենք նաև, որ Եղվարդի, Կաղնուտի,Ներքին Յանդի ու Սրաշենի խոսվածքներում ներկայումս զգալի է Կապանի տարածաշրջանի **Ում** ճյուղի բարբառային միավորների ազդեցությունը. վաղակատար ներկան կիրառում են նաև անցյալ կատարյալի իմաստով, այսինքն՝ դրանցում շարահյուսական մակարդակում առկա է քերականական բազմիմաստություն, իսկ անցյալ կատարյալի համադրական ձևը հանդիպում ենք միայն տարեց բարբառակիրների խոսքում: Այդ խմբի խոսվածքներում, ի տարբերություն երկրորդ խմբի տարածքային տարբերակների, գործառում են վաղակատար անցյալի ձևեր, օր.՝ *ք ի նացյալ//*

քացյալ ի (Գոր., Բեջ., Տղ, Խնծ., Վշ., Բշ.), *քեցալ ին*(Եղ., Կղ.,Ն. Յ., Ս.) և այլն:

Ի տարբերություն արդի գրական հայերենի, մի խումբ բարբառների, նաև Գորիսի խոսվածքների, որոնցում հարակատարով ժամանակաձևեր կազմում են միայն կրավորական ու չեզոք սեռի՝ գործողություն կատարողի վիճակ մատնանշող բայերով, Կապան քաղաքի, Ագարակի, Արծվանիկի, Գեղվա, Սյունիքի, Վաչագանի, Ուժանիսի և այլ խոսվածքներում գրեթե բոլոր բայերն ունեն հարակատարով ժամանակաձևեր, այսպես՝ *հըղրած ըս, ի փ ա՛ ծ ա՛, տըսած ըմ լ ա՛* և այլն: Յարկ է հավելել, որ, ինչպես

Ագուլիսի, Մեղրու, Ղարադաղի, Կարճևանի, Կաթավաբերդի և այլ բարբառային միավորներում, վերոբերյալ խոսվածքներում ևս հարակատարով կազմված հիմնական ժամանակաձևերն արտահայտում են և՛ հարակատարի, և՛ վաղակատարի իմաստ: Այս դեպքում կրկին քերականական մեկ ձևն ունի իմաստային տարարժեքություն, օր.՝

հըմբարած ա «հաշվել է, հաշված է», ասած ըք լ ա՛(լ) «ասել էիք, ասած էիք»: Իսկ Կապանի տարածաշրջանի այն խոսվածքներում, որոնք ունեն օժանդակ բայի անցյալի խոնարհիչներ, զանազանվում են վաղակատար ու հարակատար ժամանակաձևերը, օր.՝ *կ ի ը ա՛ լ ար, կի ը ա՛ ծ ար* (Եղ.,Կղ.,Ն. Յ., Ս.), *նըստալ իք, նըստած իք* (Դ.Բ.,Աղ., Տ.)

և այլն: Եթե Գորիսի խոսվածքներում հարակատարով կառույցները սահմանափակ կիրարկություններ ունեն, ապա Կապանի տարածքային տարբերակներում գործառական տեսակետից հարակատարով հարադրված հիմնական ու երկրորդական ժամանակաձևերը հաճախական կիրառություն ունեն, ինչպես Ղարաբաղի ու Պոլսի բարբառներում:

Կապան-Գորիս տարածաշրջանի խոսվածքների բայական համակարգերում ըղձական ու ենթադրական եղանակների ապառնիի կազմավորումը նման է արդի գրական հայերենին՝ խոսվածքներին հատուկ եղանակաժամանականիշ ցուցիչներով, օր.՝ *ըղձ. ապ.՝ պիղըրյա՛նն ա՛ ք* (Կապ.,Ագ., Արծ., Նշ...), *ին զի* (Գոր., Վշ., Բեջ., Բշ., Յրժ., Խնծ.), *մընաք, ենթ. ապ.՝ կըտընսամ, կըփընես* և այլն: Ինչպես Ղարաբաղի

⁵¹⁰ Տե՛ս **Ղարիբյան Ա.**, նշվ. աշխ., էջ 200:

բարբառում, այնպես և հետազոտության առարկա բարբառային միավորներում քերականական բազմիմաստությունն ունեն ասացական բայերի ենթադրական ապառնին (օր.՝ *կասես(Գոր.)/կասիմ(Կապ.)*), երբ բարբառախոսն այդ ժամանակաձևը կիրառում է անցյալ կատարյալի փոխարեն⁵¹¹, օր.՝ *Լըիա վըր տըսալ ըմ յէկալ ա, կասիմ գի ըմվան մըիէնգ ա* «Յենց որ տեսա, եկել է, ասացի՝ պահը հիմա է» և այլն: Գորիսի

տարածքային տարբերակների, նաև Դավիթ Բեկի, Աղվանու, Տանձավերի, Եղվարդի, Կաղնուտի, Ներքին Յանդի ու Սրաշենի բայական համակարգերում առկա են այս եղանակների անցյալ ապառնի ժամանակաձևեր, օր.՝ *մընիք(Գոր.), կուտրատին, կիկի ըրիր, կըմուտանար //մտ կի կանր* և այլն: Սակայն Կապանի

տարածաշրջանի բարբառային այն միավորները, որոնցում օժանդակ բայի անցյալի խոնարհման ձևերը բացակայում են, չունեն ըղձական, ենթադրական ու հարկադրական եղանակների անցյալի առանձին կազմություններ: Ըղձական ու ենթադրական եղանակների անցյալի իմաստը արտահայտվում է սահմանական եղանակի անցյալ ապակատար ժամանակաձևի միջոցով, այսպես՝ **փըռելու վըըն լան(Լ)** նշանակում է «*քռնելու էին, բռնեն, կբռնեն*»: Բարբառային օրինակից նկատելի է, որ քերականական միևնույն կառույցը բազմիմաստություն ունի՝ համապատասխանելով երեք եղանակաժամանակաձևի, ինչը տարբերակվում է միայն խոսքաշղթայում, այսպես՝ **թան վըր ըւրան լուելու վըս լան(Լ), հալբաթ տի չըս լան(Լ) ընելու** «Եթե նրան լսեիր, գուցե այդպես չէիր անի», **Տըսնաս քըզ ճ ինանչուլիլ վյան լան(Լ), վըր շեն հըմը տըսնալու վյա լան(Լ)**, «Արդյոք քեզ կճանաչեր, եթե գյուղում տեսներ», **Պա տա հիբ ըս լան(Լ) ըսելու** «Իսկ դա ե՞րբ էիր ասելու» և այլն: Իսկ Գորիսի խոսվածքներում և դրանց ազդեցությունը կրող Դավիթ Բեկ, Աղվանի, Տանձավեր գյուղերի խոսակցական տարբերակներում այս ժամանակաձևը մենիմաստ է և գործառվում է իբրև երկրորդական բաղադրյալ ժամանակ:

Կապան-Գորիս խոսվածքների բայական համակարգերի համեմատական բնության համար, կարծում ենք, էական են նաև հարկադրական եղանակի, ժխտական խոնարհման և երկրորդական բաղադրյալ ժամանակաձևերի արտահայտման ընդհանրություններն ու յուրահատկությունները: Եթե խնդրո առարկա **Ում** ճյուղի բարբառային միավորներում ներկայումս գործուն են ըղձականի ապառնիից և **պիտի** եղանականիչ բառ-մասնիկի **պի/ըտի(Կապ.)//պի/ետի (Գոր.)** հնչատարբերակներով կառույցները, ապա **ԼԻՍ** ճյուղի Եղվարդի, Կաղնուտի, Ներքին Յանդի ու Սրաշենի խոսվածքներում **բի/էդի** փոփոխակով ժամանակաձևերը, օր.՝ *պի/ըտի հըսնէ (Կապ.), պի/ետի հըսնի (Գոր.)//բի/էդի հըսնի (Եղ., Կղ., Ն. Յ., Ս.)* և այլն: Այս վերջին տարածքային տարբերակներում տարեց բարբառախոսները կիրառում են հիմնականում **բեղմա** եղանակիչով հարադրություններ, օր.՝ *բեղմա լըսիս, բեղմա լըսիր* և այլն, ինչպես և անցյալի կազմության համար առկա են անորոշ դերբայով և օժանդակ բայի բաղադրյալ ձևերով քերականական կառույցներ, օր.՝ *բի/էդի լըսիլ ա լան(Լ)* և այլն⁵¹²: Յետազոտության տարածաշրջանի միայն Գորիսի խոսվածքներին են բնորոշ հարկադրական եղանակի՝ անորոշ դերբայով և **պիտեմ//պետեմ** եղանակավորիչ բայով կազմությունները, ընդ որում՝ այս դեպքում խոնարհվում է եղանակավորիչ բայը, օր.՝ *ասլ.՝ պըղահիլ պիտեմ, անց.՝ պըղահիլ պետիք* և այլն: Կապանի տարածաշրջանի այն

⁵¹¹ Տե՛ս Դավթյան Կ., նշվ. աշխ., էջ 221:
⁵¹² Այդ մասին տե՛ս նաև Սարգսյան Ա. Յու., Շաղախի ենթաբարբառը Յադրութի ենթաբարբառի միջավայրում, Ստեփանակերտ, 2009, էջ 56:

խոսվածքներում, որոնցում բացակայում են ըղձականի ու ենթադրականի անցյալի առանձին ժամանակաձևերը, հարկադրականի անցյալն արտահայտում են **պի/ըտի** եղանակիչի և սահմանականի անցյալ ապակատարով, օր.՝ **պի/ըտի առնելու վ/ըմ լ'ն(լ)** և այլն, իսկ մյուս բարբառային միավորներում, նաև Գորիսի խոսվածքներում համաժամանակյա կտրվածքով երիտասարդ բարբառակիրները կիրառում են եղանակիչի և ըղձականի անցյալի հարադրությամբ քերականական կաղապարներ, օր.՝ *պետի հրեվար (Գոր., Տղ), պըտի ասիր(Դ.Բ.,Աղ., Տ.), բի/եղի լըտիք/ ը* (Եղ., Կղ., Ն. Յ., Ս.) և այլն:

Քննվող տարածաշրջանի բարբառային միավորների համար խոսվածքային հատկանիշ է հրամայական եղանակի բայաձևերի **-ա/ն ք** դիմաթվանիշ թեթույթով⁵¹³ կազմությունները, որոնք առկա են **ա/ն** խոնարհման պարզ և **-ան** սոսկածանց ունեցող որոշ բայերի հարացույցներում, օր.՝ *հըսկա՛ցաք, յըտա՛ցաք, տ ի մ'ն' ցն' ը*

և այլն: Նմանատիպ ձևերը բնորոշ են Գորիսի Կորնիձոր⁵¹⁴, Խնձորեսկ, Զարաշեն⁵¹⁵, Տեղ, Յալիձոր, Յարժիս, Յարթաշեն խոսվածքներին, որոնցում **-ա/ն ք** վերջավորությունը, կարծում ենք, համաբանությամբ տարածվել է նաև **ե** խոնարհման պարզ և **ն** կամ **չ** սոսկածանցավոր որոշ բայերի վրա, օր.՝ *լ ի' սն' ը, քն' ցն' ը,*

մըտա՛ք, թըռա՛ք և այլն: Իսկ Գորիսի ու Կապանի մյուս խոսվածքներում հիշյալ ժամանակաձևն ունի **-եք** հոգնակիանիշ վերջավորություն, այսպես՝ *լըտե՛ք, մըտե՛ք* և այլն:

Յետազոտության առարկա խոսվածքների բայական համակարգերի ժխտական խոնարհումը հատկանշվում է մասնիկավորմամբ՝ **չ**-ով, նաև **մի** և **ոչ** բառ-մասնիկների փոփոխակներով: Ժխտական **չ** մասնիկը տարածված է ինչպես հայերենի բարբառներում, այնպես էլ Կապան-Գորիս տարածաշրջանի խոսվածքներում: Այդ մասնիկով ժխտում են կատարում սահմանականի գլխավոր բաղադրյալ ժամանակների, ենթադրականի ժամանակաձևերի դեպքում, ընդ որում ժխտական մասնիկը դրվում է դերբային հետադաս օժանդակ բայի վրա, օր.՝ *ներկա՛ տեսնում չես (Գոր., Տղ, Զշ., Կշ., Աղ., Դ.Բ., Տ.), տըսնում չըս(Կապ.,Ագ., Արծ., Նշ....), տըսնիս չըս (Եղ.,Կղ.,Ս.,Ն.Յ.), անցյալ անկատ.՝ ասում չի(Գոր., Կապ.)//ըսիս չի (Եղ., Կղ., Ս.,Ն.Յ.), վաղակատար՝ մըծացալ չեն//չին//չըն, անցյալ վաղ. մըծացալ չիք(Գոր., Տղ, Զշ., Կշ., Աղ., Դ.Բ.,Տ.)// չիք/ ը (Եղ.,Կղ.,Ն. Յ., Ս.), հար.-վաղ.՝ խըմած ա, անց. հար. վաղ.՝ խըմած ա չ'ն(լ)(Կապ.,Ագ., Արծ., Գ., Կ., Ծ.) // խըմած չի (Եղ.,Կղ.,Ն. Յ., Ս.), ապակատ.՝ ըսելու չի/ըսըլական (Եղ.,Կղ.,Ն. Յ., Ս.) չի, անց. ապակատ.՝ ուտելու չիր(Գոր., Տղ), օտելու չըս լ'ն(լ)(Կապ.,Ագ., Արծ., Գ., Կ., Ծ.), ուտըլական չիր(Եղ.,Կղ.,Ն. Յ., Ս.)* և այլն: Ինչպես Նշեցինք, **չ** մասնիկը մասնակցում է նաև ենթադրական (պայմանական) եղանակի ապառնի և անցյալ ապառնի ձևերի ժխտականի դրսևորմանը, որը տեղի է ունենում անորոշ դերբայի հարադրությամբ, իսկ **չ**-ն ավելանում է դերբայից հետո դրվող էական բային, օր.՝ *ապ.՝ կիրիլ չըս//չես, անց. ապ.՝ կիրիլ չըս լ'ն(լ)(Կապ.)//կիրիլ չիր (Գոր., Դ.Բ.,Եղ.,Կղ.,Ն.Յ.,Ս.):* Քննվող տարածքային տարբերակների բայական համակարգերի մյուս եղանակաժամանակային ձևերի, բացառությամբ հրամայականի, ժխտումը կատարում են **վեչ** (Գոր. խոս.-ներ,Աղ.,Դ.Բ.,Տ.)//**վը չ** (Եղ., Կղ.,Ս.,Ն.Յ.)// **վե/ը չ**

(Արծ., Կպ., Ծ., Խտ., Ծ., Ագ.,Խղ.,Շշ.,Լ.,ՈւԺ.) հետադաս բառ-մասնիկով: Նշենք նաև, որ ի

⁵¹³ Դիմաթվանիշ թեթույթ կապակցությունը տե՛ս Գևորգյան Գ., նշվ. աշխ., էջ 117:
⁵¹⁴ Տե՛ս Գևորգյան Գ., նշվ. աշխ., էջ 145:
⁵¹⁵ Տե՛ս Մարգարյան Ա., նշվ. աշխ., էջ 196:

տարբերություն մյուս բարբառային միավորների՝ Գորիսի խոսվածքներում անցյալ կատարյալի և ըղծական եղանակի ժխտական կառույցներն ունեն դրսևորման երկու կերպ՝ վերլուծական՝ վեչ-ի հարադրությամբ, և համադրական՝ ժամանակաձևին նախադաս չ-ով, ընդ որում չ-ով կազմությունը բացատրվում է արդի գրական հայերենի ազդեցությամբ, այսպես՝ *պըտմեցիր վեչ// չըպըտմեցիր, ըղծ. ապ.՝ հըսնեմ վեչ// չըհըսնեմ, անց. ապ.՝ հըսնիր վեչ/չըհըսնիր* և այլն⁵¹⁶: Աղվանի, Դավիթ Բեկ, Տանձավեր, Եղվարդ, Կաղնուտ, Ներքին Հանդ և Սրաշեն գյուղերի բարբառախոսները անցյալ կատարյալի համադրական ձևի ժխտումը կատարում են միայն հետադաս *վեչ(Աղ.,Դ.Բ.,Տ.)//վ ը չ*

(Եղ.,Կղ.,Ս.,Ն.Հ.)-ով, օր.՝ *նըստեց վեչ//վ ը չ, մըտար վեչ//վ ը չ* և այլն: Յուրաքանչյուր

խոսվածքում ըղծական ու հարկադրական եղանակաժամանակաձևերի ժխտումը արտահայտվում է դրական ձևերի և **ոչ**-ի փոփոխակների հարադրությամբ, այսպես՝ *ըղծ. ապ.՝ քինիմ վեչ//վ է / ը չ //վ ը չ, պենամ վեչ//վ է / ը չ//վ ը չ, ըղծ. անց. ապ.՝*

կաղնելու/պենալու չըմ չիււ(լ) (Կապ.), կաղնի վեչ//վ ը չ, ք / քիւ վեչ (Գոր. խոս.- ներ)//քինի վ ը չ (Դ.Բ.,Աղ.,Տ.,Եղ.,Կղ.,Ս.,Ն.Հ.), հարկ. ապ.՝ պի/ըտի քինի/եմ վեչ//վ է / ը չ,

բե/իղի քինիմ վ ը չ(Եղ.,Կղ.,Ս.,Ն.Հ.), պի/ըտի հըվատ/դամ վեչ//վ է / ը չ(Գոր., Կապ.),

բե/իղի տըսնամ վ ը չ (Եղ.,Կղ.,Ս.,Ն.Հ.), հարկ. անց. ապ.՝ պի/ըտի հըվըտ/դալու չըմ

չիււ(լ) (Արծ.,Շ.,Կապ.,Ծ.,Ագ., Խդ., Շշ., Լ., Ուժ.), բե/իղի տըսնի վ ը չ (Եղ.,Կղ.,Ս.,Ն.Հ.):

Գորիսի խոսվածքներում հարկադրականի ժխտական խոնարհման հարացույցը նման է դրականին՝ դրսևորվելով նաև եղանակավորիչ **պիտիմ** բայով կառույցի ժխտմամբ, օր.՝ *ապ.՝ պի/ետի տեննամ վեչ, տեննալ պիտեմ վեչ, անց. ապ.՝ պի/ետի տըսնի վեչ, տեննալ պըտիք վեչ* և այլն: Տարածքային այդ տարբերակներում հարկադրականի ժխտման հարացույցներում հանդես է գալիս նախադաս չ-ն, որի գործառումը, կարծում ենք, կրկին պայմանավորված է արդի գրական լեզվի համընդհանրության միտմամբ, օր.՝ *ապ.՝ պի/ետի չըխօսի, խօսիլ չըպետի, անց. ապ.՝ պի/ետի չըխօսիր, խօսիլ չըպետեր* և այլն: Նկատելի է, որ եթե Կապանի տարածաշրջանի խոսվածքներից յուրաքանչյուրում հարկադրական եղանակի ժամանակաձևերի ժխտումն արտահայտվում է մեկ տարբերակով, ապա Գորիսի խոսվածքներում չորս, այսպես՝ գրական «**չպիտի կանգնեմ**» ձևի դիմաց Կապան-Գորիս բարբառային միավորներում առկա են համապատասխանաբար հետևյալ տարբերակները՝ *պի/ըտի կաղնեմ վեչ// վ է / ը չ*

(Արծ., Շ., Կապ.,Ծ., Ագ., Խդ., Շշ., Լ., Ուժ., Դ.Բ., Աղ., Տ.), *բե/իղի կաղնեմ վ ը չ*

(Եղ.,Կղ.,Ս.,Ն.Հ.), Գորիսի խոսվածքներում *պի/ետի կաղնեմ վեչ, կաղնիլ պիտեմ վեչ, պի/ետի չըկաղնեմ, կաղնիլ չըպետի*: Կարծում ենք՝ չ-ով ձևերի առկայությունը Գորիսի տարածքային տարբերակներում պայմանավորված է Արարատյան բարբառի ներգործությամբ:

⁵¹⁶ Այդ մասին տե՛ս նաև Մարգարյան Ա., նշվ. աշխ, էջ 212:
315

Քննության ենթակա բարբառային գոտու լեզվական միավորների համար խոսվածքային հատկանիշ կարելի է ընդունել նաև արգելական հրամայականի դրսևորումը: Կապան-Գորիս տարածաշրջանի բարբառային միավորներում արգելական հրամայականը եզակի թվում ունենում է ժխտական **մի, մա, մե** (<մի) բառ-մասնիկները, իսկ հոգնակիում՝ **մաք, միք, մեք**, որոնք ևս հետադասվում են բայաձևին:

Գորիսի խոսվածքներում և դրանց ազդեցությունն ունեցող խոսվածքներում (Աղ., Դ.Բ., Տ.), նաև՝ Քաջարանում առկա են անհնչյունափոխ **մի, միք** բառ-մասնիկները, ինչպես՝ *կանչի՛ մի-կանչի՛ միք* և այլն: Կապանի **Ում** ճյուղի խոսվածքներում ընդհանրական են **մա, մաք** մասնիկները, օր.՝ *փրթալէ՛ մա-փրթալէ՛ մաք*, սակայն ճափի և Շիկահող խոսվածքներում գործածական են նաև դրանց քմային տարբերակները՝ *մա՛, մա՛ք*, այսպես՝ *պի ըցրաննա՛ մա-պի ըցրաննա՛*

մա՛ք և այլն. **մի**-ի այս հնչատարբերակների առկայությունը բացատրելի է Մեղրու բարբառի ազդեցությամբ⁵¹⁷, այլ ոչ թե այլ լեզուների: Իսկ (**ԼԻ**)Ս ճյուղի լեզվական մնացորդները պահպանած վերոնշյալ բարբառային միավորներում կիրառվում են **մե, մեք** բառ-մասնիկները, ինչպես՝ *հըսէ՛ մե, խօսա՛ մեք* և այլն: Նկատելի է, որ արգելական մասնիկը շեշտ չի կրում, սակայն որոշ կառույցներում, երբ կորցնում է իր ձայնավոր հնչյունը և միանում բառարմատին, կարող է տրամաբանական շեշտ ստանալ, ինչպես՝ *տի մա՛րա/մա՛րեք «այդպես մի՛ արա/արեք», տի մա՛սե/մա՛սեք «այդպես մի՛ ասա/ասացեք»*: Ի տարբերություն արգելականի այս կազմություններին՝ Գորիսի տարածքային տարբերակներում առկա են նաև անորոշ դերբայով ու հետադաս **մի**-ով քերականական կառույցներ, որոնցում «եզակի թվում անորոշի լ-ն դրափոխությամբ անցել է արգելականին, իսկ վերջինիս մ-ն՝ նրա տեղը. հոգնակի թվում էլ մի կողմից եզակի ձևերի նմանողությամբ, մյուս կողմից արգելականի (**միք**-ի) մ-ի առնմանությամբ անորոշի լ-ն ևս դարձել է մ»⁵¹⁸, օր.՝ *նըստի՛լ մի>նըստո՛ւմ իլ, նըստի՛լ միք>նըստո՛ւմ միք, լիցիցնի՛լ մի>լիցիցնո՛ւմ իլ* և այլն: Անորոշ դերբայի և **մի**-ի տարբերակների հարադրությամբ արգելականի ձևերը հատուկ են Ղարաբաղի բարբառին⁵¹⁹: Գորիսի խոսվածքներում ժխտականի այս կառույցներում ևս տրամաբանական շեշտի տեղափոխությամբ ձայնավորասկիզբ բային նախորդելիս **մի**-ի ձայնավորը սղվում է, օր.՝ *տրիէնց մճանիլ, ճո՛ւր մճօփիլ* և այլն: **Մի**-ի ձայնավորի սղում է առկա նաև Ղարաբաղի և Հաղրուօթի բարբառային միավորներում⁵²⁰: Խոսվածքային առանձնահատկություն է նաև այն, որ Գորիսի տարածքային տարբերակների բայական համակարգերի ժխտական խոնարհման հարացույցում համադրական եղանակաժամանակաձևերից անցյալ կատարյալը և ըզձականի ժամանակաձևերը գործառվում են և՛ հարադրությամբ, և՛ չ-ի համադրմամբ:

Եթե երկրորդական բաղադրյալ ժամանակաձևերը Գորիսի խոսվածքներում սահմանափակ դրսևորումներ ունեն, ապա Կապանի տարածաշրջանի խոսվածքները հատկանշվում են դրանց՝ առավել հաճախադեպ կիրարկություններով, ինչով վերջիններս նման են Ղարաբաղի ու Հաղրուօթի բարբառային միավորներին⁵²¹: Կապան-Գորիս բարբառային գոտու խոսվածքներում երկրորդական բաղադրյալ ժամանակները կազմավորվում են անկատար, ապառնի, հարակատար դերբայների և **ինել** (<ինել)/**իլել** (Գոր. խոս.-ներ)/**(ի)նիլ** (Կապ.) բայի խոնարհաձևերի հարադրությամբ. իբրև այդպիսիք Գորիսում առկա են հիմնականում **լ՛նլ, ն՛րլ մ,**

⁵¹⁷ Տե՛ս Աղայան Է., նշվ. աշխ., էջ 199:

⁵¹⁸ Մարգարյան Ա., նշվ. աշխ., էջ 214:

⁵¹⁹ Այդ մասին տե՛ս Դավթյան Կ., նշվ. աշխ., էջ 183:

⁵²⁰ Տե՛ս նաև Դավթյան Կ., նշվ. աշխ., էջ 184, Սարգսյան Ա. Յու., նշվ. աշխ., 2009, էջ 59:

⁵²¹ Մանրամասն տե՛ս Դավթյան Կ., նշվ. աշխ., էջ 195-197, Պողոսյան Ա. Մ., Հաղրուօթի բարբառ, Ե., 1965, էջ 194-203:

Կապանում **լ'Ալ**, **նՌւ մ**, **լ'Ած**, **նիս**: Չայտնի է, որ երկրորդական բաղադրյալ ժամանակները, հարաբերվելով գլխավոր ժամանակներին, «...կատարվող, կատարված, կատարելի կերպերի համապատասխան տևական ընթացային գործողություն կամ եղելություն...»⁵²² են արտահայտում ունենալով իմաստային այնպիսի երանգ, որն «...ընդունված է անվանել *շարունակականություն*»⁵²³: Ըստ Ա. Ղարիբյանի՝ բայի շարունակական ձևը ցույց է տալիս գործողության շարունակական, տևական կամ ընթացքի մեջ լինելը⁵²⁴: Ինչպես Չաղրուօթի, այնպես և քննվող տարածաշրջանի միայն **ԼԻՍ** ճյուղի բարբառային միավորներում են ընթացակցական դերբայից կազմավորվում շարունակական ներկա ու անցյալ ժամանակաձևեր, օր.՝ **ներկա՝ լըսէլավ ըմ չ'Ալ**, **անցյալ՝ լըսէլավ ի չ'Ալ**// **լըսէլավ ի նիս** և այլն, ընդ որում նկատելի է, որ քերականական մեկ իմաստն արտահայտվում է երկու բաղադրյալ կազմությամբ: Ի տարբերություն Կապանի տարածքային մի շարք տարբերակների բայական համակարգերի՝ Գորիսի խոսվածքներում **(հ)լ'Ալ** -ի և **-ու/Ռւ մ** վերջավորությամբ անկատար, ապառնի, հարակատար դերբայների հարադրությամբ քերականական կաղապարները (օր.՝ **տեսնում են լ'Ա(լ)**, **տեսնալու վա լ'Ա(լ)**, **տեսած էք լ'Ա(լ) ...**) արտահայտում են երկրորդական բաղադրյալ ժամանակների իմաստներ: Իսկ Կապանի այն խոսվածքներում, որոնցում բացակայում են օժանդակ բայի անցյալի դիմաթվային ցուցիչներով հարադրված հիմնական եղանակաժամանակային ձևերը, ինչպես իրավացիորեն նշում է Ժ.Միքայելյանը, «...բաղադրյալ երկրորդական ժամանակները, առաջնալով գլխավորներին զուգահեռ, ստեղծում են կերպաժամանակային նոր իմաստներ...»⁵²⁵ և փոխարինում գլխավորներին: Եթե Կապանի տարածաշրջանի բարբառային այս միավորների բայական համակարգերում **(հ)նիլ**-ի խոնարհաձևերով և **ոււմ**-ով անկատարով կառույցները ներկայացնում են հետևյալ պատկերը. **ներկա՝ լըսում ա ԳՌւմ**, **անց. անկատ.՝ լըսում ա չ'Ալ ԳՌւմ**, **ըղծ ապ.՝ լըսում նի, ենթ. ապ.՝ լըսում կի/ընի, հարկ. ապ.՝ լըսում պը/խոի նի**, ապա Գորիսի խոսվածքներում **-ոււմ**-ով անկատարը զուգորդվում է միայն **(հ)լ'Ալ** -ին՝ ձևավորելով վաղակատար ու անցյալ վաղակատար երկրորդական բաղադրյալ ժամանակներ⁵²⁶, օր.՝ **քանդում ես (հ)լ'Ալ**, **քանդում իր (հ)լ'Ալ** և այլն: Ինչպես Սյունիք-Արցախի բարբառային գոտու լեզվական միավորներում, այնպես և քննվող բոլոր խոսվածքներում **-իս/ս**-ով դերբայով և **լինել** բայի խոնարհաձևերի բարբառային տարբերակների քերականական կառույցներով արտահայտում են զրեթե բոլոր եղանակների, բացառությամբ հրամայականի, երկրորդական բաղադրյալ ժամանակներ:

Իս-ով անկատարով, **-ական** վերջավորությամբ ապակատարով և **լ'Ալ** կամ **նիս** հարադրությամբ, նաև այդ երկու բառ-մասնիկների զուգորդությամբ որոշ կազմություններ բնորոշ են միայն **ԼԻՍ** ճյուղի խոսվածքներին: Այդօրինակ լեզվական իրողություն է անցյալ հարակատարի բաղադրյալ ձևը, որով այս բարբառային միավորները նմանվում են Չաղրուօթի բարբառին:

Իս-ով անկատարի հետ նկատելի են զուգաձևություններ, ինչպես՝ **ներկա՝ հըսնէլիս էմ ի ԳՌւմ** // **ի չ'Ալ (Գոր.)**, **հըսնէլիս ըմ ԳՌւմ** // **լ'Ալ (Կապ.)**, **հըսնիս ըմ նիս** //

⁵²² Մարգարյան Ա., Չայոց լեզվի քերականություն, Ձևաբանություն, Ե., 2004, էջ 457:

⁵²³ Միքայելյան Ժ., Բայի երկրորդական ժամանակները Ղարաբաղի բարբառում, Չայոց լեզվի պատմության հարցեր, Միջազգային հայերենագիտական ութերորդ գիտաժողովի գեկուցումներ, Ստեփանակերտ, 2008, էջ 52:

⁵²⁴ Ղարիբյան Ա., նշվ. աշխ., էջ 181:

⁵²⁵ Միքայելյան Ժ., նշվ. աշխ., էջ 52:

⁵²⁶ Տե՛ս նաև Մարգարյան Ա., նշվ. աշխ., 1975, էջ 223:

լիակ (Եղ., Կղ., Ն.Յ., Ս.), **անց. անկատ.**՝ հրսնէլիս ի **ԻՄԻԼԸ** //ի **լիակ** (Գոր.), հրսնէլիս ըմ **լիակ** **ԻՄԻԼԸ** (Կապ.), հրսնիս ի **լիակ** (Ն իս) //հրսնիս ըմ **լիակ** նիս (Եղ., Կղ., Ն.Յ., Ս.), **ապառնի**՝ հրսնէլիս էմ **ԻՄԻԼԸ** //ի **լիակ** (Գոր.), հրսնէլիս ըմ **ԻՄԻԼԸ** (Կապ.), հրսնիս ըմ **ԻՄԻԼԸ** (Եղ., Կղ., Ն.Յ., Ս.), **անց. ապ.**՝ հրսնէլիս ի **ԻՄԻԼԸ** (Գոր.), հրսնէլիս ըմ **լիակ** **ԻՄԻԼԸ** (Կապ.), հրսնիս ի **ԻՄԻԼԸ** (Եղ., Կղ., Ն.Յ., Ս.), **վաղ.**՝ հրսնէլիս էմ **ի լիակ** (Գոր.), հրսնէլիս ըմ **լիակ** (Կապ.), հրսնիս ըմ **լիակ** (Եղ., Կղ., Ն.Յ., Ս.), **անց. վաղ.**՝ հրսնէլիս ի **ի լիակ** (Գոր.), հրսնիս ի **լիակ** (Եղ., Կղ., Ն.Յ., Ս.), **հար.**՝ հրսնէլիս ըմ **լիակ** (Կապ.), հրսնիս ըմ **լիակ** (Եղ., Կղ., Ն.Յ., Ս.), **անց. հար.**՝ հրսնիս ի **լիակ** //հրսնիս ըմ **լիակ** (Եղ., Կղ., Ն.Յ., Ս.), **անց. կատ.**՝ հրսնէլիս **ի լիակ** (Գոր.), հրսնիս **լիակ** (Եղ., Կղ., Ն.Յ., Ս.), **ըղծ. ապ.**՝ հրսնէլիս **ի նէմ** (Գոր.), հրսնէլիս նիմ (**ԻՄԻԼԸ**) (Կապ.), հրսնիս **ի նիմ** (**լիակ**) //հրսնիս **ի նիմ** նիս (Եղ., Կղ., Ն.Յ., Ս.), **ըղծ. անց. ապ.**՝ հրսնէլիս **ի նի** (Գոր.), հրսնիլիս **ի նի** (Տթ.), հրսնէլիս ըմ **ԻՄԻԼԸ** **լիակ** //հրսնէլիս նիմ **լիակ** (Կապ.), **խըսիս** **ի նի** (**լիակ**) (Եղ., Կղ., Ն.Յ., Ս.), **ենթ. ապ.**՝ հրսնէլիս **կի նէմ** (Գոր.), հրսնէլիս **կի նիմ** (**ԻՄԻԼԸ**) (Կապ.), հրսնիս **կի նիմ** (**լիակ**) //հրսնիս **կի նիմ** նիս (Եղ., Կղ., Ն.Յ., Ս.), **ենթ. անց. ապ.**՝ հրսնէլիս **կի նի** (Գոր.), հրսնէլիս **կի նիմ** (Կապ.), հրսնիս **կի նի** (նիս) //հրսնիս **կի նի** **լիակ** (Եղ., Կղ., Ն.Յ., Ս.), **հարկ. ապ.**՝ հրսնէլիս **պէտի** **ի նէմ** (Գոր.), հրսնէլիս **պը/իտի** **նիմ** (Կապ.), հրսնիս **բիղիմ** **ի նիս** //հրսնիս **բիղիմ** **լիակ** (Եղ., Կղ., Ն.Յ., Ս.), **հարկ. անց. ապ.**՝ հրսնէլիս **պէտի** **ի նի** (Գոր.), հրսնէլիս **պը/իտի** **նիմ** **լիակ** (Կապ.), հրսնիս **բիղի** **ի նիս** // **խըսիս** **բիղի** **լիակ** նիս (Եղ., Կղ., Ն.Յ., Ս.) և **այլն**: Բարբառային նյութի դիտարկումից ակներև է, որ Գորիսի խոսվածքներում բացակայում են հարակատար և անցյալ հարակատար երկրորդական բաղադրյալ ժամանակաձևերը՝ **իս**-ով դերբայի և **լիակ**-ի հարադրմամբ, իսկ Կապանի այն խոսվածքներում, որոնցում կան օժանդակ բայի միայն ներկայի խոնարհիչներ, բացակայում են անցյալ վաղակատարը և անցյալ կատարյալը: Վերոնշյալ օրինակներից նկատելի է նաև, որ Կապանի տարածաշրջանի **ՌԻՄ** ճյուղի խոսվածքներում սահմանականի անցյալի ապառնին և ըղծականի նույն ժամանակաձևն իրարից տարբերվում են միայն **ԻՄԻԼԸ** և **լիակ** բառ-մասնիկների շարադասությամբ:

Ապառնի դերբայով երկրորդական բաղադրյալ ժամանակները ևս զուգաձևություններ ունեն, այսպես՝ **սահմ. ապառնի**՝ հրսնէլիս **վըմ** **ԻՄԻԼԸ** (Կապ.), հրսնլական ըմ **լիակ** (նիս) // հրսնի ըմ **լիակ** (Եղ., Կղ., Ն.Յ., Ս.), **անց. ապ.**՝ հրսնէլիս **վըմ** **լիակ** **ԻՄԻԼԸ** (Կապ.), հրսնլական ի **լիակ** // հրսնի ի **լիակ** (Եղ., Կղ., Ն.Յ., Ս.), **ըղծ. ապ.**՝ հրսնէլիս **ի նէմ** (Գոր.), հրսնէլիս **նիմ** (**ԻՄԻԼԸ**) (Կապ.), հրսնլական **նիմ** (Եղ., Կղ., Ն.Յ., Ս.), **ըղծ. անց. ապ.**՝ հրսնէլիս **ի նի** (Գոր.), հրսնէլիս **վըմ** **ԻՄԻԼԸ** **լիակ**, հրսնլական **ի նի** (Եղ., Կղ., Ն.Յ., Ս.), **ենթ. ապ.**՝ հրսնէլիս **կի նէմ** (Գոր.), հրսնէլիս **կի նիմ** (Կապ.), հրսնլական **կի նիմ** (Եղ., Կղ., Ն.Յ., Ս.), **ենթ. անց. ապ.**՝ հրսնէլիս **կի նի** (Գոր.), հրսնէլիս **կի նիմ** **լիակ** (Կապ.), հրսնլական **կի նի** (Եղ., Կղ., Ն.Յ., Ս.), **հարկ. ապ.**՝ հրսնէլիս **պէտի** **ի նէմ** (Գոր.), հրսնէլիս **պը/իտի** **նիմ** (Կապ.), հրսնլական **բեղի** **նիմ** (Եղ., Կղ., Ն.Յ., Ս.), **հարկ. անց. ապ.**՝ հրսնէլիս **պէտի** **ի նի** (Գոր.), հրսնէլիս **պը/իտի** **նիմ** **լիակ** (Կապ.), հրսնլական **բեղի** **ի նի** (Եղ., Կղ., Ն.Յ., Ս.) և այլն:

Ի տարբերություն Գորիսի խոսվածքների՝ Կապանի տարածաշրջանի խոսվածքները, ինչպես նշեցինք, հատկանշվում են հարակատար դերբայով բաղադրյալ կազմությունների կիրառական հաճախականությամբ, քանի որ դրանցում հարակատար դերբայի և **ի նի**-ի, երբեմն էլ **կամ** պակասավոր բայի խոնարհաձևերի հարադրությամբ երկրորդական բաղադրյալ ժամանակներ են առկա գրեթե բոլոր

բայերի եղանակային ձևերից, այսպես՝ **ներկա՝** հրսած ըմ **ՄԻՆԸ**, **անց. անկատ.**՝ հրսած ըմ **ՄԻՆԸ չիլ**, **հար.**՝ հրսած ըմ **չի՛ծ** (Կապ.)//հրսած ըմ **չիլ**, հրսած ըմ **նիս** (**չիլ**)(Եղ., Կղ., Ն.Յ., Ս.), **անց. հար.**՝ հրսած ըմ **չի՛ծ չիլ**(Կապ.)// հրսած ի **չիլ**(Եղ., Կղ., Ն.Յ., Ս.), **սպառնի՝** խօսած//խրսեցած ըմ **ՄՕՂԻԼ**, **անց. սպ.**՝ խօսած//խրսեցած ըմ **ՄՕՂԻԼ չիլ**//**չի՛ծ**, **ըղծ. սպ.**՝ խօսած// խրսեցած **նիմ**, **ըղծ անց. սպ.**՝ խօսած// խրսեցած **նիմ չիլ**//**չի՛ծ**, **ենթ. սպ.**՝ խօսած//խրսեցած **կինիմ**, **ենթ. անց. սպ.**՝ խօսած //խրսեցած **կինիմ չիլ**//**չի՛ծ**, **հարկ. սպ.**՝ պը/իտի խօսած//խրսեցած **նիմ**, **հարկ. անց. սպ.**՝ խօսած//խրսեցած **պը/իտի նիմ չիլ**//**չի՛ծ**, ինչպես և՝ **կյնրթանծ կաս**, **քեցած կաք** և այլն: Հարակատար դերբայի գործառնության ռոբորտը լայն է. **լինել** բայի **խ**-ով անկատարի հետ Կապանի **ՌԻՄ** ճյուղի տարածքային տարբերակներում, բացի Աղվանիում, Դավիթ Բեկում և Տանձավերում, առկա են այլ ժամանակաձևեր, ինչպես՝ **կաղնած նիլիս ըմ ՄԻՆԸ** «կանգնած լինելիս եմ լինում», **կաղնած նիլիս ըմ չիլ** // **չի՛ծ**, **կաղնած նիլիս ըմ ՄՕՂԻԼ**, **կաղնած նիլիս նիմ**, **կաղնած նիլիս կինիմ**, **կաղնած նիլիս պը/իտի նիմ**: Ինչպես մյուս դերբայներով, այնպես էլ հարակատարով կազմված հիմնական ժամանակաձևերն արտահայտում են գործողության կարճատևություն, իսկ երկրորդականները՝ տևականություն, ինչպես՝ «**Թն յես տըր ն մասին խրսեցած նիմ չիլ**//**չի՛ծ**, **մըռնիս**» և այլն: Համամիտ լինելով Ժ.Միքայելյանի հետ՝ նշենք, որ Կապան-Գորիս տարածաշրջանի խոսվածքներում ևս բաղադրյալ ժամանակների ձևավորման պատճառներից է տարբեր գործողությունների ժամանակային համադրման անհրաժեշտությունը խոսքում⁵²⁷, օր.՝ «**Թն վըր տու կաղնած նիս հըղըցեն դըրաղեն, տըսած կինիս իՆԼՐԱՆ**, **վըր դաղավ ըս յեկա(ծ)**»(Կապ.), «**Մըն օր հունց ա պըղահում, էրկու հօքի էչ ն վ քին ն յիս ին իՆԼՐԱՆ ճաղացը**»(Գոր., Տղ) և այլն:

Հարկ է հավելել, որ երկրորդական բաղադրյալ ժամանակաձևերով կազմությունները, որոնք հարստացնում են բանավոր խոսքը կերպաժամանակային ոճավորմամբ, Կապանի տարածաշրջանի խոսվածքներում ավելի շատ են կիրառվում, քան Գորիսի բարբառային միավորներում:

Որոշ բայերի բարբառային համարժեքները հնչատարբերակային են, որոնց առկայությամբ խոսվածքները յուրահատկություններ ունեն. Գորիսի խոսվածքներում առկա **քիցծղ // քիցնացծղ // քացծղ** տարբերակների դիմաց Կապանի

տարածաշրջանի խոսվածքներում գործառնում են **քիցնացծղ // քեցոլ** ձևերը: Գորիսի խոսվածքներին բնորոշ **քիթած** (<գտանել) «գտած» բայաձևին Կապանի

տարածաշրջանի խոսվածքներում իմաստապես համապատասխանում է **ճարած**-ը, իսկ փոխառյալ հարադիր ունեցող **աննալ** (արաբ. ämä) ⁵²⁸ **կնալ** «պատշաճել, ստացվել» բային՝ **տըռնալ** բայը (վերջինս Գորիսի խոսվածքներում առկա է **տունոնալ** հնչատարբերակով): Կապան-Գորիս տարածաշրջանների խոսվածքներում կիրառական տեսակետից տարբերություն են դրսևորում **քաղել** և **քանղել** բայերը: Կան շարահյուսական որոշ կառույցներ, որոնցում գորիսեցին նույն նշանակությամբ օգտագործում է **քանղել**-ը, կապանցին՝ **քաղել**-ը, օր.՝ **մօշը քանղել/քաղել, խիցծօրը**

քանղել/ խիցծօրը քաղել, բայց Կապանի ու Գորիսի խոսվածքներում

⁵²⁷ Տե՛ս Միքայելյան Ժ., նշվ. աշխ., էջ 52:
⁵²⁸ Մարգարյան Ա., նշվ. աշխ., 1975, էջ 503:

«կըրտօշկան//կըրտօպին քանդել(Գոր.)// քանդել (Կապ.)» արտահայտությունն ընդհանրական է: Գորիսի խոսվածքներում (մասնավորապես՝ Գորիս քաղաք, Վերիշեն) կիրարկվում է բաղարկությամբ առաջացած **հիյիդան**⁵²⁹ «չգիտեմ» բայաձևը, այնինչ

Կապանի տարածաշրջանի խոսվածքներում հանդիպում ենք **հինչ գիդան** (<ինչ

գիտեմ) տարբերակով:

Այսպիսով՝ բարբառային նյութի դիտարկմամբ պարզվում է, որ համաժամանակյա կտրվածքում Կապան-Գորիս տարածաշրջանի խոսվածքները զգալի փոփոխություններ են կրել: Հետազոտության առարկա բարբառային միավորները կարելի է դասակարգել ըստ բայական համակարգերի յուրահատկությունների, որոնք ընդունել ենք որպես խոսվածքային հատկանիշ: Պայմանավորված հասարակական, տնտեսական ու մշակութային կյանքի փոփոխություններով, ինչպես և լեզվական ներգործություններով՝ այդ տարածքային տարբերակների բայական համակարգերում ձևավորել են կիրառական մի քանի առանձնահատկություններ, որոնք դրևորվում են տարեց ու երիտասարդ բարբառակիրների խոսքում: Եթե Կապանի **ԼԻՍ** ճյուղի և Գորիսի խոսվածքների բայական համակարգերում գործուն են բոլոր եղանակաժամանակային ձևերը, ապա Կապանի **ՈւՄ** ճյուղի մի խումբ խոսվածքներում դրանցում առկա է իմաստային տարարժեքություն: Կապանի տարածաշրջանի **ԼԻՍ** ճյուղի խոսվածքները, «...հանդիպելով «ում» ճյուղի Ղարաբաղի բարբառին, ուժեղ ազդեցության ենթարկվելով՝ բավականին ազդվել են նրանից՝ որոշ ձևափոխությամբ պահպանելով «ս» ճյուղի...»⁵³⁰ տարբերակիչ հատկանիշները: Սյունիք-Արցախ տարածաշրջանում վերաբնակված ներգաղթածների խոսակցական տարբերակները ևս իրենց հերթին որոշակիորեն ներգործել են **ՈւՄ** ճյուղի բարբառային միավորների վրա, որով էլ բացատրելի է քերականական զուգաձևությունների առկայությունը նույն խոսվածքում: Սույն աշխատանքով փորձել ենք ներկայացնել քննվող տարածաշրջանի խոսվածքների բայական համակարգերի՝ հնարավորիս ամբողջական պատկերը՝ կարևորելով այն հանգամանքը, որ մեր ուսումնասիրած լեզվական երևույթները հայերենի կենդանի բարբառային միավորների առանցքային ու եական իրողություններ են, որոնք ժամանակի հիլովություն անփոփոխ չեն մնացել:

A COMPARATIVE EXAMINATION OF THE VERB SYSTEMS OF THE SPEECHES (DIALECTS) OF KAPAN-GORIS AREAS

SVETALANA MANUCHARYAN

*Member of the Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA),
Goris State University, acting dean of Humanities and social sciences, Ph.D in
Philological Sciences, Assistant, lecturer at the department of Armenian Language and
Literature of Goris State University,
Goris, Republic of Armenia*

Kapan-Goris areas, as a dialectical zone are characterized by the manners of speech belonging to the branches *lis* [Lɪʰ)U] and *oom* [Ōu ɹ]. We have already examined the dialectical units of the verb systems of this area with synchronic consideration by representing

⁵²⁹ Օրինակը տե՛ս Մարգարյան Ա., նշվ. աշխ., էջ 112:

⁵³⁰ Դավթյան Կ., նշվ. աշխ., էջ 235:

their unique peculiarities with the application of a comparative method. The speeches under the examination possess a range of characteristics according to present and past tense displays of the conjugation indicators. As far as it concerns the expression of the tense and the meaning of the Past Simple the dialectic units of Kapan-Goris can be divided into two groups: synthetic and analytic. In the speeches belonging to the latter group some past tenses of Subjunctive and Conditional lack. The speeches under consideration are also differentiated according to the formation of compulsive mood, the expression of the negative Imperative, the application of secondary compound tenses, as well as the tense-mood dialectical variants of irregular verbs. All the mood tenses are applicable in the verb systems of the “LIS” branch of Kapan and Goris Dialect, whereas in a range of dialects of “UM” branch of Kapan they are used with double/various definitions. It should be noted, that currently, by the examination of the dialectical material, the dialects in Kapan-Goris area can be classified according to the verb system peculiarities that we have observed as a speech characteristic.

Key words: *the dialectical units of Kapan-Goris area, a comparative examination, Verb Systems of the speeches, Parallal method, a dialect characteristic, the branches “UM” and “LIS”, a dialectical zone.*

СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ КАТЕГОРИЙ ГЛАГОЛА В ГОВОРАХ РЕГИОНА КАПАН-ГОРИС

СВЕТЛАНА МАНУЧАРЯН

*Член Объединения молодых ученых и специалистов Арцаха (ОМУСА),
врио декана факультета гуманитарных и социальных наук, лектор кафедры
армянского языка и литературы Горисского государственного университета,
кандидат филологических наук, ассистент,
г.Горис, Республика Армения*

Регион Капан-Горис, как диалектный пояс, характеризуется говорами, относящимися к ветвям (ЛИ) С и Ум. Категории глагола диалектных единиц этого региона мы разбирали в синхронном порядке, применяя сравнительный метод, представили их особенности. Говоры, подлежащие исследованию, имеют целый ряд особенностей, исходящих из выражения временных форм глаголов настоящего и прошедшего времени при спряжении. Диалектные единицы региона Капан-Горис по выражению прошедшего совершенного времени можно разделить на две группы: синтетического и аналитического образования. В относящихся ко второй группе говорах в желательном и предположительном наклонениях отсутствуют отдельные временные формы прошедшего времени. Исследуемые говоры различаются также по образованию наклонения принуждения, по выражению категорического запрета, применению придаточных составных временных форм, как и диалектными вариантами выражения наклонения и времени неправильных глаголов. В глагольных категориях ветви (ЛИ)С Капана и говоров Гориса действуют временные формы всех наклонений, а в ряде говоров ветви Капана они применяются в разных смысловых значениях. При анализе диалектного материала видно, что на современном этапе говоры региона можно классифицировать по тем особенностям категорий глагола, которые мы рассматривали как свойство говора.

Ключевые слова: *диалектные единицы региона Капан-Горис, сравнительный анализ, глагольные системы говоров, сопоставительный метод, свойство говора, ветви Ум и (ЛИ)С, диалектный пояс.*

ՅԵՐԱՄՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՑՈՒՄԸ ՍԻՄՈՆ ՍԻՄՈՆՅԱՆԻ ՍՅԵՐԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ*

ՀՏԴ.82.3:811.19

ԹԵՀՄԻՆԱ ՍԱՐՈՒԹՅԱՆ

Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորման (ԱԵԳՄՄ) անդամ, «Գիտական Արցախ» պարբերականի գլխավոր խմբագրի տեղակալ, Գորիսի պետական համալսարանի գիտական քարտուղար, հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու, ք. Գորիս, Հայաստանի Հանրապետություն tmarutyan@mail.ru

Լիբանանահայ նշանավոր արձակագիր Սիմոն Սիմոնյանի մասին հայ գրականագիտության մեջ չկա որևէ առանձին ուսումնասիրություն: Զննարկան առարկա չի դարձել նաև Եղեռնի անդրադարձը գրողի երկերում: Սույն հոդվածի արդիականությունը Ս.Սիմոնյանի ստեղծագործություններում ցեղասպանության թեմայի համակարգված ներկայացումն է ու արժևորումը:

Մեր նպատակն է հայ եղեռնապատումի գեղարվեստական համատեքստում հիմնական գծերով, թեմատիկ առանձնացումներով, աշխարհայացքային գլխավոր առանձնահատկություններով ցույց տալ Սիմոն Սիմոնյանի ստեղծագործության դերն ու նշանակությունը, գրապատմական ու արդիական արժեքը: Հիմնականում պատմվածքի ու վիպակի հղացքում գրողը խտացրել է հայրենիքից հեռու գոյատևելու դատապարտված հայության (գլխավորապես՝ սասնահայության) բեկորների աստանդական ճակատագիրը, այդ ճակատագիրը կանխորոշած ազգային ողբերգությունը, որը կոնկրետ հոգեբանական վիճակներ է ձևավորում՝ հայրենակարոտի սրված զգացողությամբ ու կորստի ցավով և, վերջապես, իբրև այդ ողբերգության դառնագույն հետևանք, սփյուռքյան սպիտակ ջարդի եղբերականությունը, որ լայնորեն տողանցում է Սիմոնյանի գեղարվեստական արձակը:

Հոդվածում առաջնորդվել ենք պատմական մեթոդով:

Հոդվածի գիտական նորույթը Սիմոն Սիմոնյանի ստեղծագործություններում արծարծված եղեռնի հիմնահարցերի վերհանումն է և ամբողջական համապատկերի ստեղծումը:

Բանալի բառեր՝ լիբանանահայ գրականություն, Սիմոն Սիմոնյան, ցեղասպանություն, Սփյուռք, կարոտ, ուժացում, Սասուն, գաղթ, լեռնականներ:

Սփյուռքահայ գրականության մեջ եղեռնի հիմնահարցերի արծարծումները հատկանշվում են լայն խնդրադրությամբ: Հայ մեծագույն ողբերգության ազդեցությունը մեծապես զգալի է ոչ միայն «Անապատի սերնդի»(1925-1950), այլև «Անմիջական սերնդի»(1950-1975) գրական ներշնչումների վրա, որ, ի տարբերություն առաջինի, ձգտեց կյուբի շուրջ հոգեբանական խորացումների, մղվեց դեպի պատմական իրադարձությունների հոգեբանական բացատրությունները: Սփյուռքահայ

* Հոդվածը ներկայացվել է 04.05.2019թ., գրախոսվել՝ 20.05.2019թ., տպագրության ընդունվել՝ 17.06.2019թ.:

գրականության վերլուծաբան Մ.Թեղեղյանի դիտարկումով՝ «Անմիջական սերունդը», որ բացարձակ Սփյուռքն է, դիմագիծ ստացավ Երկրորդ աշխարհամարտից հետո և «գաղութ գաղութ եւ գզայնութեան առհաւական գիծը պահելով հանդերձ, յատկանշուեցավ ուրոյն գօտիներու գրական ազդեցութեանց ենթարկումով»⁵³¹: Այդ սերնդի մեջ գեղարվեստական մեծարժեք ձեռքբերումներով առանձնանում է լիբանանահայ թւրք, որի օժտված ու տաղանդավոր ներկայացուցիչներից է Սիմոն Սիմոնյանը:

Մ.Թեղեղյանը Սիրիայի ու Լիբանանի հայ գրական ընթացքում Ադետի թեմատիկ անդրադարձը «շոշափելի» է համարում մինչև 1930-ական թվականները, ինչը հավանաբար պայմանավորված է այն կարծրատիպային մոտեցումով, ըստ որի՝ Ադետի գրականությունը պետք է արտացոլի ջարդերի ու տեղահանությունների ողբերգական տեսարաններ, այլ խոսքով՝ պատկերի եղեռնը՝ որպես առարկայական գործողություն: Բնութագրելով 1930-1950-ական, ապա 1950-1970-ական թվականների սփյուռքահայ գրականության զարգացման ընթացքը՝ հետպատերազմյան սերնդի թեմատիկ-գաղափարական սևեռումներով՝ Թեղեղյանն առանձնացնում է շերտեր, որոնք նույնպես Եղեռնի թեմայի ծիրում պետք է դիտարկել: Դա նոր կյանքի կոչված սերունդն է (Անդրանիկ Ծառուկյան, Սիմոն Սիմոնյան, Գևորգ Աճեմյան, Արմեն Դարյան, Երվանդ Պարսումյան, Մովսես Պչագճյան, Պողոս Սևապյան և ուրիշներ), որ նույն խռովքով «Միջին Արևելքի Չայության մեջ ոտքի պահեց գաւառիկ ու տոհմաշունչ ոգին», շարունակեց կառչած մնալ հողի ու գավառի պաշտամունքին, «հայրենի կարօտանքին»՝ հատկապես արձակի ծիրում, որում ցայտուն են «թուրքին դեմ ցասումը եւ որբի հոգեբանութիւնը»⁵³²:

Եղեռնի գեղարվեստական անդրադարձների մասին խոսելիս հիմնականում դիտարկումներ արվում են հայոց կորուստների, ժողովրդի ապրած դժոխային արհավիրքի շուրջ: Յետեղեռնյան տարիներին Չայաստանում ու Սփյուռքում ձևավորված հիշողության մշակույթը նույնպես ընկալվում էր կորուստները հիշելու, սգալու, զոհերի հիշատակը խնկարկելու համատեքստում: Այդ շունչը տարածվեց նաև գեղարվեստական գրականության վրա. նույնանշանակ չափանիշների թելադրությամբ եղեռնի գրանյութին առնչվող բազմաթիվ գրական ստեղծագործություններ մնացին չնկատված և, իբրև այդպիսիք, չարժևորված: Պետականության տարիներին Եղեռնի մասին խոսելիս ավելի շատ սկսեցին անդրադառնալ XIX դարավերջի-XX դարասկզբի հայ ազատագրական շարժմանը, ցեղասպանության տարիների զինված ինքնապաշտպանական մարտերի հերոսական դրվագներին: Առանցքային շեշտադրում ստացավ եղեռնից վերապրած, օտար ափերում ապաստանած սերնդի՝ մնացորդացի կյանքի պատկերումը՝ բազում ճյուղավորումներով:

Եղեռնի իրողությունների զարկերակը՝ սկսած Չամիդյան առաջին ջարդերից, այս կամ այն չափով, այս կամ այն կողմով առկա է Սիմոնյանի ստեղծագործություններում հատկապես «Լեռնականներու վերջալոյսը» (1968) և «Սփիանայ քաջեր» (Ա հատոր՝ 1967, Բ հատոր՝ 1970) պատմվածաշարերում: Չսահմանափակվելով միայն գեղարվեստական արձակի ծիրով՝ Սիմոնյանն իր խմբագրած «Սփյուռք» շաբաթաթերթի էջերում 1958 թվականից արդեն ուշագրավ խմբագրականներ է ստորագրում հայ ժողովրդի բովանդակ պատմության ծանրագույն աղետի, դրա պատմաբաղադրական արմատների, հետևանքների, «անարդար աշխարհի», մեր «արդար ու սրբազան դատի» ու այլ կարևոր հարցերի շուրջ: «Սփիւռք»-ը միշտ «մատը դրած է այն նիւթերու վրայ, որոնց մասին արգիլուած էր խօսիլ կամ գրել»⁵³³, ուստի պատահական չէ, որ թերթը ունեցել է մոլեռանդ հակառակորդներ թե՛ Սփյուռքում, թե՛

⁵³¹ Թեղեղյան Մ., Դար մը գրականություն, հտ. Բ, Բոստոն, 1977, էջ 48:

⁵³² Նույն տեղում, էջ 53:

⁵³³ Մատենագիտություն «Սփիւռք» շաբաթաթերթի, Բեյրութ, 1984, էջ 5:

հայրենիքում: Հայրենիքի դռները Սիմոն Սիմոնյանի առաջ ուղղակիորեն փակվեցին, երբ նա 1950-60-ական թթ.-ից արդեն համարձակվեց սովետական մտակաղապարներին ոչ հարիր ազգային հարցեր բարձրացնել, որոնց թվում՝ հայկական հողերի՝ Արցախի, Նախիջևանի, Ախալբալաքի՝ հորհրդային Հայաստանին միավորելու պահանջն էր և Հայոց Եղեռնի ճանաչումն ու դատապարտումը: Հայ մամուլի պատմության մեջ «Սփյուռք»-ն առաջինը հրապարակ հանեց Եղեռնի 50-ամյա տարելիցը համազգայնորեն ոգեկոչելու պահանջը՝ առաջարկելով մշակված ծրագրեր, որոնք այսօր էլ արդիական նշանակություն ու հնչեղություն ունեն («Առաջին ապրիլի 24-ը», «Սփյուռք», 1958, թիվ 4, «Երկրորդ ապրիլի 24-ը. Ա. Ներածական և խօսք մեր բարեկամներուն», 1958, թիվ 5, «Չգաստության հրավեր – Ապրիլի 24-ի առիթով», 1959, թիվ 11, «Դեպի յիսամեակը Ապրիլեան Եղեռնի», 1968, թիվ 14-16, «Ամեն ինչ մոռնալ և յիշել մեկ բան՝ Հայկական դատը», 1964, թիվ 2, «Մարմելիքին երրորդ հարուածէն ետք... (Ապրիլեան տարանջատ խոհեր)», 1965, թիվ 16, «Հայրերը կորսնցուցին և որդիները կոչուած են փրկելու», 1968, թիվ 16 և այլն): Սիմոնյանը կոչ է անում արժանավայել կերպով տոնակատարելու Եղեռնի 50-ամյակը՝ առերեսվելով սեփական սխալների ու բացթողումների հետ. «Երկու մեծ եւ ուշագրաւ իրողութիւններ, քանդակուած ու արձանացած, կը ցցուին մեր աչքերուն առջեւ, այս գրեթէ յիսուն տարիներու ընթացքին. Ա.- ԶԱՐԴՈՒՂՈՐԸ (Հ ԱՅ Ը) Չ Է ԽՐԱՏ ՈՒ ԱԾ ԵՂԵՌՆԷՆ: Բ.- ԶԱՐԴՈՂԸ (ԹՈՒՐՔԸ) Չ Է ԴԱՐՄԱՆԱԾ ԻՐ ՈՃԻՐԸ: Ազգովին խրատուած ըլլալու համար չէր բաւեր սգալը – լաց, սեւեր հագնել, խանութներ փակել, մոմեր վառել եւ այլն - , այլ անհրաժեշտ էր համազգային ոգիով եւ իտեալով դիմագրաւել ու կանխել Ապրիլեան Եղեռններու կրկնութիւնը: Թուրքին կիսատ ձգածը մեր ձեռքով շարունակելու մեղքը գործեցինք գիտութեամբ եւ անգիտութեամբ»⁵³⁴: Սիմոնյանն իրավացիորեն նկատում է, որ հայ ժողովուրդն իր համազգային կարելիությունները չկարողացավ ծրագրված կերպով «զորակոչի ենթարկել», չկարողացավ պահանջել իր հողերը, չհետապնդեց իր դատը, հաճախ «թաղական աթոռի մը իրաւունքին պաշտպանութեան համար եղանք աւելի քաջամարտիկ, քան եղած ըլլայինք շարդողներուն դէմ»⁵³⁵: Չկարողացավ կենտրոնացված գաղութներ կազմակերպել, և սփյուռքը վերստին վերածեց սփյուռքի՝ ավելի սփռելով ու մանրացնելով: «Մեր նահատակները, Ապրիլեան գոհերը մեզմէ կպահանջեն արցունքէն ու յարգանքէն վեր ու գերազանց բան մը. ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՅԱԿԵՐԺԱՑՈՒՄԸ»⁵³⁶: Սիմոնյանն ազգային խնդիրների լուծումը տեսնում էր նախ և

առաջ միասնականության մեջ: Սիմոնյանի գրեթե բոլոր պատմվածքները, նախքան ժողովածուներում ամփոփվելը, հրապարակվել են «Սփյուռք» շաբաթաթերթում 1958-1978թթ.-ին, ինչպես նաև ժամանակի այլ պարբերականներում ու տարեգրքերում («Սեւան», «Բագին», «Հայրենիք» և այլն): Ստեղծագործություններ կան, որոնք տեղ չեն գտել որևէ ժողովածուում («Տալլորցի Յակոբի Յիշատարականը», «Սփյուռք», 1958, թիվ 1, «Մեր Վերջին Եղնիկը և Եղիշե Չարենց», «Սփյուռք», 1966, թիվ 10, «Որով՞ն պիտի յանձնուի լուսանկարը», 1967, թիվ 50, «Չղջում Արշակաւանի առջև», 1969, թիվ 24-25, «Աթաթիւրքի աղջկան ազգականը», 1971, թիվ 4, «Երկուորեակին եղբայրը», 1971, թիվ 7, 8, «Իր յուշարձանին այցելեց հերոսը», 1971, թիվ 14 և այլն): Դրանցից շատերում նույնպես Սիմոնյանը պատկերել է ազգային աղետի, տարագրության սոցիալական, բարոյական ու հոգեբանական հետևանքները:

Արձակուրդ հիմնակետեր ունենալով Սփյուռքի (հատկապես մերձավորարևելյան հատվածի) խնդիրները, հայրենիքի ճակատագրի սրված զգացողությունը, հայրենակարոտի հոգեսևեռուն զգայնությունները՝ Սիմոնյանը տարբեր գործերում

⁵³⁴ «Սփյուռք», 1963թ. 23 ապրիլի, թիվ 14-16 էջ 2:

⁵³⁵ Նույն տեղում, էջ 2:

⁵³⁶ Նույն տեղում, էջ 2:

պատկերել է 1890-ականներից մինչև իր կյանքի ժամանակն ընդգրկող(1970-80-ականներ) հայ ժողովրդի կյանքի գրեթե բոլոր հատկանշական եղելությունները: Սիմոնյանի ստեղծագործությամբ կարոտի գրականությունը Նոր ու ինքատիպ հավելումներ է արձանագրում: Հիմնականում պատմվածքի հղացքում գրողը խտացնում է հայրենիքից հեռու գոյատևելու դատապարտված հայության(զխավորապես՝ սամահայության) բեկորների աստանդական ճակատագիրը, այդ ճակատագիրը կանխորոշած ողբերգությունը և, որպես այդ ողբերգության դառնագույն հետևանք, սփյուռքյան սպիտակ ջարդի եղերականությունը, որոնք էլ ամբողջացնում են Սիմոնյանի գեղարվեստական փոքր արձակի մտասևեռումների համակարգը:

«Լեռնականներու վերջալույսը» նվիրված է 1890-1915թթ.-ի ընթացքով տնտեսական ծանր պայմանների, բռնաճնշումների, ապա և բնակչության հանդեպ Օսմանյան Թուրքիայի կողմից ծրագրված ու աստիճանաբար իրագործված մասսայական տեղահանությունների ու ջարդերի հետևանքով Սասունի տարբեր շրջաններից Մերձավոր Արևելքի երկրներ գաղթած սփյուռքահայ առաջին ու հաջորդ սերունդներին: «Պատմվածքներուս այս գիրքը կարծես հեռատեսիլն է լեռնականներու դաժան խաղաղության, իրենց կյանքի վերջալույսին ու գիշերին՝ չլուսցող ու անառավոտ...»⁵³⁷, - գրում է Սիմոնյանը՝ վկայելով, որ իր հերոսները իրական անձեր են, և ինքը նրանց մասին հյուսել է «իրական պատմվածքներ»՝ «կյանքե չափ ու անկե ավելի իրական»: Նույնիսկ անուններն է պահել անփոփոխ: Սիմոնյանն Ասատուր Կյուզեյանին հասցեագրած մի նամակում վկայել է, որ պատմական հայրենիքի կարոտով ապրող սասունցիների մասին գրել է Հակոբ Օշականի խորհրդով, որ նաև խոստացել էր գրքի համար առաջաբան հեղինակել: «Քեզի կը դրկեմ Լեռնականներու վերջալույսը... Անթիլիաս, 1948-ին սկսած էի տպագրության. կը յիշե՛ս... Յակոբ Օշականի ստիպումով եւ գրելիք յառաջաբանով: 21 տարի ետք լոյս կը տեսնե...»(Պեյրուբ, 27/4/1969)⁵³⁸: Գրողն ինքը, լինելով գտարյուն սասունցի, հասակ էր առել հայրենակորույս այդ մարդկանց միջավայրում, որոնք էլ «պահանջում էին» իրենց անցած եղերական ճամփաների, կորցրած հարազատների, արևածոր կարոտների գեղարվեստական տարազավորում: «Անոնք ինձի գրել տուած են այնպես ինչպես որ իրենք ապրած են ու եղած»⁵³⁹: Պարզաբանելով իր գրական չափանիշները՝ Սիմոնյանը նշում է, որ երբեք կարիք չի զգացել դիմելու «գրական հնարքների», քանզի նրանց կյանքերը ինքնին ավելի գեղեցիկ էին, յի ու իրավ, քան որևէ տաղանդավոր վերստեղծում: «Մայրի՛կ, մայրի՛կ» վիպակում ներկայացնելով Եղսա Խանումի կյանքի սրտահույզ պատմությունը՝ Սիմոնյանը գրում է. «Թող Ատիեմանցի մայրիկը իր պատմությունը պատմե՛ ի՛ր արվեստով եւ թող Գրողը տանի գրողներուն արուեստն ու պատմելու ձևերը»⁵⁴⁰: Առարկելի ոչինչ չկա տոհմիկ լեզվամտածողությունից եկող այս ինքնահատուկ փիլիսոփայության մեջ, որն, ըստ ամենայնի, տարրալուծվում է գեղարվեստական խոսքում: Հանդարտ ու անճիգ՝ Սիմոնյանը պատմում է նրանց կյանքի «անօրինակ ու հուզիչ» պատմությունները, բացահայտում կենսական խորունկ ճշմարտություններ: Եղեռնը յուրովի է անդրադարձվել հարազատ կենսատարածքից դուրս մղված և «օտարության հորին մեջ» նետված այդ մարդկանց կենսագրություններում, ամեն մեկն ինքնովի է ապրում կորստի զգացումը, բայց բոլորի նպատակը մեկն է՝ վերադարձը:

Սասունցի լեռնականներին նվիրված պատմվածքներում (բացառությամբ մի քանիսի) չկան կոտորածի սրտաշարժ պատկերներ, սակայն դրանք աննկատելիորեն

⁵³⁷ **Սիմոնյան Ս.**, Լեռնականներու վերջալույսը, Բեյրուբ, 1968, էջ 179:

⁵³⁸ **Կյուզեյան Ա.**, Կը խօսին նամակները, Բեյրուբ, 2014թ., էջ 38:

⁵³⁹ Նույն տեղում, էջ 179:

⁵⁴⁰ **Սիմոնյան Ս.**, Սիփանայ բացեր, Բեյրուբ, 1967, էջ 189:

հորդում են նրանց գրույցների, ողբերգաշունչ օրերի վերապրումների, վերապատմումների, արցունքների ու նույնիսկ՝ ծիծաղի միջից: Ճակատագրից դառնացած, երերուն, անհաշտ ու անհանգիստ այդ մարդիկ չեն հասկանում աշխարհի դրվածքը, նույնիսկ՝ հարազատ զավակներին, որոնք հեշտորեն ընտելացել են նոր միջավայրին, յուրացրել օտար կենցաղավարությունը, լեզուն և նույնիսկ կարողանում են ծիծաղել, ինչն աններելի է: Ջարդերից հետո հայն իրավունք չունի ծիծաղելու համոզված է «Սահմանային վեճ» պատմվածքի հերոս Օվեն, որ, 1915 թվականից սկսած, ամբողջ երեսուն տարի չէր ծիծաղել: «Պեղծ գործ է խնդալը, երբ կոտորված են բոլոր սիրելիները և ամայացած՝ հայրենի տունները: Հայրս չի սիրեր ոչ իր խնդացող զավակները և ոչ իսկ խնդացող որևէ Հայ: Հայերու դեմքերուն վրայ պետք է որ դրոշմվի տրտմությունը՝ որպես նշան անմոռացության»⁵⁴¹: Վսեմ հուսահատությամբ պայթար մղելով օտար բարբերի դեմ՝ համառ ու սևեռուն վարքագծով այդ մարդիկ հաճախ հայտնվում են ողբերգազավեշտական իրավիճակներում: Ապավինած «ռուսի հաղթանակի» միջոցով հայրենիք վերադառնալու ու հայրենական հողերին տեր կանգնելու պարզահավատ սպասումին՝ Օվեն ու Ավեն իրենց երբեմնի հողերն են սահմանագծում և պապենական մի հողակտոր մեկը մյուսից անարդար կերպով «խլելու» պատճառով գժտվում («Սահմանային վեճ»): Սասունցու ծռությամբ օժտված ուշագրավ բնավորություններ են քեռի Օհանը, Թոփալ Սահակը, քեռի Մակարը: Երկնային արդարության դեմ «կրակե բարկությամբ» լցված Բեռնակիր Օհանը նախընտրում է, որ սատանան շրջի աշխարհի վրա, քան «ունևորներու բարեկամ» աստվածը: Նա մշտական հակասությունների մեջ է Աստծու կողմից երկիր ուղարկված «խաֆիաների» հետ, որոնցից մեկը, Օհանի համոզմունքով, Չորավար Անդրանիկն է: Չորապետի հանդեպ ունեցած բացասական վերաբերմունքի արտահայտման միջոցով էլ բացվում է Սամա Ապաղանք գյուղում տեղի ունեցած սպանդի՝ մարդկանցով լի եկեղեցու հրկիզման պատկերը, որին Օհանի հետ ականատես է եղել Նաև Անդրանիկը: Օհանի համար հայկական սարսափելի տեղահանությունների, կոտորածների, իր նման խեղճերի զրկանքների պատասխանատուն Անդրանիկ փաշան էր, որ «մեկ ու կես ֆշանկով» (փամփուշտ) եկել և «երեք հարիւր վաթսուն տարուան Օսմանլի տովվաթը» ուզում էր ազատել: Երբ Օհանին հանգստացնում են, թե Անդրանիկն արդեն մեռել է և կարիք չկա անգո մարդուն հետապնդելու, նա զայրագին պատասխանում է. «Անդրանիկ չկե՛, բայց կե՛ Անդրանիկություն»: Այսինքն՝ դեռ կա «մեկ ու կես փամփուշտով» կռվելու մոլորությունը, որն իրենց այդ օրերից ավելի վատ օրերի կարող է հասցնել, և «իր արդեն ծանր բեռն ավելի՛ ծանրացնել»:

Սիմոնյանի պատմվածքներում ծիծաղն ու տխրությունը փոխնիփոխ հաջորդում են իրար՝ ստեղծելով տրամադրությունների ուշագրավ խայտանկար: Հենց այդ առանձնահատկության շնորհիվ էլ Սիմոնյանի հերոսները ձեռք են բերում արտակարգ կենսական ռիթմեր, դառնում ինքնատիպորեն սիրելի: Նրանք գրականության մեջ տարածում գտած «փոքր մարդկանց» սիմոնյանական կերտվածքներ են: Հեղինակը սիրում է իր լեռնականներին, ցավում է նրանց համար, և իր սերը փոխանցում է ընթերցողին:

Հայոց եղեռնապատումի հուզառատ էջ է «Մուրագ մը ունըմ» պատմվածքը: Հեղինակը գրույցի է կանչում հորթուր խանեին, որ մի գեղեցիկ օր Սամա Պելավ գյուղից հարս էր գնացել խնձորիկ, երկու մանչ ունեցել և վեց տարվա հարս էր, երբ սկսվել էր կոտորածը: Խանեն շատերի հետ ու շատերի նման մանկահասակ զավակներին առել ու փախել էր սարերը: Օրեր, ամիսներ դիմադրել էր եղեռնի արհավիրքներին, թաքստոցից թաքստոց անցել, ահարկու չարչարանքներ կրելով՝ փրկության հույս փայփայել, բայց ճակատագիրը իր ու իր նման հազարավորների

⁵⁴¹ Սիմոնյան Ս., Լեռնականներու վերջալոյսը, Բեյրութ, 1968, էջ 13:

հանդեպ եղել էր անկարեկիր ու անողոք: Օսմանյան իշխանությունների հատուկ թելադրանքով գործող քուրդ բաշիբազուկները, բռնելով փախստականներին, որոնց թվում և Խանեհին՝ մանչերի հետ, փակել էին մի տան մեջ ու կրակի տվել: Խանեհին հաջողվել էր երդիկից դուրս սողալ, «իր մանչերը, սակայն, անթափանց ծուխերու մեջ մայր փնտռելով ու մղկտալով խեղդամահ եղան»⁵⁴²: Պատմվածքում հեղինակը չի խուսափում սպանդի սահմուկեցուցիչ մանրամասների նկարագրությունից, որոնք ընթերցողի առջև կենդանացնում են եղեռնյան միջավայրը: Ազգային աղետի, ողբերգության հունով գեղարվեստական պլան է թափանցում վրեժխնդրության թեմա: Հրաշքով վերապրած Խանեհն մուրազ ունի՝ «տուլճմանի» արյունը պիտի թափվի այն հողերի վրա, որտեղ զազանաբար սպանվեցին հազարավոր անմեղ մարդիկ, նաև՝ իր զավակները: Այդ արյունը միայն կարող է մարել այն ատելությունը, որ երկար դանակի պես խրված էր Խանեհի սրտում: Եղեռնը դեռ շարունակվում էր վրեժի զգացումից տակնուվրա եղած նրա եության մեջ:

Սիմոնյանն իր գրվածքներից մեկում առանձնացնում է երեք «իրականություններ», որոնք էլ կազմում են իր գործերի հոգեհատակը և ստեղծում որոշակի կենսամիջավայր: «Իրականութուն մը՝ օսմանյան բռնակալությունը, իրականություն մը՝ հայկական ճգնաժամը օսմանեան լուծին տակ, իրականութուն մը՝ հայկական ընդվզումը օսմանեան լուծին դեմ»⁵⁴³:

«Նա իր հօր զավակն է» պատմվածքում նույնպես պատկերված է ցեղասպանության արհավիրքը և ազատատենչ մաքառումը, որ մղեց սասնահայությունը առաջին(1894) ու երկրորդ (1904) ապստամբությունների ժամանակ՝ փորձելով դիմակայել չարաղետ 1915-ին, բայց ապարդյուն: Շաբաթներ շարունակ աներևակայելի խիզախությամբ կռվող Սասունն ընկավ անհավասար գոտեմարտի արդյունքում: Պատմական փաստերը վկայում են, որ թուրքական իշխանությունները Սասունի դեմ դուրս էին բերել ժամանակի ռազմական տեխնիկայով զինված հսկա բանակ, որ թվաքանակով գերազանցում էր Սասունի հայությանը: Պատմվածքում ի դեմս Մակարի ու իր հայրուկ ընկերների՝ Սիմոնյանը խտացրել է սասունցիների ապստամբ ոգին, բռնակալություն չհանդուրժող բնավորությունը: Մեղվաբուժությամբ զբաղվելու համար աշխարհ եկած սասունցին ականազբաղվել էր մարդու արյուն թափելով: Գյուղի տերտերը սահեցրել էր Մակարի ձեռքը փայտե այբուբենի, ապա Քերականի էջերի վրա՝ սովորեցնելով կարդալ *ծառ, սար, ոչխար, փեթակ, մարդ* բառերը... Նոր և ավելի դժվար բառերը՝ *թշնամի, պինվոր, պատերապմ, թնդանոթ, ավեր, կոտորած*, Մակարը չկարողացավ կարդալ, որովհետև ծագեց Սասունի ապստամբությունը: Յոթ տարեկան Մակարը տեսավ ու ճանաչեց թշնամուն, ահեղ պատերազմը, թնդանոթները, ավերն ու կոտորածը: Ավերվեց հայրենի գյուղը, սրի քաշվեցին յուրայինները: Այդ տարիքում արդեն Մակարը հասկացավ, որ տեսնելը ավելի դժվար է, քան կարդալը: Մի խումբ որբերի հետ նրան էլ տարան Առաքելոց վանք՝ ուսում առնելու: Բայց այնտեղ էլ «իր սորվածը չեղավ ավելի մեծ, քան իր տեսածը»: Սասնա երկրորդ ապստամբությունից հետո վերապրողների հետ Քեռի Մակարն էլ վերադարձավ գյուղ և որոշեց վերականգնել ավերակված տունն ու բարեշեն դարձնել օջախը: Նվիրվեց սիրելի գործին և արդեն մտածում էր ընտանիքի մասին, երբ ծագեց պատերազմը: Այն, ինչ Մակարի հուզումնահար աչքերը տեսան՝ «գարհուրելի հակափաստ» էին «եղբայրության իր հավատքին»: Սիրած աղջկա խոշտանգված ու անտառի տարբեր մասերում «ցիրուցան արված» մարմինը, օրեր շարունակ անկենդան մոր մարմնին փարված ու մայրական կաթի փոխարեն կրծքից դուրս թափվող որդերով մնվող մանչուկի սրտակտուր լացը, բռնաբար լլկված ու

⁵⁴² Լույս տեղում, էջ 64:

⁵⁴³ Լույս տեղում, էջ 86:

օրորոցի նման ձեռք ու ոտքով ծառի ճյուղերից կախված, հովից տարուբերվող կնոջ սահմնկեցուցիչ մարմինը և այլ զարհուրելի տեսարաններ, ի վերջո, սպանեցին իր մեջ «եղբայրության հավատքը»: ոսկե միջատներ բուծողը դարձավ մահաբույծ, ընկերավարականը՝ մարդասպան, եղբայրության հրեշտակը՝ «Ատելության սրսկիչ»: Ու այդ բոլոր հակոտնյա գծերը ներդաշնակվեցին Քեռի Մակարի մեջ: Սիմոնյանը պատումը առաջ է տանում չթուլացող լարվածությամբ, և թանձր գույներով պատկերում լեռնականների ոգեշունչ ու անհավասար պայքարը թուրք ու քուրդ բարբարոսների դեմ: Պատմական մեծ հնչեղություն ստացած Սասունի ինքնապաշտպանական կռիվները(1894, 1904) Սիմոնյանի գրչով վերածում են գեղարվեստական տպավորիչ պատկերների: Պատումը ներառում է պատմական անցքեր ու անուններ, որոնց նկատմամբ հեղինակն ունի որոշակի բաց վերաբերմունք:

Ցեղասպանության գաղափարը մեկ այլ ընդգծում ունի «Թող մեռնի երկրորդ Սահակը» պատմվածքում: Տրորված կենսագրության ողբերգական պատկեր է պարզում հեղինակը ընթերցողի առջև: Ստեղծվում է հերոսի կյանքի բովանդակային երկու հոսք՝ առաջին ու երկրորդ Սահակների հակադրության պատկերով: Սահակը երկու ծնունդ էր ունեցել՝ 1897-ին և 1915-ին: Երկրորդ Սահակին Աստված վերստեղծել էր հայ տարագրության պատկերի համաձայն, այսինքն՝ հեռու իրեն և բոլոր մարդկանց տարրական նմանությունից: Չուզահեռ պատկերվում է առաջին Սահակի կյանքի հովվերգական ընթացքը «Սասնո ամենից անմատույց ու վայրի լեռնաշրջանի մեջ, ուր վեր էր խոյանում լեռնաշխարհի ամենավեհ գագաթը»՝ Մարաթուկը: Նվիրական լեռան ստորոտում գտնվող Բիրչենք գյուղում էլ ծնվել էր Սահակը: Մարաթուկը տիրական ազդեցություն էր թողել Սահակի հոգեաշխարհի ձևավորման վրա, մտել արյան բաղադրության մեջ: Գեղեցիկ էր առաջին Սահակը, «Մարաթուք սարն ու Բիրչենք գյուղի աղջիկները կը մրցեին իրարու հետ՝ տիրանալու համար Սահակի սրտին»: Նրա սիրտը դեռ պիտի բացվեր սիրո առաջ՝ «մեծ նուռի մը պես», բայց սկսվեց կռիվը: Գաղթի ճանապարհին Սահակը կորցրեց բոլոր հարազատներին՝ հորը, մորը, քրոջը, եղբորը: Թեև դիմացավ ու թոթափեց բոլոր հիվանդությունները, բայց դրանց խոր ու անջնջելի հետքերը մնացին մարմնին: Ահա այդպես հայ տարագրության պատկերի համաձայն Աստված ստեղծեց երկրորդ Սահակին՝ որպես կենդանի հիշատակարան, որտեղ «բանդակուած են Հայ եղեռնի ակերներն ու չարչարանքները»: Առաջին Սահակից երկրորդ Սահակի մեջ վերապրեց միայն հավատքը Մարաթուկի գործության հանդեպ: Սահակի երկրորդ կյանքը դժվարին անկույնադարձերով շարունակվեց «տարագրուած հայերի մեծ կեդրոնում» Հայեպում:

Պատմվածքներում Սիմոնյանը փորձում է վերակենդանացնել սասունցի հայի տիպարը, նրա ապրելակերպը, աշխարհայացքը, ավանդությունները և, առհասարակ, սասունցիների հավաքական հիշողությունը, պատմական ավանդը, Սասուն բնակավայրի երբեմնի հայաբույր հիշատակը: «Արուեստի գործ մը միշտ արժանի է ակելի յարգանքի, երբ փշուր մը բան կը փրկե այդ ամենէն»⁵⁴⁴, -գրում է Հակոբ Օշականը: «Լեռնականներու վերջալույսը» ժողովածուն սասունցու յուրահատուկ ինքնության, պապենական հայրենաշունչ խառնվածքի կենդանագիր է:

Թուրքի ձեռքով հայ ժողովրդի հոգում բացված վերքերն անդրադարձնող էջեր կան Սիմոնյանի «Սիփանայ քաջեր» ժողովածուում: Հայ-թրդական ավանդության համաձայն՝ Սիփան լեռան գագաթին ապրում է ֆալաքը՝ ճակատագիրը: «Ֆալաքին անարդարություններուն դեմ կռուելու կոչուած են Սիփանայ քաջերը: Այս հատորի բոլոր գրություններուն հերոսները կը կռուին ֆալաքի դեմ, որ անարդար եղաւ Հայոց հանդեպ: Ուստի այս գիրքին խորագիրը կրնար կոչուիլ Սիփանայ քաջերը»: Գրքի խորագրի հեղինակային «ստուգաբանությունը» ընթերցողին անմիջականորեն

⁵⁴⁴ **Օշական Հ.**, Համապատկեր արեւմտահայ գրականութեան, հտ. 7, Անթիլիաս, 1979, էջ 217:

կապում է եղեռնյան իրողության հետ, ինչն էլ գրքի էջերում ցույցանում է պատմական անարդարությունների դեմ ընդվզման, դրանց դատապարտման գաղափարական շեշտադրումներով: «Սիփանայ քաջեր»-ում Սիմոնյանը յուրացնում է կենսական ավելի խոր շերտեր, լայնացնում է նյութի շրջանակը՝ անդրադառնալով այնպիսի թեմաների, ինչպիսիք են՝ հայրենադարձությունը, ծուլման, ուժացման, այլ խոսքով՝ սփյուռքում սպիտակ եղեռնի դեմ պայքարի ուղիների որոնումը, սերունդների փոխհարաբերությունները:

Սիմոնյանի հերոսները ֆալաթի դեմ կռվում են ոչ թե զենքով, այլ հիշողությամբ, հայրենի հիշատակներով, ասել է թե՛ հոգևոր հայրենիքի գաղափարով, ինչը լավագույն միջոցն է՝ նորահաս սերնդին անմասն պահելու ծուլման վտանգից: «Սիփանայ քաջերը» հիշողության վրեժ է ֆալաթի դեմ, որ անարդար եղավ հայ ժողովրդի հանդեպ: Ուշագրավ է, որ գրքում ֆալաթի խորհրդապատկերը նույնացվում է թուրք տարրի հետ. «Հայոց ազգը անտառ էր, Թիւրքը ճղակոտոր ծա՛ռ դարձուց զանի...: Թի՞ւրքը թե ֆալաթը(ճակատագիրը) կրա՛կ ձգեց. Ատի չեմ գիտեր...»⁵⁴⁵: Կամ «Ֆալաթը ինչու՞ մեզ դեպի Տեր-Չորի չլուրը նետեց... Եհիշտ է, Հայոց ազգը չձգեց, որ Ֆալաթը մեր գլխուն բերէ իր բուրձը ու զաճները... Բայց ու՞ր են Ֆալաթին դեմ կռուող Հայոց կտորիճները...»⁵⁴⁶: Արձագանքելով աշխարհում տեղի ունեցող անարդարություններին՝ Սիմոնյանը բացում է ազգի հին վերքերն ու նոր ցավերը:

Տարագրության մեջ հայրենի հիշատակներով ապրող մարդ է սափրիչ Սարգիսը՝ «Սափրիչ Սարգիս, Ներգաղթ և ածելի» պատմվածքի հերոսը, որ խանդավառությամբ սպասում էր հայրենիք ներգաղթելու երանելի օրվան: Սակայն նա ենթադրել էր կարող, որ երեք որդիներից երկուսը կտրականապես կիրաժարվեն մեկնել ու բնակություն հաստատել հայրենիքում: Դա անօրինակ ողբերգություն էր Սարգիսի համար, տարագիր հայության շրջանում տարեցտարի հոգեզգացական մեծ տարածքներ նվաճող ողբերգություն, որով բնութագրվում է մի ամբողջ ժամանակաշրջան, մտայնություն ու հոգեխառնություն: Աշխարհասփյուռ հայ գաղթաշխարհում հետզհետե արմատավորվող տեղայնացման, ծուլման երևույթով աղավաղվում ու վտանգվում էր հայի իսկական տեսակի, ինքնության՝ սերնդեսերունդ փոխանցվող նկարագիրը:

Այսպես, իր ստեղծագործության այս կամ այն շերտում Սիմոնյանը խտացնում է 20-րդ դարասկզբի հայ ժողովրդի ապրած դառնագույն ողբերգությունը, որ ճյուղավորվում է աշխարհի բոլոր ցամաքամասերում: Եղեռնը շարունակվում է խեղված ճակատագրերի, որք ու անտեր ընտանիքների, աշխարհում սիմված հայի բեկորների մեջ, որոնք օտար ափերում հոգեկան հենակետեր են որոնում, բայց այդպես էլ չեն ամրանում: Շատերը հեռանում են հայրենի բարքերից, մոռանում անցյալն ու պատմությունը, ազգային խորհրդանիշները և, ի վերջո, դադարում հայ լինելուց: Սիմոնյանը սուր կետի վրա է դնում հայության դիմագծին սպառնացող սոսկահար տագնապներից մեկը՝ ուժացումը, որ յուրովի է արտացոլել հատկապես «Մայրի՛կ, մայրի՛կ» վիպակում: Հեղինակը պատկերում է ժամանակի ծանր հոգեբանական երևույթներից մեկը՝ հին ու նոր սերունդների օտարումը: Պատմվածքի հերոսներից Չեթը՝ ավագանի անունով Հակոբը, մոր՝ Հաճի Եղսայի հինգ զավակներից միակն էր, որին գաղթի ճանապարհին կարողացել էր փրկել ու հասցնել Հայեա: Անասելի չարչարանքներ կրելով՝ Եղսան աճեցրել էր հոր գերդաստանից մնացած միակ հունդը և ապա ուղարկել Ամերիկա, որ «ամրանայ ու տարածուի կաղնի ծառին պես, որ Հայոց մեռնող անթառամ ու պայծառ մայր ի՛ր, իր կնոջ ու իր զավակներու ճակատներուն»⁵⁴⁷: Հետո հասկացել էր, որ սխալ է վարվել, բայց արդեն ուշ էր, ինչպես ինքն է ասում, որդուն «ազատել էր տաճկի ձեռքից, բայց հանձնել նրանից ավելի գեշ բանի մը ձեռքը»:

⁵⁴⁵ Սիմոնյան Ս., Սիփանայ քաջեր, գիրք 1, Բեյրութ, 1967, էջ 208:

⁵⁴⁶ Նույն տեղում, էջ 222:

⁵⁴⁷ Նույն տեղում, էջ 208:

«Ես տեսա երկու Տեր-Չորներ՝ իմ մե՛կ աչքովս», - ասում է Եղսա մայրիկը՝ ութ ամիս Ամերիկայում որդու տանն ապրելուց հետո՝ «101 տարուան բանտարկյալի պես»: Երկրորդ Դեր-Չորը Ամերիկյան է՝ ավելի զարհուրելի, քան առաջինը, քանզի «Տեր-Չորի չուր ինկող մեր ազգակիցները կրնան վերադառնալ Հայոց Տուն, բայց Ամերիկյա ինկող մեր գաւակները պիտի չվերադառնան»⁵⁴⁸: Պատմելով իր մասին, Ներկայացնելով Նախ՝ զաղթի ճանապարհին, ապա՝ Ամերիկայում գիտով անցածը՝ Եղսան արտահայտում է ոչ միայն իր, այլև մի ամբողջ սերնդի ազգային մտահոգությունները: «Պատմե, մայրի՛կ, պատմե՛, ինչպէս մեր երգը կ'ըսե՛ «Կանչե՛, կռու՛նկ, կանչե՛»⁵⁴⁹: Որդու տանը Եղսային սպասում էին բարոյական ցնցումներ՝ մեկը մյուսից զորավոր. Նախ՝ տանում են ճաշարանում աշխատեցնելու, ապա՝ ավելորդ տհաճություն չպատճառելու համար (քանի-որ նա միակնակի էր ու հայերեն էր խոսում) արգելում են երևալ հաճախորդների աչքին. «Եթե մայրդ վար իջնէ, հաճախորդները կը փախին», - հարսի պահանջն էր: Ապա ծրագրում են պարտքի դիմաց ամուսնացնել Եղսային մեծահարուստ ու տարեց մի ամերիկացու հետ: Եղսայի տառապանքն ավելի է խորանում, երբ արժանանում է թոռների անբարյացակամ վերաբերմունքին, Նրան հրամայվում է փակված մտալ սենյակում բոլոր այն օրերին, երբ թոռան «բոյ-ֆրենդն» էր հյուր գալիս. տատի եղեռնագարկ տեսքը ակնահաճո չէր քաղաքակրթված ու փափկակենցաղ երիտասարդին: Հեղինակը դեպքերի զարգացումը հասցնում է վերջնագծին. որդին ու հարսը որոշում են մորն ուղարկել Հալեպ, քանզի նրա հետ կապված շահախնդրական ծրագրերը գլուխ չեն գալիս ու այլևս ավելորդ ծախս էր Ամերիկայում պահելը: Դրանից հետո արդեն սկիզբ է առնում բարոյական մահը: Հակոբի հոգեբանական խզումը ազգայինից, իր անցյալից, պատմությունից, Նույնիսկ իրեն թուրքի յաթաղանից փրկած տարաբախտ մորից, վերջնական է:

Սիմոնյանի ստեղծագործությանն ուրույն երանգ է ավելացնում հայ-թուրք հարաբերությունների թեման: Այդ առումով ուշագրավ են «Դեպի Էրզրում. Թուրք զնդապետի մը հետ» և «Աթաթուրքին աղջիկը» պատմվածքները: Հերոսներից մեկի հետևությունը, թե պատմական հանգամանքների բերումով «շատ հայեր թրքացել են և շատ թուրքեր՝ հայացել», հեղինակի համար հայեցակարգային առանցք է, որն ամբողջական դարձնելու համար դիմում է բազմաթիվ իրական փաստերի ու գեղարվեստական հղացման տարբեր սկզբունքների: Առաջին պատմվածքում դեպքերը զարգանում են գրեթե արկածային ընթացքով՝ հայ պատմաբանն ու գերմանացի նշանավոր գանգաբանը մասնագիտական ուսումնասիրությունների նպատակով ուղևորվում են Էրզրում: Գանգեր չափագրելու ու դրանց տեսակները որոշելու մոտիվն ինքնին հետաքրքրաշարժ է դաձնում պատումը և հնարավորություն տալիս բացահայտելու նոր տիպարներ, հաղորդակցվելու հեղինակի նոր մտահոգություններին: Գերմանացի գանգաբանի՝ Թուրքիայի տարածքում կատարած գանգաբանական չափագրություններն ու հետազոտությունները բերում են նրան պարականոն եզրակացության, ըստ որի՝ հայերը «չեն տարագրվել Թուրքիայից, այսինքն՝ հայկական նահանգներից... Նրանք ապրում են այդ սրբազան ու վաղեմի հողերի վրա»⁵⁵⁰: Եզրակացությունը խորապես ցնցում է հայ պատմաբանին, որ հրաժարվում է հավատալ գանգաբանական այդ տեսությանը: Գիտնականի մեկնակետը *արմենիդ* տիպի գանգն էր, ըստ որի փորձում էր զատորոշել Փոքր Ասիայի, Կովկասի ու Միջագետքի ժողովուրդների գանգերը՝ հայկականի հետ ունեցած տարբերություններով ու նմանություններով: Որպես նմուշ ծառայած բազմաթիվ թուրքերի գլխում նա հայտնաբերել էր նկատելի գերակշռությամբ *արմենիդ* տեսակի գանգեր և պատրաստվում էր Երզնկայում ու Էրզրումում հետազոտություններն

⁵⁴⁸ Նույն տեղում, էջ 209:

⁵⁴⁹ Նույն տեղում, էջ 190:

⁵⁵⁰ **Սիմոնյան Ս.**, Սիփանայ քաջեր, գիրք 2, Բեյրութ, 1970, էջ 13:

ավարտեց հետո ամբողջացնել իր գիտական եզրակացությունները: Այդ առանցքի շուրջ էլ հյուսվում է «Թուրք գնդապետի մը հետ» պատմվածքի դիպաշարը, որի հիմքում լայն իմաստով թուրքի հոգեբանական վերլուծությունն է: Մինչև վերջին անկյունը բացվում է հայ ընտանիքից սերված, այդ բարոյությունից ամբողջ կյանքում տառապող մոլեռանդ, հայատյաց թուրք գնդապետի ետությունը, որին իր կենսըմբռնումներով զուգահեռվում-հակադրվում է մեկ ուրիշը՝ գանգի *արմենիդ* տեսակով լիակատար մի թուրք, որը չի տառապում այդ բարոյությունից, ավելին՝ կյանքի իր փիլիսոփայությամբ լավագույնս պատճառաբանելով հայ-թուրք հարաբերություններում առկա բազմաթիվ հոգեբանական թնջուկներ՝ տալիս է դրանց ինքնօրինակ գնահատականը: Եվ որքան ընդարձակվում ու ծավալվում է երկմակարդակ գրույցը, այնքան ընդգծվում, ինքնատիպ ուղղվածություն ու ողբերգական շեշտվածություն է ձեռք բերում առաջին թուրքի կերպարը, որ 1915-ին մի թուրք կնոջ կողմից փրկված գտարյուն հայ էր՝ ի հակակշիռ իր *այթայթ* տեսակի գանգի: Նա երբևէ խուսափել էր հոգու ծայքերը բացել, որովհետև հանկարծ կարող էր խելացնորվել իրողության ծանրությունից: Որքան խորանում ենք այդ կերպարի եության մեջ, որքան ջանում ենք հասկանալ նրան, այնքան բացահայտում ենք ողբերգական մի անհատի, որի դժբախտությունն իր ուրույն դրդապատճառներն ունի: Արձակագիրն ասես ստեղծել է երկպատկեր՝ իրար հակադրելով նույնածին, բայց տարբեր ընթացքներ ունեցող նկարագրեր: Մեկը պատրաստ է եղել հոգեբանորեն ընդունելու իրողությունը՝ կյանքի ամեն քայլափոխի զգալով ճշմարտության շնչառությունը, մինչդեռ մյուսն իրեն կամովին զնդանել է կեղծ անգիտության մեջ, «մեռցրել իր մեջ ճշմարտության ձայնը», որովհետև այդ ճշմարտությունը չունեի ընդհանուր եզրեր իր կյանքի ու պարտականությունների հետ: Երկուսի ողբերգության հիմքում էլ ընկած է ցեղասպանության դառնադի փաստը, հայերին բռնի ծուլելու, մանկահասակ տարիքից արյան հունը փոխելու, թրթաղելու զարհուրելի երևույթներով. պատմական անարդարություններ, որոնք վեր է հանում հեղինակը և դրանց շուրջ մտորել տալիս:

«Աթաթուրքին աղջիկը» պատմվածքի հիմքում թուրք առաջին կին ռազմական օդաչու, թուրքական կանացիության կատարելատիպ ու ազգային վեհության խորհրդանիշ համարվող Սաբիհա Գյուլչենի հայկական ծագման աղմկահարույց պատմությունն է: Նրան Ջիբրիլի մանկատանից 1925 թվականին որդեգրել էր Թուրքիայի առաջին նախագահ Մուստաֆա Զեմալ Աթաթուրքը, քանի որ ցեղասպանությունից հետո հազարավոր ծնողազուրկ երեխաներ, որոնց թվում և Խաթուն Սեբիջյանը՝ Տիրուհի ու Ներսես Սեբիջյանների դուստրը, հայտնվել էին որբանոցներում: Աթաթուրքը երկնագույն աչքերով իր հոգեզավակին Սաբիհա անունն էր տվել ու կնքել Գյուլչեն (թուրքերեն՝ երկնային) ազգանունով: Աթաթուրքն առանձնապես չէր կարևորում, թե իր հոգեզավակների երակներում ինչ արյուն է հոսում, կարևորն այն էր, որ նրանք դաստիարակվում էին թուրքական ոգով: Սաբիհայի հայկական ծագումը երկար ժամանակ հայտնի էր հայերի շրջանում: Առաջին անդրադարձը հայուհու անօրինակ ճակատագրին եղավ Սիմոնյանի գրչով՝ 1970 թվականին, երբ «Սփյուռք» շաբաթաթերթի օգոստոսի 16-ի թիվ 33 համարում տպագրվեց «Աթաթուրքին աղջիկը» պատմվածքը՝ ընծայագրված՝ «Տերսիմացի բարեկամիս» Գեորգ Երեւանեանին»: Պատմվածքը հետագայում զետեղվեց «Սիփանայ քաջեր» ժողովածուում (1970), ինչպես նաև «Լեռ եւ ճակատագիր» (1972) հատընտիրում: Պատմվածքում առաջին անգամ Սիմոնյանը խոսեց Գյուլչենի հայկական արմատների, իսկական անվան, եղբունին զոհ դարձած ընտանիքի մասին՝ զեղարվեստական տպավորիչ պատկերներով ներկայացնելով մոր տեսլացումից առաջ եկած հոգեկան ծանր տագնապը, որ ապրում է թրթաքած հայուհին Դերսիմի ռմբակոծումից առաջ: Գյուլչենի պատմությունը հայերի համար մի ողբերգական դրվագով էլ է հայտնի: 1938թ.-ին Նա Աթաթուրքի հրահանգով մասնակցել էր Դերսիմի կոտորածին՝ ռմբակոծելով ցեղասպանությունից փրկված և Դերսիմում ապաստանած հայերին: Թուրքական

«Yeni Akit» պարբերականը ներկայացրել էր Սաբիհա Գյոլչենի՝ ժամանակի հայտնի թերթերից մեկին՝ «Tan»-ին տված տխրահուշակ հարցազրույցը, որում Աթաթուրքի հոգեգավակը, 1915-ի ցեղասպանությունից փրկված հայուհին՝ Լույն ինքը խաթուն Սեբիջյանը, պատմել էր, թե ինչպիսի խանդավառությամբ է մասնակցել Դերսիմի կոտորածին: Սիմոնյանը Գյոլչենի ռազմական այդ չարաղետ թռիչքն էլ դարձնում է պատմվածքի առաջին նկարագրելով Լախաբան գարհուրելի հրահանգն ի կատար ածելը հայուհու ապրած սոսկալի մտատանջանքը, որի պատճառը գիշերվա երազն էր, «երկնային սուրացող միակության» մեջ ակաջին հասած մոր սաստող ձայնը՝ «խաթուն...», և ռազմական օդանավի պատուհանից իր աչքերին տխրորեն փարվող հարազատ վայրերը, որտեղ անցել էր պիստակենիների բույրով լեցուն իր մանկությունը...

Հայտնի է, որ Թուրքիայում Սաբիհա-խաթունի գաղտնիքը «բացահայտեց» Հրանտ Դինքը: 2004 թվականին «Ակոս» թերթում տպագրվեց Դինքի հարցազրույցը հայաստանաբնակ Հռիփսիմե Սեբիջյանի հետ: Վերջինս պնդում էր, որ Սաբիհա Գյոլչեն իր հարազատ մորաքույրն է՝ ներկայացնելով իր մոր՝ Տիրուհու կյանքի պատմությունը: Տիրուհու ծնողները Այնթապի Չիբին գյուղից էին, զոհվել էին ջարդերի ժամանակ: Ծնողների մահից հետո նրանց անչափահաս աղջիկները՝ Տիրուհին ու խաթունը, հայտնվել էին թուրքական որբանոցում, որտեղից էլ խաթունին որդեգրել էր Աթաթուրքը: 1946թ.-ին Տիրուհին Սիրիայից ներգաղթել էր Խորհրդային Հայաստան: Նա շարունակ փորձել էր կապ հաստատել քրոջ հետ, սակայն ապարդյուն: Հրանտ Դինքը «Սաբիհա Գյոլչենի գաղտնիքը» հողվածում, որպես հայկականության ևս մեկ իրեղեն ապացույց, մատնանշում էր նաև այն փաստը, որ Սաբիհան տառապել է «երևանյան» կամ «հայկական» կոչված հիվանդությամբ, որի մասին պատմվածքում վկայակոչել է նաև Սիմոնյանը: «Սփյուռք» շաբաթաթերթի 1971թ.-ի թիվ 4 համարում Սիմոնյանը հրապարակեց նաև «Աթաթուրքի աղջկան ազգականը» կարճ ու հուզիչ պատմվածքը, որն իրական դեպքի հիմքով շարունակում էր Աթաթուրքի աղջկա պատմությունը: Հալեպից հեղինակին է այցելում Ներսես անունով մի գաղթական հայ և պնդում, որ ինքը Սաբիհա Գյոլչենի՝ Լույն խաթուն Սեբիջյանի հորաքրոջ տղան է, և «Սփյուռք»-ում հրապարակված պատմվածքը տակնուվրա է արել իր զգացմունքները: Թրքացած քրոջը տարիների հեռվից հանդիպելու որոշումը դառն հարցեր է առաջ բերում. արդյո՞ք խաթունը կընդունի սիրասուն եղբորը. «... թրթուրեամբ փառքի հասած է, ... հայուրեամբ պիտի գլտորի, չեմ գիտեր մինչեւ ուր... Մինչեւ հիմա ծածկած է իր հայ ըլլալը, ասկե անդին պիտի չուզե յայտնել, եւ շատ հաւանաբար մերժե...»⁵⁵¹: Հայոց ցեղասպանության ընթացքում առևանգված կամ ծնողների սպանողից հետո փրկված հայ երեխաների ճակատագրերը առանձին և լուրջ ուսումնասիրության կյուբ են: Հայտնի է, որ տխրահուշակ թուրք զորավար Քարաբեքիրը, արևելյան ճակատում հավաքելով որբ, անտուն, անխնամ հայ երեխաներին, նրանց տալիս էր ռազմական կրթություն և դաստիարակում մոլի «թուրքականության» ոգով: Հենց այդ երեխաներից է հետագայում կազմավորվում, այսպես կոչված, «Երեխաների բանակ» ռազմական միավորումը: Թուրքական միջավայրում մեծացած ու դաստիարակված այդ երեխաները հետագայում դառնում էին ամենամոլի ու դաժան զինվորները՝ այդպես էլ չիմանալով իրենց իսկական ծագումը: Երևույթի ողբերգականությունը խորապես մտահոգել է ցեղասպանության թեմային այս կամ այն կերպ անդրադարձած գրողներին, նաև՝ Սիմոն Սիմոնյանին: Հայերի հանդեպ թուրքական ոճրագործությունները ամբողջական մոտիվ են ձևավորում նաև Սիմոնյանի «Երեք օրակարգեր», «20000 Էն Մեկը...», «Խմբապետ Ղազարի դատավարությունը» և այլ պատմվածքներում:

⁵⁵¹ «Սփյուռք», 1971թ., թիվ 4, էջ 2:

Ամփոփենք. անդրադառնալով Եղեռնի դառն իրողություններին՝ Սիմոնյանն իր ստեղծագործություններում վեր հանեց հիմնականում սասնահայության՝ օտար միջավայրում ինքնանալու, ամրանալու անհնարինության գաղափարը, հայրենակարոտի տառապանքը, բնօրրանի ու հարազատների կորստի ցավը, արդար հատուցման ու վրիժառության փափագը, ուժացման վտանգն ու դրա աղետալի հետևանքները, այն անօրինակ ճիգը, որով եղեռնագարկ մարդիկ փորձում էին դիմադարձվել օտար կենսավարությանը և, ի վերջո, տունդարձի լուսավոր հավատը, որ ապրեցնում և ուժ էր տալիս հայրենաբաղձ լեռնականներին:

SOME ISSUES ON THE GENOCIDE IN THE WORKS BY SIMON SIMONYAN

TEHMINA MARUTYAN

*Member of the Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA),
Deputy Editor-in-Chief of the Journal «Scientific Artsakh»,
Scientific Secretary of Goris State University, Head of the Chair of Armenian language
and literature of GSU, Ph.D in Philology, Associate Professor,
Goris, Republic of Armenia*

There are no separate studies of the works of the famous Lebanese prose writer of Armenian origin Simon Simonyan in the Armenian literature. The topic of genocide revealed in the works of the writer was not discussed either. The relevance of this article is the systemization and evaluation of the theme of genocide in the works of S. Simonyan. Our goal is to show the role and importance of creativity S. Simonyan, literary, historical and actual value with the main features, thematic layers, the main features of the world in the context of Armenian literature. Mainly in his stories and novels, the writer reflected the wandering fate of the fragments of the Armenian people doomed to live far from their homeland (the Armenians of Sasun), a national tragedy that predetermined such a fate and formed a specific psychological state with a keen sense of homesickness, pain from losses and, finally, as a bitter consequence of this, the tragedy of the white genocide of the Diaspora, which runs like a red thread in S. Simonyan's prose. In the article we have been guided by the historical method.

The scientific novelty of the article lies in the disclosure of the main problems of genocide raised in the works of Simonyan, the creation of a holistic panorama.

Key words: Lebanese-Armenian literature, Simon Simonyan, genocide, Diaspora, longing, Sasun, alienation, migration, highlanders.

ОТРАЖЕНИЕ ГЕНОЦИДА АРМЯН В ПРОИЗВЕДЕНИЯХ СИМОНА СИМОНЯНА

ТЕЙМИНА МАРУТЯН

*Член Объединения молодых ученых и специалистов Арцаха (ОМУСА),
заместитель главного редактора журнала «Научный Арцах»,
ученый секретарь Горисского государственного университета,
заведующий кафедрой армянского языка и литературы ГГУ,
кандидат филологических наук, доцент,
г.Горис, Республика Армения*

В армянской литературе нет каких-либо отдельных исследований творчества знаменитого ливанского прозаика армянского происхождения Симона Симоняна. Не послужила предметом обсуждения также тема геноцида, раскрытая в произведениях писателя. Актуальность данной статьи заключается в систематизации и оценке представленной темы геноцида в творчестве С.Симоняна. Нашей целью было показать в контексте армянской литературы в основных чертах, по тематическим прослойкам, по главным особенностям мировоззрения, роль и значение творчества С.Симоняна, его литературно - историческую и актуальную ценность. Главным образом в своих рассказах и повестях писатель отобразил скитальческую судьбу осколков армянского народа, обреченных жить вдали от родины (армяне Сасуна), национальную трагедию, которая предрешила такую судьбу и сформировала конкретное психологическое состояние с острым чувством тоски по родине, болью от потерь и, наконец, как горьчайшее следствие этого, трагичность белого геноцида диаспоры, что красной нитью проходит в прозе С.Симоняна.

В статье мы придерживались исторического метода.

Научная новизна статьи заключается в раскрытии основных проблем геноцида, поднятых в произведениях Симоняна, создании целостной панорамы.

Ключевые слова: ливано-армянская литература, Симон Симонян, геноцид, диаспора, тоска, Сасун, отчуждение, миграция, горцы.

ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌԻ ԲԱՅ-ՍՏՈՐՈԳՅԱԼՆԵՐԻ ԿԱՊԱԿՑԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐԲԵՐ ԴԱՍԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ ԱՆՈՒՆ-ԽՆԴԻՐՆԵՐԻ ՀԵՏ*

ՀՏԴ 811.19

ՍԻԼՎԱ ՄՈՒՐԱԴՅԱԼ

Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի
հայոց լեզվի ամբիոնի հայցորդ,
ք. Վանաձոր, Հայաստանի Հանրապետություն
silvi81@mail.ru

Ժամանակակից լեզվաբանության մեջ առաջադրված կարևորագույն խնդիրներից է բառերի կապակցելիության ուսումնասիրությունը, որն անհրաժեշտ է խոսքի ուսուցման տեսանկյունից: Հոդվածում կատարել ենք անցողական բայերի դասանշային դասակարգում՝ ըստ տարբեր դասային պատկանելությունն ունեցող խնդիրների հետ կապակցական հնարավորության: Զննության ենք ենթարկել ներգործական սեռի միարժույթ և երկարժույթ բայ-ստորոգյալների կապակցելիությունը անձնանիշ, իրանիշ, կենդանանիշ և բազմադաս անուն-խնդիրների հետ (թե՛ սեռի, թե՛ բնության): Ներգործական սեռի բայերի կապակցելիությունը, բայիմաստից բացի, հարաբերվում է նաև բայասեռին և բայակազմությանը: Խնդիր-գոյականի դասանշությունը կախված է նաև ենթակայի դասանշությունից. անձի հատկանիշ արտահայտող բայերը՝ ասացական, մտածական, դատողական և այլն, պատճառականի վերածվելով, պարտադիր պահանջում են անձնանիշ խնդիր լրացում: Ուսումնասիրված բայերի մի մասը կապակցելիության անսահմանափակություն է դրսևորում. կարող է կապակցվել բոլոր դասային խմբերի խնդիրների հետ, իսկ մյուս մասը սահմանափակություններ է դրսևորում՝ կապակցվելով որևէ դասային խմբի պատկանող խնդիրների հետ՝ պայմանավորված բայի իմաստային ու բառակազմական առանձնահատկություններով: Խոսքային վերլուծությունները վկայում են, որ խնդիրների դասային սահմանափակումները վերաբերում են բառերի ուղղակի իմաստով կիրառություններին, քանի որ փոխաբերական իմաստով կիրառությունների դեպքում բառերի կապակցելիության հնարավորությունները սահմանափակումներ գրեթե չեն ունենում:

Բանալի բառեր՝ անձնանիշ, իրանիշ, կենդանանիշ, բազմադաս գոյականներ, իմաստային և կազմության առանձնահատկություններ, կապակցական սահմանափակություն, կապակցական անսահմանափակություն, բայի արժույթ:

Դասային տարբեր պատկանելություն ունեցող սեռի և բնության խնդիրները խոսքում դրսևորում են կապակցական տարբեր հնարավորություններ ներգործական սեռի բայերի հետ՝ պայմանավորված իմաստային ու կառուցվածքային յուրահատկություններով:

Գոյականների դասային խմբերին ժամանակակից լեզվաբանության մեջ անդրադարձել է Է.Աղայանը՝ հետևելով օտար լեզուներում կատարված դասակարգումներին. «Շատ լեզուներում գոյականները դասակարգվում են ոչ թե սեռերի կամ շնչավորության, այլ ըստ դասերի: Յուրաքանչյուր դասի մեջ մտնում են

* Հոդվածը ներկայացվել է 19.03.2019թ., գրախոսվել՝ 09.04.2019թ., տպագրության ընդունվել՝ 17.06.2019թ.:

տվյալ լեզվի այն գոյականները, որոնք դիտվում են իբրև միատեսակ հատկանիշներ ունեցող առարկաներ»⁵⁵²:

Գ.Զահուկյանը միատեսակ հատկանիշներ ունեցող առարկաները դասակարգում է անձնանիշ, կենդանանիշ, իրանիշ, վերացական խմբերով՝ նշելով. «Իմաստային բոլոր կարգերը լեզվական առումով հավասարաբեռ են»⁵⁵³:

Յ.Յարությունյանը, արժույթը բնորոշելով որպես բայի բառային, խոսքիմասային և ներխոսքիմասային իմաստների շարահյուսական-կապակցական կարողություն, նշում է, որ կապակցվող բառերը պետք է ունենան իմաստային համատեղելիություն, զուգորդելիություն (*սիրել խաղաղություն, խնձոր և ուտել խնձոր, բայց ոչ խաղաղություն*)⁵⁵⁴:

Շարունակելով Գ.Զահուկյանի տեսական մոտեցումները՝ Գ.Խաչատրյանը ենթակայի դասային խմբերի առանձնահատկությունները տարածում է նաև խնդիրների վրա՝ ներկայացնելով գրաբարի հարադրավոր բայերի պահանջած սեռի և բնության խնդիրների դասային խմբերը՝ անձնանիշ, իրանիշ, բազմադաս⁵⁵⁵:

Ելնելով Գ.Զահուկյանի առաջ քաշած համընդհանուր լեզվաբանական կաղապարի դրույթներից՝ խոսքի մասերի դասանշային կապակցելիության ուսումնասիրություն կատարել է Ա.Ավագիմյանը՝ քննելով բայ-ստորոգյալի կապակցական հնարավորությունները անձնանիշ, իրանիշ, կենդանանիշ և բազմադաս գոյական-ենթակաների հետ⁵⁵⁶:

Առաջնորդվելով Գ.Խաչատրյանի ներկայացրած գոյական-խնդիրների դասանշային կապակցելիության դրույթների մասին վերլուծություններով՝ սույն աշխատանքում քննել ենք ժամանակակից հայերենի գոյական-խնդիրների դասանշությունը, որը սերտորեն առնչվում է բայի արժույթի հետ:

Ի տարբերություն ենթակառուցային դասանշության՝ խնդրառության դասանշությունը կարող է հանդես գալ ինչպես միազիծ կապակցություններում, այնպես էլ բազմաճյուղ, այսինքն՝ ներգործական սեռի բայը պարտադիր կառավարման եղանակով կարող է պահանջել կամ միայն մեկ սեռի խնդիր, կամ երկու և ավելի խնդիրներ, որոնք բնութագրվում են դասանշային տարբեր դրսևորումներով՝ պայմանավորված բայի իմաստային ու բառակազմական⁵⁵⁷ առանձնահատկություններով:

Ներգործական սեռի խնդրառությամբ միարժույթ ու երկարժույթ բայերը կապակցելիության հարցում հանդես են բերում տարբեր հնարավորություններ, ընդ որում, բոլոր դասերի խնդիրներին կապակցվելու տեսանկյունից առավել ընդգրկուն են խնդրառությամբ միարժույթ բայերը:

⁵⁵² Աղայան Էր., Լեզվաբանության հիմունքներ, Երևան, 1987, էջ 487:

⁵⁵³ Տե՛ս Զահուկյան Գ., Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974, էջ 464:

⁵⁵⁴ Տե՛ս Յարությունյան Յ., «Բայերի իմաստային դասդասման հիմունքները», «Բանբեր Երևանի համալսարանի» 2 (74), Երևան, 1991, էջեր 92-101:

⁵⁵⁵ Տե՛ս Խաչատրյան Գ., Գրաբարի վերլուծական բայերի արժույթը, Երևան, 2000:

⁵⁵⁶ Ավագիմյան Ա., Ժամանակակից հայերենի բայի և գոյականի փոխկապակցելիությունը՝ ըստ Նրանց դասային խմբերի, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտ, 2009: Ավագիմյան Ա., Խոսքի մասերի դասանշային կապակցելիություն, Դասախոսությունների կյուբեր, Երևան, 2014:

⁵⁵⁷ Մուրադյան Ա., Կազմությամբ բարդ բայերի արժույթը՝ ըստ ներբերականական արտահայտության, Վանաձորի պետական համալսարանի գիտական տեղեկագիր, Պրակ Ա, Ե., 2017, էջ 47-56: Ս. Մուրադյան, Կազմությամբ ածանցավոր բայերի արժույթը՝ ըստ ներբերականական արտահայտության, Միջազգային գիտաժողով «Լեզու, խոսք, իրականություն», Ե., 2017, էջ 210-221:

Ըստ իրենց պահանջած սեռի խնդրի դասային պատկանելության՝ խնդրառության միարժույթ ներգործական սեռի բայերը բաժանվում են երեք խմբի՝

1. *Սեռի անձնանիշ խնդիր պահանջող միարժույթ բայեր*: Այս բայերի և անձնանիշ սեռի խնդիրների կապակցական հնարավորությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մի դեպքում կարող է դեր խաղալ բայի մաստը, մյուս դեպքում՝ բայասեռը, մեկ այլ դեպքում՝ բայի կազմությունը:

1.1. Անձնանիշ ենթակառուցվածք ներգործական սեռի որոշ բայեր պահանջում են անձնանիշ սեռի խնդիրներ, ինչպես՝ *աբսորել*⁵⁵⁸, *ապտակել*, *բանտարկել*, *բախտավորեցնել*, *բարուրել*, *գոտեյնդել*, *կանգել*, *կազսավորել*, *կավակատել*, *կզեստավորել*, *թռչակավորել*, *ժառանգատել*, *ծնել*, *կալանավորել*, *ծերբակայել*, *ողջունել*, *սահրել*, *վտարել* և այլն: Օրինակ՝ *Նա բարուրել է իր մի մատ-մասունք թոռնիկին* (ՄԽ):

1.2. Սկզբնառիկ չեզոք սեռի՝ անձնանիշ ենթակառուցվածք բնութագրվող բայերից կազմված պատճառական ածանցավորները պահանջում են անձնանիշ սեռի խնդիր լրացում, ինչպես՝ *ապկացնել*, *աղբատացնել*, *անառակացնել*, *այրիացնել*, *ամաչեցնել*, *ապշեցնել*, *դժբախտացնել*, *երիտասարդեցնել*, *երջանկացնել*, *կարմացնել*, *կզուշացնել*, *ծերացնել*, *ծիծաղեցնել*, *հղիացնել*, *սովորեցնել* և այլն: Օրինակ՝ *Դոստոնակին կոչ էր անում երջանկացնել թեկուզև մեկ մարդու* (ԶԲ)⁵⁵⁹:

1.3. Կազմությամբ բարդ բայերի կապակցելիությունը անձնանիշ սեռի խնդիրներին որոշակիորեն տարբերվում է վերոնշյալ բայերի կապակցելիությունից, որոնց կապակցելիությունը հիմնականում պայմանավորված է բայի իմաստով ու սեռով, մինչդեռ բարդ բայերի դեպքում պետք է նկատի ունենալ մի շարք այլ հանգամանքներ ևս:

Մի շարք բարդությունների բայական բաղադրիչները առանձին, անկախ կիրառվելու դեպքում սեռի բազմադաս կամ իրանիշ խնդիր պահանջող բայեր են: Սակայն ձևավորված կազմություններում նրանք չեն պահպանում այդ հատկությունը՝ անվանական բաղադրիչի պահանջով վերածվելով միայն անձնանիշ խնդիր պահանջող բայերի: Այս հանգամանքը հաշվի առնելով՝ առանձնացրել ենք հետևյալ բայական բարդությունները.

ա) բարդ բայեր, որոնց անվանական բաղադրիչը անձնանիշ գոյական է, ինչպես՝ *ամուսնալուծել*, *գերեվարել*, *դիակիպել*, *դիպնել*, *դիահերծել*, *ընկերակրել*, *ծնողապրկել*, *կամավորագրել*, *որդեգրել* և այլն: Օրինակ՝ 1474-ին մամլուքները գրավել և ավերել են քաղաքն ու բերդը, *գերեվարել բնակիչներին* (ՀՄՀ, 9, 55):

բ) բարդ բայեր, որոնց անվանական բաղադրիչները, ըստ իրենց իմաստի, միավորվում են միայն անձնանիշ գոյականներին բնորոշ լինելու առանձնահատկությամբ, ինչպես՝ *ահաբեկել*, *բախտորոշել*, *դիմահարդարել*, *դիմապրկել*, *կորակոչել*, *կորացրել*, *կորակցել*, *թագադրել*, *թագապարդել*, *իշխանապրկել*, *խելապրկել*, *կրոնափոխել*, *հայրենապրկել*, *հայրենավտարել*, *հարցաքննել*, *հուսադրել*, *հուսալքել*, *հուսապրկել*, *հուսախաբել*, *մահապարտել*, *մեղադրել*, *շնորհապարդել*, *ոգեպնդել*, *պաշտոնակարգել*, *պաշտոնապրկել*, *պսակադրել*, *սրտաշարժել*, *սրտապնդել*, *տնապրկել* և այլն: Օրինակ՝ *Նա դիմահարդարել է 300-ից ավելի հայ և այլազգի դերասանների* (ՀՄՀ, 1, 534):

2. *Սեռի իրանիշ խնդիր պահանջող միարժույթ բայեր*: Այս բայերը աչքի են ընկնում իրենց հաճախադեպությամբ և ենթակառուցվածքային բազմադասությամբ՝ պահանջելով ամենատարբեր իմաստային դաշտեր ներկայացնող սեռի խնդիրներ,

⁵⁵⁸ Բառերի իմաստային վերլուծությունները կատարել ենք՝ հիմնվելով հետևյալ բառարանների բացատրությունների վրա՝ «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», Ե., հ. 1-4, 1969, Աղայան Է., «Արդի հայերենի բացատրական բառարան», Ե., 1976, Մալխասեանց Ս., «Հայերեն բացատրական բառարան», հ. 1-4, Ե. 1944-1945:

⁵⁵⁹ Օրինակները քաղել ենք ԱՐԵՎԿ կայքից (http://www.eanc.net/EANC/search/?interface_language=am):

ինչպես՝ *ամրապնդել, աճեցնել, ավերել, արծարծել, ամրացնել, բացել, բարդացնել, գնել, դրսևորել, եփել, եռացնել, երկարացնել, երկարացնել, խմել, ընթերցել, թափել, թերթաստել, իրականացնել, ծաղկեցնել, ծառատել, կառուցել, կահավորել, կտրել, նորոգել, նետել, նվագել, պատրաստել, պլանավորել, սկսել, վանկատել, վերլուծել, տաշել, տպել, տպագրել, տոնել, տնկել, ցանել, փորել, քաղել* և այլն:

Այս շարքում առանձնանում են մարդու գիտակցական, իմացական և, ընդհանրապես, մտավոր ու հոգեկան գործունեությունն արտահայտող բայեր. ասացական⁵⁶⁰ բայեր, ինչպես՝ *ասմունքել, արտաբերել, արտահայտել, արտասանել, աղարարել, երգել* և այլն, մտածական, դատողական բայեր, ինչպես՝ *գիտակցել, դատել, ենթադրել, ընկալել, վճռել, վերացարկել* և այլ բայեր:

Սեռի իրանիշ խնդիր պահանջող միարժույթ բայերը հանդես են բերում նաև կազմության առանձնահատկություններ: Այդ շարքում առանձնացրել ենք՝

2.1. բայեր, որոնք ձևավորվել են թանձրացական իրանիշ գոյականներից, ինչպես՝ *ամբարել, աստառել, ասեղել, ասֆալտել, ավերակել, ամանել, արդուկել, արծաթել, արկղել, բետոնել, գդալել, գութանել, գրտնակել, թելել, էջել, խոլանակել, պարսպել* և այլն: Օրինակ՝ Պառավ Մարանը սրահում, թե՛ թոնրի մոտ *գրտնակում էր խմորը* (ՎԱ):

2.2. *Բան՝ «խոսք»* ձևույթով կազմված գրեթե բոլոր բայերը, ինչպես՝ *իմաստաբանել, լուսաբանել, մեկնաբանել, ոճաբանել, պարզաբանել, ստուգաբանել, տրամաբանել* և այլն: Օրինակ՝ *Լուսաբանել* է ստամբուլահայ համայնքի հասարակական-մշակութային *կյանքը* (ՀՄՅ, 7, 84):

2.3. Բարդ բայեր, որոնց կապակցելիությունը սեռի իրանիշ խնդիրների հետ տարբերվում է՝ ըստ բառաբաղադրիչների իմաստային յուրահատկությունների: Այսպես՝

ա) մի դեպքում առաջին պլան է մղվում անվանական բաղադրիչը. *աղ, աղք, աղյուս, արծաթ, արմատ, եյր, երկաթ, էջ, ծառ, կեղև, տարր* և մի շարք այլ իրանիշ թանձրացական գոյականներով բաղադրված բայերը աչքի են ընկնում իրանիշ խնդիր պահանջելու առանձնահատկությամբ, ինչպես՝ *աղապերծել, աղապրել, աղբահանել, աղյուսապատել, արդյունահանել, արծաթապոծել, արծաթաջրել, արմատահատել, գնապրել, գունափոխել, երաժաշտել, երակարել, էջադրել, էջանշել, էջաբաժանել, ծառապարդել, նկարապարդել, ծառահատել, ծաղկանկարել, կեղևապերծել, հնչյունափոխել, տարրապատել, տարրալուծել, ոսկեպոծել* և այլն: Օրինակ՝ Յնում Պարազվայի հնդկացիները *նախշապարդել* են կավե *իրերն ու հագուստը* (ՀՄՅ, 9, 183):

բ) Մյուս դեպքում առաջին պլան է մղվում բայական բաղադրիչը. մի շարք իրանիշ գոյականների հետ կապակցվող բայեր այդ հատկանիշը պահպանում են նաև իբրև բարդության գերադաս բաղադրիչ կիրառվելիս, ինչպես՝ *գործել, գծել, պատել* բայերը և նրանցով ձևավորված բարդությունները՝ *ասեղնագործել, արդյունագործել, ձեռագործել, սահմանագծել, կետագծել, ականապատել, անտառապատել, ապակեպատել, բետոնապատել, բրոնպապատել, ցինկապատել* և այլն: Այս բայերով կազմված բարդությունների գերակշիռ մեծամասնությունը, հատկապես՝ *պատել* բաղադրիչով կազմավորված բայերը, կապակցելիության ակնհայտ սահմանափակությամբ են օժտված: Օրինակ՝ Պետք է լավ բաղնիք կառուցել, խոհանոց, *ապակեպատել պատշգամբը* (ՄԽ):

3. *Սեռի կենդանանիշ խնդիր պահանջող միարժույթ բայեր*: Ի տարբերություն վերոնշյալ բայերի՝ անհամեմատ սակավադեպ են կենդանանիշ գոյական ուղիղ

⁵⁶⁰ Հ. Հարությունյանը տվյալ խոսքի մասի մեջ մտնող բառերի մի առանձին խմբին բնորոշ իմաստը կոչում է ներխոսքիմասային իմաստ և առանձնացնում է հայերենի բայերի իմաստային խմբեր՝ ասացական, մտածական, վերաբերմունքի, խնդրանքի, շարժման և այլն (տե՛ս Հ. Հարությունյան, Նշվ. աշխ.):

խնդիրներին կապակցվելու հնարավորություն ունեցող բայերը, ինչպես՝ *արածեցնել, ասպանդակել, բտել, գոմել, ընտելացնել, թամբել, թևատել, թևասրկել, թևահատել, լծել, կթել, հեծնել, մորթել, որսալ, սանձել, սատկացնել, փետրել, փետրատել* և այլն: Օրինակ՝ Բայց նրանցից քչերին հաջողվեց ձի հեծնել (ՄԽ):

4. *Սեռի բազմադաս խնդիրներ պահանջող միարժույթ բայեր:* Այս բայախմբերը, մյուս բայախմբերի հետ համեմատած, թվային գերակշռություն ունեն և աչքի են ընկնում կապակցական զանազան հնարավորություններով: Նրանց մի մասը կապակցելիության անսահմանափակություն է դրսևորում. կարող է կապակցվել սեռի բոլոր դասային խմբերի խնդիրների հետ՝ անձնանիշ, կենդանանիշ, իրանիշ, իսկ մյուս մասը սահմանափակություններ է դրսևորում՝ կապակցվելով երկու դասային խմբի սեռի խնդիրների հետ. մի դեպքում՝ անձնանիշ և կենդանանիշ, մյուս դեպքում՝ կենդանանիշ և իրանիշ, մեկ այլ դեպքում՝ անձնանիշ և իրանիշ:

ա) Բոլոր դասային պատկանելության խնդիրներ պահանջող միարժույթ բայեր: Սրանք համեմատաբար հաճախադեպ են քննվող բայերի շարքում, ինչպես՝ *աստել, արծակել, բարձրացնել, բերել, բռնել, բուժել, գիտենալ, զգել, երկրպագել, ընտրել, վննել, թաքցնել, թողնել, խոչընդոտել, ծաղրել, հարվածել, հավաքել, հիշել, կորցնել, ծածկել, սիրել, վառել, որոնել, տեղափոխել, փոխադրել, փոխել, ստուգել, վերցնել, վիրակապել, վտանգել, տանել, տնտղել, ուղարկել* և այլն: Օրինակ՝ Եվ աջ ձեռքը կրծքին դնելով՝ խոնարհվեց ու *երկրպագեց արևին...* (ՎԱ): Իմ ցույց տված միջոցի շնորհիվ մարդկությունը ոչ միայն կսկսի նորից *երկրպագել* ոսկյա *հորթին*, այլև կավելացնի իր մեջ չարությունը և ուժ կտա մեր շահագործության (ՎՓ): Իսահակն այդտեղ զոհասեղան շինեց ու *երկրպագեց Տիրոջը* (Հին կտակարան):

Ի տարբերություն վերոնշյալ բայերի՝ մի շարք բայեր էլ հնարավորություն ունեն կապակցվելու երկու դասային խմբերի հետ՝ առաջ բերելով տարբեր զուգորդումներ:

բ) Սեռի թե՛ անձնանիշ, թե՛ իրանիշ խնդիր պահանջող միարժույթ բայեր, ինչպես՝ *գովաբանել, դատապարտել, դրվատել, թովել, վարձացնել, պճնապարդել, տնօրինել, փառաբանել* և այլն: Օրինակ՝ Բաժակները լցրին և հայրենասիրական նոր ճառերով սկսեցին *փառաբանել հերոսներին* (ԱՍ): Նա *փառաբանել է* մայրական *սերը*, որն իր ժամանակի աշխարհայացքի բեկման դրսևորում էր (ՀՄՀ, 5, 421):

գ) Սեռի թե՛ անձնանիշ, թե՛ կենդանանիշ խնդիր պահանջող միարժույթ բայեր, որոնք, սակավաթիվ լինելով հանդերձ, իմաստային որոշակի ընդհանրությամբ են աչքի ընկնում. արտահայտում են այնպիսի գործողության գաղափար, որ բնորոշ է միայն շնչավոր գոյականներին, ինչպես՝ *անդամահատել, անդամատել, առողջացնել, արթնացնել, արյունասրկել, արյունաքամել, բեղմնավորել, բարկացնել, գիրացնել, գթալ, գլխատել, դնգատել, պայրացնել, թույնել, խաբել, խնամասրկել, նստեցնել, սպանել, վարակել, վախեցնել, վռնել, վապեցնել, քնեցնել, պառկեցնել* և այլն: Օրինակ՝ Գնաց Կարոն *կովին* թան խմացրեց, *վապեցրեց*, և կովը լավացավ (ՍԶ): Ես *երեխեքին* եղ աղջիկն ես ինչո՞ւ է *վապեցնում*, - ասացին նրանք (ՀՍ):

դ) Սեռի թե՛ կենդանանիշ, թե՛ իրանիշ խնդիր պահանջող միարժույթ բայեր: Այս բայերը անհամեմատ քիչ են, ինչպես՝ *բեռնավորել, բեռնել* և այլն: Օրինակ՝ *Բեռնել էին* նույնիսկ *կովերին, եպներին, երինջներին* (ՄԽ): Նրանք զբաղված էին *վագոն բեռնելով*, մեկը բերում էր ատաղձեղենը, իսկ մյուսը՝ դարսում (ԹԴ):

Ի տարբերություն ներգործական սեռի խնդրառությամբ միարժույթ բայերի՝ խնդրառությամբ երկարժույթ բայերի դեպքում տարբեր դասերի խնդիրների հետ կապակցական հնարավորություններն առավել մեծ են. երկարժույթ բայերի խնդրառությունը, սեռի խնդիրներից բացի, բնութագրվում է նաև առանձին հոլովաձևերով կամ կապերով արտահայտված բնության խնդիրների հետ կապակցելիությամբ օժտվածությամբ:

խնդրառույթամբ երկարժույթ ներգործական սեռի բայերը բաժանվում են մի քանի խմբի՝ ըստ իրենց հետ կապակցվող սեռի և բնության խնդիրների դասային պատկանելության.

1. Բայեր, որոնց թե՛ սեռի խնդիրն է անձնանիշ, թե՛ բնության խնդիրը, ինչպես՝ *ամուսնացնել, ախպերացնել, բարեկամացնել, հարապատասցնել* և այլն: օրինակ՝ Դավիթ-Բեկը *Մխիթարին ամուսնացրեց Սաթենիկի հետ* (ՍԽ):

2. Բայեր, որոնց թե՛ սեռի խնդիրն է իրանիշ, թե՛ բնության խնդիրը, ինչպես՝ *բազմապատկել, զուգորդել, լցունել, փքափորել, ճեղքել* և այլն: Օրինակ՝ Ապա իր *հաբանը լցրեց* Յոթնակնանի աղբյուրի սառը *ջրով* և վեր կացավ (ԽԴ): Մեքենայական թարգմանության *պրոցեսը* կարելի է *տրոհել 5 փուլի* (ՀՍՀ, 7, 501):

3. Բայեր, որոնց սեռի խնդիրը անձնանիշ է, բնության խնդիրը՝ իրանիշ, ինչպես՝ *անհանգստացնել, անմեղացնել, ապակողմնորոշել, կողմնորոշել, կաշառել, սրբաբարեցնել, հանդիմանել, մեղադրել, նախատել, պախարակել* և այլն: Օրինակ՝ Նա *մեղադրեց Սարոյին անպնկվության մեջ* (ՇԹ):

4. Բայեր, որոնց սեռի խնդիրը իրանիշ է, բնության խնդիրը՝ անձնանիշ: Այդ շարքում հատկապես ակտիվ են անձնանիշ ենթակա պահանջող ասացական, իմացական, մտածական, կամական և այլ բայեր, ինչպես՝ *ասել, աղաչել, աղերսել, առաջարկել, ապշեցնել, ապացուցել, բացատրել, գուժել, զեկուցել, զգուշացնել, իրապեկել, խոստովանել, կարդացնել, հարցնել, հաղորդել, հիշեցնել, հորդորել, հրահանգել, հայտնել, կարգադրել, մոռացնել, պատասխանել, պատմել, պարզաբանել, տեղեկացնել* և այլն: Օրինակ՝ Ես սկսեցի տաքացած *ապացուցել Շաքրոյին* իր մտադրության ամբողջ *անբարոյականությունը* (ՄԳ):

5. Բայեր, որոնց թե՛ սեռի, թե՛ բնության խնդիրները բազմադաս են, ինչպես՝ *առանձնացնել, ապահովագրել, ապահովել, բաժանել, բնութագրել, գերադասել, գերապանցել, պանապանել, սրկել, պատել, ժառանգել, կշտամբել, տարբերել, փոխարինել, փոխանցել, բռնագրավել, զանծել* և այլն: Այս բայերը հանդես են գալիս անձնանիշ, կենդանանիշ, իրանիշ սեռի և բնության խնդիրների դասային խմբերի հետ տարբեր զուգորդումներով, որոնք սովորաբար պայմանավորված են բայիմաստով: Օրինակ՝ ներգործական սեռի խնդրառույթամբ երկարժույթ *սրկել* բայի կապակցական հնարավորությունները:


Ներգործական սեռի բայերի՝ տարբեր դասային պատկանելությունն ունեցող խնդիրների հետ (թե՛ սեռի, թե՛ բնության) կապակցական հնարավորությունների քննությունը ցույց է տալիս, որ դրանք կապակցելական ավելի լայն հնարավորություններ ունեն բազմադաս, ապա իրանիշ, անձնանիշ ու կենդանանիշ խնդիրների հետ:

Խոսքային վերլուծությունները վկայում են, որ խնդիրների դասային սահմանափակումները վերաբերում են բառերի ուղղակի իմաստով կիրառություններին, քանի որ փոխաբերական իմաստով կիրառությունների դեպքում բառերի կապակցելիության հնարավորությունները սահմանափակումներ գրեթե չեն ունենում:

Խնդիր գոյականի դասանշությունը կախված է նաև ենթակայի դասանշությունից. մարդու գիտակցական, իմացական, մտավոր ու հոգեկան գործունեություն և, ընդհանրապես, անձի հատկանիշ արտահայտող բայերը, պատճառականի վերածվելով, պարտադիր պահանջում են անձնանիշ խնդիր լրացում (*ծիծաղեցնել, խոսեցնել, կարդացնել, երգեցնել, հասկացնել* և այլն):

Ելնելով խնդիր լրացման բովանդակությունից՝ կարող ենք նշել, որ ժամանակակից հայերենում իրանիշ գոյական-խնդիրների վերացականության և թանձրացականության սահմանները հստակ չեն, օրինակ՝ *իրականացնել ծրագիրը*: Տվյալ արտահայտության մեջ *ծրագիր* գոյականը առնչվում է վերացականությանը

այնքանով, որքանով որ այն դեռ չի իրականացել, և առնչվում է թանձրացականությանը այնքանով, որքանով այն պիտի իրականանա և գոյություն ունենա:



Ներգործական սեռի բայերի կապակցելիությունը տարբեր դասերի խնդիրների հետ, բայիմաստից բացի, հարաբերվում է նաև բայաստեղծին և բայակազմությանը: Այսպես՝ մի շարք բարդ բայերի կապակցական հնարավորությունների սահմանափակությունը կարող է պայմանավորված լինել ոչ թե նրա կազմում առկա բայի, այլ անվանական բաղադրիչի բառիմաստից. բազմադաս խնդիրներ պահանջող *դնել, պարզարել, գրկել, փոխել* բայերով կազմված բարդությունների հանդիպում ենք թե՛ իրանիշ (*եպրապարդել, կետադրել, տերևապրկել, գունավորիսել*), թե՛ անձնանիշ (*թագազարդել, պսակադրել, պաշտոնապրկել, պգեստափոխել*) խնդիրներ պահանջող բայերի շարքում:

Համառոտագրություններ

1. ՀՍՀ, 1 - Հայկական սովետական հանրագիտարան, հ. 1, 1974:
2. ՀՍՀ, 5 - Հայկական սովետական հանրագիտարան, հ. 5, 1979:
3. ՀՍՀ, 7 - Հայկական սովետական հանրագիտարան, հ. 7, 1981:
4. ՀՍՀ, 9 - Հայկական սովետական հանրագիտարան, հ. 9, 1983:
5. ԱՍ - Անահիտ Սահիլյան, ՉԲ - Չորի Բալայան, ԹԴ - Թեոդոր Դրայգեր, ԽԴ - Խաչիկ Դաշտենց, ՀՍ - Հրանտ Մաթևոսյան, ՄԳ - Մուշեղ Գալշոյան, ՇԹ - Շահեն Թաթիկյան, ՍԽ - Սերո Խանգաղյան, ՍՉ - Ստեփան Չորյան, ՎԱ - Վախթանգ Անանյան, ՎՓ - Վահրամ Փափազյան :

RELATIONSHIP POSSIBILITIES OF TRANSITIVE VERB-PRADICATE WITH NOUN-OBJECTS OF VARIOUS CLASS GROUPS

SILVA MURADYAN

Vanadzor State University named after H. Toumanyanyan,

PhD Student of the Chair of Armenian Language,

Vanadzor, Republic of Armenia

One of the most important issues in modern linguistics is the study of the relationship of words that is necessary from the point of view of speech teaching. Transitive verbs have various relationship possibilities with nouns as direct and indirect objects that indicate persons, animals, and inanimate objects as well as with multiclass nouns. The relationship of transitive verbs, besides the semantic peculiarities of the verb, is connected with the grammatical category of voice and verb formation. Part of the examined verbs reveals unlimited relationship possibilities whereas most of the verbs are linked only to nouns as direct and indirect objects belonging to a certain semantic group, which is due to the verb meaning or verb composition. The articulation analysis testifies that class limitation of objects is related to the direct use of words because, in the figurative meaning, the possibilities of connectivity of words do not have limitations.

Keywords: *nouns indicating persons, animals, inanimate objects, multiclass nouns, semantic and composition features, relationship limitation, unlimited relationship, verb valency.*

СОЧЕТАЕМОСТНЫЕ ВОЗМОЖНОСТИ ПЕРЕХОДНЫХ ПРЕДИКАТИВНЫХ ГЛАГОЛОВ С ИМЕННЫМИ ДОПОЛНЕНИЯМИ РАЗЛИЧНЫХ КЛАССОВЫХ ГРУПП

СИЛЬВА МУРАДЯН

соискатель кафедры армянского языка Ванадзорского

государственного университета имени О. Туманяна,

г. Ванадзор, Республика Армения

Одним из важнейших вопросов современной лингвистики является изучение связи слов, которая необходима с точки зрения обучения речи. Переходные глаголы используются в словосочетаниях с прямыми и косвенными дополнениями, выраженными существительными, обозначающими людей, животных, предметные реалии, а также с мультифункциональными существительными. Эти сочетания переходных глаголов, помимо семантических особенностей, связаны с грамматической категорией залога и образованием глагола. Таким образом, ограничения возможностей ряда сложных глаголов определяются не составным глаголом, а по значению номинального компонента. Часть изучаемых глаголов выявляют разнообразные сочетаемостные возможности, тогда как большинство глаголов связаны только с существительными определенной семантической группы, что обуславливается семантикой самих глаголов и их словообразовательными возможностями. В результате анализа речи выявлено, что классовое ограничение объектов связано с использованием сочетаний в прямом значении, так как в переносном значении сочетаемостные возможности слов не ограничены.

Ключевые слова: *антропонимы; существительные со значением предметных реалий; существительные, обозначающие животных; мультифункциональные существительные; семантические и образовательные особенности; сочетаемостные ограничения; сочетаемостная неограниченность; валентность глагола.*

ՀՈՎԻՏԱԿԱՆ ՎԱՆԱՆՆԵՐԻ «ԿԵՐԱԿՈՒՐ ՔԱՅԱՆԱՅԻՑ» ԳՈՐԾԸ*

ՅՏԴ 82.97:811.19

ՍԻՐԱՆՈՒՇ ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ

*ԳԱՄ Մ.Աբրեղյանի անվան գրականության ինստիտուտի ասպիրանտ,
բ.Երևան, Հայաստանի հանրապետություն
siranush.parsadanyan.2014@mail.ru*

Հայ կլասիցիզմի նշանավոր ներկայացուցիչներից մեկը՝ Հովհաննես Միրզայան Վանանդեցին (1772-1841 թթ.), հեղինակել է նաև քահանաների համար նախատեսված «Կերակուր քահանայից» գործը, որը ժամանակին մեծ տարածում է ունեցել և բազմիցս ընդօրինակվել թե՛ իր ժամանակակից, թե՛ հետագա գրիչների կողմից:

Հոդվածում անդրադարձ է կատարվում «Կերակուր քահանայից» երկի՝ հայկական միջավայրում տարածմանը, ցույց է տրվում, թե ինչ աշխատանք է կատարել Հովհ. Վանանդեցին՝ տեղայնացնելով այն հայ եկեղեցական միջավայրի համար:

Կատարվել է նաև կառուցվածքային վերլուծություն՝ գրքի յուրաքանչյուր բաժնի առանձին անդրադարձով:

Քանի որ երկը բավականաչափ հազեցած է մեքքերումներով, հոդվածում օրինակներով մանրամասն ցույց է տրվում նաև, թե ինչպես է հեղինակը կաթոլիկ եկեղեցու հայրերից բերած օրինակներին հավելում նաև հայ հոգևոր գործիչների դիտարկումները՝ փորձելով հնարավորինս հայացնել նյութը:

Հոդվածում նաև «Կերակուր քահանայից» երկի՝ Հովհ. Վանանդեցու խմբագրած տարբերակը համեմատվել է Աստվածատուր Չուղայեցու խմբագրած տարբերակի հետ:

Ի վերջո, հանգում ենք այն եզրակացությանը, որ «Կերակուր քահանայից» գրքի՝ Հովհ. Վանանդեցու խմբագրած տարբերակը՝ գրված գեղեցիկ ու գրագետ գրաբարով, ժամանակի կարևոր երկերից մեկն էր, որ մի աստիճան վեր բարձրացրեց հայ հոգևոր մտքի ընկալումը:

Բանալի բառեր՝ Հովհաննես Վանանդեցի, «Կերակուր քահանայից», Չմյուռնիա, խմբագրել, եկեղեցական, Վարդան Հունանյան, Աստվածատուր Չուղայեցի, կաթոլիկ:

Հովհաննես Միրզայան Վանանդեցին (1772-1841թթ.) հայկական կլասիցիզմի նշանավոր ներկայացուցիչներից է: Նա իրավամբ համարվում է հայ պոեզիայի հայրենասիրական, պատմաբաղաձայն ուղղության սկզբնավորողը: Նրա ներդրումը անգնահատելի է հատկապես Չմյուռնիայի հայ համայնքի կրթական գործում: Չմյուռնիայի Մեսրոպյան վարժարանում Հովհ. Վանանդեցին երկար տարիներ աստվածաբանություն ու հայկաբանություն է դասավանդել և տասնութ ու կես տարի ուսուցչություն անելուց հետո՝ 1822 թ.-ին, տեղի վերատեսուչ Փիլիպպոս արքեպիսկոպոսի հրամանով ձեռնադրվել սարկավագ, ապա քահանայի աստիճան ստացել և Ստեփանոս արքեպիսկոպոսի հորդորով մի առանձին գրքով, որ կոչվում է «Կերակուր քահանայից» (այսինքն՝ հոգևոր մտունդ քահանաների համար), բացատրել

* Հոդվածը ներկայացվել է 02.05.2019թ., գրախոսվել՝ 21.05.2019թ., տպագրության ընդունվել՝ 17.06.2019թ.:

քահանաների պարտականությունները⁵⁶¹: Հիշատակարանում նշված Ստեփանոս արքեպիսկոպոսը Չմյուռնիայի նվիրակ ու առաջնորդ Ստեփանոս Ենովթյան Թիֆլիզեցին է⁵⁶²:

Այդ գիրքը ժամանակին մեծ տարածում է ունեցել և ընդօրինակվել է թե՛ իր ժամանակակից, թե՛ հետագա գրիչների կողմից: Անգամ Հովհ. Վանանդեցին է մի քանի անգամ այն ընդօրինակել:

Այդ առիթով նկատված է մի հետաքրքիր փաստ. Հովհ. Վանանդեցու «Կերակուր քահանայից» գրքի չորս օրինակների հիշատակարաններում էլ գրիչը, որպես գրողական ժամանակ, նշում է 1822 թվականը, ընդ որում՝ սրանցից երկուսի դեպքում (Եղմ. ձեռ. 221, Արմաշ ձեռ. 136) համընկնում է նաև ձեռագրերի գրման ամսաթիվը՝ հունիսի 18: Ուսումնասիրությունները բացառում են այն հանգամանքը, որ սրանք կարող են միևնույն ձեռագիրը լինել⁵⁶³:

«Կերակուր քահանայից» երկը, ըստ աղբյուրագիտական տվյալների, Վարդան կրոնավորի կողմից թարգմանվել է լատիներենից, ապա Նորից շարադրվել Հովհ. Վանանդեցու կողմից: Այդ մասին հանգամանակից տեղեկություն է տալիս հեղինակը գրքի սկզբնամասում. «Ոչ միայն զշարադրութիւնս առաջին բանիցն փոփոխեցի, այլ եւ զբազում եւս Նոր վկայութիւնս եւ բացատրութիւնս եւ իմաստս իսկ 'ի Նոյն յաւելի' մինչև մարթ լինիլ ասել Նորոգ շարադրեալ, թեպէտ եւ հիմն եղեալ էր Նախագոյն»⁵⁶⁴: Այսինքն, Հովհ. Վանանդեցին կատարել է մի շարք փոփոխություններ, հավելումներ, հարմարեցրել այն մեր լեզվին, հայ եկեղեցական սովորույթներին ու ծեսերին, կարելի է ասել՝ տեքստին հայկական շունչ է հաղորդել:

«Կերակուր քահանայից» երկը երկար ժամանակ վերագրվել է կաթոլիկ եկեղեցու նշանավոր գործիչ Հովհաննես Բոնա (Յովհաննես Պոնա) կարդինալին: Երկի հեղինակային պատկանելության հարցը մինչ օրս էլ վերջնական լուծում չի ստացել⁵⁶⁵:

Հովհաննես Բոնա կարդինալին և Նրա երկերի հայերեն թարգմանություններին առաջին անդրադարձել է Աթանաս Տիրոյանը (Վենետիկի Մխիթարյան հայրերից): Իր հոդվածում «Կերակուր քահանայից» գրքի հեղինակային պատկանելության վերաբերյալ նա գրում է. «Այս գործը Կարդ. Բոնայի չի վերաբերիր, թեպէտև ճակատին վրայ դրոշմուած է «Հաւաքեալ ի գործոց Կարդ. Պոնայի, և թարգմանեալ ի լատինէ ի հայ բարբառ»: Գուցէ թէ հաւաքմունք մ' է ըստ իմաստից, այլ ոչ ըստ բանից կամ գլխոց. վասն զի այս գրքին մեջ գետեղուած գլխակարգութիւններէն և ոչ մին կը գտնուի Բոնայի գործերուն մէջ, և ոչ իսկ գրքին ընթացքին մէջ յիշուած է Բոնայի անունը, մինչդեռ իրենց յատուկ կոչումներով մէջ կը բերուին ստեպ վկայութիւններ Ս. Յովհ. Ոսկեբերանէ, Ս. Ազուստինոսէ, Ս. Բեռնարդոսէ, Ս. Կիպրիանոսէ և ուրիշ Ս. Հայրերէն և վարդապետներէն»⁵⁶⁶:

«Կերակուր քահանայից» երկը 1760թ. հրատարակվել է Վենետիկում Անտոնի Պոռթոլի տպարանում՝ տեր Աստվածատուր Ջուղայեցու կողմից (վերջինս նույնացված

⁵⁶¹ Տե՛ս **Կանայեանց Սո.**, Յուզակ հայերեն ձեռագրների Թիֆլիզի Ներսիսեան հոգեւոր դպրանոցի, Թիֆլիզ, 1893 թ., էջ 26:

⁵⁶² Տե՛ս **Ասատրյան Ա.**, «Հովհան Միրզայան Վանանդեցու ձեռագրական ժառանգությունը», «Էջմիածին» հանդես, 2018 թ., փետրվար, էջ 108-109:

⁵⁶³ Տե՛ս նույն տեղում, էջ 110:

⁵⁶⁴ **Միրզայան Հովհ. Վանանդեցի**, Կերակուր քահանայից, Էջմիածին, 1858 թ., էջ 1:

⁵⁶⁵ Տե՛ս **Հարությունյան Գ.**, «Հովհաննես Բոնա կարդինալին վերագրված «Կերակուր քահանայից» երկի հայերեն թարգմանությունը և Հովհաննես քին. Միրզայան Վանանդեցու խմբագրությունը», Երիտասարդական երրորդ գիտաժողովի զեկուցումներ, Երևան, 2018 թ., էջ 96-104:

⁵⁶⁶ **Տիրոյեան Ա.**, «Կարդինալ Բոնա և հայերը», «Բազմավեպ», Վենետիկ, թ. 5-6, 1910 թ., էջ 204-205:

Ե Աստվածատուր Բաբիկյանի հետ⁵⁶⁷): Այդ հրատարակության մեջ առհասարակ չի հիշատակվում Վարդան Յունանյանի անունը: Պատճառները կարող են տարբեր լինել, թեպետ չի բացառվում նաև, որ խմբագիրը միտումնավոր է լռություն պահպանել⁵⁶⁸:

Յ.Անասյանը, խոսելով 1760 թվականի հրատարակության մասին, այն կարծիքն է հայտնում, որ վերջինս պարզապես Վ. Յունանյանի թարգմանության վերախմբագրությունն է, որի լեզուն առավելապես լատինաբան է, իսկ խմբագրինը՝ սրբագրված ու կանոնավոր: Ըստ նրա՝ չի բացառվում նաև այն հանգամանքը, որ Աստվածատուր Ջուղայեցին խմբագրական աշխատանք կատարելիս օգտված լինի նաև երկի լատիներեն բնագրից⁵⁶⁹:

1841 և 1858թթ. «Կերակուր քահանայիցը» հրատարակվել է Ս. Էջմիածնում՝ ենթարկվելով որոշ կառուցվածքային փոփոխությունների՝ արդեն Յովհ. Վանանդեցու խմբագրությամբ:

Յովհ. Վանանդեցու խմբագրած տարբերակը բաղկացած է ընծայաբերությունից, «Յաղագս պատուոյ քահանայից» հատվածից, 18 (ժը) գլուխներից, 4 պրակներից և «Ազդեցութիւն հեղինակին առանց ինչ յաւելման» վերջնահատվածից, որն ամփոփում է երկը՝ կատարելով վերջաբանի դեր:

Ա.Տիրոյանը, խոսելով 1760 և 1841թթ. հրատարակությունների մասին, հանգում է հետևյալին. «Այս գրքիս առաջին տպագրութեան պարունակութիւնն թէ և բարի և շատ օգտակար, սակայն լեզուն աղաւաղ և անպետ. իսկ Ս. Էջմիածնի տպագրութիւնն բաւական ընտիր և մաքուր գրաբարով յարասութիւն մ՝ է, քան թէ առաջին թարգմանութեան կրկին տպագրութիւն»⁵⁷⁰:

Կառուցվածքային-բովանդակային տեսանկյունից համեմատելով «Կերակուր քահանայից» գրքի՝ Ա. Ջուղայեցու և Յովհ. Վանանդեցու խմբագրած տարբերակները՝ կարող ենք արձանագրել մի շարք տարբերություններ: Այսպես, Ա.Ջուղայեցու խմբագրած տարբերակը բաղկացած է քաներկու գլխից, «Վերջաբանութիւն» հատվածից, որին այնուհետև հաջորդում են Զրիստոսի հետ սրբուհի Բրիջիտայի «Խօսակցութիւնը» կամ «Յայտնութիւնը», ապա նաև հարց ու պատասխանի ոճով անդրադարձ է կատարվում ծիսական մի շարք թեմաների «Յաղագս խորհրդոց», «Յաղագս խորհրդոյ կարգի առ հասարակ», «Յաղագս իւրաքանչիւր աստիճանաց կարգի», «Յաղագս ամենասուրբ պատարագի և խորհրդոյ հաղորդութեան մարմնոյ և արեան Տեան», «Յաղագս եկեղեցականաց բանադրանաց» գլուխներում⁵⁷¹:

Արդեն նշվեց, որ Յովհ. Վանանդեցին կատարել է հավելումներ: Մասնավորապես գրքում զետեղված չորս պրակները ենթադրվում են Յովհ. Վանանդեցու կողմից ավելացված⁵⁷²:

«Կերակուր քահանայից» գիրքը նախատեսված է եղել քահանաների համար և հիմնականում ուղեցույցի դեր է կատարել: Այն բավականաչափ հագեցած է մեջբերումներով, որոնք առավելապես բաղված են Աստվածաշնչից⁵⁷³ և Սուրբ Յովհան Ոսկեբերանի ճառերից⁵⁷⁴, չնայած քիչ չեն հիշատակվում նաև Սուրբ Ամբրոսիոսի⁵⁷⁵, Օգոստինոսի⁵⁷⁶, Բեռնարտոսի⁵⁷⁷, Յերոնիմոսի⁵⁷⁸ և կաթոլիկ այլ սրբերի անունները:

⁵⁶⁷ Տե՛ս Անասյան Յ., Հայկական մատենագիտություն Ե-ԺԸ դդ., հ. Գ, Երևան, 2004 թ., էջ 96:

⁵⁶⁸ Տե՛ս Հարությունյան Գ., նշվ. աշխ., էջ 100:

⁵⁶⁹ Տե՛ս Անասյան Յ., նույն տեղում:

⁵⁷⁰ Տիրոյան Ա., նշվ. աշխ., էջ 205:

⁵⁷¹ Տե՛ս Ջուղայեցի Ա., Կերակուր քահանայից, Վենետիկ, 1760 թ., էջ 97-147:

⁵⁷² Տե՛ս Հարությունյան Գ., նշվ. աշխ., էջ 104:

⁵⁷³ Տե՛ս Միլոզայան Յովհ. Վանանդեցի, նշվ. աշխ., էջ 27-28:

⁵⁷⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 7:

⁵⁷⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 18-19:

⁵⁷⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 21:

Գրքում խոսվում է քահանաների մասին առհասարակ, նրանց ստանձնած դերի կարևորության, պարտականությունների, նրանց առջև ծառայած խնդիրների, ինչպես նաև՝ պատարագի անցկացման կարգի, պատարագի կյուբի և այլ կարևոր հարցերի շուրջ:

Ինչո՞ւ է Յովի. Վանանդեցին փոխադրելիս ընտրել «Կերակուր քահանայից» վերնագիրը: Պատասխանը տալիս է դարձյալ հեղինակը երկի առաջամասում. «Ապա զի՞նչ այլ ինչ աղաւաղիչ կայցէ բարեկարգութեան քան զհպատակացն չբերիլ հնազանդութեամբ յօրինաւոր հրամանս վեհագունից: Վասն այնորիկ եւ նուաստախոհ անձինս փրկութեան յԱռաքելաշունչն հրամանէ սրբազնութեան ձեր 'ի յարդարումն բանիս կոչեցեալ՝ մանաւանդ 'ի կատարումն հրամանաց քան 'ի տկարութիւն մտացս հայելով՝ յանձն առի զտետրակս զայս կերակուր քահանայից անուանել 'ի յստակ ոճ հայկական լեզուի յարմարագրել, զոր Վարդան ոմն արեղայ թարգմանեալ էր յառաջագոյն 'ի լատին լեզուէ»⁵⁷⁹: Սակայն այդ հիմնավորումը կարող է տարակարծության տեղիք տալ. արդյո՞ք «Կերակուր քահանայից» վերնագիրը պատկանում է Յովի. Վանանդեցուն: Այնուամենայնիվ, չպետք է մոռանալ, որ Ա.Չուղայեցու կողմից թարգմանված և խմբագրված տարբերակը ևս նույն վերնագիրն է կրում: Այդ առիթով էլ կարելի է հավելել, որ ուսումնասիրությունների արդյունքում Յովի. Բոնայի երկերի շարքում գոնե նման խորագրով կամ գլխաբաժանումներով երկ չի հայտնաբերվել⁵⁸⁰:

Յովի. Վանանդեցու հիշատակած Վարդան արեղան նույն ինքը Վարդան Յունանյանն է, որը ժամանակի խոհեմ ու գիտակ հոգևորականներից էր⁵⁸¹: Նա կատարել է մի շարք թարգմանություններ, որոնցից ամենատարածվածը հենց այս գիրքն է, ինչպես նաև Յովիաննես Բոնայի հեղինակած «Ձեռքածութիւն յերկինս» երկը (1674 թ.)⁵⁸²:

Առաջին գլխում, որ վերնագրված է «Թե արքայական է քահանայական պատիս», խոսվում է քահանաների մեծության և նրանց կատարելիք բացառիկ առաքելության մասին մեծ հավատով ու վստահությամբ: Յեղիակը համոզված է՝ քահանաները մեծ առաքելություն ունեն կատարելու. «Բայց դուք քահանայք տեսն կոչիջի՞ք, եւ պաշտօնեայք Աստուծոյ մերոյ անուանեսջի՞ք, զգօրութիւնս ազգաց կերիջի՞ք, եւ մեծութեամբ նոցա սքանչելի լինիջի՞ք»⁵⁸³:

Յովի. Վանանդեցին բարձր է գնահատում քահանաների կատարած դերը ժողովրդի կյանքում: Վերոնշյալ գլխում նա օրինակներ է բերում Աստվածաշնչի երկրորդ Օրինաց գրքից՝ ցույց տալով քահանաների մեծությունը և նրանց կատարած դերի կարևորությունն ու արժեքը: Բոլոր ժամանակներում քահանաները կարևոր մարդիկ են եղել, ուստի հնում բազում գավառների դատավորները հաճախ հենց քահանաներն էին: Յովի. Վանանդեցին վկայակոչում է աստվածաշնչյան հատվածը. «Վասն որոյ եւ հրամայէր Աստուած իսրայելացւոց Բ Օրինաց. ԺԵ 9: Երթայցես առ քահանայսն եւ քննեալ պատմեսցես քեզ զդատաստանն եւ արասցես ըստ հրամանին, զոր պատմեսցես քեզ»⁵⁸⁴:

Երկրորդ գլխում, որը կրում է «Թե քահանայք գեր 'ի վերոյ են քան զմարդիկ. եւ են

⁵⁷⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 28:

⁵⁷⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 7-8:

⁵⁷⁹ Նույն տեղում, էջ 1:

⁵⁸⁰ Տե՛ս **Հարությունյան Գ.**, նշվ. աշխ., էջ 104:

⁵⁸¹ Տե՛ս **Ռոշթա Ստ.**, ժամանակագրութիւն կամ տարեկանք եկեղեցականք, Վիեննա, 1964 թ., էջ 198:

⁵⁸² Այս մասին մանրամասն տե՛ս **Դևրիկյան Վ.**, Հայ գիրքը աշխարհի խաչմերուկներում, մասն Բ, Երևան, 2014 թ., 181-194:

⁵⁸³ **Միրզայան Յովի. Վանանդեցի**, նշվ. աշխ., էջ 3-4:

⁵⁸⁴ Նույն տեղում:

հրեշտակք» ենթավերնագիրը, խոսվում է այն մասին, որ քահանաները սովորական, շարքային մահկանացուներից մի քանի աստիճան վեր են կանգնած և նույնիսկ հավասար են հրեշտակներին: Վկայակոչվում է Սուրբ Գրքի Յովհաննու ավետարանի Ժե գլխի 17-րդ համարը. «Դուք ո՛չ էք յաշխարհե, այլ ես ընտրեցի զձեզ յաշխարհե»⁵⁸⁵: Քահանաներին հրեշտակների հետ են համեմատել Յովհան Ոսկեբերանը, Պողոս առաքյալը, Յերոնիմոսը:

Եթե շարքային մահկանուցուներին հատուկ է մեղք գործելը և ապաշխարելով կարող են թողություն ստանալ, ապա քահանաների գործած մեղքերը Աստծու կողմից դժվարությամբ են ներվում, քանի որ այդ հանցանքները շատ են վշտացնում Բարձրյալին: Այսինքն՝ քահանաներն իրենց հոգու փրկության համար ավելին են վճարում: Յեղիակը վկայակոչում է Օգոստինոսին. «Որք անարժանութեամբ զՔրիստոս պատարագեն, որ թագաւորե այժմ յերկինս, ծանրագոյն ևս մեղանչեն, քան զայնոսիկ, որք խաչեցին զնա մինչ շրջեր 'ի յերկրի'»⁵⁸⁶:

Թերևս ամենահետաքրքրականը գրքում գետնոված չորս պրակներն են, որոնք վերաբերում են պատարագի մատուցմանը, պատարագի մատուցման ժամանակ առաջացած թերություններին, պատարագի նյութին, վերջինիս պակասությանը, պատարագը մատուցող քահանային, նրա թերություններին:

Սուրբ պատարագի խորհուրդը պահանջում է ամբողջականություն և ամենայն կատարելություն բոլոր առումներով. «Վասն այնորիկ հարկաւոր են մատակարարքն ամենազգաստ արթնութեամբ փոյթ յանձին ունիլ, զի մի՛ թերութիւն ինչ կամ արատ պակասաւորութեան զմաքրագործ շնորհս նորա նուագեսցուցէ, կամ իսպառ իսպանեսցէ»⁵⁸⁷:

Սուրբ պատարագի նյութը ցորենի հացն է ու անապակ գինին: Եթե հացը պակասություն է անում և, հնարավոր է, չբավարարի, կարելի է փոխարինել հաճարի, գարու, անգամ՝ կորեկի հացով: Իսկ եթե ցորենի հացը բավարար է, բայց ապականված է, խառնված է մեղրի, յուղի հետ կամ բավարար չափով եփված չէ, կամ էլ գուցե՝ արևից չորացած, հետևաբար չպետք է մատուցել պատարագը այդպիսի անմաքուր նյութով: Այն քահանան, որ կհանդգնի, այնուամենայնիվ, պատարագը մատուցել անմաքուր նյութով, նզովվյալ կլինի⁵⁸⁸: Նաև անընդունելի է նշխարի այլուրը թրջել վարդաջրով կամ այլ հեղուկով՝ հետևելով լատինական եկեղեցիների օրինակին: Քահանայի կողմից կոպիտ սխալ կլինի, եթե նման դեպքերում չկողմնորոշվի և չիմանա ինչպես վարվել:

Իսկ եթե, օրինակ, նշխարը անարատ է, բայց մկրտության ժամանակ քահանան հայտնաբերում է, որ մուկ է անցել վրայով, ապա պետք է ամեն դեպքում ավարտին հասցնի պատարագը և ապա երեք շաբաթ, կանոնի համաձայն, պատիժ կրի: Իսկ եթե նախապես տեղյակ է լինում և անփութորեն մատուցում է պատարագը, մի ամբողջ տարի պետք է ապաշխարի՝ թողություն խնդրելով անփութության համար⁵⁸⁹: Գինին պետք է լինի անխառն, անապակ, չի կարելի նրան ջուր կամ քացախ խառնել:

Իսկ պատարագը, ըստ եկեղեցական կարգի, կարող է մատուցել միայն ճշմարիտ ու օրինավոր քահանան, որ չլինի անգործույթ կամ բանադրված և կարողանա արժանավոր կերպով մատուցել սուրբ պատարագը:

Գիրքը եզրափակվում է «Առ ազդեցութիւն հեղինակին առանց ինչ յաւելման» վերնագիրը կրող ազդեցիկ հատվածով, որտեղ կոչ է արվում քահանաներին բարելավել իրենց հոգևոր վիճակը, ապրել մաքրագույն կյանքով, լինել ճշմարիտ, առաքինի օրինակ ժողովրդի համար, մնալ իրենց կոչմանը հավատարիմ, երբեք չուրանալ այն զոհը, որ

⁵⁸⁵ Նույն տեղում, էջ 5:

⁵⁸⁶ Նույն տեղում, էջ 38:

⁵⁸⁷ Նույն տեղում, էջ 89-90:

⁵⁸⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 92-93:

⁵⁸⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 94-95:

կատարեց Փրկիչը իր հոտի համար. «Ծանի՛ր ապա զվիճակ քո մաքրագոյն, թէ յո՞րպիսի պատիւ ճոխացար, զի զոր կոյսն երանեալ ամենասուրբ մայրն Մարիամ մի անգամ և եթ՝ ծնաւ, դու ինքն քանիցս անգամ եւ պատարագես, բանիւ զնոյն կատարես, իբրև 'ի սեղանոյ վայելես, եւ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի մարմնովն եւ արեամբ կերակրիս»⁵⁹⁰:

Ինչպես նշվեց, Յովհ. Վանանդեցին փորձել է գրքին հայկական շունչ հաղորդել: Այսպես, քիչ չեն այն հատվածները, որոնցում հեղինակը, տարբեր առիթներով վկայակոչելով կաթոլիկ հայրերին, հղում է կատարում նաև հայ եկեղեցու երախտավորներին: Առավելապես հիշատակվում է Ներսես Շնորհալին, թեպետ հաճախ են մեջբերվում նաև Գրիգոր Նարեկացին, Յովհաննես Իմաստասերը, Սարգիս Շնորհալին: Ահա հեղինակը, քննադատելով քահանաների անգիտությունը և հիշատակելով կաթոլիկ եկեղեցու հայրերին, հղում է կատարում նաև Ն. Շնորհալուն. «Լսեմք՝ ասե սուրբն Ներսես Շնորհալին, զոմանց սուտ քահանայից, զի ո՛չ յայլ ուսմանէ են տգետ յաղագս յեղգութեան, մանաւանդ թէ վասն անհաւատութեան, այլ եւ զաղմուսն Դավթի ո՛չ զիտեն բովանդակ»⁵⁹¹: Պատարագին նվիրված պրակներից մեկում հիշատակվում է Ս. Գրիգոր Նարեկացին. «Արդ՝ նախ չէ՛ կարելի մատուցումն պատարագի արտաքոյ սուրբ եկեղեցոյ եւ ո՛չ 'ի յեկեղեցի՝ որ ո՛չ օծեալ իցէ, եւ չունիցի զբեմ եւ զօծեալ վեմ, զի արդարև հերքի այր ըստ օրինի, որ արտաքոյ Սուրբ եկեղեցոյ մատուցանէ զՍուրբ պատարագն ըստ Սրբոյն Գրիգոր Նարեկացոյն»⁵⁹²:

Այսպիսով՝ «Կերակուր քահանայից» երկի՝ Յովհ. Վանանդեցու խմբագրած տարբերակը ժամանակի լայն տարածում գտած երկերից է, որ, գրված լինելով գեղեցիկ ու ականջահաճո գրաբարով, մի աստիճան վեր բարձրացրեց հայ հոգևոր մտքի ընկալումը:

«KERAKUR K'AHANAYIC» («FOOD FOR PRIESTS») BY HOVHANNES VANANDETSI

SIRANUSH PARSADANYAN

*PhD student of Institute of literature after M. Abeghian of NAS of RA,
Yerevan, Republic of Armenia*

Hovhannes Mirzayan Vanandetsi, one of prominent Armenian classics representatives, also wrote «Food for priest» for priests, which once was very popular and it was used both by contemporaries and by further writers.

The propagation of the novel «Food for priest» in Armenia is reflected in the article. It also illustrates the work Hovhannes Mirzayan Vanandetsi undertook informing the Armenian religious leaders about it.

A structural analysis was also undertaken, referring separately to each Chapter of the book.

The novel is rather full of references; the fact that the author added Armenian clergymen's views to the samples of catholic Armenians trying to make the content as Armenian as possible is thoroughly described.

«Food for priest» edited by Hovhannes Mirzayan Vanandetsi was also compared with the version edited by Astvatsatur Julayec'i.

⁵⁹⁰ Լույս տեղում, էջ 112:

⁵⁹¹ Լույս տեղում, էջ 53:

⁵⁹² Լույս տեղում, էջ 107:

Eventually we can conclude that «Food for priest» edited by Hovhannes Mirzayan Vanandetsi, written in nice and intelligent old Armenian is one of the main novels of the time, which put the perception of Armenian spiritual thought on a higher level.

Keywords: Hovhannes Vanandetsi, «Food for priest», Smyrna, edit, clergyman, Vardan Hunanyan, Astvatsatur Julayec'i, catholic.

РАБОТА ОВАНЕСА ВАНАНДЕЦИ «ПИЩА ДЛЯ СВЯЩЕННИКОВ»

СИРАНУՍՍ ՓԱՐՏԱԴԱՆՅԱՆ

*аспирант института литературы имени М.Абебяна НАН РА,
г.Ереван, Республика Армения*

Один из видных представителей армянского классицизма Ованнес Мирзаян Ванандеци (1772-1841) также является автором работы «Пища для священников», которая в свое время имела большой резонанс и служила примером как для современников, так и последующих авторов.

В статье описывается распространение произведения «Пища для священников» в армянской среде и, в частности, говорится о том, какую деятельность развернул сам Ованнес Ванандеци в деле информирования о нем армянских религиозных деятелей.

Нами был совершен еще и структурный анализ, отдельно ссылаясь на каждую главу книги.

В произведении достаточно много ссылок и на конкретных примерах продемонстрировано, как автор дополняет приводимые примеры отцов католической церкви наблюдениями армянских религиозных деятелей, пытаясь по возможности приблизить тему к армянским реалиям.

В статье также проводится сравнение между редакциями произведения «Пища для священников» Ованнеса Ванандеци и Аствацатура Джугаеци.

В конечном итоге, мы приходим к мнению, что «Пища для священников» под редакцией Ованнеса Ванандеци, написанная на правильном и великолепном грабаре, является одним из важнейших произведений своего времени, которое поставило восприятие армянской духовной мысли на ступень выше.

Ключевые слова: *Ованнес Ванандеци, «Пища для священников», Смирна, редактировать, церковный, Вардан Унанян, Аствацатур Джугаеци, католический.*

ՊԱՏՈՒԹՅՈՒՆ, HISTORY, ИСТОРИЯ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՅԱՌԻ ԳՐԱՍԵՆՅԱԿՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ (1923-1927ԹԹ.) *

ՀՏԴ 93/94(479.25)

ԳՐԻԳՈՐ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

ԱԵԳՄՍ անդամ, ԵՊՀ միջապագային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի դոցենտ, պատմական գիտությունների թեկնածու, ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն grigorbalasanyan@mail.ru

Խորհրդային Ռուսաստանի հետ առևտրատնտեսական հարաբերությունները մեծապես նպաստեցին Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության (այսուհետ՝ ՀՍԽՀ) տնտեսության զարգացմանը, ինչն իր հերթին դրական ազդեցություն ունեցավ հանրապետության ազգաբնակչության սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման վրա: Արխիվային փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ խորհրդային հանրապետություններից հատկապես ակտիվ էին Ռուսաստանի Սոցիալիստական Դաշնային Խորհրդային Հանրապետության (այսուհետ՝ ՌՍԴԽՀ) հետ խորհրդային Հայաստանի առևտրական կապերը: Հետազոտությունը ցույց է տալիս, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում Հայաստանի իշխանությունների քանքերը՝ ուղղված հայ-ռուսական առևտրատնտեսական առնչությունների զարգացմանը, հիմնականում պսակվեցին հաջողությամբ: Այդ գործում անուրանալի դերակատարում ունեցավ Հայառը, որի բաժանմունքները ողջ Ռուսաստանի տարածքում օրնիբուն տքնաջան աշխատում էին՝ Հայաստանը առաջին հերթին հացահատիկով և այլ անհրաժեշտ ապրանքներով ապահովելու համար: Այդ գործում ակտիվ մասնակցություն ունեցավ նաև ՌՍԴԽՀ-ում խորհրդային Հայաստանի լիազոր ներկայացուցիչ Սահակ Տեր-Գաբրիելյանը, որ մեծ հեղինակություն ուներ ռուսաստանյան կառավարող շրջանակներում և մեծապես նպաստում էր այս կամ այն հարցը օպերատիվ կերպով կարգավորելուն:

Բանալի բառեր՝ ՀՍԽՀ, ՌՍԴԽՀ, Մոսկվա, Սահակ Տեր-Գաբրիելյան, Հայառ, առևտրատնտեսական հարաբերություններ, բաժանմունք, հացահատիկ:

Ուսումնասիրության ժամանակագրական շրջանակների ընտրությունը պատահական չէ: 1923թ.-ը պայմանավորված է ԽՍՀՄ-ին խորհրդային Հայաստանի անդամակցության առաջին տարով, իսկ 1927թ.-ը պայմանավորված է այն հանգամանքով, որ մինչև 1927թ.-ը Անդրկովկասում գոյություն ուներ արտաքին առևտրի ժողովրդական կոմիսարիատ, իսկ «1927թ. այն վերածվում է ԽՍՀՄ արտաքին առևտրի անդրկովկասյան լիազորության՝ երկրամասի մնացած ժողովմատներին հավասար իրավունքներով»⁵⁹³:

* Հոդվածը ներկայացվել է 30.04.2019թ., գրախոսվել՝ 07.06.2019թ., տպագրության ընդունվել՝ 17.06.2019թ.:
⁵⁹³ Գրաբսկի Հ., Անդրկովկասի արտաքին առևտրական կապերի զարգացումը Անդրֆեդերացիայի ժամանակ (1922-1936թթ.), «Լրաբեր հասարակական գիտությունների», № 9, 1968, էջ 62:

1921թ.-ի դեկտեմբերի վերջերից Ս.Տեր-Գաբրիելյանը ՀՍԽ՜՜ լիազոր ներկայացուցիչն էր Մոսկվայում⁵⁹⁴: Խորհրդային Հայաստանի՝ ԽՍՀՄ կազմի մեջ մտնելուց հետո էլ նա շարունակում է պաշտոնավարել՝ միաժամանակ մնալով նաև ՀՍԽ՜՜ Տնտեսական խորհրդի ներկայացուցիչը Մոսկվայում: Ս. Տեր-Գաբրիելյանը աչքի էր ընկնում աշխատասիրությամբ, եռանդուն գործունեությամբ, սկսած գործն ավարտին հասցնելու վճռականությամբ: Միաժամանակ իր գործունեությամբ նա չափազանց խիստ էր, ինչն ուղղված էր ընդհանուր գործի հաջողության ապահովմանը: 1923թ.-ի հունվարին Ս.Տեր-Գաբրիելյանը կանոնակարգ է ուղարկում ՌԽՖՍ՜՜ տարբեր շրջաններում ՀՍԽ՜՜ Տնտեսական խորհրդի ներկայացուցչությունների դեկլարաներին: Կանոնակարգը բաղկացած էր ութ կետից, որոնցում նշված էին այն հիմնական սկզբունքները, որոնց պետք է հետևելն բոլորը գործունեություն ծավալելիս⁵⁹⁵:

1923թ.-ի հունվարի 3-ին Սահակ Տեր-Գաբրիելյանը 9 կետից բաղկացած լիազորագիր է տալիս Գուրգեն Աթաբեկովին առ այն, որ նա Ս.Տեր-Գաբրիելյանի կողմից նշանակվում է Ստավրոպոլում որպես իր ներկայացուցիչ: Աթաբեկյանն իրավունք էր ստանում Տնտեսական խորհրդի անունից Ստավրոպոլում բացել առևտրական գրասենյակ, ունենալ պահեստներ, աշխատանքի ընդունել ու ազատել աշխատողներին⁵⁹⁶:

Բացի այդ 3 ամիս ժամկետով՝ մինչև մայիսի 1-ը, Ս.Տեր-Գաբրիելյանը լիազորագիր է տալիս մեկ այլ քաղաքացու՝ Եղիազար Եղիազարյանին առ այն, որ նա իրավունք է ստանում վարելու ՀՍԽ՜՜ տնտեսական ու առևտրական գործերը ՌԽՖՍ՜՜ ողջ տարածքում: Նա իրավունք էր ստանում պետական հիմնարկ-ձեռնարկությունների ու անհատների հետ կնքել տարատեսակ պայմանագրեր ու համաձայնագրեր, բացել ու փակել առևտրական գրասենյակներ, կանխիկ ու ապառիկ կերպով առևտուր իրականացնել, ձեռք բերել ու վարձակալել ձեռնարկություններ և այլն⁵⁹⁷:

Եղիազարյանը ջանասիրությամբ գործի է անցնում և կարճ ժամանակ անց՝ 1923թ.-ի փետրվարի 6-ին, «Նովոռոսցեմենտի» մոսկովյան ներկայացուցիչ Սերգեյ Ուսպենսկու հետ ցեմենտի գնման վերաբերյալ պայմանագիր է ստորագրում, որը բաղկացած էր 16 կետից: Պայմանագրով հայկական կողմը գնում էր 10.000 տակառ (100.000 փուլ) պոռտլանդ ցեմենտ, որի մեկ տակառ ցորենի գինը սահմանվում էր 4 ռուբլի ոսկով: Պայմանագիրը կազմվում էր 2 օրինակից. բնօրինակը գտնվելու էր ՀՍԽ՜՜ լիազոր ներկայացուցչությունում, իսկ կրկնօրինակը՝ Սերգեյ Ուսպենսկու ձեռքին⁵⁹⁸:

Տնտեսական խորհրդից բացի ՌԽՖՍ՜՜ տարբեր շրջաններում ու նահանգներում ակտիվ գործունեություն էր ծավալել նաև Հայպետառը⁵⁹⁹, որը Տնտեսական խորհրդին զուգահեռ ամեն ջանք գործադրում էր Խորհրդային Հայաստանը հացահատիկով և առաջին անհրաժեշտության ապրանքներով ապահովելու համար:

Դեռևս 1922թ.-ի դեկտեմբերի 29-ին Հայառի Վարչությունը լիազորագրով Սահակ Տեր-Գաբրիելյանին նշանակում է այդ պաշտոնում: Նրա նշանակումով պարզ էր դառնում, որ ամենից ակտիվը պետք է լիներ հենց Մոսկվայի գրասենյակը, քանի որ գտնվելու էր Տեր-Գաբրիելյանի ամենօրյա հսկողության տակ: Ստանալով լիազորագիրը և համապատասխան վկայականը՝ Տեր-Գաբրիելյանը գործի է անցնում և արդեն մի քանի օր հետո՝ 1923թ.-ի հունվարի 10-ին, նրա հետ կապ է հաստատում ռուսական «Մետալլամպ» գործարանի տնօրենը՝ առաջարկելով համագործակցել: Իր նամակում տնօրենը ներկայացնում է այն ամբողջ ապրանքատեսականին, որ արտադրվում է

⁵⁹⁴ Այդ մասին տե՛ս **Բալասանյան Գ.**, Մոսկվայում ՀՍԽ՜՜ լիազոր ներկայացուցչության առևտրատնտեսական գործունեության պատմությունից, «Բանբեր Երևանի Համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն», 131.6, Ե., 2010:

⁵⁹⁵ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 554, ց. 1, գ. 24, թ. 1:

⁵⁹⁶ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 554, ց. 1ա, գ. 4, թ. 13:

⁵⁹⁷ Տե՛ս Նույն տեղը, թ. 32:

⁵⁹⁸ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 554, ց. 1ա, գ. 5, թ. 3-4:

⁵⁹⁹ Հայպետառը 1923թ.-ի փետրվարի 10-ին վերանվանվում է Հայառ:

իրենց գործարանում, բացի այդ նշում է, որ քանի որ իրենց գործարանը պետական է, ապա առաջին հերթին իրենք կատարում են պետական հաստատությունների պատվերները: Վերջում տևողունը Տեր-Գաբրիելյանին խնդրում է անհրաժեշտության դեպքում կապվել իրենց հետ՝ տեղում նմուշների ծանոթանալու համար⁶⁰⁰:

Հայպետառի բաժանմունքներից ակտիվությամբ աչքի էր ընկնում Ստավրոպոլի երկրամասի բաժանմունքը, որի ղեկավարը 1923թ.-ի սեպտեմբերից նոյեմբեր ամիսներին Ավագյանն էր: Ստավրոպոլի բաժանմունքի գրասենյակը գտնվում էր Արմավիր քաղաքում «Ֆրանսիա» հյուրանոցում: Ավագյանն ակտիվ աշխատանք էր տանում Ստավրոպոլի երկրամասում հատկապես ցորեն ու այլուր ձեռք բերելու և այն երկաթուղիով Երևան ուղարկելու համար: Այդ գործն իրականացնելու համար Ստավրոպոլի բաժանմունքը պատվեր էր ստացել ՀՍԽՅ Պետբանկից, սակայն գործի իրականացման համար մեծ խոչընդոտ էր երկաթգծի կայարանում վազոնների սակավությունը և ՀՍԽՅ Պետբանկի կողմից հատկացվող միջոցների սղությունը:

Հայպետառի Ստավրոպոլի բաժանմունքի ղեկավարության ակտիվ գործողություններից հետո սայլը տեղից շարժվում է: Նրանց հաջողվում է որոշ քանակությամբ հացահատիկ հանձնել երկաթուղուն՝ Երևան ուղարկելու համար: Այդ մասին հոկտեմբերի 4-ին ՀՍԽՅ Պետբանկին ուղարկած իր հեռագրում հայտնում է Մկրտիչևը՝ նշելով, որ մինչև հոկտեմբերի 1-ն իրենց հաջողվել է երկաթուղուն հանձնել 20.000 փուլ հացահատիկ: Մկրտիչևը հայտնում է նաև, որ հոկտեմբերի 4-ին կոոպերատիվների միջոցով իրենց հաջողվել է 1 փուլ ընդ 72 կոպեկով ձեռք բերել ևս 25.000 փուլ հացահատիկ⁶⁰¹: Նոր ձեռք բերված հացահատիկի մասին հայտնվում է նաև Հայառի Մոսկվայի բաժանմունքին⁶⁰²:

Հացահատիկի ձեռքբերման և Հայաստան ուղարկելու աշխատանքները հաջողությամբ շարունակվում են նաև հոկտեմբերի վերջին և նոյեմբեր ամսվա առաջին կեսին: Հաճախ օգտագործելով նաև անձնական կապերը՝ Հայառի Ստավրոպոլի բաժանմունքի ղեկավարներին հաջողվում էր ցորեն ու այլուր ձեռք բերել շուկայականից ցածր գներով:

ՀՍԽՅ Պետբանկի կողմից սահմանափակ դրամական միջոցների տրամադրումը մեծապես ազդում էր դեպի Հայաստան հացահատիկի առաքման ծավալների վրա: Բացի այդ, այն կազմակերպություններն ու կոոպերատիվները, որոնցից Հայառի Ստավրոպոլի բաժանմունքը հացահատիկ էր գնում, այլևս հրաժարվում էին առանց կանխիկ գումարի ցորեն տրամադրել: Այդ մասին նոյեմբերի 2-ին Ավագյանին հղած հեռագրում հայտնում էր Մկրտիչևը: Ըստ նրա՝ ցորենի գնումն ընդհանրապես դադարեցված էր գումարի բացակայության պատճառով: Բացի այդ, գումարը չէր բավականացնում նույնիսկ նախորդ պայմանագրերի վճարման համար⁶⁰³:

ՌԽՖՍՀ տարբեր շրջաններում գործող Հայառի բաժանմունքներն իրենց գործունեության վերաբերյալ ժամանակ առ ժամանակ պետք է հաշվետվություն ներկայացնեին նահանգային տարբեր մարմիններին: Նոյեմբերի 2-ին Մկրտիչևը հեռագրում է հացահատիկի գների կարգավորման նահանգային հանձնաժողովին և հայտնում, որ մինչև 1923թ.-ի հոկտեմբերի 10-ն իրենց կողմից ձեռք է բերվել 18.628 փուլ հացահատիկ⁶⁰⁴:

Հայառի բաժանմունքները բավականին լարված հարաբերությունների մեջ էին հատկապես նահանգային ֆինանսական բաժինների հետ, որոնք պահանջում էին բաժանմունքների ֆինանսական միջոցների վերաբերյալ մանրամասն տեղեկություններ: Չնայած բաժանմունքների ղեկավարները փորձում էին նրանց

⁶⁰⁰ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 554, ց. 1ա, գ. 5, թ. 34:

⁶⁰¹ Նույն տեղը, թ. 25:

⁶⁰² Նույն տեղը, թ. 26:

⁶⁰³ Նույն տեղը, թ. 90:

⁶⁰⁴ Նույն տեղը, թ. 92:

համոզել, որ իրենք ՅՄԽՅ Տնտեսության մարմին չեն հանդիսանում, և իրենց նպատակը սովյալ Հայաստանի համար հացահատիկ հայթայթելն է, այնուամենայնիվ, որոշ բաժանմունքներ, չդիմանալով ճնշմանը, ստիպված դադարեցնում էին գործունեությունը:

Նոյեմբերի 10-ին Հայառի Ստավրոպոլի բաժանմունքի ղեկավար Ավագյանը ղեկավարի պարտականությունները թողնում է իր տեղակալ Մկրտիչյանի վրա, իսկ ինքը տեղափոխվում է Թիֆլիս: Մկրտիչյանը նոյեմբերի 13-ին հեռագրում է Հայառի Մոսկվայի բաժանմունք՝ խնդրելով թույլատրել իրեն սկսել Ստավրոպոլի բաժանմունքի լուծարման աշխատանքները և համաձայնության դեպքում պատրաստակամություն է հայտնում այն ավարտել մինչև դեկտեմբերի 1-ը: 3 օր հետո, ամենայն հավանականությամբ, Մկրտիչյանը ստանում է Մոսկվայի բաժանմունքի համաձայնությունը: Այդ մասին նոյեմբերի 16-ին նա հեռագրում է Մոսկվայում ՅՄԽՅ Տնտեսության տնտեսական գրասենյակի վարիչ Ն.Ա.Մելիք-Փարսադանովին, որ նստում էր Արմավիրում⁶⁰⁵: Նոյեմբերի 24-ին Մկրտիչյանը Ստավրոպոլի բաժանմունքի փակման ծրագրի մասին հեռագրով տեղյակ է պահում Ստավրոպոլի երկրամասի ֆինբաժնին: Նշվում է նաև, որ բաժանմունքը նախատեսվում է փակել դեկտեմբերի 5-ին կամ ամենաուշը դեկտեմբերի 10-ին⁶⁰⁶:

Հայառը բաժանմունք ուներ նաև Սիբիրում, որի ղեկավարն էր Գևորգ Ավետիսովը: 1923թ.-ի մարտի 29-ին նրա ու քաղաքացի Մամիկոն Զարդաշյանցի միջև պայմանագիր է ստորագրվում, ըստ որի՝ Զարդաշյանցը նշանակվում էր Սիբիրի բաժանմունքի Իրկուտսկի առևտրային բաժնի ղեկավարը: Պայմանագիրը բաղկացած էր 10 կետից, որոնցում շարադրված էին Զարդաշյանցի պարտականությունները: Նույն օրը այն հաստատվում է Ա.Տեր-Գաբրիելյանի կողմից⁶⁰⁷, և նա Զարդաշյանցին հանձնում է համապատասխան մանդատ⁶⁰⁸:

Խորհրդային Ռուսաստանի տարբեր նահանգների տեղական իշխանությունների հետ լարված հարաբերությունները մի փոքր բարելավելու և գործը նորմալ հունով տանելու համար Հայառի Վարչությունը որոշում է Հայառի ռուսաստանյան բոլոր բաժանմունքների տնօրեն նշանակել Ա.Տեր-Գաբրիելյանին, որ մեծ փորձ ուներ ռուս պաշտոնյաների հետ աշխատելու գործում:

Տեսնելով, որ Հայառի բաժանմունքներից ֆինանսական միջոցների վերաբերյալ տեղեկություններ ստանալ չի հաջողվում, ռուսական իշխանությունները առաջ են քաշում ՌԽՖՍՀ տարածքում Հայառի գործունեության իրավական հիմնավորման հարցը:

1923թ.-ի դեկտեմբերի 8-ին ՌԽՖՍՀ Ներքին Առևտրի կոմիտեն գրություն է ուղարկում Մոսկվայում Հայառի ներկայացուցչություն՝ խնդրելով ներկայացնել այն հիմքերը, որոնցով Հայառը գործառքներ էր իրականացնում ԽՍՀՄ տարածքում, մասնավորապես Մոսկվայում: Գրության մեջ խնդրվում էր իրենց տրամադրել նաև Հայառի կանոնադրությունը⁶⁰⁹: Այդ գրության մասին Մոսկվայի բաժանմունքը 1924թ.-ի հունվարի 8-ին հեռագրում է Երևան՝ Հայառի Վարչությանը: Հեռագրում հայտնվում էր, որ ՌԽՖՍՀ Ներքին Առևտրի կոմիտեի առարկությունների հիմքն այն է, որ Հայառի կանոնադրության 49-րդ հոդվածի համաձայն կանոնադրության մեջ ցանկացած փոփոխություն պետք է հաստատվեր ՅՄԽՅ Տնտեսական խորհրդի կողմից, ինչը չէր արվել: Իսկ այդ փոփոխությունները երեքն էին՝ ժողկոմխորհին կից Տնտեսական խորհրդի որոշմամբ (1923թ. փետրվարի 19) Հայառի հիմնական դրամազուլիսը 400.000 ոսկե ռուբլուց իջեցվել էր մինչև 220.000 ռուբլի, և դրանով փոփոխվել էր

⁶⁰⁵ Նույն տեղը, թ. 165:

⁶⁰⁶ Նույն տեղը, թ. 205:

⁶⁰⁷ Նույն տեղը, գ. 28, թ. 61:

⁶⁰⁸ Նույն տեղը, թ. 60:

⁶⁰⁹ Տե՛ս նույն տեղը, թ. 32:

Կանոնադրության 15-րդ հոդվածը, Տնտեսական խորհրդի 1924թ.-ի հունվարի 2-ի որոշմամբ Հայառի Վարչության կազմը 5-ից դարձել էր 7 մարդ, ինչով խախտվել էր Կանոնադրության 29-րդ հոդվածը և նույն օրվա որոշմամբ Հայպետառը վերանվանվել էր Հայառ⁶¹⁰ :

ՌԻՖՏԱՀ Ներքին Առևտրի կոմիտեի ղեկավարների 8-ի գրությանը Հայառի Մոսկվայի բաժանմունքը պատասխանում է ղեկավարների 14-ին: Այդ օրը բաժանմունքի ղեկավարի պաշտոնակատար Կևորկովը գրություն է ուղարկում ՌԻՖՏԱՀ Աշխատանքի և Պաշտպանության խորհրդին կից Ներքին Առևտրի կոմիտե, որում նշում է, որ նրանց է ուղարկել 1923թ.-ի փետրվարի 10-ին Հայպետառից Հայառ վերանվանված հիմնարկության Կանոնադրությունը: Ըստ նրա՝ Կանոնադրությունը հաստատվել է ՀՍԽՍՀ տնտեսական խորհրդի կողմից 1923թ.-ի օգոստոսի 3-ին, բացի այդ, Հայառի գործունեության հիմքերի մասին Կոմիտեի հարցումը Հայառի Մոսկվայի գրասենյակն ուղարկել է Հայառի Վարչություն: Նշվում է նաև, որ Հայառի ռուսաստանյան գրասենյակների տնօրեն Ս.Տեր-Գաբրիելյանը տվյալ պահին գտնվում է Երևանում և Մոսկվա է վերադառնալու 1924թ.-ի հունվարի սկզբին: Ըստ Կևորկովի՝ Մոսկվայի գրասենյակին հայտնի է, որ Աշխատանքի և Պաշտպանության խորհրդին Հայառի Կանոնադրությունը հաստատման ներկայացնելու հարցը դրված է հերթի, և Ս.Տեր-Գաբրիելյանի՝ Մոսկվա վերադառնալուն պես բոլոր անհրաժեշտ քայլերը կձեռնարկվեն⁶¹¹ :

Հայառի կառավարող խորհուրդը երկար քննարկումներից հետո վերջապես որոշում է լիազորագիր տալ Ս.Տեր-Գաբրիելյանին՝ Աշխատանքի և Պաշտպանության խորհրդին Հայառի Կանոնադրությունը ներկայացնելու համար: Բացի այդ Սահակ Տեր-Գաբրիելյանին իրավունք էր տրվում ինչպես Ներքին Առևտրի կոմիտեի պահանջով, այնպես էլ իր նախաձեռնությամբ Կանոնադրության մեջ կատարել փոփոխություններ, եթե դրանց անհրաժեշտությունը լինի⁶¹²:

Շուտով Ս. Տեր-Գաբրիելյանը բանակցությունների մեջ է մտնում Ներքին Առևտրի կոմիտեի ղեկավարության հետ: Սրանով կարելի է բացատրել այն հանգամանքը, որ 1924թ.-ի մարտի 6-ին Մոսկվայի բաժանմունքի կառավարիչի տեղակալ Մուսաեյանը հեռագրում է Հայառի վարչությանը՝ խնդրելով իրենց ուղարկել Հայառի Կանոնադրության 20 օրինակ⁶¹³: Մարտի 17-ին նշված քանակությամբ օրինակներն ուղարկվում են Մոսկվա⁶¹⁴, իսկ մարտի 24-ին Մուսաեյանը հայտնում է Վարչությանը, որ օրինակները ստացվել են⁶¹⁵ :

Հայառի Վարչության կողմից Աշխատանքի և Պաշտպանության խորհրդին Հայառի Կանոնադրությունը ներկայացնելու համար Ս. Տեր-Գաբրիելյանին լիազորագիր տալու անհրաժեշտության մասին խոսում է նաև Հայառի ռուսաստանյան գրասենյակի իրավաբան Տերյանը դեռևս 1923թ.-ի մայիսի 8-ին նույն Տեր-Գաբրիելյանին հղած նամակում, որում նշում էր, թե ՌԻՖՏԱՀ տարածքում Հայառի կողմից իրականացվող գործունեության վերաբերյալ բանակցություններ է վարել ՌԻՖՏԱՀ Ներքին Առևտրի կոմիտեի իրավաբանական բաժնի պետ Վոլֆի և Բաժնետիրական բաժնի պետ Տոնիգինի հետ: Ըստ Տերյանի՝ ծանոթանալով Հայառի Կանոնադրությանը, Վոլֆն ու Տոնիգինը եկել էին այն եզրակացության, որ Հայառն իրավունք չունի գործունեություն ծավալելու ՌԻՖՏԱՀ տարածքում, և այդ իրավունքը նրան կարող է տալ միայն ՌԻՖՏԱՀ Աշխատանքի և Պաշտպանության խորհուրդը, եթե Հայառի Կանոնադրությունը լիովին համապատասխանի ՌԻՖՏԱՀ Զարգացիական

⁶¹⁰ Տե՛ս նույն տեղը, թ. 29:

⁶¹¹ Տե՛ս նույն տեղը, թ. 36:

⁶¹² Տե՛ս նույն տեղը, գ. 44, թ. 86:

⁶¹³ Տե՛ս նույն տեղը, գ. 29, թ. 64:

⁶¹⁴ Տե՛ս նույն տեղը, թ. 63:

⁶¹⁵ Տե՛ս նույն տեղը, թ. 101:

օրենսգրքի 322-366 հոդվածներին: Հայառի Կանոնադրության հաստատման համար պարտադիր էր, որ Ներքին Առևտրի կոմիտեի միջոցով այն ներկայացվեր Աշխատանքի և Պաշտպանության խորհրդին, իսկ ներկայացնողները պետք է լինեին Հայառի բաժնետերերը: Կանոնադրության հաստատումն արագացնելու համար, ըստ Տերյանի, ցանկալի էր, որպեսզի Հայառի բաժնետերերը լիազորագիր տային Մոսկվայում ՀՍԽՅ լիազոր-ներկայացուցիչ Ս. Տեր-Գաբրիելյանին: «Նման լիազորագրի ստացման դեպքում, կարելի է հուսալ, որ Կանոնադրությունը կհաստատվի մոտ ժամանակներում, և ՌԽՖՍՀ-ում Հայառի բաժանմունքները հնարավորություն կստանան շարունակել ու զարգացնել իրենց գործունեությունը»⁶¹⁶, - նշված է գրության վերջում:

Այդ նամակը ևս մեկ անգամ խոսում է այն մասին, որ տվյալ ժամանակաշրջանում Սահակ Տեր-Գաբրիելյանը խորհրդային Ռուսաստանի ղեկավար օղակներում մեծ հեղինակություն էր, և ՌԽՖՍՀ Աշխատանքի և Պաշտպանության խորհրդին Հայառի Կանոնադրությունը անձամբ ներկայացնելը խորհրդում վերջինիս հաստատման լուրջ գրավականն էր:

1924թ.-ի հունվարին Սահակ Տեր-Գաբրիելյանը 1923թ.-ի փետրվարից մինչև 1924թ.-ի հունվարի 1-ը Հայառի ռուսաստանյան բաժանմունքների գործունեության մասին զեկույց է ներկայացնում: Ըստ նրա՝ Հայառի հիմնական նպատակն էր իրացնել ՀՍԽՅ-ում արտադրված ապրանքները, պետական պատվերներով ու սեփական միջոցների հաշվին իրականացնել բոլոր տեսակի ներմուծման ու արտահանման, ապրանքափոխանակության գործառնություններ, ինչպես նաև միավորել ՀՍԽՅ բոլոր ժողովուրդների առևտրական և մթերման բնույթի գործունեությունը: Հայառը, ըստ Տեր-Գաբրիելյանի, գտնվում էր Երևանում, և իր գործունեության զարգացման համար Հայկական ԽՍՀ բոլոր քաղաքներում և Անդրֆեդերացիայի բոլոր խոշոր քաղաքներում թիֆլիսում, Բաքվում ու Բաթումում, բացել էր գրասենյակներ: Բացի այդ, Նույն նպատակով ՌԽՖՍՀ-ի հետ ավելի սերտ ու գործնական կապի համար բաժանմունքներ էին բացվել Մոսկվայում, Լենինգրադում, Ռոստովում, ինչպես նաև գործակալություն էր բացվել Արմավիրում (վերջինս հիմնականում զբաղվում էր հացահատիկի ու ձեթի մատակարարման հարցերով): ՌԽՖՍՀ այդ գրասենյակները միավորվել էին Հայառի ռուսաստանյան գլխավոր գրասենյակի կողմից, որը գտնվում էր Մոսկվայում: Այդ գործունեությունը գրասենյակի վրա էր դրվել 1923թ.-ի հուլիսի 1-ից, երբ լուծարվել էր Հայկական ԽՍՀ Տնտեսական խորհրդի ներկայացուցչությունը Մոսկվայում: Վերջինս ակտիվ կերպով համագործակցում էր տարբեր երկրներում գործող ԽՍՀՄ թե՛ դիվանագիտական, թե՛ տնտեսական ներկայացուցչությունների հետ՝ արտասահմանում նրանց օգնությամբ հայկական արտադրության ապրանքները վաճառելու և այնտեղից հանրապետության պետական, կոոպերատիվ հիմնարկությունների համար անհրաժեշտ ապրանքներ ներկրելու նպատակով:

1924թ.-ի հուլիսի 10-ին Գերմանիայում ԽՍՀՄ Տնտեսական ներկայացուցչության Ինֆորմացիոն բաժնի ղեկավար Նիկ Սուխանովը գրություն է ուղարկում Հայառի Մոսկվայի բաժանմունքին և հայտնում, որ սեպտեմբերի 7-ին Վիեննայում տեղի է ունենալու Միջազգային Աշնանային ցուցահանդես, որին ներկա էին լինելու գնորդներ Հունգարիայից, Հարավսլավիայից, Չեխոսլովակիայից, Իտալիայից, ինչպես նաև Բուլղարիայից, Ռումինիայից և այլն: Այդ երկրների հետ առևտրական կապերի հաստատման նպատակով Ավստրիայում ԽՍՀՄ Տնտեսական ներկայացուցչությունը կազմակերպել էր այդ ցուցահանդեսին ԽՍՀՄ մասնակցությունը: Այցելուններին խորհրդային Միության տնտեսությանը ծանոթացնելու համար Գերմանիայում ու Ավստրիայում ԽՍՀՄ Տնտեսական ներկայացուցչությունը որոշել էր լույս ընծայել գերմաներեն լեզվով տեղեկատու:

⁶¹⁶ Նույն տեղը, գ. 29, թ. 34:

Գրության մեջ խնդրվում էր մինչև հուլիսի 20-ն իրենց ներկայացնել հորհրդային Հայաստանի տնտեսության մասին հայկական կողմի տեղեկանքի տեքստը⁶¹⁷:

Նույն հուլիս ամսին ՀՍԽ՜Յ ժողկոմխորհի ներսում խմորումներ էին սկսվել, և ՆԷՊ-ի քաղաքականության փոփոխությունից հետո դրվել էր նաև Մոսկովյան գրասենյակի փակման հարցը: Հասկանալով այդ քայլի վնասակար ու աղետալի լինելը ՀՍԽ՜Յ-ի և, առաջին հերթին, հենց Հայառի համար՝ Ս. Տեր-Գաբրիելյանը որոշում է դիմել ՀՍԽ՜Յ Ներքին Առևտրի ժողկոմատին՝ հորդորելով գերծ մնալ այդ քայլից:

Այդ գերատեսչությանը հղած նամակում Ս.Տեր-Գաբրիելյանը նշում էր, որ Հայառի հիմնական նպատակն է Անդրկովկասի սահմաններից դուրս Հայաստանի արտադրած ապրանքների իրացումը և բոլոր անհրաժեշտ ապրանքներով երկիրն ապահովելը: Ըստ Տեր-Գաբրիելյանի, քանի որ Հայաստանը երբեք չէր ունեցել զարգացած արդյունաբերություն, Հայառի հիմնական խնդիրն էր երկրի արդյունաբերության զարգացումը: Այդ ամենը պահանջել էր մեծ ծախսեր, և գումար վաստակելու միջոց էր հանդիսացել նաև առևտուրը: Առևտրի լրիվ վերացումը կարող էր մեծ կորուստների պատճառ դառնալ, և Հայառի գործունեությունը Մոսկվայում դնել մեծ հարցականի տակ: Ս.Տեր-Գաբրիելյանի կարծիքով՝ այն հանգամանքը, որ Հայառը Հայաստանի միակ առևտրային կազմակերպությունն է, և Մոսկվայում դրա իրականացրած առևտուրն ազդում էր ամբողջ Հայաստանի տնտեսական դրության վրա, բերում է համոզման, որ տեղական առևտրի գոյությունն անհրաժեշտություն էր: Ստեղծված վիճակից դուրս գալու ամենից նպատակահարմար ճանապարհը Մոսկովյան բաժանմունքի առևտրային գործունեության շարունակումն էր: Բացի այդ, Մոսկովյան բաժանմունքի գործունեությունը չէր կարող վնասակար լինել, քանի որ Հայառը պետական հիմնարկություն էր:

«Վերը նշված այս ամենը դրդում է խնդրել Ներքին Առևտրի ժողկոմատին՝ հատուկ ուշադրությամբ և քննչությամբ վերաբերվել մինչ այժմ ճնշված ազգի աշխատավոր մասսաների պահանջներին և չխանգարել Մոսկովյան գրասենյակի առևտրային գործունեությանը»⁶¹⁸, - նշված էր նամակի վերջում:

Թե ինչ պատասխան է տվել Ներքին Առևտրի ժողկոմատը Ս.Տեր-Գաբրիելյանին, արխիվային փաստաթղթերի ուսումնասիրության ժամանակ պարզել չհաջողվեց:

Երկկողմ առևտրատնտեսական հարաբերությունների զարգացման համար մեծ նշանակություն ունեցավ նաև ապրանքաշրջանառությունը, որը հիմնականում իրականացվում էր երկաթուղու միջոցով: Քանի որ հորհրդային Հայաստանը ՌԽՖՍՀ-ի հետ անմիջական ցամաքային սահման չունեւր, ապրանքաշրջանառությունը իրականացվում էր միջնորդավորված կերպով՝ Վրաստանի տարածքով և հյուսիսկովկասյան Դերբենդ երկաթուղային կայարանի միջոցով:

1925-1926թթ.-ին Դերբենդ կայարանի վրայով Ռուսաստան է արտահանվել ավելի քան 3400 տոննա բամբակ, գրեթե 60 տոննա մրգեղեն, ձմերուկ, սեխ ու ընկույզ, մոտ 40 տոննա բուրդ ու մորթի, 5568 տոննա գինի, 1059 տոննա օղի և այլ ոգելից խմիչքներ, 408 տոննա մաքուր երկաթ և 1 տոննա մանուֆակտուրա: Նույն ժամանակահատվածում հակառակ ուղղությամբ Հայաստան է ներկրվել մոտ 25.000 տոննա ցորեն ու այլուր, 2.300 տոննա զարի ու վարսակ, 66 տոննա խոշոր եղջերավոր անասուն⁶¹⁹, մոտ 15.000 տոննա քարածուխ, 6.000 տոննա շինանյութ ու անտառանյութ, մոտ 5.300 տոննա շաքար⁶²⁰: Այս թվերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ինչպես 1921-1922թթ.-ին, այնպես էլ հետո Հայաստանից արտահանվում էր հիմնա-

⁶¹⁷ Տե՛ս նույն տեղը, գ. 117, թ. 81:

⁶¹⁸ Նույն տեղը, գ. 122, թ. 21-22 (շրջերես):

⁶¹⁹ Խոշոր եղջերավոր անասունների մեկ գլխի միջին քաշն ընդունված էր 246 կգ, մանր եղջերավորներիինը՝ 33 կգ.:

⁶²⁰ Խորհրդային Հայաստանը թվերով 1923-1927թթ., վիճակագրական տեղեկատու, Թիֆլիս, 1928, էջ 252:

կանում հումք, գյուղատնտեսական ապրանքներ ու ոգեյից խմիչքներ: Խորհրդային Ռուսաստանից հիմնականում ներմուծվում էր հացահատիկ, քանի որ ՅՍԽՅ-ն դեռևս չէր կարող իրեն բավարարել տեղում աճեցված ցորենով և այլ հացամթերքներով, քարածուխ, որը նավթին զուգահեռ օգտագործվում էր երկրում առկա սակավաթիվ արդյունաբերական ձեռնարկությունները աշխատեցնելու, ինչպես նաև երկաթուղու անխափան աշխատանքն ապահովելու համար: Շարունակվում էր նաև խոշոր եղջերավոր անասունների ներկրումը՝ տեղում անասնապահության զարգացման համար, ինչն իր հերթին կարող էր խթանել գյուղի ընդհանուր զարգացումը:

1926 և 1927թթ.-ին նույնպես Հայաստանը մեծ մասամբ շարունակում էր Ռուսաստանից ներկրել առաջին անհրաժեշտության ապրանքներ՝ մանուֆակտուրա, շինանյութ, քարածուխ, հացահատիկ, ինչպես նաև շարունակվում էր խոշոր եղջերավոր անասունների ներկրումը: Համեմատության համար պետք է ասել, որ, ի տարբերություն 1925թ.-ի, 1926 և 1927թթ.-ին ներմուծման ծավալները ավելանում են: Այսպես, եթե 1925-1926թթ.-ին ներկրվել էր 66 տոննա, ապա 1926-1927թթ.-ի առաջին կիսամյակում ներկրվում է 196 տոննա, իսկ երկրորդ կիսամյակում արդեն 709 տոննա խոշոր եղջերավոր անասուն: Սա խոսում է այն մասին, որ երկիրը զարգացման միտում ուներ և ավելի ու ավելի շատ էր զգում ինչպես խոշոր եղջերավոր անասունների, այնպես էլ շինանյութի ու մանուֆակտուրայի կարիք, որոնց ներկրման ծավալները 1926-1927թթ.-ին նախորդ տարվա համեմատությամբ աճեցին համապատասխանաբար՝ 110 և 100 տոննայով: Իսկ ինչ վերաբերում է հացահատիկին, ապա ընդամենը մեկ տարվա ընթացքում ներմուծման ծավալները նվազեցին մոտ 5.000 տոննայով, չնայած չեղավ նաև արտահանում: Սա նշանակում էր, որ մոտ 60%-ի չափով հանրապետությունը կարողանում էր բավարարել երկրում հացահատիկի պահանջը⁶²¹:

Սակայն այս վերջին՝ հացահատիկի հետ կապված հարցի վերաբերյալ այլ բան էր ասվում 1927թ.-ի օգոստոսի 13-ին ՅՍԽՅ Ժողովմխորիի նախագահ Համբարձումյանի՝ Սահակ Տեր-Գաբրիելյանին հղված հեռագրում: Այնտեղ նշվում էր, որ նրա՝ որպես ՌԽՖՍՅ-ում Անդրֆեդերացիայի ներկայացուցչի կատարած միջամտությունից հետո հունիսին Հայաստանը ստացել էր 30 վագոն 3-րդ կարգի ցորեն: Այդ ընթացքում հիմնական ներկրող կազմակերպությունների կողմից այսուր ընդհանրապես չէր ներկրվել: Այլ կարգի այսուրից ներկրվել էր չնչին քանակություն, ինչի պատճառով ամբողջ հանրապետությունում այսուրի մատակարարման ճգնաժամը խորանում էր ամեն օր: Համբարձումյանը նշում էր, որ իրենց բոլոր ջանքերն ու խնդրանքները՝ ուղղված Անդրկովկասի առժողովին, ոչ մի արդյունք չէին տվել: Համբարձումյանի խոսքով՝ շրջաններից հայտնում էին, որ հացն իսպառ բացակայում է: «Հաշվի առնելով վիճակի լրջությունը, խնդրում ենք Ձեր ակտիվ միջամտությունը՝ Հայաստան ուղարկելու 100 վագոն այսուր՝ առանց տարբերելու տեսակները, հակառակ դեպքում նույնիսկ մի մասը ցորեն կամ տարեկանի այսուր»⁶²², - գրված էր հեռագրում: Հեռագրից պարզ երևում է, որ 1927թ.-ին Հայաստանում հացահատիկի հետ կապված վիճակն անտանելի էր, և երկրի իշխանությունները ամեն ջանք գործադրում էին՝ երկիրը վերահաս սովից փրկելու համար: Բացի այդ, համեմատելով տեղեկագրում նշված պաշտոնական վիճակագրական տվյալները երկրում առկա իրական վիճակի հետ՝ պարզ է դառնում, որ հաճախ պաշտոնական թվերը չէին համապատասխանում իրականությանը:

Ամփոփելով նշենք, որ չնայած բազմաթիվ դժվարություններին՝ Խորհրդային Ռուսաստանում Հայառի բաժանմունքները մեծ աշխատանք կատարեցին ՅՍԽՅ-ն առաջին անհրաժեշտության ապրանքներով ապահովելու համար, և այդ գործում մեծ էր նաև Մոսկվայում ՅՍԽՅ լիազոր ներկայացուցիչ Սահակ Տեր-Գաբրիելյանի դերը:

⁶²¹ Տե՛ս նույն տեղը:

⁶²² ՀԱԱ, ֆ. 113, ց. 2, գ. 1164, թ. 1:

FROM THE HISTORY OF ARMENTRADE BRANCHS' ACTIVITIES IN SOVIET RUSSIA 1923-1927YY

GRIGOR BALASANYAN

*Member of UYSSA, Yerevan State University,
PhD, Associate Professor of the Chair of International Relations and Diplomacy,
Yerevan, Republic of Armenia*

Trade-economic relations with Soviet Russia greatly influenced the development of the Armenian Soviet Socialist Republic (hereinafter referred to as the SSRA), which, in its turn, had a positive impact on improving the social-economic situation of the country. The study of archival documents suggests that trade relations between Soviet Armenia and the Soviet Federative Socialist Republic of Russia (hereinafter referred to as the RSFSR) were more active than the other Soviet republics. The research shows that the efforts of the Armenian authorities in the period under investigation aimed at the development of Armenian-Russian trade-economic relations mostly were successful. The ArmTrade played a great role in developing the Armenian-Russian trade-economic relations, its branches did their best to provide Armenia with the corn and other products needed. In this case, Mr. Sahak Ter-Gabrielyan, the Plenipotentiary Representative of Soviet Armenia in the RSFSR, had a great influence on the Russian government and greatly helped to solve this issue in a prompt manner.

Key words: *ArmSSR, RSFSR, Moscow, Sahak Ter-Gabrielyan, ArmTrade, trade-economic relations, branch, corn.*

ИЗ ИСТОРИИ ДЕЯТЕЛЬНОСТИ ОТДЕЛЕНИЙ АРМЕНТОРГА В СОВЕТСКОЙ РОССИИ (1923-1927 ГГ.)

ГРИГОР БАЛАСАНИЯН

*Член ОМУСА, Кандидат исторических наук, доцент кафедры
международных отношений и дипломатии ЕГУ,
г. Ереван, Республика Армения*

Торгово-экономические отношения с Советской Россией во многом способствовали развитию экономики Армянской Советской Социалистической Республики, что в свою очередь имело положительное влияние на улучшение социально-экономического положения населения республики. Исследование архивных документов показывает, что среди советских республик особо активными были торговые отношения Советской Армении с Российской Советской Федеративной Социалистической Республикой. В данный период усилия властей Советской Армении, направленные на развитие армяно-российских торгово-экономических отношений, в основном увенчались успехом. В этом деле свою особую роль имел Арменторг, чьи отделения по всей территории Советской России работали не покладая рук для обеспечения Армении пшеницей и другими товарами первой необходимости. Также был активен полномочный представитель Республики Армения в РСФСР Саак Тер-Габриелян, который имел большой авторитет среди правящих кругов России, что помогало оперативному решению того или иного вопроса.

Ключевые слова: *АрмССР, РСФСР, Москва, Саак Тер-Габриелян, Арменторг, торгово-экономические отношения, отделение, пшеница.*

**ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՉԱԿՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾՈՒԼԵՒԹՅԱՆ ԶԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
1920-1930-ԱԿԱՆ ԹԹ.***

ՀՏԴ 93/94(479.25)

ԱՐՄԱՆ ԵՐԻԱԶԱՐՅԱՆ

*ԵՊՀ պատմության ֆակուլտետի սփյուռքագիտության ամբիոնի վարիչ,
պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ,
բ.Երևան, Հայաստանի Հանրապետություն
armanyeqhiazaryan@ysu.am*

Հոդվածի նպատակը 1920-1930-ական թթ. Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցության (հետայսու՝ ՍԴՀԿ) գործունեության հիմնական ուղղությունների լուսաբանումն է: Խնդիր է դրվել բացահայտելու կուսակցության դիրքորոշումը հորհրդային Հայաստանի ու Կոմունիստական ինտերնացիոնալի (հետայսու՝ Կոմինտերն) նկատմամբ, հարաբերությունները Հայաստանի օգնության կոմիտեի հետ, ինչպես նաև սփյուռքյան օրակարգի հիմնական սկզբունքները:

Հետապոտության հիմքում պատմական (պատմածագումնաբանական) ու տրամաբանական մեթոդներն են, որոնցից առաջինի կիրառմամբ ներկայացվել ու լուսաբանվել են ՍԴՀԿ-ի քաղաքական նոր աշխարհընկալումը, դրա ծագումը, պարզացումը և վերջնարդյունքը 1930-ականների ավարտին, իսկ երկրորդի կիրառմամբ՝ առնչվող իրադարձությունների ներքին բնույթը:

Լուսաբանված է այն իրողությունը, որ 1920-ական թթ. սկզբին ՍԴՀԿ-ն կանգնել էր բարդ իրադրության առաջ, քանի որ աշխարհաքաղաքական ու ներազգային նոր իրավիճակի պայմաններում անհրաժեշտություն էր առաջացել վերադիրքավորվելու և ճշտելու սեփական դիրքորոշումը մի կողմից՝ Հայաստանի նոր իշխանությունների, մյուս կողմից՝ սփյուռքի և այնտեղ գործունեություն ծավալող մյուս կուսակցությունների նկատմամբ:

Հիմնավորված է, որ ՍԴՀԿ-ի սփյուռքյան օրակարգը կախյալ փոփոխական էր հորհրդային Հայաստանի հետ հարաբերություններից, որոնց առաջնություն էր տրված:

Փաստված է այն իրողությունը, որ ՍԴՀԿ-ի հարաբերությունները Հայաստանի օգնության կոմիտեի հետ աստիճանաբար մտել են փակուղի և դարձել թշնամական, որի հետևանքով ՍԴՀԿ-ն ողջունում էր այդ կառույցի լուծարումը:

Բանալի բառեր՝ ՍԴՀԿ, գործունեություն, ընդհանուր պատգամավորական ժողով, հորհրդային Հայաստան, սփյուռք, գաղթավայրեր, Հայաստանի օգնության կոմիտե, մաքսիստ, կոմինտերն, քաղաքական ուղեգիծ, սփյուռքյան օրակարգ:

ՍՈՒՏԵ. ՍԴՀԿ-Ն ՆՈՐ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Առաջին համաշխարհային պատերազմից հետո և հատկապես 1920-ական թթ. սկզբին ՍԴՀԿ-ն հայտնվել էր ծանր վիճակում: Նախ՝ մինչև 1924թ. հնարավոր չէրվում գումարել նոր ընդհանուր պատգամավորական ժողով (հետայսու՝ համագումար)⁶²³

** Հոդվածը ներկայացվել է 12.05.2019թ., գրախոսվել՝ 16.05.2019թ., տպագրության ընդունվել՝ 17.06.2019թ.:
⁶²³Վերջինը գումարվել էր 1913թ.:*

ստեղծված պայմաններում կուսակցության ուղեգիծը ճշտելու համար, իսկ նոր պայմանները էականորեն տարբերվում էին նախապատերազմյանից.

ա. գոյություն ունեւ հայկական պետություն՝ ի դեմս Հայաստանի խորհրդային հանրապետության,

բ. սկսում էր ձևավորվել արդի հայկական սփյուռքը՝ որպես ցեղասպանության հետևանք,

գ. Խորհրդային Հայաստանում միակուսակցական համակարգի հաստատումից հետո ՍՂՀԿ-ն պարտադրված էր որդեգրելու բացառապես սփյուռքյան գործունեություն:

Առաջին պարագայում ՍՂՀԿ-ի ընտրությունը թեև միանշանակ էր, սակայն էականորեն կապված էր Կոմունիստական ինտերնացիոնալին (Կոմինտերն)⁶²⁴ միանալու՝ կուսակցության առաջնային ծրագրի հետ: Այդ կապը հույժ էական էր, քանի որ Կոմինտերնի մոտեցումը ՍՂՀԿ-ին սկզբում ևս միանշանակ էր՝ պահանջելով կուսակցության ըստմանյա միացում տարբեր երկրների կոմունիստական կուսակցություններին, հետևաբար նաև՝ փաստական լուծարում: ՍՂՀԿ-ում մերժում էին վերջին հնարավորությունը, սակայն կտրուկ մերժումն էլ իր հերթին կարող էր բերել հակադրության: Ուստի ՍՂՀԿ-ի ղեկավարները ճիշտ համարեցին շարժվել համոզման եղանակով՝ հիմնավորելով կուսակցության ինքնուրույն գոյությունը շարունակելու անհրաժեշտությունը: Հակառակ դեպքում կուսակցությունը կարող էր ընկալվել որպես խորհրդային կարգերի հակառակորդ, ինչն էլ հղի էր Խորհրդային Հայաստանի հետ կապերի խզման հեռանկարով:

1920-ական թթ. նշվածն այնքան մեծ տեղ էր զբաղեցնում ՍՂՀԿ-ի կյանքում, որ գործունեության բուն օբյեկտը՝ ձևավորվող արդի սփյուռքը և այնտեղ կուսակցության դերի ու անելիքի հարցերը, մոլվել էին երկրորդ պլան՝ ածանցվելով քաղաքական առումով գլխավոր ընտրությունից:

Ա. ՍՂՀԿ-Ն, ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՈՒ ԿՈՄԻՆՏԵՐՆԸ

Մինչև 1924թ. ՍՂՀԿ-ի գործունեությունն ամբողջությամբ տեղայնացվել էր ըստ առանձին երկրների կուսակցական մարմինների, քանի որ 1913թ. տեղի ունեցած 7-րդ համագումարի ընտրած ղեկավար մարմնի՝ կենտրոնական վարչության լիազորություններն ավարտվել էին, իսկ նոր համագումար չգումարվելու պայմաններում չկային փաստորեն ո՛չ նոր պայմաններից բխող համակուսակցական ուղեգիծ և ո՛չ էլ ղեկավար մարմին: Եվ միայն 1924թ.-ին՝ 11 տարվա ընդմիջումից հետո, ի վերջո տեղի ունեցավ ՍՂՀԿ-ի 8-րդ համագումարը, որը քննարկեց ապագա գործունեության ուղղությունները⁶²⁵: Ժողովից հետո՝ արդեն 1925թ.-ին, ՍՂՀԿ-ի կենտրոնական վարչությունը մի շրջաբերական է հղում կուսակցական մարմիններին՝ ներկայացնելով համագումարի հիմնական բանաձևերը ապագա գործունեության վերաբերյալ: Խորհրդային Հայաստանը ներկայացվում էր որպես «նպատակի իրականացում», «մեր յոյսերուն միակ կռուան», «մեր գոյութեան ու փրկութեան միակ խարիսխ», «մեր պահանջները բաւարարելու և մեր իրաւունքները արժեցնելու ...գլխաւոր ազգակ», որին հարկ էր նվիրվել բոլոր ուժերով՝ «զայն աշխարհի չորս կողմերը ցրուած աստանդական հայ աշխտաւորութիւնը իր մէջ ամփոփելու վիճակին հասցնելու» համար⁶²⁶: Որոշվել էր անվերապահորեն կանգնել Խորհրդային

⁶²⁴ Աշխարհի տարբեր պետությունների կոմունիստական կուսակցությունները միավորող միջազգային կազմակերպություն(1919-1943 թթ.), որի կենտրոնը Մոսկվայում էր:

⁶²⁵ Տե՛ս «Պատմություն Ա. Դ. Հնչակեան կուսակցութեան (1887-1962)», Ա. հատոր, Պեյրուք, 1962, էջ 513-514:

⁶²⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 514, 516:

Հայաստանի կողքին՝ «ամեն միջոցով ու եղանակով սատարել անոր բարգաւաճումին ու վերաշինութեանը և կապել գաղութահայ աշխատաւորութիւնը բարոյական, գաղափարական ու տնտեսական կապերով Մայր Հայրենիքին»⁶²⁷: Պետք էր աջակցել, որ Խորհրդային Հայաստանը այնքան բարգավաճի, որ կարողանա ընդունել ու տեղավորել աշխարհում ցրված «աստանդական հայ աշխատաւորութիւնը»⁶²⁸: Ասված էր նաև, որ նախկինում հակասությունները ջլատել, կազմալուծել ու բարոյալքել են կուսակցությունը, բայց կենտրոնական վարչությունը լիաժողով էր, որ բոլորի ուժերի մեկտեղումով հնարավոր կլինի հաղթահարել դրանք⁶²⁹:

Նոր իրավիճակի պայմաններում ժողովը որոշեց Նորընտիր կենտրոնական վարչությանը հանձնարարել մշակելու ՍԴՀԿ-ի բոլոր շրջանների համար պարտադիր ընդհանուր ծրագիր և հիմնական կանոնագիր՝ հիմք ընդունելով կուսակցության ծրագիրը, «յեղափոխական մարքսիզմ»-ը և ժողովի ընդունած որոշումներն ու բանաձևերը⁶³⁰:

Նշվածի հիմամբ ակնհայտ է, որ ՍԴՀԿ-ի 8-րդ համագումարը կարևորագույն նշանակություն ունեցավ նոր իրադրության պայմաններում կուսակցության ուղեգիծը հստակեցնելու առումով:

Սակայն շուտով ՍԴՀԿ-ն առնչվեց նոր տարածայնությունների, որոնցից ամենաեականը Փարիզի կուսակցականների անջատ գործունեությունն էր: Վերջիններս բողոքում էին 8-րդ համագումարի գործելակերպի դեմ, քանի որ այն ընդունել էր խորհրդամետ քաղաքական ուղեգիծ՝ առանց հաշվի առնելու խորհրդահայ ղեկավարների ու Հայաստանի օգնության կոմիտեի ընդգծված հակահնչակյան գործելակերպը: Մասնավորապես նրանց վրա ծանր ազդեցություն էր թողել Ա.Մյասնիկյանի կարծիքն այն մասին, որ «շատ չանցած, Սապահների և Եղիկեանների (ՍԴՀԿ-ի ղեկավար գործիչներ-Ա.Ե.) դիակների վրայով Հնչակեան բանուորներն ու գիւղացիները դէպի Գ. Ինթերնացիոնալ (Կոմիստերն-Ա.Ե.) պիտի գան»⁶³¹:

Այդ առումով պետք է փաստել, որ 1920-ական թթ. սկիզբը ՍԴՀԿ-ի համար նաև կարևոր ընտրության տարիներ էին: Խնդիրն այն է, որ բանակցություններ էին ընթանում Կոմիստերնի հետ՝ վերջինիս միանալու հետ կապված⁶³²: Ակնհայտ է, որ խորհրդային իշխանությունների վերաբերմունքը ՍԴՀԿ-ի հանդեպ էականորեն տարբերվում էր հայկական մյուս կուսակցությունների նկատմամբ վերաբերմունքից: Խնդիրն այն է, որ Հայաստանի Հանրապետության խորհրդայնացումից հետո ՍԴՀԿ-ում համարում էին, որ կուսակցությունը, ի բնե լինելով մարքսիստ, «բնականօրեն մեկ թելը կը կազմեր սոցիալիստական այն շարժումին, որ կը ներշնչուէր Կոմիստերնի կողմէ»⁶³³: Ուստի կուսակցության ղեկավարությունը, 1922թ.-ից սկսած, կապի մեջ էր մտել Կոմիստերնի գործադիր կոմիտեի նախագահության հետ՝ նրան ներկայացնելով ՍԴՀԿ-ի մասին հիմնարար տեղեկություններ և ակնկալելով համագործակցություն՝ ներառյալ կուսակցության հավաքական (կոլեկտիվ) անդամությունը Կոմիստերնին: 1922-1923թթ. ՍԴՀԿ-ի և Կոմիստերնի միջև տեղի են ունեցել բանակցություններ, որոնց առկայությունն իսկ (չհաշված բանակցությունների առարկան) սրել էր ներկուսակցական հարաբերությունները⁶³⁴: Կոմիստերնի գործադիր կոմիտեի նախագահությունը 1923թ. փետրվարի 5-ի գրությամբ ընդունում էր իր և ՍԴՀԿ-ի գաղափարաբանական հարազատության իրողությունը, սակայն անընդունելի էր

⁶²⁷ Նույն տեղում, էջ 516:

⁶²⁸ Նույն տեղում, էջ 517:

⁶²⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 514, 516:

⁶³⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 517:

⁶³¹ Նույն տեղում, էջ 519:

⁶³² Տե՛ս նույն տեղում, էջ 496-498:

⁶³³ Նույն տեղում, էջ 497:

⁶³⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 496-497:

համարում կոմիստերնի կազմում ՄԴԻԿ-ի ինքնուրույնության պահպանումը և կուսակցության առաջ պայման էր դնում՝ մաս առ մաս միանալու տարբեր երկրների տեղական կոմունիստական կուսակցություններին⁶³⁵: Թեև ՄԴԻԿ-ում այդ պայմանը համարվում էր անընդունելի⁶³⁶, սակայն բանակցությունները շարունակվում էին⁶³⁷:

Այդ ժամանակ ՄԴԻԿ-ի ներսում ձևավորվել էր ընդդիմություն Ֆրանսիայի «Նոր երկիր» պարբերականի խմբագիր Գ.Եղիկյանի գլխավորությամբ, որն այդ դիրքերում մնաց շուրջ 15 տարի, և որը ՄԴԻԿ-ի այդ շրջանի ղեկավարներից որոշներին համարում էր «Ստալինից աւելի բոլշեվիկ»⁶³⁸: Ըստ Գ.Եղիկյանի՝ կուսակցության շրջանակներից շատերի կամքին հակառակ հենց այդ ղեկավարներն էին, որ գնացին բոլշևիկների հետ դաշինքի, մասամբ նաև՝ միության⁶³⁹: Արդեն 1930-ականների կեսերին նա գրում էր, որ բոլշևիկների հետ համագործակցող կուսակցականները նշում էին, թե կատարում են 1934թ.-ին տեղի ունեցած 9-րդ համագումարի որոշումը, իսկ վերջինս հիմնականում իրականացնում էր բոլշևիկների հետ սերտ դաշինքի կողմնակից երկու հնչակյանների՝ Սիրվարդի ու Ջագիկյանի կամքը՝ հավատարիմ մնալու խորհրդային Չայաստանի քաղաքական ուղեգծին⁶⁴⁰:

Ակնհայտ է, որ բանակցությունները Կոմիստերնի հետ խորհրդային իշխանությունների ընկալման մեջ գաղթաշխարհի մյուս քաղաքական ուժերի համեմատ ՄԴԻԿ-ին դնելու էին այլ հարթության վրա՝ համապատասխան պահանջներով: Ուստի Կոմիստերնի մեջ չտարրալուծվելու և ինքնուրույն գոյություն պահպանելու որոշումով ՄԴԻԿ-ն սկզբնապես հայտնվելու էր խորհրդահայ գործիչների և, մասնավորապես Ա.Մյասնիկյանի հարվածների տակ:

Այդ պայմաններում ՄԴԻԿ-ն տարբեր երկրներում կոմունիստական կուսակցություններին չձուլվելու և անկախ գործելու սեփական իրավունքն ու տարբեր երկրների տեղական կոմունիստական կուսակցություններին չմիանալու որոշումը հիմնավորում էր այն իրողությամբ, որ դեռ կենդանի էր հայ դատը, իսկ արևմտահայ զանգվածները ցրված էին աշխարհում՝ կանգնած ծուլման ու անհետանալու վտանգի առաջ: Ուստի ՄԴԻԿ-ն, «դասակարգային պայքարը շարունակելով բոլոր երկիրներու պրոլետարիատին հետ, ... ստիպուած էր մնալ ինքնուրոյն և անկախ դիրքի մէջ, կարենալ հետապնդելու համար Թուրքիոյ և այլուր ունեցած զուտ հայ ազգային իրաւունքները»⁶⁴¹: Հետագայում 1930-ական և 1950-ական թթ.-ին, ՄԴԻԿ-ի ներկայացուցիչները դարձյալ անհրաժեշտ էին համարում հիմնավորելու կուսակցության գոյության իրավունքը: 1930-ական թթ.-ի այդ իրողությունն արտացոլվեց կուսակցության ծրագրում, որում ասված էր, թե տարբեր երկրներում ցրված հայության ծանր վիճակը, գաղթավայրերի հայ աշխատավորությանը «անդեկավար չձգելու» և նրան ազգայնական ուժերի ազդեցությունից հեռու պահելու հրամայականը պարտավորեցնում են ՄԴԻԿ-ին պահպանելու իր գոյությունն ու կազմը⁶⁴²: Նույնիսկ 1950-ական թթ.-ին ՄԴԻԿ-ի գոյության անհրաժեշտությունը հիմնավորվում էր շուրջ մեկուկես միլիոն սփյուռքահայության գաղափարական

⁶³⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 498-499:

⁶³⁶ Համապատասխան որոշում ընդունեց ՄԴԻԿ-ի 8-րդ համագումարը: Տե՛ս նույն տեղում, էջ 517:

⁶³⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 503:

⁶³⁸ Եղիկյան Գ., Փաստաթուղթեր հնչակեաններու գործունեութենէն (իմ յիշողութիւններից), «Հայրենիք» ամսագիր, 1950, թիւ 1, էջ 63-64:

⁶³⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 63, 69:

⁶⁴⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 69, «Պատմութիւն Ա. Դ. Հնչակեան կուսակցութեան (1887-1962)», Ա. հատոր, էջ 522:

⁶⁴¹ «Պատմութիւն Ա. Դ. Հնչակեան կուսակցութեան (1887-1962)», Ա. հատոր, էջ, էջ 519:

⁶⁴² Տե՛ս «Ծրագիր Ա. Դ. հնչակեան կուսակցութեան», Բարիզ, 1931, էջ 63:

դաստիարակությամբ և հետադիմական ուժերի դեմ պայքարելու անհրաժեշտությամբ⁶⁴³:

Մինչև 1930-ական թթ.-ի կեսերը Կոմիստերնի հետ հարաբերություններն այդպես էլ հանգուցալուծում չունեցան: Միայն 1935թ.-ին Կոմիստերնի ղեկավարների հետ ի վերջո համաձայնություն կայացվեց, որ ՍԴԻԿ-ն պահպանում է իր ինքնուրույն գոյությունը, բայց ամենուր գործակցում է կոմունիստական կուսակցությունների հետ՝ նրանց հետ կազմելով ընդհանուր ճակատ՝ պաշտպանելու Խորհրդային Միությանը և պայքարելու ֆաշիզմի ու պատերազմի դեմ⁶⁴⁴: Իր կողմից Կոմիստերնի ղեկավարությունը պայման էր դնում, որ կոմունիստական կուսակցությունից խորհրդակցական ծայնով ներկայացուցիչներ ընդգրկվեն ՍԴԻԿ-ի ղեկավարության և խմբագրական աշխատանքների մեջ, անդամական ժողովներում, ինչպես նաև չարգելի հնչակյանների մուտքը կոմունիստական կուսակցություն⁶⁴⁵:

1934թ.-ին գումարված ՍԴԻԿ-ի 9-րդ համագումարը որոշեց հավատարիմ մնալ Խորհրդային Չայաստանի քաղաքական ուղեգծին⁶⁴⁶: Ավելին, ՍԴԻԿ-ի վերստին հրատարակվող «Հնչակ» պաշտոնաթերթը, անդրադառնալով Խորհրդային Չայաստանի նկատմամբ վերաբերմունքին, 1935թ.-ի համարներից մեկի խմբագրականը վերնագրել էր «Ամուր փարինք Խորհրդային Չայաստանին», որն ավարտվում էր «...իսկ մենք աւելի ամուր փարինք մեր միակ փարոսին – ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ու անոր այլե՛ծածան ԿԱՐՄԻՐ ԴՐՕՇԻՆ...» կոչով⁶⁴⁷: Ավելին, ՍԴԻԿ-ի պաշտոնաթերթը նաև ծոն է հրատարակում՝ նվիրված Խորհրդային միությանը՝ պատրաստակամություն հայտնելով պատերազմելու նրա թշնամիների դեմ.

«Խորհրդային Միութի՛ն, սոսկավիթխար եւ հուժկու,
Կը սարսափին պուրժուաներն զօրութենէդ ահարկու,

Իսկ թէ խուժեն օր մը վրադ թշնամիներդ դաւադիր,

Պիտի մըխէ՛նք մեր սուրերն անոնց սիրտին մէջ պատիր...»⁶⁴⁸:

Սյուս կողմից կուսակցության պաշտոնաթերթը ծոն էր նվիրում նաև Վ. Լենինին և նրա գործը շարունակող Ի. Ստալինին.

«Յոգիդ անմահ ու անյաղթ, պիտի ապրի՛ միշտ, Լենին՛ն,

Որպէս դրօշ կը տանի, կտակդ յառա՛ջ, Ստալին...»⁶⁴⁹:

Պատահական չէ, որ նման պայմաններում ՍԴԻԿ-ին հարկ եղավ պայքարելու շրջանառվող այն լուրերի դեմ, թե կուսակցությունը ձուլվել է կոմունիստական կուսակցությանը⁶⁵⁰:

Խորհրդային Չայաստանի քաղաքական ուղեգծին ՍԴԻԿ-ի ղեկավարների հավատարմությունը արտահայտվեց Լույնիսկ 1937թ.-ին, երբ սփյուռքի՝ հատկապես ՅՅԴ-ին պատկանող լրատվամիջոցները բարձրաձայնում էին տեղի ունեցող բռնաճնշումների մասին. ՍԴԻԿ-ի մամուլի միջոցները բռնեցին դրանց անհրաժեշտությամբ հիմնավորելու դիրք: Օրինակ՝ Բեյրութի «Արարատ» թերթի 1937թ.-ի վերջին համարներից մեկը «Չայաստանի մաքրագործումներեն» խորագրով խմբագրականում այդ «մաքրագործումներ»-ը համարում էր պարզապես անհրաժեշտ միջոցառումներ. «Չայաստանի մեջ պատժուած են զեղծումներ ընողները, ...և այդ

⁶⁴³ Տե՛ս «Երիտասարդ Չայաստան», 17.12.1957 (խմբագրական):

⁶⁴⁴ Տե՛ս «Պատմություն Ա. Դ. Հնչակեան կուսակցութեան (1887-1962)», Ա. հատոր, էջ 522-523:

⁶⁴⁵ Տե՛ս Լույն տեղում, էջ 523:

⁶⁴⁶ Լույն տեղում, էջ 522:

⁶⁴⁷ «Հնչակ» ամսաթերթ, կեդրոնական օրկան Սօցիալ դեմօկրատ հնչակեան կուսակցութեան, 1935, թիւ 2 (փետրուար), խմբագրական:

⁶⁴⁸ Լույն տեղում:

⁶⁴⁹ Լույն տեղում, 1936, թիւ 14 (փետրուար):

⁶⁵⁰ Լույն տեղում:

պատիժը առայժմ եղած է թեթեւ...: ...Բայց վաղը երբ յայտնի ըլլայ թե այդ գեղծումները մեծ են, պետութեան և կամ Ազգի օրգանիզմը կը քայքայեն, ի՞նչ վերաբերմունք պետք է ցուցնել ատոնց հանդէպ: ...Յայաստանի վերաբերմունքը շատ պարզ է, որքան մեծ է յանցանքը, այնքան մեծ է պատիժը. իսկ գալով յանցագործին՝ **որքան բարձր պաշտօնի վրայ կը գտնուի յանցագործը, այնքան անողոք կը լինի պաշտօնը:** ...Ահա նմոյշ մը, որ ցոյց կուտայ ուղիղ ճամբան, ուր կը դիմէ Յայաստանը, հաստատուն հողը, որի վրայ ոտք կը դնեն Յայաստանում»⁶⁵¹:

1938թ., երբ արդեն ակնհայտ էին խորհրդային միութեանում տիրող բռնաճնշումների սարսափելի հետևանքները, «Յնչակ»-ը շարունակում էր դրանցում դրական մասնիկ տեսնել. «Մեր հայրենիքի - խորհրդային Յայաստանի մէջ պատահած դէպքերը ոչ միայն մազի չափ ազդած չեն երկրի անկախութեան, յառաջդիմութեան, ժողովուրդի ստեղծագործող տրամադրութեանց վրայ, այլ, ընդհակառակը, վնասարարներու տրուած պատիժը, իրենց պարտականութեանց մէջ թերացող պաշտօնեաներու հասցէին եղած խիստ քննադատութիւնները անելի խորացուցած են ժողովուրդին հաւատքը դէպի խորհրդային իրաւակարգը եւ անոր արդարադատութիւնը»⁶⁵²:

Ակնհայտ է, որ ՄԴԿ-ի գործակցությունը խորհրդային Յայաստանի հետ բոլորովին այլ մակարդակի էր՝ կապված նաև կոմունիստական կուսակցության հետ վերազգային հարթության վրա եղած լայն համագործակցության հետ: Սակայն պետք է հիշել, որ խորհրդային իշխանությունների համար ՄԴԿ-ն երբեք էլ չընկալվեց որպէս գաղափարաբանորեն հարազատ հոսանք, այլ որպէս մանրբուժուական կուսակցություն, որն, ըստ անհրաժեշտության, որոշ երկրներում կարող էր համագործակցել առաջադիմական ուժերի հետ, իսկ որոշ երկրներում՝ հեռու մնալ նրանցից⁶⁵³: ՄԴԿ-ն, հանդիսանալով մարքսիստական կուսակցություն, բացառապէս հայկական խնդիրների վրա կենտրոնանալու պատճառով ևս հաճախ քննադատվում էր խորհրդային գործիչների կողմից⁶⁵⁴:

Բ. ՄԴԿ-Ն ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿՈՍԻՏԵՆ

1920-ական թթ. սկզբին գաղթաշխարհում դերակատարություն ունեցող կազմակերպությունների գործունեության առանցքում հայտնվեց խորհրդային Յայաստանի նկատմամբ վերաբերմունքի ընտրության հարցը: ՄԴԿ-ն ևս ի սկզբանե ստիպված եղավ ընտրել՝ միանշանակորեն հօգուտ խորհրդային Յայաստանի⁶⁵⁵:

Յայաստանի առաջին Յանրապետության շրջանում ՄԴԿ-ն պաշտպանում էր այն: Կուսակցության ականավոր գործիչ Ս. Սապահ-Գյուլյանը գրում էր, որ առկա անկախ հայոց պետությունն առաջացել է մեր արյան գնով և ողջ հայության զավակն է: Այն հարկավոր է պահել ու զարգացնել⁶⁵⁶:

Բայց դա չիանգարեց, որ ՄԴԿ-ն ողջունի ՀՀ-ի խորհրդայնացումը և նաև որոշակի մասնակցություն ունենա դրանում: Ըստ ՄԴԿ-ի գաղափարաբանների՝

⁶⁵¹ «Արարատ» քաղաքական օրաթերթ, Բեյրութ, 24.12.1937:

⁶⁵² «Յնչակ», 1938, թիւ 1 (յունվար), էջ 2:

⁶⁵³ Տե՛ս Խորշոռյան Լ., Սփյուռքահայ կուսակցությունները ժամանակակից Ետապում, Ե., հրատ., 1964, էջ 221-223:

⁶⁵⁴ Տե՛ս Նույն տեղում, էջ 232-234:

⁶⁵⁵ Տե՛ս «Պատմութիւն Ս. Դ. Յնչակեան կուսակցութեան (1887-1962)», Ա. հատոր, էջ 496-498, էջ 497:

⁶⁵⁶ Տե՛ս «Երիտասարդ Յայաստան», 15.09.1920:

«1920թ. նոյեմբերի 29-ին հնչակեան ուժերու մասնակցութեամբ Յայաստանը դարձաւ Խորհրդային երկիր»⁶⁵⁷:

Նշվեց, որ կուսակցությունը սկզբնապես չկարողացավ կատարել նոր պայմաններում սեփական տեղի ու դիրքի ընտրությունը: Այդ ընտրության ծանրությունն ընկավ հնչակյան տեղական կազմակերպությունների վրա: Մասնավորապես, երբ 1921թ. ստեղծվեց Յայաստանի օգնության կոմիտեն (հետայսու՝ ՅՕԿ), այնուհետև դրա ներկայացուցիչները ժամանեցին ԱՄՆ՝ տեղում ՅՕԿ-ի մասնաճյուղը հիմնելու, ՄԴՅԿ-ի Ամերիկայի շրջանի վարիչ մարմինն իր մասնաճյուղերին հանձնարարեց «Լծակցիլ և գործակցիլ Յայրենիքի Օգնութեան Կոմիտեին»⁶⁵⁸: Սիրիայում նույնպես ՄԴՅԿ-ն նախաձեռնեց իրապարակային բանախոսություններ՝ ՅՕԿ-ի մասին տեղի հայությանը լավագույնս տեղեկացնելու համար⁶⁵⁹: Եգիպտոսում ՄԴՅԿ-ն աջակցում էր ՅՕԿ-ի մասնաճյուղերի ստեղծմանը: 1925թ. ՄԴՅԿ-ի Եգիպտոսի շրջանային ժողովի դիվանը հանձնարարում էր ստորակա մարմիններին՝ ստանձնելու երկրի գլխավոր քաղաքներում ՅՕԿ-ի մասնաճյուղեր ստեղծելու նախաձեռնությունը՝ ՅՕԿ-երը համարելով հայրենիքի հետ կապի ամենավստահելի օղակները⁶⁶⁰: Փաստորեն համագումարի (որին վերապահված էր կուսակցության ուղեգծի ընտրության առաքելությունը) գումարման անհնարինության պայմաններում տեղական հիմնական կառույցներն ընտրեցին ՅՕԿ-երի հետ համագործակցության ճանապարհը:

Սակայն ինչպես և ՌԿԿ-ի պարագայում, խորհրդահայ իշխանությունները վերապահ վերաբերմունք ունեին սփյուռքահայ՝ իրենց նկատմամբ նույնիսկ բարեկամական վերաբերմունք ունեցող քաղաքական նաև մյուս հոսանքների նկատմամբ⁶⁶¹: ԱՄՆ-ում ՅՕԿ-ի մասնաճյուղը հիմնադրելու առաքելությամբ պատվիրակությամբ այնտեղ շրջագայող խորհրդահայ գործիչ Գ. Վարդանյանը⁶⁶², որ, ի դեպ, նախկին հնչակյան էր, ՄԴՅԿ-ի՝ Ամերիկայի շրջանի վարիչ մարմնի հետ համագործակցելուց խուսափեց, թեև հենց նրա ներկայությունը անչափ ոգևորել էր տեղի հնչակյաններին: Ավելին, Գ.Յարությունյանն ամենուր տարածում էր, որ Խորհրդային Յայաստանի ստեղծումով ՄԴՅԿ-ի կարիքն այլևս վերացել է, քանի որ դրանով իրականացվել են կուսակցության թե՛ մոտակա և թե՛ հեռակա նպատակները⁶⁶³: Այդ ժամանակ խորհրդահայ պատվիրակությունը ԱՄՆ-ում ստեղծեց ՅՕԿ-ի մասնաճյուղերի կենտրոնական վարչություն՝ կազմակերպության մասնաճյուղերի տեղական ցանցը ղեկավարելու համար⁶⁶⁴: ՄԴՅԿ-ում կուսակցության ԱՄՆ-ի և Կանադայի կառույցների թուլացումը հաճախ վերագրում են հենց Գ.Վարդանյանի վերոհիշյալ հայտարարություններին: Մասնավորապես այդ շրջանում տեղի հնչակյանները լքում էին կուսակցությունն ու միանում ՅՕԿ-երին, որի հետևանքով ՄԴՅԿ-ի Դեթրոյթի մասնաճյուղի 320 անդամներից մնաց 35-ը, Սենթ Լուիզի մասնաճյուղի 70 անդամներից՝ 6-ը, Ռեյսինի մասնաճյուղի 110 անդամներից՝

⁶⁵⁷ «Յիսնամեակ Սօց. դեմոկրատ Յնչակեան կուսակցութեան (1887-1937)», Փրովիտենս, 1938, էջ 324:

⁶⁵⁸ «Պատմութիւն Ս. Դ. Յնչակեան կուսակցութեան (1887-1962)», Ա. հատոր, էջ 500:

⁶⁵⁹ Տե՛ս «Պալթանեան մամուլ», Սօֆիա, Ա տարի, 7.11.1931, թիւ 36, էջ 2:

⁶⁶⁰ Տե՛ս Յայաստանի ազգային արխիվ (հետայսու՝ ՅԱԱ), ֆ. 1456, ց. 1, գ. 306, թ. 1:

⁶⁶¹ Տե՛ս Եղիազարյան Ա., Ռամկավար ազատական կուսակցության գործունեության հիմնական ուղղությունները 1920-ական թթ., «Յայգիտության հարցեր», 2018, թիվ 3, էջ 1-3:

⁶⁶² Տե՛ս ՅԱԱ, ֆ. 178, ց. 1, գ. 257, թ. 21:

⁶⁶³ Տե՛ս «Պատմութիւն Ս. Դ. Յնչակեան կուսակցութեան (1887-1962)», Ա. հատոր, էջ 500: Ի հետևանս ԱՄՆ-ում ՄԴՅԿ-ից հեռացած մի խումբ գործիչներ հիմնադրում են ՅՕԿ-ի Իսթ Սենթ Լուիզի մասնաճյուղը, որին միանում են կուսակցականներ ԱՄՆ-ի այլ քաղաքներից: Տե՛ս «Շինարար», Նյու Յորք, 1931, թիւ 4, էջ 28-29:

⁶⁶⁴ Տե՛ս «Շինարար», Նյու Յորք, 1931, թիւ 4, էջ 28-29:

16-ը, իսկ Բոսթոնի ու Կանադայի մասնաճյուղերն ընդհանրապես վերացան: Ընդհանուր առմամբ, ՅՕԿ-ի գործունեությունից տուժեց ՄԴՅԿ-ի 82 մասնաճյուղ⁶⁶⁵: Ըստ Ա.Կենդյանի՝ «Յնչակեան կուսակցութեան ցանած այս առաջին առողջ քաղաքականութեան սերմերուն յառաջացուցած ծիւրը (Խորհրդային Յայաստանի և ՅՕԿ-ի նկատմամբ վերաբերմունքը-Ա.Ե.), վերջէն եկող պաշտօնական ՅՕԿ-երը՝ փոխանակ ուճացնելու և զարգացնելու, իրենց սխալ և շիլ մեթոտներով սկան գոսացնել, կարծելով զաղափարատարած շինարար գործ կատարել»⁶⁶⁶:

Ուստի հույժ կարևորվել էր ՅՕԿ-ի հետ հետագա գործակցության բնույթի և, ընդհանրապես, այդ գործակցության անհրաժեշտության հարցը: 1932թ. ՄԴՅԿ-ի Ֆրանսիայի շրջանի պատգամավորական ժողովը քննարկեց ՅՕԿ-ի նկատմամբ դիրքորոշման հարցը: Ընդունված բանաձևով ՅՕԿ-ի խողովակը դարձյալ համարվում էր միակ իրական միջոցը՝ օգնելու Խորհրդային Յայաստանին, բայց միևնույն ժամանակ շարքային կուսակցականներին կոչ էր արվում հեռու մնալ «կեղծ ու պատիր ճամարտակութիւններէ»⁶⁶⁷: Իսկ ՄԴՅԿ-ի Ֆրանսիայի շրջանի 6-րդ պատգամավորական ժողովը, 1936թ. անդրադառնալով ՅՕԿ-երի խնդրին, ընդունում է բանաձև, ըստ որի՝ կուսակցությունը չի կարող հեռու մնալ Խորհրդային Յայաստանին օգնելու որևէ նախաձեռնությունից, բայց միևնույն ժամանակ պետք է փորձի ՅՕԿ-երը վերադարձնել իրենց բուն նպատակին⁶⁶⁸:

1933 թ. ՄԴՅԿ-ի Ամերիկայի շրջանի պատգամավորական ժողովը ՅՕԿ-ի հետ աշխատանքները շարունակելու նախապայման համարեց այն իր սկզբնական՝ Խորհրդային Յայաստանի վերաշինության աշխատանքներին աջակցելու նպատակին վերադարձնելը⁶⁶⁹:

Փաստորեն 1930-ական թթ. ՄԴՅԿ-ում համարում էին, որ ՅՕԿ-ը, ստեղծված լինելով Յայաստանի վերաշինության նպատակով, շեղվել է դրանից:

Տարիների ընթացքում ՅՕԿ-ի գործունեության նկատմամբ առաջացած վերաբերմունքն, ի վերջո, ՄԴՅԿ-ն արտահայտեց բաց նամակով: 1935թ. հուլիսյան համարում ՄԴՅԿ-ի «Յնչակ» պաշտոնաթերթը հրապարակեց «Վտանգաւոր լռութիւնը» վերնագրով խմբագրական-բաց նամակը՝ «Խորիր. Յայաստանի կառավարութեան ուշադրութեան» հղումով: Նամակում ասված էր, որ ՅՕԿ-երը հեռացել են իրենց նպատակից և չարիքի վերածվել՝ պառակտելով հայությունը, «որմէ օգտուողը եղած է միմիայն Դաշնակցությունը»: Ուստի կամ պետք է փակել ՅՕԿ-երը, կամ վերադարձնել ճշմարիտ ճանապարհի⁶⁷⁰:

Յայտնի է, որ 1930-ական թթ. երկրորդ կեսին Խորհրդային Միությունում սկիզբ առած բռնաճնշումներին զոհ գնացին նաև ՅՕԿ-ի ղեկավարները⁶⁷¹: Եվ ահա ՄԴՅԿ-ն ողջունում է տեղի ունեցածը. «...հայրենակցականներու⁶⁷², Պետական Կարմիր Խաչի⁶⁷³ և բազմաթիւ ցաւսիրտ հայերու արդար բողոքները հասած էին Երեւանի կառավարութեան ականջին, որոնց ի հետեւանք՝ հարկադրաբար առանձին հրամանագրով Խ.Յայաստանի կառավարութիւնը լուծեց ՅՕԿ-ը, հրացանազարկ

⁶⁶⁵ Տե՛ս «Պատմութիւն Ա. Դ. Յնչակեան կուսակցութեան (1887-1962)», Ա. հատոր, էջ 500:

⁶⁶⁶ «Պալքանեան մամուլ», Սօֆիա, Ա տարի, 7.11.1931, թիւ 36, էջ 2:

⁶⁶⁷ ՅԱԱ, ֆ. 422, ց. 1, գ. 770, թ. 2-10:

⁶⁶⁸ Տե՛ս նույն տեղում, գ. 809, թ. 1-3:

⁶⁶⁹ Տե՛ս նույն տեղում, գ. 774, թ. 1:

⁶⁷⁰ Տե՛ս «Յնչակ», 1935, թիւ 7 (յուլիս):

⁶⁷¹ Տե՛ս ՅԱԱ, ֆ. 178, ց. 1, գ. 248, թ. 4-6: Տե՛ս նաև Մանուկյան Ա., Զաղաքական կյանքը Յայաստանում 1920-1940 թթ., Ե., 2002, էջ 137:

⁶⁷² Իմա՛ հայրենակցական միությունների:

⁶⁷³ ԱՄՆ-ում Խորհրդային Յայաստանին օգնություն ցուցաբերելու համար ռամկավար, հնչակյան և այսպես կոչված չեզոք հայ կանանց կողմից ստեղծված կազմակերպություն:

ընելով տարակարծութեան գլխաւոր պատասխանատուները»⁶⁷⁴: Այսինքն՝ ԶՕԿ-ի գործունեության շուրջ տարակարծությունների պատճառով հնչակյան կուսակցությունը սկզբունքորեն ճիշտ էր համարում նրա պատասխանատուների զնդակահարությունը: Խնդիրն այն է, որ ՄԴԶ-ում կարծում էին, որ «ԶՕԿ»-երը ...ահեղ հարուածներով կը փորձէին ջլատել Հնչակեան կադին»⁶⁷⁵: Նույն բանում մեղադրվում էին նաև Խորհրդային Հայաստանի ղեկավար գործիչները՝ Ա. Մյասնիկյանը, Ա. Կասյանը և Ա. Զովհաննիսյանը⁶⁷⁶:

1938թ. ՄԴԶ-ն ողջունում էր Խորհրդային Հայաստանում ԶՕԿ-ի և հրնթացս նաև Հայկական բարեգործական ընդհանուր միության ու Մելքոնյան հիմնադրամի լուծարման որոշումը⁶⁷⁷: «Ուրախ ենք եւ սրտագին կը ծափահարենք Խորհրդային Հայաստանի կառավարութեան լուծարքի պատմական որոշումը», ասված էր «Հնչակ»-ի խմբագրականներից մեկում⁶⁷⁸: Բայց խմբագրականի հեղինակներին հետաքրքրում էր նաև, թե «...լուծարքէն վերջ ի՞նչ պիտի ըլլայ ԼՈՒԾԵԱԼԼԵՐՈՒ Վիճակն ու դերը գաղութահայ իրականութեան մէջ»⁶⁷⁹: Խնդիրն այն է, որ նրանք համարում էին, որ Խորհրդային Հայաստանը տվյալ պահին ճիշտ է վարվում, որ նախապատվություն չի տալիս սփյուռքահայ որևէ կազմակերպության, իսկ ԶՕԿ-երի ծախողումը կապում էին նախկինում սփյուռքի որոշակի կազմակերպությունների (ԶԲԸՄ, Մելքոնյան հիմնադրամ) հետ գործակցությանը նախապատվություն տալու իրողության հետ⁶⁸⁰: Նման պայմաններում ԶՕԿ-երի լուծարումը համարվում էր խնդրի լավագույն լուծումը:

Գ. ՄԴԶ-Ի «ՍՓՅՈՒՌՅԱՆ» ՕՐԱԿԱՐԳԸ 1930-ԱԿԱՆ ԹԹ.

1920-ական թթ. ՄԴԶ-ի կազմում գործում էին Եգիպտոսի, Ամերիկայի, Բուլղարիայի, Սիրիայի, Ֆրանսիայի, Հունաստանի, Պարսկաստանի ու Կովկասի կուսակցական շրջանները⁶⁸¹: Այդ ժամանակ կենտրոնացած սեփական քաղաքական ուղեգծի ճշգրտման և Խորհրդային Հայաստանի հետ հարաբերությունների վրա՝ ՄԴԶ-ն հրաժարվում էր 1920-ական թթ. ՀՅԴ-ի կողմից պարբերաբար քննարկման դրվող գաղութային համագումարին մասնակցելուց, քանի որ այն չէր համապատասխանում Խորհրդային Հայաստանի ներքին ու արտաքին քաղաքականությանը⁶⁸²: Նույն կերպ մերժվում էր նաև որևէ գործակցություն այն կուսակցությունների ու կազմակերպությունների հետ, «որոնք պայքար կը մղեն և բացասական դիրք բռնած են Խ. Հայաստանի դէմ»⁶⁸³, նկատի ունենալով գլխավորապես ՀՅԴ-ն:

Վերջինիս, ինչպես նաև ՌԿԿ-ի նկատմամբ ընդգծված բացասական վերաբերմունքի պատճառն այն էր, որ նրանց ղեկավարները իբրև թե «կ'ուզէին լճացնել քայքայել Հնչակեան կուսակցութիւնը»⁶⁸⁴: ՌԿԿ-ի նկատմամբ նման վերաբերմունքի պատճառն ակնհայտորեն նաև այն էր, որ նրա ձևավորմանը

⁶⁷⁴ «Պատմութիւն Ա. Դ. Հնչակեան կուսակցութեան (1887-1962)», Ա. հատոր, էջ 501:

⁶⁷⁵ Նույն տեղում, էջ 513:

⁶⁷⁶ Տե՛ս նույն տեղում:

⁶⁷⁷ Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 08.12.1937:

⁶⁷⁸ Տե՛ս «Հնչակ», 1938, թիւ 2 (փետրուար), էջ 3:

⁶⁷⁹ Նույն տեղում:

⁶⁸⁰ Տե՛ս նույն տեղում:

⁶⁸¹ Տե՛ս «Պատմութիւն Ա. Դ. Հնչակեան կուսակցութեան (1887-1962)», Ա. հատոր, էջ 497,

518:

⁶⁸² Տե՛ս նույն տեղում, էջ 517:

⁶⁸³ Նույն տեղում:

⁶⁸⁴ Նույն տեղում, էջ 513:

մասնակցել էին Վերակազմյալ հնչակյանները (Ազատական կուսակցություն)⁶⁸⁵, որոնց ՄԴՅԿ-ում «հերձված» էին համարում⁶⁸⁶:

ՄԴՅԿ-ի դրությունը ծանր էր նաև 1930-ական թթ.: Մի կողմից՝ ներքին տարածայնությունները, մյուս կողմից՝ այլևայլ դժվարությունները (կյութական ու կազմակերպական) հանգեցրեցին նրան, որ 1933թ. ԱՄՆ-ում ձևավորվեց ժամանակավոր (առժամյա) կենտրոնական վարչություն, որը կապ հաստատեց բոլոր շրջանների (Ամերիկա, Եգիպտոս, Բուլղարիա, Ռումինիա, Սիրիա, Լիբանան) հետ՝ փորձելով հարթել հակասությունները⁶⁸⁷: Առժամյա կենտրոնական վարչությունը, հույսը դնելով Խորհրդային Չայաստանի «յաղթական ընթացքին վրա», կարծում էր, որ ՄԴՅԿ-ն «իր թանկագին սկզբունքներու լոյսով և գիտակցութեան ճառագայթներով պետք է առաջնորդէ Սփիւռքի հայութիւնը և սատար հանդիսանայ Խ. Չայաստանի յառաջդիմութեան և բարձրացման»⁶⁸⁸: Նման պայմաններում 1934թ. տեղի ունենալիք ՄԴՅԿ-ի 9-րդ համագումարը պատմական առաքելություն ուներ՝ հաղթահարելու ներքին դժվարությունները և Խորհրդային Չայաստանում սկիզբ առնող բռնաճնշումների պայմաններում ճշգրտումներ կատարելու կուսակցության ուղեգծում:

Չնայած ասվածին՝ Ֆրանսիայի Մարսել քաղաքում 1934թ. օգոստոսին տեղի ունեցած ՄԴՅԿ-ի 9-րդ համագումարում հիմնականում օրակարգային էին սփյուռքի խնդիրները: Հետաքրքրական է, որ ժողովը կուսակցությունը համարում էր «որպես հայ աշխատաւորութեան դասակարգային դաստիարակութեան նուիրուած միակ հայ կազմակերպութիւնը»⁶⁸⁹, որով էլ հիմնավորվում էր նրա սփյուռքյան հիմնական առաքելությունը՝ «պաշտպանել սփիւռքահայ աշխատաւոր զանգուածը»⁶⁹⁰: Ժողովը «Սփիւռքի հայերու ազատագրման հարցի» վերջնական լուծումը կապում էր համաշխարհային պրոլետարիատի հաղթանակի հետ⁶⁹¹:

Սփյուռքահայ այն կուսակցությունների ու կազմակերպությունների հետ, որոնք թշնամաբար են տրամադրված Խորհրդային Չայաստանի նկատմամբ, մերժվում էր որևէ մասնակի կամ ընդհանուր գործակցություն, մինչդեռ Խորհրդային Չայաստանի նկատմամբ բարեկամաբար տրամադրված կազմակերպությունների հետ գործակցությունը դիտվում էր որպես անհրաժեշտ պայման⁶⁹²:

Մյուս կողմից՝ կարևորելով գաղթավայրերի ու Խորհրդային Չայաստանի միջև կապը՝ ՄԴՅԿ-ի պաշտոնաթերթ «Հնչակ»-ը կյութեր էր հրատարակում կուսակցության ու Խորհրդային Չայաստանի միջև գաղափարական կապի վերաբերյալ՝ պնդելով, որ նրանք ունեն նույն աշխարհայացքը, ուստի հենց ՄԴՅԿ-ին էր վիճակված հանդիսանալու գաղթաշխարհի ու Խորհրդային Չայաստանի միջև կապող օղակ: «Միև բոլոր կամուրջները ժամանակաւոր են», - պնդում էր պաշտոնաթերթը⁶⁹³:

1930-ական թթ. կեսին, երբ աշխարհը ցնցվում էր տնտեսական ճգնաժամից, հայրության տարբեր շրջանակներում քննարկվում էր վտանգված հայ գաղթականության հարցը: Խնդիրն այն է, որ տարբեր երկրներում ապաստանած հայ գաղթականները գրկվում էին աշխատանքից՝ դատապարտվելով սովի: Ուստի հայ իրականության մեջ խնդրի լուծումը երբեմն դիտարկվում էր զանգվածային քաղաքացիությունը, այն է՝ հայ գաղթականների կողմից զանգվածաբար բնակության

⁶⁸⁵ Տե՛ս Դարբինեան Ա., Չայ ազատագրական շարժման օրերեն (յուշեր 1890էն 1940), Ե., 2003, էջ 234-235:

⁶⁸⁶ Տե՛ս «Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան (1887-1962)», Ա. հատոր, էջ 520:

⁶⁸⁷ Տե՛ս Նույն տեղում, էջ 519-520:

⁶⁸⁸ Նույն տեղում, էջ 520:

⁶⁸⁹ Նույն տեղում, էջ 521:

⁶⁹⁰ Նույն տեղում, էջ 521:

⁶⁹¹ Տե՛ս Նույն տեղում, էջ 521-522:

⁶⁹² Տե՛ս Նույն տեղում, էջ 522:

⁶⁹³ «Հնչակ», 1937, թիւ 11-12, էջ 8:

պետության քաղաքացիության ընդունումը⁶⁹⁴: ՄԴԻԿ-ում համոզված էին, որ դա խնդրի լուծում չէ, քանի որ տնտեսական ճնաժամը միջազգային երևույթ է և հարվածում է թե՛ քաղաքացուն և թե՛ ոչ քաղաքացուն. «Այս հիմնովին սխալ, ազգային տեսակետով վտանգավոր ուղիին մենք կը հակադրենք գերազանցապես հայրենասիրական, ազգաշէն եւ տնտեսական դաժան կացութենէն իսպառ փրկող միակ ուղին – ԶԱՆԳՈՒԲԾԱՅԻՆ ԳԱՂԹ ԴԵՊԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ լոզունգը»⁶⁹⁵: Ըստ որում այդ գաղթը մի կողմից՝ փրկություն էր աշխարհասփյուռ հայության համար, մյուս կողմից՝ խորհրդային Հայաստանի վերելքին նպաստող միջոցառում⁶⁹⁶:

1938թ. հուլիսին Փարիզում բացվեց ՄԴԻԿ-ի 10-րդ համագումարը: Մասնակցում էին Ամերիկայի, Բալկանների, Եգիպտոսի ու Լիբանանի պատգամավորները, թեև «կուսակցական պարտականութիւնները», ասել է՝ հանձնարարականներն ու նյութական պարտավորությունները, կատարել էին միայն Ամերիկայի ու Եգիպտոսի շրջանների վարիչ մարմինները⁶⁹⁷:

Ժողովը կուսակցությունը հռչակեց որպես Կոմիստերնի համակիր կազմակերպություն՝ «կատարեալ անկախ դրութեամբ»⁶⁹⁸:

Հույժ կարևոր էր ժողովի ընդունած հետևյալ բանաձևը. «Ի նկատի ունենալով, որ ժողովրդական քաղաքական շարժումներու զարկ տուող և բովանդակութիւն տուող, կեդրոնական ոյժը ներկայացնող կուսակցութեան մը մղած պայքարի յաջողութիւնը՝ առաւել կամ նուազ չափով պայմանաւորուած է նաև անոր գաղափարական ազդեցութեան ոլորտին մէջ գտնուող, զանգուածային ոյժերու կազմակերպուած արտայայտութիւնը հանդիսացող զանազան միութիւններու և կուսակցութեանց հաւաքական գործունեութեամբ՝ Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան Տասներորդ Համագումարը կ'որոշէ, որ Շրջանային Վարիչ Մարմինները և Գործադիր Ցանձնախումբերը ուժգին թափով պիտի աշխատին Կուսակցութեան ազդեցութեան ենթակայ մարզական, երիտասարդական, մշակութային և արիեստակցական միութիւններու ուժեղացման գործին՝ տուեալ շրջանի մէջ և տուեալ ռոպէին՝ ազգային, քաղաքական և սոցիալական ճակատներուն վրայ Կուսակցութեան հետապնդած նպատակներուն և անոնց յաջողութեան համար կիրարկուող միջոցներուն ներդաշնակ գործունեութեամբ»⁶⁹⁹: Փաստորեն, նոր աշխարհամարտի շեմին ՄԴԻԿ-ն սեփական կառուցելու ամրապնդելու ու գաղափարաբանական դաշտն ընդարձակելու փորձեր էր ձեռնարկում և, ինչպես մյուս սփյուռքահայ ազգային կուսակցությունները, դրանց հաջողության գրավականն էր համարում ուղեկից կազմակերպությունների հիմնումը կամ եղածների ամրապնդումը:

Ժողովը որոշեց նաև տարբեր երկրների հայկական ազգային իշխանությունների ու բարեսիրական միությունների հետ միասին աջակցել սփյուռքահայության նյութական վիճակի բարելավմանը, կրթական մակարդակի բարձրացմանն ու ազգային իրավունքների պաշտպանությանն ուղղված ձեռնարկներին⁷⁰⁰:

1938թ. համաշխարհային պատերազմին ընդառաջ ՄԴԻԿ-ում կարծում էին, որ գաղութահայությանն ու խորհրդային Հայաստանին պաշտպանելու գլխավոր առաքելությունը ՄԴԻԿ-ինն է. «Այս աշխատանքը յեղափոխական գործ է, եւ այդ չի պատկանիր ո՛չ հայրենիքի դէմ զէնք բարձրացնող Դաշնակցականներուն, ո՛չ պահպանողական Ռամկավարներուն, ո՛չ ալ բարեգործութեան ճանապարհով, ժողովրդի մը դիմադրական ուժը սպաննող ու մուրացկանութեան դուռ բացող

⁶⁹⁴ Տե՛ս Լույս տեղում, 1935, թիվ 4 (ապրիլ), խմբագրական:

⁶⁹⁵ Լույս տեղում:

⁶⁹⁶ Լույս տեղում:

⁶⁹⁷ Տե՛ս «Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան (1887-1962)», Ա. հատոր, էջ 528:

⁶⁹⁸ Լույս տեղում, էջ 527:

⁶⁹⁹ Լույս տեղում:

⁷⁰⁰ Տե՛ս Լույս տեղում:

Բարեգործականներուն, այլ կը պատկանի սոցիալիստական արդարութեան ու աշխատանքի ազատագրութեան վրայ կանգնած Յնչակեան Կուսակցութեան»⁷⁰¹:

Փաստորեն, ՍԴԻԿ-ն 1920-1930-ական թթ. անցել է լրջագույն փորձությունների միջով: Ի սկզբանե խնդիր ունենալով նոր իրողությունների պայմաններում ամրապնդելու սեփական կառույցը, հստակեցնելու իր անելիքներն ու քաղաքական ուղեգիծը՝ կուսակցությունը նաև ստիպված եղավ հիմնավորելու իր հետագա գոյության անհրաժեշտությունը: Հանդիսանալով սփյուռքում գործունեություն իրականացնող կառույց՝ այն իր գործունեության հիմքում դնում էր խորհրդային Հայաստանի հետ հարաբերությունները, որից էլ ածանցում էր սփյուռքահայության ֆիզիկական գոյությունը և ազգային ինքնության պահպանումը:

THE MAIN ACTIVITY DIRECTIONS OF THE SOCIAL DEMOCRAT HUNCHAKIAN PARTY IN THE 1920-1930s

ARMAN YEGHIAZARYAN

*Yerevan State University, Head of the Chair on Diaspora Studies,
Faculty of History, Doctor of History, Associate Professor,
Yerevan, Republic of Armenia*

In the article the main activities of the Social Democrat Hunchakian Party in 1920-1930s are investigated. Particularly the position of the party on Soviet Armenia and the Communist International, relations with the Aid committee of Armenia, as well as the main principles of its Diaspora agenda are researched.

The research is based on historical (historical-genetic) and logical methods. Due to the first method the SDHP's new political vision is introduced and covered, its origin, development and result in the end of 1930s are examined and through using the second method the nature of the key events is discovered.

It is clarified that in the beginning of 1920s the SDHP faced a complicated situation, as under the conditions of new geopolitical and national situation it was necessary to clarify its position on new authorities of Armenia and the diaspora as well as on parties operating there.

The fact that the diaspora agenda of the SDHP was dependent on the prioritized relations with the Soviet Armenia, is based in the article.

It is proved that SDHP relations with the Aid committee of Armenia has gradually entered a deadlock and has become hostile, as a result of which the SDHP welcomed the dissolution of the committee.

Key words. *Social Democratic Hunchakian Party (SDHP), activity, general assembly, Soviet Armenia, diaspora, communities, Aid committee of Armenia, marxism, Communist International (Comintern), political direction, agenda for diaspora.*

⁷⁰¹ «Հնչակ», 1938 թիվ 3 (մարտ), էջ 6:

ОСНОВНЫЕ НАПРАВЛЕНИЯ ДЕЯТЕЛЬНОСТИ СОЦИАЛ-ДЕМОКРАТИЧЕСКОЙ ГНЧАКСКОЙ ПАРТИИ В 1920-1930-Х ГОДАХ

АРМАН ЕГИАЗАРЯН

*Заведующий кафедрой диаспороведения факультета истории
Ереванского государственного университета,
доктор исторических наук, доцент,
г.Ереван, Республика Армения*

В статье исследуются основные направления деятельности Социал-демократической Гнчакской партии в 1920-1930 годы. В частности, исследована позиция партии в отношении Советской Армении и Коммунистического интернационала, взаимоотношения с Комитетом помощи Армении, а также основные принципы ее диаспорской повестки дня.

Исследование основано на исторических (историко-генетических) и логических методах. Благодаря применению первого метода представлено и освещено новое политическое видение Гнчакской партии, его происхождение, развитие и результаты в конце 1930-х годов, а с помощью второго метода выясняется характер основных событий.

Выясняется тот факт, что в начале 1920-х годов Гнчакская партия столкнулась со сложной ситуацией, так как в условиях новой геополитической и национальной ситуации было необходимо уточнить свою позицию в отношении новых властей Армении, а также в отношении диаспоры и действующих там партий.

Обоснован тот факт, что повестка дня Гнчакской партии в отношении диаспоры зависела от приоритетных отношений с Советской Арменией.

Доказано, что отношения Гнчакской партии с Комитетом помощи Армении постепенно зашли в тупик и стали враждебными, в результате чего партия приветствовала роспуск комитета.

Ключевые слова: *Социал-демократическая Гнчакская партия (СДГП), деятельность, общее собрание, Советская Армения, диаспора, общины, Комитет помощи Армении, марксизм, Коммунистический интернационал (Коминтерн), политическое направление, повестка дня для диаспоры.*

ՄՓՅՈՒՌԱՅԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԻ ԿՈՄԻՏԵՆ ԵՎ ԵԳԻՊՏԱՅԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ 1964-1985 ԹԹ.* 702

ՀՏԴ 93/94(479.25+620)

ՄԵԼԻԷ ՀՈՎՍԵՓՅԱՆ

*Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի
սփյուռքագիտության ամբիոնի ասպիրանտ,
ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն
melik13@mail.ru*

Հոդվածի նպատակը Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի և Եգիպտոսի հայ համայնքի համագործակցության լուսաբանումն է 1964-1985թթ.-ին: Խնդիր է դրված բացահայտելու ու ներկայացնելու Կոմիտեի ու Եգիպտոսի հայ համայնքի համագործակցության ամբողջ դաշտը:

Պատմական-քննական մեթոդը հետազոտության հիմնական եղանակն է: Այն օգտագործվել է աղբյուրներից (արխիվային նյութեր) վստահելի տեղեկություններ քաղելու, պատմական փաստերի ու իրադարձությունների հստակեցման համար:

Հոդվածում ներկայացվում են Կոմիտեի ու Եգիպտոսի համայնքի համագործակցության տարբեր ուղղությունները, ձեռք բերված արդյունքները: Արխիվային փաստաթղթերի հիման վրա ներկայացված են նաև համայնքում տիրող իրավիճակը, բարդությունները և Կոմիտեի կողմից իրականացվող քայլերը՝ դրանք հաղթահարելու ուղղությամբ: Փաստվում է այն իրողությունը, որ Եգիպտոսի հայ համայնքը գտնվում էր Խորհրդային Հայաստանի ղեկավարության ուշադրության կենտրոնում, որի արդյունքում վերջինիս ներկայացուցիչները այցելում էին Կահիրե ու Ալեքսանդրիա: Հիմնավորվում է, որ Կոմիտեի գործունեությունը պայմանավորված է Եգիպտոսի հայ համայնքի տարբեր խնդիրների (հայապահպանություն, հայրենադարձություն և այլն) լուծմանը:

Բանալի բառեր՝ Եգիպտոսի համայնք, Կոմիտե, ծրագիր, սփյուռքահայություն, կազմակերպություն, գործիչ, այցելել, համագործակցել, հանդիպում, հավաք, համաժողով:

Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի ստեղծումը ու Եգիպտոսի հայկական համայնքը: Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն (այսուհետև՝ Կոմիտե) ստեղծվել է 1964թ.-ին՝ սփյուռքահայության հետ կապերը զարգացնելու, սփյուռքում Խորհրդային Հայաստանի նկատմամբ հայրենասիրություն սերմանելու և փոխադարձ ճանաչողությունը խորացնելու նպատակներով⁷⁰³:

Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի գործակցությունը Եգիպտոսի հայ համայնքի հետ 1964-1985թթ.-ին. ընթանում էր Կոմիտեի գործունեության բոլոր ուղղություններով (հասարակական, մշակութային, կրթական և այլն): Եգիպտոսի համայնքում Կոմիտեի հիմնական գործընկերները

* Հոդվածը ներկայացվել է 29.04.2019թ., գրախոսվել՝ 21.05.2019թ., տպագրության ընդունվել՝ 17.06.2019թ.:

⁷⁰² Հոդվածում լուսաբանված է Կոմիտեի և հորդանանահայ համայնքի համագործակցությունը Կոմիտեի նախագահ Վարդգես Համազասյանի ղեկավարման (1964-1985 թթ.) շրջանում:

⁷⁰³ Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԿ), ֆ. 875, ց. 1, գ. 2, թ. 1-3:

«առաջադիմական» կազմակերպություններն էին: Եգիպտահայ համայնքում պարբերաբար հյուրընկալվում էին հորհրդային Հայաստանի հասարակական, ինչպես նաև մշակույթի ու գիտության գործիչները: Խորհրդային Հայաստան էին այցելում համայնքի տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչները, երիտասարդներն իրենց հանգիստն էին անցկացնում հայրենիքում, իսկ ուսուցիչները մասնակցում էին ամենամյա վերապատրաստման դասընթացներին:

Եգիպտահայ համայնքի հետ Կոմիտեի աշխատանքները մշտապես խաթարվել են արաբա-իսրայելյան պարբերական պատերազմների պատճառով և լուսաբանման ենթակա ավելի քան 20 տարիների ընթացքում հաճախակի ընդհատվել: Հետևապես Կոմիտեի բազմաթիվ կարևոր գործեր եգիպտահայության առումով մնացել են անավարտ: Բայց դա չի խանգարել, որ Կոմիտեն ջանքեր ներդնի եգիպտոսի հայ համայնքին աջակցելու գործում:

Ինչպես և մնացած համայնքների հետ աշխատանքներում, Կոմիտեն իր ծրագրերը սկսեց եգիպտահայ համայնքի ուսումնասիրությամբ, որը հիմնականում վերաբերվում էր եգիպտահայերի թվաքանակին, համայնքում գործող կազմակերպություններին, տիրող իրավիճակին և այլն:

Եգիպտահայ համայնքն ըստ Կոմիտեի 1968թ.-ի տեղեկանքի: Եգիպտոսի՝ 1952թ.-ի հեղափոխությունից հետո իրականացրած մասնավոր սեփականության ազգայնացման ու արաբականացման քաղաքականության⁷⁰⁴, 1960թ.-ի օրենքով քաղաքացիություն չունեցողների աշխատանքի հնարավորությունների սահմանափակման, մահմեդականներին առավելություն տալու⁷⁰⁵ և 1961-1962թթ.-ին երկրի հարյուրավոր մեծահարուստների, այդ թվում նաև՝ հայերի ունեցվածքի բռնագրավման⁷⁰⁶ պատճառով բազմահազար հայեր գաղթեցին Եգիպտոսից: Միայն 1962-1964թթ.-ին արտագաղթել է 11 հազար եգիպտահայ⁷⁰⁷: Եթե 1960-ական թթ.-ի սկզբին եգիպտահայերի թիվը կազմում էր 45 հազար⁷⁰⁸, ապա 1968թ.-ի դրությամբ եգիպտահայության թիվը նվազել էր մինչև 20 հազար, որից 13 հազարը բնակվում էր Կահիրեում, իսկ 7 հազարը՝ Ալեքսանդրիայում⁷⁰⁹: Եգիպտահայոց առաջնորդական տեղապահ Չավեն Եպիսկոպոս Չինչինյանը 1971թ.-ի դրությամբ եգիպտահայերի թիվը հաշվում էր 15-20 հազար⁷¹⁰:

Կոմիտեն մինչև եգիպտահայ համայնքի հետ կապերի հաստատումը մանրամասնորեն ծանոթացավ համայնքում տիրող իրավիճակին: Ըստ 1946թ.-ին Եգիպտոսի իշխանության կողմից հավանության արժանացած հայկական թեմական կանոնադրության՝ եգիպտահայ թեմը բաժանված էր երկու մասի՝ Կահիրե ու

⁷⁰⁴ Տե՛ս «Ջահակիր», 22.07.1965:

⁷⁰⁵ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 326, ց. 2, գ. 32, թ. 1-4:

⁷⁰⁶ Տե՛ս **Issawi Ch.**, Egypt in revolution: an economic analysis, London, 1963, p. 62. Տե՛ս նաև **Խաչատրյան Ա.**, 1952 թվականի հուլիսի 23-ի եգիպտական հեղափոխությունը և հայերը, «Կանթեղ» գիտական հոդվածների ժողովածու, 2008, թիվ 3, էջ 113:

⁷⁰⁷ Տե՛ս **Խաչատրյան Ա.**, 1952 թվականի հուլիսի 23-ի եգիպտական հեղափոխությունը և հայերը, էջ 114:

⁷⁰⁸ Տե՛ս **Գասպարյան Ա.**, Սփյուռքահայ գաղթօջախներն այսօր, Երևան, 1962, էջ 246:

⁷⁰⁹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 2, գ. 622, թ. 1:

⁷¹⁰ Տե՛ս «Արեւ», 11.01.1971: Տե՛ս նաև **Խաչատրյան Ա.**, Եգիպտահայ համայնքը 1970-1981 թվականներին, «Լրաբեր հասարակական գիտությունների», 2008, թիվ 3, էջ 50: Տարբեր տվյալների համաձայն արդեն 1970 թ. եգիպտահայերի թիվը իջավ 12 հազարի, իսկ 1974 թ. մոտ 10 հազարի (տե՛ս «Հայ սփյուռք» հանրագիտարան, Երևան, 2003, էջ 154: Տե՛ս նաև **Մելքոնյան Է.**, Հայկական բարեգործական ընդհանուր միության պատմություն, Ե., 2005, էջ 454, **Հովյան Վ.**, Եգիպտոսի հայ համայնքը, «21-րդ դար» տեղեկատվական-վերլուծական հանդես, 2015 թիվ 3, էջ 89):

Ալեքսանդրիա կենտրոններով⁷¹¹: Համայնքային կյանքը կենտրոնացած էր Կահիրեի Սբ Գրիգոր Լուսավորիչ և Ալեքսանդրիայի Սբ Պողոս-Պետրոս եկեղեցիների շուրջ: Կահիրեում ու Ալեքսանդրիայում տեղական համայնքները ղեկավարում էին տեղի հայերի ընտրած թեմական (գավառական) ժողովները: Կահիրեում 1968թ.-ի դրությամբ թեմական ժողովում մեծամասնություն էին հակադաշնակցականները, իսկ Ալեքսանդրիայի թեմական ժողովում ստեղծվել էր կոալիցիա, որի մեջ մտնում էին թե՛ դաշնակցականները և թե՛ հակադաշնակցականները⁷¹²: Կահիրեի ու Ալեքսանդրիայի թեմական ժողովները հավասար ծայներով ընտրում էին համայնքի հոգևոր առաջնորդին: Ըստ Կոմիտեի տեղեկանքի՝ 1968թ.-ի տարածայնությունների պատճառով առաջնորդի ընտրությունը տեղի չէր ունենում, իսկ երկու քաղաքների համայնքները երբեմն հակադրվում էին իրար⁷¹³:

Մերձավոր Արևելքի հայ համայնքների մեջ Եգիպտոսի հայ համայնքը միակն էր, որտեղ մրցակցող երեք կուսակցությունները 1970-ական թթ.-ին հաճախ համագործակցում էին՝ ընդհանուր խնդիրների լուծման համար⁷¹⁴: Օրինակ, 1975թ.-ին թե՛ Կահիրեում, թե՛ Ալեքսանդրիայում թեմական պատգամավորական ընտրությունները տեղի ունեցան հենց համագործակցության ոգով կազմված խառը ցանկերով: Այդ մասին մեծ ոգևորությամբ Մայր աթոռին գրություն են հղել Եգիպտահայոց առաջնորդական տեղապահ տ. Ներսես ծ. վրդ. Բապուճյանը⁷¹⁵:

Եգիպտահայերի մոտ 70 տոկոսը արհեստավորներ էին, մեծ էր նաև առևտրականների թիվը: Կային նաև խոշոր ձեռնարկատերեր, իսկ մնացյալը մտավորականներ էին⁷¹⁶:

Բացի ՀՅԴ-ից, 1960-ական թթ.-ի սկզբին Եգիպտահայ համայնքում մեծ դերակատարություն ուներ ՌԱԿ-ը, որի կազմում կային խոշոր ձեռնարկատերեր, արդյունաբերողներ, բանկիրներ ու մտավորականներ: Ռամկավարների ու Հայկական բարեգործական ընդհանուր միության հարաբերությունները դաշնակցային էին⁷¹⁷:

Եգիպտոսում հրատարակվում էին հայկական «Արև» (Ռամկավար-ազատական կուսակցություն), «Հուսաբեր» (Հայ յեղափոխական դաշնակցություն), «Ջահակիր» (Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցություն), «Սավառնակ», «Տեղեկատու» թերթերը⁷¹⁸: 1968թ.-ի դրությամբ Կահիրեում գործում էր հայկական ռադիոժամ⁷¹⁹:

Կոմիտեի գործունեության սկզբնական շրջանում Եգիպտահայ համայնքում գործում էին նաև տարաբնույթ միություններ, որոնց մեջ հատկապես աչքի էին ընկնում ՀԲԸՄ-ն (ուներ մասնաճյուղեր Կահիրեում ու Ալեքսանդրիայում), միության մարզական-երիտասարդական կառույցները Հելիոպոլիսում և Ալեքսանդրիայում, Հայ գեղարվեստասիրաց միությունը (Կահիրե), Հայ ազգային հիմնադրամը

⁷¹¹ Տե՛ս նաև **Ալպոյաճեան Ա.**, Արաբական Միացեալ Հանրապետութեան Եգիպտոսի նահանգը և հայերը (սկիզբէն մինչեւ մեր օրերը), Գահիրե, 1960, էջ 302-313:

⁷¹² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 2, գ. 622, թ. 5:

⁷¹³ Տե՛ս Նույն տեղում, թ. 6:

⁷¹⁴ Տե՛ս **Խաչատրյան Ա.**, Եգիպտահայ համայնքը 1970-1981 թվականներին, «Լրաբեր հասարակական գիտությունների», 2008, թիվ 3, էջ 54: Տե՛ս նաև «Պայքար», 06.01.1979, «Արև», 07.11.1979:

⁷¹⁵ «Թեմական պատգամավորական ընտրություններ Եգիպտահայ տիրախնամ թեմում», «Էջմիածին» պաշտօնական ամսագիր Հայրապետական Աթոռոյ Ս. Էջմիածնի, 1976, թիվ ԼԳ (Ա), էջ 52-53:

⁷¹⁶ Տե՛ս **Թոփուզյան Հ.**, Եգիպտոսի հայկական գաղութի պատմություն (1805-1952), Ե., 1978, էջ 238:

⁷¹⁷ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 287, թ. 14-15:

⁷¹⁸ Տե՛ս Նույն տեղում, ֆ. 875, ց. 2, գ. 622, էջ 3:

⁷¹⁹ Տե՛ս Նույն տեղում, գ. 26, թ. 47-51:

(Յեյնոպոլիս), Զայ մշակույթի բարեկամների մարմինը (Կահիրե), Զամազգային հայ կրթական և մշակութային միությունը (Կահիրե), Զայկական մարմնակրթական ընդհանուր միության «Արարատ» ակումբը (Կահիրե) և այլն⁷²⁰:

Թեև 1949-1952թթ.-ին եգիպտոսում գործում էր 12 հայկական դպրոց ու վարժարան⁷²¹, սակայն արդեն 1960-1970-ական թթ.-ին այդ թիվը նվազեց: 1968թ.-ի դրությամբ Զամայնքում գործում էր երեք վարժարան: Կահիրեի Գալուստյան ազգային վարժարանում սովորում էր 300 երեխա⁷²²: Կահիրեում գործում էր նաև Նուպարյան ազգային վարժարանը, որտեղ ուսանում էին 150 աշակերտներ: Այն ուներ նաև կիրակնօրյա բաժին: Ալեքսանդրիայում եկեղեցուն կից գործում էր Պողոսյան ազգային վարժարանը՝ 150 աշակերտներով: Վարժարաններում դասընթացները կազմակերպվում էին պետական ծրագրով, բայց ազատ ուսուցանվում էին հայագիտական առարկաները: Երեք վարժարաններին կից գործում էին մանկապարտեզներ⁷²³:

Փաստորեն եգիպտահայ համայնքը առնչվում էր մեծ խոչընդոտների, որի պատճառով էլ հայրենիքի հետ կապերը մեծապես կարևորվում էին: Այդ ամենը հաշվի էր առնում Կոմիտեն համայնքի հետ հարաբերությունները կառուցելիս:

Եգիպտահայեր ու խորհրդային Զայաստանը: Զայրենիք-սփյուռք կապերի զարգացումը 1960-ական թթ.-ին օրակարգային էր սփյուռքում և, մասնավորապես, եգիպտահայ համայնքում: Եգիպտոսի «Արև» օրաթերթի խմբագիրը 1965թ.-ին առաջարկում էր ԶԽՍՀ ղեկավարությանը՝ արտագաղթը կանխելու նպատակով հայրենիքից հաճախակի գործուղել մշակութային գործիչների խմբեր, ինչը հայրենիքի հետ կապերի սերտացման ֆոնին կարող էր նպաստել արտագաղթի դադարեցմանը⁷²⁴: Կոմիտեն ևս դրոշել էր սերտացնել կապերը եգիպտահայ համայնքի հետ՝ արտագաղթի պատճառով⁷²⁵: Ընդհանրապես, դիմակայած դժվարությունների պատճառով և Կոմիտեի իրականացրած աշխատանքների շնորհիվ եգիպտահայերի շրջանում տարածվել էր այն կարծիքը, որ հայրենիքի հետ կապերը սփյուռքի գոյատևման հիմնական գրավականն են, և կապի խզումը կարող է բերել կորստի ու անհետացման⁷²⁶:

Կոմիտեն արձագանքեց եգիպտահայերի խնդրանքին նաև այն պատճառով, որ դա բխում էր իր գործառույթներից: 1964-1985թթ.-ին ԶԽՍՀ-ից եգիպտոս են մեկնել գրողների, գիտնականների, հասարակական-քաղաքական գործիչների, լրագրողների խմբեր⁷²⁷: Կոմիտեն համայնքներ էր ուղարկում նաև մասնագիտական տուրիստական խմբեր, որոնք եղել են եգիպտոսում⁷²⁸:

1965թ.-ի հունվարին եգիպտոս՝ Կահիրե ժամանեց Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ն: Օղանավակայանում վեհափառին դիմավորելու էին եկել եգիպտոսի հայ համայնքի գրեթե բոլոր կազմակերպությունների ներկայացուցիչները՝ առանց «առաջադիմականների» ու «հետադիմականների» բաժանման: Զամայնքի հետ

⁷²⁰ Տե՛ս նույն տեղում, գ. 622, էջ 3-4:

⁷²¹ Տե՛ս «Չարթունք», 05.09.1952: Տե՛ս նաև **Թովուզյան Զ.**, նշվ. աշխ., էջ 275-276:

⁷²² Զետաբեքիր Է, որ Կոմիտեի ավելի վաղ թվագրվող տեղեկանքներից մեկում նշվում էր, որ վարժարանում կային 800 աշակերտներ: Տե՛ս ԶԱԱ, ֆ. 875, ց. 1, գ. 41, թ. 37:

⁷²³ Տե՛ս ԶԱԱ, ֆ. 875, ց. 2, գ. 622, էջ 2-3:

⁷²⁴ Տե՛ս **Խաչատրյան Ա.**, 1952 թվականի հուլիսի 23-ի եգիպտական հեղափոխությունը և հայերը, «Կանթեղ» գիտական հոդվածների ժողովածու, 2008, թիվ 3, էջ 115:

⁷²⁵ Տե՛ս ԶԱԱ, ֆ. 875, ց. 1, գ. 25, թ. 2:

⁷²⁶ Տե՛ս «Զահակիր», 04.05.1972: Տե՛ս նաև **Խաչատրյան Ա.**, եգիպտահայ համայնքը 1970-1981 թվականներին, էջ 52:

⁷²⁷ Տե՛ս **Սելիքսեթյան Զ.**, Զայրենիք-Սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը (1920-1980 թթ.), Ե., 1985, էջ 420:

⁷²⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 389:

հանդիպմանը Վազգեն Ա-ն խոսեց միասնականության մասին, որին պետք էր ձգտել ամբողջ սփյուռքում: Նա մի շարք հանդիպումներ ունեցավ եգիպտահայերի հետ, որից հետո մեկնեց Եթովպիա⁷²⁹:

Եգիպտոսից, ինչպես և մյուս համայնքներից հայրենիք էին հրավիրվում ներկայացուցիչներ՝ հորեյանական կարևոր միջոցառումներին մասնակցելու համար: Օրինակ, 1965թ.-ի Մեծ եղեռնի 50-ամյակի միջոցառումներին մասնակցելու համար սփյուռքի տարբեր համայնքներից հրավիրում էին ներկայացուցիչներ, որոնց թվում հրավիրվեց մեկ գործիչ՝ Նաև Եգիպտահայ համայնքից⁷³⁰: 1970թ.-ին Նույնպես Հայաստանի խորհրդայնացման 50-ամյակի առթիվ ՀԽՍՀ են հրավիրվել մշակութային գործիչներ Եգիպտոսից⁷³¹:

Եգիպտոսի տարբեր հայկական կազմակերպություններ այս կամ այն հորեյանը նշելու համար, որպես կանոն, դիմում էին Կոմիտեին՝ հայրենիքից մշակութային գործիչներ ուղարկելու խնդրանքով: Օրինակ, 1965թ.-ին ստացվեց եգիպտահայ «Արև» օրաթերթի խմբագրության գրությունը՝ թերթի հիմնադրման 50-ամյակին Եգիպտոս գործուղելու բանաստեղծ Գևորգ Էմինին, ասմունքի վարպետ Սուրեն Քոչարյանին, «Սովետական Հայաստան» ամսագրի խմբագիր Աշոտ Թադևոսյանին, ինչպես նաև բանաստեղծ Վահագն Դավթյանին, որ 1967-1981թթ.-ին եղել է Կոմիտեի Նախագահի տեղակալը⁷³²: Սակայն գործուղումը չիրականացավ, և միջոցառումն այդ պատճառով հետաձգվեց⁷³³: Բայց 1965թ.-ին հաջողվել է Եգիպտոս ուղարկվել Հայաստանի արվեստի շրջիկ ցուցահանդեսներ⁷³⁴:

1965թ.-ին սփյուռքահայ տարբեր գործիչների հետ Կահիրեից Երևան էր հրավիրվել Նաև Եգիպտահայ ծաղրանկարիչ Ալեքսանդր Սարուխանը⁷³⁵, ինչպես նաև Սիմոն Սամսոնյանը⁷³⁶:

Որոշ ժամանակ անց ՀԽՍՀ-ում կազմակերպվել է Սիրիայի, Լիբանանի ու Եգիպտոսի 14 հայ նկարիչների ցուցահանդես⁷³⁷:

Արդեն 1966թ.-ին Կոմիտեն առաջարկում էր ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղարին՝ Եգիպտոս գործուղել գրողների խումբ⁷³⁸, սակայն առաջարկն իրականացնել չհաջողվեց Մերձավոր Արևելքում սրված իրավիճակի պատճառով:

Կոմիտեի՝ 1967-68 թթ.-ի հրավերների ու գործուղումների ծրագրով Նախատեսվում էր 1967թ.-ին հայրենիք հրավիրել 10 մշակութային գործիչների Լիբանանի, Սիրիայի, Եգիպտոսի ու Հորդանանի հայ համայնքներից: Փոխադարձաբար այդ համայնքների հայկական դպրոցներին մեթոդական օգնություն ցույց տալու նպատակով գործուղելու էին լուսավորության մինիստրության աշխատողների և ուսուցիչների 10 հոգուց բաղկացած խումբ, 10 լրագրող, ինչպես նաև համապատասխան մասնագետներ՝ «Ֆոլկլորային նյութեր և չթացող բարբառների նմուշներ» հավաքագրելու նպատակով⁷³⁹:

⁷²⁹ «Վեհափառ Հայրապետը Եգիպտոսում», «Էջմիածին» պաշտոնական ամսագիր Հայրապետական Աթոռոյ Ս. Էջմիածնի, 1965, թիվ ԻԲ (Ե-2-Ե), էջ 30-38:

⁷³⁰ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 4, գ. 40, թ. 2:

⁷³¹ Տե՛ս **Մեղիքսության Յ.**, նշվ. աշխ., էջ 387:

⁷³² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 4, գ. 25, թ. 6:

⁷³³ Տե՛ս Նույն տեղում, թ. 35-36:

⁷³⁴ Տե՛ս Նույն տեղում, գ. 4, թ. 5:

⁷³⁵ Տե՛ս Նույն տեղում, գ. 1, գ. 25, թ. 40:

⁷³⁶ Տե՛ս **Մեղիքսության Յ.**, նշվ. աշխ., էջ 416:

⁷³⁷ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 2, գ. 43, թ. 16-17:

⁷³⁸ Տե՛ս Նույն տեղում, գ. 2, գ. 5, թ. 7ա:

⁷³⁹ Տե՛ս Նույն տեղում, գ. 14:

1968թ.-ին Երևանում կազմակերպված «Հայ ժողովրդի վերածնունդը» անունով ցուցահանդեսին մասնակցության համար Եգիպտոսից ուղարկվեցին հայ նկարիչների ու քանդակագործների ստեղծագործություններ⁷⁴⁰:

1969թ.-ին Մերձավոր Արևելքի հայկական «առաջադիմական» կազմակերպությունների հրավերով Սիրիա, Լիբանան, Եգիպտոս ու Իրաք են գործուղվել հինգ հոգուց բաղկացած թումանյանագետ դասախոսներ⁷⁴¹:

Եգիպտահայ համայնքը գտնվում էր ՀԽՍՀ-ի բարձր պետական պաշտոնյաների ուղղակի ուշադրության կենտրոնում: 1970թ.-ին Լիբանանի, Սիրիայի ու Եգիպտոսի հայկական համայնքներում մեկական շաբաթ անցկացրեց Վ.Համազասպյանը՝ հանդիպումներ ունենալով մտավորականության, հասարակական գործիչների, երիտասարդության հետ⁷⁴²: 1972թ.-ին Եգիպտոս մեկնեց և Կահիրեում կանգ առավ ՀԽՍՀ կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Ա. Քոչինյանը⁷⁴³, իսկ 1975թ.-ին Ալեքսանդրիա ժամանեց ՀԽՍՀ լուսավորության մինիստր Ս.Հախումյանը, որը բազմաթիվ հանդիպումներ ունեցավ համայնքում⁷⁴⁴:

Այդ ամենի արդյունքում 1970-ական թթ.-ին եգիպտահայ մամուլում զգալի տեղ էր հատկացվում հայրենիքի հետ կապերին, հայրենիք այցելություններին, հայրենիքում ուսանելու խրախուսմանը⁷⁴⁵:

Հայրենիք եկող եգիպտահայերի թիվը գնալով աճում էր: 1983թ.-ին ՀԽՍՀ այցելեցին 180 եգիպտահայ ուխտավորներ, որոնց Մայր աթոռում ընդունեց Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ն⁷⁴⁶:

1980թ.-ից սկսած եգիպտահայ համայնքի ներկայացուցիչները մասնակցել են հայրենիքում Կոմիտեի կողմից կազմակերպվող տարաբնույթ համահայկական համաժողովների, որոնցից ամենակարևորը 1980թ.-ի Նոյեմբերի 24-27-ը Կոմիտեի Նախաձեռնությամբ և «Վերածնված հայրենիքը և սփյուռքը, պայքար հանուն խաղաղության և առաջադիմության» Նշանաբանով Երևանում տեղի ունեցած սփյուռքահայ համայնքների ներկայացուցիչների առաջին համահայկական հավաք-համաժողովն էր, որին մասնակցում էին 100-ից ավելի ներկայացուցիչներ բոլոր սփյուռքահայ համայնքներից, ինչպես նաև տարբեր բնագավառների խորհրդահայ գործիչներ⁷⁴⁷:

Եգիպտահայ համայնքի ներկայացուցիչները մասնակցել են Երևանում Կոմիտեի կազմակերպած արտասահմանյան լրատվամիջոցների խմբագիրների (1981թ.), սփյուռքահայ գրողների ու ժուռնալիստների (1983 թ.) և սփյուռքահայ մշակութային միությունների ղեկավարների (1984թ.) հավաքներին, սփյուռքահայ ռադիո-հեռուստաժամերի ներկայացուցիչների ու մամուլի խմբագիրների խորհրդակցությանը (1985թ.) ինչպես նաև սփյուռքահայ կազմակերպությունների գեղարվեստական խմբերի փառատոնին (1985թ.)⁷⁴⁸:

⁷⁴⁰ Տե՛ս Նույն տեղում, գ. 555, թ. 33:

⁷⁴¹ Տե՛ս Նույն տեղում, գ. 4, գ. 20, թ. 6:

⁷⁴² Տե՛ս «Հայրենիքի ծայն», 17.02.1971, թիվ 7, էջ 3, 6:

⁷⁴³ Տե՛ս «Ձահակիր», 13.01.1972:

⁷⁴⁴ Տե՛ս «Յուսաբեր», 13.03.1975:

⁷⁴⁵ Տե՛ս «Արես», 15.01.1971: Տե՛ս նաև **Խաչատրյան Ա.**, Եգիպտահայ համայնքը 1970-1981 թվականներին, թիվ 3, էջ 50:

⁷⁴⁶ «Եգիպտահայ ուխտավորների խումբը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում», «Էջմիածին» պաշտոնական ամսագիր Հայրապետական Աթոռոյ Ս. Էջմիածնի, 1983, թիվ Խ (Թ-Ժ), էջ 101-102:

⁷⁴⁷ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, գ. 8, գ. 9; գ. 40, թ. 1-2: Տե՛ս նաև «Սովետական-Հայաստան», 1980, թիվ 12, էջ 7-21:

⁷⁴⁸ Տե՛ս Նույն տեղում, գ. 14, գ. 8, թ. 1-5: Տե՛ս նաև գ. 16, գ. 11; գ., 13, գ. 215, թ. 18-24:

Կոմիտեն, եգիպտահայ երիտասարդությունը և ուսուցիչների վերապատրաստումը Խորհրդային Հայաստանում: Կոմիտեի գործունեությունը ուղղված էր հատկապես երիտասարդությանը, քանի որ նրանք էին սփյուռքի ապագան, և անհրաժեշտ էր հայապահպանության ծրագրերի մեջ ներառել հենց նրանց: Եգիպտոսի Հայ գեղարվեստասիրաց միության ղեկավարներից Ալիս Դեպոյանը գրում էր, որ իրենք գնահատում են Կոմիտեի ջանքերը հայրենիքի ու սփյուռքի միջև կապերը սերտացնելու, սփյուռքահայ երիտասարդների մեջ հայրենասիրություն սերմանելու հարցերում: Եգիպտահայերը Կոմիտեի գործին տալիս էին կենսական նշանակություն⁷⁴⁹: «Արև» օրաթերթն էլ խմբագրականում գրում էր, որ հայրենիքից օտարանալը սփյուռքին կհասցնի կործանման, իսկ հայրենասիրությունն իրական չի լինի առանց հայրենիքի «շոշափելի» ներկայության⁷⁵⁰:

Եգիպտոսից ևս, ինչպես մյուս համայնքներից, ամեն տարի ՀԽՍՀ են հրավիրվել երեխաներ՝ հայրենիքում հանգիստն անցկացնելու, երիտասարդներ՝ ՀԽՍՀ բուհերում ուսանելու, ուսուցիչներ՝ վերապատրաստման համար:

Սակայն Կոմիտեի գործունեության շրջանում եգիպտահայ երիտասարդների ուղևորությունները ՀԽՍՀ հաճախ չէին ստացվում արաբա-իսրայելյան պատերազմում Եգիպտոսի մշտական մասնակցության պատճառով:

1964թ.-ին Կոմիտեն Եգիպտոսից հրավիրեց 5 երեխաների՝ հանգիստը պիոներական ճամբարում անցկացնելու համար, բայց նրանք չկարողացան գալ՝ իշխանությունների ստեղծած խոչընդոտների պատճառով⁷⁵¹:

1965թ.-ին եգիպտահայ համայնքից հայրենիքում հանգիստ անցկացնելու ու վերապատրաստվելու համար Կոմիտեն հրավիրել է համապատասխանաբար 5 երեխա⁷⁵² և 1 ուսուցիչ⁷⁵³:

Ընդհանրապես, Եգիպտոսից ՀԽՍՀ-ում հանգիստն անցկացնելու համար երիտասարդները հայրենիք են եկել հիմնականում Մերձավոր Արևելքում տարածաշրջանային մեծ պատերազմներից հետո՝ սկսած 1970-ական թթ. կեսերից. 5-ական երեխա՝ 1977 և 1979 թթ.-ին, 4 երեխա՝ 1980 թ.-ին, 3 երեխա՝ 1981թ.-ին, 2 երեխա՝ 1982թ.-ին, 3 երեխա (սախատեսված 2-ի փոխարեն)՝ 1983 թ.-ին, 3 երեխա՝ 1984 թ.-ին:

Ավելի քիչ էր ՀԽՍՀ-ում եգիպտահայ ուսանողների թիվը: Ըստ արխիվային փաստաթղթերի՝ 1964-1985թթ. Եգիպտոսից ՀԽՍՀ-ի բուհեր են ընդունվել մեկական երիտասարդներ 1966թ.-ին, 1968-1972թթ.-ին, 1975-1976 թթ.-ին և 1981թ.-ին:

Միևնույն ժամանակ ՀԽՍՀ-ում վերապատրաստում են անցել եգիպտահայ 15 ուսուցիչներ, որից 1-ը՝ 1965 թ.-ին, 1-ը՝ 1967թ.-ին, 2-ը՝ 1972 թ.-ին⁷⁵⁴, 1-ը՝ 1974 թ.-ին, 2-ը (սախատեսված 1-ի փոխարեն)՝ 1975 թ.-ին, 1-ը՝ 1976թ.-ին, 2-ը՝ 1977թ.-ին, 1-ը՝ 1979թ.-ին, 1-ը՝ 1980 թ.-ին, 3-ը՝ 1981թ.-ին, 2-ը՝ 1982թ.-ին, 1-ը՝ 1983թ.-ին, 1-ը՝ 1984թ.-ին:

Այդ ժամանակ ՀԽՍՀ-ում թեկնածուական ատենախոսություններ են պաշտպանել հալեպահայ բժիշկ Ռ. Ճեպեճյանը, Բեյրութի Հայկազյան քոլեջի հայագիտության ամբիոնի վարիչ Ե.Քասունին, Կահիրեի «Արև» օրաթերթի խմբագիր

⁷⁴⁹ Տե՛ս «Սովետական Հայաստան», 1976, թիվ 10, էջ 27:

⁷⁵⁰ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 4, գ. 52, թ. 22:

⁷⁵¹ Տե՛ս Լույս տեղում, գ. 1, գ. 3, թ. 32-39:

⁷⁵² Տե՛ս Լույս տեղում, գ. 25, թ. 13-14:

⁷⁵³ Տե՛ս Լույս տեղում, թ. 22:

⁷⁵⁴ Տե՛ս Լույս տեղում, գ.6, գ. 3, թ. 3: Վերապատրաստման դասընթացից վերադառնալուց հետո Կահիրեի «Կոկանյան» սրահում ծրագրի մասնակիցներ Վարդուհի Թորիկյանը և Այծեմսիկ Բոյաջյանը ներկայացրին իրենց տպավորությունները Խորհրդային Հայաստանի մասին:

Ա.Յափուճյանը, Բեյրութի «Կանչ» շաբաթաթերթի խմբագրակազմի անդամ Մ.Գուլշակճյանը և ուրիշ գործիչներ⁷⁵⁵:

Փոխադարձ առաքումներ: Ինչպես նշեցինք, Կոմիտեն նպատակ ուներ նաև սփյուռքահայերին ծանոթացնելու հայրենիքի ձեռքբերումներին՝ ՀԽՍՀ թերթերին ու պարբերականներին՝ բացելով բաժանորդագրություններ: Այլ պարբերականների շարքում Կոմիտեն պարբերաբար եզիպտոսի հայ համայնքին էր ուղարկում իր պաշտոնաթերթերը: Մասնավորապես «Հայրենիքի ծայնը» այնքան կարևոր էր համայնքի համար, որ «Արև»-ի խմբագիր Է. Կատալոզյանը գրում էր, թե սփյուռքահայությունը ծարավի է այդ ամսագրին, որը ոգևորում է նրանց սրտերը⁷⁵⁶:

Սփյուռքում ծուլման դեմ պայքարը խորհրդահայ հասարակությանը ներկայացնելու հեռանկարով քննարկվում էին նաև 1964թ.-ից սկսած եզիպտահայ «Արև» թերթի տպաքանակի ավելացման և ՀԽՍՀ-ում որոշակի քանակի սպառման հարցերը⁷⁵⁷:

Եզիպտոսի հայկական վարժարաններից մեկին 1965թ.-ին բաժին հասավ մերձավորարևելյան հայ համայնքների համար նախատեսված ֆիզիկայի լաբորատոր սարքավորումների կոմպլեկտ⁷⁵⁸: Հետո Կոմիտեն առաջարկեց ՀԽՍՀ մինիստրների խորհրդի նախագահին Կահիրեի Գալստյան վարժարանին ևս ուղարկել նման սարքավորումներ⁷⁵⁹: Հետաքրքիր է, որ եզիպտահայ վարժարաններում մեծ պահանջարկ ունեին բնագիտական լաբորատորիաները:

Եզիպտահայ համայնքի ներկայացուցիչները այդ ժամանակ դիմում էին Կոմիտեին, որ այն կազմակերպի նշանավոր հայ գործիչների արխիվների կամ աճյունների տեղափոխությունը հայրենիք: 1964թ.-ին Կոմիտեն առաջարկ ստացավ եզիպտոսից ՀԽՍՀ փոխադրելու նշանավոր հայագետ Արշակ Ալպոյաճյանի (1879-1962) արխիվը⁷⁶⁰, որը տեղ հասավ երկու տարի անց միայն⁷⁶¹:

1975թ.-ին Վ.Համազասպյանը դիմեց ՀԿԿ կենտկոմին եզիպտահայ անվանի նկարիչ Օ. Ավետիսյանի կտակի համաձայն նրա գործերն ու արխիվը հայրենիք փոխադրելու հարցով: Նա հայտնում էր, թե սփյուռքահայ Պ.Վրթանեսյանը հանձն է առել տեղափոխությունը, ուրեմն անհրաժեշտ էր նրան 10 օրով հրավիրել Երևան⁷⁶²: Բայց այդ ծրագիրը իրականություն չդարձավ:

1968թ.-ին եզիպտահայ «Սավառնակ» թերթը մի բաց նամակ տպագրեց⁷⁶³՝ ուղղված ՀԽՍՀ ղեկավարությանը, որում կոչ էր անում հայրենիք տեղափոխել Արփիար Արփիարյանի, Երվանդ Օտյանի, Վահան Թեքեյանի, դերասանուհի Սիրանուշի (Մեհրյուբե Գանթարճյան) և ազգային հերոս Անդրանիկի աճյունները՝ հայրենիքի «հմայքը սփյուռքում մեծացնելու» համար⁷⁶⁴: Վ.Համազասպյանը, այդ մասին հայտնելով ՀԽՍՀ մինիստրների խորհրդի նախագահ Բ.Մուրադյանին, առաջարկում էր կարգադրություն անել տեղափոխությունն իրականացնելու համար⁷⁶⁵: Սիրանուշի աճյունը Կահիրեից հայրենիք տեղափոխելու համար Կոմիտեին մեկ անգամ էլ զրեցին եզիպտոսի հայկական մշակութային կազմակերպությունները: Վ.Համազասպյանը այդ

⁷⁵⁵ Տե՛ս «Հայրենիքի ծայնը», 27.10.1982, թիվ 44:

⁷⁵⁶ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 4, գ. 5, թ. 13:

⁷⁵⁷ Տե՛ս Նույն տեղում, գ. 3, թ. 87:

⁷⁵⁸ Տե՛ս Նույն տեղում, գ. 6, թ. 4:

⁷⁵⁹ Տե՛ս Նույն տեղում, գ. 2, գ. 9, թ. 6-7:

⁷⁶⁰ Տե՛ս Նույն տեղում, գ. 1, գ. 3, թ. 73:

⁷⁶¹ Տե՛ս Նույն տեղում, թ. 10:

⁷⁶² Տե՛ս Նույն տեղում, գ. 6, գ. 12, թ. 5:

⁷⁶³ Տե՛ս «Սավառնակ», 31.09.1968:

⁷⁶⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 2, գ. 39, թ. 1:

⁷⁶⁵ Տե՛ս Նույն տեղում:

անգամ ինդրանքը փոխանցեց ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Ա.Քոչինյանին⁷⁶⁶, բայց անհետևանք:

Եգիպտահայերի հայրենադարձությունը 1964-1982թթ.-ին: Կոմիտեն աջակցում էր սփյուռքահայերի հայրենադարձությանը տարբեր ձևերով, օրինակ՝ հայրենադարձության գործընթացին սփյուռքահայերին ծանոթացնելով, հայրենադարձվել ցանկացողներին տեղեկություններ տրամադրելով և այլն: Եգիպտահայերի մի մեծ թվաքանակ Կոմիտեի աջակցությամբ հայրենադարձվել էր ՀԽՍՀ 1962-1982թթ.-ին: Ընդհանուր առմամբ այդ ժամանակ ՀԽՍՀ Եգիպտոսից տեղափոխվել է 275 հայ ընտանիք կամ 727 մարդ⁷⁶⁷:

1960թ.-ին հիշյալ օրենքից հետո Վազգեն Ա կաթողիկոսին Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ Մ. արք. Սիրունյանի գրած նամակից պարզվում է, որ Եգիպտոսից մոտ երկու հազար հայի անհապաղ պետք էր հայրենադարձել, այլապես նրանք կարող են մեկնել այլ երկրներ: Իսկ հայրենադարձելու համար պետք էր ավելի մեծ քանակություն⁷⁶⁸: Նման պայմաններում ՀԽՍՀ մինիստրների խորհուրդը նախատեսեց 1962-1965թթ.-ին հայրենադարձել 8 հազար հայ Եգիպտոսից⁷⁶⁹:

1964թ.-ին Եգիպտոսից հայրենադարձվեց 58 ընտանիք (139 մարդ), որը այդ տարվա բոլոր երկրներից հայրենադարձվածների մեջ առաջին ցուցանիշն էր⁷⁷⁰: Հետագա տարիներին եգիպտահայերի հայրենադարձությունը հետևյալ պատկերն ուներ. 1965թ.-ին Եգիպտոսից հայրենադարձվեց 40 ընտանիք (108 մարդ)⁷⁷¹, 1966 թ.-ին՝ մեկ ընտանիք (3 մարդ)⁷⁷², իսկ 1967թ.-ին, երբ տեղի ունեցավ հերթական արաբա-իսրայելյան պատերազմը, Եգիպտոսից հայրենադարձություն տեղի չունեցավ: Փաստորեն, 1962-1967թթ.-ին Եգիպտոսից հայրենադարձվեց միայն 708 հայ: Եվս 19 եգիպտահայ ՀԽՍՀ եկավ մինչև 1982թ.-ը⁷⁷³: Հայրենադարձվողները հիմնականում քաղաքացիություն չունեցող եգիպտահայեր էին⁷⁷⁴:

Փաստորեն, 1964-1985թթ.-ին Կոմիտեն, չնայած մեծ դժվարություններին, եգիպտահայության հետ հաստատեց ամուր ու կայուն փոխհարաբերություններ, որի շնորհիվ եգիպտահայերը կապվեցին հայրենիքին և նրանց մեջ ամրապնդվեց ՀԽՍՀ-ի օգնությամբ սեփական ինդիվիդները լուծելու գաղափարը: Բացի Կոմիտեի ղեկավարությունից՝ եգիպտահայ համայնք այցելեցին նաև ՀԽՍՀ-ի բարձր պետական պաշտոնյաներ, իսկ մշտական մշակութային կապը նպաստեց հայապահպանությանը եգիպտահայության մեջ:

⁷⁶⁶ Տե՛ս Լույս տեղում, գ. 26, թ. 61:

⁷⁶⁷ Տե՛ս **Մեխբեթյան Հ.**, նշվ. աշխ., էջ 299:

⁷⁶⁸ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 326, ց. 2, գ. 32, թ. 1-4:

⁷⁶⁹ Տե՛ս Լույս տեղում, ֆ. 362, ց. 10, գ. 61, թ. 2-3:

⁷⁷⁰ Տե՛ս Լույս տեղում, գ. 25, թ. 34:

⁷⁷¹ Տե՛ս Լույս տեղում, գ. 23, թ. 37:

⁷⁷² Տե՛ս Լույս տեղում, ց. 10, գ. 29, թ. 22-23:

⁷⁷³ Տե՛ս **Մեխբեթյան Հ.**, նշվ. աշխ., էջ 293-299:

⁷⁷⁴ Տե՛ս «Ձահակիր», 22.07.1865

THE COMMITTEE FOR CULTURAL RELATIONS WITH ARMENIANS OF THE DIASPORA AND THE ARMENIAN COMMUNITY OF EGYPT IN 1964-1985

MELIK HOVSEPYAN

*Yerevan State University, PhD Student at the Department of
Diaspora Studies of Faculty of History,
Yerevan, Republic of Armenia*

The aim of the article is to research the cooperation between the Committee on Cultural Relations with the Diaspora Armenians and the Armenian community of Egypt in 1964-1985. The task is to discover and present the entire field of cooperation between the Committee and the Armenian community of Egypt.

The historical-critical method is the main method of the research. It was used to extract reliable information from sources (archival materials), reconstruct historical facts and events.

Different directions of cooperation and the achieved results are presented. Based on the archive documents, the situation in the community, the difficulties and the steps taken by the Committee to overcome the problems are presented. It is proved that the Armenian community of Egypt was in the center of the Soviet Armenia leaders' attention, as a result of which its representatives visited the Armenian communities of Cairo and Alexandria. It is stated also the fact that the Committee's activities have contributed significantly to the solution of different problems of the Armenian community of Egypt (preservation of the Armenian identity, repatriation, etc.).

Key words: *Armenian community of Egypt, Committee, program, Armenians of the Diaspora, organization, figure, visit, cooperation, meeting, forum, conference.*

КОМИТЕТ ПО КУЛЬТУРНЫМ СВЯЗЯМ С АРМЯНАМИ ДИАСПОРЫ И АРМЯНСКАЯ ОБЩИНА ЕГИПТА В 1964-1985 ГОДАХ

МЕЛИК ОВСЕПЯН

*аспирант кафедры диаспороведения исторического факультета
Ереванского государственного университета,
г.Ереван, Республика Армения*

Целью статьи является исследование сотрудничества между Комитетом по культурным связям с армянами диаспоры и армянской общиной Египта в 1964-1985 годы. Поставлена задача раскрыть и представить всю сферу сотрудничества между Комитетом и армянской общиной Египта.

Историко-критический метод является основным методом исследования. Он использовался для извлечения достоверной информации из источников (архивных материалов), реконструкции исторических фактов и событий.

Представлены различные направления сотрудничества и достигнутые результаты. На основе архивных документов представлены положение в общине, трудности, а также шаги, предпринятые Комитетом для преодоления проблем. Доказано, что армянская община Египта находилась в центре внимания руководителей Советской Армении, в результате чего ее представители посетили армянские общины Каира и Александрии. Доказывается также тот факт, что деятельность Комитета внесла существенный вклад в решение различных проблем армянской общины Египта (сохранение армянской идентичности, репатриация и т. д.).

Ключевые слова: *армянская община Египта, Комитет, программа, армяне диаспоры, организация, деятель, визит, сотрудничество, встреча, форум, конференция.*

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԱՑՈՒՄԸ. ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՐՇԱՐՈՒՆԻ ՊԱՏՐԻԱՐԵԻ ՕՐՈՔ (1911-1913)*

ՀՏԴ 93/94(479.25)

ՍԵՐԳԵՅ ՄԱՆՎԵԼՅԱՆ

*Մ.Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական
ինստիտուտի ասպիրանտ,
ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն
serqeymanvelyaneph@gmail.com*

Հոդվածում քննության է առնվում 1908թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո Օսմանյան կայսրության հայաբնակ նահանգներում բարենորոգումներ իրականացնելու հարցում Կ.Պոլսի հայոց պատրիարքարանի ունեցած դերակատարությունը: Մանրամասն ներկայացվում են ժամանակի պատրիարք Հովհաննես Արշարունու օրոք (1911-1913) Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության համագործակցությամբ հայոց պատրիարքարանի ձեռնարկած քայլերը հայկական բարենորոգումների ծրագրի ստեղծման վերաբերյալ, մասնավորապես՝ պատրիարքարանի բանակցություններն ինչպես կառավարության, այնպես էլ Անտանտի երկրների ու Հայոց ազգային պատվիրակության ղեկավար Պողոս Նուբար փառայի հետ: Սույն հոդվածի նպատակն է՝ առանձնացնել և ուսումնասիրել հայկական հարցի վերաբացման համատեքստում Կ.Պոլսի հայոց պատրիարքարանի գործունեությանը վերաբերող նորահայտ կյուրթը՝ ընգծելով դրանց աղբյուրագիտական նշանակությունը: Ահավասիկ, հոդվածում օգտագործած գրականությունը դիտարկվել է մի շարք խնդիրների իրագործման տեսանկյունից՝ լուսաբանել Կ.Պոլսի հայոց պատրիարքարանի կողմից կազմված հանձնաժողովների գործունեությունը, բացահայտել պատրիարքարանի կազմած նախագծի ապդեցությունը և կարևորությունը Կ.Պոլսում ռուսական դեսպանատան գլխավոր թարգմանիչ Անդրեյ Մանդելշտամի՝ 1913թ.-ի հունիսի 4-ին ներկայացրած հայկական բարենորոգումների վերաբերյալ ծրագրի պատրաստման գործում: Հոդվածը գրվել է գիտական անաչառության ու վերլուծության մեթոդաբանությամբ՝ քննական մոտեցում ցուցաբերելով օգտագործած սկզբնաղբյուրների և ուսումնասիրությունների նկատմամբ:

Այսպիսով՝ Կ.Պոլսի հայոց պատրիարքարանի կատարած քայլերը մեծապես նպաստել են հայկական բարենորոգումների իրականացման առնչությամբ արևմտահայության քաղաքական պահանջներն ամրագրելուն:

Բանալի բառեր՝ Հայկական հարց, Կ.Պոլսի հայոց պատրիարքարան, Արշարունի պատրիարք, հայկական բարենորոգումների ծրագիր, Հայոց ազգային պատվիրակություն, երիտթուրքական կուսակցություն, «Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցություն, Անտանտի երկրներ:

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Օսմանյան կայսրությունը տնտեսապես ու քաղաքականապես կանգնել էր կործանման վտանգի առաջ: Երկիրն օրհասական դրությունից հանելու և կայսրության մոտալուտ վախճանը կանխելու

* Հոդվածը ներկայացվել է 02.05.2019թ., գրախոսվել՝ 24.05.2019թ., տպագրության ընդունվել՝ 17.06.2019թ.:

Նպատակով «İttihat ve Terakki» (Միություն և առաջադիմություն) երիտթուրքական կուսակցությունն արդյունավետորեն բռնապետական ռեժիմը հաստատելու և սահմանադրական կարգեր հաստատելու վերաբերյալ մշակել էր ծրագիր՝ միաժամանակ դիմելով հայ քաղաքական ուժերին՝ դաշնակցականներին ու հնչակյաններին՝ միանալու պայթարելու համիդյան վարչակարգի դեմ: Սակայն ի տարբերություն դաշնակցականների, որոնք ընդունեցին երիտթուրքերի առաջարկը, հնչակյանները կտրականապես մերժեցին այն՝ միանալով «Hürriyet ve İtilaf» (Ազատություն և համաձայնություն) ընդդիմադիր կուսակցությանը:

908թ.-ի հուլիսին տեղի ունեցած պետական հեղաշրջման արդյունքում վերջ դրվեց Աբդուլ Համիդի միահեծան բռնապետությանը, և իշխանությունը փաստացի անցավ երիտթուրքական կուսակցության ձեռքը: Կայսրությունում բնակվող ոչ մուսուլման ժողովուրդների, այդ թվում՝ հայերի շրջանում նոր հույսեր էին արթնանում իրենց իրավունքների վերականգնման ու արժանապատիվ կեցության համար:

Մինչդեռ իշխանության գլուխ եկած երիտթուրքերի հակահայկական քաղաքականության հետևանքով արևմտահայությունը հայտնվեց ծանր իրապայմաններում⁷⁷⁵: «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը չկարողացավ պահել Արևելյան Անատոլիայի վեց նահանգներում հայության համար բարենորոգումների իրականացման ծրագրի վերաբերյալ իր խոստումը: «Սահմանադրական» հորջորջվող Օսմանյան կայսրության գործելածը դադարեց վստահություն ներշնչել նաև եվրոպական պետությունների կառավարություններին, ինչի առթիվ հայկական շրջանակները հայկական բարենորոգումների խնդրի լուծումը փորձեցին կապել եվրոպական պետությունների և, գլխավորապես, Ռուսական կայսրության հետ: Միաժամանակ խզվեցին նաև Հայ հեղափոխական կուսակցության ու երիտթուրքական կառավարության հարաբերությունները, ինչից հետո Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը դարձավ միակ միջնորդը հայության ու տեղական իշխանությունների համար:

Ոչ մուսուլմաններին ճնշելու քաղաքականությունը հանգեցրեց նաև արտաքին քաղաքական հիմնախնդիրների սրմանը: Ահավասիկ, կայսրությունում տեղի ունեցած 1911-1912թթ.-ի իտալա-թուրքական պատերազմում կրած պարտության հետևանքով Օսմանյան կայսրությունը վերջնականապես կորցրեց աֆրիկյան մայրցամաքում ունեցած իր գերիշխանությունը: 1912թ.-ի հոկտեմբերին սկսված Բալկանյան առաջին պատերազմի հետևանքով Օսմանյան կայսրության կազմում մնացին միայն Կ. Պոլիսը և Արևելյան Թրակիայի մի մասը: 1912թ.-ին Ալբանիան հռչակեց իր անկախությունը: 1913թ.-ի հունիսին սկսվեց Բալկանյան երկրորդ պատերազմը: Ըստ էության, Օսմանյան կայսրության տրոհումն ու որպես «հիվանդ մարդու» ոչնչացումը գործնականորեն իրագործվեցին⁷⁷⁶:

Երիտթուրքական իշխանությունների պարտությունները հայ հասարակական-քաղաքական շրջանակներում հանգեցրին համոզման, թե վերջնականապես մոտ է Հայկական հարցի լուծումը: Հայկական հարցը կրկին դառնում էր միջազգային դիվանագիտության օրակարգի մաս: Ըստ որում հայ ժողովրդի ռուսական կողմնորոշումը և հայ-ռուսական հարաբերությունների դարավոր փորձը հայությանը ստիպեցին կրկին ապավինելու Հայկական հարցը Ռուսաստանի օգնությամբ լուծելու մտքին: Նախ՝ չկար այլևս ռուս-անգլիական հակամարտությունը, որը նախորդ անգամ կասեցրեց հայկական հարցի առաջխաղացումը, երկրորդ՝ Ռուսաստանի, Անգլիայի ու

⁷⁷⁵ Առավել մանրամասն տե՛ս՝ Աճառեան Յ., Տաճկահայոց պատմությունը, Կ. Պոլիս, 1915: Հմտ.՝ Կիրակոսյան Ջ., Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, Երևան 1967, էջ 28-116:

⁷⁷⁶ **Հասարթյան Մ. և ուրիշներ**, Թուրքիայի պատմության ուրվագծեր, Երևան, 1986, էջ 214-216:

Ֆրանսիայի միջև լռելյայն համաձայնություն էր կնքվել Օսմանյան կայսրության ասիական տարածքների վերաբաժանման վերաբերյալ⁷⁷⁷: Եվ քանի որ Ռուսաստանին բաժին էր ընկնելու Հայաստանը, հետևաբար Ռուսաստանին էր պատկանում Հայկական հարցին միջամտելու նախաձեռնությունը⁷⁷⁸: Իր հերթին Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ V Սուրենյանցը 1912թ.-ի հոկտեմբերի 15-ին Կովկասի կառավարչապետ Ի. Վորոնցով-Դաշկովի միջոցով դիմեց ռուսաց կայսերը՝ իբրև «արևելքի քրիստոնյաների վաղեմի պաշտպանի»՝ խնդրելով իր պաշտպանության տակ առնել հայերին⁷⁷⁹: Ռուսաստանը դրական վերաբերմունք ցուցաբերեց դեպի Հայկական հարցը, որն, անշուշտ, պայմանավորված էր տվյալ պահին հայերի ու ռուսների շահերի համընկնմամբ, մասնավորապես՝ այն լայն հնարավորություններ էր ընձեռում Ռուսաստանին՝ բավարարելու իր ծավալապաշտական ծգտումները դեպի հարավ ընկած ուղղությամբ:

1912թ.-ի սեպտեմբերի 9-ին Կ.Պոլսի Ազգային ժողովի որոշմամբ հայոց պատրիարք Յովհաննես Արշարունին արդարադատության ու դավանանքների նախարարությանն ուղարկեց մի դիմում՝ պահանջելով դադարեցնել կայսրության արևելյան նահանգներում քրդերի կողմից հայ բնակչության հանդեպ իրականացվող կոտորածները և շուտափոյթ կերպով իրականացնել օսմանյան սահմանադրության հաստատումից հետո խոստացված հայկական բարենորոգումները⁷⁸⁰: 1913թ.-ի գարնանը կոտորածներն ավելի սաստկացան, ուստի ապրիլի 21-ին պատրիարքի նախաձեռնությամբ Գալաթայի հայկական եկեղեցում գումարված Ընդհանուր ժողովի դռնփակ նիստին ներկայացվեց Կենտրոնական վարչության զեկուցումը հայաբնակ նահանգների վերաբերյալ⁷⁸¹:

Հետաքրքրական է Արշարունի պատրիարքի՝ ֆրանսիական «Թուրքիա» (La Turquie) թերթին տված հարցազրույցը, որում նա արևելյան նահանգներում քրդերի կողմից հայերի սպանությունների և անօրինական գործողությունների մեղավոր է համարում քրդերին⁷⁸²: Հարցազրույցում պատրիարքն առաջարկում էր հետևյալը՝

- Եվրոպացիների հսկողությամբ մեծացնել թուրք ոստիկանական ուժերը,
- Ամեն կողմում հայերի ու քրդերի համար դպրոցներ բացել,
- Մինչ այժմ ոչ կարևոր համարվող արևելյան նահանգներում իրականացնել ճանապարհների ու ենթակառուցվածքների հիմնանորոգում,
- Կառավարությունը տարածաշրջանում ծրագրված բարենորոգումների առնչությամբ որևէ տեղեկություն չի տրամադրել պատրիարքարանին: Հայտնի չէ, թե ինչ է նախատեսված այդ ծրագրով: Նախապես բարենորոգումների նպատակով կազմվել են տարատեսակ հանձնաժողովներ, սակայն դրանցից ոչ մեկը արդյունք չի տվել: Դրանց իրագործման համար ապավինել եվրոպացի մասնագետներին,
- Արևելյան նահանգներ ասելով հասկանալ Էրզրումի, Մամուրեթուլազիզի (Խարբերդ- Ս. Մ.), Բիթլիսի, Դիարբեքրի, Վանի և Սվասի նահանգները և այլն⁷⁸³: Հարկ է նշել, որ վերոհիշյալ կետերն ամբողջական դիմումի տեսքով մայիսի 31-ին պատրիարքի կողմից ուղարկվել են օսմանյան կառավարությանը⁷⁸⁴: Նույնաբովանդակ

⁷⁷⁷ Աճառեան Ռ., Տաճկահայոց պատմությունը, Կ. Պոլս, 1915, էջ 71:

⁷⁷⁸ Նույն տեղում:

⁷⁷⁹ Նույն տեղում, էջ 73: Հմմտ.՝ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 53, թ. 47:

⁷⁸⁰ Güllü R. E. Ermeni sorunu ve İstanbul Ermeni Patrikhanesi (1878-1923), Ankara, 2015, s. 409, 410:

⁷⁸¹ Նույն տեղում:

⁷⁸² Նույն տեղում, էջ 412:

⁷⁸³ Bayur Y. H., Türk İnkilabı Tarihi, Cilt: II, Kısım III, Ankara, 1991, s. 69. Հմմտ.՝ Güllü R. E., նշվ. աշխ., էջ 412-414:

⁷⁸⁴ Güllü R. E., նշվ. աշխ., էջ 415, 416:

զեկուցագրերով ու բողոքագրերով Արշարունի պատրիարքը դիմել է նաև եվրոպական պետությունների դեսպաններին՝ մասնավորապես Նշելով. «Որպես պատրիարք՝ այլ ելք չեմ գտնում, քան ապավինել օսմանյան պետության և ազգի պատասխանատվության զգացումին և առաջադեմ աշխարհի խղճին ու ողորմածությանը»⁷⁸⁵:

Յունիսի 10-ին ներքին գործերի նախարարությունը երիտթուրքական կառավարությանն ուղղած զեկուցագրով քննադատել է պատրիարքի բողոքագիրն առ այն, որ «արևելյան նահանգներում հայերի հանդեպ իրականացվող անօրինականությունները չեն ճնշվում պետության կողմից»⁷⁸⁶: Ներքին գործերի նախարարությունն այդ կապակցությամբ փորձել է հանդես գալ հետևյալ պատճառաբանությամբ, թե «ձեռնարկված միջոցառումների արդյունքում ձերբակալվել կամ պատժի են ենթարկվել մի շարք անձինք, սակայն արևելյան նահանգներում տևական ժամանակ միջաշիրտության բախումների պայմաններում անհնարին էր դառնում անվտանգության կանոնների պահպանումը»⁷⁸⁷:

Կ.Պոլսի հայոց պատրիարքարանի կողմից կազմված հանձնաժողովների գործունեությունը: 1912թ.-ի դեկտեմբերի 21-ին տեղի ունեցավ Ազգային ժողովի պատմական նիստը, որին Կենտրոնական վարչության ատենապետ Ստեփան Գարայանը, ներկայացնելով հայ ժողովրդի ծանր կացությունը, առաջարկեց օգտագործել ընձեռնված քաղաքական բոլոր հնարավորությունները՝ հայկական հարցը միջազգային սեղանի վրա դնելու համար⁷⁸⁸: Հատկանշական է, որ հայկական բոլոր կուսակցությունները և հայ կաթոլիկ ու բողոքական համայնքները համախմբվեցին պատրիարքարանի շուրջ՝ ոչ մի ջանք չխնայելով ընդհանուր գործի հաջողության համար:

Արևմտահայ հասարակական-քաղաքական շրջանակներում ապագայի հանդեպ Նոր տրամադրություններ էին հասունանում, ուստի ընթացիկ իրադարձություններին համահունչ, օգտվելով հայության վաղեմի երազանքն իրագործելու բացառիկ հնարավորությունից, 1913թ.-ին եվրոպական կառավարությունների հետ բանակցություններ վարելու նպատակով կազմվեց Ազգային պատվիրակություն՝ եգիպտահայ ականավոր հասարակական-քաղաքական գործիչ Պողոս Նուբար փաշայի գլխավորությամբ⁷⁸⁹: Կ.Պոլսի հայոց պատրիարքարանն իր հերթին սերտ համագործակցություն սկսեց Պողոս Նուբար փաշայի հետ: Պատրիարքարանի նախաձեռնությամբ ու գլխավորությամբ ստեղծվեցին երկու՝ Հարստահարական խորհրդարանական (Ազգային ժողովի կողմից) և Ապահովության (Ազգային Կենտրոնական վարչության կողմից) հանձնաժողովներ, որոնց հիմնական նպատակն էր աջակցել Պողոս Նուբար փաշայի գլխավորած պատվիրակությանը և մշակել բարենորոգումների ծրագիրը, որը պետք է բանակցությունների ժամանակ բացորոշ քննարկվեր եվրոպական տերությունների ներկայացուցիչների հետ⁷⁹⁰: Ապահովության հանձնաժողովի նախագահ ընտրվեց Արշարունի պատրիարքը, իսկ անդամներն ընտրվեցին Կրոնական ժողովից՝ Եղիշե

⁷⁸⁵ Bayur Y. H., նշվ. աշխ., էջ 81:

⁷⁸⁶ Güllü R. E., նշվ. աշխ., էջ 416:

⁷⁸⁷ Նույն տեղում:

⁷⁸⁸ Փափագեան Վ., Հայկական Բարենորոգումները (1912-1914), «Կեն», Փարիզ, 1933, Ա, էջ 92: Հմտ.՝ Ազգային ժողովի երեկի նիստը, «Բիւզանդիոն», Կ. Պոլիս, 1912, 22 Դեկտեմբեր: Հայկական հարցը Ազգ. ժողովին մէջ. Միաձայն վստահութիւն Վարչութեան. Հիմնաւոր երաշխիքներ պետք են միայն, «Առաջամարտ», Կ. Պոլիս, 1912, 22 Դեկտեմբեր:

⁷⁸⁹ Այս մասին առավել մանրամասն տե՛ս Մարտիրոսյան Մ., Պողոս Նուբար փաշան հայ ապագային պատվիրակության նախագահ, Պատմաբանասիրական հանդես, Երևան, 2008, № 3, էջ 49-59:

⁷⁹⁰ Չաւեն Արքեպս., Պատրիարքական յուշերս. վաւերագիրներ եւ վկայութիւններ, Գահիրե, 1947, էջ 30-32:

արքեպիսկոպոս Դուրյանը և Գրիգորիս վարդապետ Պալաքյանը, Զաղաքական ժողովից՝ Լ. Տեմիրճիպաշյանը, Ոսկան Մարտիկյանը և կոմս Վահան Փափագյանը: Հանձնաժողովի աշխատանքներին ակտիվորեն մասնակցում էին նաև Գրիգոր Չոհրապը, Մուրատ Պոյաճյանը և Հարություն Շահիրիկյանը: Եվրոպական պետությունների դեսպանների հետ բանակցություններում հատկապես անուրանալի է Գ.Չոհրապի դերը, որ մեծ համարում ուներ օսմանյան հասարակական-քաղաքական շրջանակներում: Ինչ վերաբերում է Հարստահարական հանձնաժողովին, ապա այն իր բնույթով Կենտրոնական վարչության խորհրդակցական մարմինն էր, որի անդամներն էին Գ.Չոհրապը, Հ. Շահիրիկյանը, Վահան Թեթեյանը, Հ.Գալֆայանը և Գ. Տեր-Մովսեսյանը⁷⁹¹:

Հայկական բարենորոգումների ինդոլի լուծման առնչությամբ երիտթուրքական կառավարության որդեգրած մոտեցումը խիստ բացասական էր: Հակադրվելով իրթալաֆականների առաջադրած բարենորոգումների նախագծին՝ երիտթուրքերի նոր կառավարությունը հանդես եկավ ամբողջ կայսրության տարածքում բարենորոգումներ իրականացնելու առաջարկությամբ ու ծրագրով: Ըստ Էուլթյան, դրանով նրանք նպատակ էին հետապնդում ոչ միայն բացառելու հայկական բարենորոգումների հարցում օտարերկրյա պետությունների միջամտությունը, այլև, առհասարակ, հակադրվելու հայությանը ինքնավարություն շնորհելու տրամաբանությանը:

Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության որոշմամբ 1912թ.-ի դեկտեմբերին Գրիգոր Չոհրապը, Հակոբ Չավրյանը, Էդվարդ Ակունին, Սիմոն Չավարյանը, Ռուբեն Չարդարյանը և Վահան Փափագյանը պատրաստեցին բարենորոգումների մի ծրագիր, որը, որպես ծրագրային նախանյութ, նախատեսվում էր ներկայացնել հայոց պատրիարքարանին⁷⁹²: Դաշնակցականների առաջարկով պատրիարքարանի նախագծի հիմքում դրվեց Դաշնակցության կողմից կազմված վերոհիշյալ նախագիծը, որն անմիջապես վավերացվեց Արշարունի պատրիարքի կողմից⁷⁹³: Պատրիարքարանի նախագծում ներառվեց նաև Ամենայն հայոց կաթողիկոսի կազմած նախագիծը, որը, ըստ Էուլթյան, Հայկական հարցի առնչությամբ ռուսական քաղաքական կամքի արտահայտությունն էր: Պատրիարքարանը ստացավ նաև Հայոց ազգային պատվիրակության նախագիծը, որը, սակայն, խիստ եական տարբերություններ ուներ պատրիարքարանի կազմած նախագծի հետ համեմատությամբ: Այն գրեթե ամբողջությամբ հիմնված էր 1895թ.-ի մայիսյան ծրագրի դրույթների վրա, մասնավորապես՝ ընդհանուր քննիչի՝ ազգությամբ թուրք լինելու և եվրոպական պետությունների կողմից վերահսկիչ մարմին ստեղծելու հանգամանքների: Այդ պատճառով պատրիարքարանը որոշեց Ապահովության հանձնաժողովի անդամ և քարտուղար Վահան Փափագյանին ուղարկել Փարիզ՝ Պողոս Նուբար փաշայի և պատվիրակության մյուս անդամների հետ բանակցություններ վարելու համար: Ազգային պատվիրակության ծրագրի հիմքում ընկած էին հետևյալ փաստարկները՝

1. Բարենորոգումների նախագծում բացառել քաղաքական ինքնավարության բաղադրիչը,
2. Զանի որ 1895թ.-ի մայիսյան ծրագիրն ընդունվել է Օսմանյան կայսրության ու եվրոպական պետությունների համաձայնությամբ, հետևաբար այն դիտարկել որպես ուղենիշ հայկական բարենորոգումների ծրագրի համար,

⁷⁹¹ Փափագեան Վ., Հայկական Բարենորոգումները (1912-1914), «ՎԷՆ», Փարիզ, 1933, Բ, էջ 88:

⁷⁹² Տե՛ս Հայերու կացութիւնը Թիւրքիոյ մէջ ներկայացւած վաւերաթղթերով 1908-1912, «Դրօշակ», Ժնեւ, 1913, N 2-3, էջ 31-36: Հմմտ.՝ Փափագեան Վ., Հայկական Բարենորոգումները (1912-1914), «ՎԷՆ», Փարիզ, 1934, Գ, էջ 63:

⁷⁹³ Նույն տեղում, էջ 64:

3. Չեղարկել եվրոպական տերությունների կողմից ընտրված եվրոպացի քննիչի հանգամանքը,
4. Ծրագրի իրականացման համար միջազգային մարմնի միջոցով հաստատել եվրոպական վեց պետությունների վերահսկողություն:
Սույն կետերի վերաբերյալ Վահան Փափազյանը ներկայացրեց պատրիարքարանի հետևյալ առաջարկությունները՝
 1. Թեև պետք չէ քաղաքական ինքնավարության կերպարանք հաղորդել պատրիարքարանի ներկայացրած պահանջներին, սակայն անհրաժեշտ է ապահովել հայ ժողովուրդի ապագա գոյությունը և ազատ զարգացման նախադրյալները,
 2. Մեր նախագծի հիմքում ևս ընկած է Մայիսյան բարենորոգումների ծրագիրը, սակայն պետք է հաշվի առնել նաև այլ միջազգային ու թուրքական վարչական կանոնադրեր,
 3. Մեր միակ իրական երաշխիքը կարող է լինել ընդհանուր քննիչի նշանակման ձևի և նրան տրվելիք իրավասությունների ինդիքը: Նա պետք է կախում ունենա ոչ միայն թուրքերից, այլև օտարերկրյա պետություններից: Ցանկալի է, որ այդ պետությունը լինի Ռուսաստանը:
 4. Վեց պետությունների վերահսկողության պահանջը վերադառնում է Բեռլինի 61-րդ հոդվածի և Մայիսյան ծրագրի տրամաբանությանը, այսինքն՝ Հայաստանը կրկին պետք է դառնա օտար պետությունների շահերի բախման թատերաբեմ, որից պետք է օգտվի Բարձրագույն Դուռը⁷⁹⁴:

Պողոս Նուբար փաշայի հետ բանակցություններից հետո հայոց պատրիարքարանի կողմից, ի դեմս Արշարունի պատրիարքի, Ս.Գարայանի և Գ.Չոհրապի, 1913թ.-ի ապրիլի սկզբին Կ.Պոլսում ռուսական դեսպանությանն ուղարկվեց պատրիարքարանի նախագիծը, որով Ռուսաստանը վերջնականապես իր ձեռքն էր վերցնում հայկական բարենորոգումների ծրագիրն առաջնորդելու պատասխանատվությունը:

Հայոց պատրիարքարանի կազմած նախագծի ազդեցությունը 1913թ.-ի հունիսի 4-ին Ա.Մանդեշտամի ներկայացրած նախագծի վրա: Ամիսներ տևած բանակցություններից հետո Անտանտի երկրների կառավարություններն ի վերջո համաձայնության եկան Օսմանյան կայսրության հայաբնակ նահանգներում բարենորոգումների նախագիծ կազմելու վերաբերյալ: Հատկանշական է, որ դեռևս 1913թ.-ի հունվարին Կ.Պոլսում ռուսական դեսպանությունն արևմտահայության քաղաքական պահանջները ձևակերպելու նպատակով նախապես դիմել էր հայոց պատրիարքարանին, որն Ապահովության հանձնաժողովի միջոցով գումարված նիստի ընթացքում պարտավորվել էր որոշել բարենորոգումների մշակման նախնական աշխատանքները և կարճ ժամանակահատվածում ներկայացնել ռուսական դեսպանությանը⁷⁹⁵:

1913թ. հունիսի 4-ին Կ.Պոլսում ռուսական դեսպանատան գլխավոր թարգմանիչ Անդրեյ Մանդեշտամի՝ հայկական բարենորոգումների վերաբերյալ պատրաստած ծրագիրն որոշակի վերապահումներով պրժանացավ օսմանյան կառավարության ու եվրոպացի դեսպանների հավանությանը⁷⁹⁶: Արդյունքում 1914թ.-ի հունվարի 26-ին (փետրվարի 8) մեծ վեճի, երիտթուրքական կուսակցության գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Սայիդ Հալիմ փաշայի և Օսմանյան կայսրությունում Ռուստաստանի դեսպան Կոնստանտին Գուլկևիչի միջև կնքվեց համաձայնագիր, որով

⁷⁹⁴ Նույն տեղում, էջ 67:

⁷⁹⁵ Նույն տեղում:

⁷⁹⁶ Առավել մանրամասն տե՛ս **Mandelstam A.** La societeé des nations et les puissances devant le probleme armenien, Paris, 1926.

Բ. Դուռը հանձն էր առնում կայսրության հայաբնակ նահանգներում իրականացնել բարենորոգումներ⁷⁹⁷: Յիմնական դրույթների համաձայն՝

- Արևմտյան Չայաստանը բաժանվելու էր երկու նահանգի: Առաջին նահանգի մեջ ընդգրկվելու էին Տրապիզոնի, Էրզրումի և Սեբաստիայի (կենտրոնը՝ Էրզրում), իսկ երկրորդ նահանգի մեջ՝ Վանի, Բիթլիսի, Խարբերդի և Դիարբեքի (կենտրոնը՝ Խարբերդ) նահանգները:
- Նահանգապետերի թեկնածությունն առաջադրելու էին եվրոպական պետությունները, հաստատելու էր սուլթանը:
- Նահանգապետերի ենթակայության ներքո գտնվելու էին վարչական, դատական և ոստիկանական իշխանությունները:
- Նահանգներում պաշտոնական զրագրությունը կատարվելու էր տեղի ժողովուրդների լեզուներով (հայերեն, քրդերեն և թուրքերեն):
- Նահանգապետերն ունենալու էին զինված ուժեր, որոնք պետք է հետևեին նահանգների ներքին կարգուկանոնին:
- Չայերին արտոնվելու էր կրել գենք մահմեդականներին տրված հավասար իրավունքով:
- Նահանգների վարչական խորհուրդները կազմվելու էին հավասար թվով մահմեդականներից ու քրիստոնյաներից: Նույն սկզբունքը կիրառվելու էր ոստիկանական և այլ պաշտոններ բաշխելիս:
- Օսմանյան պետությունը պարտավորվելու էր հոգալ հայկական դպրոցների պահպանության ծախսերը և այլն⁷⁹⁸:

Նույն թվականի օգոստոսի 2-ին Յովհաննես Արշարունի պատրիարքը հրաժարական տվեց, որից հետո ազգային և ընդհանուր ժողովների կողմից պատրիարքական փոխանորդ ընտրվեց Գաբրիել Եպիսկոպոս Ջևահիրջյանը, որ բարենորոգումների ծրագիրն առաջնորդեց մինչև 1914թ.-ի փետրվար, երբ Կ.Պոլիս ժամանեց նորընտիր պատրիարք Չավեն Տեր-Եղիայանը: Պատրիարքի ընտրության նախապատրաստական աշխատանքներից բացի Ջևահիրջյան Եպիսկոպոսը միաժամանակ սկսեց զբաղվել հայկական բարենորոգումների ծրագրով: Այսպես, օրինակ, 1913թ.-ի սեպտեմբերի 5-ին նա եվրոպացի դեսպաններին ներկայացրեց հայկական բարենորոգումների վերաբերյալ ռուսական տեսլականը ներկայացնող մի ծրագիր, որի համաձայն՝

- Օսմանյան կայսրության արևելյան վեց նահանգներից կազմվելու էր մեկ նահանգ,
- Այն ղեկավարվելու էր մեծ պետությունների հավանությամբ ընտրված եվրոպացի նահանգապետի կողմից,
- Նահանգապետը որևէ կապ չէր ունենալու Բ.Դռան հետ: Նահանգապետին էին ենթարկվելու վարչական ու դատական իշխանությունները,
- Նահանգային մեջլիսներում վերականգնվելու էր մուսուլմանների և ոչ մուսուլմանների հավասար ներկայացվածության իրավունքը,
- Բարենորոգումների հսկողությունն իրականացնելու էին եվրոպական պետությունները⁷⁹⁹:

Վերոհիշյալ նախագիծը եվրոպացի դեսպանների կողմից արժանացավ խիստ քննադատության. նրանք կարծում էին, որ օսմանյան պետությունը չէր կարող հանդուրժել իր տարածքում ինքնիշխան նահանգապետության գոյությունը⁸⁰⁰:

⁷⁹⁷ Աճառեան Զ., նշվ. աշխ., էջ 75-77:

⁷⁹⁸ Կիլթեր Յ. Յ. Դաշնակցութեան (խմբագիր՝ Փամպուբեան Ե.), ԺԱ. հատոր, Պեյրուպ, 2015, էջ 46, 47:

⁷⁹⁹ Güllü R. E. նշվ. աշխ., էջ 419:

⁸⁰⁰ Նույն տեղում:

Մասնավորապես Ֆրանսիայի դեսպանը պատրիարքական փոխանորդին ուղղված պատասխան նամակում անհամաձայնություն էր արտահայտել այդ հարցի առնչությամբ. «Այստեղ նշված պահանջները վկայում են այն մասին, որ մեծ պետությունների համաձայնությամբ ստեղծվում է մի ինքնիշխան Նահանգապետություն, որը որևէ կապ չունի օսմանյան պետության հետ»⁸⁰¹:

Ամփոփելով նշենք, որ հայոց պատրիարքարանը բացառիկ դերակատարություն ունեցավ հայոց բարենորոգումների ծրագրի մշակման ուղղությամբ: Թեև հայությանը վիճակված այդ ծանր ժամանակաշրջանում հայոց պատրիարքի պաշտոնում, ժամանակակիցների կարծիքով, ընտրված էր «ոչ հարմար» թեկնածու, սակայն պատրիարքարանի շուրջը համախմբված ազգասեր գործիչների շնորհիվ հնարավոր դարձավ ոչ միայն հայության քաղաքական պահանջները լսելի դարձնել եվրոպական պետություններին, այլև Ռուսաստանի անմիջական Նախաձեռնությամբ կազմված ծրագրի հիմքում ներառել պատրիարքարանի Նախագիծը, ինչը լիովին արտահայտում էր արևմտահայության սպասումները:

EVOLUTION OF ARMENIAN ISSUE: ARMENIAN REFORMS PROGRAM DURING THE TERMS OF PATRIARCH HOVHANNES ARSHARUNI (1911-1913)

SERGEY MANVELYAN

PhD Student of Mesrop Mashtots Research Institute of Ancient Manuscripts, Yerevan, Republic of Armenia

The article is describing the Reforms in the Armenian-populated provinces of the Ottoman Empire in 1908, after the Young Turks' revolution, initiated by the Armenian Patriarchate of Constantinople, led by the Patriarch Hovhannes Arsharuni (1911-1913). The steps taken by the Patriarchate in cooperation with the Dashnaksutyun Party (Armenian Revolutionary Federation) during the reign of Patriarch Hovhannes Arsharuni to create the Armenian Reform Program are considered in detail. In particular, the Patriarchate's negotiations with both the government and the governments of the Entente Countries, and Poghos Nubar Pasha, Head of Armenian National Delegation. The purpose of this article is to separate and explore the role of Armenian Patriarchate of Constantinople in the context of reconsidering the Armenian Question, based on newly revealed materials, emphasizing their historical importance and significance of the source. The bibliographical sources, used in this article, had been viewed from the perspective of implementing a number of issues, to cover activity of the Armenian Patriarchate of Constantinople, number of organized Commissions, unveil impact and importance of the project prepared by the Patriarchate, and later on included in the report of Chief translator of the Russian Embassy in Constantinople Andrey Mandelstam, submitted on June 4th, 1913, on Armenian Reforms Project. The article was written by the methodology of scientific impartiality and analysis, critically approach is used to the source and research. As a result, we prove the steps taken by the Armenian Patriarchate of Constantinople have greatly contributed to Armenian political reforms in Western Armenia regarding the implementation of reforms from the point of view of the requirements.

Keywords: *Armenian Issue, Armenian Patriarchate of Constantinople, Hovhannes Arsharuni Patriarch, Armenian Reform Program, Armenian National delegation, Young Turks party, Armenian Revolutionary Federation Party Dashnaksutyun, The Entente states.*

⁸⁰¹ Նույն տեղում:

РАЗВИТИЕ АРМЯНСКОГО ВОПРОСА: ПРОГРАММА АРМЯНСКИХ РЕФОРМ ПРИ ПАТРИАРХЕ ОВАНЕСЕ АРШАРУНИ (1911-1913 ГГ.)

СЕРГЕЙ МАНВЕЛЯН

*аспирант научно-исследовательского института
древних рукописей им. М. Маштоца,
г.Ереван, Республика Армения*

Статья рассматривает реформы, инициированные Армянским Патриархатом Константинополя в армянонаселенных провинциях Османской империи в 1908 году, после государственного переворота и захвата власти младотурками. Подробно рассматриваются шаги по созданию Программы Армянских реформ, предпринятые Патриархатом при сотрудничестве с партией Дашнакцутюн (Армянская революционная федерация) во время правления Патриарха Ованеса Аршаруни (1911-1913). В частности, это переговоры Патриархата как с правительством, так и с представителями стран Антанты и главой армянской национальной делегации Погос Нубар-пашой. Целью данной статьи является рассмотрение и изучение роли Армянского Патриархата Константинополя в контексте пересмотра Армянского вопроса на основе новоявленных материалов, подчеркивая их историческую важность и значение источника. Библиографические источники, использованные в этой статье, рассматривались с точки зрения реализации ряда вопросов, чтобы охватить деятельность Армянского Патриархата Константинополя, количество организованных комиссий, раскрыть влияние и важность проекта, подготовленного Патриархатом и позднее включенного в представленный 4 июня 1913 года доклад главного переводчика посольства России в Константинополе Андрея Мандельштама о проекте Армянских реформ. Статья написана по методологии научной беспристрастности и анализа, критически использован подход к источнику и исследованию. В результате мы показываем, что шаги, предпринятые Армянским Патриархатом Константинополя, внесли значительный вклад в политические реформы Западной Армении и закрепили политические требования местных армян.

Ключевые слова: *Армянский вопрос, Армянский Константинопольский Патриархат, Патриарх Ованнес Аршаруни, Программа Армянских реформ, Национальная армянская делегация, партия младотурок, партия Армянская революционная федерация Дашнакцутюн, страны Антанты.*

ԶԿԻԱԴ ԳԱՄՍԱԽՈՒՐԴԻԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՋԱՎԱԽՔՈՒՄ 1990-1993 ԹԹ.*

ՀՏԴ 93/94(479.22)

ԱՂԱՎՆԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

*Խ. Արոյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարանի ասպիրանտ,
ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն
aghavni.martirosyan@mail.ru*

Վրաստանում անկախացումից ի վեր մշակվել է ազգայնական գաղափարախոսություն, որը հիմնվում էր վրաց բանաստեղծ և ազգայնական Ի.Ճավճավաձեի «Վրաց ազգայնականության եռամիասնությունը. հայրենիք, լեզու, կրոն» գաղափարի վրա և սկսեց իրագործվել Վրաստանի առաջին նախագահ Չվիադ Գամսախուրդիայի օրոք: Ազգային փոքրամասնությունները, մանավանդ իրենց բնօրրանում գոյատևողները, որոնք պատմական հանգամանքների բերումով Վրաստանի կազմում էին մնացել, բնականաբար, հայտնվում էին ռիսկային գոտում:

Ուսումնասիրության օբյեկտ Ջավախքի տարածաշրջանում տվյալ ժամանակաշրջանի ժողովրդագրական վայրիվերումների հետազոտության նպատակն է ցույց տալ, որ 2.Գամսախուրդիայի օրոք սրված վրաց-օսական և վրաց-աբխազական հարաբերությունների պատճառով Ջավախքում առկա խնդիրները սկզբում պարզապես ուշադրության չէին արժանանում, իսկ հետո սկսեցին դիտարկվել որպես դրսից կազմակերպվող անջատողական նկրտումներ: 2.Գամսախուրդիայի վարչակազմը, օգտվելով նորանկախ ՀՀ-ի՝ Արցախյան պատերազմի մեջ գտնվելու և Արցախն արտաքին աշխարհի հետ կապող կամուրջ լինելու հանգամանքից, Վրաստանում տիրող համընդհանուր տնտեսական ճգնաժամային ֆոնին սկսեց երկրամասում կենսապայմաններն արհեստականորեն վատթարացնել՝ տեղում սոցիալ-տնտեսական ու կրթամշակութային առաջընթացի բոլոր ուղիները փակելով, ինչն էլ տեղաբնիկ հայության մեծամասնությանը մղեց արտագաղթի: Սակայն ժողովրդագրական տվյալների բնման, համեմատության մեթոդով պարզ է դառնում հիմնական խնդիրը. 2.Գամսախուրդիայի վարչակազմի կողմից Ջավախքի հայաթափման քաղաքականության թաքնված հեռանկարը երկրամասի վերաբնակեցումն էր վրացիներով, հաճախ նաև աջարներով ու մեսխեթցի թուրքերով:

Բանալի բառեր՝ Ջավախք, Վրաստան, Գամսախուրդիա, ժողովրդագրություն, Ախալքալաք, Ախալցխա, Նինոծմինդա, Ծալկա:

Վրաստանում 1991-1992թթ.-ին տեղի ունեցած քաղաքացիական պատերազմի նախօրեին՝ 1990թ. նոյեմբերի 14-ին տեղի ունեցավ Վրաստանի Գերագույն խորհրդի նախագահի ընտրություն, և ձայների 232 կողմ, 5 դեմ և 1 ձեռնպահ հարաբերակցությամբ հաղթանակ տարավ «Կլոր սեղան-ազատ Վրաստան» խմբավորման առաջնորդ Չվիադ Գամսախուրդիան⁸⁰²: Անցնելով իշխանության գլուխ՝

* Հոդվածը ներկայացվել է 04.05.2019թ., գրախոսվել՝ 27.05.2019թ., տպագրության ընդունվել՝ 17.06.2019թ.:

⁸⁰² Գլորուլո Յ: “Նախարարության օրագրություն, XX սալոն”, Թբիլիսի 2003, ց. 77

(արշավանք), եւ սռնուին սոչ հնազանդեալ քաղաքս»⁹⁸⁸: Նույն Զոսե-Դաղի ճակատամարտի առնչությամբ վրաց անանուն պատմիչը նշում է հետևյալը. «Թաթարները նույնպես մարտական կարգով դասավորվեցին, իսկ իրենց ամենաընտրյալներին կարգեցին ձախ կողմում: Այսպես սովորություն ունեին լավագույններին առհասարակ ձախ թելում դասավորել, այն պատճառով, որ մնացած բոլոր ազգերն իրենց քաջերին ու ընտրյալներին կարգում էին աջ կողմում, որպեսզի ամենաընտրյալները ամենաընտրյալներին հանդիպեն»⁹⁸⁹: Զոսե-Դաղի ճակատամարտի նախօրեին հայ-վրացական ուժերի դասավորվածության մասին վկայում է նաև Գրիգոր Ակներցի: Պատմիչի խոսքերով հայ-վրացական ուժերը՝ «ապատազունդ պարաւք Հայոց եւ Վրաց», աչքի ընկան սուլթանական բանակի աջ թևի ջախջախման ժամանակ⁹⁹⁰: Կիրակոս Գանձակեցիին Զոսե-Դաղի ճակատամարտի առնչությամբ նշում է մոնղոլական զորքերի հրամանատար Բաչու Նոյնի կողմից «պեկամուտ» զորքերի ռազմական կարգով դասավորելու մասին: Նպատակն այն էր, որ «պեկամուտ» զորքերը չդավաճանեն և չանցնեն թշնամու կողմը: Նույն աղբյուրի համաձայն՝ Բաչու Նոյնը ընտրեց «յամենեցունց պարիսն և պաքս յառաջապահս կարգեալ ինքեանց, որք երթեալք հանդիպեցան սուլտանին և մարտուցեալք՝ ի փախուստ դարձուցին վնաս»⁹⁹¹: Այստեղ խոսքը գնում է ոչ թե խաչարի կիրառման, այլ «պեկամուտ», այսինքն՝ օժանդակ ուժերի մասին, որոնք ներգրավված էին չերիկի մեջ և ճակատամարտում ունեին իրենց համապատասխան տեղն ու դերը: Չերիկի նման զորամիավորումները զուտ մոնղոլական երևույթ չէին: Նմանատիպ ստորաբաժանումների կիրառումը հատուկ էր քոչվորական հասարակություններին⁹⁹²: Աղբյուրները «օժանդակ» ուժերի մասին վկայում են նաև սելջուկյան բանակում: Սելջուկների կողմից հանդես էին գալիս սիրիացիները, հույները, ֆրանկ ասպետները և թուրքմենական ցեղերը: Յետաբերբական է նույն ճակատամարտում սելջուկների կողմից հանդես եկած վրացական ուժերի ներկայությունը: Իբն Բիբին հիշակատում է *pisar-i Gurji*-ն՝ (թրգմ.՝ «Վրացի սողա», «Վրաց որդի»), որ կրում էր նաև Չահիր ադ-Դին պատվանունը⁹⁹³: Վերջինս հիշատակվում է դեռևս 1239-1240թթ. Փոքր Ասիայում սելջուկյան սուլթան Ղիյաս ադ-Դին Զեյ հսոսրով II-ի դեմ Բաբա Իսհակի բարձրացրած ապստամբության ճնշման ժամանակ⁹⁹⁴: Հիշատակվում են մյուս ներկայացուցիչները՝ Ախալցխիսի-թորեյի Շավայի որդին՝ Փարադավան և Շարվաշիսձե Դարդինը⁹⁹⁵: Զոսե Դաղի ճակատամարտի վերաբերյալ հետաբերբիր տեղեկություններ է պահպանել պատմիչ Բեյբարս ալ-Մանսուրին: Պատմիչի խոսքերով՝ ճակատամարտի նախօրեին սելջուկյան բանակներից մեկի հրամանատարությունը հանձնվել էր Գուրջի հաթունի եղբորը, որ հավատով քրիստոնյա էր⁹⁹⁶: Հասկանալի է, որ Գուրջի հաթունը ոչ այլ ոք էր, քան վրաց թագուհի Ռուսուդանի (1223-1245թթ.) դուստրը՝ Թամարը, որը կնության էր տրվել Ղիյաս ադ-Դին Զեյ հսոսրով II-ին: Դժվար է ստույգ ասել, թե ով է պատմիչի հիշատակած Գուրջի հաթունի եղբայրը, որին վստահվել էր սելջուկյան բանակներից մեկի հրամանատարությունը, և որի մասին աղբյուրը նշում է մեծ դրվատանքով: Վրաց արքայական ընտանիքից սելջուկյան արթունիքում բացի Թամարից աղբյուրներում հիշատակվում է միայն Գեորգի Լաշայի (1213-1223թթ.) որդին՝ Դավիթը՝ ապագա

⁹⁸⁸ Գրիգոր Ակներցի, էջ 26:

⁹⁸⁹ Վրաց ժամանակագրություն, էջ 78:

⁹⁹⁰ Ակներցի Գ., էջ 29:

⁹⁹¹ Գանձակեցի Կ., էջ 282:

⁹⁹² Крадин Н., Скрынникова Т., Империя Чингиз-хана, М., 2006, с. 419-423.

⁹⁹³ Duda H., Die Seldschukengeschichte des Ibn Bibi, Copenhagen, 1959, s. 219.

⁹⁹⁴ Նույն տեղում:

⁹⁹⁵ Վրաց ժամանակագրություն, էջ 77:

⁹⁹⁶ Peacock A., Georgia and the Anatolian Turks in the 2th and 13th Centuries, Anatolian Studies, Vol. 56, British Institute at Ankara, 2006, p. 142.

Դավիթ Ուլուն (1247-1270 թթ.): Ա. Փիթոբի դիտարկմամբ՝ Դավիթն ամենայն հավանականությամբ ծնվել է 1212-1223թթ. միջակայքում, ուստի որոշակի համոզվածությամբ կարելի է ասել, որ Իբն Բիբիի հիշատակած փեսար-ի Գուրջին և Բեյբարս ալ-Մանսուրիի գրչով հիշատակվող Գուրջի Խաթունի եղբայրը Նույն անձինք են⁹⁹⁷: Ընդհանուր առմամբ, մոնղոլները Յայաստանում ու Վրաստանում ամրոցներին ու բերդերին տիրացան՝ ներգրավված չլինելով բաց ճակատամարտերում: Ոչնչացումներից ու մասսայական կոտորածներից բացի անհրաժեշտ է փաստել մի կարևոր հանգամանք ևս. հայ ու վրաց իշխանների՝ ակտիվ պայքարից հրաժարվելը և, առանձին դեպքերում, մոնղոլների հետ բանակցությունների մեջ մտնելը, տալիս էին ցանկալի պտուղներ: «Անմիջական հնապանդություն-հողերի վերադարձ-ռազմական օժանդակություն» եռանկյունին կիրառելի երևույթ էր մոնղոլական նվաճումների ժամանակ, ինչն ակնհայտ երևում է Օրբեյանների, Չաբարյանների, Յասան-Ջալայանների և այլոց դեպքերում: Յայ ու վրաց իշխանների կողմից մոնղոլների հետ առանձին և ուղղակի կապերի հաստատումը մոնղոլների համար կանխորոշեցին դյուրահաս հաղթանակներ՝ «*բաժանիր, որ տիրես*» հայտնի կարգախոսի կիրառմամբ: Մեկ այլ կողմից ստեղծվում է հետաքրքիր պատկեր, երբ գրավված հողերը պաշտոնապես Մոնղոլական կայսրության սահմաններում են, բայց փաստացի կառավարվում են տեղի իշխանների կողմից: Պատահական չէ, որ արաբական աղբյուրները հայ ու վրաց իշխաններին հաճախ կոչում են «սուլթան», «մելիք» կամ «խաբիմ»⁹⁹⁸:

ON THE ISSUE OF THE PRESENCE OF ARMENIAN-GEORGIAN MILITARY FORCES IN THE MONGOLIAN UNITS CHERIG IN THE 1230-1240s

ARAM POGHOSYAN

*Yerevan State University, Faculty of History,
PhD student of Department of Caucasiology,
Yerevan, Republic of Armenia*

The article describes the peculiarities of the Armenian-Georgian military involvement in the military units called «cherig». In general, the study of the process of recruiting military assistant forces from sedentary peoples has long been of great interest to researchers, as the conclusions of the Soviet times need reassessment in modern days. First of all, the study of the process allows clarifying not only the peculiarities of nomadic military history, but also the direction of political processes and the transformation of political traditions. According to the author, the aforementioned realities have gained logical development in the Caucasian region, where the Mongols, as well as in China and Iran, were in political dialogue with representatives of the local governors. The information provided by both Armenian and Georgian, Persian and Arabic sources is subject to source analysis, revealing the discovery of political dialogue between the Armenian and Georgian leaders and the Mongolian military commanders during the Mongol intelligence and major invasions. The article concludes that the "Cherig" and its commanders have played their unique role in the victories of the Mongols.

Key words: *Cherig, Hashar, Political Dialogue, Noyon, Kyoshe-Dagh Battle, «Auxiliary» troops, David Ulu, Armenian-Georgian Forces.*

⁹⁹⁷ Նույն տեղում:

⁹⁹⁸ **Тизенгаузен, В. Г.**, Сборник материалов, относящихся к истории Золотой Орды, т. II, СПб, 1941, с. 84.

О ВОПРОСЕ ПРИСУТСТВИЯ АРМЯНО-ГРУЗИНСКИХ ВОЕННЫХ СИЛ В МОНГОЛЬСКИХ ВОИНСКИХ СОЕДИНЕНИЯХ «ЧЕРИК» В 1230-1240-Х ГОДАХ

АРАМ ПОГОСЯН

*аспирант отдела кавказоведения факультета истории
Ереванского государственного университета,
г.Ереван, Республика Армения*

В статье рассматриваются особенности армяно-грузинского военного участия в воинских частях под названием «черик». В целом, изучение процесса набора военнослужащих из оседлых народов уже давно вызывает интерес у исследователей, так как выводы советских времен в наши дни подвергаются переоценке. Прежде всего, изучение процесса позволяет выяснить не только особенности военной истории кочевников, но и направление политических процессов и трансформацию политических традиций. Согласно автору, вышеупомянутые реалии получили логическое развитие в кавказском регионе, где монголы, как в Китае и Иране, вели политический диалог с местными феодалами. Информация, предоставленная как армянскими, так и грузинскими, персидскими и арабскими источниками, является предметом анализа, выявляя политический диалог между армянскими и грузинскими лидерами и монгольскими военными командирами во время проведения монголами разведки и вторжения. В статье делается вывод о том, что «черик» и его командиры сыграли уникальную роль в победах монголов.

Ключевые слова: *черик, хашар, политический диалог, нойон, битва при Кесе-даге, «вспомогательные» войска, Давид Улу, армяно-грузинские силы.*

ՍԵՔԱՍՏԻԱՅԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՍ ԿԻՐԱՌՎԱԾ ԴԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՂԱԶԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1913-1915 ԹԹ. *

ՀՏԴ 93/94:338.2 (479.25)

ՌՈՒԲԵՐՏ ՍՈՒԲԻԱՍՅԱՆ

Հայոց ցեղասպանության թանգարանի ինստիտուտի ասպիրանտ,
ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի
ցեղասպանագիտության բաժնի լաբորանտ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
robertsukiasyan@yahoo.com

Հոդվածում փորձել ենք ներկայացնել 1913-1915 թվականներին թուրքական իշխանությունների կողմից Սեբաստիա նահանգում իրականացված տնտեսական ճնշումների քաղաքականությունը: Աշխատանքում ներկայացվում է հայ ու թուրք առևտրական ու արտադրական ձեռնարկությունների քանակական հարաբերակցությունը: Առանձին անդրադարձ է կատարվում նահանգի վարչական իշխանությանը՝ ի դեմս նահանգապետ Մուամմերի, և ուժային կառույցների համագործակցությամբ իրականացվող հակահայկական տնտեսական բոյկոտի պրոպագանդային: Այնուհետև ներկայացվում է պրոպագանդային հաջորդած հայկական ձեռնարկություններին հասցվող ուղղակի ու միտումնավոր վնասը՝ արտահայտված շուկաների, այրողացների հրդեհումներով: Վեր են հանվում արդեն պատերազմական փուլում հայապատկան հայկական ու թուրքական գույքի՝ անհավասար պայմաններով առգրավումները, ինչպես նաև սեբաստահայությանը կամավոր կերպով տրամադրված գույքային աջակցությանը կայսրության պատերազմական կարիքներին:

Աշխատանքն առավելապես հենվում է Հայաստանի ազգային արխիվի, Փարիզի Նուբարյան գրադարանի Արամ Անտոնյանի հավաքածուի արխիվային նյութերի, Սեբաստիա նահանգի տարբեր բնակավայրերին նվիրված հուշամատյանների, տպագրված առանձին հուշերի, մամուլի, ինչպես նաև թեմային առնչվող հետազոտությունների վրա:

Բանալի բառեր՝ Օսմանյան կայսրություն, վեց վիլայեթներ, Սեբաստիա, տնտեսական ճնշումներ, հակահայկական բոյկոտի պրոպագանդա, հայկական գույքի հրդեհումներ, հայկական գույքի առգրավումներ:

Աշխատանքը իրականացվել է մի շարք հայկական սկզբնաղբուրների համադրմամբ ու վերլուծությամբ: Հայերի տնտեսական դրությունը ներկայացնելու համար օգտագործվել են «Ձոհրապ Գրիգոր, Սեբաստիայի նահանգը տնտեսական և ազգագրական տեսակետից և հայերի դրությունը»⁹⁹⁹ հոդվածը (1913թ. անստորագիր հրատարակված Փարիզի «Pour les Peuples» հանդեսի 9-րդ համարում) և Նիկոլ Աղբալյանի հոդվածաշարային վերլուծությունը՝ նվիրված վերոնշյալ աշխատանքին¹⁰⁰⁰:

* Հոդվածը ներկայացվել է 30.04.2019թ., գրախոսվել՝ 21.05.2019թ., տպագրության ընդունվել՝ 17.06.2019թ.:

⁹⁹⁹ **Ձոհրապ Գ.**, Սեբաստիայի նահանգը տնտեսական և ազգագրական տեսակետից և հայերի դրությունը, Հայկական հարցը փաստաթղթերու լույսին տակ, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2013, էջ 5-27:

¹⁰⁰⁰ **Աղբալյան Ն.**, Հայկական հարցը, Սեբաստիայի նահանգը թերով, Հորիզոն, Թիֆլիզ, 1913, յունիս 5, հ. 122, յունիս 6, հ. 123, յունիս 7, հ. 124:

Օգտագործվել են Սեբաստիա նահանգի տարբեր գյուղերի ու քաղաքների հուշամատյան ժանրի գրքեր¹⁰⁰¹, հուշերի հավաքածուներ¹⁰⁰², առանձին գրքերով տպագրված հուշեր¹⁰⁰³, իրադարձությունների ժամանակակից տեղական թերթեր¹⁰⁰⁴, ինչպես նաև հետազայում մամուլում հրապարակված հուշեր¹⁰⁰⁵, արխիվային նյութեր Չայաստանի ազգային արխիվից¹⁰⁰⁶ և Փարիզի Նուբարյան գրադարանից¹⁰⁰⁷, ինչպես նաև թեմային նվիրված հետազոտություններ¹⁰⁰⁸:

Սեբաստիայի հայության տնտեսական վիճակը

Սեբաստիա նահանգի տնտեսության ու ժողովրդագրության մասին արժեքավոր տվյալներ է հաղորդում Գրիգոր Չոհրապի «Սեբաստիայի նահանգը տնտեսական և ազգագրական տեսակետից և հայերի դրությունը» հոդվածը, որն 1913թ.-ին անստորագիր հրապարակվել է Փարիզի «Pour les Peuples» հանդեսի 9-րդ համարում: Ըստ Չոհրապի՝ Արևմտյան Չայաստանի բոլոր 6 նահանգների հասարակական կյանքում հայ բնակչությունը առաջատարն էր թե՛ մշակութային, թե՛ տնտեսական գործունեությամբ¹⁰⁰⁹: Սեբաստիա նահանգում գործում էին 166 ներմուծող առևտրականներ, որոնցից 141-ը հայեր էին, 13-ը՝ թուրք, 12-ը՝ հույն: Արտահանողների ընդհանուր թվից՝ 150-ից 127-ը հայեր էին, 23-ը՝ թուրք: Բանկային գործում 32 հայեր և 5 թուրքեր, խանութպանների ու արհեստավորների կազմում 6800-ը հայեր էին, 2550-3000-ը՝ թուրք¹⁰¹⁰: Թեև բացարձակ թվերով հայերն, ըստ Չոհրապի, 27.000-ով պակաս էին թուրքերից, բայց առևտրի ոլորտում 11 անգամ գերազանցում էին վերջիններին: Չայ մանրավաճառները գերազանցում էին թուրք գործընկերներին մոտ 4 անգամ, արհեստավորները՝ 5, նպարավաճառները՝ մոտ 1.5, իսկ բանկային ոլորտում մոտ 7

¹⁰⁰¹ **Պատրիկ Ա.**, Պատմագիրք յուշամատեն Սեբաստիոյ եւ գաւառի հայութեան, հատոր Ա, տպ. «Մշակ», 1974: **Չարդարեան Ե.**, Պատմագիրք Տիվրիկ քաղաքի, Պեյրուք, Չամազգայինի «Վահէ Սեբեան» տպարան, 1972: **Ալայօյաճեան Ա.**, Պատմութիւն Եւրոպիոյ հայոց, Գահիրէ, տպ. «Նոր աստղ», 1952: **Սիմոնեան Գ.**, Յուշամատեն պոնտական Ամասիոյ, Վենետիկ, ա.հ, 1966: **Սինասեան Պ.**, Պատմագիրք Կիւրինի, Պեյրուք, տպարան «Սեան», 1974: **Պառաւեան Ս.**, Փոքր Չայքի Սիմ-Չաճի-գիւղ գիւղաքաղաքի հայերու պատմութիւնը 1890-1922, Վենետիկ, Ա. Յ., 1978:

¹⁰⁰² **Մեսրոպ Լ.**, Աղետ եւ վերածնունդ, Փարիզ, տպագր. «Արաքս», 1952: **Սվազյան Վ.**, Չայոց ցեղասպանությունը. Ականատես վերապրողների վկայություններ, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 2011:

¹⁰⁰³ **Արծրունի Ն.**, Մահուան ձորին մէջ, Անթիլիաս, տպարան «Կաթողիկոսութեան Չայոց Սեծի Տանն Կիլիոյ», 1965:

¹⁰⁰⁴ Հողդար շաբաթաթերթ, Սեբաստիա, 1914 յունվար 18, թիւ 41, 1914 մարտ 15, թիւ 49:

¹⁰⁰⁵ **Շահեն Տ.**, «Արիւնի ճամբէս.Դեպի Գողգոթան», «Չայրենիք» ամսագիր, Պոսթըն, սկսված՝ 1950 թիւ 11 (298) մինչև 1953 թիւ 1 (323):

¹⁰⁰⁶ **Երկանյան Գ.**, Սեբաստիոյ պատմագրքի համար նոթագրած պատմական տեղեկություններ, ֆ. 439 ց. 1, գ. 497: **Ալեքսանդրյան Յ.**, Հուշերը 1915թ. Եղեռնի մասին, ֆ. 439 ց. 3, գ. 115:

¹⁰⁰⁷ Ա. հ., Սեբաստիա եւ իր գիւղերը (Սվազի վիլայէթ), ձեռագիր, էջ 0005-0014 շրջ, BNU/Fonds A. Andonian, P.J.1/3, fi le 49, Sebaste: **Գալենթարեան Գ.**, Սեբաստիոյ հայոց մարտիրոսագրութիւնը, Andonian – Matériaux pour l'histoire du genocide, P. i. L/4-3, Amele Tabourî, massacre des soldats arméniens, էջ 1-51:

¹⁰⁰⁸ **Ակունի Ս.**, Միլիոն մը հայերու ջարդի ամբողջական պատմութիւնը (1914-1918), Կ.Պոլիս, «Չայաստան» գրատան հրատ., 1921: **Գաբրիէան Վ.**, Եղեռնապատում Փոքուն հայոց եւ Նորին մեծի մայրաքաղաքին Սեբաստիոյ, Պոսթըն, «Չայրենիք», 1924: **Ղազարեան Յ.**, Ցեղասպան թուրքը, Պեյրուք, «Չամազգային» տպարան, 1968: **Kévorkian R.**, The Armenian Genocide. A Complete history. London, New York, I.B. TAURIS, 2011:

¹⁰⁰⁹ **Չոհրապ Գ.**, նշվ. աշխ., էջ 10:

¹⁰¹⁰ **Չոհրապ Գ.**, նշվ. աշխ., էջ 11: **Չոհրապ Գ.**, նշվ. աշխ., էջ 41:

անգամ: Նահանգից արտահանվող հիմնական ապրանքներն էին գարին, ցորենը, ծխախոտը, ափիոնը, այուրը, բամբակ, խեժը, մեղրապը, բուրդը, բոժոժը, կաշին, գորգերը և այլ բրդե ու բամբակյա գործվածքներ¹⁰¹¹: Ընդհանուր առմամբ, նահանգ էր ներմուծվում 2.053.000 թուրքական լիրային համարժեք ապրանք, արտահանվում՝ 1.635.000 լիրայի ապրանք: Ձևավորվող պակասորդը լրացվում էր պանդուխտ սեբաստացիների ուղարկած միջոցների հաշվին¹⁰¹²: Փոքր տարբերությամբ նմանատիպ վիճակագրություն է ներկայացնում նաև Հայկազուն Ղազարյանը՝ հղում անելով ֆրանսիայի երկու հյուպատոսների՝ Կռնառի և Դյուսաբի կազմած տեղեկագրերին¹⁰¹³:

Նահանգի ֆաբրիկաներից ու ձեռնարկատիրություններից 130-ի սեփականատարերը հայեր էին, քսանինսի սեփականատերը՝ թուրքեր, երեքինը՝ այլ ազգերի ներկայացուցիչներ, իսկ դրանք սպասարկող տեխնիկական անձնակազմը բացառապես հայեր էին: 17.000 բանվորներից 14.000-ը հայեր էին, 3500-ը՝ թուրքեր, 200-ը՝ այլ ազգեր¹⁰¹⁴:

Վիճակագրական այս տվյալներն ուսումնասիրելով՝ Նիկոլ Աղբալյանը 1913թ.-ին Թիֆլիսի «Հորիզոն» օրաթերթի հունիսյան երեք համարներում վերլուծում է Չոհրապի տրամադրած տվյալները: Ըստ Աղբալյանի՝ կրթության ոլորտի ներկայացված պատկերից կարելի էր անել առնվազն երեք եզրահանգում. ա) Օսմանյան կայսրությունում կրած հալածանքները չեն ընկճել տաճկահայության կենսունակությունը, բ) առավել մեղմ հասարակական-քաղաքական պայմաններում հայերի առաջխաղացման տեմպերը կարող էին առավել խորացնել հայերի և մյուս ազգությունների տարբերությունները, գ) թուրքերին գերազանցող հայերի կրթական մակարդակը չէր կարող անտարբեր թողնել թուրք զինվորականությանն ու պաշտոնյաներին¹⁰¹⁵: Առաջին հայացքից Չոհրապի կազմած վիճակագրական տվյալներից կարելի է ենթադրել, որ հայերի հալածանքի պատճառներից մեկը տնտեսության բնագավառում նրանց գերակա դիրք ունենալն էր: Սակայն Նիկոլ Աղբալյանը Չոհրապի տեղեկագրի հիման վրա կատարած իր եռամսա հոդվածաշարի երրորդ հատվածում հարցը դիտարկում է այլ տեսանկյունից: Ըստ հեղինակի՝ հայերի հալածանքների դրդապատճառը պետք էր փնտրել ոչ թե թուրք բնակչության սոցիալական անհավասարության ընկալումներում, այլ թուրք մտավորականության ու զինվորականության շրջանում: Ըստ այդմ, կիսում ենք Նիկոլ Աղբալյանի կարծիքն առ այն, որ թուրքական իշխանությունները հայերի առաջադիմությունը ընկալում էին ոչ այնքան որպես սոցիալ-տնտեսական, այլ որպես քաղաքական սպառնալիք¹⁰¹⁶:

Հայկական ձեռնարկությունների դեմ բոյկոտը

1913թ.-ի մարտի 30-ին Սեբաստիայում նահանգապետ Նշանակված Ահմեդ Մուամմեր բեյը հետապնդում էր հայերի բարգավաճմանը վերջ դնելու և թուրքական տնտեսվարությունները խթանելու նպատակ, ինչի համար մշակել էր տնտեսական բռնաճնշումների նախագիծ¹⁰¹⁷: Այդ քաղաքականության դրսևորումներից էր

¹⁰¹¹ Չոհրապ Գ., նշվ. աշխ., էջ 10-11:

¹⁰¹² Աղբալյան Ն., Հայկական հարցը, Սեբաստիայի նահանգը թերով, Հորիզոն, Թիֆլիզ, 1913, յունիս 6, հ. 123:

¹⁰¹³ Ղազարեան Հ., նշվ. աշխ., էջ 87:

¹⁰¹⁴ Չոհրապ Գ., նշվ. աշխ., էջ 11:

¹⁰¹⁵ Աղբալյան Ն., Հայկական հարցը, Լուսաւորութեան գործը Հայաստանում, Հորիզոն, Թիֆլիզ, 1913, յունիս 5, հ. 122:

¹⁰¹⁶ Աղբալյան Ն., Հայկական հարցը, Սեբաստիայի նահանգը թերով, Հորիզոն, Թիֆլիզ, 1913, յունիս 6, հ. 123:

¹⁰¹⁷ Kévorkian R., նշվ. աշխ., էջ, 429:

հայկական ձեռնարկությունները բոլորտելու պրոպագանդան: Անձամբ կառավարելով բոլորտի պրոպագանդան՝ Մուսամբերը ձևավորել էր պրոպագանդիստների խմբեր և ուղարկել նրանց նահանգի տարբեր մասեր: Այդ արշավի մեջ ներգրավված են եղել նաև այլ պետական ինստիտուտներ ու պաշտոնյաներ՝ ժամդարմերիան, ի դեմս Կյուրինի և Տարենտի ժամդարմերիայի հրամանատար Սաաեդինի¹⁰¹⁸:

Թուրք բնակչության շրջան կատարած այցերի ժամանակ Մուսամբերն անձամբ հորդորել է թուրքերին «չափազործվել» հայերի կողմից¹⁰¹⁹: Ըստ Սեբաստիայում լույս տեսնող «Հողդար» շաբաթաթերթի՝ 1914թ.-ի հունվարին փորձեր են կատարվել թուրք գյուղացիներին զերծ պահել քրիստոնյաների խանութներից օգտվելուց¹⁰²⁰: Նույնիսկ պատահել այնպիսի ծայրահեղ դեպքեր, երբ տեղացիները ներխուժել են քրիստոնյաների խանութներ և դուրս են բերել առևտուր անող թուրքերին¹⁰²¹: Բոլորտի արդյունքում ստեղծված դրությունը մեղմելու համար հայ վաճառականները դիմել են նահանգապետ Մուսամբերին ու հասել որոշակի զիջումների, քանի որ գործնականում հնարավոր չէր կարճ ժամանակում ստեղծել բոլորտված առևտրային հարաբերություններին փոխարինող այլընտրանք¹⁰²²:

Հայկական ձեռնարկությունների վրա գործադրված ճնշումներից ու պրոպագանդայից բացի նախաձեռնվում էին թուրքական մթերանոցներ բացելու գործնական քայլեր¹⁰²³: Նահանգապետը ընկերակցություններ էր ձևավորում առևտրական բոլոր ճյուղերի համար և նույնիսկ ներդնում իր անձնական միջոցները: Պետք է ստեղծվեին թուրքական արհեստանոցներ, որտեղ հայ վարպետները թուրք երիտասարդներին սովորեցնելու էին տարբեր արհեստներ¹⁰²⁴: Այդ գործողություններով թուրքական իշխանությունները նպատակաուղղված վնաս էին հասցնում Սեբաստիայի հայերի տնտեսական կարողություններին ու ներուժին, բացի այդ նպաստում թուրք բնակչության շրջանում այն համոզման տարածմանը, որ հայերն իրենց գործունեությամբ վնասում կամ սպառնում էին թուրքական տարրի բարգավաճմանը, և թուրքերը շահագործվում հայերի կողմից:

Հայկական ձեռնարկությունների հրդեհումները

Տնտեսական անհավասար պայմաններ ստեղծելու փորձերից բացի եղել են նաև հայկական ձեռնարկությունների դեմ ուղիղ հարձակումներ: 1914թ.-ի ապրիլ-մայիս ամիսներին կասկածելի հանգամանքներում մեկը մյուսի հետևից հրդեհներ էին բռնկվում Մարզվանի, Ամասիայի, Սեբաստիայի, Եվրոկիայի շուկաներում¹⁰²⁵: Ըստ Կարապետ Գաբրիկյանի՝ Եվրոկիայի ու Ամասիայի շուկաները կրել են շուրջ 300,000 ոսկու վնաս¹⁰²⁶: 1914 թ.-ի մայիսի 1-ին Եվրոկիայում հրդեհը միանգամից բռնկվել էր մի քանի վայրերում, իսկ քաղաքը միտումնավոր գրկվել էր ջրամատակարարումից, և հրշեջները անհետացել էին, թուրքերը սպասում էին թալանի առիթների¹⁰²⁷, իսկ ոստիկանները մատնված էին անգործության¹⁰²⁸: Հրդեհը նկատելուց հետո

¹⁰¹⁸ Հողդար շաբաթաթերթ, Սեբաստիա, 1914 մարտ 15, թիւ 49:

¹⁰¹⁹ Գաբրիկյան Կ., նշվ. աշխ., էջ 22:

¹⁰²⁰ Հողդար շաբաթաթերթ, Սեբաստիա, 1914 յունվար 18, թիւ 41:

¹⁰²¹ Նույն տեղում:

¹⁰²² Գաբրիկյան Կ., նշվ. աշխ., էջ 23:

¹⁰²³ Հողդար շաբաթաթերթ, Սեբաստիա, 1914 մարտ 15, թիւ 49:

¹⁰²⁴ Գաբրիկյան Կ., նշվ. աշխ., էջ 21:

¹⁰²⁵ Պատրիկ Ա., նշվ. աշխ., էջ 717: Ակունի Ս., նշվ. աշխ., էջ 75:

¹⁰²⁶ Գաբրիկյան Կ., նշվ. աշխ., էջ 24: Պատրիկ Ա., նշվ. աշխ., էջ 717:

¹⁰²⁷ Պատրիկ Ա., նշվ. աշխ., էջ 717:

¹⁰²⁸ Գաբրիկյան Կ., նշվ. աշխ., էջ 23-24:

հրդեհաշիջման աշխատանքների կազմակերպումն իր վրա է վերցրել առաջնորդ S.Շավարշ վարդապետը: Նա ստիպել է վերականգնել ջրամատակարարումը և գործի դրել հրշեջներին, ինչի շնորհիվ հնարավոր է եղել փրկել մի քանի ազգային կալվածներ¹⁰²⁹: Ըստ տարբեր տվյալների՝ 21 ժամ տևած հրդեհի արդյունքում այրվել էին 85 խանութ, 45 տուն ու 3 խան¹⁰³⁰:

Նույն տրամաբանության մեջ են տեղավորվում նաև նաև հայ սեփականատերերին պատկանող այրաղացների հրդեհումները Մարզվանում, Ամասիայում ու Սեբաստիայում: Ըստ Կարապետ Գաբրիլյանի և Առաքել Պատրիկի՝ ակնհայտ էր, որ հրդեհները կազմակերպված էին թուրքական կառավարության կողմից¹⁰³¹: Այսպիսով, կազմակերպված հրդեհները կարելի է դիտարկել թուրքական իշխանությունների տնտեսական ճնշումների համատեքստում՝ նպատակ ունենալով թուլացնել հայկական տնտեսական ուժը:

Սեբաստիայի հայությունը Առաջին համաշխարհային պատերազմի սկզբին. գորակոչ ու գույքի առգրավում

Սեբաստիայում առգրավումների գործընթացին անցնելուց առաջ անհրաժեշտ ենք համարում նշել, որ առաջնորդարանը և նահանգի հոգևոր առաջնորդները, պատրիարքարանի կոնդակի համաձայն, հորդորել էին հայությանը պատերազմական գործերում աջակցել Օսմանյան կայսրությանը¹⁰³²: Չորակոչին հաջորդող շաբաթներին իշխանությունները ձեռնամուխ են լինում հայերի գույքի առգրավման գործին: Առգրավման գործընթացին անցնելուց առաջ իշխանությունները բնակիչներին հորդորում էին իրենց գույքը կամովին հանձնել պետությանը: Մի քանի հորդորներից հետո սկսվում էին տնային խուզարկությունները ու գույքի բռնի առգրավումները¹⁰³³: Այդ գործողությունները երբեմն ուղեկցվում էին տանուտերերի և տեղի հայության առաջնորդների նկատմամբ կիրառվող ծայրահեղ բռնություններով (օր.՝ տաքացած երկաթով աչքերը խարանել), որպեսզի վերջիններս իշխանություններին հանձնեն թաքցրած գույքը¹⁰³⁴: Պատերազմական ծախսերը բավարարելու համար ստեղծվել էին Չինվորական պիտույքների առգրավման հանձնաժողովներ, որոնք զբաղվում էին ամբողջ նահանգի խանութների ապրանքների, ձիերի, կառքերի, եզների բռնագրավմամբ¹⁰³⁵: Ի տարբերություն հայապատկան գույքի զանգվածային առգրավման՝ թուրքերի գույքը առգրավվում էր շատ «ցանցառ» կերպով¹⁰³⁶: Օրինակ, Բրզնիկ գյուղում, որտեղ գյուղացիների ապրուստի հիմնական միջոցը ձիերի վաճառքն էր, առգրավվել էին 14.500 լիրա արժողությամբ ձիեր, միևնույն գյուղի թուրքերին պատկանող 5-6 ձիերին ձեռք չէին չտվել¹⁰³⁷: Նմանատիպ խտրական վերաբերմունք է

¹⁰²⁹ Պատրիկ Ա., նշվ. աշխ., էջ 717:

¹⁰³⁰ Kévorkian R., նշվ. աշխ., էջ, 429-430:

¹⁰³¹ Գաբրիլյան Կ., նշվ. աշխ., էջ 24: Պատրիկ Ա., նշվ. աշխ., էջ 717:

¹⁰³² Գաբրիլյան Կ., նշվ. աշխ., էջ 42: Գալեմբարեան Գ., նշվ. աշխ., էջ 12: Վարանդեան Մ., Մուրատ (Սեբաստացի ռազմիկին կեանքն ու գործը), «Հայրենիք»ի տպարան, Հրատ. Մուրատ ֆոնդի կեդրոնական վարչություն, Պոսթըն, 1931, էջ 208: Սեբրոպ Լ., Աղետ եւ վերածնունդ, Փարիզ, տպագր. «Արաքս», 1952, էջ 397: Սիմոնեան Գ., նշվ. աշխ., 663: Ալաջայան Ա., նշվ. աշխ., էջ 1225:

¹⁰³³ Fonds Andonian – Matériaux pour l’histoire du génocide, Dossier 49 Massacres et déportations à Sébaste, Ա. հ., Սեբաստիա եւ իր գիւղերը (Սվազի վիլայեթ), էջ 0005-0006:

¹⁰³⁴ Նույն տեղում:

¹⁰³⁵ Գաբրիլյան Կ., նշվ. աշխ., էջ 31-32:

¹⁰³⁶ Ղազարեան Յ., նշվ. աշխ., էջ 90:

¹⁰³⁷ Fonds Andonian – Matériaux pour l’histoire du génocide, Dossier 49 Massacres et déportations à Sébaste, Ա. հ., Սեբաստիա եւ իր գիւղերը (Սվազի վիլայեթ), էջ 0006:

եղել նաև տնտեսվարողների գույքի առգրավման հարցում: Օրինակ, ի տարբերություն հայ վաճառականների նկատմամբ կիրառվող գործելաճի՝ թուրք վաճառականների պարագայում հայտնի են դեպքեր, երբ ոչ միայն վերցված ապրանքների ծավալն էր աննշան, այլև անգամ այդ փոքր քանակությամբ առգրավված գույքը գիշերը վերադարձվում էր տերերին՝ որպես հիմնավորում ներկայացնելով շուկայում թուրք վաճառականների անմրցունակ դիրքը¹⁰³⁸: Ըստ հայկական աղբյուրների՝ բռնագրավում էին հայերի ունեցվածքի 90%-ը, իսկ թուրքերի ունեցվածքի 5%-ը¹⁰³⁹: Ամասիայում ակնհայտ խտրական մոտեցումը քողարկելու համար առգրավվում էին թուրքական գույքը, սակայն հիմնականում անարժեք իրերը¹⁰⁴⁰: Այդ գործընթացի շրջանակում առգրավվեց Սեբաստիա քաղաքի 43 արհեստավորների գույքը, իսկ նրանց նշանակեցին հրամանատարներին ու տասնապետներին անձնական ծառայություններ մատուցելու գործին¹⁰⁴¹: Սակայն այն արհեստավորները, որոնց ծառայությունը անփոխարինելի էր պետության համար, խուսափում էին խտրական վերաբերմունքից (օր.՝ Եվրոկիայի թուրքական զորանոցների շինարարները)¹⁰⁴²: Առգրավվում էին անգամ ռազմական նշանակություն չունեցող ապրանքներ՝ կանացի հագուստ, հոտապետ օճառներ, անուշահոտություններ¹⁰⁴³: Հայտնի են դեպքեր, երբ առգրավումներին փորձում էին տալ օրինական տեսք. տրամադրում էին գույքի փոխարժեքը պատերազմից հետո ստանալու մուրհակներ¹⁰⁴⁴: Լրտեսումների արդյունքում հայտնաբերված գույքն առգրավվում էր առանց մուրհակի տրամադրման, իսկ դրանց սեփականատերերը տուգանվում էին ու բանտարկվում: Առգրավվում են նաև հայ կառապանների կառքերը, ձիերը, գյուղերի եզնասայլերը, էշերը¹⁰⁴⁵: Խանութների գույքագրման ու մնացած ապրանքների առգրավման համար ստեղծված «Միւտաֆայը Միլլիե» (Ազգային պաշտպանություն) անունը կրող հանձնախումբն, իր լիազորությունները իրականացնելուց բացի, առգրավված գույքի մի մասն էլ ուղարկում էր թուրք բնակիչներին, զինվորական տներին կամ զինվորական մթերանոցներին¹⁰⁴⁶:

«Չինվորական գործերի անհրաժեշտությունից» ելնելով՝ առգրավվել են եկեղեցիներ, հիվանդանոցներ, գործարաններ, գործատներ, ջրաղացներ և աչքի ընկնող տներ¹⁰⁴⁷: Հայերին պատկանող կրթական, մշակութային հաստատությունները բռնագրավվել և տրամադրվել էին ռազմական նպատակների համար: Արամյան վարժարանն ու մանկապարտեզը վերածվել էին զինվորական հիվանդանոցի¹⁰⁴⁸: Ս.Սարգիս, Ս.Փրկիչ, Ս.Նշան, Ս.Անապատ, Ա.Հակոբ¹⁰⁴⁹ վանքերն ու եկեղեցիներն իրենց կրթական շենքերով, ինչպես նաև հայերին պատկանող որոշ տներ¹⁰⁵⁰

¹⁰³⁸ **Գաբիկեան Կ.**, նշվ. աշխ., էջ 32:

¹⁰³⁹ Fonds Andonian – Matériaux pour l’histoire du génocide, Dossier 49 Massacres et déportations à Sébaste, **Ա. հ.**, Սեբաստիա եւ իր գիւղերը (Սվազի վիլայեթ), էջ 0005:

¹⁰⁴⁰ **Սիմոնեան Գ.**, նշվ. աշխ., էջ 663:

¹⁰⁴¹ Fonds Andonian – Matériaux pour l’histoire du génocide, Dossier 49 Massacres et déportations à Sébaste, **Ա. հ.**, Սեբաստիա եւ իր գիւղերը (Սվազի վիլայեթ), էջ 0005: **Գալեմբեարեան Գ.**, նշվ. աշխ., էջ 10:

¹⁰⁴² **Սվազյան Վ.**, նշվ. աշխ., էջ 345: **Ալպոյաճեան Ա.**, նշվ. աշխ., էջ 1224:

¹⁰⁴³ **Սիմոնեան Գ.**, նշվ. աշխ., էջ 663: **Գալեմբեարեան Գ.**, նշվ. աշխ., էջ 10:

¹⁰⁴⁴ **Գաբիկեան Կ.**, նշվ. աշխ., էջ 32: **Սիմոնեան Գ.**, նշվ. աշխ., էջ 663:

¹⁰⁴⁵ **Գաբիկեան Կ.**, նշվ. աշխ., էջ 32-33: **Ալպոյաճեան Ա.**, նշվ. աշխ., էջ 1225: **Սիմոնեան**

Գ., նշվ. աշխ., էջ 663:

¹⁰⁴⁶ **Ղազարեան Հ.**, նշվ. աշխ., էջ 90-91: **Գաբիկեան Կ.**, նշվ. աշխ., էջ 32:

¹⁰⁴⁷ **Ղազարեան Հ.**, նշվ. աշխ., էջ 90-91:

¹⁰⁴⁸ **Տերտրեան Շ.**, Արիւնի ճամբար. Դեպի Գողգոթան, «Հայրենիք» ամսագիր Պոսթըն, 1950 թիւ 299, էջ 49: Հունագրական ժառանգություն, էջ 189:

¹⁰⁴⁹ **Գալեմբեարեան Գ.**, նշվ. աշխ., էջ 11-12:

¹⁰⁵⁰ **Երկանյան Գ.**, Սեբաստիոյ պատմագրքի համար նոթագրած պատմական տեղեկություններ, ՅԱԱ, ք. 439, գ. 1, գ. 497, էջ 36:

տրամադրվել էին զինվորներին կամ գերիներին՝ բնակության¹⁰⁵¹: Հայկական հաստատությունների նկատմամբ այդ քաղաքականությունը կիրառվել է նաև Նահանգի այլ վայրերում: Օրինակ, Ամասիա քաղաքի դպրոցը, Կյուրին քաղաքի Յորեն և Շուրուկ թաղերի եկեղեցիները, բողոքականների ժողովարանը, Չախձոր թաղի եկեղեցին նույապես օգտագործվել են ռազմական նպատակներով¹⁰⁵²: Հայ աշխատավորների ձեռքերով թուրքական հիվանդանոց ու զորանոց կառուցելու համար օգտագործվել են Սանասարյան վարժարանի համար նախատեսված 1000 ոսկի արժողությամբ շինարարական նյութերը, ինչպես նաև հայկական գերեզմանի քարերը¹⁰⁵³: Հարկ է ընգծել նաև, որ Սեբաստիայի հայությունը, անսալով գույքահավաքի կոչին, մեծ ներդրում է ունեցել կայսրության պատերազմական նախապատրաստություններին:

Ազգային հիվանդանոցը թուրք զինվորներին է հատկացրել ամսական 300 ոսկի արժողությամբ 150 անկողին: Թուրքական հիվանդանոցներին նմանատիպ աջակցություն են ցույց տվել ինչպես անհատներ, այնպես էլ Հայկական Կարմիր հաչը¹⁰⁵⁴: Գյուղական բնակչությունն իր հերթին տրամադրել էր մեծ քանակությամբ մթերք՝ գարի, բլրուր, յուղ, ոչխար, հավկիթ, պանիր և այլն¹⁰⁵⁵: Սեբաստիա-Էրզրում ճանապարհի գյուղերը ապահովել են իրենց տարածքով անցնող կամ շրջակայքում տեղակայված զորամիավորների սնունդը, անկողինն ու ճանապարհի պաշարները¹⁰⁵⁶: Ըստ Հայկանուշ Չառաջյանի՝ հայ կանայք օր ու գիշեր պաքսիմատ, գուլպաներ, ձեռնոցներ ու ճերմակեղեն էին պատրաստում կայսերական բանակի համար¹⁰⁵⁷:

Ինչպես տեսնում ենք, թուրքական իշխանությունները փորձել են իրենց գործողություններին տալ օրինական տեսք ու դնել իրավական գործընթացների ձևի մեջ: Այս փուլում համանման մոտեցումն արտահայտվել է պատերազմական կարիքներով պայմանավորված գույք տրամադրելու իշխանությունների պահանջով և դրա դիմաց մուրհակների տրամադրմամբ: Չորակոչի ու առգրավումների միջոցով իշխանությունները ոչ միայն ամրացնում էին կայսրության պատերազմական կարողությունները, այլ նաև թուլացնում էին հայերի դիմադրողականությունը:

Եզրակացություններ

Հոդվածն ամփոփելով՝ կարելի է պնդել, որ Նախագեղասպանական շրջանում Սեբաստիա Նահանգի հայ բնակչությունն ուներ տնտեսական գերակշիռ դիրք թուրք բնակչության նկատմամբ: Հայ ձեռնարկատերերը և առևտրականները մի քանի անգամ գերազանցում էին թուրքական բնակչությանը արտահանումների, ներմուծումների, բանկային գործի, ինչպես նաև ֆարիկաների ու ձեռնարկատիրությունների քանակով: Հայերի գերակշիռ դիրքը հաղթահարելու համար Սեբաստիա Նահանգի վարչական և ուժային կառույցների համագործակցությամբ իրակացվում էր հայկական տնտեսությունների բոյկոտի

¹⁰⁵¹ Գալեմբեարեան Գ., նշվ. աշխ., էջ 11:

¹⁰⁵² Մինասեան Պ., Պատմագիրք Կիւրինի, Պէյրուֆ, տպարան «Սեւան», 1974, էջ 644:

Սիմոնեան Գ., նշվ. աշխ., էջ 701:

¹⁰⁵³ Գաբրիկեան Կ., նշվ. աշխ., էջ 33: Ղազարեան Յ., նշվ. աշխ., էջ 91:

¹⁰⁵⁴ Գաբրիկեան Կ., նշվ. աշխ., էջ 42:

¹⁰⁵⁵ Վիրաբյան Ա., Ավագյան Գ., Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում: Վերապրածների վկայություններ: Փաստաթղթերի ժողովածու, հատ 3., Հայաստանի ազգային արխիվ, Երևան, 2012, էջ 363:

¹⁰⁵⁶ Տերտերյան Ռ., նշվ. աշխ., գ. 78, էջ 1:

¹⁰⁵⁷ Fonds Andonian – Matériaux pour l’histoire du génocide, Dossier 49 Massacres et déportations à Sébaste, Չառաջյան Յ., Սըվազ, էջ 0113: Գաբրիկեան Կ., նշվ. աշխ., էջ 42

պրոպագանդա: Պրոպագանդայի նպատակը ոչ միայն հայերի տնտեսական դիրքը թուլացնելն էր, այլև հակահայկական տրամադրությունների տարածումը: Բոլկոտի պրոպագանդային հաջորդում են հայկական խանութների, շուկաների, արտադրատեղիների հրդեհումները, որոնցով պատճառվում է մեծ ծավալի վնաս: Սեբաստիա նահանգում պատերազմական դրությունով պայմանավորված գույքի առգրավումները հայ ու թուրք բնակիչներից կատարվում էին խիստ անհավասար կերպով: Հայ բնակչության կողմից մի քանի անգամ գույքի կամավոր հանձնումից հետո նույնիսկ հայապատկան գույքը բռնագավթում էին՝ որոշ դեպքերում ծայրահեղ բռնություններով:

Չնայած վերոնշյալ հակահայկական քաղաքականությանը՝ հայ բնակչությունը կամավոր կերպով մեծ նպաստ է բերել պետության պատերազմական նախապատրաստություններին՝ իշխանությունների տրամադրության տակ դնելով մեծ քանակությամբ շարժական ու անշարժ գույք:

STATE ECONOMIC POLICY TOWARDS ARMENIANS IN SEBASTIA IN 1913-1915

ROBERT SUKIASYAN

*Yerevan State University, PhD Student at the Armenian Genocide Museum Institute
Foundation, laboratory assistant, Institute of Armenian Studies,
Department of Genocide Studies,
Yerevan, Republic of Armenia*

The article attempts to present the policy of economic pressure exerted by the Turkish government in Sebastia Province between 1913 and 1915. The quantitative ratio of Armenian and Turkish commercial and manufacturing enterprises is presented. Separate reference is made to the propagation of anti-Armenian boycott of the state's administrative authority, in the person of governor Muammer in cooperation with power structures. The direct and intentional damage to the Armenian property which followed the boycott propaganda is presented, it was especially expressed by the burnings of markets and Armenian mills. The unfair seizure of Armenian and Turkish property in the war-time, as well as voluntary donations of Sebastian Armenians to the military needs of the empire are also discussed.

The work is heavily based on the materials from the National Archive of Armenia, Aram Antonyan archival collection of Paris based Nubarian library, the memorial books dedicated to different settlements of Sebastia, and separate publications of memoirs, as well as on the studies of the topic.

Key words: *Ottoman Empire, six vilayets, Sebastia, economic pressures, anti-Armenian boycott propaganda, burning of Armenian property, Armenian property seizures.*

ГОСУДАРСТВЕННАЯ ЭКОНОМИЧЕСКАЯ ПОЛИТИКА В ОТНОШЕНИИ АРМЯН СЕБАСТИИ В 1913-1915 ГОДАХ

РОБЕРТ СУКИАСЯН

*аспирант Музея-института Геноцида армян,
лаборант отдела геноцидоведения Института арменоведческих исследований
Ереванского государственного университета,
г.Ереван, Республика Армения*

В статье предпринята попытка представить политику экономического давления, проводившуюся турецким правительством в провинции Себастия с 1913 по 1915 год. Представлено количественное соотношение армянских и турецких коммерческих и производственных предприятий. Отдельно упоминается пропаганда антиармянского бойкота государственной административной власти в лице губернатора Муаммера в сотрудничестве с силовыми структурами. Представлен прямой преднамеренный ущерб армянскому имуществу, нанесенный в последовавшей за пропагандой бойкота период, который выразался, в частности, в сожжении рынков и армянских мельниц. Обсуждается также захват армянского имущества в военное время, а также добровольные пожертвования армян Себастии на военные нужды империи.

Работа в значительной степени опирается на материалы Национального архива Армении, архивного фонда Арама Антоняна Нубарийской библиотеки в Париже, мемориальные книги, посвященные различным населенным пунктам Себастии, отдельные публикации мемуаров, а также на исследования на эту тему.

Ключевые слова: *Османская империя, шесть вилайетов, Себастия, экономическое давление, антиармянская пропаганда бойкота, поджоги армянской собственности, захват армянской собственности.*

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՍԲԻՆՆ
TRIBUNE OF YOUNG SCIENTIST
ТРИБУНА МОЛОДОГО УЧЕНОГО



THE MANIFESTATIONS OF SUNNI RADICALISM IN AZERBAIJAN*

UDC 297(479.24)

NAREK SUKIASYAN

Yerevan State University, Faculty of International Relations,
MA, Yerevan, Republic of Armenia
nareksukiasyan@gmail.com

Islamic radicalization is relatively new phenomenon for the Republic of Azerbaijan, since its first signs appeared only in the early years of independence. Even though its expressions do not amount to an inextricable issue for state security, throughout last thirty years Azerbaijan saw worrisome trends that have borne risks not only for the domestic order but also to the regional and interregional stability. Drawing on the results of desk research of secondary and some primary data and interview, the article aims to trace the roots and manifestations of Sunni radicalization in Azerbaijan and reveals the implications of radicalization on Nagorno-Karabakh conflict. The article sheds light on some of the possible recruitment and radicalization social mechanisms and the factors that condition ideological militarization, challenging the traditionally accepted “root causes”, instead focusing on networks as predominant path of recruitment into militarized armed groups. Additionally, the article attempts to explain why the Azerbaijani ideologically radicalized groups have refrained/have been kept away from activating in the Nagorno Karabakh conflict. The article suggests that people from these circles largely do not perceive the conflict as a part of their ideological strife. In addition to that, militarization and autonomy of these groups contradicts Baku’s interest, therefore it aims to prevent the engagement of such groups in the conflict.

Key words: *Islamic radicalization, Azerbaijani terrorists, Nagorno Karabakh conflict, Salafism, terrorist groups, irregular armed forces, terrorist networks.*

Sandwiched between the Middle East and the North Caucasus, two regions widely perceived as strongholds of Islamic extremism and insurgency, the South Caucasus has remained mostly unconcerned in this regard. If the reason how Armenia and Georgia (to a lesser extent) were kept unaffected is more obvious and can be credited to the diverging religious affiliation, then in the case of Muslim Azerbaijan the answer is not straightforward. Arguing that this post-Soviet country is immune to religious violent extremism would be an underestimation of the risks, however it is also not a stronghold of such groups. With the rise of militarized crises in Syria and Iraq there has been a growing influx of Azeri foreign fighters into the theatre of war, joining the global jihad of ISIS and other extremist organizations. Even though, fighting against the Christian Armenians and gaining back control over the lost territories (or even further) might seem, from the first sight, a more obvious and direct target of these Azeri fighters, members sharing this ideology don’t tend to choose Nagorno Karabakh (NK) as their primary

* Հոդվածը ներկայացվել է 05.05.2019թ., գրախոսվել՝ 13.05.2019թ., տպագրության ընդունվել՝ 17.06.2019թ.:

battleground and it seems that not much academic work has been done to shed light on this phenomenon. This paper will a) provide background of Salafi extremism in Azerbaijan with its internal and external implications b) analyse the motivation-opportunity logic behind trends of this paradigm and c) explain why this extremism has not been directed to seemingly more obvious target – towards the Armenians and NK. First, we should put the terms straight. Salafism is a conservative stream of Sunni Islam, advocating for the purification of Islam, more specifically, a return to the practices of first three generations of Islam. Though sometimes used interchangeably with Salafism, Wahhabism is rather an ultra-conservative sect within the Salafi movement¹⁰⁵⁸. Violent Salafists restore to arms to fight against the enemies of Islam and are called jihadists – those fighting for jihad.¹⁰⁵⁹

Radical Islam in Azerbaijan and the Radicalized Azerbaijanis Fighting Abroad

Turning to Azerbaijan, we shall explore how Salafism and particularly its violent form have been expressed here. Being a predominantly Shite country, the Azerbaijanis have widely practiced a more secular way of life, which can be attributed to the anti-clerical influencers of Azerbaijani identity roughly a century ago¹⁰⁶⁰ and due to the Soviet legacy of state atheism. Even though, the demise of the USSR and the ideological vacuum opened the door of opportunities for political Islam to fill the void, nationalism has outstripped Islam as a determining factor of the Azerbaijani identity, the former bearing a more ethnic/nationalistic rather than purely religious significance¹⁰⁶¹. In this context, Azerbaijan does not seem a fertile ground for religious extremism to rise, however several factors have contributed to its introduction here. Among these factors, external ones enjoy primary importance. Since 1990s the main importers of Salafism to the country were the missionaries and funds from Arab Gulf countries, Iran, Chechnya and Dagestan¹⁰⁶², followed by the spill over influx from the North Caucasus after the Second Chechen war¹⁰⁶³. Even though it was an imported phenomenon, Salafism underwent radicalization domestically.¹⁰⁶⁴ Among other reasons, it did so due to the backlash from the perceived secular deterioration of traditional values. Alike, the radicalization was facilitated by the absence of alternative political ideology to oppose the regime and radical Salafism being perceived as a channel of political expression. The process of radicalization has

¹⁰⁵⁸ **Horst F.** Salafist Jihadism in Germany ICT 2011, <http://www.ict.org.il/Articles/tabid/66/Articlsid/887/currentpage/1/Default.aspx>. 03.01.2019. In the early eighteenth century AD, Wahhabism is an Islamic doctrine proposed by Muhammad Abd al-Wahhab in 18th century which envisages a return to original Islam for the restoration of Islam's Golden and bans all kinds of intermediaries, “for the benefit of knowing the Prophet Muhammad. According to Wahhabism, the Muslim community’s last goal is to become the living embodiment of God's laws on earth”, **Ungureanu D.** “Wahhabism, Salafism and the Expansion of Islamic Fundamentalist Ideology” (this study was funded by CNCSIS–UEFISCSU, project number PNII–IDEI 1993/2006, “A.I. Cuza” University of Iasi (Romania), 1993/2006), accessed 20.05.2019, http://www.fssp.uaic.ro/argumentum/Numarul%2010/11_Ungureanu_tehno.pdf.

¹⁰⁵⁹ “The Oxford Dictionary of Islam” defines jihad as “an exertion to convert unbelievers, or a struggle for the moral betterment of the Islamic community” <https://web.archive.org/web/20140903062853/http://www.oxfordislamicstudies.com/article/opr/t125/e1199> accessed on 20.05.2019, for various interpretations of jihad see **Cook, D.** (2005). *Understanding Jihad*. University of California Press. Retrieved from <http://www.jstor.org/stable/10.1525/j.ctt1ppjtw>.

¹⁰⁶⁰ **Souleimanov E. Ehrmann M.** The Rise of Militant Salafism in Azerbaijan and its Regional Implications, Middle East Policy, Vol. XX, No. 3, 2003 page 113.

¹⁰⁶¹ Ibidem

¹⁰⁶² **Taarnby M.** The Mujahedin in Nagorno-Karabakh: A Case Study in the Evolution of Global Jihad, WP, 2008, page 12.

¹⁰⁶³ **Valiyev A.** Terror Attacks against US and British Embassies Thwarted in Azerbaijan, Terrorism Focus, vol 4, issue no 36, 2007.

¹⁰⁶⁴ **Souleimanov E. Ehrmann M.** *op. cit.* page 114..

been further fuelled by the suppressive crackdown on all Salafists regardless of their belonging to violent groups and by the exaggeration of the insurgency threat due to political motivations of the ruling elites. Initially, fearing the reaction of foreign clergy, the authorities have tolerated the activities of Salafis. However, “fearing the emergence of a militant ideology with the potential to destabilize the country”, Azerbaijani authorities restored to brutal crackdown on the Salafi community, which arguably only fuelled more radicalization¹⁰⁶⁵.

The synthesis of this home-grown radicalization of the exported Salafi waves has had two main implications – internal and external. Though closely connected by overlapping networks and actors, the practical objectives of these two elements do not necessarily flow in the same direction. Internally, there have been several attempts and incidents of terrorist attacks in Azerbaijan. One of the first and most tragic acts was registered in March 1994 in Baku, when a remote-controlled bomb was activated when the metro car was entering the “20 January” station killing 14. This was followed by a July explosion between “28 May” and “Ganjlik” metro stations killing another 13¹⁰⁶⁶. Though Baku accused Armenian special services for plotting the terrorist acts, Sadval Lezghin movement was named as responsible as well¹⁰⁶⁷. Another terrorist act registered in Azerbaijan was the 2008 attack on Abu Bakr mosque in Baku, this one having more accentuated religious context. Built in 1997 by Azerbaijani branch of the Kuwaiti Revival of Islamic Heritage society, the mosque is the largest Sunni Salafi mosque of the country. It is also known for attracting large numbers of followers in contrast to other mosques, as well as perceived as a recruitment ground for foreign fighters destined to fight in North Caucasus. The cause of the incident was identified as the disagreement between the leadership of the mosque headed by Imam Suleymanov and those who disagreed with their policy of cooperating with the government and remaining apolitical¹⁰⁶⁸. Nevertheless, probably the most prominent terror act concerned the faxes sent from Baku to the US embassies in Tanzania and Kenya an hour before their bombings, in addition to 60 tracked phone calls by Osama bin Laden from Afghanistan to Baku¹⁰⁶⁹.

There have also been reports on the presence of Iranian radical groups in Azerbaijan¹⁰⁷⁰. The motivations in this case are either the true belief in the creation of an Islamic state or narrow political – to overthrow the ruling regime, and/or a form of political activity to overcome marginalization. Such opportunities are created by transnational networks, by charity organizations, and sometimes by collecting resources through minor criminal activities in urban centres accompanied with the ability, or the perception of it, to surpass state surveillance and succeed. This path is also the narrowed down and seemingly the last resort opportunity as other means of political opposition and meaningful participation of marginalized groups who are denied such opportunity, or simply put, for some, this is a mode of political expression because nothing else can be. Regarding the external implications of Islamic radicalization, the engagement of Azerbaijani citizens in external conflicts as foreign fighters and particularly in the ones with religious accent along the “Muslim vs non-Muslim” jihadi lines is noteworthy. This kind of activities traces back to the Second Chechen war, and geographically extends to

¹⁰⁶⁵ **Souleimanov E. Ehrmann M.** The Rise of Militant Salafism in Azerbaijan and its Regional Implications, *Middle East Policy*, Vol. XX, No. 3, 2003 pp. 116-117.

¹⁰⁶⁶ Acts of terrorism in Metro in other countries, 2004, https://web.archive.org/web/20100814183730/http://english.pravda.ru/world/20/91/365/1/1994_terrorism.html, 11.11.2018.

¹⁰⁶⁷ Sadval (union) Movement, <https://www.trackingterrorism.org/group/sadval-union-movement>

¹⁰⁶⁸ **Valiyev A.** Who is Behind the Bombing of the Salafi Mosque in Baku?, *Terrorism Focus* vol 5, Issue 31, 2008, <https://jamestown.org/program/who-is-behind-the-bombing-of-the-salafi-mosque-in-baku/>, 07.12.2018.

¹⁰⁶⁹ **Yunusov A.** Islam in Azerbaijan, Institute for Peace and Democracy, Baku, Azerbaijan, 2004, pp. 245-247.

¹⁰⁷⁰ **Valiyev A.** Foreign Terrorist Groups and Rise of Home-grown Radicalism in Azerbaijan, *HUMSEC Journal*, Issue 2, 2008, page 98.

Afghanistan and even Pakistan¹⁰⁷¹. The most recent involvement of the Azerbaijani foreign fighters overseas took place in the stage of the Syrian crisis. The first concrete reports that Azerbaijani citizens were involved in the Syrian civil war came in the fall of 2012 with a death toll rising up to around 100 by the end of the year, to 250 by the spring of 2014 and to around 300 being reported as of late 2017¹⁰⁷². The total number of the Azerbaijani nationals fighting in Syria reportedly reached to 900¹⁰⁷³.

Who joins the radical military groups and why?

For the purposes of this article, among the leadership of the combatants it is interesting to mention the involvement of veterans from Afghanistan and Chechnya. These are known as the “Karabakh Partisans” who had planned to launch a jihadi campaign in NK but were detained and imprisoned in 2004. However, they were released in 2010 without much publicity¹⁰⁷⁴. The fighters come from regions that had had history of active engagement in Chechnya and Afghanistan, in addition to fighters from the north, Baku and Sumgayit. Departing from the experience of the Sumgait pogroms and the engagement of the Karabakh internally displaced people in the city, could possibly lead to an assumption of Karabakh IDPs being more prone to radicalize based on the logic of grievances as a root cause¹⁰⁷⁶. However, the proportional numbers among the Azerbaijani foreign fighters do not indicate to such a correlation. This case demonstrates how the root causes argument behind radicalization yet another time fails to explain the realities on the ground. Even though the root causes of radicalization are insightful to explore and apply, and sometimes indicate the correct causative relation, most of those (poverty, education, level of urbanization, grievances etc.) are limited to a descriptive significance and have little explanatory value.

Some fighters are motivated by the strong belief in the ideology and the rightness of the war in the Middle East, which explains why some fighters return from warfare discouraged by distorted morals and misbehaviour of other fighters. There are also cases of recruitment by attractive promises of high salaries, which also usually end up in a disappointment.

The network of older fighters also has an important role for the recruitment. To our belief, the networks seem to be the biggest single catalyst for joining radically violent groups, as many join such groups with the encouragement of relatives or based on ethnic kin. Only after the recruitment these group of people adopt to the ideology of the group. This factor also incorporates people coming from different backgrounds and transcends the above mentioned root causes.

Some, who feel threatened by the government crackdown on Salafists, albeit those radicalized, may find it safer to move to the Islamic Caliphate, where their worldview would match that of the community. The opportunity is given by an easily accessible route to Syria, via Georgia, then through Turkey as cheap as \$96 on a bus from Baku to cities near the Turkish-

¹⁰⁷¹ Azerbaijani Foreign Fighters in Syria, <http://jihadology.net/2014/01/28/guest-post-azerbaijani-foreign-fighters-in-syria/>, 24.10.2018.

¹⁰⁷² 300 Azerbaijani Citizens Killed in Syria, Iraq. <https://www.azernews.az/nation/126228.html>, 04.10.2018.

¹⁰⁷³ State Security Officer: More Than 900 Azerbaijanis in the Ranks of ISIS. <https://www.meydan.tv/en/site/news/21656/>, 12.01.2019.

¹⁰⁷⁴ Radicalism and Jihadism in Azerbaijan, <http://hrwf.eu/radicalism-and-jihadism-in-azerbaijan/>, 10.01.2019.

¹⁰⁷⁵ The Clear Banner: The Forgotten Fighters: Azerbaijani Foreign Fighters in Syria and Iraq, <http://jihadology.net/2015/02/02/the-clear-banner-azerbaijani-foreign-fighters-in-2014/>, 10.01.2019.

¹⁰⁷⁶ Exporting Jihad: Foreign Fighters from the North Caucasus and Central Asia and the Civil War in Syria, Chatham House, The Royal Institute for International Affairs, 2015, page 3.

Syrian border. The practice in post-Soviet countries shows, that the governments do not care much about the foreign fighters and let them go, assuming that the danger leaves and probably will die before deciding to return. This stands in contrast to a more cooperative approach of the European states, who try to follow through the possible repercussions¹⁰⁷⁷. This also creates a favourable opportunity for those who are motivated to leave to proceed with their decision.

Why not fighting in Nagorno Karabakh?

No matter how opportune the war in Syria is for the Azerbaijanis, it seems that the costs to fight in the line of contact with Armenia and NK are less, as transportation costs are minimal and intuitively the motivation should be higher in the general environment of widespread hatred and demonization of the enemy, in addition to the real grievances and continuing human losses. Nevertheless, such a trend has not been identified for almost two decades and a logical question rises – why?

Before discussing the possible answers to this question, first we should note that radical Islamists have indeed fought on the frontline during the war in the early 90s before the ceasefire agreement was reached between the sides in 1994. According to Thomas de Waal, Azerbaijan recruited between 1500 and 2500 Mujahedeen from Afghanistan to engage in warfare against Armenians in Karabakh¹⁰⁷⁸. Even though, one can object that this state regulated recruitment¹⁰⁷⁹ cannot be counted as a voluntary radicalization and inflow of foreign fighters, this act certainly contained a threat of inciting an inflow of ideologically (or else) motivated radical Muslims to join the fight. This can be deduced from the Armenian complaints to both UN and Afghan leadership concerning the mercenaries. In contrast to the issue of the fighters with that identity, Armenian concerns regarding the Russian or Ukrainian mercenaries has been less vocal, from whom a similar threat of an ideological radicalization and recruitment was absent. The danger of such a spill over for the domestic affairs of Azerbaijan was later also realised by the Azerbaijani leadership when the mujahedeen were becoming a threat to the social order in major cities¹⁰⁸⁰.

It is also misleading to put the NK conflict along the lines of religious strife, as the sides found themselves fighting over territory. It can be better characterized as a territorial conflict fuelled by ethnic, nationalistic strife, instead. Even if the foreign fighters came for ideological reasons, they soon found out that is not their war and the state of Azerbaijan did not share their cause. The divergence of the political objectives and the comprehension of issues between the state and the ideologically motivated foreign fighters is exemplified by the disrespectful attitude of the Mujahedeen towards the Azerbaijani soldiers as to only nominally Muslims¹⁰⁸¹. That has also been illustrated in views of the infamous Shamil Basayev that the fighting had little to do with Jihad and was rather carried on nationalist tones¹⁰⁸². This finding gives us one of the explanations why since the end of the war Islamist insurgency was absent from Karabakh. The ascendancy of nationalism over Islam, has downgraded the purely Salafist motivation to engage on the frontline. This long passivity of Jihadists was interrupted by the April war in 2016, when there were unverified reports of some 50-70 Azerbaijani ISIS fighters returning from Syria to

¹⁰⁷⁷ **Mironova V. Sergatskova E. Alhamad K.** The Lives of Foreign Fighters Who Left ISIS ‘Why They Escaped and Where They Are Now, <https://www.foreignaffairs.com/articles/2017-10-27/lives-foreign-fighters-who-left-isis>, 2017.

¹⁰⁷⁸ As quoted in **Taarnby M.** The Mujahedin in Nagorno-Karabakh: A Case Study in the Evolution of Global Jihad 9/5/2008 WP 20/2008, page 5.

¹⁰⁷⁹ *Ibidem*, page 6.

¹⁰⁸⁰ Interview with Ambassador Extraordinary and Plenipotentiary **Shahnazaryan Davit**.

¹⁰⁸¹ **Sneider D.** Afghan Fighters Joined Azeri-Armenia, Christian Science Monitor, 1993.

¹⁰⁸² As quoted in **Taarnby M.** *op. cit.* page 9.

fight in NK¹⁰⁸³. If true, then the event suggests that, this radical waves may erupt in the case of escalation and the restoration of intense military activities, though they are less likely during the more usual ‘no war-no peace’ phases. Another reason for non-engagement of Salafists may be the conflict with the Shite government, which is the official state representative of the conflicting side. And even though there is not considerable Sunni-Shia political cleavage in Azerbaijan, the government-led oppression of these groups may have created or intensified the differences¹⁰⁸⁴. This type of (de)motivation is well illustrated by the several occasions when, for example Lezgis (Sunni-majority) have refused to fight against the Armenians¹⁰⁸⁵. Lezgis among other ethnic minorities, themselves have occasionally raised a question of self-determination. This bears at least two implications regarding the position of the ideologically radicalized elements among them. First, some elements within these groups have shared sympathy to the struggle of the Karabakh Armenians. Second, the indiscriminate attacks by the state against the population in the Lezgi territories (which overlaps with the representation of the Sunni population), not only discourage them from participating in the “government’s struggle” but also may have an intensifying effect on their secessionist (or irredentist, considering the ethnic kin over the Russian border) aspirations. This study suggests two more structural reasons why extremists do not engage on the line of contact with Nagorno Karabakh or the border with Armenia that are conditioned by the status of the patrolling defence forces. First, the situation on the border now differs a great deal from the times of war when Azerbaijan lacked organized armed units and carried out chaotic warfare. It is hard to imagine how insurgents can bypass the regular forces and engage in fights against Nagorno Karabakh army. This scenario is also highly undesirable by the state, which however, was both imaginable and encouraged during the early 90s. Nowadays, such unchecked engagement of irregular forces of ideologically radicalized background will have dangerous consequences for several reasons. For the Armenians it would then be impossible to differentiate an unbidden offensive from across the line of contact by the insurgents from a state-initiated military action and would be interpreted as an open aggression with equivalent military and diplomatic responses. Besides that, the radicals may have already joined the army and are serving on the border as regular soldiers, as this seems to be the only possible way to take active part in the conflict. Nevertheless, by no means this research has the capacity to investigate such cases. This option, though, is also limited since arming these radical elements poses potential danger to the domestic security of the state and the ruling elite; therefore the government has all the good reasons to minimize their entry into the army. Even though, it is hard to state with great confidence that Azerbaijan finds itself in a great danger posed by Salafi extremism, there have been some worrying trends. Such trends include the Azerbaijanis joining ISIS, and as the Caliphate seems to be on the way to its demise, the returnees may contribute to the recruitment at home. The return of the veteran foreign fighters increases the likelihood of instability and radical mobilization. These fighters may use their skills and ideological views in criminal activities or to the (re)emergence of jihadist movements. Having this prospective potential, it is reasonable to expect a growing interest of trans-national Salafi networks in Azerbaijan, and the state security agencies should closely monitor these trends. These networks do represent as the primary source of radicalization, and concentration on solely the conservative religious groups seems to be a less effective and somewhat belated measure, as they are rather the product, than the source of the ideological and network

1083 Azerbaijani ISIS Members Return from Syria to Fight in Karabakh – report, <https://southfront.org/60-azerbaijani-isis-members-return-from-syria-to-fight-in-karabakh-report/> 60, 14.01.2018.

¹⁰⁸⁴ For more on the relation between the radical Islamic groups and the authoritarian regime in Azerbaijan see **Geybullayeva A.** “Is Azerbaijan Becoming a Hub of Radical Islam?”

¹⁰⁸⁵ **Demirdjian A.** Azerbaijan’s Achilles’s Hill Affliction, http://noravank.am/eng/articles/detail.php?ELEMENT_ID=16368, 2015.

distribution. Harsh government attitude towards even peaceful Salafi communities may only play a catalytic role.

Conclusions

The Republic of Azerbaijan has through years dealt with the issue of Islamic radicalization. These occasions included terrorist attacks, radicalization and recruitment of segments of population, Azerbaijanis leaving for jihad as foreign fighters. The state has had to address also the issue of radical Islamic networks. Regarding the implications of the Islamic radicalism on the Nagorno Karabakh conflict, the study argues that as long as the ‘no war, no peace’ situation continues in the line of contact between NK and Azerbaijan, it is very unlikely that extremist groups would have the chance to engage applying guerrilla tactics, which is deemed impossible in the presence of regular army, unless the army/state itself does not encourage such actions. In addition to this, as most of the extremist groups come from ethnic and/or religious minorities which are under state pressure themselves, these groups will further be demotivated to invest their efforts into the Nagorno Karabakh conflict, instead feel more motivated to use them against the government as a recovery from political marginalization.

ՍՈՒՆՆԻՎԱԿԱՆ ԱՐՄԱՏԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐՏԱՅԱՅՏՈՒՄՆԵՐԸ ԱՂԻԲԵՉԱՆՈՒՄ

ՆԱՐԵԿ ՍՈՒՔԻԱՍՅԱԼ

*Երևանի պետական համալսարանի միջազգային
հարաբերությունների ֆակուլտետի մագիստրանտ,
բ.Երևան, Հայաստանի Հանրապետություն*

Իսլամական արմատականացումը համեմատաբար նոր երևույթ է Ադրբեջանի Հանրապետության համար, քանի որ առաջին նշանները ի հայտ են եկել անկախության առաջին տարիներին: Թեև դրա արտահայտումները պետական անվտանգության համար անլուծելի խնդիր չեն, վերջին երեսուն տարիների ընթացքում Ադրբեջանը ականատես է եղել անհանգստացնող միտումների, որոնք պարունակել են ռիսկեր ոչ միայն ներքին կարգի, այլև տարածաշրջանային ու միջտարածաշրջանային կայունության համար: Հիմնվելով երկրորդական ու որոշ առաջնային տվյալների ու հարցազրույցի վրա՝ հողվածը նպատակ է հետապնդում մատնանշել Ադրբեջանում սուննիական արմատականացման արմատները և բացահայտել, թե ինչ առնչություններ ունի արմատականացումը Լեռնային Ղարաբաղի հակամարտության հետ: Հողվածը պարզաբանում է հավաքագրման ու արմատականացման հնարավոր սոցիալական մեխանիզմները և գաղափարախոսական միլիտարիզացումը պայմանավորող գործոնները՝ վիճարկելով ավանդաբար ընդունված «արմատային պատճառները»՝ փոխարենը կենտրոնանալով ցանցերի՝ որպես զինված խմբավորումների հավաքագրման հիմնական միջոցի վրա: Ավելին, հողվածը փորձում է բացատրել, թե ինչու են Ադրբեջանի՝ գաղափարական արմատական խմբերը գերծ մնացել (հեռու պահվել) Լեռնային Ղարաբաղում գործունեություն ծավալելուց: Հողվածում պնդում ենք, որ այդ շրջանակներում ընդկզբված մարդիկ չեն ընկալում հակամարտությունը որպես իրենց գաղափարական պայքարի մաս: Բացի այդ, այս խմբավորումների միլիտարիզացիան ու ինքնավարությունը հակասում է Բաքվի շահերին, հետևաբար այն նպատակ է հետապնդում կանխելու կոնֆլիկտում նման խմբավորումների ներգրավումը:

Բանալի բառեր՝ *Իսլամական արմատականացում, ադրբեջանական ահաբեկչություն, Լեռնային Ղարաբաղի հակամարտություն, Սալաֆիզմ, ահաբեկչական խմբավորումներ, անկանոն փնված ուժեր, ահաբեկչական ցանցեր:*

ПРОЯВЛЕНИЯ СУННИТСКОГО РАДИКАЛИЗМА В АЗЕРБАЙДЖАНЕ

НАРЕК СУКИАСЯН

*магистрант факультета международных отношений
Ереванского государственного университета,
г.Ереван, Республика Армения*

Исламская радикализация является относительно новым явлением для Азербайджанской Республики, поскольку первые признаки радикализации появились только в первые годы независимости. Несмотря на то, что ее проявления не являются неразрешимым вопросом для государственной безопасности, на протяжении последних тридцати лет в Азербайджане наблюдались тревожные тенденции, порождающие риски не только для внутреннего порядка, но и для региональной и межрегиональной стабильности. Опираясь на результаты исследования вторичных и некоторых первичных данных и интервью, статья ставит целью проследить корни и проявления суннитской радикализации в Азербайджане и раскрыть последствия радикализации для Нагорно-Карабахского конфликта. Статья проливает свет на некоторые из возможных социальных механизмов набора новобранцев и радикализации, и на факторы, обуславливающие идеологическую милитаризацию, оспаривая традиционно принятые "коренные причины", вместо этого сосредотачивая внимание на социальных сетях как главенствующем способе вербовки в милитаризованные вооруженные группы. Кроме того, в статье делается попытка объяснить, почему азербайджанские идеологически радикальные группы не стремятся/воздерживаются развивать какую-либо деятельность в Нагорном Карабахе. В статье говорится о том, что люди из этих кругов в основном не воспринимают конфликт как часть своей идеологической борьбы. Кроме того, милитаризация и автономия этих группировок противоречит интересам Баку, следовательно, он стремится предотвращать вовлечение подобных группировок в конфликт.

Ключевые слова: *исламская радикализация, азербайджанские террористы, Нагорно-Карабахский конфликт, салафизм, террористические группы, нерегулярные вооруженные силы, террористические сети.*

ԿՐՈՆԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿՆ ԱՂՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԹԱԼԻՇԱԲՆԱԿ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ (2010-2018)*

ՀՏԴ 297(479.24)

ՍԻՐԱՆՈՒՇ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Երևանի պետական համալսարանի արևելագիտության
ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի մագիստրոս,
ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն
siranuyshvardanyan@gmail.com

Հոդվածում ներկայացվում են Աղբբեջանի Հանրապետության թալիշաբնակ տարածքներում 2010-2018թթ.-ի ընթացքում տիրող կրոնական իրավիճակը, պարզացումները, աղբբեջանական իշխանությունների՝ այդ հատվածում վարած կրոնական քաղաքականությունը և դրա հանդեպ տեղի բնակչության հակազդման ձևերն ու մեխանիզմները, ինչպես նաև հեղինակի կողմից վերլուծության է ենթարկվում լենքորանյան թալիշների կրոնական շարժումներում իրանական ապոեցության գործոնը և տրվում գնահատականներ առկա իրավիճակից բխող պարզացումների հնարավոր տարբերակների վերաբերյալ: Հոդվածի արդիականությունը Հայաստանի Հանրապետության համար ունի ոչ միայն տեսական, այլ նաև կիրառական նշանակություն, քանի որ միտված է ուրվագծելու ԱՀ Էթնիկ-դավանական խնդիրներից մեկի հնարավորինս ճշգրիտ պատկերը, որը, լինելով շիայական մեծամասնություն ունեցող երկիր, Խորհրդային Միության փլուզումից հետո մշտապես գտնվել է Իրանի կրոնական ապոեցության տակ: Այդ ապոեցության և դրա տարբեր դրսևորումների ուսումնասիրության հետաքրքիր գոտիներից է ԱՀ հարավային թալիշաբնակ հատվածը, որն, ընկած լինելով Իրանի անմիջական հարևանությամբ, կրում է այդ ապոեցությունը թե՛ կրոնական, թե՛ էթնիկական առումներով

Հետազոտության նպատակն է ԱՀ թալիշաբնակ տարածքներում ընթացող կրոնական գործընթացների և Աղբբեջանի քաղաքական վերնախավի՝ այդ շրջաններում վարած քաղաքականության ուսումնասիրությունը և համապատասխան ելրահանգումներ ներկայացնելը:

Բանալի բառեր՝ Աղբբեջանի Հանրապետություն, կրոն և քաղաքականություն, շիաներ, թալիշներ, սահմանափակումներ, վերահսկողություն, իրանական ապոեցություն:

Աղբբեջանի հարավային շրջանների բնակչության հիմնական մասը¹⁰⁸⁶ կազմում են շիա թալիշները, որոնք բնակվում են Ասթարայում, Լենքորանի, Մասալիի, Լերիքի, Ջալիլաբադի, Բիլասուվարի, Սաբերաբադի, Սաաթլիի շրջաններում, մասամբ նաև ներկայիս Աղբբեջանի կենտրոնական, հարավային ու արևելյան հատվածներում,

* Հոդվածը ներկայացվել է 07.05.2019թ., գրախոսվել՝ 04.06.2019թ., տպագրության ընդունվել՝ 17.06.2019թ.:

¹⁰⁸⁶ Ըստ պաշտոնական վիճակագրության՝ Աղբբեջանի բնակչության ճնշող մեծամասնությունը՝ 97 տոկոսը, մուսուլման է, իսկ մյուս 3 տոկոսը՝ քրիստոնյաներ, հուդայականներ, բահայիներ: Աղբբեջանը շիա բնակչության թվով երկրորդ տեղն է զբաղեցնում Իրանի Իսլամական Հանրապետությունից (ԻԻՀ) հետո: Ըստ տարբեր վիճակագրական աղյուսակների և աղբբյունների՝ շիաները կազմում են Աղբբեջանի մուսուլման բնակչության 65-85 տոկոսը, իսկ տունիները՝ 15-35 տոկոսը (Motika R., *Islam in post-Soviet Azerbaijan*, Heidelberg, 2001, p. 112).

Բաբվում ու հարակից բնակավայրերում, և Ադրբեջանի՝ թվով ամենամեծ տեղաբնիկ ժողովուրդն են:

Ադրբեջանական Հանրապետության կրոնական քաղաքականությունը, որը տարածվել է ինչպես այդ երկրի մնացած հատվածների, այնպես էլ հարավային թալիշաբնակ գոտու վրա, ԽՍՀՄ փլուզումից հետո ընկած ժամանակահատվածի համար բաժանել են 4 շրջանների¹⁰⁸⁷:

1. Կրոնական ազատությունների շրջան՝ իրավական կարգավորմամբ՝ 1990-1995թթ.:
2. Կրոնական կազմակերպությունների գրանցման վերահսկողության ժամանակաշրջան՝ 1995-2001թթ.:
3. Վերահսկողության և ճնշումների ժամանակաշրջան՝ 2001-2013թթ.:
4. Վերադասավորման ժամանակաշրջան՝ 2013-2018թթ.:

ԱՅ թալիշաբնակ տարածքներում 2010-2018թթ. կենտրոնական իշխանության վարած կրոնական քաղաքականությունը, որը ժամանակային առումով մտնում է վերը բերված դասակարգման 3-րդ և 4-րդ շրջանների մեջ, ամբողջ կոշտությամբ ու հետևանքներով, ի մեծի մասին, արդյունք է մինչ այդ որդեգրած ու իրականացրած հստակ կրոնախույս և կրոնի դերի նվազեցման քաղաքական կուրսի՝ արտացոլված ԱՅ «Դավանանքի ազատության մասին օրենքում» կատարված շարունակական փոփոխություններում¹⁰⁸⁸:

ԱՅ «Դավանանքի ազատության մասին օրենքում» կատարված շարունակական փոփոխությունները¹⁰⁸⁹ պայմանավորված էին ԱՅ քաղաքական կյանքում արմատական ընդդիմության թուլացմամբ, ԱՅ իշխանությունների վարած կոշտ ու հակաժողովրդավարական քաղաքականության հետևանքով առաջացած ապատիայով և արդյունքում հասարակության շրջանում կրոնի դերի բարձրացմամբ և կրոնական գործիչների՝ օրեցօր աճող հեղինակությամբ, դրա նկատմամբ ԱՅ իշխանությունների բացասական վերաբերմունքով և, առհասարակ, գործող վարչակարգի կրոնաֆոբիայով:

ԱՅ իշխանությունների հետևողական քաղաքականության հետևանքով այդ երկրի քաղաքական կյանքում առաջացած վակուումը շատ արագ սկսել էին լցնել իսլամի շիայական ուղղության տարբեր հոսանքները և դրանց գաղափարական հետևորդ գործիչները: Իսկ իսլամական կառույցների գործունեությունը 2006թ.-ից ի վեր սկսել էր ավելի լայն արձագանք ստանալ ինչպես սոցիալապես անապահով, այնպես էլ իսլամի մեջ գաղափարական, քաղաքական ու հոգևոր նեցուկ տեսնող շրջանակներում: Ասվածի լավագույն օրինակ են 2006թ.-ի փետրվարին Բաբվում ու Նարդարանում կազմակերպված բողոքի անսահադեպ ցույցերն ընդդեմ Մուհամեդ մարգարեի ծաղրանկարների¹⁰⁹⁰:

¹⁰⁸⁷ Jödicke A., “Shia groups and Iranian influence in Azerbaijan, the impact of trans-boundary religious ties on national religious policy”, Eurasian Geography and economics, 2017, p. 543.

¹⁰⁸⁸ «Դավանանքի ազատության մասին օրենքը» ԱՅ խորհրդարանի կողմից ընդունվել է 1992թ., իսկ առաջին անգամ լրացվել 1996թ.-ին: Հրամանագրի տեքստը (Azerbaijan: Law of 1992 on Freedom of Religious Belief, August 20, 1992), տե՛ս ՄԱԿ-ի փախսականների հարցերով զբաղեցրած պաշտոնական կայքը (վերջին դիտում՝ 15.04.2019), <http://www.refworld.org/docid/47fdedc12.html>.

¹⁰⁸⁹ ԱՅ «Դավանանքի ազատության մասին օրենքում» փոփոխություններ են կատարվել 07.06.1996, 27.12.1996, 10.10.1997, 23.11.2001, 24.05.2002, 04. 06. 2002, 03.12. 2002, 10.06. 2005, 08.05.2009, 30.06.2009, 21.12.2010, 10.06.2011, 15.02.2013, 22.02.2013, 06.03. 2015, 06.03.2015, 06.10.2015, 04.12.2015, 28.10.2016, 16.05.2017: Որոշման տեքստ (Закон Азербайджанской Республики, О свободе вероисповедания), տե՛ս <http://base.spininform.ru/show doc.fwx?rgn=2841> (13.04.2019):

¹⁰⁹⁰ 2005թ. սեպտեմբերին դանիական «Յիլանդս փոսթեն» ոչ շատ հայտնի թերթը հրապարակեց իսլամի հիմնադիր Մուհամադ մարգարեի կերպարի մոտիվներով կատարված 12

2006թ.-ի փետրվարի 7-ին սկզբում Բաքվում, հետո Նարդարանում անկախ Ադրբեջանի պատմության մեջ առաջին անգամ այրվեցին ԱՄՆ-ի, Իսրայելի, Ղանիայի, Նաև՝ Հայաստանի ու Շվեյցարիայի դրոշները: Փետրվարի 11-ին «Յենի խաբար» քիչ հայտնի թերթը քրիստոնեական թեմաներով ծաղրանկարներ հրապարակեց, իսկ 2006-ի ապրիլի սկզբին հրեական կազմակերպությունները սպառնալից նամակներ ստացան տեղական իսլամիստներից:¹⁰⁹¹

Խոսքի ազատության համատարած բացակայության պայմաններում շատ աշխարհիկ շարքային ընդդիմադիրներ, որոնք հիասթափված էին, սկսեցին «բաղաբալան իսլամի» նկատմամբ հետաքրքրություն ցուցաբերել: Շատերը հիշեցին իմամ Խոմեյնու խոսքերը՝ «Ո՛չ Արևմուտք, ո՛չ Արևելք, միայն իսլամ»:¹⁰⁹² Այսպիսով, շիայական իսլամն աստիճանաբար Ադրբեջանում սկսում էր դառնալ իրական ընդդիմադիր ուժ, ինչից իշխանությունները փորձում էին զգուշանալ:

Գիտակցելով երկրում իսլամի աշխուժացմամբ պայմանավորված ներքին ու արտաքին վտանգները՝ Ադրբեջանի իշխանություններն ինտենսիվորեն փորձեցին թուլացնել կրոնի դիրքերը, ինչը դրսևորվեց տարբեր պատրվակներով կրոնական իրողությունների նկատմամբ սահմանափակումների ու վերահսկողությունների կիրառմամբ: Ադրբեջանի աշխարհիկ իշխանությունները հասարակության շրջանում իսլամական գիտելիքների շրջանակների ընդլայնմամբ, իսլամական արժեքների ու կենսակերպի աստիճանական որդեգրումից անհանգստացած, բացահայտ հակակրոնական քաղաքականություն էին իրականացնում:¹⁰⁹³

Կրոնասիրության միտում պարունակող ցանկացած փաստ Ադրբեջանում կանխարգելվում էր, շարունակվում էին ձերբակալությունները, բանտարկությունները, հետապնդումներն ու հալածանքները: ԱՅ իշխանությունները վերահսկողություն էին սահմանում կրոնական ու կրոնաքաղաքական ակտիվության ցանկացած դրսևորման դեմ, բազմաթիվ սահմանափակումների են ենթարկվում հատկապես հարավային շրջանի շիաները: Այդ սահմանափակումներից կարելի է նշել հասարակական վայրերում, դպրոցներում, համալսարաններում գլխաշորի արգելումը, չէր թույլատրվում մի շարք շիայական ծիսակարգերի անցկացումը՝ բարձրաձայն աղոթք (ազան), Աշուրայի սգո արարողակարգի անցկացումը և այլն: Մյուս կողմից՝ Ադրբեջանի սահմանադրությամբ հոգևորականներն ընտրությունների ժամանակ թեկնածություն առաջադրելու իրավունք չունեին: Շիայական խմբերը դժվարությունների են հանդիպում նաև լրատվական դաշտում: Շիաներին արգելվում է հիմնել իրենց սեփական, գաղափարական հեռուստաալիքները¹⁰⁹⁴:

Ծաղրանկար, հոկտեմբերին «ալ-Ֆաջր» թերթն արտատպեց այդ ծաղրանկարները, ինչը, սակայն, որևէ հետևանք այն ժամանակ չունեցավ: Ավելի ուշ՝ դեկտեմբերի 6-ին, մի խումբ դանիացի մուսուլմաններ ներկայացրին այդ ծաղրանկարներին նվիրված 47 էջանոց թղթապանակը Մեքքայում կայացած այն ժամանակ դեռ Իսլամական կոնֆերանս կազմակերպության գազաթաժողովի մասնակիցների ուշադրությանը: Հունվարի վերջից մի շարք մուսուլմանական և ոչ մուսուլմանական երկրներում սկսվեցին զանգվածային ցույցեր, այդ թվում նաև՝ Ադրբեջանում: Առավել մանրամասն տե՛ս **Հովհաննիսյան Դ., Սահակյան Ն., «Գլոբալ հակամարտությունը և «ծաղրանկարային պատերազմը», Քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոն, Վերլուծական կենտրոն №7, Երևան, 2015):**

¹⁰⁹¹ Юнусов А., *Исламская палитра Азербайджана*, Баку, 2012, стр. 10:

¹⁰⁹² Տե՛ս նույն տեղում, էջ 10:

¹⁰⁹³ جبارى ولى، شيعيان جمهوری آذربايجان، قم، ۱۳۸۹، صفحه ۳۲۹ .

(**Չոբարի Վ.**, *Ադրբեջանական Հանրապետության շիաները*, Դոմ, 2011, էջ 329):

¹⁰⁹⁴ پژوهشگاه علوم انسانی و مطالعات فرهنگی، بررسی و تحسین وضعیت شیعیان در جمهوری آذربايجان، ص .

«Արմատական իսլամի» ազդեցությունը թուլացնելու համար տարբեր պատճառաբանություններով իրար հետևից սկսեցին փակվել կամ հիմնահատակ քանդվել բազմաթիվ մզկիթներ, 2009թ.-ի հունիսի վերջին Ադրբեջանի խորհրդարանը կրոնի դավանման ազատության մասին օրենքում փոփոխություններ մտցրեց, համաձայն որոնց՝ արտերկրում աստվածաբանական կրթություն ստացած անձանց արգելվում է իսլամական կրոնական արարողություններ վարել: Դրանք կարող էին իրականացնել միայն Ադրբեջանի Հանրապետության այն քաղաքացիները, որոնք կրոնական կրթություն էին ստացել Ադրբեջանում:¹⁰⁹⁵

Կրոնական գործիչների գործունեությունը վերահսկելու նպատակով Ադրբեջանի կրոնական կազմակերպությունների հարցերով պետական կոմիտեին ԱՀ իշխանությունները տվեցին լայն լիազորություններ, և 2016թ.-ի օգոստոսին վերջինիս կայացրած որոշման համաձայն՝ արգելվեց հասարակական վայրերում կազմակերպել կրոնական հավաքներ, իրականացնել շիայական ծիսակարգեր, օգտագործել կրոնական սիմվոլներ և այլն:¹⁰⁹⁶

Իր հերթին, Ադրբեջանի անկախացումից հետո Իրանը ցանկանում էր ամեն գնով իր ազդեցությունը տարածել Ադրբեջանում՝ հաշվի առնելով այդ երկրամասի հետ ունեցած պատմական, կրոնական ու մշակութային դարավոր կապերը: Ադրբեջանում միշտ վախեցել են, որ Իրանը ցանկանում է փոխել այդ երկրի կառավարման համակարգը՝ այն աշխարհիկ պետությունից վերածելով թեոկրատական պետության:¹⁰⁹⁷

Ադրբեջանի իշխանությունների շրջանում աստիճանաբար խորանում էր այն կասկածը, որ շիայադավանները, հատկապես հարավային գոտիներում բնակվող թալիշներն ունեն իրանական կողմնորոշում:¹⁰⁹⁸ Նշվածի համար, թերևս, կային օբյեկտիվ պատճառներ. հատկապես ԱՀ-ի անկախացման սկզբնական շրջանում Իրանի ֆինանսական ու գաղափարական ազդեցությունը հատկապես հարավային գոտում հասել էր գագաթնակետին:¹⁰⁹⁹ Ընդ որում, Իրանի ազդեցությունը Ադրբեջանի հարավային շրջաններում սուր էր դրսևորվում հատկապես ընտրությունների ու կրոնական արարողությունների ժամանակ:¹¹⁰⁰

Կրոնական տարբեր խնդիրների շուրջ իրանական ուշադրությունը ԱՀ-ի հարավային գոտում մշտապես կենտրոնացած է եղել 2՝ Յարդըմլիի և Լեդիկի շրջանների վրա, որոնք սահմանակից էին Իրանին և ավանդաբար վատ հարաբերություններ ունեին մյուս շրջանների բնակչության հետ:¹¹⁰¹ Յարդըմլիի շրջանը, որը հայտնի է որպես հավատացյալ շիայական կենտրոն, ինչպես նաև հարավային թալիշաբնակ շրջաններից մի քանիսը՝ Ասթարան, Լենթորանը, Մասալին,

(Գիտամշակութային հետազոտական կենտրոն, Ադրբեջանական Հանրապետության շիաների իրավիճակի ուսումնասիրություն, Էջ 47):

¹⁰⁹⁵ Интерфакс, “В Азербайджане запретили проведение исламских религиозных церемоний лицами, получившими теологическое образование за рубежом”, 30 июня 2009. Просмотрено Март 24, 2019, <http://www.interfax-religion.ru/aze/?act=news&div=30841> .

¹⁰⁹⁶ جبارى ولى، شيعيان جمهورية آذربايجان، قم، ۱۳۸۹، صفحه ۳۲۵-۳۳۰.

(Ձոբարի Վ., Ադրբեջանական Հանրապետության շիաները, Դոմ, 2011, էջ 325-330):

¹⁰⁹⁷ **Վարդանյան Ա.,** «Նոր փուլ Իրան-Ադրբեջան հարաբերություններում. մերձեցում հարաբերությունների վատթարացման վտանգներով», օգոստոսի 12, 2016, (վերջին դիտում՝ 09.03.2019)՝ <http://aiisa.am/ouexperts/publication/149>:

¹⁰⁹⁸ **Jödicke A.,** “Shia groups and Iranian influence in Azerbaijan, the impact of trans-boundary religious ties on national religious policy”, *Eurasian Geography and economics*, 2017, pp. 539-543.

¹⁰⁹⁹ **Փաշայան Ա., Իսլամն Ադրբեջանում. Անցյալը և ներկան,** Երևան, 2014, էջ 90:

¹¹⁰⁰ **Kotecha H.,** *Islamic and Ethnic Identities in Azerbaijan*, Baku, 2006, p. 25.

¹¹⁰¹ **Юнусов А.,** *Исламская палитра Азербайджана*, Баку, 2012, стр. 29.

առանձնանում են տեղում բազմաթիվ իրանական կրոնական խմբերի գոյությամբ, իրանցի բարձրաստիճան կրոնական գործիչների՝ այդ շրջաններ այցելող¹¹⁰²:

Ակաժ այն պահից, երբ ադրբեջանական իշխանությունները ԱՀ շիաների շրջանում իրանական ազդեցության մեծացումը սկսեցին դիտարկել որպես քաղաքական սպառնալիք, մշակեցին բավական կոշտ քաղաքականություն այդ հարցում և իրանականացրին գործողությունների այնպիսի համալիր, որի վերջնական նպատակն էր իրանական կրոնական ազդեցության նվազեցումը նշված շրջաններում և, առհասարակ, ԱՀ տարածքում:

2011թ.-ին ձերբակալվեցին մի քանի իրանցի գիտնականներ: Այդ գիտնականներից որոշները հավակնում էին մարջա աթ թաղիդի (ընդօրինակման աղբյուր) կոչմանը և կկարողանային կառուցվածքային կերպով ամրապնդել շիայականության հիմքերն Ադրբեջանում: Կրոնասիրության միտում պարունակող ցանկացած փաստ Ադրբեջանում կանխարգելվում էր: Շարունակվում էին ձերբակալությունները, բանտարկությունները, հետապնդումներն ու հալածանքները: Պետության քաղաքականությանն աջակցող Կովկասի մուսուլմանների միության ղեկավարները համարվում են իշխող էլիտայի մտերիմ գործընկերները, իսկ առհասարակ կառույցի ղեկավար Ա.Փաշազադեն հայտնի է իշխանությանն իր հավատարմությամբ¹¹⁰³:

2010թ.-ին ընդունված օրինագծով արգելվեց հիջաբով (գլխաշորով) մուտք գործել կրթական հաստատություններ, գլխաշորով լուսանկարվել պաշտոնական փաստաթղթերի համար, հավատացյալների անվտանգությունն ապահովելու պատճառաբանությամբ արգելվեց մզկիթի բակում կամ որևէ այլ բացօթյա տարածքում նամազ (աղոթք) անելը, բարձրախոսներով ազանի (պարտադիր աղոթքի կանգնելու) կանչելը¹¹⁰⁴:

Սակայն բոլոր հակակրոնական սահմանափակումները հանդիպում էին ընդդիմության՝ հատկապես շիայական խմբերի կողմից:

2010թ.-ին Ադրբեջանում տեղի ունեցավ բազմամարդ բողոքի ակցիա, որի մասնակիցները կրթության նախարարությունից պահանջում էին դպրոցում վերացնել գլխաշորի արգելքը: Թեև հնարավոր եղավ որոշ դպրոցների տնօրենների համոզել թույլ տալ աշակերտուհիներին կրել հիջաբ դասերի ընթացքում, սակայն մեծամասամբ ադրբեջանցի աղջիկները կրոնի ու կրթության ընտրության առջև են կանգնում¹¹⁰⁵: Գլխաշորի հարցում իշխանությունների մոտեցումը կոշտ ու անզիջում էր՝ փաստարկված Ադրբեջանի՝ աշխարհիկ պետություն լինելու հանգամանքով¹¹⁰⁶:

2013թ.-ին ևս ցույցեր տեղի ունեցան հիջաբն արգելող օրենքի դեմ, սակայն ապարդյուն: Հիջաբ կրելու շուրջ քննարկումներ են տեղի ունենում գրեթե ամեն տարի: **2015թ.-ի նոյեմբերին լուրջ բախումներ են տեղի ունենում ոստիկանության ու**

¹¹⁰² **Տե՛ս** նույն տեղում, էջ 29-30: Վերոնշյալի համար օրինակ կարող ենք բերել «Հոսեյնիա» կազմակերպությունը Մասալլիում, որի անդամները մասնավորապես ուսանողներ էին, ովքեր ստանում էին «Այաթոլլայի կրթաթոշակ»: Վերջիններս էլ իրենց հերթին պետք է ԲՈՒՀ-երից հավաքագրեին համախոհներ:

¹¹⁰³ **Юнусов А.,** *Исламская палитра Азербайджана*, Баку, 2012, срт. 29-36:

¹¹⁰⁴ **رضایی محمد،** *تاریخ تشیع در آذربایجان*، قم، ۱۳۸۵، ص. ۲۶.

(Ռեզայի Մ., *Շիաների պատմությունը Ադրբեջանում*, Դոմ, 2007, էջ 26):

¹¹⁰⁵ **Гейбуллаева А.,** “Азербайджан: вера и власть”, 20 октября, 2015. Просмотрено Февраль 15, 2019, <https://www.opendemocracy.net/od-russia/%D0%B0%D1%80%D0%B7%D1%83-%D0%B3%D0%B5%D0%B9%D0%B1%D1%83%D0%BB%D0%BB%D0%B0%D0%B5%D0%B2%D0%B0%D0%B0%D0%B7%D0%B5%D1%80%D0%B1%D0%B0%D0%B9%D0%B4%D0%B6%D0%B0%D0%BD-%D0%B2%D0%B5%D1%80%D0%B0-%D0%B8-%D0%B2%D0%BB%D0%B0%D1%81%D1%82%D1%8C>.

¹¹⁰⁶ **Փաշայան Ա.,** *Իսլամն Ադրբեջանում. Անցյալը և ներկան*, Երևան, 2014, էջ 59:

Նարդարանի բնակիչների միջև: Նարդարանն Ադրբեջանի ամենակրոնականացված, ինչպես նաև շիայական արմատականության, խոմենիզմի և շիա իսլամիզմի կենտրոններից է: Նոյեմբերի լույս 27-ի գիշերը բողոքի ցույցեր են սկսվում նաև հիմնականում թալիշաբնակ Լենթորանում (Իրանի սահմանին մոտ շրջան)¹¹⁰⁷: ԱՅ-ի ՆԳՆ ներքին գործերի հատուկ ջոկատայինները շիաներին արգելում են Աշուրայի ծիսակատարության կապակցությամբ երթ անցկացնել: Բնակիչները նաև պահանջում են թույլատրել հիջաբ կրել դպրոցներում: Ոստիկանությունը բռնություն է գործադրում հավաքվածների նկատմամբ, ձերբակալում շուրջ 15 հավատացյալների: Ձերբակալվածների թվում էր նաև «Մուսուլմանական միասնություն» հավատացյալների միավորման ղեկավար, հայտնի շիա աստվածաբան ու քարոզիչ Թալեհ Բադիրզադեն: Ոստիկանները նաև պոկում են կրոնական բովանդակությամբ պաստառները, դրոշները և դրանց փոխարեն տեղադրում Ադրբեջանի դրոշը¹¹⁰⁸:

Ձերբակալությունների այլքը տարածվում է նաև Թ.Բադիրզադեի գաղափարակիցների վրա: 2016թ.-ի ապրիլին Լենթորանում Թ.Բադիրզադեի խմբավորմանը հարելու մեղադրանքով ձերբակալվում են Հիսմեթ Իսաևը և Սեյդեդ Վուգա Իսմայիլովը¹¹⁰⁹, Չուլֆուզար Միխայիլզադեն, Էլման Ազաևը¹¹¹⁰:

ԱՅ իշխանությունների կարծիքով՝ «Մուսուլմանական միասնություն» միավորումը պատրաստվում էր իրականացնել մի շարք ահաբեկչական գործողություններ՝ նպատակ ունենալով Ադրբեջանում կատարել հեղափոխություն և հաստատել շիայական բնույթի կարգեր¹¹¹¹: Իսկ ադրբեջացի արևելագետ-քաղաքագետ Չադոշ Ալիզադեն նշում է. «Նարդարանի միջադեպը իշխանությունների կողմից նախապատրաստվել էր այն նպատակով, որ ցույց տային՝ ահաբեկչության վտանգ կա նաև պետության այլ մասերում նույնպես: Շատերը ԱՅ-ում ուզում են ապրել շարիաթի կանոններով, ինչպես որ ապրում են Իրանում, ինչին դեմ էին ադրբեջանական իշխանությունները, թեպետ Ադրբեջանի սահմանադրության մեջ հստակ ամրագրված է կրոնական համոզմունքների ու խոսքի ազատության մասին օրենքը»¹¹¹²: Բացի այդ, վերջինս Նարդարանի դեպքը կապում է երկրում տիրող սոցիալ-տնտեսական ծանր պայմանների հետ: Տվյալ իրավիճակում ԱՅ իշխանություններին մնում էր միայն ճնշել բնակչությանը՝ միաժամանակ շահելով դիվիդենդներ արտաքին քաղաքականության մեջ՝ միջազգային հանրությանը ցույց տալով ԱՅ ավտորիտար պետության արդարացված լինելը, քանզի պետության մի ստվար զանգված ցանկանում էր երկրում հաստատել արմատական իսլամական կարգեր¹¹¹³:

2009թ.-ից ի վեր նոր միտումներ ի հայտ եկան, երբ իշխանությունները փորձում էին իրենց կողմը գրավել շիա հոգևորականներին: Այն մանրակրկիտ մտածված քաղաքականություն էր: Մի կողմից՝ իշխանություններն իրենց կողմն էին գրավում շիա

¹¹⁰⁷ **Меджид Ф.**, «Эксперты в Баку заявили об ошибочности силовой операции в Нардаране», 05 декабря, 2015. Просмотрено Апрель 08, 2019, <https://www.kavkaz-uzel.eu/articles/273722/>.

¹¹⁰⁸ **Minval.az.**, «События в Нардаране. Скончался еще один из раненых», 11 октября, 2015. Просмотрено Март, 30, 2019, <http://minval.az/news/123516279>.

¹¹⁰⁹ **TolishPress.org**, «Аресты религиозных деятелей в Ланконе», 21 апреля, 2016. Просмотрено Март, 05, 2019, http://tolishpress.org/print/3587.html?fbclid=IwAR089DquZWGRPB6M5mZhfOv2w_gbNYXidNFPMztVotzHCDnTjq3D0E5dVA4.

¹¹¹⁰ **EADAILY.com**, «На роль террористов назначили теологов и цветоводов : эксперты о попытке госпереворота в Азербайджане», 29 ноября, 2015. Просмотрено Март 26, 2019, <https://www.ca-news.info/2015/11/28/8?fbclid=IwAR340ng7xmQLAply6XpoMJDFe-mORt6bmAiYwrseMAvQh0yRGz3EdCU5JpU>.

¹¹¹¹ **Տե՛ս** նույն տեղում:

¹¹¹² **Տե՛ս** նույն տեղում:

¹¹¹³ **Տե՛ս** նույն տեղում:

հոգևորականների՝ օգնություն ցուցաբերելով, իսկ մյուս կողմից՝ օգտագործում էին նրանց կերպարը՝ աշխարհիկ մեծամասնության շրջանում վախի մթնոլորտ ստեղծելու համար¹¹¹⁴։ Միևնույն ժամանակ շարունակվում էին ճնշումներն ու ձեռքակալությունները իշխանությանը քննադատության ենթարկողների նկատմամբ։ Սովորական դարձան կրոնական ուղղվածության կուսակցությունների, իսլամական տարբեր ուղղությունների ղեկավարների ու հետևորդների զանգվածային ձեռքակալությունները, խոշտանգումները, սպանությունները, ընդունվեցին կրոնական իրավունքները սահմանափակող օրենքները¹¹¹⁵։ Այդ համատեքստում կարող ենք նշել 2013թ.-ի հունիսին Յադիգյար Սադիդովի ձեռքակալությունը Լենքորանում, ով «Մուսավաթ» կուսակցության առաջնորդ Իսա Ղամբարիի խորհրդականն էր, պատմություն էր դասավանդում Լենքորանի համալսարանում և հայտնի էր իշխանություններին քննադատող հոդվածներով։ Սադիդովի կողմակիցները նրա կալանավորումը կապում էին ԱԶ-ի վարած կրոնաքաղաքական գործունեության հետ¹¹¹⁶։

Հայտնի է, որ ադրբեջանցի բազմաթիվ երիտասարդներ կրոնական կրթություն էին ստացել իսլամական աշխարհի տարբեր կենտրոններում, ինչը նաև իրականացվել էր պաշտոնական խողովակներով։ 2009թ.-ի հունիսին Ադրբեջանի խորհրդարանը շիայական խմբերի գործունեությունը սահմանափակելու և Իրանից սպասվող հնարավոր սպառնալիքները չեզոքացնելու նպատակով «Դավանանքի ազատության մասին» օրենքում փոփոխություններ կատարեց, որի համաձայն արտերկրում աստվածաբանական կրթություն ստացած անձանց արգելվեց իսլամական կրոնական արարողություններ վարելը։ Դրանք կարող էին իրականացնել միայն Ադրբեջանական Հանրապետության այն քաղաքացիները, որոնք կրոնական կրթություն էին ստացել Ադրբեջանում¹¹¹⁷։ Օրինակ՝ 2014թ.-ի դեկտեմբերին աստվածաբան, գիտնական Էլշան Մուստաֆօղլին դատապարտվեց պետական դավաճանության համար միայն այն պատճառով, որ իսլամ էր ուսումնասիրում Իրանում և միջազգային ծրագրի շրջանակներում այցելել էր ԱՄՆ։ Իսկ 2017թ.-ի փետրվարին «Ադրբեջանի հոգևոր գործիչներ» հասարակական կազմակերպության անդամ, «Media.Az» կայքի գլխավոր խմբագիր Սարդատ Բաբանը ձեռքակալվել է՝ կրոնական ծեսեր անցկացնելու կարգը խախտելու մեղադրանքով (Մասսայիի մզկիթում նամազ է կարդացել) միայն այն պատճառով, որ կրոնական կրթություն է ստացել Իրանում։ 40-ից ավելի կրոնական գործիչներ ու ակտիվիստներ հանդես եկան Ս.Բաբանին ազատ արձակելու կոչերով ու հայտարարություններով, որոնցում անթույլատրելի էին համարվում քաղաքացիների հետապնդումները կրոնական հայացքների համար¹¹¹⁸։

Այդ ճանապարհով իշխանությունները փորձեցին օրենքի ուժով կասեցնել ընդդիմադիր հոգևորականների, ինչպես նաև Ադրբեջանի համար ոչ ավանդական կրոնական ուղղությունների քարոզիչների գործունեությունը։ Բացի այդ, պարտադրվեց կրոնական կազմակերպություններին ու համայնքներին վերագրանցվել։ Անկախությունից ի վեր կրոնական համայնքներն արդեն մի քանի անգամ զրանցվել

¹¹¹⁴ Տե՛ս նույն տեղում։

¹¹¹⁵ جبارى ولي، شيعيان جمهورية آذربايجان، قم، ۱۳۸۹، صفحه ۳۳۰.

(Զոբարի Վ., *Ադրբեջանական Հանրապետության շիաները*, Դոմ, 2011, էջ 330):

¹¹¹⁶ IWPR, “Azerbaijan: Opposition leader’s aid on Assault charges, Institute for War and Peace Reporting”, Accessed April 23, 2019, https://www.ecoi.net/en/document/1050287.html?fbclid=IwAR0by8-zYZTIPxldF4AOHlvOZ7_IAYRsStC4XQ0JQLrUjz6UyReX5RzI1BI,

¹¹¹⁷ جبارى ولي، شيعيان جمهورية آذربايجان، قم، ۱۳۸۹، صفحه ۳۲۵-۳۳۰.

(Զոբարի Վ., *Ադրբեջանական Հանրապետության շիաները*, Դոմ, 2011, էջ 330-325):

¹¹¹⁸ Меджид Ф., “Религиозные деятели призвали власти освободить богослова Бабаева”, 04 апреля, 2017. Просмотрено Март 21, 2017, https://www.kavkaz-uzel.eu/articles/300346/?fbclid=IwAR2TRI--FX2QmNhwbn3w7byGANVdYMTR_aDeRUKNhGOziZ8Hlj7D1Yd1va8.

էին: Գրանցման գործընթացը պետք է իրականացնեն «Կրոնական կազմակերպությունների հետ աշխատանքի պետական հանձնաժողովը» մինչև 2010թ.-ի հունվարի 1-ը: Գրանցված չլինելու դեպքում համայնքները կլուծարվեն¹¹¹⁹:

Նոր օրենքն, ըստ էության, միտված էր կրոնական դաշտի վերահսկողությանը և անցանկալի կառույցներից հեշտորեն ազատվելուն: Համաձայն կրոնի մասին օրենքի 2015թ.-ի համալրման՝ կրոնական կազմակերպությունները պարտավոր են կառավարությանը հաշվետվություն ներկայացնել իրենց գործունեության վերաբերյալ, իսկ կրոնական կարգախոսները, դրոշներն ու տարբերանշանները միայն իրենց հավաքատեղիներում են թույլատրվում¹¹²⁰: Այդ ամենի դրսևորումներից է հասարակական գործիչ, Tolişi sado, «Թալիշների ձայնը թերթի» գլխավոր խմբագիր Նովրուզալի Մամեդովի և նրա տեղակալ Էլման Գուլինի ձերբակալությունները, որոնք մեղադրվում էին հայրենիքի դավաճանության մեջ՝ հիմնականում Իրանի հետ գաղտնի կապեր ունենալու պատճառով¹¹²¹:

Իշխանությունները վերջին տարիներին չափազանց խստացրել են նաև գրաքննության պահանջները: 2012թ.-ի փետրվարին օրենքում արված փոփոխության համաձայն՝ ամեն տեսակի կրոնական գրականության հրատարակության համար իշխանության համապատասխան մարմինների կողմից պետք է ձեռք բերել թույլտվություն:¹¹²²

Ընդհանրապես, Ադրբեջանում կրոնական կառույցների գրանցումը, ինչպես նաև իսլամին վերաբերող գրականության հրատարակումն ու ներմուծման ընթացակարգը բավական բարդ են և ոչ բոլոր դեպքերում՝ հաղթահարելի: Գրաքննության կանոններն առաջին անգամ խախտելու դեպքում՝ նախատեսվում է մինչև 2 տարի ազատազրկում, իսկ նույն արարքը կրկնելու դեպքում՝ 2-5 տարի ազատազրկում:¹¹²³

Ի դեպ, «Կրոնական կազմակերպությունների հետ աշխատանքի պետական հանձնաժողովը» առանց դատական որոշման կարող է կասեցնել կրոնական բովանդակություն պարունակող ցանկացած նյութի թե՛ հրատարակումը, թե՛ տարածումը¹¹²⁴: Իշխանությունները սահմանափակումներ էին իրականացնում նաև մզկիթների նկատմամբ: 2009թ.-ի օրենսդրական փոփոխություններից հետո Ադրբեջանում մի շարք մզկիթներ չկարողացան հաղթահարել այն պահանջները, որոնք առաջ էին քաշվել գրանցման համար և կանգնեցին փակման վտանգի առաջ: 2009-2010թթ.-ին Ադրբեջանի հասարակական առանձին շրջանակներում դժգոհությունների ալիք առաջացրին սուննիական ու շիայական մի քանի մզկիթների՝ անվտանգության, տեխնիկական վիճակի կամ օրենքի հետ կապված խնդիրներ ունենալու պատճառով

¹¹¹⁹ **USCIRF**, "2013 Annual Report by United States Commission on International Religious Freedom: Azerbaijan". Accessed February 25, 2019, https://www.uscirtf.gov/countries/azerbaijan/?fbclid=IwAR0by8-zYZTIPxldF4AOhlv0Z7_IAYRStC4XQ0JQLrUjz6UyReX5RzI1BI#annual-reports-chapters-summaries.

¹¹²⁰ «Կրոնի և հավատքի մասին» ԱՀ օրենքի (Dini etiqad azadlığı haqqında. Azərbaycan Respublikasının Qanunu), (վերջին դիտում՝ 25.01.2019)՝ <http://www.e-qanun.az/framework/7649>:

¹¹²¹ **Аббасов И.**, «Азербайджанские талыши: между северо и югом», 19 июль. Просмотрено Январь 26, 2019, https://iwpr.net/ru/global-voices/azerbaydzhanskie-talyshi-mezhdu-severom-i-?fbclid=IwAR1ZWPBxsDY_qzaDUfaKcg_dp61GPP1sZQoYqtuxJRz6gKKyuBLO9VhM2XI.

¹¹²² **Kavkaznewz.az**, «Получившие образование за рубежом не смогут вести церемонии и совершать обряды в Азербайджане», 04 декабря, 2015. Просмотрено Март 9, 2019, <http://kavkaznews.az/2015/12/poluchivshie-obrazovanie-za-rubezhom-ne-smogut-vesti-tseremonii-i-sovershat-obryady-v-azerbajdzhane/>.

¹¹²³ **USCIRF**, "2014 Annual Report by United States Commission on International Religious Freedom: Azerbaijan", pp.113-114. Accessed March 15, 2019, https://www.uscirtf.gov/countries/azerbaijan/?fbclid=IwAR0by8-zYZTIPxldF4AOhlv0Z7_IAYRStC4XQ0JQLrUjz6UyReX5RzI1BI#annual-reports-chapters-summaries.

¹¹²⁴ **St'u** նույն տեղում:

քանդելու կամ փակելու մասին իշխանությունների որոշումները: 2015թ.-ի Նարդարանի հայտնի դեպքերից հետո բռնի կերպով փակվում են շիայական 4 մզկիթ:¹¹²⁵

Նշենք նաև, որ 2012 թվականից Նոր միտումեր են նկատվում. «Կրոնական խմբերի հետ աշխատանքի պետական հանձնաժողովը»՝ ի դեմս Նախագահ Էլշադ Իսթյանդարովի և 2014 թվականից նրա իրավահաջորդ Մուբարից Ղուրբանլիի,, փորձում է բարելավել իր հարաբերությունները շիա խմբերի հետ:¹¹²⁶ Այդ կառույցը քննարկումներ ու հանդիպումներ է կազմակերպում շիա խմբերի հետ: Օրինակ՝ Լենքորանում կազմակերպվել է երկօրյա գիտաժողով՝ «Պետական-կրոնական հարաբերություններ և աշխատանքի լուսավորություն» թեմայով: Այդ շրջանում կասկածելի կրոնական գործողությունների վերահսկման հին քաղաքականությունը վերափոխվում է ընդդիմադիր կրոնական խմբերի ընդգրկման քաղաքականությամբ, որոնք ղեկավարվում էին պետության կողմից:¹¹²⁷

Ամփոփելով կարող ենք նշել, որ բավականին հակասական է այն փաստը, որ մի կողմից՝ քաղաքական գործիչներն ու պաշտոնյաները հայտարարում են երկրի ավանդական իսլամական արժեքների հանդեպ սվիրվածության մասին, մյուս կողմից՝ երկրում փակվում և Նույնիսկ քանդվում են մզկիթներ, իսկ իսլամական կազմակերպությունների ղեկավարներն ու անդամները ձերբակալվում են և ազատագրկման դատապարտվում:

Այնուամենայնիվ, չնայած թալիշաբնակ տարածքներում շիաների նկատմամբ կիրառված սահմանափակումներին՝ վերջին տարիներին նկատելի է, որ իշխանությունները փորձում են կրոնական քաղաքականությունը դարձնել ավելի ճկուն՝ թե՛ թալիշաբնակ տարածքների շիաների և թե՛ Իրանի հետ հարաբերություններում:

¹¹²⁵ USCIRF , ” 2016 Annual Report by United States Commission on International Religious Freedom: Azerbaijan”. Accessed March 10, 2019, https://www.uscirtf.gov/countries/azerbaijan/?fbclid=IwAR0by8-zYZTIPxldF4AOhlv0Z7_IAYRsStC4XQ0JQLrUjz6UyReX5RzI1BI#annual-reports-chapters-summaries.

¹¹²⁶ Jödicke A., “Shia groups and Iranian influence in Azerbaijan, the impact of trans-boundary religious ties on national religious policy”, Eurasian Geography and economics, 2017, pp. 541-543.

¹¹²⁷ Տե՛ս Նույն տեղում, էջ 541-543:

THE RELIGIOUS SITUATION IN TALYSHESES INHABITED REGIONS OF REPUBLIC OF AZERBAIJAN (2010-2018)

SIRANUSH VARDANYAN

*Yerevan State University, Faculty of Oriental Studies,
Chair of Iranian Studies, Master Degree,
Yerevan, Republic of Armenia*

The article presents the religious situation, evolutions, the religious policy carried out by Azerbaijani authorities in that part, the ways and mechanisms of the population against it. The author also analyzes the factor of Iranian influence on Lankorani Talyshi religious movements and gives estimates of possible variants of possible developments arising from the current situation. The relevance of the article for the Republic of Armenia has not only theoretical, but also practical significance, as it is aimed at elaborating an accurate picture of one of the issues of Azerbaijan ethnic-religious, which being a Shiite majority country, after the collapse of the Soviet Union has always been under the religious influence of Iran. One of the interesting areas for studying this influence and the various manifestations of it is the Southern Talyshi section of the Republic of the Azerbaijan, which lying in the immediate vicinity of Iran holds both religious and ethnic influences. The purpose of this article is to study the political processes in the Talyshi territories of Azerbaijan and policies conducted by the political elite of Azerbaijan in these areas and to draw relevant conclusions.

Keywords: *Republic of Azerbaijan, religion and politics, shiites, talyshes, restrictions, controls, iranian influence.*

РЕЛИГИОЗНАЯ СИТУАЦИЯ В ТАЛЫШСКИХ НАСЕЛЕННЫХ ПУНКТАХ АЗЕРБАЙДЖАНСКОЙ РЕСПУБЛИКИ (2010-2018 ГГ.)

СИРАНУШ ВАРДАНЯН

*Ереванский государственный университет, Факультет востоковедения,
магистр, г.Ереван, Республика Армения*

В статье представлена религиозная ситуация, а также религиозная политика, осуществленная азербайджанскими властями в 2010-2018 гг. в талышских населенных пунктах на территории Азербайджанской Республики, способы и механизмы подавления местного населения. Проведен также авторский анализ иранского фактора влияния на религиозные движения ленкоранских талышей и проанализированы возможные варианты развития ситуации. Статья представляет для Республики Армения не только теоретический, но и практический интерес, поскольку она направлена на выработку точной картины положения в Азербайджанской Республике одной из этнических и религиозных групп, которая, будучи шиитским большинством, всегда находилась под религиозным влиянием Ирана после распада СССР. Одной из интересных сфер изучения этого влияния и различных его проявлений является южно-талышское население Азербайджанской Республики, которое находится в непосредственной близости от Ирана, испытывая влияние последнего как на религиозные, так и этнические процессы. Цель исследования – изучить политические процессы в талышских регионах Азербайджана и политику, проводимую политической элитой Азербайджана в этих регионах, сделать соответствующие выводы.

Ключевые слова: *Азербайджанская Республика, религия и политика, шииты, талыши, ограничение, контроль, иранское влияние.*

ԳՐԱՆՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՔԵՇԵՆՅԱԿ, REVIEWS

Տաթևիկ Հայրապետյան, Ներթաղաբական գործընթացները Ադրբեջանում 1988-1998 թվականներին, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2018, 178 էջ*:

ԵՊՀ պատմության ֆակուլտետի կոլկասագիտության բաժնի դասախոս, պատմական գիտությունների թեկնածու Տաթևիկ Հայրապետյանի մենագրությունը նվիրված է 1988-1998 թթ. Ադրբեջանի ներթաղաբական իրավիճակի հիմնական առանձնահատկություններին, իշխանություն-ընդդիմություն պայքարի խորքային պատճառներին, ներհիշխանական ու ներընդդիմադիր ճամբարներում առկա բավմաթիվ հակասություններին, ինչպես նաև Ադրբեջանի ներթաղաբական գործընթացների ու դարաբաղյան ճակատում ընթացող ռապիդական գործողությունների փոխներգործությանը:



Գիրքը բաղկացած է երեք գլխից, ունի ներածություն, երակացություններ և օգտագործած աղբյուրների ու գրականության ցանկ: Ներածությունում ներկայացված են արծարծվելիք խնդիրների շրջանակը, հիմնական սկզբնաղբյուրները, պատմագիտական կամ հրապարակախոսական այն աշխատությունները, որոնք հիմք են ծառայել հեղինակի համար՝ քննարկելու

ներթաղաբական գործընթացներն Ադրբեջանում 1988-1998թթ.-ին: Անկասկած, մեծ է նշված խնդիրների արդիականությունն ու հրատապությունը այն պայմաններում, երբ դեռևս Արցախյան հակամարտության էջը փակված չէ հայերիս և, առավել ևս, ռևանշիստական տրամադրություններով համակված ադրբեջանցիների համար:

Տ. Հայրապետյանն իրավացիորեն և տրամաբանական շարադրանքով բացահայտում է այն երևույթը, որ 1980-ական թթ. երկրորդ կեսին «վերակառուցման» քաղաքականության շրջանում, ազգայնականության վերելքն Ադրբեջանում տեղի էր ունենում XX դարասկզբին կոլկասյան թաթարների ազգային ինքնագիտակցության ձևավորման և ազգային գաղափարախոսությունների հայեցակարգային փոխակերպումների նմանությամբ ու օրինակով: Նա բավակողմանիորեն լուսաբանում է վայրիվերումների մի փուլ, որը նշանավորվում է թե՛ հորհրդային Միության փլուզմամբ և նախկին հասարակարգի ճգնաժամով և թե՛ ծայրամասերում կենտրոնախույս նկրտումների աճով, ապագայի նկատմամբ անորոշությամբ ու ազգային ելքերի փնտրտությամբ:

Հեղինակը մանրամասն ներկայացնում է Ադրբեջանի ժողովրդական ճակատ (ԱԺԾ) կուսակցության ձևավորման, կազմավորման, ներքին խմորումների, գաղափարական ու մարտավարական թևերի և բուն գործունեության պատմությունը: Դա հնարավորություն է ընձեռում հասարակությանը՝ ծանոթանալու ոչ միայն զուտ Ադրբեջանում կուսակցականաշինության գործընթացներին, այլև այդ համատեքստում հետևելու զուգահեռաբար թե՛ժացող քաղաքական, գաղափարական խմորումներին, ըմբռնելու ադրբեջանական ազգայնականության էությունն ու առանձնահատկությունները, հակահայկականության ուժգնությունը, արտահայտման ձևերը,

* Գրախոսությունը ներկայացվել է 22.04.2019թ., տպագրության ընդունվել՝ 17.06.2019թ.:

ներթաղաբական գաղափարական հոսանքները, ինչպես նաև Արցախյան հարցի դերն ու նշանակությունն այդ գործընթացներում: Երկայացնելով նշված պատմական ժամանակաշրջանի խորնիկան՝ Տ.Յայրապետյանին հաջողվել է ցույց տալ պուզահեռաբար ընթացող հասարակական-թաղաբական բարդ երևույթների փոխկապակցվածությունն ու փոխներգործությունը:

Յետաբերական է և ուսանելի 1989 թվականի ներթաղաբական իրադրության լուսաբանումը: Կարևոր է անդրադարձը նախ՝ Սումգայիթի (1988), այնուհետև՝ Ադրբեջանի հայաբնակ տարածքներում (Գանձակ-Կիրովաբադ, Նախիջևան, Շաբի, Շամախի, Իսմայիլի, Խանլար, Դաշքեսան) և, հատկապես, 1990թ. հունվարին Բաբվում տեղի ունեցած կոտորածներին, որոնց տրվում է օբյեկտիվ, թաղաբական ու թաղաբագիտական համարժեք գնահատական:

Տ.Յայրապետյանը օգտագործել է հարուստ տեղեկատվական, հրապարակա-խոսական գրականություն: Անշուշտ, այս դեպքում կարևոր դերակատարում ունի այն փաստը, որ նա տիրապետում է ադրբեջաներենին, ինչն էլ նրա առջև լայնորեն բացել է այդ լեզվով հրապարակված կյուբերի շտեմարանը: Սակայն ադրբեջանցի, թուրք կամ օտարապահ ադրբեջանամետ հեղինակների առատությունն ինքնին դրական երևույթ կլիներ այն պարագայում միայն, երբ հեղինակին հաջողվեր դրանք գրաքննության ենթարկել՝ հիմնվելով, բնականաբար, գիտականության ու օբյեկտիվության սկզբունքների վրա: Երկայացնեն մի շարք քննադատական դիտարկումներ՝ նպատակ ունենալով նպաստելու աշխատության հետագա հրատարակություններում բացթողումների շտկմանը:

Այսպես, հիշատակելով բրիտանացի լրագրող Թոմաս դե Վաայի «Սև այգի. Յայաստանն ու Ադրբեջանը խաղաղության և պատերազմի միջով» գիրքը՝ Տ.Յայրապետյանը թեև իրավացիորեն նկատել է, որ հեղինակը «ձգտել է «հավասարության նշան» դնել ադրբեջանական ու հայկական կողմերի գործողությունների միջև և տարաբնույթ երևույթների գնահատումներում երբեմն «հարկադրված» է եղել դրսևորելու որոշակի կողմնակալություն (էջ 13), այնուամենայնիվ նա գիրքը պարմանալիորեն ու առատորեն համեմել է հղումներով այդ կեղծ-գիտական, թարույզական աշխատությանը, որում առկա են բավմաթիվ անճշտություններ ու «տեղեկատվական ռուբեր»։ Միաժամանակ անտեսվել է գրքի՝ գիտականորեն հիմնավորված մանրամասն քննադատությունը¹¹²⁸, որի նպատակներից մեկը հենց այն է եղել, որ հետայդու այդ անվստահելի աշխատությունը գիտական հանրույթի կողմից անտեսվի կամ գոնե պզուշուբանք ընթերցվի, այլ ոչ թե լայնորեն կիրառվի: Նույնը կարելի է ասել ամերիկյան տիրաառչակ կեղծարար-պատմաբան Ռոնալդ Սյունուն անհարկի հիշատակելու մասին (էջ 25)¹¹²⁹:

Նկատելի է, որ Տ.Յայրապետյանը համառորեն չըջանցել է հայ հեղինակների՝ գիտական հենք ունեցող աշխատությունները: Օրինակ, անտեսված է հողվածների մի ծանրակշիռ ժողովածու¹¹³⁰, որում մանրամասն քննության են առնված ադրբեջանցիների ծագմանն առնչվող, խորհրդային տարիներին չըջանառուվող կեղծ-գիտական տեսությունները, և արժանի հակահարված է տրված ադրբեջանական պատմագրության անհիմն դատողություններին:

¹¹²⁸ **Вртанесян К.**, Томас Де Ваал, «Черный сад»: в поисках несуществующего баланса // Ռազմավարության և անվտանգության հարցեր/ժողովածու. Երևան, 2007 Իօ 637-658:

¹¹²⁹ Մանրամասն տե՛ս **Ավվազյան Ա.**, Յայաստանի պատմության լուսաբանումը ամերիկյան պատմագրության մեջ. քննական տեսություն, Երևան, 1998, 260 էջ: Սույն գիրքը վերաիրատարակվել է 2002թ. Լոս Անջելեսի «Լոյս» պարբերականում՝ «Գրթատեր» հրատարակչության կողմից:

¹¹³⁰ К освещению проблем истории и культуры Кавказской Албании и восточных провинций Армении, Ереван, 1991.

Ինչ խոսք, պարմանայի է նաև տողերիս հեղինակի գրքի¹¹³¹ շրջանցումը, որն, ի դեպ, Տ.Յայրապետյանն է գրախոսել ու բարձր գնահատել¹¹³²: Ընդ որում, առաջին գլխում նա անդրադառնում է հենց այն հարցերին, որոնք քննարկված են վերոնշյալ աշխատությունում և առնչվում են XIX դարավերջի ու XX դարասկզբի «կովկասյան թաթարների» ինքնությանը, ազգայնականության դրսևորումներին, ազգային առաջնորդների մոտեցումներին ու գործունեությանը: Ի դեպ, այդ ուսումնասիրությունում տողերիս հեղինակն առաջին անգամ է գիտականորեն շրջանառել բազմաթիվ թեկեր ու ձևակերպումներ: Օրինակ, իսլամականությունից դեպի թյուրքականություն, իսկ այնուհետև՝ «ադրբեջանականություն» անցման փուլերն առաջին անգամ հստակ ժամանակագրորեն բաժանվել ու սահմանվել են այն եպրոյթներով, որոնք օգտագործում է Տ. Յայրապետյանը¹¹³³:

Փոխարենը, նա բազմիցս անհարկի հղում է անում ադրբեջանցի պատմաբան Ա. Բալաևին, որի հակապատմական տեսակետները հանգամանորեն քննադատել են իմ գրքում: Այսպես, Տ.Յայրապետյանը, հղելով նրան, գրում է. «1905-1907թթ. հեղափոխական շարժումների ժամանակ ի հայտ եկած ադրբեջանական քաղաքական կազմակերպությունները ինտիմ էին դնում պայթարելու ոչ թե ադրբեջանցիների՝ որպես ինքնաբավ էթնիկ ամբողջության ազգային իրավունքների, այլև Կովկասի բոլոր մահմեդականների իրավունքների համար¹¹³⁴, ինչը բնական էր, քանի որ «ադրբեջանցի» էթնոս գոյություն չուներ» (Էջ 20): Բայց չէ՞ որ նույն Ա.Բալաևին ես մանրամասն քննադատել եմ հենց «ադրբեջանական էթնոս» եպրոյթը սխալ ու ժամանակավրեպ կիրառելու համար: Ցավոք, մեզանում դեռևս չի ձևավորվել այն գիտակցությունը, որ անվստահելի սկզբնաղբյուրներն ու գրականությունն առատորեն հղելն ինքնըստիսթյան լայնացում է այդ գրքերի գործածության շառավիղը կամ հղման ինդեքսը (индекс цитирования): Միաժամանակ հայ հեղինակի գիտական օբյեկտիվ աշխատության շրջանցումը հոյ է ծանր հետևանքներով մեր հայրենի գիտության պարզացման տեսանկյունից, առավել ևս՝ հայ-ադրբեջանական պատմագիտական ընդհարման համատեքստում: Յավելեմ, որ Ա. Բալաևը առ այսօր իմ քննադատությանը չի արձագանքել:

Սեկ այլ օրինակ ևս՝ կապված ադրբեջանցի հեղինակներին անհարկի հղելու հետ: Երբ Տ. Յայրապետյանը գրում է, որ «1937 թ. «թուրք» եպրոյթին փոխարինելու եկավ «ադրբեջանցի»-ին» (Էջ 24) և հղում է ադրբեջանցի Յուսուֆ Ըզզելիկի (Yusuf Özcelik) փոքրածավալ մի հոդված¹¹³⁵, ապա թյուր տպավորություն է ստեղծվում, թե նա է այդ իրականում անստույգ տեսակետի հեղինակը: Մինչդեռ նրա հոդվածի հրապարակումից առաջ լույս են տեսել գիտական ավելի ծանրակշիռ աշխատություններ, որոնցում հանգամանորեն ներկայացված են ադրբեջանցի ինքնանվանման փոխակերպումները: Ավելի նախընտրելի կլիներ վկայակոչել թեկուզ ԽՍՀՄ մարդահամարի տվյալները կամ հանրագիտարանային տեղեկությունները և անհարկի չտարածել նրա հոդվածը: Նույնը կարելի է ասել հետևյալ պարբերության վերաբերյալ. «Ավզության և լեպիի իմաստով «Ադրբեջան» անվանումը սկսեց կիրառվել խորհրդային կարգերի հաստատումից հետո, և միայն 1937 թ. այն ստացավ պաշտոնական կարգավիճակ, իսկ «թուրք» եպրոյթն արգելվեց» (Էջ 24): Այս անգամ ևս Տ. Յայրապետյանը հղում է ադրբեջանցի հեղինակ Ֆ. Էլեկբարովի (Faig Ələkbərov)՝ 2012

¹¹³¹ Варданян Т., Азербайджанцы: история одного незавершенного этнопроекта (историко-этнологический очерк), М., 2012.

¹¹³² ՏԷՍ «Յայադիտության հարցեր», 2014, թիվ 2, էջ 233-235:

¹¹³³ Варданян Т., նշվ. աշխ. էջ 66:

¹¹³⁴ Балаев А., Мамед Эмин Расулзаде (1884-1955), с. 15.

¹¹³⁵ Yusuf Özcelik, The Development and Establishment of Political Identity in the Republic of Azerbaijan // EuroKaukAsia, Euxeinos 9 (2013).

թ. համացանցում վետեղված կես էջանոց և գիտական ապարատից չուրկ կյուրթ¹¹³⁶: Եթե կյուրթ՝ ադրբեջաներենից թարգմանությունը ճիշտ է, ապա Ֆ.Էլեկբարովի միտքն է սխալ, քանի որ խորհրդային կարգերի հաստատումից անմիջապես հետո լեզվի ու ազգի նկատմամբ «Ադրբեջան» ելորը չի կիրառվել¹¹³⁷: Իրականում, «ադրբեջանցի» ինքնանվանումը պաշտոնապես դրվել է շրջանառության մեջ ոչ թե 1937, այլ 1939 թվականին: Ինչպես նկատել է Գ. Ստեփանյանը, «1937 թ. հունվարի 6-ի համամիութենական մարդահամարի պաշտոնական կյուրթերում թյուրքալեզու բնակչությունը դեռևս նշվում էր թյուրք անվամբ... Ադրբեջանում 1930-ական թվականների անձնագրավորման ժամանակ, երբ համատարած կերպով «ադրբեջանականացվեց» թյուրքալեզու բնակչությունը, 1939 թ. հունվարի 17-ի մարդահամարում նոր միայն ի հայտ եկավ և պաշտոնապես ամրագրվեց ադրբեջանցի անվանումը»¹¹³⁸:

Ամփոփելով նշենք, որ ադրբեջաներենին (կամ որևէ այլ օտար լեզվին) տիրապետելու պարագան պետք է օգտագործել նպատակային ու արդարացված, այլ ոչ թե ի հաշիվ հայկական սկզբնաղբյուրների ու գիտական գրականության: Պատմագիտության ասպարեզում նույնպես ընթանում է անթաքույց հայ-ադրբեջանաթուրքական հակամարտություն, ուստի դրան մասնակցության հայտ ներկայացնելու դեպքում պարտավոր ենք օգտագործել հայ պատմաբանների գործերը և Էլ ավելի վարգացնելու դրանցում առաջադրված գիտական անաչառ թեզերը: Ցավոք, Տ.Յայրապետյանի գրքում մի կողմից՝ շրջանցված են հայ պատմագիտության ձեռքբերումները, մյուս կողմից՝ անտեղի հիշատակության են արժանանում ադրբեջանական, ադրբեջանամետ անվստահելի սկզբնաղբյուրներն ու կեղծ-գիտական գրականությունը:

Չուսով ենք, որ նշված առաջարկներն ու դիտողությունները կշտկվեն Տ.Յայրապետյանի գրախոսվող աշխատության երկրորդ հրատարակությունում՝ հետխորհրդային Ադրբեջանի պատմությանը նվիրված այս հանգամանալից հետապոստությանը հաղորդելով առավել մեծ գիտական արժեք:

Թամարա Վարդանյան,

Երևանի պետական համալսարանի դասախոս,
Գ. Վ. Պլեխանովի անվան Ռուսաստանի տնտեսագիտական
համալսարանի Երևանի մասնաճյուղի տնօրեն,
պատմական գիտությունների թեկնածու,
Vardanyan.TR@rea.ru

¹¹³⁶ Biz kimin varisiyik: Milli Azərbaycanın, yoxsa Sovet Azərbaycanı? <http://modern.az/articles/21059/1#gsc.tab=0>, 11.02.2012.

¹¹³⁷ Այդ մասին առավել մանրամասն տե՛ս **Варданыя Т.**, նշվ. աշխ., էջ 43:

¹¹³⁸ **Ստեփանյան Գ.**, Բաբու բաղաբի հայության պատմությունը. Պատմաժողովրդագրական ուսումնասիրություն, Երևան, 2011, էջ 69: Տե՛ս նաև Всесоюзная перепись населения 1937 г.: краткие итоги, М., 1991, с. 94, Всесоюзная перепись населения 1939 г.: основные итоги, М., 1992, с. 71:

Tatevik Hayrapetyan. *Internal Political Processes in Azerbaijan in 1988-1998.* Yerevan: Yerevan State Un-ty Press, 2018, 178 pp.

Tatevik Hayrapetyan's monograph is devoted to the peculiarities of the internal political processes in Azerbaijan in 1988-1998 as well as the reasons for the confrontation of the opposition with the government against the background of the Karabakh conflict.

The book utilizes widely the vast relevant information in mass media, including in the Azerbaijani language. In her presentation of the record of the given historical period, the author thoroughly outlined the history of the formation of the Popular Front of Azerbaijan (PFA) and its intra-party ideological and tactical differences.

The drawback of the book under review is that Hayrapetyan, in fact, has bypassed many of the major achievements of Armenian academic thought on this topic. Furthermore, abundant references to the pseudo-scholarly works and propaganda opuses by Turkish and Azerbaijani authors are often presented without the necessary clarifications. There are also cases of uncritical use of the works by some biased Western researchers.

Tamara Vardanyan,

*Assistant Professor at Yerevan State University,
Director of Yerevan branch of Plekhanov
Russian University of Economics,
PhD. in History*

Татевик Айрапетян. *Внутриполитические процессы в Азербайджане в 1988-1998 гг.,* Ереван, изд-во ЕГУ, 2018, 178 сс.

Монография к. и. н. Айрапетян посвящена особенностям внутриполитических процессов в Азербайджане в 1988-1998 гг. и причинам конфронтации оппозиции с властью на фоне Карабахского конфликта.

В книге широко использована богатая информационно-публицистическая литература, в том числе и на азербайджанском языке. В ходе представления хроники данного исторического периода автор обстоятельно изложила историю формирования Народного фронта Азербайджана (НФА), внутрипартийных идеологических и тактических разногласий.

Недостатком рецензируемой книги является то, что Айрапетян, фактически, обошла стороной многие крупные достижения отечественной научной мысли по данной тематике. Кроме того, обильные ссылки на лженаучные труды и пропагандистские опусы турецких и азербайджанских авторов зачастую представлены без необходимых разъяснений. Есть также случаи некритического использования работ некоторых ангажированных западных исследователей.

Тамара Варданян,

*преподаватель Ереванского государственного университета,
директор Ереванского филиала РЭУ им. Г.В. Плеханова,
кандидат исторических наук*

ՎԱՐԴԱՆ ՈՍԿԱՆՅԱՆ, ՀԱՍՄԻԿ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ. Պարսկերեն հասարակական-քաղաքական և դիվանագիտական տեքստերի թարգմանության հիմունքներ, «Քոփի փրինթ», ԵՊՀ հրատ., Երևան, 2019, 264 էջ:*



Հայաստանի բուհերում իրանագիտական կրթության ոլորտում առանցքային առարկա հանդիսացող պարսկերենի ուսուցման գործընթացում նոր դասագրքերի կազմումը նորագույն գիտական, կրթական և մեթոդաբանական պարզացումների ու ձեռքբերումների տեսակետից արդիական անհրաժեշտություն է: Ուրախալի է, որ ոլորտի մասնագետները պարսկերենի դասավանդումն առավել կատարյալ դարձնելու համար ձեռնարկում են նման դասագրքերի ստեղծման աշխատանքներ: Ասվածի վկայությունը պարսկերենի բուհական նոր դասագիրքն է՝ «Պարսկերեն հասարակական-քաղաքական և դիվանագիտական տեքստերի թարգմանության հիմունքներ» վերնագրով, որը հեղինակել են բանասիրական գիտությունների թեկնածուներ, դոցենտներ Վ.Ոսկանյանը և Հ.Կիրակոսյանը:

Հեղինակները հստակորեն են բանաձևել դասագրքի բուն նպատակը. «Հաշվի առնելով Հայաստան-Իրան քաղաքական, տնտեսական և մշակութային հարաբերություններում արձանագրված պարզացումները, ինչպես նաև՝ Երևանի Պետական Համալսարանի Արևելագիտության ֆակուլտետի Իրանագիտության ամբիոնում պարսկերենի դասավանդման առանձնահատկությունները և դրանից բխող կարիքները, վաղուց արդեն հասունացել էր պարսկերենից հայերեն և հայերենից պարսկերեն հասարակական-քաղաքական և դիվանագիտական բովանդակությամբ տեքստերի թարգմանական հմտությունների և կարողությունների ձևավորման անհրաժեշտությունը: Այս ոլորտի տեքստերն աչքի են ընկնում մի շարք առանձնահատկություններով, որոնք յուրացնելու առումով հատուկ ուշադրություն են պահանջում: Մասնավորապես, մամուլում հրատարակված հասարակական-քաղաքական տեքստերը կարող են պարունակել մի կողմից խոսակցական լեզվին բնորոշ ձևեր և արտահայտություններ, իսկ մյուս կողմից՝ հատկապես պարսկերենի պարագայում, բարձր ոճի բավմաթիվ տարրեր: Դիվանագիտական տեքստերը առանձնանում են բարձր ոճին հատուկ բավմապիսի կայուն կաղապարների առկայությամբ, որոնք, ըստ էության, բնորոշ չեն այլ ոլորտների գրական տեքստերին և կարիք ունեն լրացուցիչ բացատրությունների ու մեկնաբանությունների: Հենց այս բացը լրացնելու է գալիս «Պարսկերեն հասարակական-քաղաքական և դիվանագիտական տեքստերի թարգմանության հիմունքներ» դասագիրքը... (էջ 7):

Դասագիրքն ուսուցանվող թեման ներկայացնում է համակարգված կերպով՝ ներառելով պարսկերենի հասարակական-քաղաքական, դիվանագիտական ոճին հատուկ կառուցվածքային մակարդակները՝ ոճաբանություն, բառագիտություն, քերականություն և ուղղագրություն:

Այն բաղկացած է երկու մասից, որոնցից յուրաքանչյուրն էլ՝ ենթաթեմաներից, իսկ դրանք էլ՝ դասերից: Դասագրքի թեմաները՝ «Պաշտոնական այցեր, հանդիպումներ, բանակցություններ, պաշտոնական անձանց դիմավորում և ճանապարհում», «Հավատարմագրերի հանձնում, դեսպանների նշանակում և հետ կանչում», «Շնորհավորական և ցավակցական ուղերձներ», «Բանակցություններ, տարածաշրջանի

* Գրախոսությունը ներկայացվել է 05.06.2019թ., տպագրության ընդունվել՝ 17.06.2019թ.:

երկրների հետ համագործակցություն», «ԻԻ-Հ և ՀՀ համագործակցություն», «Հռչակագրեր, համատեղ հայտարարություններ» և «Ելույթներ և պաշտոնական հայտարարություններ», ընդգրկում են այն հիմնական ոլորտները, որոնց շրջանակում կարելի է ուսուցանել հասարակական-քաղաքական ոճի տեքստերի՝ պարսկերենից հայերեն և հայերենից պարսկերեն, թարգմանության հիմնական առանձնահատկությունները:

Դասագիրքն ունի հավելվածային բաժիններ՝ պարսկերեն-հայերեն բառացանկ, ՀՀ և ԻԻ-Հ նախարարությունների երկլեզու անվանացանկեր:

Հեղինակները ստեղծել են այնպիսի դասագիրք, որն ավելի ոլորտին է դարձնում պարսկերենի հասարակական-լրատվական ոճի տեքստերի կառուցվածքային, լեզվաոճական, բառային, քերականական առանձնահատկությունների գործնական ուսուցումը, ինչը լիովին հաջողվել է: Դրան նպաստել են նաև հեղինակների բուհական գիտակրթական փորձառությունը և պարսկերենի ոլորտում մինչ այդ իրականացրած գիտական աշխատանքը:

«Պարսկերեն հասարակական-քաղաքական և դիվանագիտական տեքստերի թարգմանության հիմունքներ» դասագիրքը նախատեսված է ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի մագիստրատուրայի առաջին կիսամյակում նախատեսված դասընթացի համար, որը մատուցվում է 62 (վաթսուներկու) դասաժամով: Յուրաքանչյուր թեմա բաղկացած է երեք դասից՝ տեքստեր, որոնց հաջորդում է բառացանկ և ոճական, թարգմանական, քերականական, ուղագրական բացատրությունները, այնուհետև՝ նյութին համապատասխան քերականական ու թարգմանական վարժությունները՝ ընդգրկված առանձին դասերի մեջ: Ի դեպ, մեծ ուշադրություն է դարձված հակադարձ թարգմանության վարժություններին (հայերենից պարսկերեն), որոնք հնարավորություն են ընձեռում համեմատական տիրույթում դիտարկելու երկու լեզուների թարգմանական կաղապարները, համարժեք բառերը, բառաձևերը, արտահայտությունները:

Հեղինակները մեթոդապես ճիշտ են վարվել՝ ուղղակիորեն նյութին չառնչվող, սակայն կարևոր ու հավելումային գիտելիքներն առանձնացրելով Ուշադրություն վերտառությամբ, ինչը նյութի մատուցումը դարձնում է ավելի տեսանելի ու հիշվող:

Դասագրքում պատշաճ ուշադրություն է դարձվել հասարակական-քաղաքական ու դիվանագիտական տեքստերում ամրագրված խոսակցական ոճի լեզվանյութի քննարկմանը և ներկայացմանը, քանի որ առօրյա խոսակցական ու հասարակական-լրատվական ոճերի սերտ շփման արդյունքում այսօր բավարարիչ խոսակցական տարրեր ամրացել են բարձր ոճում կամ այդ ընթացքում են: Դասագրքում դրանց քննարկումը, օրինակների հիմնավորումով նյութի մատուցումը կատարյալ է դարձնում:

Իբրև ցանկություն՝ մեկ առաջարկ. հիմք ընդունելով սույն դասագրքի հաջող կառուցվածքն ու մեթոդական հենքը՝ պարսկերենի ուսումնասիրության և ուսուցման գործընթացն առավել համապարփակ դարձնելու նպատակով ուսանողների համար ստեղծել նաև տնտեսական ու ռազմական բովանդակությամբ տեքստերի թարգմանության հիմունքներին վերաբերող դասագրքեր:

Կարծում ենք՝ «Պարսկերեն հասարակական-քաղաքական և դիվանագիտական տեքստերի թարգմանության հիմունքներ» դասագիրքը հաջողությամբ կկիրառվի բուհերի մասնագիտացված ֆակուլտետներում, գիտական ու կրթական այլ հաստատություններում՝ ի նպաստ պարսկերենի կատարյալ ուսուցման:

Արտյոմ Տոնոյան,

Երևանի պետական համալսարանի
իրանագիտության ամբիոնի ասիստենտ,
բանասիրական գիտությունների թեկնածու,
ar.tonoyan@gmail.com

Vardan S. Voskanyan, Hasmik C. Kirakosian. Introduction to the translation of social–political and diplomatic Persian texts, «Copy print», YSU Publishing house, Yerevan, 264 pp.

The textbook is aimed to teach the students doing research in the area of Iranian Studies and Persian language. The book is compiled taking into consideration all the modern scientific, educational and methodological demands and criteria. The authors are succeeded to present an important and useful manual in the field of translation of Persian texts with the peculiarities of the present-day Iranian social –political and diplomatic content.

Artyom Tonoyan,
*PhD in Philology, Assistant Professor
of the Department of Iranian Studies of YSU*

Вардан Восканян, Асмик Киракосян. Основы перевода персидских общественно-политических и дипломатических текстов, «Копи принт», изд. ЕГУ, Ереван, 2019, 264 сс.

Вузовский учебник «Основы перевода персидских общественно-политических и дипломатических текстов» предназначен для обучения студентов, изучающих иранистику и персидский язык. Книга составлена с учетом всех новейших научных, образовательных, методологических требований и критерий. Автору удалось создать важное и полезное учебное пособие в области перевода персидских текстов, содержащих особенности современного общественно-политического и дипломатического языка Ирана.

Артем Тоноян,
*ассистент кафедры иранистики
Ереванского государственного университета,
кандидат филологических наук*

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

«Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորում»
 հասարակական կազմակերպության գործունեության մասին

«Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորում» (ԱԵԳՄՄ) հասարակական կազմակերպությունը հիմնադրվել է Ավետիք Յարությունյանի նախաձեռնությամբ 2015թ. հունվարի 13-ին՝ նպատակ ունենալով միավորելու Արցախի երիտասարդ գիտնականներին և մասնագետներին, նպաստելու վերջիններիս գիտական և ստեղծագործական զարգացմանը, աջակցելու նրանց միջազգային ինտեգրմանը, ինչպես նաև Արցախի պետականաշինության գործընթացին նրանց ակտիվ մասնակցությամբ: Ներկայումս Կազմակերպությունն ունի 38 անդամ Արցախից, Յայաստանից և Ռուսաստանից, որոնցից 1-ը՝ գիտությունների դոկտոր է, 18-ը՝ գիտությունների թեկնածու, իսկ 19-ը՝ ասպիրանտ և հայցորդ: 2016թ. փետրվարից գործում է Կազմակերպության պաշտոնական կայքը՝ www.aegmm.org:

Գործունեության 4 տարիների ընթացքում ԱԵԳՄՄ-ի կողմից իրականացվել են երկու տասնյակից ավելի ծրագրեր, մասնավորապես՝

- Արցախում գիտության զարգացման հիմնախնդիրներին և հեռանկարներին, ինչպես նաև գիտության համաշխարհային օրվան նվիրված կլոր սեղաններ,
- երիտասարդների իրավագիտակցության մակարդակի և ձեռնարկատիրությանը զբաղվելու հմտությունների ձևավորմանն ուղղված դասընթացներ,
- գրքերի շնորհանդեսներ,
- «Սահմանադրություն և իրավունք» դպրոցականների հանրապետական առաջին օլիմպիադա,
- «Արցախյան շարժման խորհուրդն ու արդի հիմնախնդիրները» խորագրով գիտական ընթերցումներ,
- Մեծ Յայրենականին արցախցիների մասնակցության մասին պատմող «70-ամյա հաղթանակի վկաները» ֆիլմի նկարահանում, ինչպես նաև «Պաշտպանության բանակի լավագույն դիրքապահները» ռազմահայրենասիրական ծրագիր:

Կազմակերպության հաջողված ծրագրերից կարելի է առանձնացնել երեքը՝

- 2016 թվականից սկսած ամեն տարի սեպտեմբերին Ստեփանակերտում միջազգային երիտասարդական գիտաժողովների կազմակերպում, որին ընդհանուր թվով մասնակցել են աշխարհի մոտ 10 երկրների 250 գիտնականներ և մասնագետներ, իսկ արդյունքներն ամփոփվել են գիտաժողովի նյութերի ժողովածուներում:
- 2018թ. Կազմակերպությունը գործարկել է www.artsakhib.am հասցեով «Արցախի էլեկտրոնային գրադարան» կայքը, որտեղ կարճ ժամանակահատվածում տեղադրված նյութերի քանակն անցել 2000-ի սահմանը:
- ՀՀ Բարձրագույն որակավորման կոմիտեի պահանջներին համապատասխանող «Գիտական Արցախ» պարբերականի տպագրություն, որն իրականացվում է Երևանի պետական համալսարանի հետ համատեղ:

INFORMATION

on the activities of

«Union of Young Scientists and Specialists of Artsakh» NGO

The «Union of Young Scientists and Specialists of Artsakh» NGO (UYSSA) was founded on the initiative of Avetik Harutyunyan on January 13, 2015 in order to unite young scientists and specialists of Artsakh, to promote their scientific and creative development, to facilitate their international integration, as well as active participation in the statehood of Artsakh development. At the moment, the organization comprises 38 members from Artsakh, Armenia and Russia, including 1 Doctor of Sciences, 18 Candidates of Sciences and 19 PhD students. Since February 2016, the official website of the organization www.aegmm.org has been functioning.

For almost 4 years of activity on the part of UYSSA, about two dozen projects were implemented, in particular:

- round tables devoted to the problems and prospects of science development in Artsakh, as well as to the International day of science;
- courses aimed at the formation of a proper level of legal awareness of young people and business skills;
- book presentations;
- the first Republican school Olympiad «Constitution and Law»;
- scientific readings on «The Essence of the Artsakh Movement and Modern Problems»;
- The filming of «Witnesses of the 70-year-old victory» about the participation of Artsakh in the Great Patriotic war, as well as the implementation of Military-Patriotic program «The Best postmen of the Army of Defense».

The three successful programs of the Organization can be outlined:

- annual holding of international youth conferences in Stepanakert in September, starting from 2016, in which about 250 scientists and specialists from 10 countries have already participated, and the results were summarized in collections of conference materials;
- the creation of the website www.artsakhlib.am «Artsakh E-Library» in 2018, on which the number of materials placed in a short time exceeded 2000;
- «Scientific Artsakh» journal publication which meets the requirements of the Higher Attestation Committee of the Republic of Armenia and is carried out in cooperation with Yerevan State University.

И Н Ф О Р М А Ц И Я
о деятельности общественной организации
«Объединение молодых учёных и специалистов Арцаха»

Общественная организация «Объединение молодых учёных и специалистов Арцаха» (ОМУСА) была основана по инициативе Аветика Арутюняна 13-го января 2015 года с целью объединить молодых ученых и специалистов Арцаха, способствовать их научному и творческому развитию, содействовать их международному интегрированию, а также активному участию в процессе развития государственности Арцаха. На данный момент в организации 38 членов из Арцаха, Армении и России, из коих 1 доктор наук, 18 кандидатов наук и 19 аспирантов и соискателей. С февраля 2016 года действует официальный сайт организации www.aegmm.org.

За 4-летнюю деятельность со стороны ОМУСА были осуществлены свыше двух десятков проектов, в частности:

- круглые столы, посвященные проблемам и перспективам развития науки в Арцахе, а также Международному дню науки;
- курсы, направленные на формирование должного уровня правосознания молодежи и навыков занятия бизнесом;
- презентации книг;
- первая республиканская школьная олимпиада «Конституция и право»;
- научные чтения на тему «Суть Арцахского движения и современные проблемы»;
- снятие фильма «Свидетели 70-летней победы» об участии арцахцев в Великой Отечественной войне, а также реализация военно-патриотической программы «Лучшие постовики Армии обороны».

Можно выделить три успешные программы ОМУСА:

- ежегодное проведение в сентябре, начиная с 2016 года, международных молодежных конференций в Степанакерте, в которых уже приняло участие около 250 ученых и специалистов из 10 стран мира, а результаты были обобщены в сборниках материалов конференции;
- в 2018 году был задействован сайт www.artsakhlib.am «Электронная библиотека Арцаха», на котором число размещенных за короткое время материалов превысило 2000;
- издание соответствующего требованиям Высшего атестационного комитета Республики Армения журнала «Научный Арцах», осуществляемое совместно с Ереванским государственным университетом.

«Գիտական Արցախ» պարբերականի հոդվածների ձևավորման պահանջները

«Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորում» (ԱԵԳՄՍ) հասարակական կապակերպության «Գիտական Արցախ» պարբերականն ընդգրկված է ՀՀ ԲՈԿ-ի կողմից հաստատված «Ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի գիտական հրատարակությունների» ցանկում: Պարբերականը, որի հիմնադիրը Երևանի պետական համալսարանն է, լույս է տեսնում տարեկան 2 անգամ:

Պարբերականում տպագրության են ընդունվում նախկինում տպագիր կամ էլեկտրոնային պարբերականներում չհրատարակված բարձրորակ աշխատանքներ (գիտական հոդվածներ, գրախոսություններ), որոնք համապատասխանում են պարբերականի ուղղվածությանը (հասարակական գիտություններ), ուսեն գիտական նորույթ և արդիականություն:

Բոլոր նյութերը գրախոսվում են: Գիտական աստիճան չունեցող հեղինակները պետք է հոդվածին կից ներկայացնեն գիտական ղեկավարի կարծիքը՝ ստորագրված կամ ամբիոնի երաշխավորությունը՝ ստորագրված և կնքված:

Նախքան հոդված ուղարկելը հեղինակները պարտավոր են www.aegmm.org կայքի «Գիտական Արցախ» պարբերականի բաժնում ծանոթանալ գիտական հրատարակումների Էթիկային և խստորեն հետևել դրան:

«Գիտական Արցախ» պարբերականում տպագրված հոդվածները տեղադրվում են ԱԵԳՄՍ-ի նախագիծ հանդիսացող Արցախի էլեկտրոնային գրադարանի կայքում (www.artsakhib.am), որից հետո հղումներն ուղարկվում են հեղինակներին:

Հոդվածները պետք է ուղարկել scientific.artsakh@gmail.com էլեկտրոնային փոստին, որին պետք է կցել նաև հեղինակի բջջային հեռախոսահամարը և բնակության հասցեն՝ ինդեքսի նշումով:

Աշխատանքներին ներկայացվող տեխնիկական պահանջներն են.

Համակարգչային շարվածքը՝ MS Word 2003-2010 ծրագիր:

Էջի ֆորմատը՝ B5 (176*250 մմ), լուսանցքները բոլոր կողմերից՝ 20 մմ:

Ծավալը՝ 7-20 էջ՝ ներառյալ ամփոփագրերը:

Տեքստի տառատեսակը՝ հայերեն՝ Arian AMU, ռուսերեն և անգլերեն՝ Times New Roman:

Հոդվածի ներկայացման լեզուն՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն:

Առաջին էջի վերին տողում (մեջտեղում) 13 pt տառաչափով, գլխատառերով, թավ (Bold) գրվում է հոդվածի վերնագիրը: Մեկ տող բաց թողնելով տողի մեջտեղում 12 pt տառաչափով, գլխատառերով, թավ (Bold) տրվում են հեղինակ(ներ)ի Անուն Ազգանուն(ներ)ը: Մեկ տող ներքև տողի մեջտեղում 12 pt տառաչափով, շեղատառ (Italic) տրվում է աշխատավայրը, բուհը կամ գիտահետազոտական կենտրոնը, ֆակուլտետը, գիտական աստիճանը, կոչումը, քաղաքը և երկիրը: Մեկ տող ներքև տողի մեջտեղում 12 pt տառաչափով տրվում է հեղինակի էլեկտրոնային փոստի հասցեն:

Մեկ տող բաց թողնելով 12 pt տառաչափով, շեղատառ (Italic), թավ (Bold) ներկայացվում է հոդվածի ամփոփագիրը (аннотация, abstract), որտեղ 120-170 բառի սահմաններում պետք է արտացոլվեն հետազոտության նպատակները, խնդիրները, մեթոդները, ինչպես նաև հեղինակի հիմնական եզրահանգումները: Ամփոփագիրը պետք է իրենից ներկայացնի ինքնուրույն տեքստ, որը կնկարագրի հետազոտության հիմնական արդյունքներն առանց հոդվածն ընթերցելու: Ամփոփագրում պետք չէ բառացիորեն կրկնել հոդվածի նախադասությունները:

Մեկ տող բաց թողնելով անհրաժեշտ է գրել «Բանալի բառեր» և նշել 7-10 բանալի բառեր:

Մեկ տող բաց թողնելով անհրաժեշտ է ներկայացնել աշխատանքի հիմնական տեքստը, որի տառաչափը 12 pt է, տողերի հեռավորությունը՝ 1: Տեքստը պետք է հավասարեցված լինի երկու կողմերից (*Alignment: Justify*): Պարբերությունները սկսել 1 սմ խորքից՝ TAB-ի կիրառմամբ:

Աղյուսակները պետք է համարակալվեն և ունենան վերնագրեր:

Դիագրամները, սխեմաները, գծագրերը և լուսանկարները պետք է լինեն հստակ, տպագրության համար պիտանի:

Յուրաքանչյուր լեզվից տարբերվող մյուս 2 լեզուներով ամփոփագրերը պարտադիր են, որոնք պետք է լինեն հոդվածի սկզբնական մասի (վերնագրից մինչև բանալի բառերը ներառյալ) թարգմանությունը և տրվում են հիմնական տեքստից հետո:

Յուրաքանչյուր պարտադիր են. տրվում են տողատակում, ամսան կարգով՝ 10 pt տառաչափով, տողերի հեռավորությունը՝ 1: Յուրաքանչյուր տեքստը պետք է հավասարեցված լինի երկու կողմից (*Alignment: Justify*): Պարբերություններն սկսել 1 սմ խորքից՝ TAB-ի կիրառմամբ: Յուրաքանչյուր մեջ պետք է ներկայացված լինեն օգտագործված աշխատանքի հեղինակի ազգանունը և անվան առաջին տառը (*Bold*), այնուհետև աշխատանքի վերնագիրը, հատորը, հրատարակության վայրը, տարեթիվը և էջը:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք կապվել «Գիտական Արցախ» պարբերականի գլխավոր խմբագիր, ի.գ.թ., դոցենտ Ավետիք Չարությունյանի հետ՝ գրելով avetig.hh@aegmm.org էլեկտրոնային փոստին կամ զանգահարելով +37497277770 հեռախոսահամարին:

The requirements for «Scientific Artsakh» journal

The «Scientific Artsakh» journal of the «Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA)» NGO is included in the list of «Scientific publications acceptable for the publication of the main results and provisions of theses» approved by the RA HAC. The journal, founded by Yerevan State University, is published twice a year.

High-quality works that are not previously published in printed or electronic journals (scientific articles, reviews), which correspond to the orientation of the journal (Social Sciences) and have scientific novelty and relevance, are accepted for publication in the journal.

All materials are reviewed. The authors, without academic degrees, along with the article represent the opinion of the supervisor, certified by the signature, or the recommendation of the Department, certified by signature and seal.

Before submitting the article, the authors are required to become familiar with the ethics of scientific publications set on the website www.aegmm.org in the «Scientific Artsakh» journal section and strictly follow it.

The articles published in the «Scientific Artsakh» journal are placed on Artsakh E-Library website (www.artsakhlib.am), which is the UYSSA project, after which the links are sent to the authors.

Articles should be sent to the scientific.artsakh@gmail.com e-mail, with the obligatory indication of the mobile number of the author and the actual address (postal code is required).

Technical requirements for works:

Computer typing: program MS Word 2003-2010.

Page format: B5 (176*250 mm), margins (left, right, top, bottom)՝ 20 mm.

Volume: 7-20 pages (summary inclusive).

Text font: Armenian-Arian AMU, Russian and English – Times New Roman.

Language of articles: Armenian, Russian, English.

On the top line of the first page (center alignment) in capital letters, bold, font size – 13 pt the title of the article is written. Over the line, in the center of the line, font size – 12 pt, capital letters, bold the name(s) of the author(s) is indicated. In the center of the line below, font size 12 pt, italicized the place of work, University or research center, faculty, scientific degree, title, city and country are indicated. On the line below in the center, font size 12pt the author's email is provided.

Over a line, font size 12, bold, italic an abstract (ախփութիւն, аннотация), in the 120-170 words amount including forth goals, objectives, research methods, and main conclusions of the author must be set. The abstract should be a separate text describing the main results of the study without reading the article.

Over a line the word «Keywords» must be written and 7-10 words must be specified.

Over a line, the main text of the work with the font size of 12 pt, line spacing of 1 pt must be submitted. The text should be aligned on both sides (Alignment: Justify). The paragraph should be started with an indentation of 1 cm, using the TAB:

Tables should be numbered and have titles.

Diagrams, diagrams, drawings and drawings must be clear and printable.

Abstracts in two languages other than the language of writing are required, which are the translation of the initial part of the article (from the title to the keywords inclusive) and are indicated after the main text.

References required are listed in the bottom of the page, on the rise, font size 10 pt with line spacing 1pt. The link text must be aligned on both sides (Alignment: Justify). Paragraphs begin with a space of 1 cm, using the TAB: The link indicates the name and the first letter of the author's name of the source used (Bold), then the title of the work, volume, place of publishing, year and page.

For more information, please contact the editor-in-chief of «Scientific Artsakh» journal, PhD in Law, Associate Professor Avetik Harutyunyan, e-mail at avetiq.hh@aegmm.org or by phone +37497277770.

Требования к оформлению статей журнала «Научный Арцах»

Журнал «Научный Арцах» общественной организации «Объединение молодых учёных и специалистов Арцаха» (ОМУСА) включен в список «Научных изданий, приемлемых для публикации основных результатов и положений диссертаций», утвержденных ВАК Республики Армения. Журнал, учредителем которого является Ереванский государственный университет, издается два раза в год.

К публикации в журнале принимаются высококачественные работы, не публиковавшиеся ранее в печатных или электронных журналах (научные статьи, рецензии), которые соответствуют направленности журнала (общественные науки) и имеют научную новизну и актуальность.

Все материалы рецензируются. Авторы, не имеющие ученой степени, должны представить вместе со статьей отзыв научного руководителя, заверенный подписью, или рекомендацию кафедры, заверенную подписью и печатью.

До предоставления статьи авторы обязаны ознакомиться с этикой научных публикаций на сайте www.aegmm.org в разделе журнала «Научный Арцах» и неукоснительно следовать ей.

Статьи, опубликованные в журнале «Научный Арцах», размещаются на сайте Электронной библиотеки Арцаха (www.artsakhlib.am), являющемся проектом ОМУСА, после чего ссылки отправляются авторам.

Статьи должны быть присланы на электронный адрес scientific.artsakh@gmail.com, с обязательным указанием номера мобильного телефона автора и фактического адреса (почтовый индекс обязателен).

Технические требования к оформлению работ:

Компьютерный набор: программа MS Word 2003-2010.

Формат страницы: B5 (176*250 мм), поля (левое, правое, верхнее, нижнее) ` 20 мм.

Объем: 7-20 страниц (резюме включительно).

Шрифт текста: армянский – Arian AMU, русский и английский – Times New Roman.

Язык представления статей: армянский, русский, английский.

На верхней строке первой страницы (выравнивание по центру) прописными буквами, полужирным (Bold) шрифтом, размер – 13 кегль пишется заголовок статьи. Через строку, по центру строки кеглем 12, прописными буквами, полужирным шрифтом указывается имя и фамилия (фамилии) автора (авторов). На строке ниже по центру кеглем 12, курсивом (Italic) указывается место работы, вуз или научно-исследовательский центр, факультет, ученая степень, звание, город и страна. На строке ниже по центру кеглем 12 предоставляется электронный адрес автора.

Через строку кеглем 12, полужирным шрифтом (Bold) и курсивом (Italic) предоставляется аннотация (summary, abstract), в которой в объеме 120-170 слов должны быть изложены цели, задачи, методы исследования, а также основные выводы автора. Аннотация должна представлять собой самостоятельный текст, описывающий основные результаты исследования без прочтения статьи.

Через строку необходимо написать «Ключевые слова» и указать 7-10 слов.

Пропустив одну строку, необходимо представить основной текст работы кеглем 12 с межстрочным интервалом – 1 пт. Текст должен быть выровнен с двух сторон (Alignment: Justify). Абзац необходимо начинать с отступом в 1 см, используя TAB:

Таблицы должны быть пронумерованы и иметь заголовки.

Диаграммы, схемы, чертежи и рисунки должны быть четкими, подлежащими печати.

Резюме на двух языках, отличных от языка написания статьи, обязательны, представляют собой перевод начальной части статьи (от заголовка до ключевых слов включительно) и указываются после основного текста.

Ссылки обязательны, указываются в конце страницы по нарастающей кеглем 10 с межстрочным интервалом 1 пт. Текст ссылки должен быть выровнен с двух сторон (Alignment: Justify). Абзацы начинаются с отступом в 1 см, используя TAB. В ссылке указываются фамилия и первая буква имени автора использованного источника (Bold), затем название работы, том, место издательства, год и страница.

За дополнительной информацией можно обратиться к главному редактору журнала «Научный Арцах», к.ю.н., доценту Аветику Арутюняну, написав по электронному адресу avetiq.hh@aegmm.org или позвонив по телефону +37497277770.

ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԿ
SCIENTIFIC ARTSAKH
НАУЧНЫЙ АРЦАХ

№ 1(2), 2019

*«Գիտական Արցախ» պարբերականը լույս է տեսնում տարեկան 2 անգամ:
 Հրատարակվում է 2018 թվականից:*

The «Scientific Artsakh» journal is published twice a year. It has been published since 2018.

Журнал «Научный Арцах» выходит два раза в год. Издаётся с 2018 года.

Գլխավոր խմբագիր՝
 Editor-in-Chief:
 Главный редактор:

Ավետիք Հարությունյան
Avetik Harutyunyan
Аветик Арутюнян

Գլխավոր խմբագրի տեղակալ,
 սրբագրիչ
 Deputy Editor-in-Chief, Corrector
 Заместитель главного редактора,
 корректор

Թեհմինա Մարության
Tehmina Marutyan

Теймина Марутян

Անգլերեն լեզվի պատասխանատու՝
 Responsible for English
 Ответственный за английский язык

Ալվինա Ներսեսյան
Alvina Nersesyan
Альвина Нерсесян

Ռուսերեն լեզվի պատասխանատու՝
 Responsible for Russian
 Ответственный за русский язык

Աշոտ Բեգլարյան
Ashot Beglaryan
Ашот Бегларян

Համակարգչային շարվածքը, ոճը,
 տառածևերը և էջադրումը՝
 Computer set, style, font and layout
 Компьютерный набор, стиль, шрифт
 и верстка

Գիտական Արցախ
Scientific Artsakh

Научный Арцах

Շապիկի ձևավորումը՝
 Cover design
 Дизайн обложки

Արմինե Զոչարյան
Armine Kocharyan
Армине Кочарян

E-mail: scientific.artsakh@gmail.com.

Tel. (+374) 97277770.

Ստորագրված է տպագրության՝ 17.06.2019թ.:
 Չափեր՝ 70*100/16: Թուղթը՝ օֆսեթ, տպագրությունը՝ օֆսեթ:
 Ծավալը՝ 30 տպ. մամուլ:
 Տպաքանակը՝ 250 օրինակ:

Տպագրված է «Անտենոր» տպագրատանը: